Գ. Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՊԱՏՄԱԿԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽՍՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

9(2)
Հ-42

Գ. Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1964-1988

ՄՈՒՐՃԱԼԱՊԱՏՇԵՐՈՒՄ

27224

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
BIBLIOTEKA

ԵՐԵՎԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» 1990

ԳՄԴ 63. 3 (22)
Հ 422

Դրախոսներ՝ պատմ. գիտ. դոկտոր-պրոֆեսորներ Զ. Տ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Լ. Գ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎ
Խմբագիր՝ պատմ. գիտ. թեկնածու Մ. Ն. ՄԱՆՈՒԿՅԱՆ

**Հարությունյան Շ. Ռ.**

Հ 422 *Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում (1964—1988) Ուրվագծեր։ [Խմբ.՝ Մ. Ն. Մանուկյան].— Եր.։ Հայաստան, 1990.— 485 էջ*

*Աշխատության մեջ հանրագումարի են բերված խորհրդահայ պատմագիտության վերջին քսանհինգամյակի նվաճումները, վերլուծության են ենթարկված հայ ժողովրդի նոր և խորհրդային ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ հրատարակված աշխատությունները, բացահայտվում են ինչպես դրանց արժանիքները, այնպես էլ առանձին պրոբլեմների լուսաբանման ժամանակ թույլ տրված սխալները։*

*Աշխատությունը հեղինակի 1967-ին հրատարակված նույնանուն գրքի երկրորդ մասն է։*

*Այն նախատեսված է ինչպես պատմաբան-մասնագետների, այնպես էլ ընթերցող լայն շրջանների համար։*

Հ $\frac{0505040000}{701\ (01)-90}$ 52—88

ԳՄԴ 63. 3 (22)

ISBN 5—540—00049—8

© Հարությունյան Շ. Ռ.— 1990

## Առաջաբան

*ԽՄԿԿ XXVII համագումարը լուրջ խնդիրներ դրեց գաղափարախոսության, այդ թվում պատմական գիտության բնագավառի աշխատողների առջև։ Ամբողջ երկրում ծավալվող վերակառուցումը վերաբերում է նաև պատմաբաններին. նրանցից պահանջվում է պատմության ճշմարտացի, օբյեկտիվ շարադրում՝ պատմություն առանց գունազարդումների և աղավաղումների։*

*Այժմ վերանայվում են անցյալի շատ փաստեր, անհատի պաշտամունքի և լճացման տարիներին տրված գնահատականները։ Առանձնապես սուր է դրվում խորհրդային հասարակության պատմությունը նորովի լուսաբանելու հարցը։*

*Ինչպես հայտնի է, պատմագիտական աշխատություններում, ինչպես նաև դասագրքերում, հաճախ շրջանցվում էին պատմական ճշմարտությունները, սքողվում խորհրդային հասարակության ընթացքի ստվերոտ կողմերը, թույլ էին տրվում կոպիտ սխալներ։ Հանդես չէր բերվում դրանք բացահայտելու, դրանց մասին ազատորեն խոսելու համարձակություն։ Պատմությունը վերածվում էր եղած և չեղած հաջողությունների գովերգման, իրականության գունազարդման։*

*Տարիներ շարունակ կաշկանդվել էր պատմագիտական միտքը։ Հարկ եղած ուշադրություն չէր դարձվել գիտության այդ կարևոր ճյուղի վրա, մինչդեռ պատմագիտությունը պատմության հայելին է։ Հանրագումարի բերելով պատմական գիտության բնագավառում կատարված աշխատանքը, այն միաժամանակ նպաստում է գիտական-քննադատական մտքի զարգացմանն ու խորացմանը, բացահայտում պատմական գրականության մեջ տեղ գտած գիտական, գաղափարական ու մեթոդաբանական սխալները։ Չպետք է մոռանալ, որ պատմագրության հիմնական խնդիրներից մեկն է՝ հանդես բերել քննադատական*

վերաբերմունք դեպի անցյալի պատմագիտական ժառանգությունը, օգնել նրան պայքարելու ժամանակակից բուրժուական ռեակցիոն կոնցեպցիաների, մեր հայրենիքի պատմության ամեն տեսակ կեղծարարության դեմ։

Ներկայումս լայն մայրուղի է բացվում պատմագրության հետագա զարգացման համար։ Հրատապ են դառնում տեսակետների և սկզբունքների հրապարակայնությունը, գիտական վեճերի ու բախումների ազատությունը, պրոբլեմների համարձակ լուծումը։

Չնայած լուրջ սխալներին ու թերություններին, խորհրդահայ պատմագրությունը, լինելով խորհրդային ամբողջ պատմագրության բաղկացուցիչ մասը, վերջին քսանհինգ տարում ծանրակշիռ նվաճումների է հասել։ Հրատարակվել են բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ, պաշտպանվել են դոկտորական և թեկնածուական մի ամբողջ շարք դիսերտացիաներ։ Քիչ աշխատանք չի կատարվել նաև փաստաթղթերի ժողովածուներ հրատարակելու ուղղությամբ։

Հանրապետությունում պատմական գիտության զարգացման գլխավոր կենտրոնը շարունակում է մնալ Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը, որի գիտական կոլեկտիվը լուրջ ներդրում ունի հայ ժողովրդի պատմության կարևորագույն պրոբլեմների հետազոտման գործում։

Հրատարակված բազմաթիվ աշխատությունների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում «Հայ ժողովրդի պատմությունն» բազմահատորյակը, որը կարևոր իրադարձություն եղավ պատմագիտության բնագավառում։ Ավելի քան 150 մասնագետներից կազմված հեղինակային կոլեկտիվը, օգտագործելով հատկապես վերջին տասնամյակներում հայագիտության ձեռք բերած նվաճումները, ստեղծել է ութհատորյա մի մոնումենտալ աշխատություն, որն ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը։ Առանձին թերություններով հանդերձ, այն ծանրակշիռ ներդրում է հայագիտության մեջ։

Խորհրդահայ պատմագիտության զարգացման գործում կարևոր դեր են խաղում Հայկական ԽՍՀ հնագիտության և ազգագրության, արևելագիտության, ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղ-Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության



ինստիտուտները, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանը, Երևանի պետական համալսարանի և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի և մյուս բուհերի պատմության ամբիոնները։

Պատմագիտության զարգացմանը մեծ ծառայություն են մատուցում համապատասխան պարբերականները, որոնցում հրապարակվում են բազմաթիվ արժեքավոր հոդվածներ։ Առանձնապես հարկ է նշել «Պատմա-բանասիրական հանդեսի», Հայկական ԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների «Լրաբերի» (նախկինում՝ «Տեղեկագիր»), «Բանբեր Հայաստանի արխիվների» և այլ պարբերականների խաղացած դերը։ Վերջինս շնորհակալ աշխատանք է կատարում ոչ միայն հոդվածներ, այլև փաստաթղթեր հրապարակելու ուղղությամբ։ Իր գոյության ավելի քան 20 տարիների ընթացքում լույս է տեսել «Բանբերի» շուրջ 70 հատոր՝ պարունակելով հայ ժողովրդի պատմության բազմաթիվ հարցերի, ինչպես նաև հայ հեղափոխական, ռազմական, պետական, կուսակցական, գիտության ու մշակույթի ականավոր գործիչների մասին հազարավոր փաստաթղթեր։

Արժեքավոր հոդվածներ են հրապարակվում նաև Երևանի պետական համալսարանի, մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի, Մատենադարանի և միջբուհական «Գիտական աշխատություններ» ժողովածուներում, որոնք նույնպես հրատարակվում են պարբերաբար։ Խորհրդահայ պատմաբանների գիտական հոդվածները հաճախ լույս են տեսնում նաև միութենական պատմագիտական հանդեսներում։

Պատմագիտության զարգացմանը մեծապես նպաստել են հանրապետության գիտահետազոտական հիմնարկներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում կազմակերպված գիտական նստաշրջանները։ Կարդացված զեկուցումների մի մասը հրատարակվել է առանձին գրքերով։ Հանրապետության ոչ քիչ թվով պատմաբաններ գիտական զեկուցումներով հանդես են եկել նաև միութենական ու միջազգային գիտաժողովներում։

Խորհրդահայ պատմագիտության զարգացմանը, անկասկած, նպաստում է նաև անվանի հայ պատմաբաններ Մ. Չամչյանի, Ն. Ադոնցի, Լեոյի, Հ. Մանանդյանի և ուրիշների երկերի հրատարակումն ու մասսայականացումը։

Հայ պատմագիտության զարգացման վրա իր բարերար

ազդեցությունն ունի խորհրդային պատմագիտությունը։ Մոսկվայի, Լենինգրադի և ԽՍՀՄ-ի մի շարք այլ քաղաքների գիտահետազոտական հիմնարկները, առաջին հերթին ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի պատմության բաժանմունքը, պատմագիտության խորհուրդը և առանձին գիտնականներ մշտական օգնություն են ցույց տալիս Խորհրդային Հայաստանի գիտական հիմնարկներին ու գիտնականներին պատմագիտության առաջ ծառացած պրոբլեմների լուսաբանման գործում։

Ուշագրավ է, որ ԽՍՀՄ ականավոր շատ գիտնականներ Երևանում տեղի ունեցած գիտական նստաշրջաններում և կոնֆերանսներում հաճախ հանդես են գալիս արժեքավոր զեկուցումներով։ Հայ ժողովրդի պատմության առանձին պրոբլեմների վերաբերյալ գիտական պարբերականներում և առանձին գրքերով հրատարակվել են նրանցից մի քանիսի ուսումնասիրությունները։

Անտարակույս, մեր երկրի կենտրոններում հրապարակված պատմական աշխատություններում տեղ գտած սխալները ավել կամ պակաս չափով կրկնվել են նաև խորհրդահայ պատմաբանների աշխատություններում։ Խորհրդահայ պատմագրության զարգացմանը հաճախ խթանել են հանրապետության կյանքում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները, հոբելյանները և այլն։ Այդպիսի կարևոր իրադարձություն էր, օրինակ, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման 150-ամյակի տոնակատարությունը, որը ստացավ համապետական, համաժողովրդական բնույթ։ Այն լայնորեն նշվեց խորհրդային հանրապետություններում, ինչպես նաև սփյուռքում։ Հարստացավ այդ պրոբլեմի պատմագրությունը։ Հրատարակվեցին բազմաթիվ ուսումնասիրություններ՝ ծավալուն մենագրություններ, հարյուրավոր հոդվածներ։

Խորհրդահայ պատմագրության առավել աչքի ընկնող նվաճումներից է պատմության կեղծարարությունը մերկացնելու ուղղությամբ կատարված աշխատանքը։ Վերջին երկուս ու կես տասնամյակում քննադատության է ենթարկվել հատկապես թուրքական և ադրբեջանական պատմագրությունը, որը բացահայտորեն կեղծում է հայ ժողովրդի պատմությունը, նրա անցյալն ու ներկան։ Շոշափելի աշխատանք է կատարվել նաև Արևմուտքի բուրժուական պատմագրության կեղծարարության մերկացման ուղղությամբ։



Խորհրդային Հայաստանի պատմագիտության զարգացմանը նվիրված ներկա աշխատությունը մեր՝ 1967 թվականին հրատարակած գրքի շարունակությունն է։ Եթե նախորդն ընդգրկում էր 1920—1963 թվականները, ապա այս աշխատությունը՝ վերջին քսանհինգամյակը։ Ժամանակագրական նման պարբերացումը պայմանական է, քանի որ մեր առաջին գրքում նյութի շարադրանքն ավարտվում է 1963 թվականով։

Ի տարբերություն նախորդի, ուր քննվում են հայ ժողովրդի պատմության պրոբլեմները հնագույն ժամանակներից սկսած, ներառյալ հնագիտությունը, ազգագրությունը և այլն, այստեղ վերլուծվում են միայն նոր և խորհրդային ժամանակաշրջանի պատմության պրոբլեմները XIX դարի սկզբներից մինչև մեր օրերը։

Այսպիսով, ներկա աշխատության մեջ հանրագումարի են բերված խորհրդահայ պատմագրության վերջին քառորդ դարի նվաճումները, խորհրդահայ պատմաբանների կատարած գիտահետազոտական աշխատանքը, պատմաքննական վերլուծության է ենթարկված խորհրդահայ պատմագիտական գրականությունը՝ վեր հանելով ինչպես դրա արժանիքները, այնպես էլ սխալներն ու բացերը, կատարվել են համապատասխան ճշտումներ։ Անտարակույս, խորհրդահայ պատմագիտության զարգացման պատկերը լիարժեք չէր լինի, եթե մենք բավարարվեինք միայն պատմաբանների աշխատությունների դրական կողմերի վերհանումով։ Բոլոր դեպքերում մեր նպատակն է եղել հնարավորին չափ բացահայտել խորհրդահայ պատմագիտության զարգացման ուղիները, մատնանշել նրա հերթական խնդիրները, պատմաբանների ուշադրությունը հրավիրել սակավ և տակավին չուսումնասիրված ու ժամանակակից պահանջներից բխող կարևոր պրոբլեմների հետագա ուսումնասիրության վրա։ Մենք չենք շրջանցել նաև հայ ժողովրդի նոր և խորհրդային ժամանակաշրջանի պատմագրության մեջ դեռևս առկա վիճելի պրոբլեմները։

Ինչ խոսք, այժմ խորհրդահայ պատմագիտության բնագավառը առաջվա նման աղքատ չէ։ Եթե մի քանի տասնամյակ առաջ նման բնույթի հոդվածները եզակի էին, ապա վերջին շրջանում հրապարակվեցին պատմագիտական բնույթի մի շարք հոդվածներ, ինչպես նաև զգալիորեն ավելացավ այն մենագրությունների թիվը, որոնց մեջ տրվում են պատմագրական ակնարկներ, աղբյուրների և գրականության համառոտ տեսություն

և այլն։ Դրական երևույթ պետք է համարել նաև այն, որ վերջին քառորդ դարում հրատարակվել են պատմագիտական բնույթի առանձին աշխատություններ։ Արժանին հատուցելով դրանց հեղինակներին, հարկ ենք համարում նշել, որ, այնուամենայնիվ, մինչև այժմ հրապարակի վրա չկա ամբողջական, բազմապրոբլեմատիկ ընդգրկում ունեցող մի աշխատություն։

Հայ ժողովրդի պատմության այս կամ այն պրոբլեմը քննելիս հիմնականում նկատի ենք ունեցել պատմաբանների մենագրությունները։ Միայն առանձին դեպքերում անդրադարձել ենք նաև գիտական պարբերականներում հրատարակված նրանց հոդվածներին։ Պետք է նկատի ունենալ, որ անհնարին էր անցած քսանհինգամյակում գիտական պարբերականներում հրապարակված հազարավոր հոդվածներին անդրադառնալ ներկա աշխատության շրջանակներում։ Ջնչին բացառությամբ չենք անդրադարձել նաև հանրամատչելի գրքույկներին, դիսերտացիաների ավտոռեֆերատներին, որոնց թիվը նույնպես փոքր չէ։

Պատմաբանների աշխատությունները վերլուծելիս առաջնորդվել ենք այն միակ ճիշտ սկզբունքով, թե խորհրդահայ պատմագրության մեջ նրանցից ո՞վ է այդ պրոբլեմին առաջինն անդրադարձել։

Հեղինակը հավակնություն չունի այս աշխատությունը համարելու Խորհրդային Հայաստանում պատմագիտության զարգացման սպառիչ և լիակատար պատմություն։ Այն ունի ուրվագծային բնույթ։ Բացի այդ, հարկ ենք համարում նշել, որ մինչև վերջին տարիները, այսինքն՝ կուսակցության առաջադրած վերակառուցման կուրսին անցնելը, հրատարակված աշխատությունների վերաբերյալ մեր արած որոշ դիտողություններ մեզ էլ են վերաբերում։ Մեր մի շարք աշխատությունները, ինչպես նաև դպրոցական և բուհական դասագրքերը, զերծ չեն մնացել առանձին սխալներից ու թերություններից։ Ինչպես ասում են, դա տուրք է եղել պատմագրության մեջ իշխող այս կամ այն սխալ կոնցեպցիաներին։

Աշխատությունը անթերի չէ նաև այլ տեսանկյուններից։ Ինչ խոսք, նրանում կարող են լինել վիճելի և անընդունելի տեսակետներ, բացթողումներ և այլ թերություններ։ Ուստի սիրով կունկնդրենք մասնագետների դիտողությունները։



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ (1800—1917 ԹԹ.)

### 1. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին

Խորհրդահայ պատմաբանները ինչպես անցյալ ավելի քան 40 տարիներին, այնպես էլ վերջին քսանհինգ տարում նշանակալի աշխատանք են կատարել հայ ժողովրդի նոր պատմության գիտական հետազոտության բնագավառում։ Հրատարակվել են բազմաթիվ արժեքավոր աշխատություններ՝ նվիրված այդ ժամանակաշրջանի պատմության տարբեր պրոբլեմների լուսաբանմանը։

Առաջին խոշոր հարցը, որի մասին ուզում ենք խոսել, վերաբերում է Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացմանը և այդ ժամանակաշրջանի հայ-ռուսական հարաբերություններին։

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին բախտորոշ, պատմական խոշոր նշանակություն ունեցող իրադարձություն էր պարսկա-օսմանյան բռնապետությունների տակ հեծող հայ ժողովրդի բազմադարյան կյանքում։ Անցնելով Ռուսաստանի տիրապետության տակ, հայ ժողովրդի մի հատվածը ոչ միայն փրկվեց ֆիզիկական բնաջնջումից ու ձուլման ահավոր վտանգից, այլև կանգնեց տնտեսական ու մշակութային զարգացման նոր ուղու վրա, հաղորդակից դարձավ ռուսական առաջավոր մշակույթին, իր վրա կրեց նրա հեղափոխական-դեմոկրատական մտքի բարերար ազդեցությունը, XX դարում մտավ լենինյան կուսակցության ղեկավարությամբ գործող ռուսական պրոլետարիատի գլխավորած հեղափոխական պայքարի հորձանուտը և Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի շնորհիվ ձեռք բերեց իր սոցիալական ազատագրությունը։

Այնպիսի մի կարևոր իրադարձություն, ինչպիսին Արևելյան Հայաստանի միացումն էր Ռուսաստանին, չէր կարող չդառնալ

ռուս և հայ հեղինակների պատմական հետազոտությունների առարկան։ Մեր նախորդ գրքում համառոտակիորեն անդրադարձել ենք պատմագրության մեջ այդ կարևոր պրոբլեմի լուսաբանմանը։ Նշել ենք, որ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման այսօրվա ճիշտ գնահատականը միանգամից չի՞ ստեղծվել։ 1920—30-ական թվականներին իշխում էր «շարիքի» տեսությունը (Լեո, Ս. Մարկոսյան և ուրիշներ)։ 30-ական թվականների վերջերին, ինչպես խորհրդային, այնպես էլ խորհրդահայ պատմագրության մեջ հանդես եկավ «շարիքների փոքրագույնի» տեսությունը (Վ. Պարսամյան և ուրիշներ)։ Սկսած 40-ական թվականների կեսերից շրջանառությունից հանվեց «շարիքների փոքրագույն» արտահայտությունը. համընդհանուր դարձավ այն կոնցեպցիան, ըստ որի միացումը առաջադիմական խոշոր նշանակություն ունեցող բախտորոշ իրադարձություն էր համարվում։

1940—1960-ական թթ. կեսերին Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման և հայ-ռուսական հարաբերությունների պատմության գիտական հետազոտության գործում մեծ ներդրում ունեցան Վ. Պարսամյանը, Զ. Գրիգորյանը, Մ. Ներսիսյանը, Ա. Ռ. Հովհաննիսյանը և ուրիշներ։ Հրատարակվեցին այդ պրոբլեմին նվիրված նրանց մի շարք աշխատություններ։ Այդ ուղղությամբ կատարված գիտական հետազոտությունը հետագայում ևս շարունակվեց։

1967-ին լույս տեսավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Պարսամյանի «Հայ ժողովրդի պատմություն» բուհական անդրանիկ դասագրքի երրորդ հատորը։ Նախ ասենք, որ հեղինակն առաջին անգամ հանրագումարի է բերում և շարադրում հայ ժողովրդի ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ հատվածների՝ XIX դարի և XX դարի սկզբների սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի զարգացման պատմությունը։ Դա պատմական հարուստ փաստերով հագեցված աշխատություն է, հեղինակի տասնյակ տարիների գիտահետազոտական բեղմնավոր աշխատանքի արդյունքը։

Մեր աշխատության մեջ քննելով նշված ժամանակաշրջանի պատմության պրոբլեմների լուսաբանման վիճակը խորհրդահայ պատմագրության մեջ, բնականաբար, առնչվում ենք հիշյալ դասագրքի հետ, սակայն, նկատի ունենալով, որ նման աշխատություններում ընդունված չէ դասագրքերի ըստ առանձին



գլուխների վերլուծությունը, ուստի հիմք կընդունենք նրա ռուսերեն հրատարակված մենագրությունը[1]։

Վերոհիշյալ մենագրության մեջ լայն տեղ է տրված Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման պատմությանը։ Այստեղ ըստ ամենայնի վեր է հանված հայ ժողովրդի ակտիվ մասնակցությունը ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին։ Ցույց են տրված հայ կամավորական և պարտիզանական ջոկատների մարտական գործողությունները, բացահայտված է Արևելյան Հայաստանի միացման գործում Կովկաս աքսորված դեկաբրիստների և ռուս նշանավոր գրող ու դիվանագետ Ա. Ս. Գրիբոյեդովի գործունեությունը։ Բազմակողմանիորեն ցույց է տրված հայ ժողովրդի համար միացման առաջադիմական նշանակությունը։

Ելնելով մարքս-լենինյան դիրքերից, Վ. Պարսամյանը ճիշտ է նկատել, որ ցարիզմի տիրապետության տակ, այնուամենայնիվ, հայ ժողովուրդը ձեռք չբերեց և չէր կարող ձեռք բերել իր ազգային և սոցիալական ազատությունը։ Ինչպես Ռուսաստանի մյուս ժողովուրդները, այնպես էլ հայ ժողովուրդը ցարիզմի տիրապետության ժամանակաշրջանում ենթարկվում էր ազգային-գաղութային ճնշման։

Պատմաբանի աշխատության մեջ քննադատված է Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման մասին կղերաբուրժուական պատմագրության արատավոր կոնցեպցիան։ Միևնույն ժամանակ նա քննադատում է խորհրդահայ այն պատմաբաններին, ովքեր, ելնելով վուլգար սոցիոլոգիզմի դիրքերից, ժխտել են Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման առաջադիմական նշանակությունը։

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման պատմությունը շարադրված է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Զ. Գրիգորյանի կողմից՝ «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական հրատարակության հինգերորդ հատորում[2]։ Փաստական հարուստ նյութի հիման վրա հեղինակը առավել հանգամանորեն լուսաբանել է Հայաստանի հյուսիսարևելյան շրջանների միացումը Ռուսաստանին, Արևելյան Հայաստանի

---

[1] Տե՛ս **Парсамян В.**, История армянского народа (1801—1900 гг.), Е., 1972։

[2] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Եր., 1974։

ազատագրումը պարսկական լծից, 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը և արևմտահայության հարցը և այլն։ Ռազմական գործողությունների ընդհանուր ֆոնի վրա վեր է հանվել հայերի ակտիվ մասնակցությունը ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին։ Բացահայտվել է Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարի նկատմամբ մեծ տերությունների, հատկապես Անգլիայի և Ֆրանսիայի, բռնած թշնամական դիրքը։ «Անգլիան և Ֆրանսիան,— իրավացիորեն գրում է հեղինակը,— եռանդուն կերպով պաշտպանում էին Պարսկաստանի և Թուրքիայի բոլոր ձեռնարկումները՝ ուղղված ռուսական առաջխաղացման, ինչպես նաև անդրկովկասյան ժողովուրդների ազատագրության դեմ»[1]։

Աշխատության մեջ լուսաբանված է Կովկաս աքսորված դեկաբրիստների մասնակցությունը ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին, պատերազմներ, որոնք դիտվում էին որպես հայ ժողովրդին պարսկա-թուրքական լծից ազատվելու միջոցներ։ Ուշագրավ փաստեր կան հայ ժողովրդի մշակույթի, հասարակական ու ռազմական գործիչների հետ առանձին դեկաբրիստների հաստատած անձնական կապերի մասին։

Հաջող է շարադրված «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պատմական նշանակությունը» ենթագլուխը, որն ամբողջ նախընթաց շարադրանքի գիտական ամփոփումն է։ Հեղինակը ճիշտ է բանաձևում, որ, չնայած ցարիզմի նվաճողական նպատակներին և վարած գաղութատիրական քաղաքականությանը, այնուամենայնիվ, ստեղծված կոնկրետ պատմական պայմաններում Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հայ ժողովրդի համար օբյեկտիվորեն ունեցավ առաջադիմական խոշոր նշանակություն։ Այն նպաստեց արևելահայության ֆիզիկական գոյության հարատևմանը, երկրի արտադրողական ուժերի, ազգային մշակույթի, հասարակական-քաղաքական մտքի զարգացմանը։ Այդ միացման շնորհիվ էր, որ արևելահայերը փրկվեցին ֆիզիկական բնաջնջումից, ինչպես նաև նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հայ ժողովրդի ազգահավաքման համար[2]։

Զ. Գրիգորյանը Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի

1 Հայ ժողովրդի պատմություն, հ. V, էջ 115։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 193—194։



միացումը առաջընթաց խոշոր քայլ է համարում հայ և ռուս ժողովուրդների մերձեցման ճանապարհին։ Հիրավի, կենտրոնացված մեկ պետության կազմում նրանց գտնվելը, տնտեսական ու մշակութային փոխազդեցությունը, ինչպես ցարիզմի ու ճորտատիրության, այնպես էլ արտաքին ընդհանուր թշնամիների դեմ ծավալվող համատեղ պայքարը, հեղինակի կարծիքով, չէին կարող չնպաստել այդ ժողովուրդների բարեկամության խորացմանը, հայ ժողովրդի բովանդակ կյանքի հետագա առաջընթացին։ «Անտարակույս,— գրում է հեղինակը,— Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացումից հետո հայ ժողովրդական զանգվածները չհասան ո՛չ ազգային և ո՛չ էլ սոցիալական ու քաղաքական ազատագրության։ Ճաշակելով ցարիզմի վարած ազգային-գաղութային քաղաքականության ողջ դառնությունը, նրանք իրենց իսկական ազատագրությունը որոնում էին ոչ միայն պարսկական ու թուրքական, այլ նաև ցարական բռնապետության կործանման մեջ»[1]։

Ելնելով երկու Ռուսաստանի մասին լենինյան հայտնի դրույթից, հեղինակը գտնում է, որ եթե ցարիզմը՝ արակչեևների Ռուսաստանը, հայ ժողովրդին ենթարկել է ազգային դաժան ճնշման ու գաղութային կեղեքման, ապա նոր բարձրացող հեղափոխական Ռուսաստանը՝ Բելինսկու և Գերցենի, Չեռնիշևսկու և Դոբրոլյուբովի Ռուսաստանը պատմական մեծագույն դեր է խաղացել նրա բովանդակ կյանքում։

1978 թվականին մեր երկրում մեծ հանդիսավորությամբ տոնվեց Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման 150-ամյակը[2]։ Խորհրդահայ պատմաբաններից շատերը հանդես եկան մի շարք աշխատություններով՝ նվիրված այդ կարևոր իրադարձությանը։ Հոբելյանի օրերին լույս տեսավ Զ. Գրիգորյանի նոր մենագրությունը, որը հեղինակի՝ տարիների գ՛[illegible] հետազոտությունների հանրագումարն է[3]։

Աշխատության ներածության մեջ վերլուծված է պրոբլեմի մասին հրատարակված գրականությունը։ Նշելով, որ նախա-

1 Հայ ժողովրդի պատմություն, էջ 197։

2 Տե՛ս Հավերժ բարեկամություն (Հայաստանը Ռուսաստանի կազմում մտնելու 150-ամյակի տոնակատարության նյութերը), Եր., 1980, նույնը՝ ռուս., 1980։

3 Տե՛ս Զ. Գրիգորյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Եր., 1978։

հեղափոխական տարիներին լույս տեսած գրականությունը պարունակում է բավականաչափ հարուստ նյութ, արժեքավոր տեղեկություններ, հեղինակը միաժամանակ քննադատում է ռուսական պաշտոնական պատմագրության առանձին ներկայացուցիչների, որոնք տասնամյակներ շարունակ զարգացրել են մեծապետական մի տեսակետ, որը երկար ժամանակ խոչընդոտում էր Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմական ակտի օբյեկտիվ գնահատմանը։ Նա գտնում է, որ, սքողելով ցարիզմի ռազմաքաղաքական ու գաղութատիրական շահերն Անդրկովկասում և Մերձավոր արևելքում, նրանք Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին ներկայացրել են սոսկ որպես հայ ժողովրդի նկատմամբ ռուսական ցարերի «մարդասիրության», «ողորմածության» արդասիք, ազատագրական միսիայի իրականացում։ Ցարական պաշտոնական պատմագրությունը Կովկասյան կորպուսի ռազմական հաղթանակները վերագրելով «ռուսական գահին» ու գեներալներին, անտեսել է հայ ժողովրդական զանգվածների դերն այդ գործում։

Զ. Գրիգորյանի մենագրության մեջ հարուստ փաստեր կան արևելահայության սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր կացության մասին։ Հենց դրանք էլ ակնառու վկայում են, որ շահական Պարսկաստանի համեմատությամբ ռուսական տիրապետությունն առաջադիմական էր։

Էլ ավելի լայն հենքի վրա է շարադրված ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների պատմությունը։ Գտնելով, որ Արևելյան Հայաստանում խանական լծի տապալման համար մղված կռիվներում գլխավոր ու վճռական ուժը ռուսական բանակն էր, հեղինակը լայնորեն լուսաբանել է հայերի ակտիվ մասնակցությունը այդ պատերազմներին, համակողմանիորեն վեր հանել ինչպես առանձին անհատների, այնպես էլ հայ կամավորական խմբերի մարտական քաջագործությունները, ցույց տվել հայերի՝ ռուսական բանակին ցույց տված նյութական շոշափելի օգնությունը։ Զ. Գրիգորյանն այդ ամենը դիտում է որպես հայ և ռուս ժողովուրդների ռազմական համագործակցություն, որին, նրա կարծիքով, նախորդել է ավելի քան տասը դարերի մի ժամանակաշրջան, և որի ընթացքում այդ երկու ժողովուրդների միջև հաստատվել և հետևողականորեն զարգացել են տնտեսական, քաղաքական և ռազմական սերտ կապեր։



Հայաստանի միացման հարցը քննելիս հեղինակը այն սերտորեն առնչել է Վրաստանի և Ադրբեջանի պատմության հետ, վեր հանել պարսկական և օսմանյան լծից ազատագրվելու համար Անդրկովկասի ժողովուրդների մղած համատեղ պայքարը։

Աշխատության մեջ ուշագրավ էջեր կան Կովկաս աքսորված դեկաբրիստների մասին, որոնք ակտիվորեն մասնակցել են ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին և, որպես կանոն, Կովկասյան կորպուսի կազմում՝ ամենավտանգավոր մարտերին։

Ինչպես հայտնի է, թե՛ ռուսական և թե՛ հայկական պատմագրության մեջ հաճախ են շոշափվել այդ պատերազմներում դեկաբրիստների եռանդուն մասնակցության պատճառները։ Նախահեղափոխական պաշտոնական պատմագրությունը, նշում է Զ. Գրիգորյանը, Կովկաս աքսորված դեկաբրիստների բացառիկ ակտիվ մասնակցությունը բացատրել է նրանով, որ, իբր, նրանք դրանով կամեցել են «արյունով քավել իրենց մեղքը»։ Նշված աշխատության մեջ հերքվում է այդ մտացածին բացատրությունը, քանի որ այն բնավ չի համապատասխանում իրականությանը։ Դեկաբրիստ գործիչները այլ մոտեցում են դրսևորել ինչպես դատավարության ժամանակ, այնպես էլ բանտում, տաժանակրության մեջ, մահապատժի ենթարկվելիս։

Հոբելյանի օրերին հրատարակվեց նաև Վ. Պարսամյանի նոր աշխատությունը[1], ուր ներկայացված է հայ-ռուսական քաղաքական և մշակութային առնչությունների պատմությունը, բացահայտված է Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման առաջադիմական նշանակությունը։ Այստեղ լայն տեղ է տրված հայ ազատագրական շարժումների և հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների ձևավորման պատմությանը, ինչպես նաև այն գործիչներին, որոնք մաքառել են հայ ժողովրդի ազատության ու անկախության համար։

Հայ-ռուսական պատմական կապերի լայն ֆոնի վրա Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման պատմությունն են ներկայացրել նաև պատմական գիտությունների դոկտոր, Հայկական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Բարխուդարյանը և

---

[1] Տե՛ս Վ. Պարսամյան, Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը, Եր., 1978։

պատմական գիտությունների թեկնածու Վ. Ոսկանյանը[1]։ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման և դրա նշանակության հարցը քննվում է աշխատության վերջին երեք գլուխներում, որի հեղինակն է Վ. Բարխուդարյանը։ Աշխատության մեջ առանձնակի ուշադրություն է դարձված Ռուսաստանի գաղթօջախների պատմությանը և համակողմանիորեն բացահայտված է դրանց դերը հայ-ռուսական հարաբերությունների զարգացման գործում։

150-ամյակի առթիվ հրատարակված աշխատությունների մեջ ուշադրության է արժանի նաև Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Աղայանի մենագրությունը[2]։ Այստեղ ևս հանգամանորեն լուսաբանվել են հայ-ռուսական տնտեսական, քաղաքական և մշակութային կապերը, շարադրված են Ռուսաստանի գնությամբ հայ ժողովրդի ազատագրական պայքարի դրվագները, ցույց է տրված Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման պատմական նշանակությունը։ Պատմաբանի աշխատության մեջ ավելի լայնորեն է պատկերված Ռուսաստանի հետ Անդրկովկասի ժողովուրդների մերձեցման գաղափարի ծագումը։

70-ական թվականներին հրատարակված մի շարք աշխատություններում հաջողությամբ բացահայտված է Ռուսաստանի դերը ոչ միայն հայ, այլև Անդրկովկասի մյուս ժողովուրդների պատմական ճակատագրում։ Այդ աշխատություններում ցույց է տրվել Անդրկովկասի ժողովուրդների վաղեմի կապերը Ռուսաստանի հետ, լայնորեն լուսաբանվել է Ռուսաստանի հետ Անդրկովկասի միացման պատմությունը և այդ միացման պատմական նշանակությունը երկրամասի ժողովուրդների համար։ Այս տեսակետից ուշադրության են արժանի Ս. Աղայանի[3] և Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Գալոյանի[4] արժեքավոր մենագրությունները։

Գ. Գալոյանի աշխատությունն աչքի է ընկնում փաստական նյութի առատությամբ, ընդհանրացումներով։ Նա այդ առթիվ դի-

[1] Տե՛ս Վ. Բարխուդարյան, Վ. Ոսկանյան, Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Եր., 1978։

[2] Տե՛ս Агаян Ц., Роль России в исторических судьбах армянского народа, М., 1978:

[3] Տե՛ս Агаян Ц., Вековая дружба народов Закавказья, часть первая, Е., 1976:

[4] Տե՛ս Галоян Г., Россия и народы Закавказья, М., 1976, նույնը՝ հայերեն, Եր., 1978։



տողություններ է անում այն հեղինակներին, ովքեր ճիշտ գնահատական չեն տվել Ռուսաստանին Անդրկովկասի, հատկապես Վրաստանի միացմանը։ Այսպես, օրինակ, նա սխալ է համարում այն տեսակետը, թե, իբր, Վրաստանի միացումը Ռուսաստանին կատարվել է ոչ թե կամավոր, այլ բռնի գործողություններով։ Ճիշտ է նկատում պատմաբանը, որ, թեև ցարիզմը ձգտում էր տիրանալ Վրաստանին և այդ տեսակետից նրա քաղաքականությունը զավթողական էր, բայց, անկախ ցարիզմի նպատակներից, գրում է նա, Վրաստանի միացումը տեղի չունեցավ բռնի ճանապարհով, քանի որ թե՛ ժողովուրդը, և թե՛ երկրի կառավարող շրջաններն իրենք էին ձգտում դրան։ «Միացումը լիովին համապատասխանում էր վրաց ժողովրդի շահերին, և այդ իմաստով այն տեղի ունեցավ կամավոր կերպով։ Ռուսական զորքերը Վրաստան մտան առանց որևէ գնդակ արձակելու, ժողովուրդը նրան ընդունեց իբրև իր ազատագրողների»[1]։

Գ. Գալոյանը մերժում է պրոֆ. Ն. Սմիռնովի այն կարծիքը, թե, իբր, վրաց արքայազն Ալեքսանդրի գլխավորած շարժման նպատակն էր պայքարել ցարիզմի գաղութային ռեժիմի դեմ, և որ այդ շարժումը մեծ ժողովրդականություն էր վայելում։ «Արքայազն Ալեքսանդրը ոչ թե գլխավորում էր ցարիզմի գաղութային քաղաքականության դեմ վրաց ժողովրդի մղած պայքարը, այլ փորձում էր այդ պայքարն օգտագործել իր հակառուսական, ֆեոդալական ձգտումների համար»[2]։ Անդրադառնալով դրան, Գ. Գալոյանը պնդում է, որ, չնայած ցարիզմի գաղութային քաղաքականությանը և գյուղացիների շահագործման ֆեոդալական սիստեմի պահպանմանը, Ռուսաստանին Արևելյան Վրաստանի միացումը առաջադիմական և սկզբունքային նշանակություն ուներ ոչ միայն վրաց ժողովրդի, այլև ամբողջ Անդրկովկասի համար։ «Դա հանդիսացավ երկրամասը Ռուսաստանին միացնելու սկիզբը, որին արդեն վաղուց ձգտում էին վրաց, ադրբեջանական և հայ ժողովուրդները»[3]։

Գ. Գալոյանը ընդգծում է այն միտքը, թե, չնայած ցարիզմի քաղաքականության նվաճողական բնույթին, Ռուսաստանին Անդրկովկասի միացումը ամբողջությամբ վերցրած պետք է

[1] Գ. Գալոյան., նշվ. աշխ., էջ 146։

[2] Նույն տեղը։ էջ 183։

[3] Նույն տեղը, էջ 149։

2724
ՊՈՒՇԿԻՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

համարել կամավոր, որովհետև այն կատարվեց Օսմանյան կայսրության և պարսկական տիրակալների բարբարոսական տիրապետությունների դեմ մղված երկարատև պայքարի հետևանքով։ Նրա կարծիքով, Ռուսաստանը պատերազմ էր մղում ոչ թե երկրամասի ժողովուրդների, այլ Պարսկաստանի և Թուրքիայի դեմ[1]։ Նա գտնում է, որ Անդրկովկասի ժողովուրդների համար պատերազմը ստանում էր հայրենական պատերազմի նշանակություն, քանի որ նրանք անձնուրաց կերպով կռվում էին թշնամու դեմ ոչ թե ցարիզմի շահերի, այլ իրենց կյանքի ու պատվի համար[2]։

«Անդրկովկասը Ռուսական կայսրության կազմում» գլխում Գ. Գալոյանը վեր է հանել Ռուսաստանի հետ միացման սոցիալ-տնտեսական և քաղաքական հետևանքներն ամբողջ Անդրկովկասի համար և ցույց տվել ռուս հեղափոխականների ու Անդրկովկասի ժողովուրդների առաջավոր գործիչների միջև ստեղծված կապերը։ Աշխատության այդ և հետագա գլուխներում նա ձգտել է ցույց տալ, որ ռուսական ազատագրական շարժման գաղափարախոսները ցարիզմի մեծապետական ու շովինիստական քաղաքականությանը հակադրում էին Ռուսաստանի բոլոր ճնշված ժողովուրդների ազատության և իրավահավասարության գաղափարը, հանդես էին գալիս սոցիալական ու ազգային ամեն տեսակ ճնշման դեմ։ Իր հերթին, Անդրկովկասի առաջադիմական գործիչները միայն ռուս ժողովրդի հետ ունեցած միասնության մեջ էին տեսնում ազգային-ազատագրական շարժման զարգացման միակ հնարավորությունը։

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման առաջադիմական հետևանքները, հայ և ռուս ժողովուրդների հետագա մերձեցումը լուսաբանվել են նաև Գ. Գալոյանի մի նոր ուսումնասիրության մեջ[3], որը ընդհանրացնող աշխատություն է հայ ժողովրդի ազատագրական պայքարի մասին՝ հնագույն ժամանակներից մինչև այդ պայքարի հաղթական ավարտը՝ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումն ու ամրապնդումը։ Թեև այդ աշխատության որոշ հարցեր արծարծվել են հեղինակի մինչ այդ հրատարակված ուսումնասիրություններում,

1 Տե՛ս Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 218—219։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 211։

3 Տե՛ս Գ. Գալոյան, Պատմության քառուղիներում։ Ազատագրված ժողովրդի վերածնունդը, Եր., 1982։



այնուամենայնիվ, օգտագործելով նոր, արժեքավոր վավերագրեր, մի շարք պրոբլեմներ նա ավելի բովանդակալից ու խորն է ներկայացրել։ Ուշագրավ է նրա այն դրույթը, թե Ռուսաստանին Արևելյան Հայաստանի և ողջ Անդրկովկասի միացումը ամրապնդեց վերջինիս միջազգային դիրքերը, նպաստեց նրա տնտեսական ու քաղաքական զարգացմանը, և, դրանով իսկ, առաջադիմական նշանակություն ունեցավ նաև Ռուսաստանի համար[1]։ Նշելով, որ Արևելյան Հայաստանն աստիճանաբար ու անշեղորեն ներքաշվեց Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական առաջադիմական զարգացման ընդհանուր հունի մեջ, պատմաբանը իրավացիորեն գրում է, թե դրանով է բացատրվում այն փաստը, որ, չնայած արևելահայությունը ևս ենթարկվում էր ցարիզմի ազգային քաղաքականության դաժան հալածանքներին, այնուամենայնիվ, պատմական զարգացման և ոչ մի փուլում հայ ժողովրդի և ոչ մի խավ ու հասարակական հոսանք հարց չդրեց հայերի Ռուսաստանից անջատվելու մասին[2]։

Ռուսաստանի և Կովկասի ժողովուրդների միջև ստեղծված ռազմական համագործակցության կարևոր դրվագ է լուսաբանված Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Ներսիսյանի աշխատության մեջ[3]։ Հարկ է նշել, որ այդ թեման փաստական նյութի պակասության պատճառով պատմագրության մեջ մինչ այդ շատ աղոտ է լուսաբանվել, այն չի դարձել գիտական հետազոտության առարկա։ Այդ հարցի առթիվ, ինչպես հեղինակն է գրում, կան մի քանի հոդվածներ և գիտահանրամատչելի գրքույկներ՝ նվիրված միայն սեծովյան (կուբանյան) կազակներին և վրաց-ռազմիկներին։

Պատմաբանի աշխատությունը հիմնականում գրված է սկզբնաղբյուրների հիման վրա։ Գիտական շրջանառության մեջ են դրված նոր, մինչև այժմ չհրատարակված արխիվային փաստաթղթեր, որոնց մի մասը զետեղված է գրքի հավելվածում։

Աշխատության մեջ ցույց է տրված Կովկասի բազմազգ ժողովուրդների ակտիվ մասնակցությունը 1812 թ. Հայրենական պատերազմին։ Ըստ հնարավորին վեր է հանված ինչպես կով-

1 Տե՛ս Գ. Գալոյան, Պատմության քառուղիներում։ Ազատագրված ժողովրդի վերածնունդը, էջ 91։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 94։

3 Տե՛ս **Нерсисян М.**, Отечественная война 1812 года и народы Кавказа, Е., 1965:

կասյան զորամասերի, այնպես էլ կովկասցի անհատ ռազմիկների հերոսական սխրագործությունները պատերազմի տարբեր ճակատամարտերում։ Նրանք կողք կողքի մարտնչել են ռուս, ուկրաինացի, բելոռուս, բաշկիր, լատիշ, էստոնացի և այդ ժամանակ Ռուսական կայսրության տարածքում բնակվող մյուս ժողովուրդների զավակների հետ։ Վեր է հանված կովկասցիների մասնակցությունը հայրենասիրական ձեռնարկումներին, գլխավորապես բանակի, աշխարհազորի և տուժած բնակչության կարիքների համար ամբողջ Ռուսաստանում կազմակերպված կամավոր հանգանակություններին։ Հետաքրքրություն են ներկայացնում նաև աշխատության այն էջերը, որտեղ խոսվում է, թե Անդրկովկասի մշակույթի առաջադեմ գործիչներն ինչպես են արձագանքել ռուս ժողովրդի հերոսական պայքարին ու գնահատել այն։

Առանձին գլուխ է հատկացված հայ ժողովրդի մասնակցությանը Հայրենական պատերազմին*։ Խոսքն, իհարկե, վերաբերում է Ռուսաստանի հայկական գաղթօջախներին, ուր ապրում էին մեծ թվով հայեր։ Այսպես, արխիվային տվյալների համաձայն միայն Նոր Նախիջևան քաղաքում 1811 թ. ապրում էին տասը հազար հայեր։ Ուշագրավ փաստեր կան ռուսահայերի մեջ կատարված կամավոր հանգանակությունների և այդ գործում հոգևորականության խաղացած դերի մասին։ Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում ռուսական բանակի շարքերում ծառայող հայ սպաների մասին շարադրանքը, որի մեջ առանձին-առանձին ցույց են տրված 1812 և 1813—14 թթ. մղված բազմաթիվ մարտերում աչքի ընկած Մադաթովի, Դելյանովի, Ախշարումովի, Մելիքովի, Հայրապետովի, Աբամելիք եղբայրների, Լազարևի, Մելիք-Օսիպովի, Բեհբուդովի և ուրիշների կատարած սխրագործությունները։ Նրանք հիմնականում ծագումով բարձրաստիճան կադրային զինվորականներ էին։ Իսկ ի՞նչ մասնակցություն է ունեցել հայ աշխատավորությունը այդ պատերազմին։ Այս հարցին պատմաբանը տալիս է որոշակի պատասխան։ «Կասկածի ենթակա չէ, որ 1812 թ. հայրենասիրական ոգին ընդգրկել է նաև այդ հասարակ մարդկանց, քանի որ նրանց մոտ ամենից առաջ և ավելի խորն էր արմատավորվել ռուսական կողմնորոշումը։ Նրանք չէին պատկերացնում պարսկական խանների և թուրքական փաշաների լծից իրենց հայրենիքի ազատագրումը առանց Ռուսաստանի օգնության, ուստի չէին կարող մնալ անտարբեր դիտողներ»[1]։ Մ. Ներսիսյանը գտնում է, որ, հավանաբար, նրանք նույնպես մասնակցել են հանգանակությունների հավաքմանը և իրենց համեստ ավանդը ներդրել ռուս ժողովրդի ազատագրական պայքարին օգնելու գործում։ Սակայն, ցավոք, արխիվային ֆոնդերում նյութեր չկան հայ աշխատավորության հանգանակությունների մասին։ Ցարական գեներալներն ու հայ բարձրաստիճան հոգևորականները հարկ չեն համարել նրանց մասին գրավոր հիշատակարաններ թողնել, իրավացիորեն եզրահանգում է հեղինակը[2]։

Հայ և ռուս ռազմական զինակցության մի շարք կարևոր դրվագներ են քննարկվում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Ա. Պողոսյանի «Ռուս-հայ բարեկամության պատմությունից» աշխատության մեջ[3]։ Հեղինակի մեկ այլ աշխատության մեջ[4] լուսաբանված է Կարսի մարզի պատմությունը՝ Ռուսաստանին միանալու ժամանակներից մինչև 1920 թվականը։ Ռուսաստանին միանալուց հետո, գրում է հեղինակը, չնայած ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականությանը, մարզի համար որոշակի պայմաններ ստեղծվեցին սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման համար։

1978 թվականին ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի նախաձեռնությամբ հրատարակվեց հոդվածների մի ժողովածու՝ նվիրված Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման 150-ամյակին[5]։ Հեղինակներն են Ծ. Աղայանը, Մ. Արզումանյանը, Ջ. Կիրակոսյանը, Հ. Կարապետյանը, Ի. Թամրազովան, Կ. Խուդավերդյանը, Վ. Մուրադյանը, Գ. Օգանեսովը, Ա. Սաղաղյանը և Ի. Տոմչինը։

Ժողովածուում ցույց է տրված հայ ժողովրդի ծանր դրությունը պատմական անցյալում, հայ-ռուսական դարավոր բարեկա-

* Այս մասը գրեթե նույնությամբ հրատարակվել է հեղինակի «Ռուս-հայկական հարաբերությունների պատմությունից» (ռուսերեն) աշխատության առաջին հատորում (Եր., 1956)։

[1] Нерсисян М., նշվ. աշխ., էջ 209։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 209—210։

[3] Տե՛ս Ա. Պողոսյան, Ռուս-հայ բարեկամության պատմությունից, Եր., 1974։

[4] Տե՛ս Погосян А., Карсская область в составе России, Е., 1983:

[5] Տե՛ս Навеки вместе (Под редакцией Гр. Симоняна и В. Мурадяна), Е., 1978:

մությունն ու Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման առաջադիմական նշանակությունը, Ռուսաստանի ժողովուրդների համատեղ պայքարը ցարիզմի և կապիտալիզմի դեմ հանուն նոր հասարակության կառուցման, խորհրդային ժողովուրդների համատեղ ծանր պայքարը գերմանաֆաշիստական զավթիչների դեմ, և ավելի հանգամանորեն՝ Խորհրդային Հայաստանի տնտեսական ու մշակութային զարգացումը ԽՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում։

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման 150-ամյակի օրերին լույս տեսավ նաև Երևանի պետական համալսարանի դասախոսների հոդվածների ժողովածուն[1]։ Դա մի գիրք է, ուր ներկայացված են ոչ միայն պատմաբանների, այլև փիլիսոփաների, տնտեսագետների, գրականագետների և ուրիշների ուսումնասիրությունները։ Պատմաբան հեղինակները լուսաբանել են Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման ու նրա պատմական նշանակության (Վ. Դիլոյան), Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման նախահեղափոխական ռուսական պատմագրության և հասարակական մտքի գնահատման (Մ. Մուրադյան), պատմական այդ նշանավոր իրադարձության նախախորհրդային հայ հասարակական-քաղաքական և պատմագիտական մտքի գնահատման հարցերը (Ն. Սարուխանյան), 1850—1880-ական թվականների արևմտահայ դեմոկրատները և առաջադեմ Ռուսաստանը (Հ. Ղազարյան), Հոկտեմբերյան հեղափոխությունը և հայ ժողովրդի վերածնունդը (Հ. Մելիքսեթյան) և այլն։

Հորելյանին էր նվիրված նաև 1978-ին հրատարակված «Պատմության հարցեր» միջբուհական ժողովածուն, ուր արժեքավոր հոդվածներ ունեն Զ. Գրիգորյանը, Վ. Դիլոյանը, Հ. Պողոսյանը, Ա. Պողոսյանը, Ռ. Շահինյանը, Ա. Քյուրքչյանը, Ի. Սնխչյանը և ուրիշներ։ Հոդվածները վերաբերում են հայ-ռուսական հարաբերություններին, Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման պատմությանն ու պատմագրությանը։

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման պատմությունը համառոտակիորեն շարադրվել է նաև Երևանի համալսարանի հրատարակած «Հայ ժողովրդի պատմություն» մեկ-

1 Տե՛ս Присоединение Восточной Армении к России и его историческое значение (Отв. редактор Г. Казарян), Е., 1978։



հատորյակում[1]։ Այդ մասի վերաբերյալ (հեղինակ՝ Մ. Ներսիսյան) ունենք մի շարք դիտողություններ։

Գրքում թեև խոսվում է Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման առաջադիմական նշանակության մասին, և դրական երևույթ է համարվում հայերի 1828—1829 թթ. գաղթը, այնուամենայնիվ, հարկ չկար վկայակոչել դեկաբրիստ Ալ. Բեստուժև—Մառլինսկու խոսքերը, որոնք, ասես, հակասում են այդ գաղթի վերաբերյալ Մ. Ներսիսյանի ճիշտ գնահատականին։ Հասկանալի է, որ պարսկահայ և արևմտահայ բնակչության գաղթը կատարվեց ծանր պայմաններում, սակայն պետք է նկատի ունենալ, որ, լինելով դեկաբրիստ, զինվորական պաշտոններից և կոչումներից զրկված ու Կովկաս աքսորված, հետևաբար և ցարիզմի թշնամի, Ալ. Բեստուժև—Մառլինսկին 1832 թ. դեկտեմբերի 14-ին Դերբենտից Կ. Պոլևոյին ուղղված նամակում, խտացնելով գույները, խիստ բացասականորեն, ոչ օբյեկտիվորեն է նկարագրում հայ գաղթականների վիճակը. «Ոսկե սարեր խոստացան, և նրանք շարժվեցին... եկան և չգտան հացի հատիկ, գլուխ դնելու տեղ, ճյուղ՝ կյանք պահպանելու համար։ Ոչինչ չէին պատրաստել, նրանց տվեցին կորստաբեր կլիմա, անբերրի հող»[2]։ Ի դեպ, Մ. Ներսիսյանը Մառլինսկու նամակից ավելի մեծ քաղվածք է բերել իր «Դեկաբրիստները Հայաստանում» աշխատության մեջ, ուր ասված է, թե, իբր, հայ գաղթականների «կեսը կոտորվեց, քառորդը ցրվեց, վերջին քառորդը իր թշվառ գոյությունն է քարշ տալիս օտարության մեջ։ ... Ամենքը փախչում են, ամեն ինչ շորանում է»[3]։

Հարկ չկար քաղվածաբար մեջբերել նաև դեկաբրիստ Մառլինսկու այն խոսքերը, թե «Երևանը շնագայլերով բնակեցված ողբալի ավերակ է»[4]։ Դա ոչ միայն չի համապատասխանում իրականությանը, այլև վիրավորում է ամեն մի հայի ազգային արժանապատվությունը։ Ի. Շոպենի գլխավորած հանձնաժողովի 1829—1832 թթ. տվյալների համաձայն, Երևանի խանության, իսկ 1828 թվականից սկսած Հայկական մարզի կենտրոն Երևան

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), խմբ.՝ պրոֆ. Մ. Ներսիսյանի, Եր., 1972։

2 Նույն տեղը, էջ 341։

3 Մ. Ներսիսյան. Դեկաբրիստները Հայաստանում. Եր., 1958, էջ 262, նույնը՝ աուսերեն։

4 Տե՛ս Нерсисян М., Декабристы в Армении, Е., 1975, էջ 219։

քաղաքը ունեցել է մոտ տասներկու հազար բնակիչ, 1730 տուն, 7 եկեղեցի, 8 մեջիդ, 7 իջևան, 851 կրպակ, 8 բաղնիք, 45 ջրաղաց։ Քաղաքի արդյունագործական-արհեստագործական ձեռնարկություններում աշխատել են 2318 մարդ։ Եկեղեցիներում և մեջիդներում եղել են դպրոցներ[1]։ Ավելացնենք, որ Երևանը ընկղմված է եղել մրգաշատ այգիների մեջ։

«Հայ ժողովրդի պատմության» մեկհատորյակում կան այլ սխալներ, վրիպումներ ու բացթողումներ։ Օրինակ, ոչ մի հիշատակություն չկա ռուս մեծ գրող և դիվանագետ Ա. Ս. Գրիբոյեդովի մասին, որը քիչ դեր չի խաղացել հայ-ռուսական հարաբերությունների զարգացման, Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման գործում։ Հարց է առաջանում, ինչո՞վ բացատրել Գրիբոյեդովի անվան անտեսումը հայոց պատմությանը նվիրված նման գրքում։ Հեղինակի անիրազեկությա՞մբ, հազիվ թե։ Հայ-ռուսական հարաբերությունների պատմության բազմահմուտ հեղինակը չէր կարող չիմանալ Գրիբոյեդովի խաղացած դերը Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման, պարսկահայերի գաղթի կազմակերպման գործում։

Ճիշտ մոտեցում հանդես չի բերել հեղինակը՝ դարի ամբողջ պատմությունը արհեստականորեն բաժանելով երկու մասի՝ արևմտյան և արևելյան, ընդ որում դարի առաջին կեսը նվիրված է արևելահայության, իսկ երկրորդը՝ արևմտահայության պատմությանը։ Այսպես, XIX դարի երկրորդ կեսի պատմությունը շարադրված է մի գլխում՝ «Արևմտահայության վիճակը XIX դարի 2-րդ կեսին»։ Այդ բաժնի նման սխալ կառուցվածքի պատճառով փաստորեն անտեսվել է արևելահայության (և ամբողջ հայ ժողովրդի) անցյալ դարի երկրորդ կեսի չափազանց հարուստ ու բովանդակալից պատմությունը։

Բազմաթիվ կարևոր թեմաների, ինչպես՝ Արևելյան Հայաստանում ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության, XIX դարի գյուղացիական շարժումների, Ղրիմի պատերազմի Կովկասյան ռազմաճակատի և հայերի մասնակցության, 1870 թ. գյուղացիական ռեֆորմի ու Արևելյան Հայաստանում կապիտալիզմի զարգացման, արևելահայ ազատագրական խմբակների գործունեության, Հայաստանում բանվորական շարժման

[1] Տե՛ս Шопен И., Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, С. Петербург, 1852, էջ 463—778։



և մարքսիզմի տարածման առաջին քայլերի վերաբերյալ ընթերցողը գրքում լավագույն դեպքում կգտնի մեկ-երկու տող, այն էլ ոչ իրենց տեղում, իսկ մի քանիսի մասին՝ ոչ մի խոսք։ Բոլորովին անտեսված է նաև հայերի հասարակական կյանքում, 50—60-ական թվականներին, որոշակի երևույթ հանդիսացող Ազգային սահմանադրությունը։ Տարօրինակ է, որ այդ ժամանակաշրջանի հայ հասարակական-քաղաքական հոսանքների պատմությունը զետեղված է մշակույթի բաժնում։

Պետք է ասել, որ Երևանի համալսարանի հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» XIX—XX դարերի վերաբերյալ մեր արած դիտողությունները[1] հեղինակները հիմնականում հաշվի են առել և համապատասխան ուղղումներ ու լրացումներ մտցրել գրքի ռուսերեն հրատարակության մեջ (Տե՛ս « История армянского народа с древнейших времен до наших дней», под ред. проф. М. Нерсисяна, Е., 1980)։ Այնուհետև դիրքը ռուսերենից թարգմանվում և վերահրատարակվում է հայերեն։ Սակայն մի՞թե չէր կարելի գրքի առաջաբանում կամ նրա տողատակին նշել, որ հեղինակները հաշվի են առել մեր դիտողությունները։ Օրինակ, եթե Գրիբոյեդովի անունը բոլորովին չկար գրքի հայերեն հրատարակության մեջ, ապա ռուսերեն հրատարակության մեջ ահա թե ինչ է ասված նրա մասին։ «Նրանց (պարսկահայ գաղթականներին— Շ. Հ.) մեծ օգնություն է ցույց տվել ռուս մեծ գրող հումանիստ Ա. Ս. Գրիբոյեդովը, որն այդ ժամանակ Պարսկաստանի ռուսական դեսպանն էր» (էջ 196)։ Այնուհետև՝ «Արևելյան Հայաստանում ռուսական բանակի շատ ռազմական գործողություններին մասնակցել է Ա. Ս. Գրիբոյեդովը։ Դրա հետ միասին նա մեծ դեր է խաղացել Թուրքմենչայի պայմանագրի կնքման գործում» (էջ 198) և այլն։

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման պրոբլեմի լուսաբանումը նախախորհրդային հայ պատմագրության մեջ հանգամանորեն քննվում է պատմական գիտությունների թեկնածու Ն. Սարուխանյանի մենագրությունում[2]։ Սկզբում նա շարադրում է ժամանակի հայ գործիչների գնահատականները պատմական այդ կարևորագույն իրադարձության վերաբերյալ։ Այնուհետև, խոսելով Ռուսաստանի տիրապետության առաջին

[1] Տե՛ս «Լենինյան ուղիով», 1974, № 4։

[2] Տե՛ս Ն. Սարուխանյան, Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ, Եր., 1971։

տարիներին Հ. Ալամդարյանի, Մ. Թաղիադյանի, Ն. Աշտարակեցու, Խ. Աբովյանի և ուրիշների դրական դիրքորոշման մասին, հեղինակը միաժամանակ ցույց է տալիս նրանց հետագա հիասթափությունը ցարական կառավարությունից։ Ն. Սարուխանյանը, հակառակ ավանդական մեկնաբանությունների, ցույց է տվել, թե ինչպես Խ. Աբովյանը, հետագայում հիասթափվելով, բռնեց ցարական կառավարության գաղութային քաղաքականությունը քննադատողի դիրք[1]։ Ճիշտ է բացահայտված հայ հասարակական-քաղաքական հոսանքների դիրքորոշումը Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման պրոբլեմի նկատմամբ։

Քննելով Ա. Երիցյանի հայացքները, Ն. Սարուխանյանը գտնում է, որ նա ռուսական տիրապետության գնահատման հարցում անհետևողական է եղել։ Եթե 1860-ական թվականներին նա հակված էր դեպի Թուրքիան և Արևմտյան Եվրոպան, ապա 70-ական թվականներից սկսած փոխվում է նրա կողմնորոշումը։ Ազգային-պահպանողական հոսանքից թեքվելով բուրժուական լիբերալիզմ, Ա. Երիցյանը 1880—90-ական թվականներին չէր ժխտում Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման անհրաժեշտությունը։ Ճիշտ է Ն. Սարուխանյանը, գրելով, թե Երիցյանն իր գործունեության երկրորդ շրջանում ընկավ մեկ այլ ծայրահեղության մեջ։ Ճիշտ գնահատելով Արևելյան Հայաստանի միացման նշանակությունը, նա սկսեց ներբողել ցարիզմի քաղաքական նպատակամղումները։

Հեղինակը ճիշտ է բնութագրել Կ. Եղյանի աշխարհայացքը, նրա պատմահայեցողությունը որպես իդեալիստի, ցարապաշտի, հայ լուսավորչական եկեղեցու ջերմ պաշտպանի։ Անդրադառնալով Ս. Պալասանյանի հայացքներին, հեղինակը գտնում է, որ նա բուրժուական օբյեկտիվիզմի դիրքերից էր բնութագրում հայերի նկատմամբ ցարիզմի վարած քաղաքականությունը։ Հեղինակը ցույց է տվել նաև Գյուտ քահանա Աղանյանցի, Եղիշե ավագ քահանա Գեղամյանցի հակառուսական դիրքորոշումը, Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման հարցում նրանց բացասական վերաբերմունքը։

Անդրադառնալով Մ. Օրմանյանի հայացքներին, նա գրում է, որ, քննադատության ենթարկելով ցարական իշխանություններին, Օրմանյանն իր ողջ կյանքում ռուսական տիրապետությունը համարում էր ընդունելի։

Հաջող է տրված Լեոյի հայացքների քննությունը։ Հեղինակը ճիշտ է նկատել մինչհեղափոխական շրջանի և խորհրդային իշխանության տարիներին նրա գրած աշխատություններում հայերի ռուսական կողմնորոշման և Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման հարցում տեղ գտած հակասական գնահատականները։

Հայերի ռուսական կողմնորոշումն ու Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը, գրում է նա, հակագիտական ծայրահեղից էին մեկնաբանում հայ դաշնակցական պատմագրության ներկայացուցիչները։ Այդ հարցում, գրում է նա, ճիշտ դիրքերում էր Ա. Ջոպանյանը։ Աշխատության մեջ բացահայտվել է նաև Դ. Անանունի սխալ տեսակետը այդ հարցում։

Կարևոր նշանակություն ունի Ն. Սարուխանյանի կողմից ժամանակի հայ նշանավոր հասարակական-քաղաքական և հոգևոր գործիչ Ն. Աշտարակեցու գործունեության բնութագիրը։ Նախահեղափոխական հայ պատմահասարակագիտական միտքը, իրավացիորեն գրում է նա, չկարողացավ ըստ արժանվույն գնահատել հայ ազատագրական շարժման նշանավոր այդ գործչին։ «Եթե ոմանք գերագնահատեցին նրա ընդունակություններն ու կարողությունները (Ալ. Երիցյան, Ա. Պերպերյան, Օ. Օրմանյան, Պ. Պողոյան և ուրիշներ), ապա գտնվեցին նաև այնպիսիները (Մ. Աղաբեկյան, Ստ. Պերճ Պողոս-Փափազյանց, Ղ. Աղայան, Ե. Թ. Գեղամյան, Ավ. Արասխանյան), որոնք Ներսեսի գործունեությունից պոկեցին ազգային-հայրենասիրական քողը՝ նրան բաժին թողնելով փառասիրական և իշխանասիրական հակումներ միայն»[1]։ Մի այլ տեղ նա գրում է, որ խորհրդահայ պատմագրության մեջ ևս հարկ եղած չափով չի գնահատվել Ն. Աշտարակեցին։ Սակայն խորհրդահայ պատմագրության մեջ նրա գործունեության արժեքավորման ուղղությամբ, նշում է պատմաբանը, ուշագրավ խոսք է ասել Վ. Պարսամյանը, որը գրել է, որ Ն. Աշտարակեցու գործունեությունը գնահատելիս պետք է պատմական մոտեցում ունենալ, նայած ժամանակին, պետք է ցույց տալ նրա թե՛ դրական և թե՛ բացասական կողմերը։ Նույնանման մոտեցում է դրսևորել Աշոտ Հովհաննիսյանը՝ «Նալ-

1 Տե՛ս Ն. Սարուխանյան, *Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը...* էջ 102—106։

1 Ն. Սարուխանյան, նշվ. աշխ., էջ 177—178։

բանդյանը և նորա ժամանակը» աշխատության մեջ։ Հենց այս տեսանկյունից էլ հարցին մոտեցել է Ն. Սարուխանյանը։

Պատմական լայն հենքի վրա հայ-ռուսական առնչությունների հարցին է անդրադարձել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համբարձում Կարապետյանը իր ակնարկային բնույթի աշխատության մեջ[1]։

Հեղինակն իր առջև շնորհակալ խնդիր է դրել՝ շարադրել Ռուսաստանի և ռուս ժողովրդի մասին հայ դեմոկրատական-առաջադիմական մտածողներ Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Հ. Թումանյանի, ինչպես նաև մարքսիստական մտքի խոշոր ներկայացուցիչներ Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ս. Սպանդարյանի, Ա. Կասյանի, Ալ. Մյասնիկյանի, Աշ. Հովհաննիսյանի և Բ. Բորյանի հայացքները, վեր հանել հայ ժողովրդի պատմական ճակատագրում Ռուսաստանի և ռուս ժողովրդի առաջադիմական, ազատագրական դերի վերաբերյալ նրանց տեսակետները։

Աշխատությունը գրված է մարքս-լենինյան մեթոդաբանությամբ։ Հեղինակը հանդես է բերում ինչպես պատմական իրադարձությունների, այնպես էլ, որոշ բացառությամբ, վերոհիշյալ գործիչների հայացքների վերլուծական ակնհայտ կարողություն։

Այստեղ պատմաբանը բազմաթիվ հարցեր է շոշափում։ Գրքի ամենավերջին՝ 11-րդ գլխում (Հայ-ռուս առնչությունները ըստ հայ մարքսիստական պատմագրության՝ Աշոտ Հովհաննիսյան, Բագրատ Բորյան), հեղինակը հանգամանորեն վերլուծում է հայ-ռուսական հարաբերությունների մասին վերոհիշյալ պատմաբանների երկերը։ Այս բաժինը, սակայն, զերծ չէ նաև թերություններից։

Նախ, Աշ. Հովհաննիսյանի մասին։ Իրավացիորեն բարձր գնահատելով խորհրդահայ պատմագրության զարգացման գործում Աշ. Հովհաննիսյանի ծառայությունները, Հ. Կարապետյանն անտեսում է նրա թույլ տված սխալները։ Նրա՝ 1921 թվականին էջմիածնում հրատարակված «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» աշխատության մեջ տեղ գտած ոչ ճիշտ հայացքները ներկայացվում են որպես մարքսիստական տեսակետներ։ Խորհրդահայ պատմագրության մեջ (Վ. Պարսամյան, Զ. Գրիգորյան, Վ. Ոսկանյան, Պ. Հարությունյան և այլն) քննադատվել են Աշ. Հովհաննիսյանի որոշ տեսակետները, այդ թվում հայերի ռուսական կողմնորոշման տեսակետները։ Մենք ևս ժամանակին անդրադարձել ենք այդ հարցին։

«Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում» աշխատության մեջ, առարկելով Աշ. Հովհաննիսյանին, գրել ենք. «Միանգամայն ճիշտ համարելով, որ ռուսական օրիենտացիան ուներ սոցիալ-դասակարգային բնույթ, չի կարելի համաձայնվել Աշ. Հովհաննիսյանի այն դրույթին, թե, իբր, մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը «ռուս օրիենտացիան օտար և անհարազատ էր աշխատավոր ժողովրդին և արհեստական մի պատվար նրա քաղաքական մտայնությանը»»[1]։ «Անվիճելի է,— այնուհետև գրված է այնտեղ,— որ ռուսական օրիենտացիան բխում էր հայ ժողովրդի սոցիալական բոլոր շերտերի շահերից։ Այլ բան է, որ նրանցից յուրաքանչյուրն ուներ իր սոցիալ-քաղաքական նպատակը, յուրովի էր պատկերացնում այն»[2]։ Համաձայնելով Աշ. Հովհաննիսյանի այն տեսակետին, թե մինչև 1720-ական թվականները ռուսական կողմնորոշումը հայ ժողովրդական զանգվածների գաղափարական մտայնությունը դեռևս չէր անել, առարկելի ենք համարել նրա այն պնդումը, թե մինչև այդ ռուսական կողմնորոշումն «ուղեցույց չի հանդիսացել նաև վարիչ դասերից որևէ մեկին՝ նրա քաղաքական որոնումների ճանապարհին»[3]։ Հակառակ այդ պնդման, մենք գրել ենք. «Հայտնի է, որ հայ մելիքները, հայ խոշոր վաճառականության և բարձր հոգևորականության շատ ներկայացուցիչներ մինչև այդ, այսինքն՝ մինչև 1720-ական թվականները, որոշակի կողմնորոշում ունեին դեպի Ռուսաստանը և նրա հետ կոնկրետ հույսեր էին կապում օտար լծից մեր ժողովրդի ազատագրման գործում, ժխտել այդ, նշանակում է կտրել Իսրայել Օրուն իրական հողից, նրա ծրագիրն ու գործունեությունը դիտել որպես սոսկ մի անհատի ցանկությունների արտահայտություն»[4]։ Նույնը վերաբերում է Բ. Բորյանին։ Ո՞ւմ հայտնի չէ, որ Բ. Բորյանը, որն, ի դեպ, պրո-

---

[1] Տե՛ս Հ. Կարապետյան, Հայ դեմոկրատական-առաջադիմական, մարքսիստական միտքը Ռուսաստանի և ռուս ժողովրդի մասին, Եր. 1981։

[1] Աշ. Հովհաննիսյան, Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, էջմիածին, 1921, էջ 67։

[2] Շ. Հարությունյան, Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում, Եր., 1967, էջ 165։

[3] Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 6։

[4] Շ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 164։

ֆեսիոնալ պատմաբան չէր, տուրք տալով վուլգար սոցիալիզմին, Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման, 1920 թ. Մայիսյան ապստամբության, 1921 թ. քաղաքացիական կռիվների պատմության և այլ հարցերում թույլ է տվել սխալներ[1]։

Տարիներ շարունակ խորհրդահայ պատմաբաններն այս կամ այն չափով անդրադարձել են Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման պատմագրությանը, սակայն մինչև վերջերս գիտական հետազոտության հատուկ առարկա չէր դարձել, թե այդ կարևոր պրոբլեմը ինչպես է լուսաբանվել ռուսական պատմագրության մեջ։ Այս տեսակետից ուշագրավ է պատմական գիտությունների թեկնածու Մ. Մուրադյանի աշխատությունը[2]։

Ռուս պատմաբանների՝ Սոլովյովի, Պոտոցի, Գլինկայի և ուրիշների աշխատություններից կատարելով բազմաթիվ քաղվածքներ, հեղինակը ցույց է տվել, որ XIX դարի ռուսական պատմագրությունը մեծ հետաքրքրություն է հանդես բերել Հայաստանի քաղաքական պատմության, հայ-ռուսական հարաբերությունների, հայերի ռուսական կողմնորոշման և ավելի մեծ չափով Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու հարցերի նկատմամբ։

Պատմաբանը Ճիշտ մոտեցում է ցուցաբերել՝ մի կողմից, ընդգծելով, որ ռուսական պատմագիտությունը դրական գործ է կատարել վերոհիշյալ հարցերի ուսումնասիրման ու գնահատման ասպարեզում, իսկ, մյուս կողմից, շեշտելով, որ այդ պատմագրության ներկայացուցիչները, կանգնած լինելով պահպանողական դիրքերում, փառաբանում էին ցարիզմը, նրա գահակալներին ներկայացնում էին որպես հայ ժողովրդի անշահախնդիր բարեկամների։

Աշխատության մեջ բացահայտված է նաև ռուսական հասարակական մտքի առանձին ներկայացուցիչների, այդ թվում՝ Գրիբոյեդովի և դեկաբրիստների դիրքորոշումը Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման հարցում։

Ուշադրության է արժանի ռուս-իրանական պատերազմների և Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման դիվանագիտական պատմությանը նվիրված մենագրությունը[1]։ Աշխատության մեջ այդ ժամանակաշրջանի դիվանագիտության պատմությունը դիտված է որպես միջազգային դիվանագիտության մի մասը։ Նրանում բացահայտված է իրանա-թուրքական և անգլո-ֆրանսիական հակառուսական և, մասնավորապես, հակահայկական դիվանագիտության ռեակցիոն բնույթը։ Ցույց է տրված, թե նա ինչպես էր ամեն կերպ խոչընդոտում Արևելյան Հայաստանի միացմանը Ռուսաստանին, ջանքեր թափում հայ ժողովրդի ազատագրական պայքարը ձախողելու համար։

Ուշագրավ է Բալայանի այն միտքը, թե XIX դարի սկզբին Ռուսաստանի առաջադիմական դերը Անդրկովկասի ժողովուրդների պատմական ճակատագրում բնորոշվում է ոչ միայն ռուս-իրանական և ռուս-թուրքական պատերազմներում Անդրկովկասի աշխարհազորայինների համագործակցությամբ, ռուսական զորքի հաղթանակով։ Մեծ նշանակություն է ունեցել նաև ռուսական դիվանագիտության հաղթանակը արևմտյան տերությունների դիվանագիտական ճնշման դեմ, որոնք ձգտում էին Անդրկովկասում հավերժացնել պարսկական տիրապետությունը և Իրանի պատերազմներն ուղղել Ռուսաստանի դեմ, Եվրոպայում հաստատել անգլո-ֆրանսիական տիրապետություն, որը կնախապատրաստեր Նապոլեոնյան զորքի ներխուժումը Ռուսաստան[2]։

Բ. Բալայանի աշխատության մեջ արժանի հակահարված է տրված պրոբլեմի արդի բուրժուական, այդ թվում իրանական պատմագրության կեղծ կոնցեպցիաներին։

Հաջող է ներկայացված ռուս մեծ գրող, դիվանագետ Ա. Ս. Գրիբոյեդովի դերը Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման գործում, բացահայտված են նաև նրա սպանության քաղաքական շարժառիթները։

Բ. Բալայանի աշխատությունն աչքի է ընկնում փաստական նյութի հարստությամբ, որոնց ձեռքբերումը հեղինակի մանրակրկիտ և լուրջ աշխատանքի արդյունք է։

Հայ-ռուսական հարաբերությունների պատմության պարբերացման հարցը քննարկվում է Զ. Գրիգորյանի և Վ. Ոսկանյա-

---

[1] Տե՛ս Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. 1. М.-Л., 1928, էջ 120, 147, ч. 2, М.-Л., 1929, էջ 98—102, 393:

[2] Տե՛ս Մ. Մուրադյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին XIX դարի ռուսական պատմագիտական և հասարակական մտքի գնահատմամբ, Եր., 1985։



[1] Տե՛ս Балаян Б., Дипломатическая история русско-иранских войн и гибель Грибоедова, Е., 1988:

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 7։

նի հոդվածում[1]։ Հեղինակները հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը՝ սկզբից մինչև XVIII դարը, բաժանում են 3 փուլերի։ Առաջին փուլն ընդգրկում է Կիևյան պետության և ֆեոդալական մասնատվածության ժամանակաշրջանը, երկրորդը սկսվում է ռուսական ազգային պետության կազմավորման տարիներից և շարունակվում մինչև XVII դարի վերջը, երրորդ փուլն ընդգրկում է XVIII դարը, երբ խորանում ու ամրապնդվում է հայերի ռուսական կողմնորոշումը, և հայ ազատագրական շարժման բոլոր հոսանքները Հայաստանի ազատագրության բախտը կապում են Ռուսաստանի օգնության հետ։ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացումով, գրում են հեղինակները, նոր փուլ բացվեց հայ-ռուսական հարաբերությունների պատմության մեջ։ Հայ հեղափոխական-դեմոկրատական շարժումը ռուսականին միաձուլումով նրանց հարաբերությունների պատմությունը թևակոխում է իր հեղափոխական-դեմոկրատական փուլը։ Իսկ XIX դարի 90-ական թվականների երկրորդ կեսից հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը թևակոխում է մի նոր փուլ՝ զուգադիպելով Ռուսաստանի հեղափոխական շարժումների պրոլետարական փուլին։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակով, գրում են հեղինակները, սկիզբ է դրվում հայ և ռուս ժողովուրդների կապերի ու բարեկամական հարաբերությունների պատմության ամենանշանավոր փուլին, որը բաժանվում է 3 շրջանի։

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման հարցի լուսաբանման մասին մեր համառոտ շարադրանքն ավարտելուց առաջ հարկ ենք համարում անդրադառնալ նաև խորհրդահայ պատմագրության մեջ տեղ գտած որոշ տարաձայնություններին։

Մինչև օրս միասնական կարծիք չկա հայերի ռուսական կողմնորոշման ձևավորման ժամանակի վերաբերյալ։ Դրան շատերն են անդրադարձել՝ Ա. Գ. Հովհաննիսյան, Վ. Պարսամյան, Զ. Գրիգորյան, Վ. Ոսկանյան, Գ. Գալոյան և ուրիշներ, սակայն վերջին քառորդ դարում այդ հարցն ավելի հանգամանորեն քննարկվել է Զ. Գրիգորյանի կողմից։ Վեր հանելով սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական այն գործոնները, որոնցով պայմանավորվել է հայերի ազատագրական շարժման ռուսական

[1] Տե՛ս Զ. Գրիգորյան, Վ. Ոսկանյան, Հայ-ռուսական հարաբերությունների պատմության պարբերացման մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 3։



կողմնորոշման ձևավորումը, նա գտնում է, որ այն ապրել է կազմավորման, հասունացման բավականին երկարատև պրոցես և իր ձևավորմանը հասել է XVII դարի երրորդ քառորդին[1]։ Զ. Գրիգորյանի կարծիքով, հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ձևավորումը զուգադիպել է Նոր Ջուղայի հայ առևտրական ընկերության և ռուսական արքունիքի հետ առևտրական պայմանագրի կնքման համար սկսված բանակցություններին[2]։

Հեղինակը սխալ է համարում երկար ժամանակ պատմական գրականության մեջ տարածված այն կարծիքը, ըստ որի հայերի ռուսական կողմնորոշման սկզբնավորումը կապվում է Իսրայել Օրու «սոսկ անձնավորության և սուբյեկտիվ ցանկությունների հետ»[3]։ «Հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշումը,— գրում է նա,— արդյունք է ոչ թե ինչ-որ դիպվածի կամ քաղաքական թեկուզև ինչ-որ անհատ գործչի սուբյեկտիվ ցանկության, այլ պատմական զարգացման օրինաչափ պրոցեսի և պայմանավորվում է սոցիալ-տնտեսական ու ռազմաքաղաքական մի շարք գործոններով»[4]։

Անտարակույս, իրավացի է Զ. Գրիգորյանի դիտողությունն այն մասին, որ չի կարելի հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման սկզբնավորումը կապել Իսրայել Օրու սոսկ անձնավորության և նրա սուբյեկտիվ ցանկությունների կամ պատահական դիպվածի հետ։ Սակայն, ցավոք, նա չի նշում, թե ովքեր են այդ պատմաբանները։ Որքան հայտնի է, ոչ մի պատմաբան չի գրել, թե հայերի ռուսական կողմնորոշման սկզբնավորումը եղել է Իսրայել Օրու սոսկ անձնավորության և սուբյեկտիվ ցանկությունների կամ ինչ-որ մի դիպվածի արդյունք։

Հայերի ռուսական կողմնորոշման ձևավորման պրոբլեմին բազմիցս անդրադարձել է նաև Վ. Պարսամյանը։ Նա, ինչպես իր նախորդ, այնպես էլ 1978-ին հրատարակված աշխատության մեջ, գրում է, որ հայերի ռուսական կողմնորոշումը ձևավորվել է XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին՝ բախտորոշ այդ իրա-

[1] Տե՛ս Զ. Գրիգորյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, էջ 86։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 81։

[3] Նույն տեղը, էջ 78։

[4] Նույն տեղը։

նի հոդվածում[1]։ Հեղինակները հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը՝ սկզբից մինչև XVIII դարը, բաժանում են 3 փուլերի։ Առաջին փուլն ընդգրկում է Կիևյան պետության և ֆեոդալական մասնատվածության ժամանակաշրջանը, երկրորդը սկսվում է ռուսական ազգային պետության կազմավորման տարիներից և շարունակվում մինչև XVII դարի վերջը, երրորդ փուլն ընդգրկում է XVIII դարը, երբ խորանում ու ամրապնդվում է հայերի ռուսական կողմնորոշումը, և հայ ազատագրական շարժման բոլոր հոսանքները Հայաստանի ազատագրության բախտը կապում են Ռուսաստանի օգնության հետ։ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացումով, գրում են հեղինակները, նոր փուլ բացվեց հայ-ռուսական հարաբերությունների պատմության մեջ։ Հայ հեղափոխական-դեմոկրատական շարժումը ռուսականին միաձուլումով նրանց հարաբերությունների պատմությունը թևակոխում է իր հեղափոխական-դեմոկրատական փուլը։ Իսկ XIX դարի 90-ական թվականների երկրորդ կեսից հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը թևակոխում է մի նոր փուլ՝ զուգադիպելով Ռուսաստանի հեղափոխական շարժումների պրոլետարական փուլին։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակով, գրում են հեղինակները, սկիզբ է դրվում հայ և ռուս ժողովուրդների կապերի ու բարեկամական հարաբերությունների պատմության ամենանշանավոր փուլին, որը բաժանվում է 3 շրջանի։

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման հարցի լուսաբանման մասին մեր համառոտ շարադրանքն ավարտելուց առաջ հարկ ենք համարում անդրադառնալ նաև խորհրդահայ պատմագրության մեջ տեղ գտած որոշ տարաձայնություններին։

Մինչև օրս միասնական կարծիք չկա հայերի ռուսական կողմնորոշման ձևավորման ժամանակի վերաբերյալ։ Դրան շատերն են անդրադարձել՝ Ա. Գ. Հովհաննիսյան, Վ. Պարսամյան, Զ. Գրիգորյան, Վ. Ոսկանյան, Գ. Գալոյան և ուրիշներ, սակայն վերջին քառորդ դարում այդ հարցն ավելի հանգամանորեն քննարկվել է Զ. Գրիգորյանի կողմից։ Վեր հանելով սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական այն գործոնները, որոնցով պայմանավորվել է հայերի ազատագրական շարժման ռուսական

[1] Տե՛ս Զ. Գրիգորյան, Վ. Ոսկանյան, Հայ-ռուսական հարաբերությունների պատմության պարբերացման մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 3։



կողմնորոշման ձևավորումը, նա գտնում է, որ այն ապրել է կազմավորման, հասունացման բավականին երկարատև պրոցես և իր ձևավորմանը հասել է XVII դարի երրորդ քառորդին[1]։ Զ. Գրիգորյանի կարծիքով, հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ձևավորումը զուգադիպել է Նոր Ջուղայի հայ առևտրական ընկերության և ռուսական արքունիքի հետ առևտրական պայմանագրի կնքման համար սկսված բանակցություններին[2]։

Հեղինակը սխալ է համարում երկար ժամանակ պատմական գրականության մեջ տարածված այն կարծիքը, ըստ որի հայերի ռուսական կողմնորոշման սկզբնավորումը կապվում է Իսրայել Օրու «սոսկ անձնավորության և սուբյեկտիվ ցանկությունների հետ»[3]։ «Հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշումը,— գրում է նա,— արդյունք է ոչ թե ինչ-որ դիպվածի կամ քաղաքական թեկուզև ինչ-որ անհատ գործչի սուբյեկտիվ ցանկության, այլ պատմական զարգացման օրինաչափ պրոցեսի և պայմանավորվում է սոցիալ-տնտեսական ու ռազմաքաղաքական մի շարք գործոններով»[4]։

Անտարակույս, իրավացի է Զ. Գրիգորյանի դիտողությունն այն մասին, որ չի կարելի հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման սկզբնավորումը կապել Իսրայել Օրու սոսկ անձնավորության և նրա սուբյեկտիվ ցանկությունների կամ պատահական դիպվածի հետ։ Սակայն, ցավոք, նա չի նշում, թե ովքեր են այդ պատմաբանները։ Որքան հայտնի է, ոչ մի պատմաբան չի գրել, թե հայերի ռուսական կողմնորոշման սկզբնավորումը եղել է Իսրայել Օրու սոսկ անձնավորության և սուբյեկտիվ ցանկությունների կամ ինչ-որ մի դիպվածի արդյունք։

Հայերի ռուսական կողմնորոշման ձևավորման պրոբլեմին բազմիցս անդրադարձել է նաև Վ. Պարսամյանը։ Նա, ինչպես իր նախորդ, այնպես էլ 1978-ին հրատարակված աշխատության մեջ, գրում է, որ հայերի ռուսական կողմնորոշումը ձևավորվել է XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին՝ բախտորոշ այդ իրա-

[1] Տե՛ս Զ. Գրիգորյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, էջ 86։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 81։

[3] Նույն տեղը, էջ 78։

[4] Նույն տեղը։

գործությունը կապելով հայ ազատագրական շարժման մեծ ռահվիրա Իսրայել Օրու գործունեության հետ։ «Մի կողմից հուսախաբված Արևմուտքի տերությունների,— գրում է նա,— մյուս կողմից՝ հաշվի առնելով միջազգային հարաբերություններում Ռուսաստանի դերի բարձրացումը, Անդրկովկասի ժողովուրդների և ռուս ժողովրդի պատմական կապերն ու դրանց զուգակցման հեռանկարները, Օրին կանգնեց նոր ուղու վրա, դարձավ հայերի ռուսական կողմնորոշման առաջամարտիկը, նրա ամենաջերմ պաշտպանը ու ջատագովը»[1]։ Մեկ այլ տեղ նա գրում է. «Օրին առաջինն էր, որ XVII դարի վերջում և XVIII դարի սկզբում հաստատուն հիմքերի վրա դրեց հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները, իր ժամանակակիցներին և ապագա սերունդներին պատգամեց հավերժ ռուս ժողովրդի հետ մեծ գաղափարը։ Օրու ջանքերով հայերի ռուսական կողմնորոշումը դարձավ հայ ազատագրական պայքարի մայրուղի և գնալով ավելի ու ավելի արմատավորվեց հայ ժողովրդի մեջ»[2]։

Մենք բաժանում ենք հայերի ռուսական կողմնորոշման ժամանակի և Իսրայել Օրուն տրված վերոհիշյալ գնահատականները։ Մեր կարծիքով, հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշումը Իսրայել Օրու անվան հետ կապելը ամենևին չի նշանակում այն կապել նրա «սոսկ անձնավորության» կամ «սուբյեկտիվ ցանկությունների» հետ։ Ի վերջո, Օրին էլ իր դարաշրջանի ծնունդն էր, այն հայ քաղաքական խոշոր գործիչը, որը, ինչպես նկատել է նաև պրոֆեսոր Վ. Դիլոյանը, «քաղաքագետի խորիմացությամբ ըմբռնեց իր ժողովրդի պատմական զարգացման տենդենցը, որ իրերի բերումով նրան էր վիճակված XVIII դարի լուսաբացին որոշակի շրջադարձ կատարել հայ ազատագրական շարժման պատմության մեջ»[3] կամ՝ «XVIII դարը հայ ժողովրդի պատմության մեջ բախտորոշ նշանակություն ունեցավ։ Այդ դարում քաղաքական շարժման բնույթ ստացավ հայ ժողովրդի ռուսական օրիենտացիան»[4]։

Հայ-ռուսական հարաբերությունների պատմության խորա-

1 Վ. Պարսամյան, Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը, էջ 7 (Ընդգծումները հեղինակինն են— Շ. Հ.)։

2 Նույն տեղը, էջ 17 (Ընդգծումը հեղինակինն է— Շ. Հ.)։

3 Վ. Դիլոյան, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Եր., 1966, էջ 5։

4 Նույն տեղը։



գիտակ ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանն իր «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» արժեքավոր աշխատության մեջ գրել է. «Առաջին հայ մարդը չէր Օրին, որը քաղաքական ակնկալություններ էր լծորդում Ռուսաստանի հետ... Սակայն առաջին հայ քաղաքական գործիչն էր նա, որ XVIII դարի սկզբներին, վերանայելով և ճշգրտելով հայ ազատագրական շարժման քաղաքական ուղեգիծը, բացառապես Ռուսաստանի հետ կապեց Հայաստանի ազատագրման հեռանկարը»[1]։

Գ. Գալոյանի կարծիքով, Անդրկովկասում ռուսական կողմնորոշումը ծնունդ առնելով XV դարում, «աստիճանաբար ընդգրկել է Թուրքիայի և Պարսկաստանի կողմից ճնշված բոլոր սոցիալական խավերը՝ ժողովրդական լայն զանգվածներից սկսած մինչև ֆեոդալ իշխողները»[2]։ Այդ տեսակետը վիճելի է։

Խորհրդահայ պատմագրության մեջ տարակարծություններ կան նաև հայերի, ինչպես նաև Անդրկովկասի մյուս ժողովուրդների ռուսական կողմնորոշման բնույթի հարցում։ Այսպես, մեր նախորդ աշխատության մեջ դիտողություն էինք արել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պարույր Հարությունյանին, XVIII դարի առաջին քառորդի հայ ազատագրական շարժման պատմությանը նվիրված մենագրության հինգերորդ գլուխը «Շարժումը Ռուսաստանին միանալու համար» վերնագրելու առթիվ[3]։

Ծ. Աղայանը ևս իր մենագրություններից մեկի հինգերորդ գլուխը վերնագրել է այսպես՝ «Անդրկովկասի ժողովուրդների պայքարը Ռուսաստանին միանալու համար»[4]։

Գ. Գալոյանը «Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները» մենագրության մեջ թեև առանձին գլուխ չի առանձնացրել, բայց գրել է, որ «Անդրկովկասի ժողովուրդները դարերով պայ-

1 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Եր., 1959, էջ 633։

2 Գ. Գալոյան, Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, էջ 124։

3 Տե՛ս Арутюнян П., Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954:

4 Տե՛ս Агаян Ц., Роль России в исторических судьбах армянского народа:

քարել են իրենց ստրկացնողների դեմ Ռուսաստանին միանալու համար»[1]։

Սակայն նկատենք, որ Գ. Գալոյանը մի այլ տեղ, այդ հարցում որոշակի տարբերություն դնելով պատմական տարբեր փուլերի միջև, գրում է. «XIX դարի առաջին տասնամյակները նշանավորվեցին Ռուսաստանի հետ միացման համար հայ ժողովրդի մղած նպատակասլաց և վճռական պայքարով»[2]։ Մի այլ տեղ նա գրում է. «Չի կարելի համաձայնվել այն պատմաբանների հետ, ովքեր հայ ժողովրդի ազատագրական պայքարը այդ փուլում հանգեցնում են անկախությունը վերականգնելու մտադրությանը, ինչ գնով էլ լինի իր թագավորությունը վերստեղծելու ձգտմանը։ Հայ ժողովրդի ազատագրական շարժման սթափ մտածող գործիչներից որևէ մեկը հազիվ թե նման հույսեր փայփայեր, քանի որ աչքի առաջ էր Վրաստանի օրինակը»[3]։ Այնուհետև՝ «Հայերը, ինչպես և երկրամասի մյուս ժողովուրդները, իրենց վերածննդի հեռանկարները տեսնում էին Ռուսաստանի հովանավորության մեջ, «Հայկական թագավորության» վերականգնումը տվյալ փուլում որպես գործնական խնդիր առաջ չի քաշվել»[4]։

Այս հարցում այլ կարծիք ունի Վ. Պարսամյանը։ «Հայերը,— գրում է նա,— դարեր շարունակ հերոսական պայքար մղելով պարսկական և թուրքական բռնակալության դեմ, ձգտել և ձգտում էին վերականգնել Հայաստանի ինքնուրույնությունը և երբեք չէին հաշտվում այն մտքի հետ, որ պարսիկների լուծը թոթափելուց հետո այժմ էլ Ռուսաստանը պետք է զրկի ինքնուրույնությունից։ Ռուսական զորքերի հետ նրանք հերոսաբար կռվել էին Հայաստանի ազատագրության, նրա լավ ապագայի համար և, հասկանալի է, բնավ չէին կարող հաշտվել այն մտքի հետ, թե Պարսկաստանի լծից ազատագրվելուց հետո այժմ պիտի ընկնեին ցարական Ռուսաստանի լծի տակ»[5]։

---

1 Галоян Г., Россия и народы Закавказья. с. 429. (Հայերեն հրատարակության մեջ հեղինակը փոխել է այդ ձևակերպումը։ «Ռուսաստանին միանալու համար», բառերի փոխարեն գրել է՝ «Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու համար»։ Տե՛ս նշ. աշխ., էջ 521։

2 Գ. Գալոյան, Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, էջ 189։

3 Գ. Գալոյան, նշվ. ռուս. աշխ., էջ 162։

4 Նույն տեղը, էջ 162—163։

5 Վ. Պարսամյան, Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Եր., 1947, էջ 135—136։



Հիրավի, հայերի ռուսական կողմնորոշում ասելով պետք է հասկանալ ոչ թե Հայաստանը Ռուսաստանին միացնելու հայերի ձգտումը, այլ Ռուսաստանի օգնությամբ հայկական անկախ պետության ստեղծումը։ Հայտնի է, որ հնդկահայ ազատագրական խմբակի ղեկավարներից Շ. Շահամիրյանը իր «Որոգայթ փառաց» աշխատության մեջ շարադրել է անկախ Հայաստանի սահմանադրական օրենքների մանրամասն նախագիծ։ 1770-ական թվականներին Հ. Արղությանը և Հ. Լազարյանը ջանքեր էին թափում Ռուսաստանի օգնությամբ վերականգնել հայկական պետությունը։

Մի հարց ևս։ Տարիներ առաջ մենք առիթ ենք ունեցել մերժելու խորհրդահայ պատմագրության մեջ տեղ գտած այն տեսակետը, թե, իբր, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին արդյունք էր հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության[1]։ Սակայն հարցի նման մոտեցումը շարունակվեց նաև 70-ական թվականներին, մանավանդ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման 150-ամյա հոբելյանի ժամանակ։ Այսպես, օրինակ, Վ. Պարսամյանը ըստ ամենայնի վեր հանելով Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման առաջադիմական նշանակությունը, գրում է, թե «Հայաստանի միացումը Ռուսաստանին հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության արգասիքն էր»[2]։ Մեր կարծիքով, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին արգասիք էր նախ և առաջ ցարական Ռուսաստանի նվաճողական քաղաքականության, նրա մղած պատերազմներին Պարսկաստանի դեմ։ Այլ բան է, որ ցարիզմի այդ քաղաքականությունը օբյեկտիվորեն նպաստում էր հայ ժողովրդի շահերին, նպաստում էր նրա մղած ազատագրական պայքարին, կամ որ հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը նպաստեց ռուսական զենքի հաղթանակին, Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման գործին և այլն։

Այսպիսով, խորհրդահայ պատմագրության մեջ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման և հայ-ռուսական հարաբերությունների պրոբլեմի հետազոտության բնագավառում

---

1 Տե՛ս Շ. Հարությունյան, Պատմագիտության զարգացումը խորհրդային Հայաստանում, էջ 251—252։

2 Վ. Պարսամյան, Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը, էջ 99։

վերջին երկուս ու կես տասնամյակներում զգալի աշխատանք է կատարվել։ Համոզված ենք, որ դրանով չի ավարտվում այդ գործը։ Մատնանշված պրոբլեմը դեռ երկար ժամանակ կմնա խորհրդահայ պատմագրության ուշադրության կենտրոնում։

## 2. Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը XIX դարում և XX դարի սկզբին

Վերջին քառորդ դարում լուրջ առաջընթաց կատարվեց նաև Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի պատմության գիտական հետազոտության բնագավառում։ Խորհրդահայ պատմագրության համար նշված ժամանակաշրջանում լուրջ ուսումնասիրության հարց դարձավ Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքը, մի բան, որը, ինչպես հայտնի է, մինչև 1950-ական թվականների կեսերը գրեթե դուրս էր մնացել պատմաբանների ուշադրությունից։

Նշված ժամանակաշրջանում Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը լուսաբանվել է ինչպես հայ ժողովրդի ամբողջական պատմությանը նվիրված գրքերում, այնպես էլ առանձին մենագրություններում։

Խորհրդահայ պատմաբանները, փաստական հարուստ նյութերի հիման վրա, գիտական շրջանառության մեջ դնելով բազմաթիվ արժեքավոր սկզբնաղբյուրներ, ցույց են տվել հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և իրավական-քաղաքական ծանր դրությունը թուրք-պարսկական բռնապետությունների տիրապետության տակ։ Առանձին-առանձին քննության են առնվել Արևելյան և Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումները, հողային հարաբերությունները, հարկային համակարգը, գյուղատնտեսության, արհեստագործության, արդյունագործության և արդյունաբերության վիճակը, քաղաքների զարգացումը, ինչպես նաև ազգային ճնշումներն ու հալածանքները։ Բացահայտելով ռուսական ցարիզմի վարած ազգային-գաղութային քաղաքականությունը, միաժամանակ ցույց են տրվել Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի առաջընթացը, հայ ժողովրդի այդ հատվածի անհամեմատ ապահով վիճակը։

XIX դարի սկզբից մինչև 1860-ական թվականներն ընկած ժամանակաշրջանի Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը լայնորեն լուսաբանված է Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակած



«Հայ ժողովրդի պատմության» V հատորում[1]։ Արևելյան Հայաստանի մասին գրել են պրոֆ. Վ. Ռշտունին և Վ. Դիլոյանը, իսկ Արևմտյան Հայաստանի մասին՝ պրոֆ. Հ. Ղազարյանը։

Գտնելով, որ պարսկական տիրապետության վերջին շրջանում Արևելյան Հայաստանում տիրապետող հասարակական-տնտեսական ֆորմացիան շարունակում էր մնալ ֆեոդալականը՝ արևելյան ավատատիրությունը իր բնորոշ գծերով, հեղինակները հանգամանորեն ցույց են տվել այդ ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում գոյություն ունեցող վարչակարգը, հողային հարաբերությունները, հարկային համակարգը, գյուղատնտեսության, արհեստագործության ու առևտրի վիճակը և այլն։ Վ. Դիլոյանի կարծիքով, XIX դարի առաջին տասնամյակներում Արևելյան Հայաստանում գոյություն ունեին պետական, մուլքադարական և թիուլգարական հողատիրության ձևեր։ Հողատիրության տարածված ձևը պետականն էր։

Հատորում ներկայացվում է Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացումը Ռուսաստանի տիրապետության ժամանակաշրջանում, երբ նպաստավոր պայմաններ են ստեղծվում գյուղատնտեսության, արհեստագործության, արդյունաբերության, առևտրի զարգացման համար։ Նշվում է, որ Անդրկովկասով մեկ սփռված հայ ազգաբնակչությունը առաջնակարգ դեր էր խաղում երկրամասի և՛ արհեստային արտադրության, և՛ արդյունաբերության, և՛ առևտրի ասպարեզներում։ Սակայն, չնայած այդ ամենին, Արևելյան Հայաստանը մնում էր որպես հետամնաց ագրարային երկիր, որտեղ արտադրության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր։ Հեղինակները միաժամանակ բացահայտել են ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականությունը Արևելյան Հայաստանում, վեր հանել գյուղացիական շարժումների պատմությունը։

Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի 1870—1917 թթ. պատմությունը լուսաբանված է «Հայ ժողովրդի պատմության» VI հատորում[2], որը գրել են Վ. Ռշտունին, Ա. Համբարյանը, Խ. Բարսեղյանը, Ն. Թավաքալյանը։

Ի տարբերություն նախորդ հատորի, այստեղ Հայաստանի

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Հայաստանը 1801—1870 թվականներին (պատ. խմբագիր՝ Ս. Աղայան), Եր., 1974։

2 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Հայաստանը 1870—1917 թվականներին (պատ. խմբագիր՝ Ս. Աղայան), Եր., 1981։

սոցիալ-տնտեսական պատմությունը չի բաժանված հատվածների՝ արևելյանի և արևմտյանի, թեև դրանք գտնվում էին զարգացման տարբեր մակարդակների վրա։

Արևելյան Հայաստանում, գրված է հատորում, Ռուսաստանի բարերար ազդեցության պայմաններում, հայերն աճում ու առաջադիմում էին, մինչդեռ Արևմտյանում, սուլթանական կառավարության ազգահալած քաղաքականության հետևանքով, նվազում ու բնաջնջվում էին[1]։ Այնուհետև շարադրվում է Հայաստանում 1870 թ. գյուղացիական ռեֆորմի համառոտ պատմությունը։ Հանգամանորեն խոսվում է հողային հարաբերությունների, հարկային համակարգի, ինչպես նաև արդյունաբերության ու գյուղատնտեսության վիճակի մասին։

Հատորում քննվում է հայ բուրժուազիայի և պրոլետարիատի ձևավորման հարցը, շարադրվում Հայաստանի այդ երկու հատվածների սոցիալ-տնտեսական դրությունը XX դարի սկզբին։

Պարսկական տիրապետության տակ Արևելյան Հայաստանի ծանր կացությունը և Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացումից հետո նրա տնտեսական կյանքի աշխուժացումը բազմակողմանիորեն լուսաբանված են նաև Զ. Գրիգորյանի մենագրության մեջ[2]։

1960-ական թվականներին Արևելյան Հայաստանի գյուղացիության պատմության գիտական հետազոտության ուղղությամբ իր բեղմնավոր աշխատանքն է շարունակում սոցիալ-տնտեսական պատմության ճանաչված գիտակ Վ. Ռշտունին։

Ինչպես հայտնի է, նրա աշխատության առաջին մասը, որը լույս էր տեսել 1960 թվականին, ընդգրկում էր 1828—1870 թվականները։ Այդ մասին խոսել ենք մեր նախորդ գրքում։ 1968 թ. լույս է տեսնում պատմաբանի մենագրության երկրորդ մասը, որն ընդգրկում է Հայաստանի գյուղացիության հետռեֆորմյան ժամանակաշրջանի պատմությունը[3]։

Հենց սկզբից նկատենք, որ նրա երկրորդ գրքի զգալի մասը կազմում է Հայաստանում գյուղացիական ռեֆորմի պատմությունը։

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 24։

2 Տե՛ս Զ. Գրիգորյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը։

3 Տե՛ս Վ. Ռշտունի, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության (1826—1917 թթ.), մաս Բ (1870—1917), Եր., 1968։



թյան վերաբերյալ հեղինակի մենագրությունը, որն առանձին գրքով լույս է տեսել 1947-ին՝ ռուսերեն[1]։ Այս աշխատության մասին ևս մենք խոսել ենք մեր նախորդ գրքում։

Անդրադառնալով ճորտատիրական իրավունքի վերացման անհրաժեշտությանը, Վ. Ռշտունին գտնում է, որ ինչպես Ռուսաստանում, Վրաստանում, Հայաստանում ևս (թեկուզ փոքր մասշտաբով և թույլ չափով) առկա էին այն պայմանները, որոնց հետևանքով անխուսափելի դարձավ գյուղացիական ռեֆորմի իրականացումը։ Նրա կարծիքով, առաջին հերթին դա տնտեսական զարգացման ուժն էր, որը դանդաղ, բայց բավականին նկատելի չափով երկիրը սղում էր դեպի ապրանքադրամական հարաբերությունների զարգացում և կապիտալիստական տնտեսության տարրերի առաջացում արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ։ Ռեֆորմի անհրաժեշտությունը բխում էր նաև նրանից, որ ուժեղացել էին գյուղացիական ելույթները կալվածատերերի դեմ, որը մտահոգության առարկա էր ցարիզմի համար, քանի որ նա ձգտում էր գաղութի շահագործումը հարմարեցնել իշխող դասակարգերի հետռեֆորմյան նկրտումներին[2]։

Խոսելով Անդրկովկասի գյուղացիական ռեֆորմի պատմագրական պրոբլեմների մասին, Վ. Ռշտունին գնահատում է Ա. Եսայանի, Հ. Թումանյանի, Մ. Ադոնցի, Ծ. Աղայանի և այլոց կատարած գրական աշխատանքը, միաժամանակ անելով որոշ դիտողություններ։ Օրինակ, նա չի ընդունում պրոֆ. Ա. Եսայանի այն տեսակետը, թե, իբր, Կովկասի իշխանությունները չէին շտապում գյուղացիական ռեֆորմ անցկացնել Անդրկովկասում և ամեն կերպ արգելակում էին դրա իրականացմանը։ Պատմաբանն անընդունելի է համարում պրոֆ. Հ. Թումանյանի այն անվերապահ մոտեցումը, որի համաձայն նույնացվում են Անդրկովկասի գյուղացիության և կայսրության ներքին նահանգների գյուղացիական հուզումները։ Վ. Ռշտունին գտնում է, որ պրոֆ. Մ. Ադոնցի այն պնդումը, թե, իբր, Անդրկովկասում ապրանքադրամական հարաբերությունների աճի հետ հողատերերը

1 Տե՛ս Рштуни В., Крестьянская реформа в Армении 1870 году, Е., 1947:

2 Տե՛ս Վ. Ռշտունի, նշվ. աշխ., էջ 20։

խիստ մեծացնում են տուրքերի չափը և կոռային աշխատանքի հաշվին ընդարձակում սեփական հարկերը, ճիշտ չէ։

Աշխատության երկրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է Հայաստանում գյուղացիական ռեֆորմին։ Այստեղ հեղինակին հաջողվել է բացահայտել դրա առանձնահատկությունները։ Նա դրանցից ամենակարևորը համարում է այն, որ գյուղացին Հայաստանում զրկվեց օրենքով իրեն տրված հողաբաժինը թեկուզ փրկավճարով գնելու հնարավորությունից, որովհետև ցարիզմը, ի տարբերություն Ռուսաստանի, և մասամբ Վրաստանի, իր հողաբաժինը կալվածատերերից գնելու համար Հայաստանի գյուղացուն նյութական օժանդակություն ցույց չտվեց և նա մինչև 1912 թ. մնաց ժամանակավոր կախյալ դրության մեջ[1]։

Աշխատության մեջ լայն տեղ է հատկացված հայ մամուլում և խորհրդահայ պատմագրության մեջ գյուղացիական ռեֆորմի արդյունքների գնահատականներին։ Անդրադառնալով հայ հասարակական հոսանքների դիրքորոշմանը, Վ. Ռշտունին քննադատում է կղերաֆեոդալական հոսանքի ներկայացուցիչներին, որոնք գոհ էին ցարական ռեֆորմից։ Նա քննադատական խոսք է ուղղում նաև հայ բուրժուական մամուլի հասցեին, որը թեև հեռու էր կանգնած կղերաֆեոդալական հոսանքի նման ցարիզմի անվերապահ խնկարկումից, սակայն հանդես չէր գալիս ցարական ռեֆորմի սկզբունքների դեմ։

Առանձին քննության առնելով Հայաստանի գյուղացիական ռեֆորմի հարցը խորհրդահայ պատմագրության մեջ, Վ. Ռշտունին ճիշտ է նկատում, որ Հայաստանի և, ընդհանրապես, Անդրկովկասի գյուղացիության հարցը մինչխորհրդային հայ պատմագրության ուշադրությանը չի արժանացել, բացառությամբ Դ. Անանունի։ Նշելով այն դրականը, որ տվյալ պրոբլեմի լուսաբանման, մանավանդ հարուստ փաստական նյութեր կուտակելու գործում կատարել է Դ. Անանունը, պատմաբանը միաժամանակ անում է մի շարք քննադատական դիտողություններ։ Այսպես, օրինակ, նա իրավացիորեն մերժում է Դ. Անանունի այն տեսակետը, թե, իբր և՛ պարսկական, և՛ ռուսական տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանում գոյություն է ունեցել ճորտություն։ Վ. Ռշտունին գտնում է, որ Դ. Անանունը Ռուսաստանի գյուղացիական ռեֆորմին անդրադառնալիս մոռացության է տալիս նրա դասակարգային-ճորտատիրական բնույթը, այնտեղ ծավալված դասակարգային մարտերը, ցարական և բուրժուական, գյուղացիական և հեղափոխական-դեմոկրատական, հակամարտ և իրարամերժ ծրագրերը և այլն։ Նա անտեսել է նաև 1870 թվականին Հայաստանում և Ադրբեջանում ռեֆորմի շուրջ ծավալված պայքարը։

Գիտական որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Վ. Ռշտունու արտահայտած մտքերը իր ընդդիմախոս, ակադեմիկոս Ն. Դրուժինինի դիտողությունների վերաբերյալ*։ Վ. Ռշտունին համաձայն լինելով իր գրախոսի մի շարք դիտողություններին և ճշտումներ մտցնելով իր աշխատության մեջ, միաժամանակ մի շարք հարցերում առարկում է նրան։ Որո՞նք են այդ առարկությունները։

ա) Վ. Ռշտունին իրավացիորեն մերժում է ակադեմիկոս Ն. Դրուժինինի այն մեղադրանքը, թե, իբր, ինքը մանրամասն կանգ է առնում ցարիզմի գաղութային քաղաքականության բացասական կողմերի վրա, սակայն չի նկատում «Հայաստանի տնտեսական, քաղաքական և կուլտուրական մերձեցման օբյեկտիվ-առաջադիմական հետևանքներն ավելի առաջավոր պետության հետ, ինչպիսին XIX դարի Ռուսաստանն էր Պարսկաստանի համեմատ»[1]։

բ) Անհիմն է ակադեմիկոս Ն. Դրուժինինի այն մեղադրանքը, թե, իբր, ինքը 1870 թ. գյուղացիական ռեֆորմին Հայաստանի (նաև Ադրբեջանի) համար նույն նշանակությունն է վերագրել, ինչ որ ունեցել է 1861 թ. ռեֆորմը Ռուսաստանի համար։ «Իմ աշխատությունը ոչ մի հիմք չի տալիս վերոհիշյալ մեղադրանքի համար»[2],— գրում է Վ. Ռշտունին։

գ) Հայ պատմաբանը չի համաձայնվում նաև Ն. Դրուժինինի այն դիտողությանը, թե 1870—1877 թթ. կանոնադրությունները չեն լիկվիդացրել գյուղացիական համայնքը[3]։

---

1 Տե՛ս Վ. Ռշտունի, նշվ. աշխ., էջ 104։

* Խոսքը վերաբերում է Ն. Դրուժինինի՝ Վ. Ռշտունու դոկտորական դիսերտացիայի պաշտպանության ժամանակ (1941 թ. մայիս) ընդդիմախոսական գրախոսությանը և «Советская книга» ամսագրի 1948 թ. № 1-ում հրապարակված գրախոսությանը՝ Վ. Ռշտունու «Крестьянская реформа в Армении» աշխատության մասին։

1 Տե՛ս Վ. Ռշտունի, նշվ. աշխ., էջ 166։

2 Նույն տեղը։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 169—170։

Անդրադառնալով խորհրդահայ հեղինակներ Խ. Ավդալբեկյանի[1], Ա. Եսայանի[2] աշխատություններին, Վ. Ռշտունին գրում է. «Երկու հեղինակներն էլ գյուղացիական ռեֆորմի գնահատության վերաբերյալ սխալ մոտեցում ունեն, որն անհարիր է խորհրդային պատմագրության մեջ անվիճելիորեն ընդունված տեսակետին»[3]: Խ. Ավդալբեկյանի կարծիքով, ցարիզմը 1870 թվականին գյուղացիական ռեֆորմ չի անցկացրել, այն Հայաստանում և Անդրկովկասում իրականացվել է միայն 1912 թվականին: Նույն սխալ կարծիքին է նաև Ա. Եսայանը, գտնելով, որ 1870 թ. կանոնադրությունը գյուղացիական ռեֆորմ չի կարելի համարել:

Վ. Ռշտունին անդրադառնում է նաև Հ. Թումանյանի[4], Մ. Ադոնցի[5] և Մ. Եգանյանի[6] աշխատություններին, քննադատելով նրանց որոշ տեսակետները:

Վ. Ռշտունին հաջող է լուսաբանել Հայաստանում գյուղացիական ռեֆորմի արդյունքները: Նա ցույց է տվել ռեֆորմից հետո կալվածատիրական գյուղի վիճակը և կապիտալիստական տարրերի զարգացման պայմանները: Աշխատության մեջ բացահայտված են 1912 թ. դեկտեմբերի 20-ի ցարական օրենքի կենսագործման սոցիալ-դասակարգային էությունը, հետռեֆորմյան ժամանակաշրջանում ծավալված գյուղացիական շարժումները:

Թեև խորհրդահայ պատմաբանների կողմից (հատկապես՝ Վ. Ռշտունու) մեծ աշխատանք է կատարվել Արևելյան Հայաստանի գյուղացիության պատմության գիտական հետազոտման բնագավառում, սակայն շատ հարցեր դեռևս մնացել են լուսաբանված: Այդ առթիվ հայ գյուղացիության պատմության երախտավորն իր «Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության» գրքում գրել է, թե շատ բան դեռ չի արված Հայաստանի

[1] Տե՛ս Խ. Ավդալբեկյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801—1917 թթ.), Եր., 1959:

[2] Տե՛ս Есаян А. Мулькадарское право в Армении, Е., 1948:

[3] Վ. Ռշտունի, նշվ. աշխ, էջ 169—170:

[4] Տե՛ս Туманян О., Экономическое развитие Армении, ч. I, Е., 1954:

[5] Տե՛ս Адонц М., Экономическое развитие Восточной Армении в XIX веке, Е., 1957:

[6] Տե՛ս Մ. Եգանյան, Հայաստանի հետռեֆորմյան ագրարային հարաբերությունները, Եր. 1964:



գյուղացիական շարժումների քիչ թե շատ լրիվ պատկերը տալու համար: Այս տեսակետից ուշադրության է արժանի պատմական գիտությունների թեկնածու Վ. Հովակիմյանի աշխատությունը[1]: Փաստական հարուստ տվյալների հիման վրա հեղինակը ցույց է տվել Արևելյան Հայաստանում գյուղացիության մղած պայքարը, որը հիմնականում ընթացել է երեք ուղղություններով՝ պայքար հողի համար, պայքար ցարիզմի հարկային քաղաքականության և տեղական իշխանությունների դեմ:

Ճիշտ է հեղինակի այն եզրահանգումը, որ եթե XIX դարի 80-ական թվականներին Ռուսաստանի գյուղացիական շարժումներում գերիշխողը զանգվածային ելույթների ակտիվ ձևերն էին, ապա Արևելյան Հայաստանում, ինչպես 80, այնպես էլ 90-ական թվականներին բնորոշ էր պասսիվ բնույթը: Դրա հիմնական պատճառն այն է, գրում է հեղինակը, որ գյուղացիությունը Արևելյան Հայաստանում չի ենթարկվել ճորտատիրական այնպիսի շահագործման, ինչպես Ռուսաստանում կամ Վրաստանում: Դրանից բացի, արևելահայ գյուղացիության կալվածատիրական հատվածն անհամեմատ ավելի փոքրաթիվ էր և որոշակի ուժ չէր ներկայացնում: Արևելյան Հայաստանում բանվորական շարժման բացակայությունը նույնպես իր կնիքն էր դնում գյուղացիական զանգվածների պայքարի վրա: Ճիշտ են հեղինակի այն եզրահանգումները, որ XIX դարի վերջին Արևելյան Հայաստանի գյուղացիական շարժումներին բնորոշ են եղել անկազմակերպվածությունը, տարերայնությունը, անհետևողականությունը: Պայքարի ժամանակ առաջ էին քաշվում ոչ թե քաղաքական, այլ տնտեսական պահանջներ:

Ինչպես նշեցինք, 1960—80-ական թվականներին խորհրդահայ պատմաբանները նշանակալից աշխատանք են կատարել ոչ միայն Արևելյան, այլև Արևմտյան Հայաստանի պատմության, հատկապես արևմտահայության սոցիալ-տնտեսական դրության գիտական հետազոտման ուղղությամբ: Այստեղ իր մեծ ավանդն ունի պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Ղազարյանը: Այդ հարցին է նվիրված նրա մենագրությունը[2], որը հիմնականում շարադրվել է նաև ՀԽՍՀ գիտությունների ակա-

[1] Տե՛ս Վ. Հովակիմյան, Գյուղացիական շարժումները Արևելյան Հայաստանում (1880—1890-ական թթ.), Եր., 1984:

[2] Տե՛ս Հ. Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Եր., 1967:

դեմիայի հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» V հատորում։

Աշխատության մեջ խստորեն քննադատված է թուրքական պատմագրությունը, որը կեղծում, խեղաթյուրում է հայ ժողովրդի պատմությունը։ Թուրք պատմաբանները պնդում են, թե, իբր, Օսմանյան կայսրության հպատակ հայերը ազատ են եղել սոցիալ-քաղաքական ճնշումներից, ավելի լավ են ապրել, քան մահմեդականները։ Այնուհետև, ցույց է տրվել տվյալ պրոբլեմի ուսումնասիրման գործում եվրոպացի, ռուս և, առավել հանգամանորեն, հայ, այդ թվում՝ խորհրդահայ պատմաբանների կատարած աշխատանքը։

Ջժխտելով եվրոպացի և ռուս հեղինակների հավաքած փաստական նյութի կարևորությունը Արևմտյան Հայաստանի պատմության համար, Հ. Ղազարյանը միաժամանակ քննադատում է նրանց մեծ մասին, որոնք, ելնելով իրենց թուրքասիրական հայացքներից, հանդես են բերել ոչ ճիշտ, միակողմանի մոտեցում։ Պատմաբանը քննադատել է նաև հայ կղերամիրայական, ազգային-պահպանողական և լիբերալ-բուրժուական կոնցեպցիաները։

Ըստ արժանվույն գնահատելով խորհրդահայ պատմաբաններ Աշ. Հովհաննիսյանի, Մ. Ներսիսյանի, Վ. Պարսամյանի, Ե. Սարգսյանի, Մ. Զուլալյանի և ուրիշների կատարած աշխատանքը, Հ. Ղազարյանը արդարացիորեն նշում է Լեոյի և Ա. Կարինյանի սխալները։ Նա վաստակաշատ պատմաբան Լեոյի սխալներից մեկը համարում է այն, որ նա, ճիշտ բացահայտելով հայ ժողովրդի նկատմամբ Թուրքիայի վարած սոցիալական ու ազգային քաղաքականության էությունը, արևմտահայ գյուղացիությանը որակել է իբրև ճորտերի և նույնիսկ բացասել Թուրքիայում ազատ գյուղացիության գոյության փաստը։ «Նա չտեսավ, որ 1840—1870-ական թվականներին, այսինքն՝ «Թանզիմաթի» կիրառության շրջանում, Թուրքիայում իրավականորեն ձևավորված հայ ճորտեր գրեթե չկային, իսկ փաստորեն ճորտացվածներն էլ կազմում էին գյուղացիության ընչին տոկոսը։ Գյուղացիության հիմնական զանգվածը՝ հողատեր թե հողազուրկ, համենայն դեպս, ազատ գյուղացիներ էին»[1]։

Հ. Ղազարյանը առարկում է նաև Ա. Համբարձումյանին, որը

[1] Հ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 94։



գտնում է, թե գյուղացիության ճորտացումը Արևմտյան Հայաստանում իրավապես ձևակերպված էր, որ XIX դարի սկզբին գյուղացիները գտնվում էին հիմնականում կախյալ, ճորտական և մասամբ ազատ վիճակում։ Նրա կարծիքով, գյուղացիության կախվածությունը չի կարելի շփոթել լիակատար ճորտատիրության հետ։ «Մահմեդական Արևելքում, այդ թվում և Թուրքիայի հպատակ երկրամասերում,— գրում է նա,— ճորտատիրությունը իրավաբանորեն ձևակերպված չէր»[1]։ Սակայն, նշում է պատմաբանը, եթե գյուղացիության կիսաճորտ լինելը կարող է վիճարկման առարկա դառնալ, վիճարկող երկու կողմերի ձեռքին էլ կովաններ տալով, ապա փոքրաքանակ ստրուկների գոյությունն անվիճելի է։ Նրա կարծիքով, սկսած խոր միջնադարից մինչև XX դարի սկիզբը Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր նահանգներում ստրուկներ կային։

Արևմտյան Հայաստանի գյուղացիության ճորտության հարցում Ա. Համբարձումյանի և Հ. Ղազարյանի իրարամերժ տեսակետներն արծարծվել են նաև «Լենինյան ուղիով» ամսագրում[2], Ա. Համբարձումյանը, առարկելով Հ. Ղազարյանին, անվերապահորեն գտնում է, թե «...ճորտությունը խորթ չէր Արևմտյան Հայաստանին։ Նրա հիմնական հատկանիշը՝ անմիջական արտադրողին հողին ամրացնելը, անգամ ձևակերպված էր իրավապես»։ Կամ՝ «... Արևմտյան Հայաստանում գյուղացիներին ամրակցել էին հողին, և օրենքով արգելում էին նրանց տեղաշարժերը»։ Դրան հակառակ, Հ. Ղազարյանը, հենվելով փաստերի վրա, ժխտում է Թուրքիայում (նաև Արևմտյան Հայաստանում) ճորտության գոյությունը։ «Մինչև գյուղացիության ճորտացման, հողին ամրակցելու հանգամանքը,— գրում է նա,— բացառում են արևմտահայերի զանգվածային անարգել տեղաշարժերը, պանդխտությունը, գյուղացիության հոսքը Արևմտյան Հայաստանից դեպի Կ. Պոլիս, Զմյուռնիա, Ռուսաստան, նույնիսկ հեռավոր Ամերիկա»[3]։ Իր պատասխանում Հ. Ղազարյանը տրամաբանական և համոզիչ չի համարում նաև Ա. Համբարձումյանի այն դրույթը, թե, իբր, XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբներին ֆեոդալական կարգերն ավելի են ուժեղանում Արև-

[1] Հ. Ղազարյան, նշվ. աշխ. էջ 94։
[2] Տե՛ս «Լենինյան ուղիով», 1972, № 7։
[3] Նույն տեղը, էջ 107—108։

մտյան Հայաստանում, գյուղացիները մեծ մասամբ ճորտացվում են կամ կախման մեջ ընկնում թուրք աղաներից, քուրդ բեկերից, ազատների թիվը նվազագույնի է հասնում[1]։

Հ. Ղազարյանի աշխատությունում զգալի տեղ է հատկացված հարկային, սոցիալական ու ազգային ճնշումների, հայերի քաղաքական իրավազրկության վերաբերյալ հարցերի լուսաբանմանը։ Հարկային ծանր հարստահարությունների մասին խոսելիս հեղինակի տեսադաշտից չի վրիպել նաև հայ եկեղեցու, հոգևորականության հարկապահանջությունը, որը գալիս լրացնում էր հայ աշխատավորության համընդհանուր ճնշումն ու կեղեքումը։

Խոսելով Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի քաղաքների, արդյունահանության և առևտրի մասին, հեղինակը, մի կողմից, ցույց է տալիս դրանց զարգացումը, իսկ մյուս կողմից՝ բացահայտում այն պատճառները, որոնք այս կամ այն չափով արգելակում էին դրանց առաջընթացը (պատերազմներն ու արշավանքները, միջցեղային կռիվները, զանգվածային արտագաղթերը, բնության արհավիրքները, բնակչության կյանքի ու գույքի անապահովությունը, եվրոպական ապրանքների ներհոսքը և այլն)։

Հ. Ղազարյանը Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի շուրջ յոթանասուն տարվա պատմությունը բաժանում է երկու հիմնական պատմաշրջանի՝ XIX դարի առաջին երեք տասնամյակները և հետագա չորս տասնամյակը։ Այդ պատմաշրջանների միջև նա որոշակի որակական փոփոխություններ է նկատում, որոնք հատկապես կապված էին «Թանզիմաթի» գործադրության և դրա հետ կապված երկրում սոցիալ-քաղաքական տեղաշարժերի հետ։

Խոսելով հետթանզիմաթյան ժամանակաշրջանում Թուրքիայի արդյունաբերության և արհեստագործության մասին, հեղինակն այն կարծիքն է հայտնում, որ եթե ընդհանուր առմամբ Թուրքիայի տնտեսության այդ ճյուղերը, հատկապես արհեստագործությունը, անկում էին ապրում, ապա Արևմտյան Հայաստանում և Հայկական Կիլիկիայում դրանք ոչ միայն պահպանեցին իրենց զարգացման նախկին մակարդակը, այլև առաջընթաց քայլեր կատարեցին։ Դա, գրում է նա, ի թիվս այլ հանգամանքների, պայմանավորված էր նաև առևտրաարհեստագործական միությունների՝ էսնաֆությունների գոյությամբ, հայ արհեստավորների համախմբված գործունեությամբ[1]։ Հայերը զգալի դեր էին խաղում Թուրքիայի արդյունաբերության, արհեստագործության և մանավանդ առևտրի բնագավառներում։

Արևմտյան Հայաստանի ագրարային հարաբերությունները XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին հանգամանորեն հետազոտված են պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Համբարյանի արժեքավոր մենագրության մեջ[2]։ Միանգամայն ճիշտ է հեղինակի այն միտքը, թե թուրքական սուլթանները, վարելով հայատյաց և հայաջինջ քաղաքականություն, XIX դարի երկրորդ կեսին մի քանի անգամ փոփոխեցին Արևմտյան Հայաստանի վարչական կառուցվածքը, նպատակ ունենալով ստեղծել այնպիսի պայմաններ, որ մահմեդականներն ամենուրեք մեծամասնություն ստանան։ Քննության առնելով Թուրքիայում, և մասնավորապես Արևմտյան Հայաստանում, ապրող հայերի թվի վերաբերյալ տարբեր ու հակասական տվյալները, պատմաբանը հանգում է այն ճիշտ եզրակացության, որ դրանք թուրքական կառավարության կողմից միտումնավոր էին կեղծ ներկայացվում։ Բնորոշ է, որ այդ տվյալները հաճախակի փոխվել են։ Այսպես, եթե, համաձայն թուրքական պաշտոնական «սալնամեների», 1870-ական թվականներին, մինչև ռուս-թուրքական պատերազմը, Ասիական Թուրքիայում ապրում էր 3 միլիոն 600 հազար հայ, ապա 1880 թվականին, երբ միջազգային դիվանագիտության մեջ առաջ եկավ Հայկական հարցը, Թուրքիայի արտաքին գործերի մինիստրությունը հաղորդեց, թե Արևմտյան Հայաստանում կա ընդամենը 780 հազար հայ, որը կազմում է երկրի ամբողջ բնակչության 17 տոկոսը։ «Վերլուծելով բերված տվյալները,— գրում է Ա. Համբարյանը,— ամենից առաջ պետք է նշել, որ դրանք բոլորը միտումնավոր են։ Թուրքական կառավարությունը ռուս-թուրքական պատերազմից առաջ արհեստականորեն մեծացնում էր հայերի թիվը՝ նրանցից շատ հարկեր և տուրքեր հավաքելու, իսկ հետո աշխատում էր փոքրացնել այն՝ Հայկական հարցը միջազգային

[1] Տե՛ս «Լենինյան ուղիով», 1972, № 7։

[1] Տե՛ս Հ. Ղազարյան, նշ. աշխ., էջ 291։

[2] Տե՛ս Ա. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Եր., 1965։

դիվանագիտության քննությունից հանելու նպատակով»[1]։ Հեղինակի կարծիքով, թերի են նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալները Թուրքահպատակ հայերի թվի վերաբերյալ (2 միլիոն 660 հազար)։

Անդրադառնալով հողատիրության ձևերի հարցին, Ա. Համբարյանը գտնում է, որ չնայած 1858 թ. ապրիլի 21-ի հողային օրենքն ուներ բուրժուական բնույթ, այնուամենայնիվ այն անխախտ թողեց Թուրքիայում գոյություն ունեցող հողատիրության ձևերը (պետական, կալվածատիրական և եկեղեցական)։ Հենվելով փաստական տվյալների վրա, նա գտնում է, որ Արևմտյան Հայաստանում ֆեոդալական իշխող դասակարգը բաղկացած էր մեծ մասամբ քրդերից, հետո Թուրքերից, իսկ այնուհետև՝ հայերից ու ասորիներից։ Քուրդ հողատերերը կազմելով ֆեոդալների դասակարգի մեծամասնությունը, իրենց ձեռքում էին կենտրոնացրել Արևմտյան Հայաստանի կալվածատիրական հողերի մեծ մասը։

Ա. Համբարյանի կարծիքով, Արևմտյան Հայաստանի գյուղացիներն իրենց սոցիալական դրությամբ բաժանվում էին չորս կատեգորիաների՝ ազատների, բատրակների, ֆեոդալական կախյալ գյուղացիների և ստրուկների։ Ֆեոդալական կախյալ գյուղացիներն իրենց հերթին բաժանվում էին մի քանի կատեգորիաների. սրանցից մեկն էլ ճորտատիրությունն էր։ Նա գտնում է, որ Արևմտյան Հայաստանում ճորտատիրությունը ոչ միայն գոյություն ուներ, այլև վավերացված էր իրավապես[2]։ Սակայն, գրում է նա, եթե ուրիշ երկրներում գյուղացիներն ամրացված էին ճորտատերերին, ապա այստեղ՝ գյուղին կամ շրջանին։ Պատմաբանը փաստեր է բերում նաև Թուրքիայում, այդ թվում Արևմտյան Հայաստանում, XIX դարի երկրորդ կեսին ստրկության և ստրկավաճառության գոյության մասին։ Նրա կարծիքով, Արևմտյան Հայաստանում պահպանված են եղել նաև նահապետական հարաբերությունների բազմաթիվ մնացորդներ, որոնք, մի կողմից, պայմանավորված էին ապրանքային արտադրության թույլ զարգացմամբ, իսկ մյուս կողմից՝ Թուրքական կառավարության և աղաների ու բեյերի շահագրգռվածությամբ։

Անդրադառնալով ֆեոդալական հարկի ու ռենտայի հարցին,

[1] Ա. Համբարյան, նշվ. աշխ., էջ 42։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 75։



Ա. Համբարյանը գտնում է, որ, ի տարբերություն ուրիշ երկրների, ուր կալվածատերերն իրենց գյուղացիներին բաժանել էին կոռային (աշխատավճարային), բահրային (արդյունավճարային) և դրամավճարային խմբերի, Արևմտյան Հայաստանում առանց նման տարաբաժանման նրանք գյուղացիներին ստիպում էին կատարել թե՛ կոռային աշխատանք, և թե՛ բահրա ու դրամ վճարել։ Չնայած դրան, գրում է նա, ֆեոդալական ռենտայի տարատեսակներից տիրապետողը բահրան էր։ Ռենտայի այդ տեսակը ինչպես Ասիայի մի շարք երկրներում, այնպես էլ Հայաստանում իր իսկ բնույթով դանդաղեցնում էր տնտեսության զարգացումը։

Աշխատության մեջ հանգամանորեն քննվում է պետական հարկերի ու պարհակների հարցը։ Նրա կարծիքով, արևմտահայությունը ենթարկվում էր հարկային դաժան հարստահարման, որն ավելի է ուժեղանում XIX դարի վերջին և XX դարի սկզբին. դա պայմանավորված էր, մի կողմից, Թուրքիայի վերածումով եվրոպական պետությունների կիսագաղութի, իսկ մյուս կողմից՝ Թուրքական կառավարության վարած հայաջինջ քաղաքականությամբ։ «Կառավարությունը, սաստկացնելով բնակչության հարկային ճնշումը, ձգտում էր հավաքել միջոցներ՝ մարելու իր միջազգային պարտքերը և դատարկել Արևմտյան Հայաստանը հայերից»[1]։

Ա. Համբարյանի աշխատության մեջ լայն տեղ է տրված Արևմտյան Հայաստանի տնտեսության պատմությանը (գյուղատնտեսություն, արդյունաբերություն, առևտուր)։ Այստեղ նա բացահայտում է արևմտյան տերությունների գաղութային և Թուրքական կառավարության տնտեսական քաղաքականությունը։ Միանգամայն ճիշտ է հեղինակի այն միտքը, թե XIX դարի երկրորդ կեսին և դարասկզբին արևմտյան տերությունները Թուրքիայի հետ միասին տնտեսապես նվաճում էին նաև Արևմտյան Հայաստանը, տարածելով այնտեղ նաև իրենց քաղաքական ազդեցությունը։ Այդ նպատակով նրանք Արևմտյան Հայաստանում հիմնում էին հյուպատոսություններ, ծավալում էին միսիոներական գործունեություն, աշխուժացնում էին առևտուրը և այլն։

Հանգամանորեն վերլուծվում է XIX դարի վերջին քառորդում սկսված ագրարային հարաբերությունների հետընթացը Արևմտյան Հայաստանում։ Ընդարձակվում և ամրապնդվում էր

[1] Ա. Համբարյան, նշվ. աշխ., էջ 123։

կալվածատիրական հողատիրությունը, որը հիմնականում տեղի էր ունենում աշխատավոր գյուղացիության զանգվածային բնաջնջման և արտաքսման ճանապարհով։ Մյուս կողմից՝ լայն չափերով տեղի էր ունենում ազատ գյուղացիների կիսաճորտացում ու ճորտացում։ Ա. Համբարյանի կարծիքով, այն հիշեցնում էր Արևմտյան Եվրոպայում IX դարի ճորտատիրական իրավունքի հաստատման ժամանակաշրջանը։ Չնայած XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին Արևմտյան Հայաստանում գոյանում էին կապիտալիզմի սաղմերը, բայց արտադրահարաբերությունների տեղաշարժերի գլխավոր և հիմնական ուղղությունը ոչ թե առաջընթացն էր՝ կապիտալիզմը, այլ հետընթացը՝ ֆեոդալիզմը։ Ագրարային հարաբերությունների հետաճը, եզրակացնում է հեղինակը, խիստ ծանր անդրադարձավ գյուղացի աշխատավորական զանգվածների վրա։ Նրանք ընկան մի այնպիսի դրության մեջ, որ սոցիալական ու ազգային ազատագրումը դարձավ բացարձակապես անհնարին, եթե չմիջամտեին դեմոկրատական ուժերը։

Փաստական տվյալներով ցույց է տրվում, որ երիտթուրքերը շարունակեցին Աբդուլ Համիդի քաղաքականությունը։ Նրանք բնակչությանը չտվեցին անձի ու գույքի ապահովություն, չլուծեցին ազգային ու ագրարային հարցերը, չվերացրին ճորտատիրությունը։

Գիտական հետաքրքրություն է ներկայացնում Ա. Համբարյանի կողմից Արևմտյան Հայաստանում ագրարային հարաբերությունների առանձնահատկությունների և ագրարային հարցի լուծման ուղիների ուշագրավ վերլուծությունը։ Նշելով Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի և ցարական Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանի ագրարային ռեժիմների, տնտեսական զարգացման գոյություն ունեցող ընդհանուր գծերը, նմանությունները, նա միաժամանակ բացահայտում է դրանց տարբերություններն ու առանձնահատկությունները։ Նրա կարծիքով, այդ առանձնահատկություններն են՝ ա) եթե Արևելյան Հայաստանում իշխում էր պետական հողատիրությունը, Արևմտյանում՝ կալվածատիրականը, բ) Արևմտյան Հայաստանում հողատերերը մեծ մասամբ իրենց հավատակից հպատակների թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր առաջնորդներն էին, ունեին զինված ջոկատներ, հավաքում էին աշխարհազոր և հաճախ վարում էին միջֆեոդալական կռիվներ, իսկ Արևելյան Հայաստանում նրանք այդպիսի ֆունկցիաներ չունեին, զուրկ էին զինված ջոկատներ և միջֆեոդալական կռիվներ վարելու հնարավորություններից, գ) ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանում հողատերերի մեծամասնությունը սեփական տնտեսություն չէր վարում, բայց, ի տարբերություն Արևելյան Հայաստանի, որտեղ սեփական տնտեսություն վարող հողատերերը հարկադիր աշխատանքը զուգակցում էին վարձու աշխատանքի հետ, Արևմտյան Հայաստանում դրանք այնքան էլ չէին զուգակցվում, ընդհակառակը, վերադարձ էր տեղի ունենում դեպի պրիմիտիվ աշխատավճարումներ, դ) եթե Արևելյան Հայաստանում աղաները ֆեոդալական ռենտան ստանալիս, որպես արտատնտեսական հարկադրանք, գործադրում էին առավելապես կիսարարությունը, ապա Արևմտյանում դրա հետ միասին առկա էր ճորտատիրությունը, ե) ի տարբերություն Արևելյան Հայաստանի, որտեղ գյուղացիների մեծ մասն ապրում էր պետական հողերի վրա և վարելահողերից օգտվում էր համայնական կարգով, դրանք պարբերաբար բաժանելով միմյանց միջև, Արևմտյանում նրանց մեծ մասն ապրում էր կալվածատիրական հողերի վրա, իսկ վարելահողերից օգտվում էր ծխական եղանակով։ Արևմտյան Հայաստանում գյուղացիները կարող էին վաճառել, նվիրել կամ գրավ դնել իրենց հողակտորները, իսկ Արևելյանում՝ զուրկ էին այդ իրավունքից, զ) Արևմտյան Հայաստանում նահապետական հարաբերությունների մնացուկներն ավելի շատ էին պահպանվել, քան Արևելյանում, է) Հայաստանի երկու հատվածներում էլ օգտվում էին գյուղատնտեսական հնամյա գործիքներից, բայց նրա արևելյան հատվածում դրանք նկատելի արագությամբ արտամղվում էին նոր, կատարելագործված գործիքներով, ը) Արևելյան Հայաստանում գյուղացիները տնտեսապես ավելի ուժեղ էին, քան Արևմտյանում, թ) եթե Արևելյան Հայաստանում քայքայվում էին ֆեոդալական և զարգանում էին կապիտալիստական հարաբերությունները, ապա Արևմտյանում ֆեոդալական հարաբերությունները ոչ միայն չէին քայքայվում, այլև ամրապնդվում էին, ժ) Արևելյան Հայաստանը կուլտուրապես ավելի բարձր մակարդակի վրա էր գտնվում, քան Արևմտյանը։

1983 թ. հրատարակվեց Ա. Համբարյանի նոր աշխատությունը, որը ներկայացնում է Հայաստանի սոցիալ-տնտեսական

հարաբերությունների համառոտ պատմությունը[1]։ Անտարակույս, այն գրված է հեղինակի նախորդ աշխատությունների հիման վրա, հանդիսանալով դրանց համառոտ ամփոփումը։ Պատմաբանը շոշափել է նաև նոր հարցեր, գիտական շրջանառության մեջ դնելով արժեքավոր փաստեր։

Աշխատության մեջ լուսաբանվել է Հայաստանի XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբի սոցիալ-տնտեսական զարգացումը։ Այստեղ քննարկվում են Արևելյան Հայաստանին վերաբերող հետևյալ հարցերը՝ բուրժուական ռեֆորմները, հողային հարաբերությունները, ցարիզմի ազգային, ագրարային և տնտեսական քաղաքականությունը, կապիտալիզմի զարգացումը, բուրժուազիայի և պրոլետարիատի ձևավորումը, Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումն ու կառավարումը, սուլթանական կառավարության և երիտթուրքերի հողային և ազգային քաղաքականությունը, երկրամասի տնտեսական դրությունը և այլն։ Աշխատության մեջ բացահայտված են Արևելյան և Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները։ Փաստական տվյալների հիման վրա ցույց է տրված, որ Ռուսաստանում ստեղծված բարենպաստ պայմանների շնորհիվ Արևելյան Հայաստանը հասել էր սոցիալ-տնտեսական զարգացման համեմատաբար բարձր աստիճանի, քան Թուրքիայի ծանր լծի տակ հեծող Հայաստանի արևմտյան հատվածը։

Արևմտահայերի սոցիալ-տնտեսական վիճակը XIX դարի 70—80-ական թվականներին լուսաբանված է պատմական գիտությունների թեկնածու Ռ. Հովհաննիսյանի մենագրության մեջ[2]։ Նրա կարծիքով, չնայած XIX դարի երկրորդ կեսին Թուրքիայի ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր, այն էլ ամենահետամնաց վիճակում, այնուամենայնիվ երկիրը թևակոխել էր զարգացման կապիտալիստական ուղի։ Աշխատավորության ֆեոդալական շահագործմանն ավելանում էր կապիտալի անչափ և անլուր կողոպուտը։ Գյուղացիական խոշոր զանգվածները, որոնք կազմում էին բնակչության մեծ մասը, հողազուրկ էին։ Ռ. Հովհաննիսյանը ևս գտնում

[1] Տե՛ս Ա. Համբարյան, Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների համառոտ պատմություն (XIX դարի երկրորդ կես, XX դարի սկիզբ), Եր., 1983։

[2] Տե՛ս Ռ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Եր., 1965։



է, որ քրդական շեյխերի հարստահարություններին ենթակա հայկական առանձին գավառներում պահպանվել էին ճորտական հարաբերությունները[1]։ Աշխատավորների դրությունը չէր փոխվում նաև նրանից, որ երկրի տնտեսական ճյուղերի զգալի մասում իշխող դիրք էին գրավում հայերը։ «Քուրդ և Թուրք կեղեքիչների հետ միասին,— գրում է նա,— հայ աշխատավոր ժողովրդին հարստահարում և կողոպտում էին և հայ ֆեոդալն ու վաշխառուն»[2]։

Աշխատության մեջ բացահայտվել են Թուրքիայում վաշխառության զարգացման նախադրյալները, որոնցից մեկն էլ կառավարության հարկային դաժան քաղաքականությունն էր։ Իրավացի է պատմաբանը, երբ արևմտահայության սոցիալ-տնտեսական դրությունը ծանրացնող հանգամանքներից մեկն էլ համարում է եվրոպական և ամերիկյան միսիոներների գործունեությունը Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում։ Արևմտահայության սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանր դրությունը հետևանք էր զանգվածային պանդխտության։

Արևմտահայության վիճակն արտացոլված է նաև պրոֆ. Ս. Մարկոսյանի մենագրության մեջ[3]։ Ընդհանուր գծերով բնութագրելով Օսմանյան կայսրության էությունն ու նրա տեղը միջազգային հարաբերությունների ոլորտում, հեղինակը փաստական հարուստ նյութերի հիման վրա հանգամանորեն ցույց է տվել այդ լծի տակ արևմտահայ աշխատավորության տնտեսական և իրավական դրությունը։

Սկսած XIX դարի կեսերից, և հատկապես վերջին քառորդում, գրում է նա, Թուրքիայի բոլոր ժողովուրդների և առանձնապես հայ գյուղացիության կեղեքումն ահռելի չափերի էր հասել և տարեցտարի ավելի սոսկալի էր դառնում։ «Դրա հիմնական պատճառը,— գրում է նա,— մի կողմից, Թուրքիայի ներքին կյանքի ֆեոդալական հարաբերությունների և արտաքին կապիտալիստական հարաբերությունների, մյուս կողմից, վաշխառուական կապիտալի և ֆեոդալական հարաբերությունների յուրահատուկ սերտաճումն էր»[4]։

[1] Տե՛ս Ռ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, էջ 27։

[2] Նույն տեղը, էջ 42։

[3] Տե՛ս Ս. Մարկոսյան, Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին, Եր., 1968։

[4] Նույն տեղը, էջ 92։

Անդրադառնալով հողային հարաբերությունների հարցին, Ս. Մարկոսյանը մերժում է պատմական գրականության մեջ գոյություն ունեցող այն կարծիքը (Լեո և ուրիշներ), թե, իբր, թիմարական հողատիրության վերացումը նշանակում է Թուրքիայի ֆեոդալական հարաբերությունների վերացում և պետական հողատիրության ստեղծում։ Նա թյուրիմացության արդյունք է համարում այն կարծիքը, ըստ որի թիմարական հողատիրության հիմքը կազմում էր մասնավոր սեփականության սկզբունքը, որի համաձայն էլ այդ մասնավոր-սեփականատիրական հողերը պետականացվեցին։ «Այսպիսով, թիմարական հողերը ոչ թե Թանզիմաթի հիման վրա դարձան պետական սեփականություն, այլ դրանից առաջ էլ նրանք պետական սեփականություն էին համարվում. բացի այդ, թիմարական հողերում կիրառվող սկզբունքները ոչ թե վերացան, այլ ընդգրկվեցին հողային նոր օրենքների մեջ»[1]։ Ս. Մարկոսյանը թյուրիմացության արդյունք է համարում նաև թափու իրավունքը ինչ-որ նոր բան համարելը։ Ընդհակառակը, գրում է նա, դա նույնքան հին էր, որքան և թիմարային հողատիրությունը, թերևս էլ ավելի հին։ Հեղինակը գտնում է, որ թիմարական ֆեոդալական հողատիրության համակարգը, չնայած պաշտոնապես վերացել էր XIX դարի 40-ական թվականներին, սակայն, հատկապես, հայկական վիլայեթներում դեռ փաստորեն կիրառվում էր նույնիսկ 90-ական թվականներին։ Ճիշտ է, հայ աշխատավորությունը հարկ էր վճարում պետությանը, սակայն քուրդ աշիրեթապետերը առաջվա պես շարունակում էին հարստահարել նրան, ապօրինաբար նրա աշխատանքի արդյունքի մի զգալի մասի տերուտնօրեն դառնալ։ Գոյություն ունեցող պաշտոնական հարկագանձման համակարգի հետևանքով, Արևմտյան Հայաստանի աշխատավորությունը անագորույն կեղեքման էր ենթարկվում ոչ միայն կապալառուավաշխառուական կապիտալի ներկայացուցիչների, այլև նրանց հետ սերտաճած բարձր աստիճանավորների կողմից։ Արևմտահայ գյուղացիության տնտեսական քայքայմանը մեծապես նպաստում էին նաև ահռելի չափերի հասնող կողոպուտներն ու ավերումները, որ թուրքական կառավարության դրդմամբ ու հովանավորությամբ կատարում էին քրդական աշիրեթապետերը։

Ս. Մարկոսյանի աշխատության մեջ զգալի տեղ է հատկացված Թուրքիայում հայերի իրավազրկման հարցին։ Թուրքահպատակ հայերը զրկված էին իրենց տարրական իրավունքները պաշտպանելու հնարավորությունից և պատահական չէ, որ Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով Բարձր Դռան վրա պարտականություն էր դրվում, որպեսզի նա միջոցներ ձեռք առնի ապահովելու հայերի՝ քրդերից ու չերքեզներից պաշտպանվելու անվտանգությունը։ Այսպիսի տարրական պարտավորությունը, գրում է նա, «որն իր նմանը չունի միջազգային հարաբերությունների պատմության մեջ, միայն ծայրահեղորեն բարոյալքված պետության նկատմամբ կարող էր միջազգային ակտի նյութ ծառայել»[1]։ Պատմական բազմաթիվ փաստեր հաստատում են, գրում է նա, որ հայերի նկատմամբ քրդերի ու չերքեզների կատարած հարստահարումներն ու անկարգությունները ոչ թե թուրքական իշխանությունների սոսկ անկարողության հետևանք էին, այլ բուն կառավարության կիրառած մի խարդախ, նախօրոք մշակված ճիվաղային քաղաքականության արդյունք։ Դա հայ ժողովրդի բնաջնջման ծրագիր էր։

Պատմաբանի կարծիքով, թուրքահպատակ քրիստոնյաների, այդ թվում հայերի, լիակատար իրավազրկության պատճառներից մեկն էլ ինքնապաշտպանության միջոցներից զրկված լինելն էր։ Իսկ չէ՞ որ զինված հակառակորդի հարձակումից պաշտպանվելու միակ միջոցը զինված դիմադրությունն է, բայց դա հակասում էր Թուրքիայի պետական օրենքին։

Արևմտահայության մի փոքրիկ հատվածի՝ զեյթունցիների սոցիալ-տնտեսական կյանքի մանրամասներ է հետազոտել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Պողոսյանը՝ Զեյթունի պատմությանը նվիրված իր մենագրության մեջ[2]։

Հենվելով փաստական հարուստ տվյալների վրա, նա ցույց է տվել Զեյթունի վարչական կառավարման համակարգը, սոցիալական կարգը, բնակչության զբաղմունքը, ապրելակերպը, կենցաղը, սովորությունները։ Հ. Պողոսյանի կարծիքով, 1375 թվականից մինչև XIX դարի կեսերը Զեյթունում պահպանվել է այն հասարակական կառուցվածքը, որ գոյություն ուներ Կիլիկիայի հայկական թագավորության ժամանակ։ Գտնվելով թուրքական լայնածավալ պետության սահմաններում, զավառակն ապրել է

[1] Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 80։

[1] Տե՛ս Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 120։

[2] Տե՛ս Հ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը (1409—1921 թթ.), Եր., 1969։

ինքնամփոփ կյանքով։ Այստեղ թեև գյուղացիները ճորտացված չէին, բայց պարտավոր էին հարկեր վճարել իշխաններին, աշխատել նրանց տնտեսության մեջ, պատերազմի ժամանակ զինված հանդես գալ ընդհանուր թշնամու դեմ։

Դրությունը փոխվեց 1865-ից հետո։ Լեռնականների վիճակն սկսեց ծանրանալ, նրանք զրկվեցին մի քանի դար շարունակ իրենց ունեցած ինքնավար կամ կիսանկախ վիճակից և սկսեցին կրել թուրքական ռազմաֆեոդալական բռնապետության ծանրը լուծը։

Հ. Պողոսյանի մեկ այլ ուշագրավ աշխատության մեջ լուսաբանվել է նաև Սասունի XIX դարի երկրորդ կեսի սոցիալ-տնտեսական կյանքը։ Տրված է Սասունի ամբողջական պատմությունը՝ սկսած 1750-ից մինչև 1918 թվականը։ Փաստական տվյալների հիման վրա հեղինակը գտնում է, որ, չնայած Սասունի լեռնականների ճնշող մեծամասնությունն ամբողջ XIX դարում գտնվել է թուրքական պետության սահմաններում, բայց ապրել է կիսանկախ վիճակում։ Հենվելով իր մանրակրկիտ ուսումնասիրությունների վրա, պատմաբանը հանգել է այն եզրակացության, որ, թեև Սասունում գյուղացիներն ունեցել են իրենց հողակտորները, բայց հողի մեծ մասը պատկանել է գյուղական համայնքին։ Աշխատության մեջ հանգամանորեն քննվում է հայ-քրդական հարաբերությունների հարցը։ Մեծ տեղ է տրված պանդըխտության հարցին։

Հ. Պողոսյանը շնորհակալ աշխատանք է կատարել նաև հայ ժողովրդի խոշոր և հնագույն բնօրրաններից մեկի՝ Վասպուրականի գավառի պատմության գիտական հետազոտության բնագավառում։ Նրա «Վասպուրականի պատմությունից»[2] աշխատությունը նվիրված է Նահանգի կեսդարյա պատմությանը, սակայն հեղինակը խնդիր չի դրել ներկայացնել այդ շրջանի պատմության բոլոր հարցերը։ Հարուստ է աշխատության աղբյուրագիտական հենքը։ Ուշագրավ է, որ թեև Վասպուրականի մասին անցյալում շատ գրքեր են հրատարակվել, բայց Հ. Պողոսյանը կատարել է բազմաթիվ ճշգրտումներ։

Փաստական հարուստ նյութերի հիման վրա հանգամանորեն ցույց է տրված Նահանգի սոցիալ-տնտեսական կյանքը, բացա-

[1] Տե՛ս Հ. Պողոսյան, Սասունի պատմություն, Եր., 1985։

[2] Հ. Պողոսյան, Վասպուրականի պատմությունից, 1850—1980, Եր., 1988։



հայտվել է թուրքական բռնապետության հայահալած քաղաքականությունը։ Լայն տեղ է տրված ազատագրական շարժումներին, ինչպես նաև մշակույթին։ Ճիշտ է վարվել Հ. Պողոսյանը՝ Մ. Խրիմյանին բնութագրելով որպես հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ։

Արևմտյան Հայաստանում օսմանյան կառավարության վարչական և ժողովրդագրական, ինչպես նաև տնտեսական ու ազգային ճնշման քաղաքականությունը լուսաբանվել է նաև պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ե. Սարգսյանի արժեքավոր մենագրության մեջ[1]։

Փաստական-վիճակագրական տվյալներով ցույց է տրված, որ թուրքական կայսրության վարած վարչական և սոցիալ-տնտեսական քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանում հայ բնակչության քանակն անընդհատ կրճատվում էր։ Այսպես, եթե XVII դարում այնտեղ հայերը կազմում էին ամբողջ բնակչության 98, իսկ մահմեդականները՝ 2 տոկոսը, ապա 1915—1916 թթ. զանգվածային ջարդերի նախօրյակին՝ համամասնությունը 41 և 59 տոկոսը[2]։

Այդ փաստը, գրում է նա, անհերքելի ապացույցն է թուրքական կառավարության կողմից հայ բնակչության դաժան հետապնդումների ու հալածանքների, տնտեսական ստրկացման ու հարստահարման, բռնի թուրքացման, պլանաչափ բնաջնջման, հարկադրական արտագաղթի և այլն։

Ե. Սարգսյանը միաժամանակ ցույց է տալիս, որ թուրքական կառավարությունը, զանազան նպատակներով խեղաթյուրելով իրական փաստերը, մշտապես աշխատում է պակաս ցույց տալ հայ բնակչության քանակը։ Թուրք պատմաբանները և դիմում են կեղծարարության, համոզելով իրենց ընթերցողներին, թե Արևմտյան Հայաստանում հայերը միշտ փոքրամասնություն են կազմել։

Աշխատության մեջ բազմաթիվ փաստեր են բերված թուրքական կառավարության վարած հողային և հարկային դաժան քաղաքականության մասին, ցույց է տրված, որ իշխանությունների

[1] Տե՛ս Саркисян Е., Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., Е., 1972։

[2] Տե՛ս Саркисян Е., նշվ. աշխ., էջ 39։

թողտվությամբ թուրք և քուրդ բեկերն ու աղաներն ինչպես էին զավթում հայերի հողերը։

Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի որոշ հարցեր լուսաբանված են նաև պատմական գիտությունների դոկտոր Վ. Աբրահամյանի աշխատության մեջ[1]։ Այստեղ հիմնականում ցույց է տրվում XIX դարի կեսերին արհեստների, արդյունաբերության և առևտրի վիճակը ոչ միայն Արևելյան Հայաստանում, այլև Անդրկովկասի հայաբնակ մյուս վայրերում, գլխավորապես Թիֆլիսում։ Աշխատության մեջ հանգամանորեն շարադրված է Անդրկովկասի քաղաքներում, մասնավորապես Արևելյան Հայաստանում արհեստների տեսակների և համքարային կազմակերպությունների մասին։ Հենվելով վավերագրական տվյալների վրա, նա հանգում է այն եզրակացության, որ արհեստների բնագավառում, հատկապես XIX դարի 50-ական թվականներից սկսած, վայրէջք է նկատվում[2]։ Հեղինակը դա բացատրում է, մի կողմից, տեղական հումքի, հատկապես կաշվի պակասումով, իսկ մյուս կողմից՝ գործարանային ապրանքների ներմուծումով։ Բնականաբար, գրում է նա, իրենց նախկին դերն ու ազդեցությունը կորցրել էին նաև համքարությունները։

Աշխատության մեջ լայն տեղ է տրված համքարության ներքին և վարչական կառուցվածքի լուսաբանմանը։ Հեղինակի հիմնական եզրակացությունն այն է, որ «եթե XVIII—XIX դարերում համքարությունները խաղում էին պրոգրեսիվ դեր, ապա XX դարի սկզբներին, ընդհակառակը, դրանք խանգարում էին արդյունաբերության զարգացմանը»[3]։ Աշխատությանը կցված են ուշագրավ վավերագրեր և լուսանկարներ։

Մենք հակիրճ թվարկեցինք այն ամենը, ինչ մեր պատմաբանները կատարել են XIX դարի և XX դարի սկզբի Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի գիտական հետազոտության բնագավառում։ Ինչ խոսք, Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, մասնավորապես հողատիրության ձևերի, հարցում խորհրդահայ պատմագրության մեջ եղել են և կան նաև վիճելի, հակասական դրույթներ։ Խորհրդահայ պատմաբանները

[1] Տե՛ս Վ. Աբրահամյան, Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (XVIII—XX դարի սկզբում), Եր., 1971։

[2] Տե՛ս, նույն տեղը, էջ 46։

[3] Նույն տեղը, էջ 143։



պետք է շարունակեն իրենց խոր ու բազմակողմանի հետազոտությունը այդ հարցերի վերջնական լուծման ուղղությամբ։ Տարակարծություններ կան նաև սոցիալ-տնտեսական ֆորմացիաների հարցում։ Օրինակ, 1972 թ. Երևանի համալսարանի հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» մեկհատորյակում XIX դարի սկզբից մինչև 1917 թվականը (գրքի երրորդ բաժինը) վերնագրված է՝ «Հայաստանը կապիտալիզմի դարաշրջանում», որը ճիշտ չէ։ Հասկանալի է, որ XIX դարի սկզբից մինչև 1870-ական թվականների սկիզբը Հայաստանը չէր կարող գտնվել կապիտալիզմի դարաշրջանում, քանի որ Արևելյան Հայաստանը դարի առաջին երեք տասնամյակներին գտնվում էր ֆեոդալական Իրանի, այնուհետև ցարական Ռուսաստանի տիրապետության տակ, իսկ Ռուսաստանը կապիտալիզմի դարաշրջան է թևակոխել 1861-ից հետո։ Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, որն ընկած էր Թուրքիայի տիրապետության տակ, ապա հանրահայտ է, որ ոչ միայն XIX դարի սկզբին, այլև մինչև XX դարը Թուրքիան ֆեոդալական երկիր էր։

Սոցիալ-տնտեսական ֆորմացիայի հարցում որոշակիություն չկա նաև Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» V հատորում, որտեղ հայ ժողովրդի պատմությունն սկսվում է XIX դարի սկզբից և հասնում մինչև 1870-ական թվականները։ Հարց է առաջանում, այդ տասնամյակներին Հայաստանում սոցիալ-տնտեսական ի՞նչ ֆորմացիա գոյություն ուներ։ Այդ մասին հատորում ոչ մի հիշատակություն չկա։ Նախորդ, IV հատորը (XIII—XVIII դարեր) բնութագրված է ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջան։ Ստացվում է, որ V հատորի հեղինակները այդ ֆորմացիան տարածում են նաև XIX դարի 70-ական թվականների վրա, մի բան, որը ճիշտ չէ։

Նույնը կարելի է ասել «Հայ ժողովրդի պատմություն» բուհական դասագրքի III հատորի մասին։ Այստեղ XIX դարի երկրորդ կեսի պատմությունը (երկրորդ բաժին) վերնագրված է՝ «Ֆեոդալական հարաբերությունների քայքայումը և կապիտալիզմի զարգացումը Հայաստանում», իսկ թե ինչպիսին էր առաջին կեսի հասարակական կարգը՝ բաց է մնում։ Ի դեպ, «Հայ ժողովրդի պատմություն» բուհական դասագրքի II հատորում XIII—XVIII դարերը (բաժին երկրորդ) բնութագրված են որպես

«ֆեոդալական հարաբերությունների լճացման և տնտեսական անկման շրջան»։ Ստացվում է, որ այդ նույնը վերաբերում է XIX դարի առաջին կեսին, որը դարձյալ ճիշտ չէ։

### 3. Հայ հասարակական-քաղաքական հոսանքները և ազատագրական շարժումները 1850—1860-ական թթ.

Խորհրդահայ պատմագրության ուշադրության արժանացած թեմաներից մեկն էլ հայ հասարակական-քաղաքական հոսանքների և հայ ազատագրական շարժումների պատմությունն է։ Թե ինչ է արվել խորհրդահայ պատմագրության մեջ այդ կարևորագույն պրոբլեմների հետազոտության բնագավառում 1920-ական թվականներից մինչև 1963 թվականը, համառոտակի անդրադարձել ենք մեր նախորդ աշխատության մեջ։ Հատկապես ցույց ենք տվել Լեոյի, Աշ. Հովհաննիսյանի, Վ. Ռշտունու, Մ. Ներսիսյանի, Վ. Պարսամյանի և մյուս պատմաբանների կատարած հսկայական աշխատանքը, միաժամանակ քննադատական դիտողություններ անելով նրանց որոշ դրույթների վերաբերյալ։

Մատնանշված պրոբլեմների գիտական հետազոտությունը շարունակվում էր նաև հետագայում։ Վերջին երկուս ու կես տասնամյակներում հրապարակվել են նոր աշխատություններ։

Այս ենթագլխում քննության ենք ենթարկում 3 հարց՝ 1850—1860-ական թթ. հայ հասարակական-քաղաքական հոսանքների, արևմտահայերի ազգային սահմանադրության և 1862 թ. Զեյթունի ապստամբության պատմության լուսաբանումը պատմագրության մեջ։

1850—1860-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքների հարցին անցած քանհինգամյակում առաջինն անդրադարձել է Աշ. Հովհաննիսյանը[1], որի հոդվածն այնուհետև զետեղվեց «Հայ ժողովրդի պատմության» V հատորում[2]։ Տնտեսական ու քաղաքական փոփոխություններով էին պայմանավորված այդ տարիները, գրում է պատմաբանը, հայ հասարակական-քաղաքական կյանքում կատարվող լուրջ տեղաշարժերը։ Նա հասարակական-քաղաքական հոսանքների հանդես գալը իրավացիորեն կապում է դասակարգային հարաբերությունների բյուրեղացման, նրանց որոշակի սահմանազատման հետ։

Ըստ Աշ. Հովհաննիսյանի, արևելահայ իրականության մեջ այդ ժամանակաշրջանում գոյություն են ունեցել հետևյալ չորս հոսանքները՝ կղերաազգային, ազգային-պահպանողական, լիբերալ-բուրժուական և հեղափոխական-դեմոկրատական։ Աշխատության մեջ առանձին-առանձին ցույց են տրված նրանց ներկայացուցիչների հայացքներն ու գործունեությունը։

Կղերաազգային հոսանքը, նրա կարծիքով, հայ իրականության մեջ ձևավորվել է դեռևս իր բավական ազդեցիկ դիրքերը պահպանած հոգևորականության և աղայական վերնախավի դաշինքից, հոսանք, որը ջանում էր խոչընդոտել պատմության առաջընթացը, հանդես էր գալիս որպես իր դարն ապրած ֆեոդալական հարաբերությունների և միջնադարյան կաստայականության ջատագով։ Ընդհանուր առմամբ հոսանքը բնութագրելով որպես ռեակցիոն, Աշ. Հովհաննիսյանը նշում է. «Միակողմանի կլիներ, սակայն, ի սկզբանե կղերաազգային հոսանքի ներկայացուցիչներին դիտել իբրև միջնադարյան ֆեոդալական գաղափարախոսության ջատագովներ»[1]։ Հայտնի է, շարունակում է նա, որ այդ հոսանքի ներկայացուցիչներ Ն. Աշտարակեցին և Խ. Լազարյանը ոչ միայն զգալի դեր խաղացին Հայաստանը Ռուսաստանին միացնելու գործում, այլև դարձան Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի և Մոսկվայի Լազարյան ճեմարանի հիմնադիրներ, ռուսական կողմնորոշման պաշտպաններ։ Սակայն իրադրությունը 40-ական թվականներից փոխվեց։ Երկնչելով լիբերալ-բուրժուազիայի և, հատկապես, հասունացող դեմոկրատական հոսանքի առաջադրած պահանջներից, հայ իշխող այդ վերնախավերի պաշտպաններն ու նրանց շահախնդրությունների ձայնատարները կապվեցին ցարական բյուրոկրատիայի հետ, դիմագրավեցին ազատամտական գաղափարներին։

Այդուհանդերձ, հայ իրականության մեջ երկար կյանք չունեցավ կղերաազգային հոսանքը։ «Հետռեֆորմյան տասնամյակներին,— գրում է նա,— զարգացող կապիտալիզմի հարվածների տակ Ռուսաստանի և Անդրկովկասի կղերաազգային

[1] Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, XIX դարի 50—60-ական թթ. արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները, ՊԲՀ, 1965, № 4, 5։

[2] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. V, էջ 383—426։

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. V, էջ 384։

միտքը թևակոխեց իր կազմալուծման շրջանը»[1]։ Հետագայում կղերաազգային դասի փոքրիշատե կենսունակ տարրերին մնում էր միայն համակերպվել հասարակական-տնտեսական կյանքում կապիտալիստական հեղաբեկմանը և իրենց գոյատևման համար դիրքեր գրավել արևելահայ բուրժուազիայի շարքերում։ Հին կղերաազգային և նոր բուրժուական ուժերի վերադիրքավորման նպատակն էր համախմբված ուժերով դիմադրավել հեղափոխական թափ ստացող դեմոկրատական ուժերին[2]։

1850—60-ական թվականների հասարակական-քաղաքական մյուս հոսանքը, ինչպես ասվեց, Աշ. Հովհաննիսյանը համարում է ազգային-պահպանողականը։ Նրա կարծիքով, չի կարելի այդ հոսանքը միացնել կղերաազգային հոսանքին, թեև իր ժամանակին լիբերալ հրապարակախոսությունը, նրա դեմ իր ծավալած պայքարը դյուրացնելու մտայնությամբ, նրան համառորեն ներկայացրել է «կղերապահպանողականություն» պիտակով։ «Պարզունականացնելով հակառակ հոսանքների դեմ իրենց հայացքների պաշտպանության գործը,— գրում է պատմաբանը,— լիբերալները գիտակցաբար անտեսում էին ազգային-պահպանողականների դիրքավորման ինքնուրույնությունն ու առանձնահատկությունները»[2]։ Աշ. Հովհաննիսյանը փորձում է ցույց տալ, որ մի շարք էական հարցերում լուրջ տարբերություններ կային այդ երկու հոսանքների միջև։ Եթե կղերաազգային ռեակցիան ազգի գոյության միակ հենարանն էր համարում հայադավան եկեղեցին, ապա ազգային-պահպանողականների համար գերագույն հեղինակությունը ոչ թե եկեղեցին էր, այլ նրան իր գոյության պատվարներից մեկը դարձնող ազգը։ Վտանգված համարելով ազգի ու եկեղեցու գոյությունը Ռուսաստանում, մասնավորապես կով՛ասահայ միջավայրում, այդ հոսանքի ներկայացուցիչները յուրովի դիմակայում էին ցարիզմին, Կովկասում նրա գաղութային քաղաքականությանը[3]։

Անդրադառնալով լիբերալ-բուրժուական հոսանքին, Աշ. Հովհաննիսյանը գտնում է, որ 1850—1860-ական թվականներին այդ հոսանքի գործունեության հանգրվաններ դարձան ռուսահայ գաղ-

1 Հայ ժողովրդի պատմություն, հ. V, էջ 388։
2 Տե՛ս նույն տեղը։
3 Նույն տեղը, էջ 389։
4 Տե՛ս նույն տեղը։



թավայրերը։ Պետերբուրգն ու Մոսկվան, Նոր Նախիջևանը, Ղրիմը, Աստրախանը, Ղզլարն ու Մոզդոկն ավելի անմիջականորեն էին կապված արևելահայ լիբերալների լուսավորական գործունեության հետ, քան Արևելյան Հայաստանի քաղաքները։ Հատկանշական է, շարունակում է նա, որ «Հյուսիսափայլը» ավելի շատ բաժանորդներ ուներ Ռուսաստանի հայ գաղթավայրերում, քան հայ առևտրականների այնպիսի տրանզիտային հանգրվաններում, ինչպիսիք Թիֆլիսն ու Շամախին, Ագուլիսն ու Շուշին էին[1]։ Բացահայտելով լիբերալ-բուրժուական հոսանքի պարագլուխ Ստ. Նազարյանի տեսակետների մի մասի առաջադեմ լինելը, բնութագրելով նրան որպես լուսավորիչ, Աշ. Հովհաննիսյանը միաժամանակ մատնանշում է նրա աշխարհայացքի սահմանափակությունը, հայ ժողովրդի ազատագրական պայքարի ժխտումը, ռեֆորմիստական հայեցակետը։ Նրա կարծիքով, Ստ. Նազարյան լուսավորիչը, մատնանշելով կապիտալիստական զարգացման ուղին, ելնում էր ոչ թե արևելահայ բուրժուազիայի դասակարգային շահերը պաշտպանելու նեղ մտահոգությունից, այլ արևելահայ հասարակական կյանքի բուրժուական ուղու հետ լծորդված ազգի ընդհանուր բարեկեցության, նրա համախմբման ու ինքնապահովման մղումներից։

Լայնորեն է լուսաբանված հեղափոխական-դեմոկրատական հոսանքը։ Մ. Նալբանդյանի գլխավորած այդ հոսանքը, գրում է Աշ. Հովհաննիսյանը, կազմում էր ռուսական հեղափոխական դեմոկրատիային ընդառաջող ջոկատներից մեկը, որը պայքարի դրոշ բարձրացրեց ոչ միայն ցարական վարչակարգի, այլև ֆեոդալիզմի պաշտպանների ու հաշտվողական լիբերալների դեմ։ Ճնշված ու հարստահարված ժողովրդական զանգվածների դասակարգային շահերը Նալբանդյանը տարբերանշում էր համաժողովրդական այն շահերից, որոնց պաշտպանության համար ժողովրդի անունից մինչ այդ հանդես էին գալիս միայն արևելահայ բուրժուազիայի պահպանողա՛ն և լիբերալ գաղափարախոսները[2]։ Հանգամանորեն շարադրելով մեծ հեղափոխական-դեմոկրատի հայացքները, պատմաբանը բարձր է գնահատել նրա գլխավորած հոսանքի խաղացած կարևոր դերը հայ ժո-

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. V, էջ 397։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 405։

ղովրդի հասարակական-քաղաքական մտքի հետագա զարգացման պատմության մեջ։

XIX դարի 50—60-ական թվականների հայ հասարակական-քաղաքական հոսանքների պատմությանը անդրադարձել է նաև Վ. Պարսամյանը՝ «Հայ ժողովրդի պատմություն» մենագրության մեջ։ Ի դեպ, ճիշտ է վարվել հեղինակը, երբ արևելահայ և արևմտահայ հասարակական-քաղաքական հոսանքների հարցը քննել է միատեղ, մեկ ամբողջության մեջ։

Ղրիմի պատերազմից հետո, գրում է նա, համաշխարհային պատմության մեջ նշանակալից իրադարձություններ կատարվեցին, որոնք իրենց որոշակի ազդեցությունն ունեցան նաև հայկական կյանքի վրա։ XIX դարի առաջին կեսի համեմատաբար դանդաղ ու խաղաղ զարգացմանը հաջորդում է հայ հասարակական կյանքի բուռն առաջընթացի, սուր պայքարի ու բախումների փոթորկալից մի շրջան։ «XIX դարի կեսերին ստեղծված ներքին ու արտաքին կոնկրետ իրադրության պայմաններում, ավելի ու ավելի սահմանազատվում ու համախմբվում են պայքարող ուժերը, մշակվում են նրանց գաղափարախոսությունը, պայքարի ձևերն ու մեթոդները։ Հասարակության սոցիալական շերտավորման և դասակարգային պայքարին համապատասխան ձևավորվում են հասարակական-քաղաքական հոսանքները»[1]։

Վ. Պարսամյանի կարծիքով, 1850—1860-ական թվականներին հայ հասարակության մեջ գոյություն են ունեցել երեք հիմնական հոսանքներ՝ կղերաֆեոդալական, լիբերալ-բուրժուական և հեղափոխական-դեմոկրատական։ Աշխատության մեջ տրվում է դրանց բնութագիրը, նշվում ղեկավար գործիչների հայացքները, տրվում նրանց միջև եղած պայքարը։

Այսպես, պատմաբանը կղերաֆեոդալական հոսանքը բնութագրում է որպես հայ կղերական, ֆեոդալական, շահագործող խավերի շահերի արտահայտիչ։ Այդ հոսանքը, գրում է նա, հայ կյանքում ամենառեակցիոնն էր՝ ֆեոդալական, միապետական կարգերի, կյանքի հին, իր դարն ապրած ձևերի, կրոնական դոգմաների ջատագովը։ Այդ ուղղության պարագլուխներն ու նրանց

[1] **Парсамян В.**, История армянского народа (1801—1900 гг.), с. 195. *Այս մասին տե՛ս նաև՝ Վ. Պարսամյան. Պատմագիտական աշխատություններ, Եր., 1985, էջ 199։*



գաղափարակիցները՝ Գ. Այվազովսկին, Հ. Ջամուռճյանը, Մ. Մսերյանը, Ս. Ջալալյանը, Ս. Մանդինյանը և ուրիշներ, դեմ էին հայ ժողովրդի ազատագրական պայքարին, նրա առաջադիմությանը, աշխարհաբար լեզվին, աշխարհիկ դպրոցին։ Նրանք եկեղեցին համարում էին ազգի գոյության միակ հենարանը, կրոնն ու գրաբարը՝ ազգության սյուները։ Նրա պարագլուխները կատաղի պայքար էին մղում առաջադեմ գործիչների դեմ։

Լիբերալ-բուրժուական հոսանքը, նշում է հեղինակը, ձևավորվեց կապիտալիզմի զարգացման, հայ բուրժուազիայի տնտեսական, քաղաքական ու գաղափարական դիրքերի հաստատման ու ամրապնդման շրջանում։ Այն պաշտպանում էր զարգացող բուրժուազիայի շահերը և պայքարում կղերաֆեոդալական հոսանքի դեմ՝ հանուն հայ կյանքի եվրոպականացման-բուրժուականացման, ազգային կրթության, լուսավորության, դպրոցի, լեզվի, գրականության ու գիտության զարգացման։

Վ. Պարսամյանը բարձր է գնահատում առաջադիմական այդ հոսանքի պարագլուխ Ստ. Նազարյանի և նրա համախոհների խաղացած դերը հայ իրականության մեջ։ Սակայն նա միաժամանակ նշում է, որ Ստ. Նազարյանը հասարակական-քաղաքական կյանքի մի շարք հարցերում հակադրվում էր Մ. Նալբանդյանին, դեմ էր հեղափոխական շարժումներին, ապստամբությանը, մի խոսքով՝ ռեֆորմիստ էր։

Անդրադառնալով հեղափոխական-դեմոկրատական հոսանքին, հեղինակն այն բնութագրում է որպես 1850—1860-ական թվականների հայ հասարակական-քաղաքական կյանքի ամենաարմատական, ամենաառաջավոր ուղղություն, աշխատավորական լայն խավերի, հասարակ ժողովրդի շահերի արտահայտիչ։ Ճիշտ են ցույց տրված այդ հոսանքի ծագման սոցիալ-քաղաքական նախադրյալները։ Դրա երևան գալը, իրավացիորեն գրում է Պարսամյանը, հայ հասարակական կյանքի պատմության մեջ մի թռիչք էր, նոր ու ավելի բարձր փուլ, որի նախապատրաստման համար խոշոր դեր խաղացին Խ. Աբովյանն ու մյուս դեմոկրատ-լուսավորիչները։ Այդ ուղղության առաջացման ու զարգացման համար մեծ նշանակություն ունեցան նաև Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի ազատագրական շարժումները, ռուսական հեղափոխական-դեմոկրատական ուղղության բարերար ազդեցությունը։ «Համարձակ կարելի է ասել,—

գրում է նա,— որ հայ իրականության մեջ, մինչև մարքսիզմի հանդես գալը, հայ առաջավոր, հեղափոխական մտքի վրա ոչ մի ուղղություն այնպիսի մեծ ու բարերար ազդեցություն չի ունեցել, ինչպես ռուսական հասարակական մտքի մինչմարքսիստական փուլի ամենաառաջավոր ուղղությունը՝ հեղափոխական-դեմոկրատական ուղղությունը»[1]: Դա, շարունակում է հեղինակը, վերաբերում է և՛ ռուս նարոդնիկությանը, և՛ արևմտաեվրոպական մանրբուրժուական սոցիալիստական ուղղություններին, որոնք, թեև որոշ չափով իրենց ազդեցությունն ունեցել են հայ հասարակական մտքի վրա, բայց երբեք տիրապետող ուղղություն չեն դարձել: Ըստ պատշաճի բացահայտվել է հոսանքի հիմնադիր ու պարագլուխ Մ. Նալբանդյանի և նրա համախոհների գաղափարախոսությունն ու գործունեությունը:

1850—1860-ական թվականների հայ հասարակական-քաղաքական հոսանքների պատմությամբ զբաղվել է նաև Հ. Ղազարյանը: Արևմտահայերի 1800—1870 թթ. սոցիալ-տնտեսական և քաղաքական կացության մասին նրա մենագրության[2] վերջին գլուխը նվիրված է արևմտահայ հոսանքների քննարկմանը: Նա գտնում է, որ արևմտահայ իրականության մեջ գոյություն են ունեցել չորս հոսանքներ՝ կղերաամիրայական, լիբերալ-բուրժուական, ազգային-պահպանողական և ազգային-դեմոկրատական: Ցույց են տրվել դրա երևան գալու տնտեսական ու քաղաքական նախադրյալները, գաղափարախոսությունը, գաղափարական պայքարը:

Կղերաամիրայական հոսանքը, նշում է Հ. Ղազարյանը, գլխավորում էին Կ. Պոլսի ու Զմյուռնիայի հայ գաղթօջախներում, Վենետիկում ու Վիեննայում խարսխված հետադեմ, անգամ անմեղ բարեշրջումներից երկնչող, երեսով դեպի պատմության հետնախորքը շրջված գաղափարաբանները: Մինչև 30—40-ական թվականները, այսինքն՝ նախքան լուսավորյալ մտավորականության Եվրոպայից վերադարձը, սահմանադրական ու ժողովրդական, ազգային-ազատագրական շարժումները, հայկական մշակույթի մարզում նրանք դրական դեր էին խաղում: Այդ

[1] Парсамян В., նշվ. աշխ., էջ 203 (Ընդգծումը հեղինակինն է— Շ. Հ.):

[2] Տե՛ս Հ. Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը, 1800—1870 թթ., Եր., 1967:



հոսանքի մարդիկ, լինելով անվանի գիտնականներ, տիրապետելով մի քանի լեզուների, օգտվելով ազգի ներքին գործերը տնօրինելու մենատիրական իրավունքներից, սատարում էին ժամանակի իմաստով առաջավոր գաղափարներ, բացում էին հայկական դպրոցներ, հիմնում տպարաններ, տպագրում ու տարածում ինչպես ինքնուրույն, այնպես էլ թարգմանական գրքեր, նպաստելով արևմտահայերի ազգային զարթոնքին և օբյեկտիվորեն նախապայմաններ ստեղծելով ազգակազմավորման պրոցեսի համար[1]:

Անուրանալի է նրանց դերը նաև արևմտահայ աշխարհաբարի ձևավորման գործում: Ավելին, նրա կարծիքով, Թուրքիայի հայ գաղթօջախներում այդ պրոցեսն ավելի վաղ սկսվեց և ավելի շուտ հաղթանակի հասավ, քան արևելահայ իրականության մեջ, ռուսահայ գաղթաշխարհում[2]: Դա բացատրվում է թուրքական սուլթանների բռնությամբ: Սոցիալ-քաղաքական, առավել ևս ազգային ճնշումների ու կրոնական հալածանքների էին ենթարկվում ոչ միայն հայ աշխատավորական խավերը, այլև հայ ամիրաները, հոգևոր դասը, Կ. Պոլսի հայոց պատրիարքները: Ուստի նման ծանր պայմանները հայ վերնախավերին ևս մղում էին փրկության ելք որոնելու:

Այլ էր իրավիճակը դարակեսին, գրում է Հ. Ղազարյանը: Նոր պայմաններում հայ ամիրաները մշակեցին իրենց գաղափարաբանությունը, կազմավորեցին կղերաամիրայական հոսանքը և ջանք չխնայեցին պաշտպանելու ֆեոդալական կաստայականությունը, դիմակայելու ինչպես առաջավոր գաղափարների ներթափանցմանը, այնպես էլ ժողովրդի քաղաքական ու սոցիալական ազատագրման պահանջներին: Կղերաամիրայականների պարագլուխները՝ Հ. Տերոյենցը, Մ. Տեյիրմենճյանը, Ա. Հասունյանը և ուրիշներ, աստիճանաբար կապեր են հաստատում արևելահայ համախոհների՝ Մ. Մսերյանցի, Գ. Այվազովսկու և մյուսների հետ և ձգտում միասնական ճակատով դուրս գալ ոչ միայն Մ. Նալբանդյանի գլխավորած հոսանքի, այլև լիբերալ-բուրժուազիայի չափավոր պահանջների դեմ: Նրանք, գրում է հեղինակը, որպես կանոն, ունեին թուրքական կողմնորոշում և

[1] Տե՛ս Հ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 541—542:

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 542:

ձգտում էին ամրացնել ֆեոդալական միապետության և լուսավորչական եկեղեցու խախտված հեղինակությունը։

Արևմտահայ լիբերալ-բուրժուական հոսանքը Հ. Ղազարյանը բնութագրում է որպես հայ գաղթօջախներում կենտրոնացված հայ առևտրական բուրժուազիայի շահերի արտահայտիչ։ Այդ հոսանքի պարագլուխները հիմնականում Եվրոպայում կրթություն ստացած այն երիտասարդներն էին, որոնք պայքարի դրոշ պարզեցին խավարամոլների, ֆեոդալիզմի պաշտպան կղերամիրայականների դեմ։ Շարադրելով վերջիններիս հայացքներն ու գործունեությունը, բացահայտելով նրանց գաղափարների մեջ կատարված փոփոխությունները, տարակարծությունները, պատմաբանը հանգում է այն հետևության, որ այդ հոսանքը հեռու էր ժողովրդական շարժումներից, քաղաքական, առավել ևս՝ սոցիալական պայքարից, ասպարեզը թողնելով ազգային-դեմոկրատական ու նրանց ձախ թևը կազմող հեղափոխական գործիչներին։

XIX դարի կեսերին, գրում է Հ. Ղազարյանը, մեծացավ գավառահայ առևտրաարհեստագործական բուրժուազիայի դերը։ Այդ ժամանակ էլ գավառահայ մտավորականներից ձևավորվում է ազգային-պահպանողական հոսանքը, որի պարագլուխներն էին Մ. Խրիմյանը, Գ. Սրվանձտյանը և ուրիշներ։ Նրա կարծիքով, այդ հոսանքն իր հակառակորդների դեմ պայքարելու համար կապվում էր ժողովրդի հետ, աշխատում էր ստեղծել լուսամիտ եկեղեցականներ, բարձր պահել հոգևոր հիմնարկների դրոշը, դիրք ստանալ հայկական ներքին կյանքում, նույնիսկ դառնալ հանրային շահերի պաշտպան։ Դեմոկրատական գծերով օժտված գավառահայ ազգային-պահպանողականները, գրում է Հ. Ղազարյանը, դատափետում էին վայրենաբարո քուրդ վերնախավին, թուրք աղաներին, հայ վաշխառուներին, ջանք գործադրում հաղթահարելու գավառի տգիտությունը, խավարը, բայց վախենում էին մարտահրավեր նետել սուլթանական միահեծանությանը։ Նրանք հեռու էին հեղափոխական հայացքներից, խուսափում էին ժողովրդի զանգվածային շարժումներից և այլն։

Արևմտահայ մյուս հոսանքը՝ ազգային-դեմոկրատականը, ըստ Հ. Ղազարյանի ձևավորվել է 1860-ական թվականների սկզբին և արտահայտում էր քաղաքային արհեստավորների, պանդուխտների ու աշխատավոր գյուղացիության շահերը։ Նրա կարծիքով, այդ հոսանքն իր երկու՝ աջ և ձախ թևերով 1860-ական



թվականների արևմտահայ հասարակական-քաղաքական շարժումների մեջ ղեկավար դեր էր կատարում, ժողովրդին իր հետևից տանում։ Շատ խնդիրներում, գրում է նա, այս հոսանքի հետ էին գավառահայ ազգային-պահպանողականները, որոնք հետագա տասնամյակների սոցիալ-քաղաքական իրադարձությունների ազդեցությամբ թոթափում են պահպանողականության բեռը, շրջադարձ կատարում և երկնում հեղափոխական ընդհատակյա կազմակերպություններ։ Հեղինակն առանձին-առանձին շարադրում է ազգային-դեմոկրատական հոսանքի նշանավոր ներկայացուցիչներ Ստ. Ոսկանյանի, Մ. Մամուրյանի, Գ. Չիլինկիրյանի, Կ. Փանոսյանի, հեղափոխական-դեմոկրատներ Հ. Սվաճյանի, Ս. Թագվորյանի և ուրիշների հայացքները, բարձր գնահատում նրանց գործունեությունը, միաժամանակ բացահայտելով նրանց աշխարհայացքային ճեղքվածքները, թույլ կողմերը։

«Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը» մենագրության շարադրանքը 1850—1860-ական թվականների հասարակական-քաղաքական հոսանքների մասին որոշ փոփոխություններով և կրճատումներով տպագրվել է նաև «Հայ ժողովրդի պատմության» V հատորում[1] և 1979-ին ռուսերեն հրատարակված մենագրության մեջ[2]։ Վերջինիս մեջ շարադրված է նաև արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքների պատմությունը, որի հիմնական սկզբունքները համապատասխանում են «Հայ ժողովրդի պատմության» V հատորում Աշ. Հովհաննիսյանի արտահայտած բաժնի դրույթներին։

Այս աշխատության մեջ Հ. Ղազարյանն անդրադարձել է արևմտահայ հասարակական-քաղաքական հոսանքների կողմնորոշման հարցին։ Նա գտնում է, որ եթե կղերամիրայական հոսանքը ժխտելով մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի անհրաժեշտությունը, ուներ թուրքական կողմնորոշում, ապա լիբերալ-բուրժուազիան ու նրա հայացքների պաշտպանները՝ արևմտաեվրոպական կողմնորոշում. եթե ազգային պահպանողականները, քննադատելով ցարիզմի ազգային գաղութային քաղաքականությունը, համակրում էին ռուս ժողովրդին, ապա ազգային դեմոկրատները ոչ միայն հանդես բերեցին ռուսական

[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. V, էջ 426—456։։

[2] Տե՛ս **Казарян Г.**, Армянское общественно-политическое движение в 50—60-их годах XIX века и Россия, Е., 1979.

կողմնորոշում, այլև, մանավանդ նրանց ձախ թևը՝ հեղափոխական դեմոկրատները, պարզորոշ ըմբռնում էին երկու Ռուսաստանների գոյությունը և, հետևելով Մ. Նալբանդյանին, հայ ժողովրդի ազատագրումը կապում էին ռուսական հեղափոխական-դեմոկրատական և իտալական ազգային շարժման հաղթանակի հնարավորության հետ[1]։

Արժանի է ուշադրության անցյալ դարի 50—60-ական թվականների հեղափոխական շարժումների արևմտահայ տրիբունի՝ Հ. Սվաճյանի հարուստ կյանքի և գործունեության մասին Հ. Ղազարյանի մենագրությունը[2]։

Հ. Սվաճյանի մասին շատ է գրվել՝ թե՛ նախախորհրդային և թե՛ խորհրդահայ հեղինակների, այդ թվում՝ Հ. Ղազարյանի կողմից, սակայն այստեղ ի մի են բերված և ըստ պատշաճի վերլուծված բոլոր կարծիքները։ Շատ հարցեր աշխատության մեջ նորովի են լուսաբանվել։

Հ. Սվաճյանի գործունեությունը բաժանելով երկու շրջափուլերի, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ եթե 50-ական թվականներին նա դեռևս պաշտպանում էր չափավոր լուսավորական հայացքներ, ապա 60-ական թվականների սկզբից, գործարար կապեր հաստատելով Մ. Նալբանդյանի ու, նրա միջոցով, «Լոնդոնի պրոպագանդիստների» հետ, հաստատակամորեն կանգնեց հեղափոխական դեմոկրատիայի դիրքերում։

Կարևոր նշանակություն ունի Հ. Ղազարյանի՝ փաստերի հիման վրա կատարած այն եզրահանգումը, թե Հ. Սվաճյանը 1862 թ. օգոստոսի 1-ի Կ. Պոլսի հակակառավարական ցույցի կազմակերպիչն էր, կապված էր զեյթունցիների հետ, ծրագրեր ուներ հակասուլթանական շարժումները զուգորդել հակաավստրիական և հակացարական հեղափոխական համընդհանուր պայքարին։

Անդրադառնալով հայ ազգային-ազատագրական շարժման բնույթի, շարժիչ ուժերի, առաջնորդի հարցերին, հեղինակն այն ճիշտ կարծիքն է հայտնել, որ ղեկավարը՝ աշխատավորության շահերի պաշտպան, դեմոկրատական մտավորականությունն էր՝ Մ. Նալբանդյանի և Հ. Սվաճյանի հետևորդներն ու զինակիցները։

Հաջող է լուսաբանված Նալբանդյան—Սվաճյան կապը, մասնավորապես վերջինիս հեղափոխական գործունեությունը, խոր վերլուծության են ենթարկված Սվաճյանի հայացքները Հայաստանի տնտեսական զարգացման և հայ ժողովրդի սոցիալական ազատագրության ուղիների մասին։

Անկասկած, խորհրդահայ պատմաբանները զգալի աշխատանք են կատարել XIX դարի 50—60-ական թվականների հայ հասարակական-քաղաքական հոսանքների պատմության հետազոտության ուղղությամբ։ Սակայն, ինչպես երևաց մեր շարադրանքից, այդ հարցի վերաբերյալ միասնական կարծիք գոյություն չունի։ Եթե, օրինակ, Աշ. Հովհաննիսյանը գտնում է, որ այդ տարիներին արևելահայ իրականության մեջ գոյություն է ունեցել չորս հոսանք, և նույնը ընդունում են Հ. Ղազարյանն ու Զ. Գրիգորյանը[1], ապա Վ. Պարսամյանի կարծիքով, գոյություն է ունեցել երեք հոսանք։ Երեք հոսանք են ընդունում նաև Մ. Ներսիսյանը, Ս. Աղայանը և Գ. Գալոյանը[2]։ Ի դեպ, տարիներ առաջ Մ. Ներսիսյանը գտնում էր, որ 1850—1870-ական թվականներին հայ ազատագրական շարժման մեջ առկա է եղել երկու հիմնական հասարակական-քաղաքական ուղղություն՝ հեղափոխական-դեմոկրատական, որն արտահայտել է գյուղացիության, ժողովրդական մասսայի շահերը, և բուրժուանացիոնալիստական, որն արտահայտել է հայ բուրժուազիայի դասակարգային նեղ շահերն ու իղձերը[3]։ Այդ տեսակետը մենք ժամանակին սխալ ենք համարել մեր առաջին գրքում։

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Դարբինյանը ևս թռուցիկ կերպով անդրադարձել է հասարակական հոսանքների հարցին։ Ընդունելով պատմաբաններից և ոչ մեկի կարծիքը, նա առաջ է քաշել մի նոր տեսակետ, որին ոչ մի դեպքում չի կարելի համաձայնվել։ Առարկելով Վ. Պարսամյանին և Մ. Ներսիսյանին, նա գրում է. «Մեր կարծիքով, ավելի ճիշտ կլինի, եթե մենք XIX դարի հայ իրականության մեջ եղած բազմաթիվ հոսանքները խմբավորենք երեք՝ պահպանո-

1 Տե՛ս Казарян Г., նշվ. աշխ., էջ 340—341։

2 Տե՛ս Հ. Ղազարյան, Հարություն Սվաճյանի կյանքը և գործունեությունը, Եր., 1986։



1 Տե՛ս Զ. Գրիգորյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, էջ 381։

2 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, խմբ. Մ. Ներսիսյանի, էջ 378, Ս. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր., 1976, էջ 39, Գ. Գալոյան, Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, էջ 379, 383։

3 Տե՛ս Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Եր. 1955, էջ 25։

դական, լիբերալ-բուրժուական և հեղափոխական-դեմոկրատական հոսանքների մեջ»[1]։ Նա անհիմն կերպով առարկում է Վ. Պարսամյանին, որը գրել է, թե կղերաֆեոդալական հոսանքը, որը 1850—1860-ական թվականներին ջախջախիչ հարվածներ ստացավ հեղափոխական-դեմոկրատներից, և հատկապես, Նալբանդյանից, կապիտալիզմի զարգացման հետևանքով ավելի թուլացավ, մղվեց հետին պլան, կորցրեց իր երբեմնի ազդեցությունը, իսկ հետագա երկու տասնամյակներին այդ ուղղության դերը փաստորեն իրենց վրա էին վերցրել «Մեղու Հայաստանի» և «Նոր դար» թերթերի շուրջ համախմբված պահպանողականները, որոնք շարունակում էին պայքարել առաջադիմական ուժերի դեմ[2]։

Հայ հասարակական-քաղաքական հոսանքների հարցում եղած բոլոր կարծիքներից մենք հակված ենք ճիշտ համարելու Վ. Պարսամյանի կարծիքը, ըստ որի ազգային-պահպանողական հոսանքը ոչ թե հիմնական, այլ միջանկյալ՝ կիսակղերական, կիսաբուրժուական հոսանք է։ Վ. Պարսամյանը գտնում է, որ հայ հասարակական-քաղաքական հոսանքները միատարր ու միաձույլ չէին, որ հիմնական հոսանքների ներսում տարբեր ժամանակներում, տարբեր հարցերի նկատմամբ դրսևորվել են արմատական և չափավոր հայացքներ։ Նրա կարծիքով, հենց այդ տարբերություններն են նկատի ունեցել մեր որոշ պատմաբաններ և գրականագետներ, որոնք միջանկյալ ուղղությունները, նույնիսկ առանձին թերթերի պաշտպանած այս կամ այն տեսակետը, նույնացնում են հասարակական-քաղաքական հիմնական հոսանքների հետ։ «Հասարակական-քաղաքական հոսանքներն ինչպես ամենուրեք, այնպես էլ հայ իրականության մեջ,— իրավացիորեն գրում է նա,— սոցիալական և դասակարգային փոխհարաբերությունների ու պայքարի ծնունդ են, որոշակի սոցիալական շերտի, դասակարգի շահերի արտահայտիչ ու պաշտպան։ Հասարակական հիմնական դասակարգերին համապատասխան գոյություն են ունեցել նաև հասարակական-քաղաքական հիմնական հոսանքներ»[3]։

1 Հ. Փաքրիեզյան, Հայ պատմափիլիսոփայական մտքի քննական տեսություն, Եր., 1966, էջ 219 (Ընդգծումը հեղինակինն է — Շ. Հ.)։

2 Տե՛ս Վ. Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Եր., 1958, էջ 68։

3 Վ. Պարսամյան, նշվ. աշխ., էջ 216 (Ընդգծումը հեղինակինն է — Շ. Հ.)։



Հարկ է նշել նաև, որ աննպատակահարմար է թվում մեզ, երբ «Հայ ժողովրդի պատմության» V հատորում, ինչպես նաև Հ. Ղազարյանի ռուսերեն հրատարակված աշխատության մեջ, արևելահայ և արևմտահայ հասարակական-քաղաքական հոսանքների հարցը շարադրված է առանձին-առանձին։ Կարծում ենք, որ հայ հասարակական մտքի մեջ նման արհեստական սահմանազատում ստեղծելու կարիք չկար, ճիշտ կլիներ հոսանքների պատմությունը քննել մեկ ամբողջության մեջ։

Խորհրդահայ պատմագրության մեջ միասնական տեսակետ չկա նաև արևմտահայերի ազգային սահմանադրության գնահատման հարցում։

Ռ. Հովհաննիսյանի կարծիքով, սահմանադրությունն իր սկզբունքներով առաջադիմական էր, քանի որ արևմտահայ կյանքում մտցնում էր մի այնպիսի արմատական փոփոխություն, ինչպիսին ժողովրդի ղեկավարման ֆունկցիան էր. կղերամիրայական վերնախավից խլելով ժողովրդի ղեկավարման մենաշնորհը, այն հանձնվում էր ընտրությամբ կազմվող Ազգային ժողովին։ «Ազգային սահմանադրությունը,— գրում է նա,— իրենով նշանավորում էր հայ ժողովրդի քաղաքական զարթոնքը, իր հերթին նպաստում արևմտահայության քաղաքական-մշակութային նոր առաջընթացին, բարեգործական և ուսումնական հաստատությունների հիմնադրմանն ու ծավալմանը»[1]։

Սակայն Ռ. Հովհաննիսյանը միաժամանակ նշում է, որ արևմտահայ սահմանադրությունը ոչնչով չէր փոխում ժողովրդի ծանր վիճակը։ Նրա կարծիքով, դրանով թուրքական կառավարությունը փորձեց ժողովրդին շեղել պայքարի ճշմարտացի ուղուց, և իր սոցիալական ու քաղաքական ազատագրման համար ոտքի ելած արևմտահայ ժողովրդին մղեց սահմանադրության վերափոխման համար ծավալված ներազգային պայքարի շավիղը։

Վ. Պարսամյանը գտնում է, որ արևմտահայերի Ազգային սահմանադրությունն իր ժամանակի պատմական պայմաններում առաջադիմական երևույթ էր։ Արևմտահայ դեմոկրատների ու լուսավորիչների գլխավորած սահմանադրական շարժումն ուղղված էր ամիրաների ու բարձր հոգևորականության դեմ։ Աշխա-

1 Ռ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (XIX դարի 70—80-ական թթ.), Եր., 1965, էջ 30։

տավորական զանգվածները ձգտում էին ազատագրվել ազգային կեղեքիչների լծից, նրանց զրկել ազգային գործերի կառավարման մենաշնորհ իրավունքներից։ Ինչպես իր նախորդ աշխատություններում, այստեղ ևս, տալով սահմանադրական շարժման 1860 և 1863 թվականների կանոնադրությունների համար մղված սուր պայքարի պատմությունը, նա նշում է, որ սուլթանական կառավարության կողմից 1863 թվականին հաստատված կանոնադրության միջից հանվել էին արմատական պահանջները։ Չնայած դրան, գրում է պատմաբանը, ֆեոդալական Թուրքիայի ծայրաստիճան հետամնաց իրականության ֆոնի վրա արևմտահայերի Ազգային սահմանադրությունը լուսավոր էջ էր, հայ հասարակական-քաղաքական մտքի հասունության արտահայտություն, առաջադիմական ուժերի հաղթանակ՝ կղերամիրայական հոսանքի, ռեակցիայի պարագլուխ Հ. Ջամուռճյանի և նրա զինակիցների դեմ։

Արևմտահայերի Ազգային սահմանադրությունը, գրում է Պարսամյանը, իսկական սահմանադրություն չէր և չէր էլ կարող լինել։ Դա արևմտահայերի ներքին կյանքին վերաբերող չափավոր մի կանոնադրություն էր, որը սուլթանական բռնակալության պայմաններում չկարողացավ և չէր էլ կարող ապահովել հայերի իրավունքները, նրանց կյանքն ու գույքը[1]։

Արևմտահայերի Ազգային սահմանադրությանը դրական գնահատական է տվել նաև Հ. Ղազարյանը։ Նա գտնում է, որ այն նվաճվեց Պոլսի հայ արհեստավորների, օրամշակ բանվորների, բազմահազար պանդուխտների և նրանց ղեկավարող հայ առաջադեմ մտավորականության պայքարի գնով, պայքար, որը տևեց շուրջ երկու տասնամյակ[2]։ Ի դեպ, ինչպես Վ. Պարսամյանը, Հ. Ղազարյանը ևս իրավացիորեն ընդունում է, որ արևմտահայերի Ազգային սահմանադրությունը չէր համապատասխանում իր ներքին բովանդակությանը։ Սահմանադրությունը ոչ թե սահմանափակում էր սուլթանի, պատրիարքի ու ամիրաների իրավունքները, այլ սոսկ հայկական համայնքի ներքին կյանքին վերաբերող մի կանոնադրություն էր, հետևաբար սուլթանական

[1] Տե՛ս Парсамян В., История армянского народа (1801—1900 гг.), էջ 213—222։

[2] Տե՛ս Հ. Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., էջ 456։



ճնշումներից հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության տեսակետից իրենից քաղաքական արժեք չէր ներկայացնում։ Սահմանադրությունը, գրում է Հ. Ղազարյանը, չէր ներկայացնում արևմտահայ աշխատավորության հավաքական կամքը, չէր արդարացնում նրա հույսերն ու ակնկալությունները։ «Չնայած այս բոլորին,— իրավացիորեն գրում է Հ. Ղազարյանը,— արևելյան բռնապետների գաղջ տիրապետության պայմաններում, մեծ դժվարություններով, երկուստեք զոհառատ պայքարով կյանքի կոչված Ազգային սահմանադրությունն առաջադիմական երևույթ էր։ Այն պայքարի հրապարակ էր հանում ինչպես նորաստեղծ բուրժուազիային, այնպես էլ ժողովրդական զանգվածներին»[1]։

Նա իրավացիորեն քննադատության է ենթարկում հայ բուրժուական այն պատմաբաններին (Սարուխան, Ատոմ), որոնք սահմանադրությունը դիտում էին որպես բարեխնամ սուլթանի գթության ու շնորհի արդյունք, որպես նվեր արևմտահայությանը։

Անդրադառնալով սահմանադրության նկատմամբ հայ հասարակական հոսանքների դիրքորոշմանը, նրանց ղեկավար գործիչների հայացքների հետագա էվոլյուցիային, Հ. Ղազարյանը նշում է, որ ինչպես լիբերալ-բուրժուական հոսանքի ներկայացուցիչներ Գր. Օտյանը, Ն. Ռուսինյանը, Մ. Աղաթոնը, Գ. Պալյանը, մի խոսքով՝ նախկին լուսավորականները, այնպես էլ դեմոկրատական մտավորականությունը՝ Հ. Սվաճյանը, Կ. Փանոսյանը, Մ. Մամուրյանը, Գր. Չիլինկիրյանը, հայացքների և գործունեության երկու շրջան են ապրել։ Եթե մինչև 1861 թվականը պոլսահայ լիբերալները և դեմոկրատները համաքայլ էին ընթանում, ապա դրանից հետո առաջինները սկսեցին սահմանազատվել դեմոկրատներից, ընդհանուր ճակատ կազմել պահպանողականների հետ և ընդառաջել սահմանադրության վիրահատմանը։ 1861—1863 թթ. սահմանադրական պայքարի նոր շրջափուլում դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչները դուրս եկան սահմանադրական պատրանքների մշուշապատ ուղուց և, շարունակելով իրենց սահմանադրական շարժումը, միաժամանակ խստորեն քննադատեցին թլատված սահմանադրությունը։ Սակայն դեմոկրատական գործիչները, չժխտելով 1850-ական և հատկապես 60-ական

[1] Հ. Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., էջ 458։

կան թվականներին իրենց մղած սահմանադրական պայքարի դերը, պատելով սահմանադրական պատրանքի քողը, եկան այն համոզման, որ ժողովրդի ազատագրման միակ միջոցը նրա կազմակերպված պայքարն է։

Հ. Ղազարյանի մենագրության այն հատվածը, որ վերաբերում է արևմտահայերի Ազգային սահմանադրությանը, շարադրված է նաև «Հայ ժողովրդի պատմության» V հատորում։

Սակայն խորհրդահայ ոչ բոլոր պատմաբաններն են ճիշտ գնահատական տվել արևմտահայերի Ազգային սահմանադրությանը։ Դրան բացասական վերաբերմունք են հանդես բերել Աշ. Հովհաննիսյանը, մասամբ՝ Մ. Ներսիսյանը և ուրիշներ։ Այսպես, Աշ. Հովհաննիսյանը Մ. Նալբանդյանի «Անտիպ երկերի» մեկնաբանություններում սահմանադրությունը փաստորեն համարում է ռեակցիոն մի երևույթ՝ ուղղված ազգային-քաղաքական շարժումների դեմ։ «Սահմանադրության հեղինակներն ու ղեկավարները,— գրում է նա,— «հայ» էին ծագումով, սակայն քաղաքականապես ըստ ամենայնի «Թուրք»»[1]։ Թեև «Հայ ժողովրդի պատմության» մեկհատորյակում XIX դարի երկրորդ կեսի ամբողջ պատմությունը վերաբերում է միայն արևմտահայությանը, այնուամենայնիվ ոչ մի խոսք չկա արևմտահայերի Ազգային սահմանադրության մասին։

Չի կարելի համաձայնվել պատմական գիտությունների դոկտոր Բ. Օհանջանյանի կողմից արևմտահայերի սահմանադրությանը տված խիստ բացասական գնահատականին։ «Դասակարգային պայքարը նենգափոխվեց ազգային պայքարով,— գրում է նա,— ծավալվեց շարժում «Ազգային սահմանադրության» համար, մի շարժում, որը փաստորեն համաթուրքական ընդհանուր շարժումներից մեկուսացրեց հայկական համայնքը։ Ազգային սահմանադրական պայքարն օգտակար էր հայ հոգևորականության և բուրժուազիայի շահերին»[2]։ Մենք կասեինք հակառակը՝ հենց սահմանադրական շարժման մեջ էր արտահայտվում դասակարգային պայքարը։ Եվ հետո՝ ի՞նչ համաթուրքական ընդհանուր շարժումներից մեկուսանալու մասին է խոսքը, կամ՝ ի՞նչ հիմք կա պնդելու, թե «Ազգային սահմանադրական

1 Մ. Նալբանդյան, Անտիպ երկեր, Մոսկվա, 1935, էջ 411։

2 Բ. Օհանջանյան, Տնտեսական մարքսիզմի ծանր հրեատանին, Եր., 1970, էջ 34։



պայքարն օգտակար էր միայն հայ հոգևորականության և բուրժուազիայի շահերին»[1]։ Թուրքական բռնապետության դաժան պայմաններում հայերի ազգային, հոգևոր, ներքին կյանքում որոշակի կարգ ու կանոն հաստատելը մի՞թե կարելի է որակել որպես ռեակցիոն երևույթ։ Ճիշտ չէ հեղինակը նաև այն դեպքում, երբ գրում է, թե «պատահական չէ, որ Թուրքիայի սուլթանն առանց լուրջ դիմադրության հաստատեց այդ կանոնադրությունը»[2]։ Պատմական փաստերը վկայում են, որ սուլթանը տարիներով ձգձգել էր սահմանադրության հաստատումը, իսկ հաստատելիս էլ՝ արմատական հոդվածները կրճատել, նրա 150 հոդվածներից թողնելով միայն 99-ը։ Այնուհետև՝ պատմաբանը պնդում է, թե «սահմանադրությունը թուրքական սուլթանների ձեռքին մի զենք է եղել կռվելու աշխատավորության դեմ, փաստերը շատ են»[3]։ Ի՞նչ փաստերի մասին է խոսքը՝ դժվար է ասել։

Այժմ անդրադառնանք խորհրդահայ պատմագրության մեջ 1862 թ. Զեյթունի ապստամբության պատմության գիտական հետազոտման հարցին։

Զեյթունի ապստամբությանը անդրադարձել է Հ. Ղազարյանը[4]։ Թուրքական սուլթանիզմի լծից ազատագրվելու համար քրիստոնյա ազգերի, այդ թվում հայերի, ազատագրական շարժումները, իրավացիորեն գրում է հեղինակը, առաջադիմական էին, որովհետև ուղղված էին օրավուր ուժեղացող թուրքական բռնապետական մեքենայի դեմ։ Դրանք համազգային ձև ու համադեմոկրատական բովանդակություն ունեին։ Սակայն, ի տարբերություն XIX դարի երկրորդ քառորդի դիմադրական կռիվների, որոնք տեղական նշանակություն ունեին, գրում է նա, 1860-ական թվականների ազատագրական շարժումները, հատկապես 1862 թ. Զեյթունի ապստամբությունը, ստանում էին Հայաստանի երկու հատվածների բարոյական և նյութական լայն օգնությունը, արժանանում նրանց ջերմ համակրանքին։

Հ. Ղազարյանը ճիշտ պատասխան է տալիս այն հարցին, թե ինչու սուլթանական կառավարությունը, որը Ազիզ փաշայի կա-

1 Բ. Օհանջանյան, նշվ. աշխ., էջ 34։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, էջ 125։

4 Տե՛ս Հ. Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը, Հայ ժողովրդի պատմություն, հ. V։

տարյալ պարտությունից հետո որոշել էր վճռական հակահարձակման նախապատրաստվել, փոխեց իր ծրագիրը և փոխադարձ զիջումների գնով հաշտվեց Զեյթունի հետ։ Խոսելով Զեյթունի խնդիրը փոխզիջումներով փակելու մասին, դրականապես գնահատելով ֆրանսիական կառավարության միջնորդությունը, Հ. Ղազարյանը միաժամանակ քննադատում է այն պատմաբաններին, ովքեր փորձում են գունազարդել Նապոլեոն III-ի ավանդը այդ գործում, իսկական դրդապատճառները բացահայտելու փոխարեն նրա նվաճողական քաղաքականությունը ներկայացնում են որպես հայափրկիչ առաքելություն։ Հենց այստեղ էլ նա ցույց է տալիս ֆրանսիական կառավարության Կիլիկիայով հետաքրքրվելու իսկական պատճառները, մասնավորապես նշում դրա տնտեսական հիմքերը։ Բացահայտելով Ֆրանսիայի այդ պատմաշրջանում վարած արևելյան քաղաքականության ներքին դրդապատճառները, նա գտնում է, որ չի կարելի հայերի նկատմամբ ունեցած դիրքորոշման հարցում հավասարության նշան դնել Ֆրանսիայի և հին ոճի գաղութատեր Անգլիայի միջև։ «Երկյուղ կրելով Մերձավոր արևելքում Ֆրանսիայի դիրքերի ամրապնդումից,— գրում է Հ. Ղազարյանը,— Անգլիան սուլթանական բռնատիրության դեր էր ստանձնում, թշնամաբար տրամադրվում հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների, Զեյթունի ապստամբության հանդեպ, փոխարենն ստանալով «համեղ պատառներ»»[1]։

Ճիշտ է նրա այն միտքը, թե եվրոպական մեծ պետությունները հայ ազատագրական շարժումներն օգտագործում էին այն դեպքում, երբ շահ ունեին, երբ պետականությունից զրկված ազգային վերազարթոնք ապրող ժողովրդին կարողանում էին ծառայեցնել իրենց նվաճողական դիտավորություններին։ «Ուրեմն, անկասկած, անկախ ելքից, հաղթանակով պսակված Զեյթունի փառքը բոլոր պարագաներում առաջին հերթին պատկանում էր զեյթունցուն, ապա և ողջ հայ ժողովրդին, նրա առաջադեմ զավակներին և ոչ թե որևէ պետության կամ «հայասեր» անհատի»»[2]։

Հ. Ղազարյանը մանրակրկիտ քննում է նաև հայ իրականության մեջ ապստամբության լայն արձագանքների հարցը, Զեյթունի հետ հայ գործիչների կապերը, Մ. Նալբանդյանի գաղափարամերձ մտավորականների Կ. Պոլսում ծավալած ընդհատակյա գործունեությունը և այլն։ Նա ժխտում է այնտեղ գաղտնի կոմիտե հիմնված լինելու որոշ հեղինակների անհիմն ենթադրությունները։ «Բայց չեղած տեղը, կորցրած հիմնականը, հենվելով կղերաամիրայականների հրապարակած վայրիվերո, մեղադրականի բնույթ ունեցող հոդվածների վրա, մեր օրերում եղան մարդիկ, որոնք հյուսեցին իրենց վարկածները, կոմիտե փնտրեցին ամեն տեղ, և թյուրիմացության մեջ գցեցին ընթերցողներին»[1]։

XIX դարի 50—60-ական թվականների հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման պատմությունը Հ. Ղազարյանը շարադրել է նաև իր ռուսերեն աշխատության մեջ, որը, ինչպես ասվել է, որոշ փոփոխություններով 1967 թվականին լույս տեսած հայերեն ուսումնասիրությունն է։

Զեյթունի 1862 թ. ապստամբությունն ավելի հանգամանորեն շարադրված է Հ. Պողոսյանի Զեյթունի ամբողջական պատմությանը նվիրված մենագրության մեջ։

Հայտնի է, որ XIX դարի վերջերից սկսած Զեյթունի պատմության հետազոտության ուղղությամբ նշանակալից աշխատանք են կատարել հայ պատմաբաններն ու բանասերները։ Հ. Պողոսյանը վերլուծել է հրատարակված աշխատությունները, բացահայտել դրանց ինչպես արժանիքները, այնպես էլ տեղ գտած սխալներն ու թերությունները։ Նա իրավացիորեն քննադատում է Ա. Պերպերյանին, Արտ. Կարինյանին և ուրիշների, որոնք սխալ են բնութագրել լեռնականների ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ։

Հենվելով իր կողմից հայտնաբերած մի շարք վավերագրերի տվյալների վրա, պատմաբանը Զեյթունի պատմության վերաբերյալ կատարել է բազմաթիվ արժեքավոր ճշգրտումներ, լուսաբանել մինչև այժմ մութ մնացած մանրամասներ։ Ուշագրավ է, օրինակ, Երևանի Մատենադարանի կաթողիկոսական դիվանից հանված մի վավերագիրը, որը վկայում է զեյթունցիների ցանկությունը Ռուսաստանի հետ կապ պահպանելու և նրա հովանավորությունն ստանալու մասին[2]։

---

1 Հ. Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կացությունը, էջ 497։

2 Հ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 499 (Ընդգծումը հեղինակինն է— Շ. Հ.)։

1 Հ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 520 (Ընդգծումը հեղինակինն է— Շ. Հ.)։

2 Տե՛ս Հ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը, էջ 23։

Անդրադառնալով Զեյթունի 1862 թ. ապստամբության արդյունքներին, Հ. Պողոսյանը ճիշտ է նկատում, որ թեև ապստամբությունը հաղթանակեց և մեծ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները բորբոքելու տեսակետից, սակայն չի կարելի մոռանալ, որ դրանով էլ վերջացավ Զեյթունի մի քանի դար տևած ինքնավար վիճակը։ «Այդուամենայնիվ,— գրում է նա,— թուրքական իշխանություններին եթե չհաջողվեց զենքով հպատակեցնել լեռնականներին, սակայն իրենց այդ վաղեմի ցանկությանը նրանք հասան ապստամբությունից հետո նուրբ քաղաքականության միջոցով և հաստատվեցին Զեյթունում»[1]։ Դրանից հետո, շարունակում է Հ. Պողոսյանը, զեյթունցիների ամբողջ պայքարը XIX դարի ընթացքում մղվել է իրենց կորցրած կիսանկախությունը հետ ստանալու համար։

Աշխատության մեջ հանգամանորեն քննվում է հասունյանների և հակահասունյանների պայքարը, ցույց է տրվում Զեյթունում կաթոլիկության մուտքի հետևանքով լեռնականների պառակտման վնասակարությունը։

Խորհրդահայ պատմագրության մեջ շոշափվել է նաև հայ ազգի կազմավորման հարցը։ Այդ հարցին առաջինն անդրադարձել է Վ. Պարսամյանը։ Տալով ազգի մարքս-լենինյան բնորոշումը, նա գտնում է, որ ինչպես մյուս բոլոր ազգերը, այնպես էլ հայ ազգը կազմավորվել է բարձրացող կապիտալիզմի ժամանակաշրջանում, ֆեոդալական կարգերի փլատակների վրա։ Հայ ազգի կազմավորման պրոցեսը, գրում է նա, որը երկարատև պատմական մի պրոցես է եղել, նույնպես կապված է կապիտալիզմի զարգացման, հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի վերելքի հետ։ «Հայ բուրժուական ազգի կազմավորումը,— գրում է նա,— որը կապիտալիստական հարաբերությունների զարգացման արդյունք էր, իր ժամանակի համար պրոգրեսիվ երևույթ էր, առաջընթաց մի քայլ ֆեոդալիզմից կապիտալիզմին անցման ճանապարհին»[2]։

Վ. Պարսամյանի կարծիքով, հայ ազգը կազմավորվել է XIX դարի երկրորդ կեսին։ Անշուշտ, նշում է հեղինակը, հայ ազգի

---

[1] Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 102։

[2] Парсамян В., История армянского народа (1801—1900 гг.), с. 179 (Ընդգծումը հեղինակինն է— Շ. Հ.)։



կազմավորումը տեղի էր ունենում պատմական ուրույն պայմաններում, ցարական Ռուսաստանի և սուլթանական Թուրքիայի տիրապետության տակ, հասարակական-քաղաքական տարբեր միջավայրում։ «Թե՛ ցարական և թե՛, մանավանդ, սուլթանական բռնապետական կարգերը կաշկանդում, արգելակում էին հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացումը։ Դա խիստ բացասաբար էր անդրադառնում նաև հայ բուրժուական ազգի կազմավորման նորմալ ընթացքի վրա»[1]։

Պրոֆ. Հ. Գաբրիելյանն իր աշխատություններում հայ ազգի կազմավորման հարցում մի շարք առարկություններ է անում Վ. Պարսամյանին, Մ. Ներսիսյանին և Աշ. Հովհաննիսյանին։ Այսպես, նա հանդես է գալիս Վ. Պարսամյանի այն դրույթի դեմ, որ միայն կապիտալիզմի շրջանում է ձևավորվել հայ բուրժուական ազգը, երբ առկա էին ազգի բոլոր տարրերը։ Առարկելով վերոհիշյալ պատմաբաններին, որոնք գտնում են, որ հայ ազգը կազմավորվել է XIX դարի երկրորդ կեսին, Հ. Գաբրիելյանը գտնում է, որ հայ բուրժուազիան ձևավորվել է XVII—XVIII դարերում, հետևաբար, այդ ժամանակ էլ կազմավորվել է բուրժուական ազգը[2]։ Նույն միտքը նա արտահայտել է մեկ այլ աշխատության մեջ, սակայն այս անգամ հայ բուրժուական ազգի կազմավորման ժամանակաշրջանը ընդունելով միայն XVIII դարը[3]։

Պնդելով, որ հայ բուրժուազիան և հայ բուրժուական ազգը կազմավորվել են XVII դարում, Հ Գաբրիելյանն սխալ է համարում Վ. Պարսամյանի այն տեսակետը, թե չի կարելի թուրքական բռնակալության դեմ XIX դարի սկզբին հայ ժողովրդի մղած ազատագրական շարժումները կապել կապիտալիզմի զարգացման և բուրժուական ազգի կազմավորման հետ, քանի որ դրանք սկիզբ են առել կապիտալիզմի ու բուրժուական ազգի հանդես գալուց շատ առաջ[4]։

Հայ բուրժուական ազգի ձևավորման հարցը քննվում է նաև «Հայ ժողովրդի պատմության» VI հատորում։ Հեղինակը՝ պրոֆ.

---

1 Парсамян В. նշվ. աշխ., էջ 179։

2 Տե՛ս Հ. Գաբրիելյան, Ազգերի և ազգային կուլտուրաների զարգացման օրինաչափությունները, Եր., 1973, էջ 110։

3 Տե՛ս Հ. Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի քննական տեսություն, է 79—80։

4 Տե՛ս Նույն տեղը, էջ 175։

Ն. Թավաքալյանը, նույնպես գտնում է, որ այն, որպես պատմական-հասարակական կատեգորիա, ձևավորվեց կապիտալիստական հարաբերությունների ծագման ու զարգացման ընթացքում։ Նրա կարծիքով ևս, չնայած հայ խոշոր, գերազանցապես առևտրական բուրժուազիայի առանձին ներկայացուցիչներ հանդես էին եկել տակավին XVIII դարի երկրորդ կեսից, իսկ բուրժուազիան իր զարգացման առաջին քայլերն էր կատարում, այնուամենայնիվ հայ բուրժուական ազգի ձևավորումը տեղի է ունեցել դրանից մեկ դար հետո[1]։

Տալով ազգի հիմնական հատկանիշները, նա միաժամանակ շեշտել է հայ բուրժուական ազգի ձևավորման պրոցեսի առանձնահատկությունները՝ կապված, մասնավորապես, հայ ժողովրդի տարանջատ գոյավիճակի հետ։

Այսպիսով, չնայած որոշ տարակարծությունների, խորհրդահայ պատմաբանները մեծ ավանդ են ներդրել 1850—1860-ական թվականների հայ ազատագրական շարժումների, հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության լուսաբանման բնագավառում։

## 4. Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը

Այս պրոբլեմը ևս խորհրդահայ պատմաբանների ուշադրության կենտրոնում է եղել, պրոբլեմ, որի գիտական հետազոտությունը սկսվեց 1940—50-ական թվականներին։ Մեր նախորդ աշխատության մեջ անդրադարձել ենք Բ. Բորյանի, Լեոյի, Աշ. Հովհաննիսյանի, Վ. Պարսամյանի, Խ. Բաղալյանի և ուրիշների արտահայտած կարծիքներին՝ ընդունելով կամ մերժելով դրանք։

Հայկական հարցի և նրա նկատմամբ միջազգային դիվանագիտության գրաված դիրքի լուսաբանման ուղղությամբ գիտահետազոտական աշխատանքն ավելի բեղմնավոր եղավ վերջին քառորդ դարում։

Այդ հարցին հանգամանորեն անդրադարձել է Ռ. Հովհաննիսյանը՝ «Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը» մենագրության մեջ, ինչպես նաև «Հայ ժողովրդի պատմության» VI հատորում։ Նրա կարծիքով, Հայկական հարցը Արևմտյան Հայաստանի բարենորոգումների, իսկ հետագայում ինքնավարության կամ անկախության խնդիր էր՝ ծնված Սան Ստեֆանոյում։ Սակայն ոչ սուլթանական Թուրքիան, ոչ եվրոպական գաղութատիրական երկրները և ոչ էլ ցարական Ռուսաստանը, իրավացիորեն գրում է նա, հայ ժողովրդին ինքնավարություն կամ անկախություն տալու որևէ ցանկություն չունեին։ Բացահայտելով մեծ տերությունների դիվանագիտական խաղերը, պատմաբանը նկատում է, որ տարբեր առիթներով նրանց առաջ քաշած կամ պաշտպանած Հայաստանի ինքնավարության պահանջը քաղաքական այս կամ այն նպատակը հետապնդող խաղ է եղել միայն։

Հենվելով որոշ աղբյուրների վրա, Ռ. Հովհաննիսյանը գրտնում է, որ հայկական պատվիրակությունը Բերլին էր մեկնում սուլթանի գիտությամբ, իսկ կոնգրեսին ներկայացրած Հայաստանի ինքնավարության ծրագրին նախօրոք ծանոթացել և իր հավանությունն էր տվել Աբդուլ Համիդը։ «Թուրքական կառավարությունը,— գրում է նա,— կոնգրեսում հայերի ինքնավարության առաջքաշմամբ կարողացավ մոլորեցնել հայ գործիչներին, հետապնդելով Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածի ձախողումը միայն»[1]։ Ռ. Հովհաննիսյանը ցույց է տալիս, թե Թուրքիայում ռազմաստրատեգիական և տնտեսական ինչպիսի շահեր ունեին Ֆրանսիան, Անգլիան, Գերմանիան, ուստի Հայկական հարցը լուծելու ուղղությամբ նրանցից և ոչ մեկը, բացի խոստումներից, ոչ մի քայլ չէր կատարում։ Իսկ ցարական դիվանագիտությունը, գրում է նա, այդ հարցում երկդիմի քաղաքականություն էր վարում։

Հայկական հարցին անդրադարձել է Վ. Պարսամյանը «Հայ ժողովրդի պատմություն» մենագրության մեջ։ Նրա կարծիքով, այն որպես միջազգային դիվանագիտության հարց ծագել է 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո և սերտորեն կապված է Արևելյան հարցի հետ։ Հայկական հարցն առաջին անգամ իր արտահայտությունն է գտել 1878 թ. Ռուսաստանի և Թուրքիայի միջև Սան Ստեֆանոյում կնքված հաշտության պայմանագրում։ «Ուստի,— իրավացիորեն գրում է նա,— ճիշտ չեն այն հեղինակները, որոնք Հայկական հարցի ծագումը կապում են հայ ժողովրդի ծագման կամ միջին դարերի հայ

[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 92։

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 113։

ազատագրական պայքարի հետ»[1]։ Համաձայն ենք Վ. Պարսամյանի այն դրույթին, թե Հայկական հարցը ծագել ու միջազգային դիվանագիտության մեջ մտել է որպես օսմանյան Թուրքիայի լծի տակ գտնվող արևմտահայերին վերաբերող հարց, ուստի ո՛չ Սան Ստեֆանոյի և ո՛չ էլ Բեռլինի պայմանագրերում խոսք չկա և չէր կարող լինել Ռուսաստանի կամ Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող հայերի մասին։

Համառոտակի լուսաբանելով Հայկական հարցի պատմությունը, Վ. Պարսամյանը անդրադարձել է նաև միջազգային դիվանագիտությանը, բացահայտել մեծ տերությունների թշնամական դիրքորոշումը, նրանց դիվանագիտական խաղերը Հայկական հարցը տապալելու ուղղությամբ։ Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը փոխարինելով Բեռլինի 61-րդ հոդվածով, մեծ տերությունները ոչ միայն չնպաստեցին Արևմտյան Հայաստանում ռեֆորմների իրականացմանը, գրում է նա, այլև, նրանց միջև եղած հակասությունների հետագա սրման հետևանքով, այդ հարցը գնալով ավելի խճճվեց և նորանոր դժբախտություններ բերեց հայ ժողովրդին։ Վ. Պարսամյանը քննադատում է Լեոյին, Բ. Բորյանին, որոնք մեղադրում են Ռուսաստանին և 16-րդ հոդվածը համարում «մեծագույն չարիք ու ոճիր»։ Իր ժամանակի պատմական պայմաններում, գրում է նա, երբ արյունարբու սուլթան Աբդուլ Համիդը ձգտում էր նույնիսկ աշխարհագրական քարտեզից ջնջել Հայաստան անունը, իսկ Թուրքիայի մեծ վեզիր Քյամիլ փաշան ցինիկաբար հայտարարում էր, թե «Պետք է ջարդել այն բոլոր ծնողները, որոնք կարտասանեն Հայաստան բառը», 16-րդ հոդվածը հայերի համար դրական երևույթ էր[2]։

Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը 1870—1880-ական թվականներին բազմակողմանի և խորազնին հետազոտվել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի երկհատոր արժեքավոր մենագրության մեջ[3]։ Հարկ է նշել, որ նրա մենագրությունը գրված է գիտական

[1] Парсамян В., История армянского народа (1801—1900 гг.), с. 280.

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 284։ (Ընդգծումը հեղինակինն է— Շ. Հ.)։

[3] Տե՛ս Ջ. Կիրակոսյան, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Եր. 1978, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), Եր., 1980։



բարձր մակարդակով, բազմաթիվ և բազմատեսակ սկզբնաղբյուրների և գրականության տվյալների հիման վրա, աչքի է ընկնում կուռ շարադրանքով։ Օգտագործված են նաև մեծ թվով օտարալեզու աղբյուրներ և գրականություն, որոնք լույս են սփռում պրոբլեմի լուսաբանման վրա։ Աշխատության արժանիքներից մեկն էլ քննադատական մոտեցումն է։

Մենագրության առաջին գրքում համառոտակի շոշափվում է Արևելյան հարցի պատմությունը, ցույց է տրվում, թե ինչպես տակավին 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին արևմտահայության փաստական ճակատագիրը աղերսվում էր միջազգային բարդ իրավիճակին, ընկղմվում արևմտյան տերությունների միջազգային հակամարտության մեջ։ Այնուհետև նա ներկայացնում է Հայկական հարցի առաջացման ու զարգացման պատմությունը, հանգամանորեն վերլուծում Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ և Բեռլինի պայմանագրի 61-րդ կետերի բովանդակությունը։ Առանձնապես լավ է լուսաբանվել դիվանագիտական այն մրցապայքարը, որ մղվում էր Սան Ստեֆանոյի հաշտությունից մինչև Բեռլինի կոնգրեսը։ Բացահայտվում է մեծ տերությունների, հատկապես՝ անգլիական, դիվանագիտությունը, որոնք ձգտում էին Ռուսաստանից խլել հաղթանակի պտուղները, առավելագույն օգուտ քաղել Օսմանյան կայսրության ժառանգությունից։

Լավ է շարադրված հայոց պատվիրակության հեղհեղուկ ու հակասական ծրագրերով, անփորձություններով լի գործունեությունը։ Ճիշտ է նկատել Ջ. Կիրակոսյանը, գրելով, որ դիվանագիտական պրակտիկան օտար էր հայկական պատվիրակության անդամներին։ «Պետականության բացակայությունը,— գրում է նա,— նշանակում է խարխափել անորոշության մեջ և լոկ հանդես գալ խնդրատուի, այլ ոչ թե պահանջողի, մաքառողի դերում։ Հզոր ազգային-ազատագրական շարժման զինված պայքարի, հավաքական ուժի, բռունցքի բացակայությունը ի չիք էին դարձնում եվրոպական տերությունների կողմից հայկական հարցադրումներին լրջորեն վերաբերվելու հնարավորությունը»[1]։

Անդրադառնալով Արևմտյան Հայաստանի համար եվրոպական դիվանագիտության օգնությամբ ակնկալվող բարեփոխությունների հարցին, նա գրում է, որ այդ բարեփոխությունները

[1] Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 276։

տարբեր ձևով էին ընկալվում տարբեր դասակարգերի ու խավերի կողմից։ Հայ բուրժուազիան, օրինակ, նոր հնարավորություններ էր տեսնում իր տնտեսական բարգավաճման, նոր շուկաների, իր շահերին համապատասխան նոր գյուղությունների համար։ Կ. Պոլսի հայ մտավորականներն ու պետական պաշտոնյաները մտածում էին իրենց ազդեցության ընդլայնման, պետական հիերարխիայում դիրք գրավելու, տիտղոսներ ստանալու մասին։ Աշխատավոր դասակարգերն էին, որ ազգային ու սոցիալական կապանքները թոթափելու, աղքատության ու թշվառության ճիրաններից ազատվելու երազներով էին մխիթարվում։ Կ. Պոլսի հայ փողատեր վերնախավը շափազանց զգայուն էր արևմտաեվրոպական դիվանագիտական գործողությունների նկատմամբ՝ սեփական շահը փնտրելու տեսակետից[1]։

Բացահայտելով Թուրքական պետության հակահայկական, հակառուսական քաղաքականությունը, նա միաժամանակ ցույց է տալիս Թուրքական կառավարության խորամանկ դիրքը հայկական պատվիրակությունը Բեռլին ուղարկելու հարցում. «Սա մի մաքիավելական մեթոդ էր, նենգ դիվանագիտություն»[2]։

Ինչպես շատ պատմաբաններ, Ջ. Կիրակոսյանը ևս ճիշտ է մատնանշում Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի խիստ բացասական դերը հայ ժողովրդի քաղաքական կյանքում։ Անդրադառնալով Բեռլինից հետո ստեղծված իրադրությանը, նա գրում է, որ այդ կոնգրեսից հայերը շոշափելի ոչինչ չստացան, փոխարենը շահելով Թուրքական իշխանությունների բացահայտ թշնամությունը։ Սուլթան Համիդը որոշակի հակահայկական քաղաքականություն որդեգրեց։ «Սկսվում է զուլումի շրջանը, որը տասնամյակների ընթացքում ուժասպառ արեց արևմտահայությանը»[3]։

Ջ. Կիրակոսյանի մենագրության երկրորդ գիրքն ընդգրկում է XIX դարի 80-ական թվականները, մի տասնամյակ, որը նա բնութագրում է որպես հույսի ու հուսախաբության, պայքարի ու նախապատրաստությունների ժամանակաշրջան։ Մի կողմից՝ սպասելիքներ դիվանագիտությունից, տերություններից, գրում է նա, մյուս կողմից՝ հուսախաբություն նրանցից, ատելություն

[1] Տե՛ս Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 208—209։

[2] Նույն տեղը, էջ 245։

[3] Նույն տեղը, էջ 320։



բուրժուական դիվանագիտության, աշխարհի հզորների բարքերի հանդեպ և ժողովրդի ազատագրության սեփական ուղիների որոնումներ, իր ուժերին կռթնելու զարգացումներ։ Այստեղ ևս բացահայտելով արևմտաեվրոպական դիվանագիտության գործողությունների հակաժողովրդական էությունը, միաժամանակ ցույց է տրվում եվրոպական դեմոկրատական շրջանների հումանիստական դիրքորոշումը։ «Պատմագիտության շահերը պահանջում են,— գրում է նա,— դասակարգային, կուսակցական դիրքերից տարբերություն դնել Հայկական հարցում իմպերիալիստների և եվրոպական, ռուսական առաջադեմ հասարակական, քաղաքական ուժերի խաղացած դերի միջև»[1]։

Աշխատության մեջ նկարագրված է Արևմտյան Հայաստանի 80-ական թվականների ծանր վիճակը։ Թուրքական կայսրության ներքին դրությունը դառնում է ազետալի, գրում է պատմաբանը, երկրի տնտեսական քայքայման հետ մեկտեղ ուժեղանում է տերությունների տնտեսական-ֆինանսական ներխուժումը, սկզբնավորվում է սուլթան Աբդուլ Համիդի հայահալած քաղաքականությունը։ Բարձր Դուռը արհեստականորեն հրահրում է քրդական վերնախավի հակահայկական մոլուցք։ Պոլսահայ վերնախավի մեջ առաջանում է պառակտում։ Օգտագործելով գլխավորապես ժամանակի մամուլի նյութերը, Ջ. Կիրակոսյանը հարուստ փաստերով շարադրել է Հայկական հարցը լուծելու վերաբերյալ հայ գործիչների կարծիքները։

Աշխատության մեջ հեղինակը ցույց է տվել միջազգային հարաբերությունների զարգացումը Բեռլինի կոնգրեսից հետո, մեծ տերություններից յուրաքանչյուրի քաղաքականությունը, ընդգծել միջազգային քաղաքականության մեջ Գերմանիայի դերի մեծացումը, Հայկական հարցի արծարծումը մեծ տերությունների, հատկապես Անգլիայի և Ռուսաստանի կառավարությունների կողմից։

Հայկական հարցը և եվրոպական դիվանագիտությունը 1890-ական թվականներին քննվում է Ջ. Կիրակոսյանի մի այլ աշխատության մեջ, որը նվիրված է երիտթուրքերի քաղաքականու-

[1] Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 347։

թյան քննադատությանը[1]։ Այստեղ ևս ցույց է տրված եվրոպական դիվանագիտության երկդիմի վարքագիծը Հայկական հարցում, որը փորձում էր օգտագործել այն իր սեփական շահերի, սուլթանի վրա ճնշում գործադրելու, նրա պետության վրա իր ազդեցությունը տարածելու, տնտեսական ու քաղաքական օգուտներ քաղելու համար։

Արևելյան հարցի գոյության ամբողջ ընթացքում մեծ է եղել Ռուսաստանի արտաքին քաղաքականության դերը։ Աշխատության մեջ բացահայտվում է ցարական կառավարության դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ։ Հակառակ նրա վարած հետադիմական քաղաքականությանը, ռուս առաջադեմ հասարակական ուժերը մեծագույն համակրանքով էին վերաբերվում հայ տառապյալ ժողովրդին, արևմտահայության ազատագրմանը։ Ջ. Կիրակոսյանի կարծիքով, XIX դարի 90-ական թվականներին, թուրքական բռնակալության դեմ հայոց ազատագրական մաքառումների ժամանակ, եվրոպական դիվանագիտության սարքած խաղերի մեջ ամենաակտիվ դերը պատկանում էր Լոնդոնին[2]։ Բայց, միևնույն ժամանակ, սուլթանի գլխավոր հենարանը և օժանդակողը կայզերական Գերմանիան էր։ Սուլթանին աջակցողների թվում էին նաև Ֆրանսիան ու ԱՄՆ-ը։ Վերջինիս կառավարությունը հայոց ողբերգության պահին, ինչպես գրում է Ջ. Կիրակոսյանը, պլատոնական դիրք էր գրավել։ Այսպիսով, գրում է նա, պլատոնական Արևմուտքը միայն ոգեշնչեց մեծ մարդասպանին, ոչնչով չկանխելով հայոց ողբերգությունը։

Հայկական հարցի, օսմանյան բռնակալության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի նկատմամբ արևմտյան մեծ տերությունների նենգ քաղաքականությունը համոզիչ փաստերով քննադատում է պատմական գիտությունների դոկտոր Հ. Վարդանյանը։

Նրա մենագրության մեջ լայն տեղ է տրված նաև ցարիզմի քաղաքականության մերկացմանը։ «Արևմտահայ ժողովրդի ծանր ողբերգության խոշոր մեղավորներից էր նաև ցարիզմը,— գրում է նա։— Ցարական ռազմաֆեոդալական բյուրոկրատիան,

[1] Տե՛ս Ջ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Եր., 1982։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 76։



հակառակ ռուս ժողովրդի ու նրա առաջավոր խավերի կամքի, վարում էր հակահայկական քաղաքականություն»[1]։

Աշխատության մեջ դիտողություն կա Լենոյի այն տեսակետի առթիվ, ըստ որի Հայկական հարցի պատմությունը հայ ազգի պատմությունն է սկզբից մինչև մեր օրերը[2]։ Այդտեղից էլ Հ. Վարդանյանի եզրակացությունը. «Հետևապես ճիշտ չեն նրանք, ովքեր հայերի ազատագրական շարժումները շփոթում են Հայկական հարցի հետ»[3]։

Տեղին է ասել, որ, իրոք, այդ սխալը բավականին տարածված է խորհրդահայ պատմական գրականության մեջ։ Օրինակ, Ե. Սարգսյանը, «Օսմանյան կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և պետությունները XIX դարի վերջին քառորդին և XX դարի սկզբին» մենագրության մեջ պատշաճ տեղ հատկացնելով հայ ազատագրական շարժումներին և Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների քաղաքականությանը, գտնում է, որ սուլթանական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարը «հենց Հայկական հարցի բովանդակությունն է եղել»[4] և կամ թե՝ «հենց դա Հայկական հարցն է»[5]։

Մեր կարծիքով, չի կարելի շփոթել «Հայկական հարց» և «հայ ազգային-ազատագրական շարժումներ» կամ «հայերի ազգային-ազատագրական պայքար» հասկացությունները։ Հայտնի է, որ այն ձևակերպվել է, նախ, Սան Ստեֆանոյում, ապա մեծ տերությունների դիվանագիտական բարձրագույն ոլորտում՝ Բեռլինի կոնգրեսում, ուստի այն երբեք չի կարելի նույնացնել հայ ազատագրական շարժումների հետ։

Եթե ընդունենք, որ Հայկական հարցը հայ ժողովրդի ազատագրության հարցն էր, ապա համապատասխանաբար պետք է

[1] Հ. Վարդանյան, Արևմտահայերի ազատագրության հարցը և հասարակական-քաղաքական հոսանքները XIX դարի վերջին քառորդում, Եր., 1967, էջ 245։

[2] Տե՛ս Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս 1915, էջ 1։ Հայտնի է, որ Լեոն Հայկական հարցի առաջացման ժամանակի վերաբերյալ ունեցել է տարբեր կարծիքներ։ Նա մի դեպքում գրում է, թե «Հայոց հարցն ունի 25 դարի պատմություն», և որ «Հայկական հարցը այնքան հին է, որքան հին է հայ ազգը», մի ուրիշ տեղ՝ «Հայոց հարցը առաջացել է 1862 թվականին Զեյթունի ապստամբության ժամանակ», իսկ մի այլ տեղ՝ «Հայոց հարցը ծնվել է կես դար առաջ, այսինքն՝ 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ»։

[3] Հ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 14։

[4] Տե՛ս Саркисян Е., Политика османского правительства.., էջ 5։

[5] Տե՛ս նույն տեղը, էջ 6։

ընդունենք, որ Արևելյան հարցն էլ Արևելքի ժողովուրդների ազատագրության հարցն է եղել։ Մինչդեռ հայտնի է, որ Արևելյան հարց տերմինը, որն առաջին անգամ օգտագործվել է 1822 թ. Սրբազան դաշինքի Վերոնայի կոնգրեսում, դիվանագիտության մեջ հասկացվում էր Օսմանյան կայսրության բաժանման համար մեծ տերությունների միջև ծավալված պայքարի հարց։

Ե. Սարգսյանը տեղին է քննադատում այն թուրք պետական գործիչներին ու պատմաբաններին, ովքեր պնդել ու պնդում են, թե, իբր, թուրքական լծի դեմ արևմտահայերի մղած ազգային-ազատագրական շարժումները տեղի են ունեցել Լոնդոնի անգլո-հայկական ընկերության և հնչակյան ու դաշնակցական կուսակցությունների ագիտացիայի շնորհիվ, արհեստականորեն, առանց հիմնավոր պատճառների։ Կասկած լինել չի կարող՝ այդ շարժումները արհեստականորեն չէին հրահրվում, դրանք Օսմանյան կայսրության կառավարող վերնախավերի քաղաքականության՝ Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում իրականացվող հայերի ազգային և սոցիալական անտանելի կեղեքման, տնտեսական քայքայման, բռնի ձուլման ու ֆիզիկական ոչնչացման, հետևանք էին։ Ճիշտ է նրա այն միտքը, թե Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի բնակչությունը, չհաշտվելով թուրքական ֆեոդալաբռնապետական վարչակարգին, մշտապես պայքար էր մղում իր ազգային ազատագրման համար։ Սակայն չենք կարող համաձայնվել նրա այն դրույթին, թե «դրանով հերքվում է պատմական գրականության մեջ գոյություն ունեցող այն կարծիքը, որը ժխտում է արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարը, այսինքն՝ Հայկական հարցի օրինաչափությունները»[1]։

Անհամոզիչ է Ե. Սարգսյանի այն միտքը, թե ովքեր գտնում են, որ Հայկական հարցը միջազգային դիվանագիտության հարց է և առաջ է քաշվել մեծ տերությունների կողմից, ապա նրանք դրանով ժխտում են արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումները։

Կրկնում ենք, չի կարելի «հայ ազատագրական շարժում» հասկացությունը նույնացնել «Հայկական հարցի» հետ։ Որքան մեզ հայտնի է, չկա մի պատմաբան, որը ժխտեր հայերի ազատագրական շարժման գոյությունը։ Այլ բան է ասել, որ Հայկական հարցը, որպես միջազգային դիվանագիտության հարց՝ ծա-

[1] Саркисян Е., նշվ. աշխ., էջ 6։



գել է ոչ առանց հիմքի, և որ այն չէր լինի, եթե չլիներ նաև հայերի ազատագրական պայքարը։ Անտարակույս, դրանք իրարից անջատել չի կարելի, բայց նույնացնել, նույնպես չի կարելի։

«Հայկական հարց» և «արևմտահայության ազատագրման հարց» հասկացությունները նույնացված են նաև Մ. Արզումանյանի առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի պատմությանը նվիրված աշխատության մեջ։ Նա հենց այդպես էլ գրում է. «Հայկական հարցը ըստ էության արևմտահայության ազատագրման հարցն էր»[1]։

«Հայկական խորհրդային հանրագիտարանի» VI հատորում զետեղված «Հայկական հարց» հոդվածում Ջ. Կիրակոսյանը ևս գրում է, որ Հայկական հարցը «թուրքական լծից արևմտահայության ազատագրման, հայ ժողովրդի ինքնորոշման ու սեփական պետականությունն ստեղծելու համար մղված պայքարի անվանումն է դիվանագիտության պատմության մեջ» (էջ 185)։

Հայկական հարցի էությունը ճիշտ չի բնութագրված նաև Կ. Թառոյանի մենագրության մեջ։ «Հայկական հարցը,— գրում է նա,— իր բուն էությամբ արտահայտում էր արևմտահայության աշխատավոր մասսայի դարավոր ձգտումները՝ վերջ դնել օսմանյան սուլթանների, թուրք աղաների ամեն տեսակ բռնություններին, ձեռք բերել տնտեսական ու քաղաքական ազատություն, պաշտպանել և ապահովել արևմտահայ աշխատավորների մարդկային արժանապատվությունը, նորմալ պայմաններ ստեղծել նրանց հետագա զարգացման համար»[2]։ Այստեղ նույնպես բացարձակորեն շփոթված են «Հայկական հարց» և «հայ ազատագրական շարժումներ» հասկացությունները։

Նույնը կարելի է ասել թուրքագետ-բանասեր Մ. Քոչարի վերաբերյալ։ «Այդ ժամանակաշրջանում,— գրում է նա,— հայ-թուրքական հարաբերությունների հիմքում ընկած կենտրոն պրոբլեմը Արևմտյան Հայաստանի ազատագրման հարցն էր, որը միջազգային հարաբերությունների ոլորտում մտել է «Հայկական հարց» անունով»[3]։ Մի այլ տեղ նա գրում է. «Հայկական հարցի

[1] Մ. Արզումանյան, Հայաստան, 1914—1917 թթ., Եր., 1969, էջ 657։

[2] Կ. Թառոյան, Արևմտահայերի ազատագրական պայքարը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, Եր., 1980, էջ 71։

[3] Кочар М., Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос в конце XIX—начале XX веков, Е., 1988, с. 3.

էությունը հայկական պետականության վերականգնումն էր պատմական Հայաստանի տարածքում»[1]։ Ո՞չ։ Հայկական հարցը ո՞չ Արևմտյան Հայաստանի ազատագրման և ո՞չ էլ հայկական պետականության վերականգնման հարցն էր։ Հայկական հարցը, ինչպես ասացինք, մեծ տերությունների կողմից միջազգային դիվանագիտության մեջ առաջ քաշված այն հարցն էր, որը վերաբերում էր Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ կատարելուն։ Հենց այդ էլ Սան Ստեֆանոյի 16-րդ և Բեռլինի 61-րդ կետերի բովանդակությունն էր կազմում։ Մի՞թե պարզ չէ, որ դիվանագիտական այդ բարձրագույն ատյանում ոչ մեկի մտքով չէր անցնում վերականգնել հայկական պետականությունը պատմական Հայաստանի տարածքում կամ Արևմտյան Հայաստանի ազատագրումը, ինչպես գրում է Մ. Քոչարը։ Այլ բան է, որ այդ բարդ, խճճված հարցը զարգացման տարբեր փուլեր ունենալով, տարբեր ձև ու բովանդակություն ունեցավ։

Վերջին տարիներին Հայկական հարցի ծագման ժամանակի մասին խորհրդահայ պատմագրության մեջ առաջ քաշվեց նոր տեսակետ։ Ինչպես հայտնի է, ըստ պատմագրության մեջ ընդունված տեսակետի Հայկական հարցը ծագել է 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, և իր արտահայտությունը գտել Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերում։ Գ. Գալոյանը գտնում է, որ այն ծագել է 1555 թ.՝ Թուրքիայի և Պարսկաստանի միջև կնքված Ամասիայի պայմանագրով։ «Այդ օրերից իսկ Հայկական հարցը դարձավ արևմտյան խոշոր տերությունների դիվանագիտական մեքենայությունների առարկա»,— գրում է նա[2]։

Նույն կարծիքին է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Խուրշուդյանը։ Գ. Գալոյանի ներքոհիշյալ աշխատության վերաբերյալ իր գրախոսական հոդվածում նա գրում է. «Այսպիսով, Գ. Գալոյանը հերքում է այն տիրապետող կարծիքը, որի համաձայն Հայկական հարցը սկիզբ է առել 1877—1878 թթ. պատերազմով և վերաբերվում է միայն Արևմտյան Հայաստանին»[3]։

Հայտնի և նորահայտ վավերագրերի հիման վրա Ս. Մարկոսյանի աշխատության մեջ բացահայտված է մեծ տերությունների նենգ քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ։ Այդտեղ նա հանգամանորեն վերլուծում է նաև Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ և Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածները և կատարում մի շարք արժեքավոր դիտողություններ։ Ճիշտ է նրա դիտողությունը բելգիացի ճանաչված իրավագետ Ռոլեն-Ժեկմենի այն տեսակետի մասին, ըստ որի Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը «Սան Ստեֆանոյի տրակտատի նույն 16-րդ հոդվածն է, միայն ավելի ծավալուն և ճշգրիտ որոշված»։ Առարկելով այդ սխալ մեկնաբանության դեմ, Ս. Մարկոսյանը իրավացիորեն գրում է, որ «Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածի բովանդակությունը Սան Ստեֆանոյի տրակտատի 16-րդ հոդվածի ոչ միայն «ավելի ծավալուն և ավելի ճշգրիտ» տարբերակը չէր, այլ նրա խեղաթյուրումն էր ի վնաս հայ ժողովրդի։ Անգլիական դիվանագիտությունը Կիպրոսի վերաբերյալ կոնվենցիայով իր վրա վերցրած պարտականությամբ փրկեց իր հովանավորյալ Թուրքիային»[1]։

Հեղինակը ցույց է տալիս, որ Արևելքում ցարական Ռուսաստանի և Անգլիայի միջև օրըստօրե ուժեղացող հակասություններն ու համառ պայքարը նպաստում էին Թուրքական կառավարության հայահալած և հայաջինջ քաղաքականության իրականացմանը։ Տեսնելով, որ Հայկական բարձրավանդակը Անգլիայի համար դառնում է Ռուսաստանի դեմ գործելու ստրատեգիական կետ, ցարիզմը 1890-ական թվականներին ձգտում էր Հայկական հարցը թողնել որպես սոսկ Թուրքիայի ներքին հարց, առանց Անգլիայի կամ որևէ այլ պետության հովանավորության։ «Դրժբախտությունն այն էր,— գրում է նա,— որ հայերին հովանավորելու պատրվակով հանդես էին եկել տարամերժ շահերով երկու ոխերիմ ախոյան»[2]։

Բացահայտելով Հայկական հարցի լուծման նկատմամբ ցարական դիվանագիտության դիրքորոշումը, Ս. Մարկոսյանն ուշագրավ տվյալներ է բերում ռուս առաջադեմ մտածողների կարծիքներից, մարդիկ, որոնք ժամանակին դատապարտել են այդ քաղաքականությունը։

Ի դեպ, խորհրդահայ որոշ պատմաբաններ սխալմամբ

---

[1] Кочар М., ն.վ. աշխ., էջ 17։

[2] Գ. Գալոյան, Պատմության բառուղիներում, էջ 76։

[3] «Գրական թերթ», 30 սեպտեմբերի 1983 թ.։

[1] Ս. Մարկոսյան, Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին, էջ 289։

[2] Նույն տեղը, էջ 313։

մասնավորապես ԳԴՀ-ի արխիվներից հանված մի շարք կարևոր վավերագրերով։

Արևմտյան Հայաստանում անգլիական իմպերիալիզմի քաղաքականության բացահայտմանն է նվիրված պատմական գիտությունների թեկնածու Լ. Բայրամյանի մենագրությունը[1]։ Հանգամանորեն վերլուծելով անգլիական իմպերիալիզմի տնտեսական և ռազմաստրատեգիական շահերը Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում, հեղինակը ցույց է տվել, որ անգլիական կառավարությունը, չնայած նրա ղեկավարների ու դիվանագետների երկդիմի ու շողոքորթ հայտարարություններին, ամեն կերպ ձգտում էր հայ ժողովրդին պահել Օսմանյան կայսրության կազմում։ Աշխատության զգալի մասը նվիրված է Հայկական հարցի նկատմամբ Անգլիայի դիրքորոշմանը, այն դիտվում է որպես «ռեակցիոն ու թշնամական»[1]։

## 5. Հասարակական-քաղաքական պայքարը, ազգային-ազատագրական շարժումները 1870—1890-ական թվականներին։ Քաղաքական կուսակցությունների ձևավորումը

Խորհրդահայ պատմաբանները վերջին երկուս ու կես տասնամյակում զգալի աշխատանք են կատարել XIX դարի 70—90-ական թվականների ազգային-ազատագրական շարժումների, հասարակական հոսանքների և քաղաքական կուսակցությունների ձևավորման պատմության գիտական հետազոտության ուղղությամբ։

Ինչպես հայտնի է, երկար ժամանակ խորհրդահայ պատմագրության և գրականագիտության մեջ թույլ տրված կոպիտ սխալներից մեկն էլ արտահայտվել է XIX դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման, հատկապես այդ շարժման գաղափարախոսներ Րաֆֆու, Ռ. Պատկանյանի, Գր. Արծրունու և մյուսների գնահատման հարցում։ Օրինակ, Մ. Ներսիսյանը 1953 թ. հունվարի 13-ին հանդես գալով «Խորհրդային Հայաստան» թերթում, ինքնաքննադատաբար նշում է, որ իր աշխատություններում հայ ազգային-ազատագրական շարժումը մեկնաբանել է որպես ժողովրդադեմոկրատական շարժում։ «Փոխանակ վճռաբար ու հետևողականորեն մերկացնելու և ցույց տալու Պատկանյանի և Րաֆֆու բուրժուական նացիոնալիզմի ռեակցիոն էությունը,— գրում է նա,— ես նրանց պատկերել եմ որպես պրոգրեսիվ դեմոկրատներ։ Ես սխալ գնահատական եմ տվել նաև մի շարք բուրժուանացիոնալիստական խմբակներին և նրանց գործիչներին»*։

1950-ական թվականների կեսերից շտկվեցին թույլ տրված այդ սխալները։ Րաֆֆու վեպերն ու պատմվածքները, գրում է Վ. Պարսամյանը, ծառայել են հայ ժողովրդի, առաջին հերթին թուրքական բռնապետության դաժան լծի տակ հեծող արևմտահայերի ազատագրմանը։ «Լինելով ջերմ հայրենասեր և ազգային-դեմոկրատական հայացքների տեր, Րաֆֆին իր գրվածքներում, ինչպես և հրապարակախոսական հոդվածներում, խիստ քննադատում է պարսկական ու թուրքական հետամնաց ֆեոդալական կարգերը, եվրոպական մեծ տերությունների գաղութային քաղաքականությունը»[1]։ Նույն բարձր գնահատականն է տրվում նաև Ռ. Պատկանյանին. «Ռ. Պատկանյանը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ամենանշանավոր գաղափարախոսներից էր, նրա ազատասիրական ու հայրենասիրական պոեզիան այդ պայքարի ծնունդն էր»[2]։ Նման ճիշտ գնահատականներ են տվել նաև խորհրդահայ մյուս պատմաբաններն ու գրականագետները։

Արդ փորձենք ցույց տալ, թե խորհրդահայ պատմագրության մեջ ինչպես են լուսաբանվել վերոհիշյալ հարցերը վերջին քառորդ դարում։ Նախ՝ հայ ազատագրական խմբակների մասին։

Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների ֆոնի

---

[1] Տե՛ս Լ. Բայրամյան, Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում XIX դարի վերջին քառորդում, Եր., 1982։

[2] Նույն տեղը, էջ 124։



* Ի դեպ, այդ նույն նամակում Մ. Ներսիսյանը գրում է նաև հետևյալը. «Հանդես գալով «Ազգային ազատագրական շարժումը և հասարակական-քաղաքական հոսանքները Հայաստանում XIX դարի երկրորդ կեսին» զեկուցմամբ, ես լիակատար հնարավորություն ունեի վճռաբար ընդունելու իմ սխալները։ Սակայն ես այդ չեմ արել։ Իմ զեկուցումը ինքնաքննադատական չէր։ Միաժամանակ ես խիստ և ծավալուն քննադատության չենթարկեցի Լեոյի, Աշոտ Հովհաննիսյանի և ուրիշ պատմաբանների ու գրականագետների հակագիտական, բուրժուական-նացիոնալիստական կոնցեպցիաները, մարդիկ, որոնք կոպիտ սխալներ են թույլ տվել հայ ժողովրդի և հայ գրականության պատմության հարցերում»։

[1] Парсамян В., История армянского народа (1801—1900 гг.), с. 362.

[2] Նույն տեղը, էջ 360 (Ընդգծումը հեղինակինն է—Շ. Հ.)։

վրա հայ ազատագրական խմբակների, առանձնապես Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության, գործունեության լուսաբանությանն է նվիրված Ռ. Հովհաննիսյանի մենագրությունը[1]։ Հեղինակը իրավամբ այդ կազմակերպությունը համարում է 70—80-ական թվականների արևմտահայ ազատագրական շարժումների վերընթացի փառապսակը։ «Պաշտպան հայրենյացի»՝ որպես արևմտահայ ազգային-ազատագրական շարժման քիչ թե շատ համասփյուռ կազմակերպության գործունեությունը, գրում է նա, նշանակալի երևույթ էր հայ իրականության մեջ և նոր ճանապարհ էր հարթում արևմտահայ ժողովրդի գալիք հերոսամարտերի համար[2]։

Ռ. Հովհաննիսյանը գտնում է, որ այդ կազմակերպության շարժիչ ուժը քաղաքի արհեստավորական դասն էր և շրջակա գյուղացիությունը։ «Այն գալիս է նորից հաստատելու,— գրում է նա,— որ Արևմտյան Հայաստանի ազատագրմամբ առաջին հերթին շահագրգռված էր կրկնակի ճնշման տակ գտնվող հայ աշխատավոր դասակարգը, քանզի ազատագրված ու անկախ հայրենիքից հույժ առաջնահերթ ու անհրաժեշտ սպասելիքներ նա ուներ»[3]։

Հանգամանորեն շարադրելով այդ կազմակերպության գործունեությունը, նա թյուրիմացության արդյունք է համարում «Նորքի» 1926 թ. № 2-ում «Պաշտպան հայրենյացի» անդամների մասին Արտ. Կարինյանի ոչ ճիշտ գնահատականը, այսինքն՝ իբր նրանք բացառապես «քաղաքացիք» էին՝ «արհեստավորներ» և «վաճառականներ», իսկ քիչ ավելի ներքև կազմակերպությունը համարում է «մի խումբ վաճառականների պատահական ձեռնարկություն»[4]։ Ռ. Հովհաննիսյանը սխալ է համարում այն կարծիքը, թե, իբր, կազմակերպությունը ղեկավարվել է Թիֆլիսից՝ Բ. Նավասարդյանի միջոցով (Լեո), կամ 1878—1880-ական թվականների արևմտահայ շարժումները կազմակերպել է Բ. Նավասարդյանը (Կ. Նշկյան)։ Հեղինակը սխալ է համարում նաև մյուս ծայրահեղ կարծիքը, ըստ որի զուտ պատահական է եղել

1 Տե՛ս Ռ. Հովհաննիսյան. Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (XIX դարի 70—80-ական թթ.)։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 330։

3 Նույն տեղը, էջ 307—308։

4 Տե՛ս նույն տեղը, էջ 307։



կազմակերպության և Թիֆլիսի գործիչների կապը (Ա. Գյուլխանդանյան)[1]։

Հայ ազգային-ազատագրական խմբակների ու կազմակերպությունների գործունեությունը Ռ. Հովհաննիսյանը լուսաբանում է նաև «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի VI հատորում։ Այստեղ նա, նախ և առաջ, կանգ է առնում Վանի «Միություն ի փրկություն» գաղտնի ընկերության գործունեության վրա։ Նշելով արևմտահայ իրականության մեջ ստեղծված մի քանի այլ ընկերությունների մասին, հեղինակը անդրադառնում է նաև Արևելյան Հայաստանում ստեղծված ընկերություններին։ Նրա կարծիքով, թեև սոցիալական խայտաբղետ կազմ ունեցող այդ խմբակների անդամների միջև քաղաքական ու գաղափարական միասնություն չկար, բայց նրանց ընդհանուր նպատակը մեկն էր՝ ազատագրված տեսնել իրենց հայրենիքը։

Ռ. Հովհաննիսյանն ավելի լայնորեն բացահայտել է 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հայ իրականության մեջ ստեղծված մի շարք ազատագրական ու հայրենասիրական խմբակների ու կազմակերպությունների գործունեությունը։ Դրանց շարքում իր ուրույն տեղն ունի Կարինի «Պաշտպան հայրենյացը»։

«Հայ ժողովրդի պատմության» VI հատորում մի ամբողջ գլուխ նվիրված է 1890-ական թվականների ազգային-ազատագրական շարժումների պատմությանը։ Այս բաժնի հեղինակներն են Ռ. Հովհաննիսյանը և Ծ. Աղայանը։ Այստեղ նկարագրված են թուրքական կառավարության հայահալած քաղաքականությունը, նրա կազմակերպած հայկական ջարդերը։ Այդ բոլորի դեմ ոտքի է կանգնում արևմտահայությունը, ծավալվում են ժողովրդական շարժումները։ Թուրքական կառավարության հայահալած քաղաքականության դեմ ուղղված ժողովրդական հուզումները լայն թափ ստացան հատկապես Սասունում և Զեյթունում։ Հատորում լայն տեղ է տրված Սասունի 1894 թ. հերոսամարտին, Զեյթունի 1895 թ. ապստամբությանը, Վանի 1896 թ. ինքնապաշտպանությանը։ Նկարագրելով 1890-ական, հատկապես 1895 թ. աշնանը սկսված զանգվածային ջարդերը, հեղինակներն իրավացիորեն քննադատում են մեծ տերություններին, որոնք, ղեկավարվելով սոսկ իրենց շահադիտական նպատակներով, գործնական քայլեր չարեցին կասեցնելու հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը։

1 Տե՛ս Ռ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 299։

Ազատագրական խմբակների ու կազմակերպությունների գործունեությունը լուսաբանել է նաև Վ. Պարսամյանը։ Նախ տրվում է Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի՝ Արևելյան Հայաստանի առաջին ազատագրական խմբակների գործունեության վերլուծությունը։ Նրա կարծիքով, արևելահայ ազատագրական խմբակներն ազգային-դեմոկրատական, հայրենասիրական բնույթ ունեին։ Նրանց նպատակն էր համախմբել դեմոկրատական տարրերին, պայքարել ցարիզմի ու սուլթանիզմի դեմ Հայաստանի ազատության ու անկախության համար։ Հարկ է նշել, որ վերոհիշյալ խմբակների գործունեությունը խորհրդահայ պատմագրության մեջ առաջինն ուսումնասիրել և առանձին գրքով հրատարակել է Վ. Պարսամյանը դեռևս 1936-ին։

1972 թ. հրատարակված մենագրության մեջ շարադրվում է Վանի, Կարինի, Մոսկվայի, Թիֆլիսի ազատագրական խմբակների գործունեության պատմությունը։ Առանձնապես բարձր է գնահատվում Կարինի «Պաշտպան հայրենյաց» գաղտնի ընկերությունը, որը բնութագրվում է որպես Կարինի հայ աշխատավորության առաջին հայրենասիրական, ազատագրական կազմակերպություն։ Վ. Պարսամյանը գտնում է, որ ընկերության հետ կապված մի շարք հարցեր ուսումնասիրման և ճշգրտման կարիք ունեն։ Օրինակ, նա անհավանական է համարում այն կարծիքը, թե այդ ընկերության անդամների թիվը հասել է շուրջ 5 հազարի։

Բարձր գնահատելով Թիֆլիսի հայրենասիրական խմբակի գործունեությունը, վերլուծելով նրանց հակացարական հայտնի թռուցիկի բովանդակությունը, պատմաբանը միաժամանակ նշում է, որ այդ թռուցիկը զերծ չէր առանձին սխալներից, կղերական և ազգայնական մտայնությունից։ Գրքում ցույց է տրված, թե ազգային-դեմոկրատական, հայրենասիրական խմբակի քայքայումից հետո ինչ ուղղությամբ ընթացան նրա անդամները։ Գերազանցապես Հայկական հարցով տոգորված մարդիկ (Քր. Միքայելյան և ուրիշներ), գրում է Պարսամյանը, մի քանի տարի անց հիմնադրում են դաշնակցություն կուսակցությունը, իսկ Գ. Ղարաջյանը և ուրիշներ, Հայկական հարցը համարելով գրեթե իրենց՝ արևմտահայերի ազատագրման գործ, ընտրում են քաղաքական գործունեության նոր ուղի, հարում սոցիալիստական, մարքսիստական ուղղությանը[1]։

[1] Տե՛ս Парсамян В., История армянского народа, էջ 214։



XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժումների բնույթի և հարակից հարցերի մասին շատ է գրվել։ Վերջին քսանհինգամյակի ընթացքում այդ կարևոր պրոբլեմը շարունակում էր մնալ խորհրդահայ պատմաբանների ուշադրության կենտրոնում։ Այդ հարցը շոշափվում է Ռ. Հովհաննիսյանի 1965-ին հրատարակված աշխատության մեջ։ Ճիշտ է նրա այն դրույթը, թե թուրքական բռնապետության դեմ խմորվող հայ ազատագրական շարժումները XIX դարի 60—70-ական թվականներից սկսած դառնում են ոչ միայն արևմտահայ, այլև արևելահայ հատվածի սեփական գործը. ըստ որում, իրավացիորեն ավելացնում է Ռ. Հովհաննիսյանը, ազատամարտի ելած հայ ժողովրդի նպատակը ոչ թե այս կամ այն պետությանը միանալու ցանկությունն էր, այլ ազատ ու անկախ հայրենիք վերստեղծելու իր դարավոր բաղձանքի իրականացումը[1]։

Անդրադառնալով արևմտահայերի ազատագրական, ժողովրդական շարժումների բնույթին, նա գտնում է, որ այն ըստ էության գյուղացիական, բուրժուադեմոկրատական հեղափոխություն էր, որի գլխավոր շարժիչ ուժը արևմտահայ գյուղացիությունն էր ու քաղաքի արհեստավոր դասը։ Շարժմանը փարվել էր հայ ազգային բուրժուազիան, ինչպես նաև առաջադեմ մտավորականությունը։ Սակայն, գրում է հեղինակը, չլինելով ազատագրական շարժման հիմնական շարժիչ ուժը, հայ բուրժուազիան փորձում էր իր ձեռքում պահել պայքարի մարտական ու գաղափարական դրոշը, հավակնում էր ազգային միասնության ձգտող հայ ժողովրդի առաջնորդը դառնալ։

Մեջբերելով կապիտալիզմի վերելքի ժամանակաշրջանում բուրժուազիայի առաջադիմականության և հեղափոխականության մասին լենինյան դրույթը, Ռ. Հովհաննիսյանը սխալմամբ գտնում է, որ ազգային կերպարանքը գրեթե կորցրած բուրժուազիան, չնչին բացառությամբ, սուլթանական ու ցարական կարգերի մեջ էր տեսնում իր գոյության հենարանը։ Չընդունելով ամեն մի հեղափոխական-դեմոկրատական շարժում, նրանք հիմնականում ընդդիմադիր էին նաև հայ ազգային-ազատագրական պայքարին[2]։ Չնայած դրան, գրում է նա, ինչպես հարստահարվող մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի ազգային

[1] Տե՛ս Ռ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 86։
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 8։

շարժումն առաջադիմական էր ոչ միայն նախաիմպերիալիստական, այլև իմպերիալիզմի ժամանակաշրջանում[1]։

Աշխատության մեջ նոր փաստերով հաստատվում է այն միտքը, որ արևմտահայ ազատագրական շարժումը հայաստանհարվող ժողովրդի ինքնաբուխ բողոքի անմիջական արդյունքն էր և խմորվել ու ծնունդ էր առել գավառահայ աշխատավորության տառապանքներից։ «Հայ ազատագրական շարժումները,— գրում է նա,— լինելով միավորման ձգտող հայ ժողովրդի սոցիալական ու քաղաքական զարգացման արդյունք, միաժամանակ ոչ թե պատճառ, այլ հետևանք էին այն դարավոր բացարձակ կեղեքումների, որոնք զանգվածորեն ու արդեն այլ ձևերով՝ միաձուլման ու ջարդի մեթոդներով, դրսևորվեցին հատկապես Թուրքական բուրժուազիայի աշխուժացման շրջանում՝ XIX դարի 70-ական թվականներին, և առավել սուր կերպարանք ստացան Բեռլինի կոնգրեսից հետո»[2]։

Աշխատության մեջ Ռ. Հովհաննիսյանը քննադատում է ինչպես նախախորհրդային, այնպես էլ խորհրդահայ հեղինակների աշխատություններում հայ ազատագրական շարժման գնահատման հարցում տեղ գտած սխալ մեկնաբանությունները (Սարուխան, Ե. Գեղամյան, Լեո, Արտ. Կարինյան, Ա. Ոսկերչյան և ուրիշներ)։ Առանձնապես մատնանշում է արևմտահայ ազատագրական շարժումը դրսից հրահրելու սխալ տեսակետը (Լեո, Արտ. Կարինյան)։

Աշխատության մեջ շարադրված է նաև 1870—80-ական թվականների հայ ազատագրական շարժումների պատմությունը։ Այստեղ հեղինակը շոշափում է Թուրքական լծի տակ հեծող ժողովուրդների համագործակցության խնդիրը։ Փաստեր են բերվում հայ գործիչների այն փորձերի մասին, որոնց նպատակն է եղել ստեղծելու հայ-քուրդ-ասորի դաշնակցություն, որը, սակայն, արդյունք չի տվել։ Թուրքական կառավարությունը քրդական շարժումներն ուղղում էր հայ ժողովրդի դեմ։ Հեղինակը նշում է, որ, ցավոք, գործնական քայլեր չկատարվեցին միասնական պայքարի մեջ ընդգրկելու նաև արաբներին և Փոքր Ասիա աքսորված բուլղար հեղափոխականներին։ «Պայքարի իրենց դեգերումներում, ժամանակի հայ գործիչները,— գրում է նա,— թեպետ նշմարեցին, բայց չկարողացան հասնել հարբստահարվող մյուս ժողովուրդների հետ համընդհանուր ճակատ կազմելուն։ Ուստի արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը մեկուսացած մնաց դրացի քուրդ, ասորի, հույն, արաբ ժողովուրդների ազատագրական պայքարից և նրանց հետ միասին էլ չկարողացավ դուրս գալ ազատագրական շարժման մայրուղի»[1]։

Հիմնականում նույն բովանդակությունն ունի «Հայ ժողովրդի պատմության» VI հատորում Ռ. Հովհաննիսյանի գրած բաժինը, որը վերաբերում է 1870—1880-ական թվականների ազգային-ազատագրական շարժումների պատմությանը։ Այստեղ քննվում են հետևյալ հարցերը. ազգային ճնշումներն ու հալածանքները և ազատագրական շարժումները 70-ական թվականներին, ազգային-ազատագրական շարժումների վերելքը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, ազատագրական, հայրենասիրական խմբակներն ու կազմակերպությունները, Թուրքական լծի տակ հեծող ժողովուրդների համագործակցության խնդիրը և, վերջապես, ազգային-ազատագրական շարժումների հարցը հայ հասարակական մտքի գնահատմամբ։

Սակայն հատորում բավականաչափ պարզ չի տրված Թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական շարժման բնույթը։ Այնտեղ ճիշտ է ասված, որ հայ ժողովրդի ազատագրական պայքարը, ազգային-ազատագրական բնույթով հանդերձ, ուներ և դասակարգային բովանդակություն, որպիսով որ իր սուր ծայրով ուղղված էր ոչ միայն քաղաքական, այլև սոցիալական անարդարությունների դեմ։ Այնուհետև ասված է, թե այն ըստ էության գյուղացիական, բուրժուադեմոկրատական շարժում էր, և որ նրա գլխավոր ու առաջատար ուժը արևմտահայ գյուղացիությունն էր[2]։ Այդ բոլորը ճիշտ է, բայց ո՞վ էր այդ շարժման ղեկավարը. հատորում, այդ հարցին պատասխան չի տրված։

Խորհրդահայ պատմագրության մեջ վերջին տարիներին հիմնականում ճիշտ է գնահատվում XIX դարի 80—90-ական թվականների հայ ազատագրական պայքարի ձևերից մեկը՝ հայդուկային շարժումը։ Այդ հարցին անդրադարձել է Ռ. Հովհաննիսյանը ինչպես 1965-ին հրատարակված աշխատության, այնպես էլ «Հայ ժողովրդի պատմության» վեցերորդ հատորի մեջ։

[1] Տե՛ս Ռ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 64—65։

[2] Նույն տեղը, էջ 10։

[1] Ռ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 235։

[2] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 129։

Հեղինակը բարձր է գնահատում հայդուկային շարժումը։ Նա շարադրում է Բաֆֆու խոսքերը, թե հայդուկային շարժումը բռնակալական լծի տակ ճնշված ու հարստահարված, մարդկային բոլոր իրավունքները կորցրած ժողովրդի բողոքն էր, ստրուկի ըմբոստացումը իշխողի բարբարոսության դեմ[1]։ Հարկ է նշել, որ Ռ. Հովհաննիսյանի կողմից հայդուկային շարժման հարցի շոշափումը դրական երևույթ է, քանի որ 1920—1960-ական թվականներին մեր պատմական գրականության մեջ այդ մասին գոյություն ուներ բացասական կարծիք։

Հայդուկային-ֆիդայական շարժումը ազգային-ազատագրական պայքարի ըմբոստ ու արդարացի մի ձև էր, իր դասակարգային բնույթով հակաֆեոդալական, գյուղացիական-դեմոկրատական շարժում. «Ակզբնապես դրսևորվելով որպես տեղական հարստահարիչների դեմ ժողովրդի ինքնապաշտպանության համար զենքի դիմած փոքրաթիվ խմբերի պարտիզանական պայքար,— գրում է Ռ. Հովհաննիսյանը,— այն ուղղվեց այդ կեղեքիչներին հովանավորող պետական պաշտոնեության ու կառավարության դեմ, ապա դարձավ օսմանյան բռնապետությունը թոթափելու ձգտող հայ ազատամարտի տարերային ու հախուռն պայքարի կրողը»[2]։

VI հատորում 90-ական թվականների վերջերին ծավալված հայդուկային շարժման մասին գրել է Ծ. Աղայանը։ Նա գտնում է, որ այդ շարժումը թուրքական բռնապետության դեմ Բալկաններում (չեթնիկների) և Արևմտյան Հայաստանում (ֆիդայիների) ազգային-ազատագրական և գյուղացիության դասակարգային պայքարի յուրահատուկ ձև էր։ Այն տիրող կարգերի դեմ ուղղված ժողովրդի բողոքն էր, նրա ընդվզումը[3]։ «Հայդուկային շարժումը,— գրում է Ծ. Աղայանը,— հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ կարևոր տեղ է գրավում։ Այն բարձր է պահել հայ ազատագրական պայքարի ոգին, ժողովրդին ներշնչել, որ նա կարող է ազատագրվել միմիայն պայքարի ճանապարհով»[4]։ Հատորում ուշագրավ տեղեկություններ են հաղորդվում հայդուկային շարժման ականավոր դեմքերի՝ Աղբյուր Սերոբի, Հրայրի (Արմենակ Ղազարյան), Անդրանիկ

1 Տե՛ս Ռ. Հովհաննիսյան. Նշվ. աշխ., էջ 253։

2 Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 150։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 287—288։

4 Նույն տեղը, էջ 288։



Օզանյանի, Գևորգ Չաուշի և ժողովրդի ծոցից ելած շատ այլ մարտիկների գործողությունների մասին։

Հայդուկային շարժմանը ճիշտ գնահատական է տվել Մ. Արզումանյանը, այն համարելով հայ ժողովրդի հերոսական ազատագրական պայքարի արտահայտություն։ Ինչպես բոլոր ճնշված ժողովուրդները, իրավացիորեն գրում է նա, այնպես էլ հայերն ունեցել են խիզախ հայդուկներ, որոնք անձնվեր պայքար են մղել թուրքական ոստիկանների ու բռնադատիչների դեմ։ Սակայն հայդուկային շարժումը, նշում է նա, չի կարելի դարձնել պաշտամունք ու մշտական գործելակերպ, որովհետև նա, ինքնաստինքյան վերցրած, ժողովրդին չի բերել ու չի կարող բերել ազատագրում[1]։ Նրա կարծիքով, հայդուկային շարժումը կարելի է դիտել որպես ճնշված ժողովրդի ազգային-ազատագրական շարժման երախայրիք, նրա նախնական, տարերային փուլի արտահայտություն, երբ հանդես են գալիս անձնվեր, հայրենասեր մարդիկ, բայց նրանք դեռ չգիտեն, թե որն է ազատագրման ճիշտ ուղին։ Նա գրում է, որ չնայած հայդուկային շարժումը բավականին ուժեղ է եղել Բուլղարիայում, սակայն բուլղարական ազգային-ազատագրական շարժման ճանաչված գործիչ Վ. Լևսկու կարծիքով, հայդուկային տակտիկան անցած փուլ է, ուստի ժողովրդին պետք է կազմակերպել զանգվածային ելույթի[2]։

Հայդուկային շարժումը բարձր է գնահատել նաև Ջ. Կիրակոսյանը։ Հայդուկները, գրում է նա, բուն երկրի ժողովրդի ծնունդն էին, հարազատ զավակները, որոնք վրիժառուներ էին դարձել պաշտպանելու աշխատավոր մարդկանց շահերը պորտաբույծ կողոպտիչներից։ «Նրանք բոլորն էլ կռվում ու զոհվում էին կռվի դաշտում հանուն հայրենի երկրի ազատության»[3]։

Խորհրդահայ պատմաբաններից հայդուկային շարժման հարցին ավելի հանգամանորեն անդրադարձել է Հ. Պողոսյանը՝ Սասունի պատմությանը նվիրված աշխատության մեջ։ «Հայ ժողովրդի համար ստեղծված ծանր վիճակը,— գրում է նա,— ստիպում էր հայրենասեր երիտասարդներին հայդուկային խմբեր կազմել և ոտքի ելնել օսմանյան կառավարության դեմ»։ Մուշ-Սասունում, այնուհետև գրում է Հ. Պողոսյանը, առաջին հայդուկային կամ ֆիդայական կազմակերպված խմբերը հանդես եկան

1 Տե՛ս Մ. Արզումանյան. Հայաստան, 1914—1917, էջ 118։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 118։

3 Ջ. Կիրակոսյան. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, գիրք 2, էջ 193։

1880-ական թվականներին[1]։ Ճիշտ է նկատել պատմաբանը՝ հայդուկները սարերն էին բարձրացել ոչ թե ինչ-որ մի կուսակցության կազմակերպչական աշխատանքի կամ արտաքին ուժերի ազդեցության տակ, այլ դաժան բռնությունները չտանելու պատճառով։ Նա ֆիդայական շարժման գլխավոր կենտրոններ է համարում Զեյթունը, Սասունը, Վասպուրականը։ Հ. Պողոսյանը, գտնում է, որ հայկական ֆիդայական շարժումը կրում էր բուլղարական և բալկանյան մյուս ժողովուրդների շարժման ազդեցությունը։

Բացահայտելով հայդուկային խմբերի գործունեությունը, նշելով, որ այն ինքնապաշտպանության միջոց էր, հեղինակը միաժամանակ հանգում է այն ճիշտ եզրակացության, որ նրանց պայքարը ժողովրդին ազատագրելու միջոց չէ, այդ ճանապարհով ոչ մի ժողովուրդ, այդ թվում նաև արևմտահայերը, օսմանյան լծից չէր ազատվի[2]։

Հ. Պողոսյանի աշխատության ամենաընդարձակ բաժինը նվիրված է XIX դարի վերջի և XX դարի սկզբի Սասունի ազգային-ազատագրական պայքարին։ Շարադրելով սասունցիների 1894 թ. ապստամբության պատմությունը, հեղինակը գտնում է, որ իր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ լեռնականների ինքնապաշտպանական կռիվները սկսվել են դեռևս 1891 թվականին, որ 1894 թ. հերոսական դիմադրությունը ամենաբարձր և վերջին կետն էր[3]։

Պողոսյանի աշխատության մեջ հանգամանորեն շարադրված է նաև 1895—1896 թթ. հայկական կոտորածների և, հատկապես, Սասունի 1904 թ. և 1915 թ. հերոսամարտերի պատմությունը։

Ինչպես տեսնում ենք, խորհրդահայ պատմաբանների ճնշող մեծամասնությունը դրական գնահատական է տվել հայդուկային շարժմանը, մինչդեռ, հակառակ դրան, կան նաև բացասական կարծիք ունեցող պատմաբաններ (Հ. Վարդանյան, Բ. Օհանջանյան և այլք)։ Այսպես, Բ. Օհանջանյանը, դատապարտելով հայդուկային շարժումը, այն համարում է դաշնակցության որդեգրած գործելակերպ, որը բխում է նրա տեռորիստական գործունեությունից։ «Չկարողանալով ըմբռնել հասարակական զարգացման օրինաչափությունները,— գրում է նա,— Արևմտյան

1 Տե՛ս Հ. Պողոսյան, Սասունի պատմություն, էջ 169—170։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 180։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 183։



Հայաստանը սուլթանական լծից ազատագրելու ուղիները, դաշնակցությունն իր ձևավորման սկզբից գերադասեց հայդուկային պարտիզանական պայքարի ձևը»[1]։

Իսկ ինչպե՞ս են հայ պատմաբանները լուսաբանել 1870—1890-ական թվականների հայ հասարակական-քաղաքական հոսանքների պատմությունը, ինչպե՞ս են գնահատել հայ ազատագրական շարժման գաղափարախոսությունը նորաստեղծ հայ քաղաքական կուսակցությունները, նրանց դիրքորոշումը հայ ազատագրական շարժման նկատմամբ։

Ժամանակագրական տեսակետից այդ հարցերին առաջինն անդրադարձել է Ռ. Հովհաննիսյանը՝ 1965-ին հրատարակված իր աշխատության մեջ։ Նրա կարծիքով, XIX դարի 70—80-ական թվականների հայ ազատագրական շարժումների գաղափարախոսության առանցքը զինված պայքարի, մեծ տերությունների նկատմամբ դիրքորոշման և ազատագրական շարժման սոցիալական բովանդակության ու նրանց առնչության հարցն էր[2]։

Աշխատության մեջ ցույց է տրվում Բաֆֆու, Ռ. Պատկանյանի, Գր. Արծրունու, ինչպես նաև Հ. Պարոնյանի, Մերենցի, Ա. Թոխմախյանի, Մուրացանի, Պ. Պռոշյանի, Ղ. Աղայանի և մյուսների դիրքորոշումը զինված պայքարի միջոցով ազատության հասնելու հարցում։ Սակայն ազատագրական շարժման առաջընթացի իր ճանապարհին, գրում է նա, հայ լիբերալ և դեմոկրատական ուղղության գործիչներն անհաշտ պայքարի մեջ էին ազգային-պահպանողականների և կղերահետադիմականների հետ։

Բացահայտելով մեծ տերությունների նկատմամբ տարբեր ուղղության պատկանող հայ գործիչների ունեցած դիրքորոշումը, հատկապես Բեռլինի կոնգրեսից հետո, Ռ. Հովհաննիսյանը, գտնում է, որ մեծ Գարված ստացավ եվրոպական դիրքորոշումը։ Առավել զանգվածային էր ռուսական կողմնորոշումը, որի ամենագործունյա ներկայացուցիչը Գր. Արծրունին էր[3]։ Սակայն, վերջինս արևմտահայերի ազատագրությունը կապում էր ցարիզմի նվաճողական քաղաքականության հետ և չուներ ցարիզմին ըմբոստանալու որևէ հայեցակետ։

1 Բ. Օհանջանյան, Դաշնակցությունն առանց դիմակի, Եր., 1980, էջ 16։

2 Տե՛ս Ռ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները... էջ 257։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 271։

Հայկական որոշ շրջաններ, նշում է հեղինակը, հատկապես Բ. Դռան ծառայության մեջ գտնվող հայ պաշտոնյաները, ունեցել են թուրքական դիրքորոշում, սակայն ինչպես բոլոր ողջախոհ հայ գործիչները, այնպես էլ ժողովրդական զանգվածները, երկու պետություններին համեմատելիս, հարկավ, գերապատվությունը միշտ էլ տալիս էին Ռուսաստանին։

Ազգային-ազատագրական շարժումների և հասարակական-քաղաքական հոսանքների հարցը քննվում է նաև Հ. Վարդանյանի մենագրության մեջ[1]։

Հայերի ազգային-ազատագրական շարժումները, որոնք նոր երանգ ու թափ ստացան 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից և Բեռլինի կոնգրեսից հետո, իրավացիորեն գրում է Հ. Վարդանյանը, արդյունք էին օսմանյան Թուրքիայի հայաջինջ քաղաքականության, որի մեթոդներն էին՝ սոցիալական ու ազգային ճնշման ուժեղացումը, անողոք հարստահարությունները, հարկերի ու տուրքերի եռապատկումը, մարդկանց հողազրկումն ու արտաքսումը, բռնի իսլամացումն ու կոտորածները։ Ելնելով վերոհիշյալից, հեղինակը ընդգծում է, որ «հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումն ինքնաբուխ էր և ոչ թե արհեստական մղումների, առանձին մարդկանց ցանկությունների կամ դրսից եղած ներգործությունների արդյունք, ինչպես կարծում էին առանձին ազգային նիհիլիստները և պատմության թուրքական կեղծարարները»[2]։ Ճիշտ է նրա այն եզրակացությունը, թե հայերի ազատագրական շարժումները պատասխան էին սուլթանական կառավարության հայաջինջ քաղաքականության և զուտ ինքնապաշտպանական նպատակ էին հետապնդում[3]։

Նա ճիշտ է քննադատում Լեոյին, որը հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները դիտում էր որպես որոշ գրողների ու հրապարակախոսների սուբյեկտիվ կամեցողության թելադրանք, որպես նրանց ալեկոծող մտքերի հետևանք։

Հ. Վարդանյանի աշխատության մեջ տեղ են գտել նաև մի շարք վիճելի տեսակետներ, անհաջող ձևակերպումներ։ Դժվար է համաձայնվել Սպանդար Սպանդարյանին և «Նոր դարին» նրա

1 Տե՛ս Հ. Վարդանյան. Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները XIX դարի վերջին քառորդում։

2 Նույն տեղը, էջ 104։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 122։



տված ծայրահեղ բացասական գնահատականներին։ «Այսպիսով,— գրում է նա,— Սպանդար Սպանդարյանը բացահայտորեն կանգնած էր հայ ժողովրդի թշնամիների պաշտպանության դիրքերում և իր գաղափարախոսությամբ արդարացնում է սուլթանական կառավարության հայաջինջ քաղաքականությունը»[1]։ Չի կարելի նույնացնել «Մեղու Հայաստանի» և «Նոր դար» թերթերը, տարբերություն չտեսնելով նրանց քարոզած գաղափարների միջև (տե՛ս մենագրության 6-րդ գլուխը)։

Հայտնի է, որ Ս. Սպանդարյանը ունեցել է հակացարական տրամադրություններ, հաճախ հակադրվել է ցարական կառավարության ազգային քաղաքականությանը։ «Նոր դարի» էջերում լայն տեղ էր հատկացնում արևմտահայության ծանր կացության լուսաբանմանը, հայկական կոտորածներին, խստորեն քննադատում արևմտյան դիվանագիտության վնասակար դերը Հայկական հարցում։ Պատահական չէ, որ թերթի գրական բաժնում հաճախակի տպագրվել են ոչ միայն հայ, այլև ռուս և արևմտաեվրոպացի գրողների ստեղծագործություններ։ Նրա ուշադրությունից չեն վրիպել նաև գիտության, արվեստի, կրթական գործին վերաբերող հարցերը։ Ահա թե այդ մասին ինչ է գրել նրա որդին՝ Սուրեն Սպանդարյանը իր նամակներից մեկում. «Ոչ իմ հայրս և ոչ էլ նրա ուղղությունը հասարակական-քաղաքական տեսակետից ոչ միայն չէին վայելում կառավարության աջակցությունը, այլ միշտ հալածվում էին ամենադաժան կերպով... Կառավարությունը հալածում էր «պահպանողականությունը» («կոնսերվատիզմը») և հովանավորում հայկական «լիբերալիզմը», որովհետև այն ժամանակները իր տեսակետից նա տեսնում էր «թշնամուն» պահպանողականության և ոչ թե լիբերալիզմի մեջ։ Լիբերալիզմը ժխտում էր հայկական կյանքի «հիմունքները», իսկ կոնսերվատիզմը պաշտպանում էր այն՝ կառավարության ճնշման և ռուսիֆիկացիայի դեմ»[2]։

Հետևելով Աշ. Հովհաննիսյանին, Հ. Վարդանյանը սխալ գնահատական է տալիս նաև Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» հայերեն թարգմանիչ, սոցիալ-դեմոկրատ, իր ժողովրդի ազատագրության գործին նվիրված Հ. Աթաբեկյանցին։ «Նա,— գրում է հեղինակը,— մարք-

1 Հ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 285։

2 Հայ ժողովրդի պատմություն, հ. VI էջ 868։

տիզմի իսկական բարեկամը չէր». նա հայերի ուշադրությունը բևեռում էր դեպի Հայկական դատը, «նա կանգնած էր բուրժուական նացիոնալիզմի պլատֆորմի վրա»[1] և այլն։ Մի՞թե հայերի ուշադրությունը Հայկական դատի վրա բևեռելը բուրժուական նացիոնալիզմ է նշանակում։ Չէ՞ որ դա ամենից առաջ համազգային գործ էր։

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության հետ սերտորեն առնչվող մի կարևոր հարցի է անդրադարձել պատմական գիտությունների դոկտոր Կ. Քարամյանը[2]։ Աշխատությունը կրում է պատմաքննական բնույթ և հեղինակը փորձում է ինչ-որ չափով նոր խոսք ասել պատմագրության մեջ։ Նա քննադատում է այն պատմաբաններին, ովքեր գտնում են, թե, իբր, արևմտահայերի ազատագրական շարժումներն իրական հող չեն ունեցել, ներմուծվել են դրսից՝ արևելահայերի կամ մեծ տերությունների միջոցով և, իբր, այդ պատճառով էլ պարտության են մատնվել։ Չընդունելով այդ տեսակետը, Կ. Քարամյանը հիմնավորում է ազգային-ազատագրական շարժումների օրինաչափությունը հայ իրականության մեջ։ Նա գտնում է, որ հայ ազգային-ազատագրական շարժումը օրինաչափ էր և արդյունք պարսկա-Թուրքական բռնակալական տիրապետության։ Կ. Քարամյանը քննադատում է այն հեղինակներին (Ա. Մակարյան և ուրիշներ), ովքեր գտնում են, որ նոր դարաշրջանում հայ ազգային-ազատագրական շարժումը Արևմտյան Հայաստանում առաջադիմական չէր, որովհետև ղեկավարվում էր ռուսահայ ռեակցիոն բուրժուազիայի և նրա կուսակցության՝ դաշնակցության կողմից։

Պատմաբանը քննադատում է նաև այն հեղինակներին, ովքեր, ելնելով արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների պարտության փաստից, Մեծ եղեռնի իրողությունից, հախուռն կերպով դատապարտում են այդ շարժման գործիչներին, «փոխանակ երկյուղածորեն խոնարհվելու նրանց գործի ու հիշատակի առաջ»[3]։ Մի այլ տեղ նա գրում է, թե սխալվում են այն հեղինակները, որոնք XIX դարի վերջերից սկսած հայկական մեծազանգված դժբախտություններն ու արմենոցիդը վերագրում

[1] Հ. Վարդանյան, Արևմտահայերի ազատագրության հարցը..., էջ 345։

[2] Տե՛ս Կ. Քարամյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի օրինաչափության հարցի շուրջը, Եր., 1969։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 68։



են ազգային-ազատագրական շարժման, հայ քաղաքական գործիչների տակտիկական սխալներին, հայերի անջատողական ձգտումներին և այլն։ Դրանք վայել են միայն Թուրքական ինքնարդարացման ջանքերին[1]։

Կ. Քարամյանը հակագիտական է համարում Ե. Գեղամյանի, Բ. Բորյանի, Արտ. Կարինյանի և ուրիշների այն մոտեցումը, ըստ որի Թուրքական տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած պայքարը ազգային, սոցիալ-տնտեսական և կրոնական հալածանքների առկայությամբ բացատրելու փոխարեն Թուրքական կամայականությունները, անընդհատ Թալանն ու կոտորածները բացատրում են հայ ազգային-ազատագրական շարժումով, որն էլ, իբր, սկսվել է 1878 Թվականից[2]։ Նա քննադատում է նաև Լեոյին, որը Թուրքերի ջարդարարությունը բացատրում է որպես հայ ռայայի շարժումների, հայ ազգային-ազատագրական պայքարի հակազդեցություն[3]։

Համաձայն ենք Կ. Քարամյանի նաև այն տեսակետին, թե, խոսելով ազգային-ազատագրական շարժումների մասին, չի կարելի Թուրքական բռնապետության դեմ ժողովրդի մղած ինքնապաշտպանական գոյամարտերը որակել որպես ապստամբություններ։ Դա, գրում է նա, նպաստում է Թուրք դահիճների ինքնարդարացմանը՝ «Հայերն ապստամբեցին, մենք էլ ջարդեցինք»։

XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական մտքի և քաղաքական հոսանքների հարցին անդրադարձել է պրոֆ. Վ. Ավետիսյանն իր մենագրության մեջ[4]։ Նա ցույց է տվել ռուսական հեղափոխական շարժումների դերը հայ հասարակական-մտավոր կյանքում։ Քննելով Մ. Նալբանդյանի հայացքները, Վ. Ավետիսյանը նշում է, թե նա առաջինն էր, որ առաջ քաշեց հայ ժողովրդի ազատագրական պայքարը ռուսական և եվրոպական դեմոկրատական հեղափոխական շարժումներին համաձուլելու անհրաժեշտության գաղափարը, հակադրվելով նրանց, ովքեր հայ ազգային-ազատագրական շարժման բարեհաջող ելքը կապում

[1] Տե՛ս Կ. Քարամյան, նշվ. աշխ., էջ 96—97։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 98—99։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 104։

[4] Տե՛ս Վ. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքսլենինյան փուլի սկզբնավորումը, Եր., 1976։

էին կապիտալիստական մեծ տերությունների դիվանագիտական ու ռազմական միջամտության հետ։

Սակայն Վ. Ավետիսյանը բուրժուապահպանողական և լիբերալ-բուրժուական հոսանքները համարում է ինքնուրույն հոսանքներ, մի բան, որի հետ դժվար է համաձայնվել[1]։

Վերլուծելով Գր. Արծրունու հայացքները, քննադատելով հեղափոխության և սոցիալիզմի նկատմամբ նրա բացասական դիրքորոշումը, հեղինակը նկատում է, որ Գր. Արծրունին և 70—80-ական թվականների նրա համախոհները Արևմտյան Հայաստանի ազատագրման հարցում հանդես էին գալիս ժողովրդական զինված ելույթների, ապստամբությունների կողմնակիցներ, որ «Մշակի» էջերում նա հաճույքով էր տպագրում Բաֆֆու վեպերը, պրոպագանդելով թուրքական լծից զինված ապստամբությունների, հայդուկային շարժման միջոցով հայ ժողովրդի ազատագրման գաղափարը[2]։ Սակայն այստեղ նա միաժամանակ անհարկի քննադատում է Գր. Արծրունուն, որ նա այդ հարցում պաշտպանում է ռուսական ցարիզմի հետ համագործակցելու տեսակետը։ Ինչո՞ւ ցարիզմը նպաստեց Բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարին իր սեփական շահերից ելնելով, իսկ հայերի պայքարին չէր կարող նպաստել։ Բացի այդ, Վ. Ավետիսյանը, վկայակոչելով Վ. Ի. Լենինի հայտնի դրույթը ազգային-ազատագրական շարժումների առաջադիմական լինելու մասին[3], միաժամանակ խիստ բացասաբար է արտահայտվում հայ բուրժուազիայի մասին, որը «չլինելով հեղափոխական, այլ ընդհակառակը, վախկոտ և ցարիզմին հարմարվող, այդ պայմաններում իր տնտեսական գործունեությունը ազատ ծավալելու և քաղաքական տիրապետություն ձեռք բերելու հույսերը սկսեց կապել Արևմտյան Հայաստանում (Թուրքահայաստանում) հայկական անկախ կամ ինքնավար պետության ստեղծման հետ»[4]։

Մի՞թե Արևմտյան Հայաստանում հայկական պետություն ստեղծելու հայկական բուրժուազիայի այդ ցանկությունը հակասում էր հայ ժողովրդի շահերին։ Իհարկե, ոչ։ Մի այլ տեղ Վ. Ավետիսյանը, դարձյալ հենվելով Վ. Ի. Լենինի վերոհիշյալ

1 Տե՛ս Վ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 106, 128։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 131։
3 Տե՛ս Վ. Ի. Լենին, երկ, հ. 26, էջ 172։
4 Վ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 157—158։



դրույթին, թե գլխավոր դասակարգը, որ դուրս է գալիս արսոլյուտիստական հիմնարկների դեմ, բուրժուազիան էր և նրա պայքարը պրոգրեսիվ է[1], միաժամանակ նրա հետագա շարադրանքից երևում է, թե իբր այդ ասվածը չի վերաբերում հայ բուրժուազիային՝ ո՛չ նրա արևմտահայ և ո՛չ էլ արևելահայ հատվածին։ Ավելին, նա այդ հարցում հենվում է Աշ. Հովհաննիսյանի 1921 թ. հրատարակած «Հրեշավոր թյուրիմացություն» հոդվածի[2] այն դրույթին, որը, մեր կարծիքով, հիմնովին սխալ է։ Ըստ Աշ. Հովհաննիսյանի, եթե Արևմտյան Հայաստանը ազատագրվեր, ապա այն առևտրաարդյունաբերական կապիտալի շրջանառության մի նոր գաղութ պիտի դառնար ռուսահայ բուրժուազիայի համար, որ, իբր, արևմտահայ աշխատավորությունը կդառնար ոչ թե անկախ իշխանության սուբյեկտ, այլ ազատ հարստահարման օբյեկտ։ Սա, մեր կարծիքով, սխալ տեսակետ է։

XIX դարի 80-ական թվականների հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության հարցերը մանրակրկիտ քննության է առել Ջ. Կիրակոսյանն իր «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» մենագրության երկրորդ գրքում։ Այստեղ նա ցույց է տվել, որ հայ իրականության մեջ խորանում էր հիասթափությունը եվրոպական դիվանագիտությունից։ Հեռատես մտածողները դիվանագիտական խոստումների մեջ չէ որ տեսնում էին սեփական ժողովրդի ազատագրության ուղին։ Նրանցից մեկը, իրավացիորեն գրում է Կիրակոսյանը, Բաֆֆին էր, որը Բեռլինի տրակտատի 61-րդ կետը մեռած դեղատոմս էր անվանում։

Նա բարձր է գնահատում Բաֆֆու գաղափարախոսությունը, հանգամանորեն վերլուծում է այն, ցույց տալով, որ տարիների ընթացքում նրա մոտ բյուրեղացել է արևմտահայ հեղափոխական գաղափարը։ Մեծ գրողն ու քաղաքացին հակասուլթանական ապստամբության մեջ էր փնտրում արևմտահայության ազատագրությունը։ «Բաֆֆին կռում էր Հայաստանի քաղաքական ապագայի գաղափարը,— գրում է Ջ. Կիրակոսյանը,— ան-

1 Տե՛ս Վ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 212։
2 «Կոմունիստ», 1921, № 86։

հրաժեշտ համարելով եկեղեցին ազգից տարբեր հռչակել, զարկ տալ ազգային միասնությանը հանուն նոր, ազատ Հայաստանի»[1]։

Ջ. Կիրակոսյանը Գր. Արծրունուն բնութագրելով որպես 1880-ական թվականների սկզբի հայկական լիբերալիզմի ամենակարկառուն ներկայացուցիչը, միաժամանակ ցույց է տալիս նրա ռեֆորմիզմը, ցարական կառավարության քաղաքականությանը հարմարվելու դիրքորոշումը։ Նա ևս մերժում է պատմագիտության մեջ տեղ գտած այն տեսակետը, թե արևմտահայության ազատագրության գաղափարախոսությունը կովկասահայության ծնունդն էր, Գամառ-Քաթիպայի և Բաֆֆու, Գր. Արծրունու և մյուսների հոգևոր զավակը։ Ինչ խոսք, գրում է նա, որ էական է եղել նրանց խոսքի ուժը, բայց մի՞թե կարելի է անտեսել Մկրտիչ Խրիմյանի ու Ներսես Վարժապետյանի, Ծերենցի, Մկրտիչ Փորթուգալյանի ու Գարեգին Սրվանձտյանի դերը։ Եվ հետո՝ ինչպե՞ս կարելի է չնկատել Խրիմյանի «Վանդուլժի», «Հայդուլժի» խաղացած դերը, «Մշակի» ու «Արձագանքի» էջերում Արփ. Արփիարյանի մարտաշունչ հրապարակախոսությունը։ Կովկասում Ռ. Պատկանյանից ոչ պակաս գիտեին Պեշիկթաշլյանին, Դուրյանին, Ալիշանին և այլն[2]։

Ջ. Կիրակոսյանը քննադատում է թուրք հրապարակախոսներին, պամաբաններին, որոնք, կեղծելով պատմությունը, պնդում են, թե հայկական ազգային-ազատագրական շարժումը ներմուծված է ցարական Ռուսաստանի գրգռությունների շնորհիվ, ռուսահայերի միջոցով[3]։ «Հայկական ազատագրական շարժումն օտարերկրյա բանսարկությունների ու դավադրությունների գործիք համարել,— գրում է նա,— նշանակում է մեղանչել պատմական իրականության, մարդկային բանականության դեմ»[4]։ Նա փաստերով հիմնավորում է այդ դրույթը։

Պատմաբանի կարծիքով, XIX դարի 80-ական թվականների կեսերից արևմտահայության ազատագրության գաղափարախոսությունն ու պրակտիկան թևակոխում էին իրենց զարգացման մի նոր փուլ։ Հայոց հասարակական-քաղաքական ուժերը, գրում է նա, անդրանիկ քայլերն էին անում կազմակերպվելու ժամանակի պահանջներին համապատասխան։ Անդրկովկասում, թե՛ Արևմտյան Հայաստանում, Ռուսաստանի տարբեր կենտրոններում, թե՛ Եվրոպայի մայրաքաղաքներում ստեղծվում էին խմբեր, կազմակերպություններ։ Տեղի էին ունենում ժողովներ, վիճաբանություններ։ Ակտիվ դեր էին խաղում ուսանողները, որոնց քննարկման կիզակետում էր նախ և առաջ հայրենիք ունենալու, օտարների լուծը թոթափելու խնդիրը[1]։

Այս դրույթներից հետո Ջ. Կիրակոսյանը նշում է, որ ազգային զարթոնքի, սեփական հայրենիք ունենալու, ժողովրդի երկու գլխավոր հատվածները միավորելու պրոցեսի լուսաբանման ու մեկնաբանման բնագավառում միշտ չէ որ ճիշտ տեսակետներ են զարգացվել։ «Գլխավորն այն է,— գրում է նա,— որ մեր ժողովուրդն իրավունք ուներ ունենալու իր հայրենիքը, իր միասնական օջախը»[2], իսկ նպատակին հասնելու ձգտումը միանգամայն օբյեկտիվ անհրաժեշտություն էր։ Տասնյակ տարիների ընթացքում խեղաթյուրված, աղճատված մոտեցումներն ու բնութագրումները խճողել և մթագնել են պատմական պրոցեսի իրական պատկերը[3]։

Ջ. Կիրակոսյանը քննադատում է մի շարք պատմաբանների, որոնք 1920—30-ական թվականներին որդեգրել էին այն մակերեսային, բուն խնդրի էությունից չբխող տեսակետը, թե Թուրքահայաստանով շահագրգռված էին ռուսահայ բուրժուազիան ու նրա կուսակցությունները։ «Ըստ էության ժխտվում է այն տարրական ճշմարտությունը,— գրում է նա,— որ արևմտահայ զանգվածները ձգտում էին ազատագրվել թուրքական լծից, որ հայ ժողովրդի քաղաքական զարթոնքի արդյունքն էր միասնական հայրենիք ունենալու մտայնությունը»[4]։

Նա նկատում է, որ այդ կարգի սխալներ թույլ են տրվել նաև 1970-ական թվականներին։ Օրինակ, նա սխալ է համարում Ս. Աղայանի մոտեցումը, երբ վերջինս «հայ ազատագրական պայքարի դրսևորումները, նրա գործիչներին դատապարտում է, քննադատում կանխակալ բանաձևերի մեջ խցկելու միտումով»[5]։ Սխալ է համարում նաև Վ. Ավետիսյանի պնդումը, թե Արևմտ-

[1] Ջ. Կիրակոսյան. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, գիրք 2, էջ 163։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 167։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 168։

[4] Նույն տեղը, էջ 169։



[1] Տե՛ս Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 184։

[2] Նույն տեղը։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 185։

[4] Նույն տեղը, էջ 186։

[5] Նույն տեղը։ Ջ. Կիրակոսյանը նկատի ունի Ս. Աղայանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից» աշխատությունը, էջ 17—18։

յան Հայաստանում հայկական անկախ կամ ինքնավար պետության ստեղծումը պայմանավորված էր ցարիզմի կողմից հալածական հայ բուրժուազիայի «վախկոտությամբ», ցարիզմին «հարմարվելով», նրա ոչ հեղափոխականությամբ[1]։ Հակառակ վերոհիշյալ պնդմանը, Ջ. Կիրակոսյանը իրավացիորեն գտնում է, որ «հայրենիք ուզում էր ժողովուրդը։ Արևմտյան Հայաստանի ազատագրումը տենչում էին հայ ժողովրդի բոլոր հատվածները, նրա բոլոր առաջադիմական ուժերը»[2]։

Արևմտահայության ազգային-ազատագրական պայքարը, գրում է Կիրակոսյանը, հակաֆեոդալական էր, ուղղված թուրքական միապետական բռնակալության դեմ, ուներ շեշտված տնտեսական, դասակարգային բնույթ։ Այդ պայքարի գլխավոր շարժիչ ուժը աշխատավոր գյուղացիությունն էր, արհեստավորությունը, գավառահայ մանր բուրժուազիան։ Սակայն բուրժուազիան հանդես եկավ ազգի համընդհանուր շահերն արտահայտողի դերով։ Ուշագրավ է նրա այն միտքը, թե իրադարձությունների պատմատրամաբանական ըմբռնման ու գնահատման մեթոդական սկզբունքները պահանջում են, որպեսզի ամեն ինչ և ամեն ոք քննարկվեն, մեկնաբանվեն իրենց միջավայրին ու պայմաններին համապատասխան, տվյալ պահի քաղաքական մթնոլորտի շրջանակներում։ «Միանգամայն թյուր հասկացության տեղիք է տրվում,— գրում է նա,— երբ ավելի ուշ ժամանակների չափանիշներով ու կատեգորիաներով քննվում են նախորդ շրջանի դեպքերն ու դեմքերի գործերը»[3]։ Թիլաքը և Գանդին՝ Հնդկաստանում, այնուհետև գրում է նա, Սուն Յաթսենը՝ Չինաստանում, Արաբի փաշան՝ Եգիպտոսում, Եփրեմ խանը և Սաթթար խանը՝ Իրանում, սրանք բոլորն էլ բուրժուա-դեմոկրատական գործիչներ են, որոնց գաղափարներն ու գործերը բարձր են գնահատվում մարքս-լենինյան պատմագիտության մեջ։ «Նույնպիսի մոտեցում պետք է լինի հայ ժողովրդի ազատագրման համար մաքառած գործիչներին»[4], իրավացիորեն

[1] Տե՛ս Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 186։ Ջ. Կիրակոսյանը նկատի ունի Վ. Ավետիսյանի «Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը» աշխատությունը, էջ 157—158։

[2] Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 186—187։

[3] Նույն տեղը, էջ 186—187։

[4] Նույն տեղը, էջ 189։



գրում է պատմարանը։ Թուրքիայի նոր պատմությանը նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններում, շարունակում է նա իր միտքը, նույնիսկ դրվատական խոսք է ասվում մինչերիտթուրքական գաղափարախոսության գագաթներից մեկի՝ Ալի Սուավիի հասցեին, որը 1878-ին փորձեց դավադրության միջոցով գահընկեց անել սուլթան Համիդին և նրան փոխարինել կիսախելագար Մուրադով, մինչդեռ հայ մարտիկները սուլթանների, ցարիզմի կործանման մեջ էին տեսնում ազգի փրկությունը, մասնակցում էին դարաշրջանի հեղափոխական տարբեր ուղղություններին, դառնում էին ժողովրդանվեր, գիտակից մարտիկներ։ Հայոց հասարակական, քաղաքական զարգացումը, գրում է Ջ. Կիրակոսյանը, նախ և առաջ պտտվում էր հայրենիք, տերիտորիա, ինքնուրույնություն ունենալու, Արևմտյան Հայաստանն ազատագրելու խնդիրների շուրջը։

Ջ. Կիրակոսյանը հանգամանորեն քննում է նաև «Արմենիա» և «Հնչակ» թերթերի էջերում արևմտահայության ազատագրման խնդիրը, ցույց տալիս «Արմենիա» թերթի դերը Եվրոպայում ծավալված հայանպաստ շարժման գործում։ Նա դրականորեն է արտահայտվում Մկրտիչ Փորթուգալյանի և նրա «Արմենիայի» մասին։ ««Արմենիան»,— գրում է նա,— առաջին թերթն էր, որ ժողովրդի տառապանքների ու բողոքների մասին խոսեց բարձրաձայն, վառեց հայ գաղութների մեջ ազգասիրության և հայրենասիրության կրակը։ Թերթը միմյանց մերձեցրեց մեր ժողովրդի տարբեր հատվածներին, նրանց կապեց հայրենիքի դարդ ու ցավի հետ»[1]։ Նա քննադատում է այն հետազոտողներին, ովքեր փորձել են խաթարել «Արմենիայի» տեղը հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ, նսեմացնել նրա խաղացած ակտիվ դերը արևմտահայության ազատագրական գաղափարախոսության զարգացման, ժողովրդին գործնական քայլերի մղելու ուղղությամբ։

Իր այդ միտքն ապացուցելու համար նա հանգամանորեն վերլուծում է «Արմենիայում» տպագրված նյութերի բովանդակությունը։ «Սխալ կլիներ պատմական այն պայմաններում «Արմենիային» ավելի մեծ պահանջներ առաջադրել,— գրում է նա։— Կարևորն այն է, թե նա հրապարակ իջնելով, իր փայփայած հարցադրումներով, առաջադրած մտքերով առաջադիմական

[1] Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 246։

դեր էր խաղում, թե ոչ։ Պատասխանը միայն մեկն է՝ առաջադիմական»[1]։

Անդրադառնալով «Հնչակին», Զ. Կիրակոսյանը գտնում է, որ «Արմենիայի», «Հայաստանի» համեմատ այն ավելի արմատական դիրք գրավեց։ Թերթը հենց սկզբից, գրում է նա, ժխտեց Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդրում արևմտաեվրոպական դիվանագիտության դրական դերի հնարավորությունը, հակվեց ժողովրդի կողմից սեփական ուժերի վրա կռթնելու տեսակետին։

1870—1890-ական թվականների հայ հասարակական-քաղաքական հոսանքների հարցը քննվում է նաև Գ. Գալոյանի «Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները» ու «Պատմության քառուղիներում» մենագրությունների մեջ։ Նա XIX դարի վերջին քառորդում Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում աչքի ընկնող դեր է հատկացնում «Մշակ» լրագրին և նրա խմբագիր Գր. Արծրունուն։ «Մշակը» պայքար էր մղում հոգևորականության և ֆեոդալական հարաբերությունների մնացորդների դեմ, հանդես էր գալիս երկրի բուրժուական զարգացման օգտին։ Նշելով, որ Գր. Արծրունին արևմտահայերի ազատագրության հույսը կապում էր Ռուսաստանի հետ, Գ. Գալոյանը, միաժամանակ, քննադատում է նրա սխալ դիրքորոշումը ցարական կառավարության հանդեպ։ Հաշող է տրված ազգային-պահպանողականների և նրանց «Փորձ» ու «Արձագանք» պարբերականների գաղափարական-քաղաքական ուղղվածության գնահատականը։ Նշելով, ինչպես ինքն է գրում, ազգային ու քաղաքական պայքարի հստակ պլատֆորմից զուրկ այդ հոսանքի խոցելի տեղերը, պատմաբանը միաժամանակ իրավացիորեն գտնում է, որ «Այսուհանդերձ չի կարելի ուրանալ օբյեկտիվորեն այն առաջադիմական դերը, որ կատարել են այդ օրգանները հայ հասարակական կյանքում։ Ազատությունից զրկված հայ ժողովրդի համար նրանք եղել են ժամանակի այն ամբիոնը, որոնք ստիպել են լսել ժողովրդի զայրույթը և հույզերի ձայնը»[2]։

Անդրադառնալով 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմին, Գ. Գալոյանը գտնում է, որ, չնայած ցարիզմի զավթողական նկրտումներին, այդ պատերազմը թուրքական լծի տակ հեծող արևմտահայերի և Անդրկովկասի ժողովուրդների համար ուներ արդարացի, ազատագրական բնույթ։ Նրա կարծիքով, Անդրկովկասի ժողովուրդները իր ժամանակին այն դիտել են որպես ազատագրական պատերազմ[2]։ Սա, մեր կարծիքով, ճիշտ տեսակետ է։ Ուշագրավ է Գ. Գալոյանի այն միտքը, թե ռազմական գործողությունների Կովկաս-փոքրասիական բեմահարթակում ռուսական զորքերի հաջողությունն առաջին հերթին պետք է բացատրել նրանով, որ նրանք այնտեղ ամենուրեք զգում էին ժողովրդի պաշտպանությունը։ «Ժողովրդի աչքում նրանք ոչ թե նվաճողներ էին,— գրում է նա,— այլ ազատարարներ։ Ավելին, Անդրկովկասի ժողովուրդները լավ էին հասկանում, որ եթե թուրքական զորքերին չհաջողվեց ներխուժել իրենց սահմանները, ապա դրա մեջ իրենք պարտական են ռուսական բանակին»[3]։

Խոսելով հայ քաղաքական կուսակցությունների երևան գալու մասին, Գ. Գալոյանը նկատում է, որ այն XIX դարի երկրորդ կեսի ազգային-ազատագրական շարժման զարգացման հետևանք էր։

1870—1890-ական թվականների հայ հասարակական-քաղաքական հոսանքների հարցը քննվում է Աշ. Հովհաննիսյանի և Ս. Աղայանի կողմից՝ «Հայ ժողովրդի պատմության» VI հատորում։ Նրանց կարծիքով, այդ ժամանակաշրջանում հայ հասարակական-քաղաքական հոսանքները տնտեսական և սոցիալական, քաղաքական ու գաղափարական խնդիրներով բաժանվում էին հիմնականում երեք խմբերի՝ պահպանողական, լիբերալ-բուրժուական և դեմոկրատական։ Այնուհետև բնութագրվում են այդ հոսանքները առանձին-առանձին։

Հատորում ասված է, որ այդ տարիներին արևելահայ իրականության մեջ ազգային-պահպանողական հոսանքն արտահայտում էր տեղական մանր ու միջին արդյունաբերողների, կալվածատերերի և առևտրական բուրժուազիայի սոցիալական շահերը։ Պահպանողականներն օգտվում էին եկեղեցու հեղինակությունից, բուրժուական արտադրական հարաբերությունների

[1] Զ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 279։

[2] Գ. Գալոյան, Պատմության քառուղիներում, էջ 119—120։

[1] Տե՛ս Գ. Գալոյան, Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, էջ 403—404։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 404։

[3] Նույն տեղը, էջ 407։

զարգացման մեջ նշմարելով ցարական-պետական քաղաքականության հաղթանակը, նրանց խիստ անհանգստացնում էին նաև ցարիզմի սաստկացող հալածանքները՝ հայոց լեզվի, դպրոցների, մշակույթի օջախների նկատմամբ և, ի տարբերություն լիբերալների, ավելի ակտիվ պայքար էին մղում ցարիզմի ազգահալած քաղաքականության դեմ։ Նրանք թերահավատորեն էին վերաբերվում եվրոպական պետությունների անշահախնդիր օգնությանը։

Արևելահայ իրականության հասարակական առաջընթացի մեջ, գրում են հեղինակները, ազգային պահպանողականները կողմնակից էին Անդրկովկասում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը՝ սակայն տեղական ուժերի միջոցով։ Աշխատավորական զանգվածների սոցիալական պայքարի հարցերում նրանք ամբողջովին կանգնած էին գոյություն ունեցող կարգերի պաշտպանության դիրքերում[1]։

Հեղինակների կարծիքով, ազգային-պահպանողական հոսանքի, նրա տպագիր օրգանների ու խմբագիր-հրապարակախոսների տեսակետները միշտ չէ, որ հայ կյանքի մի շարք երևույթների գնահատման հարցում համընկնում էին։ Այսպես, հայ պահպանողականների մի մասը (Աբգար Հովհաննիսյանի «Փորձի» և «Արձագանքի» շուրջ համախմբվածները) ձախ թևն էին կազմում և, դրանով իսկ, միջին դիրք գրավում հայ պահպանողականության և լիբերալիզմի միջև։

Լիբերալ-բուրժուական հոսանքը արտահայտում էր զարգացող բուրժուազիայի շահերը և քանի որ, ինչպես գրում են հեղինակները, հայ բուրժուազիան թույլ էր ու երկչոտ, նա իր գոյությունը պաշտպանելու համար հակված էր տիրող կարգերի հլու կամակատարը դառնալու[2]։ Նրանց կարծիքով, ի տարբերություն պահպանողական հոսանքի, լիբերալ-բուրժուական հոսանքն իր դասակարգային արմատներով զգալի չափով կապված էր հայ գաղթավայրերի և Անդրկովկասի հայաշատ կենտրոնների հետ։ Սոցիալական ու քաղաքական պայքարի հարցերում լիբերալ-բուրժուական հոսանքը կանգնած էր ռեֆորմիստական դիրքերում։ Հեղինակները գտնում են, որ եթե արևելահայ լիբերալ-բուրժուական հոսանքի պարագլուխը Գր. Արծրունին էր, ապա

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 163։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 165։



արևմտահայ իրականության մեջ լիբերալ ուղղությունը շարունակում էին գլխավորել Ն. Ռուսինյանը, Սերվիչենը, Գ. Օտյանը և ուրիշներ[1]։

Հայ դեմոկրատական հոսանքի գաղափարախոսությունը, այնուհետև գրում են նրանք, իր արտահայտությունը գտավ 70—90-ական թվականների հայ դեմոկրատ գրողներ Ռ. Պատկանյանի, Բաֆֆու, Հ. Պարոնյանի, Արփ. Արփիարյանի, Ղ. Աղայանի, Գ. Չիլինկիրյանի, Մ. Մամուրյանի երկերում և հրապարակախոսական աշխատություններում։ Դրանց գլխավոր ներկայացուցիչը Բաֆֆին էր[2]։ Ըստ հեղինակների մինչիմպերիալիստական դարաշրջանում առաջադիմական էր ոչ միայն դեմոկրատիզմը որպես հասարակական-քաղաքական հոսանք, այլև լիբերալիզմը, իսկ ճնշված ազգերի մոտ, որպիսին էր հայ ժողովուրդը, համադեմոկրատական միտում ուներ նաև նացիոնալիզմը, որպես ազգային ինքնագիտակցության ազդակ[3]։ Հայ դեմոկրատական մտավորականության գլխավոր մտահոգությունը ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության հարցն էր, բայց քանի որ արևմտահայությունը համեմատաբար ծանր պայմաններում էր ապրում, ուստի նա ավելի էր մտահոգված արևմտահայ հատվածի ազգային ազատագրության հարցով։ Հեղինակների կարծիքով, 1870—1880-ական թվականների արևելահայ դեմոկրրատական հոսանքի առաջատարները նարոդնիկներն էին, առաջավոր մտավորականությունը, հատկապես ուսանող երիտասարդությունը։ Ճիշտ է նրանց այն հետևությունը, որ Անդրկովկասի տարաստիճան մտավորականության ներկայացուցիչները, ռուս ժողովրդի զավակների հետ գործելով նարոդնիկական խմբակներում, պայքարում էին այն նույն խնդիրների կենսագործման համար, ինչ ամբողջ Ռուսաստանի հասարակական զարգացման հիմնական ուղղությունն էր պայքարում հանուն բուրժուադեմոկրատական հեղափոխության, ագրարային հարցի լուծման։ «Բայց ի տարբերություն Ռուսաստանի, որի քաղաքական պայքարի հիմնական խնդիրը ագրարային հարցն էր, Անդրկովկասի նարոդնիկական խմբակներին մտահոգում էր նաև ազգային հարցը, ազգային-ազատագրական շարժումների ճակատագիրը»[4]։

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 166։

2 Տե՛ս նույն տեղը։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 166—167։

4 Նույն տեղը, էջ 172։

Հատորում խոսվում է հայ իրականության մեջ ստեղծված նարոդնիկական խմբակների, նրանց ծրագրերի ու գործունեության մասին, սակայն դժվար է համաձայնվել հեղինակների հետ, որոնք 1882 թ. Թիֆլիսում կազմակերպված խմբակը նարոդնիկական են համարում[1]։ Մեր կարծիքով, այն ոչ թե նարոդնիկական, այլ ազգային-դեմոկրատական, հայրենասիրական էր։ Նույնը կարելի է ասել Մոսկվայի հայ ուսանողների հիմնադրած «Հայրենասերների միության» մասին։ Այլ բան է, որ այդ խմբակների վրա ուժեղ էր նարոդնիկության ազդեցությունը։

Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորման, նրանց հետագա գործունեության մասին շատ պատմաբաններ, այլ հեղինակներ են գրել սկսած 1920-ական թվականներից։ Սակայն հարկ է նշել, որ ինչպես հայ քաղաքական մյուս կուսակցությունների, հատկապես հայ իրականության մեջ ամենաազդեցիկ կուսակցության՝ դաշնակցության մասին եղել են հակասական, սկզբունքորեն իրարամերժ կարծիքներ, որոնք այսօր էլ շարունակվում են։

Հայտնի է, որ 1920-ական թվականներին սուր բանավեճ սկսվեց դաշնակցության սոցիալական էության հարցում։ Աշ. Հովհաննիսյանը իր մի քանի աշխատություններում պնդում էր, որ դաշնակցությունը մանրբուրժուական կուսակցություն է[2]։ Այս տեսակետի դեմ հանդես եկան Արտ. Կարինյանը, Հ. Ազատյանը, Հ. Եկավյանը, Թ. Մանդալյանը, Գ. Վանանդեցին, Գ. Աբովը և ուրիշներ, պնդելով, որ դաշնակցությունը հայ խոշոր բուրժուազիայի մարտական կուսակցությունն է եղել։

Դեռ ավելին, 1930-ական թվականների սկզբներին խորհրդահայ երիտասարդ պատմաբաններից մեկը նրան բնութագրել է որպես ֆաշիստական կուսակցություն, ըստ որում՝ իր հիմնադրման օրից սկսած։ «Դաշնակցությունը որպես հայ բուրժուազիայի ֆաշիստական կուսակցություն,— գրել է նա,— իր իսկական դեմքով և էությամբ հանդես է եկել ու գործել իր գոյության գրեթե քառասունամյա ողջ պատմության շրջանում, սկսած դեռևս

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 179։

2 Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը, «Նորք», գիրք երրորդ, 1923, Դաշնակցության սոցիալական ծագումը, նույն տեղը, գիրք առաջին, 1927, Դաշնակցության առիթով, Մոսկվա, 1929։



իր՝ որպես կուսակցություն, կազմակերպման առաջին իսկ օրերից»[1]։

Հիշմարտության դեմ չմեղանչելու համար ասենք, որ դաշնակցությունը ֆաշիստական անվանելը հիշյալ պատմաբանի նախաձեռնությունը չի եղել, այլ նա հիմք է ընդունել ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1928 թ. նոյեմբերյան պլենումի բանաձևը, որի մեջ ասված է հետևյալը. «Դաշնակցությունը եղել է և է հայ բուրժուազիայի իղձերի ու ձգտումների արտահայտիչն ու մարտական կուսակցությունը։ Նա կատարել է և կատարում է համաշխարհային իմպերիալիզմին սպասավորելու ամենաստոր պաշտոնը։ Դաշնակիզմը բուրժուական ազգայնական-շովինիստական-հակահեղափոխական իդեոլոգիան է։ Նա հայ իրականության ֆաշիզմն է»[2]։ Սակայն, ինչպես տեսանք, բանաձևում չի ասվում, թե դաշնակցությունը ֆաշիստական կուսակցություն է եղել իր սկզբնավորման օրից, այսինքն՝ 1890 թվականից, երբ դեռևս ֆաշիզմն էլ չկար։ Մի՞թե կարելի է անցյալ դարավերջին կյանքի թելադրանքով ստեղծված և իրեն հայ ժողովրդի ազատագրական պայքարին նվիրած կուսակցությունը ֆաշիստական անվանել։ Չէ՞ որ դա բացարձակ աբսուրդ է։

Շուրջ չորս տասնամյակ լռությունից հետո, 1960-ական թվականների սկզբին, նորից արծարծվեց դաշնակցության սոցիալական ծագման հարցը։ Մի քանի պատմաբաններ առաջ քաշեցին 1920-ական թվականներին մերժված այն տեսակետը, թե դաշնակցությունը մանրբուրժուական կուսակցություն է[3]։

Այժմ համառոտակի շարադրենք հայկական քաղաքական կուսակցությունների մասին խորհրդահայ պատմաբանների կարծիքները վերջին քսանհինգամյակում։

1 Մ. Ներսիսյան, Դաշնակցական «դրախտավայրը կամ սովի ու մահվան ափարհը», Եր., 1932, էջ 1։

2 Ա. Խանջյան, Մեր իդեոլոգիական պայքարի հիմնական խնդիրները, Եր., 1933, էջ 23։

3 Տե՛ս Գ. Հարությունովի և Ս. Պոսենյանի հոդվածը «Вопросы истории» ամսագրում (1963, № 3), Լ. Խուրշուդյանի դոկտորական դիսերտացիայի ավտոռեֆերատը, էջ 18։ Տե՛ս նաև Ռ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Պարիզի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, էջ 9, Ա. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, էջ 267, Վ. Միքայելյան, Զրիմի հայկական գաղութի պատմությունը, հ. II, էջ 260։

Հայ քաղաքական կուսակցությունների ծրագրերն ու գործելակերպը՝ կապված արևմտահայերի XIX դարավերջի ազատագրության հարցի հետ, հանգամանորեն քննում է նաև Հ. Վարդանյանը։ Նա փաստալից տվյալների հիման վրա առանձին-առանձին բնութագրում է այդ կուսակցությունների գործունեությունը նշված ժամանակահատվածում։ Նա բարձր է գնահատում արմենականների օրգան «Արմենիա» թերթը, գտնելով, որ այն նշանակալից դեր է խաղացել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության պրոպագանդման, հայերի ինքնագիտակցության բարձրացման և սուլթանական կառավարության հարձակումների դեմ նրանց ինքնապաշտպանության կազմակերպման գործում։ Խոսելով Մ. Փորթուգալյանի գործունեության մասին, նա գրում է. «Մ. Փորթուգալյանը հանդիսացել է արևմտահայ ազատագրական պայքարի լավագույն գաղափարախոսներից մեկը»[1]։

Վերլուծելով «Վարդապետարանի» հիմնական դրույթները, Հ. Վարդանյանը հատկապես ընդգծում է այն միտքը, որ «Վարդապետարանը» հայերի ազգային-ազատագրական պայքարի հարցում հենվում էր ժողովրդի ուժերի վրա, նա ազգի ազատագրության հույսը հիմնականում կապում էր այդ ուժերի անձնուրաց ու հերոսական պայքարի հետ։

Ներկայացնելով հնչակյան կուսակցության բնութագիրը, պատմաբանն այդ կուսակցությունը համարում է մանրբուրժուական, որի սոցիալական հիմքը գյուղացիությունն է եղել։ Խստորեն քննադատելով հնչակյան կուսակցությանը, գտնում է, որ նա վարում էր անարխիստական, դավադրական և տեռորի քաղաքականություն, նա հնչակյանների ծրագիրը համարում է անբովանդակ ֆրազ։ Նա մեղադրում է հնչակյաններին այն բանի համար, որ նրանք հույսը դնում էին նաև արևմտյան տերությունների, առաջին հերթին՝ Անգլիայի վրա, չհասկանալով եվրոպական դիվանագիտության շահամոլ բնույթը։

Աշխատության մեջ ավելի խիստ է քննադատված դաշնակցություն կուսակցությունը, նրա գործելակերպը։ Նրա քաղաքականությունը, գրում է Հ. Վարդանյանը, արկածախնդրական էր, միանգամայն կորստաբեր հայ ժողովրդի համար։ Դաշնակցությունը չհրաժարվեց սրի ու զենքի քաղաքականությունից, վնասակար էր նաև եվրոպական դիվանագիտությանը փարվելը։

Մի երկու դիտողություն։ Նախ, Հ. Վարդանյանը սխալվում է այդ կուսակցություններին ազգայնական անվանելով։ Պետք է որոշակի տարբերություն դնել ազգային և ազգայնական հասկացությունների միջև։ Ճիշտ չէ նաև նրա այն միտքը, թե «Հնչակյանները կոչվում էին սոցիալիստ-հեղափոխականներ»[1]։ Սոցիալիստ-հեղափոխականներ էսէռներն էին, իսկ հնչակյանները իրենց անվանում էին «սոցիալ-դեմոկրատներ»։ Մերժելի է նաև Հ. Վարդանյանի այն միտքը, թե «դաշնակցականները կովկասահայ ժողովրդի վզին էին փաթաթում արևմտահայ ժողովրդի ազատագրության հարցը»[2]։ Իսկ ինչո՞ւ է պատմաբանը կարծում, որ արևմտահայ ժողովրդի ազատագրության հարցը կովկասահայերի վզին փաթաթված հարց էր։ Ոչ, այն համազգային, համաժողովրդական հարց էր։

XIX դարի 90-ական թվականների հայ ազատագրական շարժումների նկատմամբ հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշմանն անդրադարձել է Ս. Մարկոսյանը՝ արևմտահայությանը նվիրված իր մենագրության մեջ[3]։ Նա քննադատում է հնչակյաններին և դաշնակցականներին, որոնք իրենց անհեռատես, ոչ ճիշտ գործողություններով առիթ էին տալիս Թուրքական կառավարությանը կազմակերպելու հայկական ջարդեր։ «Թուրքական կառավարությանը,— գրում է Ս. Մարկոսյանը,— անհրաժեշտ էին թեկուզ շնչին առիթներ՝ օրինական հիմք ստեղծելու հայերի բնաջնջման իր ճիվաղային քաղաքականությունն ու գործունեությունը Եվրոպայի աչքում արդարացնելու համար։ Հնչակյաններն այդ առիթը տալիս էին ոչ թե քաղաքական ապստամբություններ կազմակերպելով, այլ իրենց գրական հոխորտանքներով և երբեմն անիմաստ ու պրովոկացիայի համար նյութ ծառայող դավադրություններով»[4]։

Պատմաբանի կարծիքով, վերոհիշյալ հայ «հեղափոխականները», հռչակելով հեղափոխություն և ապստամբություն բառերը, ճիշտ չէին ըմբռնում, խեղաթյուրում էին այդ վեհ գաղա-

[1] Հ. Վարդանյան, Արևմտահայերի ազատագրության հարցը..., էջ 289։



[1] Հ. Վարդանյան, ն-վ. աշխ., էջ 296։

[2] Նույն տեղը, էջ 331։

[3] Տե՛ս Ս. Մարկոսյան, Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին, Եր., 1968։

[4] Նույն տեղը, էջ 192—193։

փարների բովանդակությունը։ Նրանք, գրում է Մարկոսյանը, հեղափոխությունն ու ապստամբությունը դիտում էին ոչ թե ժողովրդական զանգվածների ակտիվ շարժում ընդդեմ տիրող կարգերի, այլ մտավորականների դավադրական գործողություն, կտրված ժողովրդական զանգվածների պայքարից։ Նրանց հիմնական նպատակն էր տեռորիստական գործողությունների միջոցով ստիպել եվրոպական դիվանագիտությանը զբաղվելու Հայկական հարցով։ Դա էլ, շարունակում է նա, նրանք անվանում էին հեղափոխություն և ապստամբություն։ Բայց իրականում դա որևէ առնչություն չուներ ոչ հեղափոխության, ոչ էլ ապստամբության հետ։ Այդ բառերը չափազանց շատ էին հրոչակվում ինչպես «Հնչակի», այնպես էլ «Դրոշակի» էջերում։ «Դավադրական ելույթները,— գրում է Ս. Մարկոսյանը,— առանց մասսաների հեղափոխական կազմակերպման, դեռ ոչ մի երկրում և ոչ մի անգամ օգուտ չեն բերել ազատության համար մղվող պայքարում, բացի վնասից։ Իսկ Թուրքական պայմաններում, երբ հայերի ազատագրական իղձերի դեմ կանգնած էին՝ սկսած եվրոպական ֆինանսական կապիտալից, սուլթանիզմից, արևելյան տիպի ֆեոդալական հարաբերություններից մինչև քրդական քոչվորական ֆեոդալիզմը, դավադրական «հեղափոխությունը» կարող էր միայն կործանարար ազդեցություն ունենալ հայ աշխատավոր գյուղացիության համար, չբերելով որևէ օգուտ հայ ժողովրդի ազատագրական տենչանքին»[1]։

Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորման հարցին անդրադարձել է Վ. Պարսամյանը «Հայ ժողովրդի պատմության» մեջ։ Այստեղ նա համառոտակիորեն խոսում է հայ քաղաքական կուսակցությունների ոչ միայն ձևավորման, այլև նրանց ծրագրերի ու գործելակերպի մասին։ Վերլուծելով արմենականների ծրագիրը, որ կոչվում էր «Վարդ-պետարան Հայաստանի ազատության», ցույց է տվել այդ կուսակցության նպատակներն ու խնդիրները։ Նրանց ծրագրի հիմքում, գրում է Վ. Պարսամյանը, ընկած էր Հայաստանի ազատության և անկախության գաղափարը։ Նրանց նպատակն էր Հայաստանն ազատագրել օտար բռնակալների լծից և ստեղծել բուրժուադեմոկրատական կարգեր։ Վ. Պարսամյանը միաժամանակ մատնանշում է այդ կուսակցության ծրագրի և գործելակերպի խոցելի կողմերը։ «Բայց նրանց

[1] Ս. Մարկոսյան. Նշվ. աշխ., էջ 257—258։



ծրագիրը,— շարունակում է հեղինակը,— տակավին շատ հեղհեղուկ էր, հստակ պատկերացում չունեին ոչ միայն ապագա ազատագրված Հայաստանի սոցիալական ու քաղաքական հարաբերությունների, այլև նրա ազատագրման ուղիների մասին»[1]։ Պատմաբանը բացահայտում է նաև այն հակասությունը, որ կար արմենականների ծրագրում։ Չէ՞ որ նրանք մի կողմից կանգնած էին Հայաստանը զենքով ազատագրելու դիրքերում, իսկ մյուս կողմից գտնում էին, թե դա կարելի է անել մեծ տերությունների օգնությամբ, նույնիսկ փողով։ Նրա կարծիքով, արմենականների կուսակցությունը ազգային-ազատագրական կազմակերպություն էր, որը արևմտահայ իրականության մեջ իր ժամանակի պատմական պայմաններում առաջադիմական դեր էր կատարում՝ արտահայտելով հայ բուրժուազիայի, գյուղացիության ու դեմոկրատական մյուս խավերի շահերը։

Անդրադառնալով Հնչակյան կուսակցության ձևավորմանը[2], Վ. Պարսամյանը գտնում է, որ հնչակյանները գտնվում էին մի կողմից մարքսիզմի (նկատի ունի Պլեխանովի և նրա խմբի հետ ունեցած կապերը), իսկ մյուս կողմից՝ մանրբուրժուական սոցիալիզմի ու նարոդնիկության ազդեցության տակ։ Նա վերլուծել է Հնչակյան կուսակցության ծրագիրը, ըստ որի գլխավոր մոտակա նպատակը Հայկական հարցի լուծումն էր, Արևմտյան Հայաստանի ազատագրումը։ Այդ նպատակին հասնելու միջոցը նրանք համարում էին հեղափոխությունը, զինված պայքարը։ Նա քննադատում է նրանց պայքարի ձևերը, որոնք սխալ էին և ցանկալի արդյունք տալ չէին կարող։ Գտնելով, որ հնչակյաններն այս կամ այն չափով պրոպագանդել են մարքսիզմը, Վ. Պարսամյանը սխալ է համարում այն հեղինակների կարծիքը, որոնք նրանց համարում են հակահեղափոխականներ, բուրժուական նացիոնալիստներ։ Հնչակյան կուսակցությունը, գրում է Վ. Պարսամյանը, իրականում եղել է մանրբուրժուական ազգային կուսակցություն։ Սոցիալիզմը նրանց համար եղել է հեռավոր ապագայի խնդիր։ 1896 թ. Լոնդոնի համաժողովում հնչակյանները պառակտվեցին, ստեղծվեց վերակազմյալ հնչակյանների կազմակերպությունը։ 1905 թվականից և Հոկտեմբերյան հեղա-

[1] **Парсамян В.**, История армянского народа (1801—1900 гг.), с. 317.

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 319—322։

փոխությունից հետո աշխատավորական, հեղափոխական տարրերը հնչակյաններից հեռացան և մտան կոմունիստական կուսակցության շարքերը։ Գրքում բնութագրված է դաշնակցություն կուսակցության ծագումն ու դասակարգային էությունը։ Դաշնակցություն կուսակցությունը, գրում է Պարսամյանը, հանդես եկավ հայ բուրժուական ազգի զարգացման և նրա գաղափարական ազդեցության տարածման շրջանում։ Նրա պարագլուխները արմենականների ու հնչակյանների նման հանդես եկան ազգային-ազատագրական դրոշով։ Նրանց գաղափարախոսական ու պրակտիկ գործունեության հիմքում հիմնականում ընկած էր ոչ թե սոցիալ-դասակարգային, այլ ազգային գաղափարը։ Նկարագրելով դաշնակցության պայքարի ձևերն ու մեթոդները՝ ցույցեր, արշավանքներ, զինված ելույթներ, տեռորիստական ակտեր և այլն, Պարսամյանը գտնում է, որ այդ կուսակցությունը իր ազգայնական քաղաքականությամբ մեծ վնասներ է հասցրել հայ ժողովրդի ազգային-ազատագրական և հեղափոխական պայքարին։

Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորման, նրանց ծրագրերի ու գործունեությանը վերաբերող հարցերը հանգամանորեն քննում է նաև Վ. Ավետիսյանը։ Խոսելով հնչակյան կուսակցության ձևավորման մասին, նա գրում է. «Հնչակյան կուսակցությունը կազմակերպվեց և զարգացավ երկու հիմքի վրա՝ սոցիալիստական և նացիոնալիստական, ընդ որում առաջինը լոկ տեսական նշանակություն ուներ, իսկ երկրորդը՝ գործնական»[1]։ Ցույց տալով հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման ուղղությամբ հնչակյան գործիչների կատարած աշխատանքը, միաժամանակ նկատում է թե՝ «Սրանով հանդերձ հնչակյան կուսակցությունը ոչ իր աշխարհայացքով, ոչ էլ գործնականում չդարձավ մարքսիստական։ Մարքսիզմը նա չընդունեց որպես գործողության ուղեցույց, այլ լոկ մի թեորիա, որը նա փորձում էր օգտագործել հայկական «ազգային հեղափոխությունը» «հիմնավորելու» և պրոպագանդելու համար»[2]։ Հայերի մասնակի ցույցերի ու ապստամբությունների միջոցով եվրոպական պետությունների միջամտությունը շահելու և Հայկական հարցը լուծելու հնչակյան կուսակցության տակտիկան ձախողվեց։ Չնայած դրան, գրում է Վ. Ավետիսյանը, այդ կուսակցությունը շարունակեց թմբկահարել իր գործելակերպը, նոր ապստամբության կոչեր անել և դարձյալ ազատագրման հարցը կապել եվրոպական իմպերիալիստական պետությունների միջամտությունների հետ։ Հնչակյանների նման վարքագիծը, շարունակում է նա, հայ ժողովրդի մեջ սին պատրանքներ էր սերմանում եվրոպական իմպերիալիստական գիշատիչ պետությունների ազատարար դերի մասին, դրդում նրան անխոհեմ, Թուրքիայի մյուս ժողովուրդներից մեկուսացած, ցաքուցրիվ ելույթների, որոնք որպես պատրվակ օգտագործում էր սուլթանական արյունռուշտ ռեժիմը հայերին անխնա բնաջնջելու ու կոտորելու[1]։

Վ. Ավետիսյանը հանդիմանում է հնչակյան կուսակցության ինչպես անցյալի, այնպես էլ ժամանակակից տեսաբաններին, որոնք պնդում են, թե, իբր, հայ իրականության մեջ մարքսիզմի առաջին տարածողներն իրենք են եղել։ Հայտնի է, գրում է պատմաբանը, որ ռուսական իրականության մեջ ևս ռուս նարոդնիկները դեռ մարքսիստներից առաջ թարգմանել և տարածել էին Մարքսի ու Էնգելսի որոշ երկեր, դրականորեն արտահայտվել Մարքսի և Էնգելսի մասին։ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստն» առաջին անգամ 1869 թ. Բակունինն է թարգմանել ռուսերեն, որը բնավ մարքսիստ չէր։ «Կապիտալը» թարգմանել է նարոդնիկ Նիկ-ոնը։ Բայց ոչ ոք ռուսական իրականության մեջ նարոդնիկներին չի հայտարարել մարքսիստներ կամ մարքսիզմի տարածողներ[2]։

Անդրադառնալով դաշնակցությանը, Վ. Ավետիսյանը գրում է, որ չնայած գոյություն ունեցող երանգներին, դաշնակցության հիմնադիրներն իրենց գաղափարախոսությամբ նույն մշակականներն էին։ Դաշնակցությունը մերժում էր դասակարգային պայքարը, իր երևան գալու առաջին իսկ օրերից դաշինք էր հաստատել հայ բուրժուազիայի, հայ հոգևորականության և օտարերկրյա կապիտալի հետ։ Հեղինակը դատապարտում է Հայկական հարցի լուծման գործում դաշնակցության քաղաքականությունը, այն համարում է արկածախնդրական։

Վ. Ավետիսյանը համառոտակիորեն քննում է նաև դաշնակցության դասակարգային էության հարցը, մեջբերումներ կա-

1 Վ. Ավետիսյան, նշ. աշխ., էջ 130։

2 Նույն տեղը, էջ 176։

1 Տե՛ս Վ. Ավետիսյան, նշ. աշխ., էջ 180։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 186։

տարբելով հայ մարքսիստներից։ Սակայն որոշակիորեն ոչինչ չի ասում՝ դաշնակցությունը բուրժուական, թե՞ մանրբուրժուական կուսակցություն էր։ Նա միայն նշում է, որ դաշնակցության կազմը, լինելով խայտաբղետ, մեծ մասամբ մանրբուրժուական էր[1]։ Մի այլ տեղ նա գրում է. «Մարքսիստ-լենինյանները, երբ խոսել են դաշնակցության մասին որպես մանրբուրժուական կուսակցության, նկատի են ունեցել գլխավորապես նրա կազմը, մանրբուրժուական տարրերի գերակշռությունը նրա շարքերում»[2]։ Քննադատելով դաշնակցությանը, հեղինակը, երբեմն խտացնելով գույները, ծայրահեղության մեջ է ընկնում։ Այսպես, նա դաշնակցությունը համարում է հայկական ֆաշիզմ[3], դաշնակցականներին անվանում բաշիբոզուկներ, ենիչերիներ կամ՝ հայոց ազգային բռնակալություն իր միլիտարիզմով և այլն։

Ի դեպ, դաշնակցության մասին խորհրդահայ շատ պատմաբաններ են գրել, բայց դրանցից միայն երկուսն են դաշնակցությանը ֆաշիստական անվանել՝ Մ. Ներսիսյանը 1930-ական թվականներին և Վ. Ավետիսյանը՝ 1960-ական թվականներին։

Բ. Օհանջանյանը ևս ընկնելով ծայրահեղության մեջ, դաշնակցության գործունեության մեջ չտեսնելով ոչ մի էվոլյուցիա, գրել է, թե «դաշնակցության ամբողջ պատմությունը այդ կուսակցության ձևավորման սկզբից մինչև այսօր ժողովրդի շահերին դավաճանելու քաղաքականության քստմնելի պատմություն է»[5]։

Բանն այն է, որ մի շարք պատմաբաններ ևս անտեսում են այն հայտնի ճշմարտությունը, որ հայ քաղաքական կուսակցությունները, ինչպես և ամեն մի պատմական երևույթ, էվոլյուցիա են ապրել, հետևաբար դրանց գնահատականները տալիս պետք է հանդես բերել պատմական մոտեցում։ Վ. Ի. Լենինը հիշեցնում էր, որ «... հարցին գիտականորեն մոտենալու առումով ամենակարևորն է՝ չմոռանալ հիմնական պատմական կապը, յուրաքանչյուր հարցին նայել այն տեսակետից, թե տվյալ որոշակի երևույթը պատմության մեջ ինչպես է ծագել, իր զարգացման ընթացքում ինչպիսի գլխավոր փուլեր է անցել այդ երևույթը և դրա զարգացման տեսակետից նայել, թե տվյալ բանն ինչ է դարձել այժմ»[1]։

Դաշնակցության հասցեին զանազան պիտակներով լի են նաև Բ. Օհանջանյանի աշխատությունները՝ ենիչերիներ, բաշիբոզուկներ, շաղատաններ, գյադաներ, ոչնչություն և այլն[2]։ Կարծում ենք, որ գիտապատմական գրականության մեջ նման մոտեցումը դատապարտելի է[3]։ Դժվար է համաձայնվել Բ. Օհանջանյանի այն կարծիքին, թե դաշնակցություն կուսակցության հիմնադիրները՝ Ք. Միքայելյանը, Ս. Զավարյանը և Ս. Զորյանը բուրժուական մտավորականության ներկայացուցիչներն էին[4]։ Մեր կարծիքով, նրանք ազգային-դեմոկրատական մտավորականության ներկայացուցիչներն էին։ Համոզիչ չէ նրա այն պնդումը, թե «Արևմտյան Հայաստանի ազատագրման ծրագրի առաջադրմամբ կովկասահայ բուրժուազիան և նրա կուսակցությունը փորձեցին մի գնդակով երկու նապաստակ որսալ. նախ՝ հեղափոխական շարժումներից հեռու պահել հայ պրոլետարիատին ու մանրբուրժուական խավերին, երկրորդ՝ դասակարգային գիտակցության փոխարեն նրանց մեջ սերմանել նացիոնալիստական գաղափարախոսություն»[5]։

Աշ. Հովհաննիսյանը և Ծ. Աղայանը անդրադառնալով հայ քաղաքական կուսակցությունների ձևավորման հարցին, ցույց տալով դրանց հանդես գալու նախադրյալները, գտնում են, որ արմենականները հանդես գալով որպես հայ ազգային-ազատագրական պայքարի ջատագով, չդարձան կազմակերպված, կուռ կուսակցություն։ Հեղինակները առաջին հայ քաղաքական կուսակցությունը համարում են հնչակյանը[6]։ Ի դեպ, հնչակյան կու-

---

1 Տե՛ս Վ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 194։

2 Նույն տեղը, էջ 205։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 217։

4 Տե՛ս նույն տեղը, էջ 201։

5 Բ. Օհանջանյան, Տեսական մարքսիզմի ծանր հրետանին, Եր., 1970, էջ 137։



1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 39, էջ 83։

2 Տե՛ս Բ. Օհանջանյան, Դաշնակցությունն առանց դիմակի, «Հայաստան», Երևան, 1980, էջ 60, 62։

3 Պետք է նշել, որ նույն տգեղ երևույթը առկա է նաև դաշնակցական պատմագիրների մոտ։ Օրինակ, Ս. Վրացյանի «Հայաստանի հանրապետությունը» աշխատության մեջ հաճախակի կարելի է հանդիպել բոլշևիկների հասցեին զանազան վիրավորական արտահայտությունների՝ բարբարոսներ, դահիճներ, մարդասպաններ, գազաններ, չարագործներ, XX դարի հոներ, զավթիչներ, ազգուրացներ, պրովոկատորներ, բոլշևիկյան լուծ և այլն։

4 Տե՛ս նույն տեղը, էջ 9։

5 Նույն տեղը, էջ 11։

6 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 188։

սակցությունը հայ առաջին քաղաքական կուսակցություն է համարվել նաև Ս. Աղայանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից» գրքում[1]։ Սակայն դժվար է անվերապահորեն համաձայնվել այդ կարծիքին, քանի որ արմենականները մշակել էին արևմտահայությանը Թուրքական բռնապետության լծից ազատագրելու իրենց ծրագիրն ու գործելակերպը։ Արմենականներին կուսակցություն չեն համարում նաև ուրիշ պատմաբաններ[2]։ Մեր կարծիքով, ավելի ճիշտ է արմենականներին համարել ոչ մասսայական, կուռ կուսակցություն։ Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ արմենականները, որպես կուսակցություն, շարունակում էին գործել նաև հետագայում՝ բայց արդեն այլ անուններով։ 1908 թ. արևմտահայության միջավայրում, արմենականների կուսակցության հիմքի վրա ձևավորվեց մի կազմակերպություն, որը հայտնի է «Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն» անունով, իսկ 1921-ին այն վերակազմվեց որպես ռամկավար-ազատական կուսակցություն։

Հեղինակները քննադատել են հնչակյան կուսակցության ծրագրային դրույթները և գործելակերպը։ Նրանք գտնում են, որ հնչակյանների նարոդնիկական ուտոպիական սոցիալիզմը ընդհանուր ոչինչ չուներ մարքսիզմի հետ, քանի որ նրանք ամբողջովին ընդունում էին նարոդնիկ-անարխիստների բակունինյան պայքարի միջոցները, բունտարարությունը, տեռորը[3]։ Նրանց կարծիքով, հնչակյան կուսակցության գործելակերպը վնասակար էր հայ ժողովրդի սոցիալական և ազգային-ազատագրական պայքարի համար։

Չի կարելի չնկատել, որ հեղինակներն ամբողջապես անտեսել են նրանց կատարած գրական աշխատանքը հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման, մարքսիստական գրականության թարգմանության ու հրատարակության ուղղությամբ։ Կարծում ենք, որ հնչակյանների գործունեության գնահատման հարցում հանդես բերված խիստ բացասական և միակողմանի մոտեցումը հակասում է պատմության օբյեկտիվ լուսաբանման սկզբունքներին։

Դաշնակցությունը բնութագրված է որպես բուրժուաազգայնական կուսակցություն, որը հանդես եկավ որպես բուրժուազիայի ազգային շահերի պաշտպան։ Հայ բուրժուազիան և նրա կուսակցությունը ժողովրդական լայն զանգվածների աջակցությունն ստանալու համար իրենց հռչակեցին համազգային շահերի արտահայտիչներ։ Հեղինակները գտնում են, որ «դաշնակցությունը որդեգրեց լիբերալ նարոդնիկության գործելակերպը և հատկապես անարխիստական ամբոխավարությունն ու տեռորը»[1]։ Վերլուծելով դաշնակցության ծրագիրը և գործելակերպը, նրանք գտնում են, որ այն ճիշտ ուղի չէր հայ ժողովրդի ազատագրության համար։

Հեղինակների կարծիքով, դաշնակցությունը կազմակերպվել է ոչ միայն վերասերված նարոդնիկների ու լիբերալների համագործակցությամբ, այլև պահպանողականների աջակցությամբ։ Քննադատված է դաշնակցության ծրագրային այն դրույթը, ըստ որի Թուրքական լծից հայ ժողովրդի ազատագրումը հնարավոր է ոչ միայն սոսկ դիվանագիտական ճանապարհով, այլ նաև ապստամբության միջոցով։ Դաշնակցությունը սոցիալիստական գաղափարների թշնամի էր և մերժում էր Արևմտյան Հայաստանում այդ գաղափարների տարածումը։ Իբրև այդ հարցի ամփոփում, հատորում ասված է, որ դաշնակցությունը, ժխտելով դասակարգային պայքարը, ազգային-ազատագրման խնդիրը դիտում էր սոցիալական հեղափոխությունից անկախ։ Հայ ժողովրդի ազատագրման հարցը կապելով իմպերիալիստական տերությունների շարաբաստիկ միջամտության հետ, կիրառելով գործունեության արկածախնդրային ձևեր ու միջոցներ, հայերի պայքարն անջատելով ճնշված ժողովուրդների համընդհանուր պայքարից, դաշնակցությունը հայ ժողովրդին կանգնեցնում էր փակուղու առջև։ Նրա հրահրած անջատ ելույթները, Եվրոպայի հայանպաստ միջամտության ապարդյուն ակնկալությունները, հայկական ինքնավարություն ստեղծելու անհիմն հույսերը ոչ մի արդյունք չտվեցին, կազմալուծեցին հայ ժողովրդի ազատագրական պայքարը։ Իր գործունեությամբ դաշնակցությունը հայ բանվորներին և գյուղացիությանը շեղում էր հեղափոխական պայքարի ուղուց, ձախողում նրանց սոցիալական և ազգային-

---

1 Տե՛ս Ս. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, էջ 82։

2 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն (մեկհատորյակ), էջ 371։

3 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 191։



---

1 Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 194—195։

ազատագրական պայքարը, ամբողջովին արտահայտում բուրժուազիայի շահերը[1]։

«Հայ ժողովրդի պատմության» VI հատորում խստորեն քննադատված է հայ քաղաքական կուսակցությունների, մասնավորապես դաշնակցության, նաև հետագա գործունեությունը։ Խոսելով 1890-ական թվականների հայկական ջարդերի և մեծ տերությունների քաղաքականության մասին, Ծ. Աղայանը գրում է, որ, չնայած դառը փորձերին, հայ քաղաքական կուսակցությունները հայ ժողովրդի հույսը դարձյալ կապում էին մեծ տերությունների օգնության հետ։ «Այդ տեսակետից,— գրում է նա,— հատկապես վնասակար դեր էր խաղում դաշնակցությունը»[2]։

Ի դեպ, մեր աշխատության մեջ հաճախ ենք անդրադառնում խորհրդահայ պատմաբանների՝ դաշնակցությանը տրված խիստ բացասական գնահատականներին, որոնց հետ այսօր անվերապահորեն չի կարելի համաձայնվել։ Դրանք արմատական վերանայման կարիք ունեն։ Դա է պահանջում արդի կյանքը, պատմական ճշմարտությունը։ Իհարկե, դա բնավ չի նշանակում, թե մենք բացառում ենք դաշնակցության գաղափարաբանության և գործունեության խոցելի կողմերը, լուրջ սայթաքումները։

Տասնամյակներ հետո խորհրդահայ պատմագրության մեջ կրկին առաջ քաշվեց դաշնակցություն կուսակցության սոցիալական էության գնահատման հարցը։ Խոսքն, առաջին հերթին, վերաբերում է Լ. Խուրշուդյանի հոդվածին[3]։

Լ. Խուրշուդյանը գտնում է, որ Վ. Ի. Լենինը և Կովկասի հեղափոխական շարժման ղեկավարները՝ Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ալ. Մյասնիկյանը, Մ. Ցխակայան, Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Աշ. Հովհաննիսյանը և ուրիշներ, դաշնակցություն կուսակցության սոցիալական էությունը բնութագրել են որպես մանրբուրժուական։ Նման գնահատական տալու համար նրանք հիմք են ընդունել այդ կուսակցության ծրագիրը, սոցիալական կազմը և գործունեությունը։

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 198։

2 Նույն տեղը, էջ 279։

3 Տե՛ս Хуршудян Л., К вопросу о ленинской оценке социальной сущности партии Дашнакцутюн, «Вестник общественных наук», № 7, 1988, էջ 12—31։



Անդրադառնալով դաշնակցության սոցիալական էության առթիվ 1920-ական թվականներին տեղի ունեցած բանավեճին և ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1928 թ. նոյեմբերյան պլենումի հայտնի բանաձևին, նա հանգել է այն եզրակացության, որ այդ բանաձևը ամբողջապես հակասում է դաշնակցություն կուսակցությանը Վ. Ի. Լենինի և հայ լենինյանների տված գնահատականին[1]։ Փաստական տվյալների հիման վրա Լ. Խուրշուդյանը համոզիչ հիմնավորում է իր այդ տեսակետը։ Նա գտնում է, որ դաշնակցություն կուսակցության դասակարգային էության լենինյան գնահատականը անհատի պաշտամունքի և հետագա տարիներին խորհրդահայ պատմագրության մեջ վարչահրամայական մեթոդներով կեղծվել է։ Դեռ ավելին, շատերը հալածվել են լենինյան տեսակետը պաշտպանելու համար։

Լ. Խուրշուդյանը նշում է, որ եթե Մոսկվայում հրատարակվող պատմագիտական շատ ուսումնասիրություններում դաշնակցության սոցիալական էության գնահատականը տրվում է ըստ Վ. Ի. Լենինի, ապա այդ հարցը խորհրդահայ պատմագրության մեջ շարունակում է մնալ դեռևս փակ գոտում։ Ինչ խոսք, պատմագիտական և գաղափարախոսական տեսակետից այդ կարևոր հարցի շուրջ պետք է ծավալել լայն գիտավեճ։ Այս անգամ սկիզբը Լ. Խուրշուդյանն է դրել։ Մենք համամիտ ենք այն կարծիքին, որ դաշնակցությունը, անկախ նրա վարած քաղաքականությունից, իր սոցիալական ծագումով և դասակարգային էությամբ մանրբուրժուական կուսակցություն է, քանի որ նա գործել է հիմնականում գյուղացիության (Հայաստանը գյուղացիական երկիր էր) և մանրբուրժուական աշխատավորական այլ շերտերի միջավայրում, իր սոցիալական կազմը նույնպես մանրբուրժուական է եղել, այսինքն՝ կուսակցության մեջ գերակշռում էր մանրբուրժուական տարրը։ Բայց դա չի նշանակում, թե դաշնակցությունը արտահայտել է միայն մանր բուրժուազիայի շահերը։ 1920 թ. հետո նա սփյուռքում ծավալեց իր հակախորհրդային գործունեությունը, Խորհրդային Հայաստանի նկատմամբ բռնելով թշնամական դիրք (բացառությամբ վերջին տարիների)։

Այժմ կանգ առնենք մեկ այլ հարցի վրա։ Թուրքական բռնապետությունից հայ ժողովրդի ազատագրման մասին խոսելիս խորհրդահայ մի շարք պատմաբաններ իրենց աշխատություններ-

1 Տե՛ս Хуршудян Л. նշվ. աշխ., էջ 19։

*ռում անդրադարձել են Հ. Աթաբեկյանցին՝ 1895 թ. նոյեմբերի 23-ին Ֆ. Էնգելսի հղած պատասխանին։ Սակայն, ցավոք, այդ պատմաբաններից ոչ բոլորն են ստույգ ներկայացնում Էնգելսի նամակի բովանդակությունը, պարզապես աղավաղում են նրա խոսքերը։*

*Այսպես, Լ. Բայրամյանը իր աշխատության մեջ ցույց է տալիս, որ «ո՛չ իմպերիալիստական պետությունների քաղաքականության, ո՛չ էլ ազգայնական կուսակցությունների գործունեության, այլ, ինչպես մարգարեաբար նշել է Ֆ. Էնգելսը Հ. Աթաբեկյանցին գրած նամակում, օսմանյան բռնապետության տապալման և Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի մեջ էր հայ ժողովրդի փրկությունը»[1]։ Նախ ասենք, որ Ֆ. Էնգելսը վերոհիշյալ նամակում չի գրել, թե հայ ժողովրդի փրկությունը օսմանյան բռնապետության տապալման մեջ է և ոչ էլ՝ Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի մեջ։ Ի դեպ, աշխատության 281-րդ էջում Ֆ. Էնգելսից բերված քաղվածքը նույնպես աղավաղված է։ Երկրորդ անգամ գրելով, թե իրականացավ Ֆ. Էնգելսի մարգարեական կանխատեսումը, Լ. Բայրամյանը հետևյալ մեջբերումն է կատարում. «Հայ ժողովրդի ազատագրությունը կախված է ռուսական հեղափոխության հաջողությունից և ցարիզմի տապալումից» և տողատակին ցույց է տրված Մարքսի և Էնգելսի երկերի 39-րդ հատորի 270—271 էջերը, որտեղ այլ կերպ է գրված։ Այնտեղ ասված է. «Իմ անհատական անկեղծ կարծիքն այն է, որ Հայաստանի ազատագրությունը Թուրքերից, ինչպես և ռուսներից հնարավոր է միմիայն այն օրը, եթե տապալվի ռուսական ցարիզմը»[2]։*

*Ի դեպ, նման աղավաղում անզգուշորեն թույլ է տվել նաև մեր անվանի պատմաբաններից մեկը՝ Ա. Մնացականյանը։ «Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը» մենագրության մեջ նա նշել է, թե, իբր, Ֆ. Էնգելսը գրել է, որ «հայ ժողովրդի ազատագրումը ցարիզմի և սուլթանիզմի լծից հնարավոր կդառնա, երբ կտապալվեն միապետական կարգերը»[3]։*

1 Լ. Բայրամյան, *Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում*, էջ 5, 6։

2 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 39, с. 271.

3 Ա. Մնացականյան, *Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը*, Եր., 1963, էջ 30։



*Սակայն բանն այն է, որ Էնգելսը հայ ժողովրդի ազատագրումը տեսնում էր ոչ թե ցարիզմի և սուլթանիզմի տապալման, այլ միայն ցարիզմի տապալման մեջ։*

*Վերոհիշյալ հարցին խորհրդահայ պատմաբաններից առաջինն անդրադարձել է Աշ. Հովհաննիսյանը, որը մեծ ներդրում ունի հայ ազատագրական շարժման, նրա գաղափարախոսության գիտական հետազոտության բնագավառում։ Նրա գրչին են պատկանում բազմաթիվ արժեքավոր աշխատություններ։ Չնայած դրան, հարկ է նշել, որ մեծավաստակ պատմաբանը այդ հարցերում թույլ է տվել նաև սխալներ, որոնք գալիս են դեռևս 1920-ական թվականներից։*

*«Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում» մեր աշխատության մեջ անդրադառնալով «Էնգելսը և հայկական հարցը» գրքին, առարկելի ենք համարել նրա այն կարծիքը, թե իբր միայն ցարիզմի դեմ մղած հայերի ազգային-ազատագրական պայքարն է առաջադիմական։ Նա գրում է, թե հայ ազգային շարժումը «պատմականորեն անհաշտ բախման մեջ է գտնվել ցարիզմի անկման համար մղվող հեղափոխական պայքարի հետ»[1]։*

*Արևմտահայության ազգային-ազատագրական շարժման նկատմամբ նույն բացասական տեսակետը Աշ. Հովհաննիսյանը արտահայտեց նաև հետագայում։ Այսպես, օրինակ, մամուլում տպագրված իր հոդվածներից մեկում[2] նա հայ ազատագրական շարժումն անհիմն կերպով բաժանում է արևելահայ և արևմտահայ հատվածների։ Նա գտնում է, որ հայ ազգի տերիտորիալ բաժանվածության հետևանքով մենք ունեցել ենք ազգային-ազատագրական երկու շարժում։ Որովհետև իրերի պատմական բերումով մեր երկիրը բաժանվել է Թուրքիայի և Ռուսաստանի միջև, գրում է նա, որոնցից առաջինը հետամնաց, իսկ երկրորդը համեմատաբար զարգացած պետություն էր, այդ պատճառով էլ արևմտահայերի շարժումը կողմնորոշվեց դեպի Բեռլինի դաշնագրության 61-րդ հոդվածի հետ կապված ակնկալությունները և ավարտվեց 1915 թվականի հայկական եղեռնի ամբողջ ողբերգությամբ, իսկ արևելահայերի շարժումը լծորդվեց Ռուսաստանի բազմազգ բանվորների և գյուղացիների հեղափոխական շարժ-*

1 Ն. Հարությունյան, *նշվ. աշխ.*, էջ 301։

2 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1967, N 259։

ման հետ և լիակատար հաղթանակի հասավ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության շնորհիվ։ Այսպիսով, ըստ Աշ. Հովհաննիսյանի դուրս է գալիս, որ հայկական եղեռնի ողբերգությունը հետևանք էր արևմտահայերի ազատագրական շարժման։ Սա արմատական սխալ է։

Հենվելով Ֆ. Էնգելսի հայտնի դրույթին, թե թուրքերից և ռուսներից Հայաստանի ազատագրումը կարող է տեղի ունենալ միմիայն ռուսական ցարիզմի տապալման օրը, ինչպես նաև հիմք ընդունելով հայ մարքսիստներից (Ա. Ամիրյան և ուրիշներ) բերած որոշ քաղվածքներ, Հ. Վարդանյանը ևս գտնում է, որ արևմտահայության ազատագրության միակ հնարավոր ուղին ցարիզմի կործանումն էր։ Այդ տեսակետը հիմնավորելու համար նա իր մենագրության մեջ բազմաթիվ քաղվածքներ է բերում Ա. Ամիրյանի (Ա. Մռավյան) «Դաշնակցության կրիզիսը» գրքից, սակայն մենք դժվարանում ենք դրանք ճիշտ համարել։ Օրինակ, Ամիրյանը գրել է, թե «Տաճկահայաստանի ազատագրումը պետք է ձեռք բերվի ոչ այնքան Սասունի բանաստեղծական և գեղատեսիլ լեռների վրա, որքան Պետերբուրգի և Թիֆլիսի պրոլետարիկ փողոցների վրա»[1], կամ՝ դիմելով Անդրանիկին, Ամիրյանը կոչ է անում՝ մտեք «Ռուսաստանի մեծ հեղափոխության գոռ հորձանքների մեջ, այնտեղ կգտնեք դուք ազատությունը ձեր դժբախտ երկրի», կամ՝ կոչ անելով արևմտահայությանը, Ամիրյանը գրել է. «Ելեք փշրելու բռնապետական այն հսկա սպանդանոցը, որի անունն է ցարիզմ» և այլն։ Դուրս է գալիս, որ արևմտահայերը պետք է իրենց երկրից գնային Ռուսաստան, կռվեին ցարիզմի դեմ և հետո վերադառնային Արևմտյան Հայաստան սուլթանիզմի դեմ կռվելու համար։

Այսպիսով, ստացվում է այնպես, որ Էնգելսը և նրան հետևող վերոհիշյալ պատմաբանները գտնում են, որ հայ ժողովրդի ազատագրության համար հարկ չկար պայքարել թուրքական բռնապետության դեմ, քանի որ արևմտահայերի ազատագրության հարցը կախված էր բացառապես ցարիզմի տապալման հետ։ Այս կարծիքին չենք կարող համաձայնվել։

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Էնգելսի կանխագուշակումը ճիշտ դուրս եկավ միայն արևելահայության համար, իսկ արևմտահայությունը ոչ միայն չազատագրվեց

[1] Հ. Վարդանյան, *Արևմտահայերի ազատագրության հարցը...* էջ 275։



թուրքական լծից, այլև զանգվածաբար բնաջնջվեց, մնացածները զրկվեցին իրենց հողից, հայրենիքից։ Այս հայտնի իրողությունից հետո մի՞թե անհարկի չէ Լ. Բայրամյանի այն պնդումը, թե իբր իրականացավ Էնգելսի մարգարեական կանխատեսումը։ Այն էլ ավելացնենք, որ թուրքական լուծը շատ ավելի ծանր էր ու դաժան, քան ցարականը։

## 6. Արևմտահայերի ազատագրական շարժումները XIX դարի վերջերին և XX դարի արշալույսին

XIX դարի վերջերի և XX դարասկզբի հայ հասարակական-քաղաքական կյանքի մի շարք կարևոր հարցերի, այդ թվում արևմտահայերի ազատագրական շարժմանն անդրադարձել է Ծ. Աղայանը՝ «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից» մենագրության մեջ։ Այստեղ նա համառոտակի ներկայացնում է 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ և նրանից հետո ծավալված հայ ազատագրական շարժումների պատմությունը։ Արևմտահայության ազատագրական շարժումները, գրում է Ծ. Աղայանը, իրենց սոցիալ-դասակարգային բովանդակությամբ լինելով հակաստրկական և հակաֆեոդալական, դեմոկրատական բնույթ էին կրում, ունեին առաջադիմական նշանակություն[1]։

Նշելով, որ հայ ազատագրական շարժման համար ոգևորիչ էր Բալկանյան ժողովուրդների և հատկապես բուլղարների օրինակը, Ծ. Աղայանը միաժամանակ ցույց է տալիս դրանց մի շարք յուրահատկություններն ու տարբերությունները։ Նա գրտնում է, որ եթե բուլղարների պայքարը արժանանում էր շրջապատի սլավոն ժողովուրդների պաշտպանությանը, ազատագրական շարժումը կրում էր համաժողովրդական բնույթ, և որ նրանք անմիջական ռազմական օգնություն էին ստանում Ռուսաստանից, ապա հայկական շարժումը անհամեմատ աննպաստ պայմաններում էր գտնվում։ Հայերն ապրում էին թուրք և քուրդ բնակչությամբ շրջապատված, նրանց շարժումը համընդհանուր բնույթ չունեցավ և չարժանացավ շրջապատի մահմեդական հոծ

[1] Տե՛ս Ծ. Աղայան, նշվ. աշխ., էջ 82։

բնակչության պաշտպանությանը։ Բացասական դեր էր խաղում կրոնական մոլեռանդությունը։ Բուրժուազգայնական կուսակցությունների վարած քաղաքականությունը ևս արգելակում էր ճնշված ժողովուրդների միասնական ճակատ կազմելու գործը[1]։ Քանի որ Արևմտյան Հայաստանի աշխարհագրական, տնտեսական, ազգային, էթնիկական, կրոնական և դիվանագիտական պայմաններն ու հարաբերություններն այլ էին, քան Բալկաններում, հետևաբար հայ ժողովրդի ազատագրական պայքարը շպսակվեց հաջողությամբ[2]։

Անդրադառնալով 1890-ական թվականների հայկական ջարդերին, պատմաբանը հայերի ինքնապաշտպանական, հատկապես Սասունի հերոսամարտերի ֆոնի վրա վեր է հանում Անդրանիկի գործունեությունը։ Աշխատության մեջ քննվում են XX դարի սկզբին կատարված մի շարք անցքեր, որոնք անմիջականորեն կապված են հայ ժողովրդի պատմության հետ՝ հեղափոխական պայքարի ուժեղացումն Անդրկովկասում, երիտթուրքերի քաղաքականությունը հայերի նկատմամբ, Բալկանյան պատերազմները, Հայկական հարցը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և այլն։ Այս բոլոր հարցերի լուսաբանման առանցքը Անդրանիկի գործունեությունն է։

XIX դարի վերջի և XX դարի սկզբի արևմտահայերի ազատագրական պայքարի պատմությանն են նվիրված պատմական գիտությունների թեկնածու Կ. Թառոյանի երկու մենագրությունները[3]։ Թեև դրանք, ըստ էության, նախորդ հեղինակների աշխատությունների գրեթե կրկնությունն են, սակայն պարունակում են մի շարք նորություններ։ Նրա երկրորդ աշխատության մեջ ճշտորեն բացահայտված են արևմտահայերի ազատագրական պայքարի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատճառները, որոնք բխում էին սուլթանական կառավարության տնտեսական ու ազգային քաղաքականությունից։

Անդրադառնալով արևմտահայ գաղթականներին նյութական

1 Տե՛ս Ծ. Ադայան, նշվ. աշխ., էջ 91—92։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 11։

3 Տե՛ս Կ. Թառոյան, Ժողովրդական շարժումները Սասունում, Եր., 1968, Արևմտահայերի ազատագրական պայքարը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, Եր., 1980։



օգնություն ցույց տալու հարցին, նա նկատում է, որ Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ վայրերում հիմնավորված կաթոլիկ ու բողոքական միսիոներների, նրանց կազմակերպությունների օգնությունն անշահախնդիր չէր, որ այն կատարվում էր կրոնաքաղաքական նպատակներով, դավանափոխ լինելու պայմանով։ Միսիոներների օգնությունը, որքանով որ կարևոր նշանակություն ունեցավ որբ, անտուն, մահվան բերանն ընկած հայ մանուկների ու տառապյալների կյանքը փրկելու համար, այնուամենայնիվ, «դրանով նրանք օբյեկտիվորեն աջակցում էին սուլթանին ու նրա կառավարությանը, որովհետև արևմտահայ բնակչությանը բաժանում էին տարբեր, իրար թշնամի խմբերի, քայքայում էին վերջիններիս ուժերը և հեշտացնում թուրքական ջարդարարների կողմից նրանց ազատագրական շարժումների ճնշման գործը»[1]։

Արևմտահայերի ազատագրական շարժումները երիտթուրքերի իշխանության ժամանակաշրջանում լուսաբանված են Ա. Համբարյանի մենագրության մեջ[2]։ Հանգամանորեն վերլուծելով երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում, պատմաբանը անդրադարձել է այնպիսի հարցերի, որոնք համեմատաբար թույլ են լուսաբանվել խորհրդահայ պատմագրության մեջ։ Դրանք են՝ Արևմտյան Հայաստանի քաղաքային աշխատավորության ելույթները, գյուղացիական շարժումները, զինվորական հուզումները, հայ քաղաքական շրջանների դիրքորոշումը 1908—1914 թվականներին և այլն։ Լայն տեղ է տրված քրդերի, թուրքերի և ասորիների հասարակական-քաղաքական շարժումներին։ Որոշ չափով վեր է հանված Արևմտյան Հայաստանի ժողովուրդների համագործակցությունը։

Ա. Համբարյանը երիտթուրքերի տիրապետության ժամանակաշրջանի արևմտահայ ազգային-ազատագրական ու սոցիալական շարժումները դիտում է որպես անցյալում եղած շարժումների օրգանական շարունակություն։ «Եվ չէր կարող այլ կերպ լինել,— գրում է նա,— քանի որ 1908 թ. թեև Թուրքիայում կատարվել էր հեղաշրջում, կապիտալիստական հարաբերություն-

1 Կ. Թառոյան, Արևմտահայերի ազատագրական պայքարը... էջ 178։

2 Տե՛ս Ա. Համբարյան, Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908—1914), Եր., 1979։

ները XX դարի սկզբին, XIX դարի երկրորդ կեսի համեմատությամբ, որոշ չափով առաջադիմել էին, սակայն դեռ պահպանվել էին Թուրքական բռնապետությունն ու ֆեոդալական կարգերի տիրապետությունը»[1]։ Նա միաժամանակ գտնում է, որ արևմտահայության ազատագրական շարժումներն անցյալի համեմատությամբ, երիտթուրքերի կառավարման տարիներին ունեին որոշ տարբերություններ։ Այս շրջանում ավելի ակտիվ էին դրսևորվում քաղաքային բնակչության շարժումները, ավելի մարտական բնույթ էին կրում գյուղացիական հուզումները, աշխուժանում էին Արևմտյան Հայաստանի ժողովուրդների համագործակցության փորձերը։ Արևմտահայ բուրժուազիան ուներ ավելի շեշտված ռուսական կողմնորոշում, որը պայմանավորված էր 1913—1914 թթ. Հայկական հարցի վերաբացումով և այլն։ Ճիշտ նշելով, որ երիտթուրքերը արևմտահայերի ազատագրական շարժումները կանխելու, իրենց դիրքերը ամրապնդելու և հեղինակություն ձեռք բերելու համար սկզբում որոշ բարեփոխություններ կատարեցին Արևմտյան Հայաստանում, հեղինակը միաժամանակ ցույց է տալիս, որ նրանք, հասնելով իրենց նպատակին, դրսևորեցին իրենց իսկական դեմքը, հայահալած և հայաջինջ քաղաքականությունը։

Վերլուծված է հայ քաղաքական կուսակցությունների՝ դաշնակցականների, հնչակյանների, սահմանադրական-ռամկավարների, հայ լիբերալների և արևմտահայ դեմոկրատական մտավորականության առանձին ներկայացուցիչների, հատկապես՝ Գր. Զոհրապի հասարակական-քաղաքական դիրքորոշումը 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո։

Ա. Համբարյանը հանգում է այն հետևությանը, թե բուրժուազիան ու ֆեոդալական ղեկավար ուժերը անընդունակ են հաստատելու ազգերի հավասար համագործակցություն և իրենց վարքագծով աշխատավոր զանգվածներին ավելի շատ հեռացնում են իրարից, քան մերձեցնում։ «Հասարակական-քաղաքական միակ ուժը,— գրում է նա,— որ կարող էր կռել ու կոփել ազգերի իսկական համագործակցությունն ու եղբայրությունը, պրոլետարիատն էր ու նրա կուսակցությունը, որոնցից մեկը, սակայն, Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում պատմական կոնկրետ

[1] Ա. Համբարյան, նշվ. աշխ., էջ 7։



պատճառներով դեռ թույլ էր ձևավորված, իսկ մյուսը՝ չէր առաջացել»[1]։

Արևմտահայերի XX դարի սկզբի ազատագրական շարժումները քննվում են նաև «Հայ ժողովրդի պատմության» VI հատորում (հեղինակներ՝ Ն. Կարապետյան, Ա. Համբարյան)։ Շարադրելով այդ շարժումների պարտության պատճառները, հեղինակները հանգել են այն եզրակացության, որ հայ ազգային-ազատագրական պայքարը զրկված էր ընդհանուր ճակատ ստեղծելու հնարավորությունից, չուներ համազգային միասնական ղեկավարություն, ինքնապաշտպանության զորեղ միջոցներ։ Քաղաքական կուսակցությունների ու հոսանքների միջև համագործակցության ընդհանուր ծրագիր գոյություն չուներ[2]։ Թեև հաշվի էր առնվում Բալկանյան ժողովուրդների ազատագրության փորձը, այդ գործում, առաջին հերթին, Ռուսաստանի խաղացած դիվանագիտական և ռազմական դերը, բայց անտեսվում էր այն հանգամանքը, որ XX դարի սկզբին փոխվել էր միջազգային դրությունը և կատարվել էին քաղաքական ուժերի նոր տեղաշարժեր[3]։

Հատորում խոսվում է նաև հայ ազատագրական շարժման արձագանքների մասին։ Բնորոշ օրինակներ կան հայ ժողովրդի պաշտպանության օգտին միջազգային տարբեր համաժողովներում, պառլամենտներում Եվրոպայի սոցիալիստական կուսակցությունների շատ ականավոր ներկայացուցիչների ելույթներից։ Ընդգծված է 1905—1907 թթ. ռուսական հեղափոխության ազդեցությունը Եվրոպայի ու Ասիայի, այդ թվում Թուրքիայի հեղափոխական-ազատագրական պայքարի զարգացման վրա։

Այստեղ քննվում է նաև դարասկզբին ծավալված հայդուկային շարժման հարցը։ Պետք է ասել, որ այդ հարցին անդրադարձել են նաև պատմաբաններ Ծ. Աղայանը, Կ. Թառոյանը և ուրիշներ, որոնք բոլորն էլ դրական գնահատական են տվել հայդուկային շարժմանը։ Ն. Կարապետյանը գտնում է, որ հայդուկային կռիվները և ապստամբական բռնկումները, ինքնապաշտպանական մարտերը թեև չհանգեցրին օսմանյան լծից հայ ժողովրդի ազատագրությանը, բայց և այնպես արթնացրին ժո-

[1] Ա. Համբարյան, նշվ. աշխ., էջ 290։

[2] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 472։

[3] Տե՛ս նույն տեղը։

զովրդին։ Դա պայքար էր, առանց որի ոչ մի ժողովուրդ չի կարողացել ազատագրվել։ «Այդ շարժումների պատմական նշանակությունը նախ և առաջ այն է,— գրում է նա,— որ դրանք թույլ չտվեցին, որ հայերի իրավազուրկ վիճակը հանգեցնի ստրկամիտ հնազանդության և ժողովրդի մեջ միշտ վառ պահեցին ազատաբաղձ ոգին»[1]։

Արևմտահայության նկատմամբ երիտթուրքերի կեղծ ու ռեակցիոն քաղաքականությունը համակողմանիորեն բացահայտել է Ջ. Կիրակոսյանը[2]։

Փաստական հարուստ տվյալների հիման վրա նա ցույց է տվել, թե ինչ իրադրության մեջ հանդես եկան երիտթուրքերը, ինչ ռեակցիոն գաղափարախոսություն էին պաշտպանում ու ձգտում իրականացնել։ Գրքում զգալի տեղ է տրված նրանց և հայ քաղաքական կուսակցությունների միջև սկսված կապերին, որոնք աղետաբեր հետևանքներ ունեցան հայ ազատագրական շարժման համար հատկապես 1908—1814 թթ., մի ժամանակաշրջան, երբ նրանք իշխանության գլուխ էին կանգնել։

Ջ. Կիրակոսյանը մերկացնում է երիտթուրքերի այն պնդումը, թե, իբր, հայ և թուրքահպատակ մյուս ոչ թուրք ժողովուրդների ազատագրական շարժումները դիվանագիտական բանսարկությունների արդյունք են։ Սուլթանական լուծը թոթափելու հայերի ցանկությունը նրանք համարում էին անընդունելի։ Երիտթուրքերը ձգտում էին հայերի ազատագրական շարժումը ծառայեցնել իրենց նպատակներին, չեզոքացնելով նրանց ինքնուրույն նպատակադրումներն ու ձգտումները։ Որոշ իրադրությունների մեջ, գրում է հեղինակը, երիտթուրքերի ղեկավարները եվրոպական հասարակական կարծիքին դուր գալու համար կեղծում էին, հայերի համակիրներ ձևանում։

Երիտթուրքերի գաղափարախոսության սկզբունքներն են եղել օսմանիզմը, պանթուրքիզմը, նաև պանիսլամիզմը։ Ցույց տալով, որ դեռևս 1920-ական թվականներին խորհրդային արևելագիտության մեջ (Ի. Բուտաև, Գուրկո-Կրյաժին) տիրապետող տեսակետ էր թուրքական նացիոնալիզմի վերասերումը թուրք ազգի մեծապետական շովինիզմի՝ օսմանիզմի, որն օժտված

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 478։

[2] Տե՛ս Ջ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Եր., 1982։



էր իմպերիալիզմին հատուկ գծերով, Ջ. Կիրակոսյանը իրավացիորեն քննադատում է ժամանակակից այն հեղինակներին, ովքեր հանդես են բերում մարքսիզմ-լենինիզմին անհարիր մոտեցում, փորձելով մեղմել թուրքիզմը, նրան օժտել դրական գծերով, արդարացնել նրա շովինիստական սանձարձակ էությունը[1]։ Պատմաբանը համաձայն է նրանց հետ, ովքեր նացիզմը համեմատում են պանթուրքիզմի հետ, քանի որ երկուսն էլ առաջ են քաշում տիրող ռասայի գաղափարը, տեռոր կիրառելով բոլոր նրանց դեմ, ովքեր չեն պատկանում այդ ռասային[2]։ Աշխատության մեջ բացահայտված են նաև երիտթուրք-սիոնիստական առնչությունները, ցույց է տրված, որ Թուրքիայի հակահայկական քաղաքականության մեջ սիոնիստները որոշակի դեր էին խաղում. «Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին,— գրում է Ջ. Կիրակոսյանը,— պաշտպանելով երիտթուրքերի հայասպան քաղաքականությունը, սիոնիստների պարագլուխները ձգտում էին այդ ճանապարհով իրականացնել սեփական պլանները։ 1914—1916 թթ. առանձնապես ակտիվ էին գերմանական հրեաների ղեկավարները, որոնք փարվել էին կայզեր մերձավորարևելյան քաղաքականությանը»[3]։

Ջ. Կիրակոսյանը լուսաբանել է նաև հայ ազգային կուսակցությունների գործելակերպը երիտթուրքերի տիրապետության ժամանակաշրջանում։ Նա խստորեն քննադատում է դաշնակցության պարագլուխներին՝ երիտթուրքերի հետ համագործակցելու համար։ Պատմությունն ապացուցեց, գրում է նա, որ ԻԹԹիհատի հետ դաշնակցության համագործակցությունը անհեռատես, ազգավնաս գործելակերպ էր, որը նպաստեց թուրքական հայակործան քաղաքականության իրականացմանը[4]։ ԻԹԹիհատի նկատմամբ այլ դիրք բռնեց հնչակյան կուսակցությունը։ Նրա ղեկավարները հրաժարվեցին գործակցել երիտթուրքերի հետ և պատահական չէ, որ վերջիններս դաժան հաշվեհարդար տեսան հնչակյան ղեկավարների հետ։ Ջ. Կիրակոսյանը խստորեն քննադատում է դաշնակցական այն հեղինակներին (Կ. Սասունի և ուրիշներ), որոնք իրենց վարքագիծը մասամբ արդարացնելու

[1] Տե՛ս Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 218։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 228։

[3] Նույն տեղը, էջ 245։

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 336։

նպատակով, հետին թվով գրում են, թե, իբր իթթիհատի հետ դաշնակցության համագործակցությունը 1911-ի աշնանը արդեն խզված էր։ Նա գտնում է, որ այդ դաշինքը շարունակվեց մինչև 1913, նույնիսկ 1914 թվականը։

Մեր կարծիքով, այս տեսակետը, որը նույնպես արտահայտել են իրենց աշխատություններում ուրիշ պատմաբաններ (Հ. Վարդանյան, Վ. Ավետիսյան, Բ. Օհանջանյան) վերանայման և ճշգրտման կարիք ունի։

Հարցին պատմական մոտեցում ցուցաբերելու դեպքում պարզ կդառնա, որ դաշնակցությունը, որն իր առջև խնդիր էր դրել արևմտահայությանը ազատագրել արյունարբու սուլթան Աբդուլ Համիդի ծանր լծից, չէր կարող չմասնակցել դարասկզբին երիտթուրքերի գլխավորած հակասուլթանական ճակատին, թուրքական հեղափոխությանը։ Իսկ այդ հեղափոխությունը քանի որ մղվում էր միապետության դեմ, առաջադիմական էր։ Այլ բան է, որ երիտթուրքերը հետագայում դրժեցին հայերին տված իրենց խոստումները և 1909 թ. գարնանը կազմակերպեցին Ադանայի ջարդը, իսկ օգտվելով պատերազմական իրադրությունից՝ հայկական Մեծ եղեռնը։

Դաշնակցության աննեղելի սխալն այն էր, որ նա Ադանայի ջարդերից հետո, մինչև 1911 թվականը, շարունակում էր համագործակցությունը երիտթուրքերի հետ։ Ջ. Կիրակոսյանի այն պնդումը, թե այդ համագործակցությունը շարունակվեց մինչև 1913 և նույնիսկ 1914 թվականը, վերաբերում է ոչ թե ամբողջ կուսակցությանը, այլ նրա առանձին գործիչներին։

Հայ ժողովրդի XIX դարի և XX դարի սկզբի ազատագրական պայքարի հարցին է նվիրված Գ. Ղարիբջանյանի աշխատություններից մեկը[1]։ Նա ջերմ է արտահայտվում հայդուկային շարժման, նրա ականավոր ղեկավարների մասին։ Աշխատության մեջ քննվում է Աթաբեկյանցի նամակը Ֆ. Էնգելսին և վեջինիս պատասխանը, խոսվում է հայկական կոտորածների, աշխարհի առաջադեմ մարդկանց բողոքների մասին։

Գ. Ղարիբջանյանը ցույց է տալիս, որ 90-ական թվականներից մինչև 1920 թ. ազգային-ազատագրական շարժումները թևակոխում են նոր փուլ, սերտորեն կապվելով հեղափոխական շարժումների հետ։ Նա բացահայտում է 1905—1907 թթ. հեղափոխության և հայ ժողովրդի ազատագրական պայքարի առնչությունները։ Մենագրության էջերում այնուհետև վեր են հանվում հայ ժողովրդի ազատագրական պայքարի հետագա դրվագները։

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությանն ու թուրքական պատմագրության կեղծարարության մերկացմանը նվիրված աշխատությունների մեջ իր ուրույն տեղն ունի Ս. Պողոսյանի արժեքավոր մենագրությունը[1]։ Կառուցված լինելով փաստական հարուստ նյութերի հիման վրա, այն ունի բանավիճային բնույթ։ Ըստ որում, բանավեճը տեղի է ունենում ոչ թե խորհրդահայ պատմաբանների, այլ ինչպես թուրքական, այնպես էլ Արևմուտքի պատմաբանների, քաղաքական գործիչների, դիվանագետների և այլոց հետ։

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ Ս. Պողոսյանը երկար ժամանակ աշխատելով հայկական ռադիոյի և հեռուստատեսության կոմիտեում, հնարավորություն է ունեցել հետևել թուրքական ռադիոյի և հեռուստատեսության հաղորդումներին, և իր աշխատության համար լայնորեն և հմտորեն օգտագործել վերջին տարիների այն ձայնագրություններն ու տեսագրությունները, որոնք վերաբերվում են հայերին և Հայաստանին։ Հմտորեն օգտագործելով ավյալ պրոբլեմների լուսաբանման ասպարեզում խորհրդահայ պատմագրության նվաճումները, հեղինակը բնավ չի ընթացել տրորված ճանապարհով։ Աշխատությունն աչքի է ընկնում փաստերի ու մտքերի թարմությամբ, ուշագրավ ընդհանրացումներով։ Առկա են հեղինակի բանավիճելու մեծ կարողությունը և կուռ տրամաբանությունը։

Աշխատությունը բաղկացած է երկու հիմնական բաժիններից։ Առաջինում հանգամանորեն քննվում են Օսմանյան կայսրության հայահալած քաղաքականության սաստկացման, հայ ազատագրական գաղափարների տարածման ու ինքնապաշտպանական կռիվների պատմությունը, իսկ երկրորդում մերկացվում են հայերի ցեղասպանության պատմության կեղծարարները։

Հանրահայտ և նոր փաստերով մերկացված է Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների, առաջին հերթին՝ Անգլիայի, հակահայկական դիրքորոշումը։ Ցույց է տրվում այն գործարքը, որ կատարեցին նրանք Թուրքիայի հետ՝ ընդդեմ Ռու-

[1] Տե՛ս Գ. Ղարիբջանյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը XIX դարի վերջին և XX դարի սկզբին, Եր., 1986։

[1] Տե՛ս Ս. Պողոսյան, Գոյատևման պայքարի քառուղիներում, Եր., 1988։

սաստանի։ Դիպուկ է Ս. Պողոսյանի այն բնորոշումը, թե «Բեռլինում կատարվեց պատմության մեջ հազվադեպ հանդիպող մի երևույթ, երբ պատերազմող ազգերի աթոռները զբաղեցրել էին պատերազմին մասնակցություն չունեցած երկրների ներկայացուցիչները, որոնցից ոմանք, առանց մի կաթիլ արյուն թափելու, կարկանդակի ամենախոշոր պատառները ստացան»[1]։

Ճիշտ է Ս. Պողոսյանի այն եզրահանգումը, որ XIX դարի երկրորդ կեսին, մի կողմից Օսմանյան կայսրության ներքին ճգնաժամի, իսկ մյուս կողմից Մերձավոր արևելքում մեծ տերությունների գաղութատիրական, զավթողական քաղաքականության հետևանքով թուրքական տիրապետության տակ գտնվող ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդի համար սկսվեց սոցիալական և ազգային ճնշումների ու հալածանքների նոր ժամանակաշրջան՝ զուլումի տարիները։

Անդրադառնալով հայկական ջարդերի նախապատրաստման հարցին, Ս. Պողոսյանը շարադրում է անգլիական դիվանագետների խորհրդով «Համիդիե» հեծելազորային գնդերի կազմակերպման պատմությունը։ Աշխատության մեջ ճիշտ է տրված այն հարցի պատասխանը, թե ինչպես թուրքական կառավարությանը հաջողվեց քրդերին հրահրել հայերի դեմ։ Այդ հարցում հեղինակը իրավացիորեն գտնում է, որ կարևոր դեր խաղացին ոչ միայն մահմեդական մոլեռանդությունը և անպաշտպան քրիստոնյաներին թալանելու նրանց ընչաքաղցությունը, այլև այն հանգամանքը, որ սուլթանին հաջողվեց քրդերին համոզել այն գաղափարը, թե, իբր, նրանց բնօրրանը Հայաստանն է, որ հայերը եկվորներ են և ուզում են Քրդստանը Հայաստան դարձնել, որ քուրդ ժողովրդի գոյատևումը հնարավոր է միայն Հայկական բարձրավանդակում։

Ս. Պողոսյանի աշխատության մեջ լայն տեղ է հատկացված ֆիդայական շարժման պատմության լուսաբանությանը։ Թուրքական յաթաղանի դեմ հայ ժողովրդի ինքնապաշտպանական պայքարում առանձնահատուկ դեր են խաղացել հայդուկները։ Ս. Պողոսյանը իրավացիորեն դիպուկ բնորոշում է տվել «հայդուկ» հասկացությանը։ Հայդուկները, գրում է նա, ժողովրդի փրկության զոհասեղանին բարձրացած այն գյուղացիներն էին, որոնք, հրաժարվելով անձնական կյանքից, հեռացել էին տնից ու հարազատներից, Եղբայրացել սար ու քարի հետ, որպեսզի փրկեին մարդկանց, բարբարոսներին թույլ չտային անպատիժ սպանելու ու ոչնչացնելու հայերին։ Հայդուկային առաջին սակավաթիվ խմբերի հանդես գալը, նկատում է հեղինակը, մի կայծ էր, որից բռնկվեց ինքնապաշտպանական կռիվների հետագա հրդեհը։

Աշխատության մեջ առանձնակի քննության է առնվում հայ քաղաքական կուսակցությունների և ազգային-ազատագրական շարժման փոխհարաբերությունների հարցը։ Հեղինակի կարծիքով, ի տարբերություն հայ քաղաքական կուսակցությունների գլխավորած պայքարի, հայդուկային շարժումը դեռևս չուներ որոշակի հեռանկար նախատեսող քաղաքական ծրագիր։ Հայդուկները վրեժխնդիր էին լինում հայ ժողովրդին հասցված բազում վայրագությունների համար և իրենց գործունեությամբ վառ էին պահում նրա ազատատենչ ոգին։ Հայ քաղաքական կուսակցությունները, շարունակում է հեղինակը, մասնավորապես դաշնակցությունը, ամեն կերպ աշխատում էին իրենց ձեռքը վերցնել հայդուկային շարժման ղեկավարությունը, սակայն պայքարի նպատակների ու մեթոդների հարցում դաշնակցության ու հայդուկային շարժման միջև լուրջ տարաձայնություններ ու հակասություններ կային։ Նրանց և դաշնակցության միջև երբեմն բախումներ էին տեղի ունենում։ Բացի այդ, եթե հայդուկային կամ ֆիդայական շարժման համար բնորոշը պարտիզանական կռիվներն էին, ապա դաշնակցության համար՝ կազմակերպչական աշխատանքը՝ ապստամբության նախապատրաստումը, ինչպես նաև ցուցադրական կռիվներն ու ահաբեկչությունները։

Անդրադառնալով առանձին հայդուկների ու նրանց գլխավորած շարժման գնահատման հարցին, Ս. Պողոսյանը ճիշտ է նկատում, որ գոյություն ունեն երկու իրարամերժ կարծիքներ։ Ոմանք, և առաջին հերթին այդ շարժման մասնակիցներն ու ժամանակակիցների մի մասը, գերագնահատում են նրա դերը և գտնում, որ հայդուկային խմբերը ի վիճակի էին դեռ երկար ժամանակ մաքառելու և խոշընդոտելու կոտորածները։ Մյուսները, այդ թվում որոշ մասնագետ պատմաբաններ, նսեմացնում են, իսկ ոմանք նույնիսկ խեղաթյուրում են այդ շարժման նշանակությունը, նրան վարկաբեկիչ գնահատականներ տալիս և ձգտում են մեր ժողովրդի նոր շրջանի պատմությունից այն

[1] Ս. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 98։

«դուրս մղել», չնկատել[1]։ Ս. Պողոսյանը հանգամանորեն ներկայացնելով հայ ժողովրդի ազատագրական պայքարը, նորովի է ներկայացնում մի շարք պրոբլեմներ։

Ուշագրավ է Ս. Պողոսյանի այն միտքը, թե թուրքական պատմագրությունը հայերի ինքնապաշտպանական կռիվների և հայդուկային շարժման մեջ ճգնում է տեսնել միայն ազգային նպատակադրումներ, մինչդեռ այդ շարժումը ոչ միայն ազգային, այլև իր հիմքում նաև սոցիալական էր ու դասակարգային։ Այն գյուղացիական էր, նրա գլխավոր շարժիչ ուժը ազքատ ու միջակ գյուղացիությունն էր։ «Շարժումն ուղղված էր ոչ միայն թուրքական իշխանությունների հայաջինջ քաղաքականության, այլ նաև թուրք ու քուրդ բեգերի, շեյխերի, փաշաների, աղաների, հոգևոր ու աշխարհիկ մյուս ֆեոդալների ճնշումների, շահագործման ու հարստահարությունների դեմ»[2]։

Հանգամանորեն շարադրելով 1894 և 1904 թթ. իրադարձությունները, Ս. Պողոսյանը ճիշտ է նկատում, որ սխալ է հայագիտական որոշ աշխատություններում դրանք ապստամբություններ անվանելը, մանավանդ, առաջինը հնչակյանների, երկրորդը՝ դաշնակների ապստամբություններ։ Իրականում դրանք ոչ թե ապստամբություններ են եղել, այլ ինքնապաշտպանական կռիվներ։

XIX դարի վերջին տասնամյակների և XX դարի սկզբի հայ-թուրքական հասարակական-քաղաքական հարաբերությունների պատմության կնճռոտ, վիճահարույց մի շարք պրոբլեմների հետազոտությանն է նվիրված Մերի Քոչարի մենագրությունը[3]։

Հենվելով հայկական, ռուսական և թուրքական սկզբնաղբյուրների և հատկապես գրականության վրա, Մ. Քոչարը զարգացնում է այն ճիշտ կոնցեպցիան, թե ժամանակակից թուրք ռեակցիոն պատմաբանները, կաշվից դուրս գալով, կեղծում են մեր ժողովրդի նոր պատմությունը, նպատակ ունենալով արդարացնել ոչ միայն երիտթուրքերին, այլև արյունարբու Համիդին, հայերի ցեղասպանության մեղքը բարդելով ոչ թե ջարդարարների, այլ ջարդվողների վրա։ Հեղինակը թուրք պատմաբաննե-

[1] Տե՛ս Ս. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 196—197։

[2] Նույն տեղը, էջ 199—200։

[3] Տե՛ս Кочар М. Армяно-турецкие общественно-политические отношения и Армянский вопрос в конце XIX—начале XX веков. Е., 1988.



րից վկայակոչված քաղվածքներով ընթերցողին համոզում է, որ այդ վայ-պատմաբանները այսօր էլ փորձում են շեղել համաշխարհային հասարակայնության կարծիքը, ճգնելով ապացուցել, թե Արևմտյան Հայաստանը (նրանց հորջորջմամբ՝ Արևելյան Անատոլիան) ի սկզբանե եղել է թուրքական, և հայ ժողովուրդն իրավունք չունի այն համարելու իր պատմական հայրենիքը։ Այս տեսակետից ելնելով, հարկ է նշել, որ Մ. Քոչարի մենագրությունն ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական, արդիական նշանակություն։

Մենագրության մեջ հեղինակը ներկայացնում է Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական վիճակը հետազոտվող ժամանակահատվածում։ Ցույց է տրվում, որ երկրի վիճակը նախապայմաններ ստեղծեց կենտրոնական քաղաքներում (հատկապես՝ արտասահմանում) ձևավորելու թուրքական ազգայնական և հայկական ազգային-քաղաքական կուսակցություններ, որոնք Բարձրագույն Դռան հետ բանակցությունների մեջ էին և ձգտում էին սկզբում ռեֆորմներ պոկել նրանից։

Ցույց է տրվում նաև, որ հայ քաղաքական կուսակցությունները սուլթան Համիդի հետ բանակցություններից հուսախաբված, գերադասեցին դիմել պայքարի զինված մեթոդների և զարկ տվեցին ազգային-ազատագրական շարժմանը, ձգտելով դրան մասնակից դարձնել թուրք և քուրդ ժողովուրդներին։ 90-ականների հայկական ջարդերը հուսախաբ արեցին նրանց հույսերը։ Պայքարի միակ ու գերադասելի մեթոդը մնաց ապրստամբությունը, իհարկե, չբացառելով դրսի, մասնավորապես եվրոպական տերությունների օգնությունը։ Լայն տեղ է հատկացված երիտթուրքերի և հայ քաղաքական կուսակցությունների փոխհարաբերությունների պատմությանը ինչպես մինչև 1908 թ. թուրքական հեղափոխությունը, այնպես էլ դրանից հետո։ Մ. Քոչարը կարողանում է առավել հիմնավորել իր նախորդների զարգացրած այն կոնցեպցիան, թե հայ ժողովրդի նկատմամբ երիտթուրքերի վարած ազգային և ագրարային քաղաքականությունը ոչ միայն չէր տարբերվում Համիդի ջարդարարությունից, այլև նրա շարունակությունն էր ավելի խորամանկ ձևով։ Դրա վկայությունը Ադանայի 30 հազար անմեղ հայերի կոտորածն էր «հեղափոխական թուրքերի» ձեռքերով։

Աշխատության մեջ քննվում են Հայկական հարցի սկզբնավորման, նրա զարգացման, եվրոպական տերությունների և,

հատկապես, ցարական Ռուսաստանի դիրքորոշմանը վերաբերող հարցերը։ Այսպիսով, Մ. Քոչարի մենագրությունը բազմապլան է, շոշափում է շատ հարցեր, փորձում յուրովի պատասխան տալ դրանց, սակայն, ցավոք, այդ պրոբլեմները միշտ չէ որ ստանում են գիտական պատշաճ լուծում, համոզիչ պատասխաններ։

Աշխատության լուրջ թերություններից է այն, որ նրանում բացակայում է պատմագրական ակնարկը։ Հեղինակը բավարարվել է միայն աշխատության վերջում զետեղված 550 գրքերի ցանկով, մինչդեռ հարկավոր էր աշխատության սկզբնամասում տալ աղբյուրների ու գրականության տեսություն, որտեղ ցույց տրվեր և գնահատվեր այդ ծավալուն թեմայի գիտական հետազոտման բնագավառում իրենից առաջ պատմաբանների կատարած աշխատանքը։

Գրքում չափազանց քիչ տեղ է տրված արխիվային նյութերին։ Կան նաև փաստական սխալներ։ Նշենք դրանցից մի քանիսը միայն*։

## 7. Մարքսիզմի տարածումը հայ իրականության մեջ, հեղափոխական շարժումները Հայաստանում XIX դարի վերջին— XX դարի սկզբին

Հայ իրականության մեջ մարքսիզմի տարածումն ու Հայաստանում հեղափոխական շարժումների պատմությունը խորհրդա-

* Աշխատության մեջ գրված է Սան Ստեֆանոյի և Բեռլինի կոնգրեսներ (էջ 18), մինչդեռ Սան Ստեֆանոյում կոնգրես չի եղել, այլ այնտեղ միայն ստորագրվել է ռուս-թուրքական պայմանագիրը։ Աշխատության 35-րդ էջում ասված է, որ Զեյթունում ստեղծվեց հեղափոխական կառավարություն, կազմվեց 20 հոգուց բաղկացած հեղափոխական խորհուրդ և այլն, մինչդեռ հանրահայտ է, որ Զեյթունի շարժումը հեղափոխություն չէր, այլ համիդյան ջարդարարության դեմ ուղղված հերոսական ինքնապաշտպանություն։ Հեղինակի կարծիքով, 1907 թ. Վանում դաշնակցությունը գումարել է իր չորրորդ կոնգրեսը (էջ 131), մինչդեռ դա ոչ թե կոնգրես էր, այլ համագումար և այն գումարվել է ոչ թե Վանում, այլ Վիեննայում։ 1901 թ. լույս է տեսել նշանավոր ուղեգրող Անդրանիկի աշխատությունը, որը վերնագրված է «Տերսիմ»։ Գրքի գրականության ցանկի 223-րդ համարում գրված է Անդրանիկ Դերսիմ, Ճանապարհորդություններ և տեղեկություններ, Թիֆլիս, 1900։ Այստեղից ստացվում է, որ Անդրանիկը հեղինակի անունն է, իսկ Դերսիմը՝ ազգանունը և այդ գիրքը լույս է տեսել 1900 թվականին։ Այսպիսով, մեկ տողի մեջ հեղինակը թույլ է տվել փաստերի երեք սխալ։



հայ պատմագրության ուշադրության արժանացած թեմաներից է, որը սկիզբ է առել դեռևս 1920-ական թվականներից։ Այս գործում մեծ է Ե. Մելիք-Յոլչյանի, Գ. Ղարաջյանի, Թ. Ավդալբեկյանի, Ե. Խալեյանի, Վ. Ավետիսյանի, Խ. Բարսեղյանի, Լ. Աբրահամյանի, Ա. Մնացականյանի, Վ. Պարսամյանի, Մ. Աղայանի, Գ. Հարությունովի և ուրիշների կատարած աշխատանքը։

1960-ական թվականների կեսերից սկսած մատնանշված պրոբլեմի գիտական հետազոտության ուղղությամբ նոր քայլեր կատարվեցին։

Հայաստանում մարքսիզմի տարածման ամբողջական պատմությունը աղբյուրագիտական հարուստ հենքի վրա տվել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Բարսեղյանը[1]։ Վերոհիշյալ երկու գրքերը փոփոխություններով և լրացումներով հրատարակվել են նաև ռուսերեն[2]։

Առաջին գրքում լուսաբանված են հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման սոցիալ-տնտեսական և գաղափարական նախադրյալները։ Այստեղ հանգամանորեն ցույց են տրված արդյունաբերական հայ պրոլետարիատի ձևավորումը, բանվորական շարժման առաջին քայլերը։ Ռուսաստանի պրոլետարիատի դասակարգային պայքարի ֆոնի վրա քննարկվում են նարոդնիկության, «լեգալ մարքսիզմի», հայ հասարակական-քաղաքական հոսանքների ու կուսակցությունների գործունեության հետ կապված հարցերը։ Լայն տեղ է տրված հայ իրականության մեջ մարքսիզմի զարգացման լենինյան փուլի սկզբնաշրջանի պրոբլեմներին՝ մարքսիստական խմբակների, լենինյան իսկրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեությանը, մարքսիստական գրականության հրատարակմանը և Հայաստանում բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորման պատմությանը։

Ճիշտ է Խ. Բարսեղյանի այն միտքը, թե Հայաստանում և հայ իրականության մեջ հեղափոխական մարքսիզմի, գիտական կո-

[1] Տե՛ս Խ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին (1880-ական թթ.— 1904), Եր., 1967, նույնի՝ Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք երկրորդ։ Պայքար մարքս-լենինյան գաղափարների հաղթանակի համար (1905—1920), Եր., 1975։

[2] Տե՛ս Барсегян Х., История распространения марксизма-ленинизма в Армении (1880—1907 гг.), книга первая, Е., 1978, книга вторая (1907—1920 гг.), Е., 1981:

մունիզմի գաղափարների առաջին և հետևողական տարածողները եղել են լենինյանները, բոլշևիկյան կազմակերպությունները։ Ուշագրավ է նաև այն, որ Հայաստանում մարքսիզմի տարածում ասելով պատմաբանը հասկանում է ոչ միայն մարքսիստական գրականության հայերեն թարգմանությունը (ինչպես մինչև այդ էր ըմբռնվել), այլև հայ հասարակական մտքի մարքս-լենինյան փուլը, ուտոպիական ու մանրբուրժուական սոցիալիզմի, բուրժուական գաղափարախոսության դեմ հայ լենինյանների մղած պայքարը, մարքսիստական տեսության հարցերի զարգացումն ու պրոպագանդան, սոցիալիզմի միացումը բանվորական շարժմանը, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջացումը, բանվորական հեղափոխական և ագրարային շարժումների ծավալումը և բազմաթիվ այլ հարցեր[1]։

Խ. Բարսեղյանը գտնում է, որ Հայաստանում մարքսիզմի տարածումը, բացի ընդհանուր օրինաչափություններից, ունեցել է նաև իր առանձնահատկությունները, որոնք կապված են հայ ժողովրդի երկու հատվածների՝ արևելահայ և արևմտահայ աշխատավոր զանգվածների հասարակական զարգացման հետ։ Հարկ է նշել, որ նա, ինչպես ինքն է գրում, ոչ թե գունազարդել, հաղթարշավի է վերածել հայ իրականության մեջ մարքսիզմի տարածումը, որը կլիներ պատմության խեղաթյուրում, այլ բացահայտել է այդ պրոցեսում իրարամերժ հոսանքների միջև տեղի ունեցած սուր տարաձայնություններն ու բախումները, խոտորումներն ու նահանջները։

Մենագրության մեջ տրված է թեմայի վերաբերյալ եղած գրականության ու աղբյուրների, այդ թվում սփյուռքահայ հեղինակների գործերի պատմաքննական վերլուծությունը, վեր հանվել դրանց ինչպես արժանիքները, այնպես էլ բացթողումները։

Խ. Բարսեղյանի մենագրության երկրորդ գիրքն ընդգրկում է Հայաստանում մարքս-լենինյան գաղափարների հետագա տարածման և նրանց հաղթանակի համար մղված պայքարի ժամանակաշրջանը՝ 1905—1920 թվականները։ Ռուսաստանի պրոլետարիատի դասակարգային պայքարի ֆոնի վրա ցույց են տրված Հայաստանում բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ ծավալված հեղափոխական շարժումները, վեր է հանված հայ ականավոր մարքսիստ-լենինյաններ Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ս. Սպանդարյանի և ուրիշների տեսական-պրոպագանդիստական գործունեությունը, նրանց գրական ժառանգության հսկայական նշանակությունը Հայաստանում մարքս-լենինյան գաղափարների տարածման գործում։

Մարքս-լենինյան մեթոդաբանական դիրքերից քննադատված է բուրժուական ու մանրբուրժուական գաղափարախոսությունը։ Լայն տեղ է հատկացված դաշնակցության, հնչակյանների, սպեցիֆիկների գաղափարական և պրակտիկ գործունեության քննադատությանը։

Հարկ է նշել, որ Խ. Բարսեղյանը Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի տարածման պատմությունը սերտորեն կապել է նրա գաղափարների հիմքերի վրա ստեղծված բոլշևիկյան կուսակցության պատմության հետ։ Օգտագործելով հսկայական քանակությամբ գրականություն և, մանավանդ, արխիվային նյութեր ու փաստաթղթեր, որոնց զգալի մասն առաջին անգամ է գիտական շրջանառության մեջ դրվում, պատմաբանը մի շարք հարցերի տալիս է նոր պատասխան, ընդարձակ ծանոթագրություններում կատարում է կարևոր ճշգրտումներ՝ արժեքավոր ավանդ ներդնելով խորհրդահայ պատմակուսակցական գրականության մեջ։ Այդուհանդերձ, աշխատությունը զերծ չէ թերություններից։ Այսպես, հայ հասարակական-քաղաքական հոսանքների մասին Խ. Բարսեղյանը գրում է. «Հասարակական զարգացման խաչուղիներում բախվում էին քաղաքական տարբեր հոսանքներ, այդ թվում նարոդնիկական, լիբերալ-բուրժուական, պահպանողական և կղերաազգայական»[1]։ Մեր կարծիքով, նարոդնիկությունը հայ իրականության մեջ հասարակական-քաղաքական առանձին հոսանք չի եղել։ Անտեսված է ազգային-դեմոկրատական հոսանքը, որը 1870—90-ական թվականներին կարևոր դեր էր խաղում հայ իրականության մեջ։ Այնուհետև՝ լինելով ճանաչված աղբյուրագետ ու խորագիտակ մատենագետ, նա իր աշխատության ծանոթագրություններում վկայակոչել է մեծ քանակությամբ աղբյուրներ ու գրականություն, առանձին գրքերի և հոդվածների վերաբերյալ արել բազմաթիվ ճիշտ դիտողություններ, սակայն այդ սկզբունքին նա ոչ միշտ է հետևել։

[1] Տե՛ս Խ. Բարսեղյան, *Մարքսիզմի տարածումը Հայաստանում*, գիրք առաջին, էջ 9—10։

[1] Խ. Բարսեղյան, նշվ. աշխ., գիրք առաջին, էջ 132։

Օրինակ, իրավացիորեն բարձր գնահատելով Խ. Աբովյանին, միևնույն ժամանակ տողատակին վկայակոչում է Աշ. Հովհաննիսյանի «Խ. Աբովյան» գիրքը, ուր խիստ բացասական գնահատական է տրված մեծ գրողին։ Այդ առթիվ մենք քննադատել ենք Աշ. Հովհաննիսյանի աշխատությունը, գրելով, թե «Ա. Հովհաննիսյանը Խ. Աբովյանին նվիրված աշխատության մեջ ոչ ճիշտ գնահատական է տվել հայ մեծ լուսավորչին։ Ակսել Բակունցին մեղադրելով այն բանում, որ նա ջանք է թափել «Աբովյանի անհայտ բացակայումը» գրքում Խ. Աբովյանին ներկայացնել որպես դեմոկրատ, պրոգրեսիվ դեմք, Աշ. Հովհաննիսյանը Խ. Աբովյանին բնութագրում է որպես ռեակցիոն գաղափարախոս, նրա գլուխգործոցը՝ «Վերք Հայաստանի» վեպը, համարում է ցարական էքսպանսիայի գովերգություն, բուրժուական նացիոնալիզմի նախերգանք»[1]։ Այնուհետև մենք գրել ենք. «Չի կարելի համաձայնել հեղինակի այն խոսքերին, թե «ժառանգ կանգնելով Աբովյանի հայդուկային գաղափարախոսությանը, Բաֆֆին վեր հանեց նրա մարտական նացիոնալիզմը, խառնելով սրան լիբերալիզմի ֆրազեոլոգիան»[2]։ Կարծում ենք, ընթերցողներին ճիշտ կողմնորոշելու համար պետք է տողատակին այդ մասին նշվեր։ Ճիշտ կլիներ նաև, եթե գրքի խմբագիր Աշ. Հովհաննիսյանը ևս ծանոթագրության մեջ հանդես գար իր սխալ տեսակետի քննադատությամբ։ Դա է պահանջում գիտական մոտեցումը։

Պրոֆ. Խ. Բարսեղյանի գրչին է պատկանում նաև «Հայ ժողովրդի պատմության» VI հատորում հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման վերաբերյալ գլուխը։ Պատմաբանի կարծիքով, Ռուսաստանում և Անդրկովկասում մարքսիզմի տարածումն արդյունք էր կապիտալիզմի զարգացման, սոցիալ-տնտեսական կյանքի առաջընթացի, բանվոր դասակարգի քաղաքական պայքարի սրման ու հասարակական առաջավոր մտքի ինքնուրույն որոնումների[3]։ Այնուհետև համառոտակի խոսվում է մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական գրականությունը հայերեն հրատարակելու առաջին փորձերի մասին։ Ի տարբերություն որոշ հեղինակների, որոնք գտնում են, թե հայ իրականության մեջ մարքսիզմը տարածվել է 1880—90-ական թվականներին, այն կապելով հնչակյան կուսակցության անվան հետ, Խ. Բարսեղյանը այդ տարիներին կատարված գործողություններն անվանում է լոկ նախաքայլեր, որոնք 1900-ական թվականներին սկիզբ դրեցին մարքսիզմի տարածմանը։

Հատորում ցույց է տրված «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիայի» և հայ իրականության մեջ բանվորական առաջին մարքսիստական խմբակների կազմավորումն ու նրանց գործունեությունը։ Հեղինակի կարծիքով, «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան» թեև հայ իրականության մեջ 1890-ական թվականներին սկզբնավորվող հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններից չէր, բայց իր գործունեությամբ որոշ հող նախապատրաստեց սոցիալ-դեմոկրատական խմբակների առաջացման համար[1]։ Թեև հայ իրականության մեջ ձևավորված բանվորական անդրանիկ խմբակները քաղաքականապես չէին հասունացել և դեռևս չէին ազատվել տնտեսական պայքարի մտայնությունից, գրում է նա, այնուամենայնիվ, որոշակի դրական դեր խաղացին։

Հատորում լայնորեն է լուսաբանված սոցիալ-դեմոկրատական, լենինյան իսկրայական կազմակերպությունների ձևավորման և Անդրկովկասում ու Հայաստանում ծավալված հեղափոխական շարժումների պատմությունը։

Լավ են ներկայացված ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին Հայաստանում տեղի ունեցած բանվորական և գյուղացիական շարժումների, ինչպես նաև հայկական եկեղեցական կալվածքների բռնագրավման առթիվ 1903—1904 թվականներին Անդրկովկասում ծավալված ժողովրդական ելույթները։ Հայ ժողովրդի ծավալած հակացարական ազատագրական շարժումը, գրում է Խ. Բարսեղյանը, դասակարգային խոր արմատներ ուներ։ Դա ցարիզմի ռեակցիոն քաղաքականության դեմ հայ ժողովրդի դժգոհության պոռթկումն էր։ Իր բովանդակությամբ ու բնույթով այն ազգային-ազատագրական շարժում էր ընդդեմ ցարիզմի քաղաքականության[2]։

Հայ իրականության մեջ մարքս-լենինյան ուսմունքի տարածման պատմության գիտական հետազոտության բնագավառում կարևոր ավանդ է ներդրել Վ. Ավետիսյանը։ Այդ պրոբլե-

[1] Ն. Հարությունյան, Պատմագրության զարգացումը Խորհրդային Հայաստանում, էջ 278։

[2] Նույն տեղը, էջ 278—279։

[3] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 215։



[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 225։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 356։

մին է նվիրված հետմահու հրատարակված նրա մենագրությունը[1]։ Անտարակույս, ինչպես նշում է Ավետիսյանը, հայ հասարակական մտքի մարքս-լենինյան սկզբնավորման պատմության հետազոտությունը կազմում է Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի տարածման պրոբլեմի կարևոր մասը և ունի արդիական նշանակություն։ Հայ հասարակական մտքի բեղմնավորումը մարքս-լենինյան գաղափարներով, գրում է նա, նոր դարագլուխ բացեց ժողովրդի պատմության, նրա հասարակական ու մտավոր զարգացման մեջ։

Փաստական հարուստ նյութի հիման վրա Վ. Ավետիսյանը վեր է հանել Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի տարածման սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալները, հայ պրոլետարիատի, բանվորական շարժման և սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների սկզբնավորման պատմությունը։ Ուշագրավ է նրա այն եզրահանգումը, թե Հայաստանում մարքսիզմի տարածման և սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջացման նախադրյալներն ու պայմանները հետազոտելիս անհրաժեշտ է հաշվի առնել հայ ժողովրդի գրության այն առանձնահատկությունը, որ նա այդ ժամանակաշրջանում բաժանված էր տնտեսական ու մշակութային տարբեր մակարդակի վրա գտնվող պետությունների միջև։ «Այս հանգամանքը շատ բանով բնորոշում էր հայ հասարակական մտքի, քաղաքական հոսանքների ու կուսակցությունների պայքարի հարցերն ու ուղղությունը»[2]։

Վ. Ավետիսյանի աշխատության մեջ լայն տեղ է հատկացված Հայաստանում գիտական սոցիալիզմի գաղափարների տարածման, մարքսիզմի զարգացման լենինյան փուլի սկզբնավորման և սոցիալ-դեմոկրատական առաջին կազմակերպությունների ստեղծման պատմությանը։ Ցույց է տրված Եվրոպայում և Ռուսաստանում ծավալված մարքսիստական մտքի և բանվորական շարժման ազդեցությունը հայկական կյանքի, գլխավորապես պարբերական մամուլի վրա։

Շարադրելով «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիայի» մասին իր մտքերը, վերլուծելով նրա կատարած որոշ

[1] Տե՛ս Վ. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Եր., 1976։

[2] Նույն տեղը, էջ 23։



դրական աշխատանքը, հեղինակը, սակայն, հակված է մնացել 1956 թ. «Լենինյան ուղիով» ամսագրում տպագրված բանավիճային հոդվածի դիրքերի վրա, հոդված, ուր նա, բանավիճելով Ա. Մնացականյանի հետ, բացասական գնահատական էր տվել «Ասոցիացիային»։ Այս հարցում մենք հակված ենք Ա. Մնացականյանի կարծիքին։

Աշխատության մեջ ցույց է տրված, որ XX դարասկզբին Անդրկովկասում ևս վերելք են ապրում հեղափոխական շարժումները, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները համախմբվում են լենինյան «Իսկրայի» շուրջը, Հայաստանում տարածվում են լենինյան-իսկրայական գաղափարները, վերլուծված է «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստին Վ. Ի. Լենինի տված գնահատականը։

Անդրադառնալով XX դարի սկզբին Անդրկովկասում ծավալված բանվորական ցույցերին ու գործադուլներին, Վ. Ավետիսյանը քննադատում է հնչակյան և դաշնակցական կուսակցություններին, որոնք գտնում էին, թե հայ պրոլետարիատի այդ պայքարը բացասաբար կանդրադառնա Արևմտյան Հայաստանի համար իրենց ծավալած գործունեության վրա, կշեղի հասարակության ուշադրությունը «համազգային հարցից», կպառակտի ու կջլատի իրենց ուժերը։

Պատմաբանի կարծիքով, Կովկասի հայ սոցիալ-դեմոկրատները՝ Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ս. Սպանդարյանը և մյուսները, հայ աշխատավոր զանգվածներին համառուսաստանյան հեղափոխական շարժումներին ակտիվ մասնակցելու կոչ անելով, բնավ դեմ չէին արևմտահայության ազատագրությանը, միայն, հենվելով Ֆ. Էնգելսի հայտնի դրույթի վրա, գտնում էին, որ այն կարող է իրականացվել միայն ռուսական ցարիզմի տապալման շնորհիվ։ «Ֆ. Էնգելսի նամակը,— գրում է Վ. Ավետիսյանը,— պարունակում էր այն խորիմաստ միտքը, որ սուլթանական լծից Արևմտյան Հայաստանի ազատագրումը սերտորեն կապված է ռուսական հեղափոխության ելքի հետ։ Էնգելսը պարզ պատկերացնում էր, որ հայ ժողովուրդն ապրում էր ներքին և միջազգային այնպիսի պայմաններում, երբ միայն իր ջանքերով և մեկուսացած պայքարով, առանց արտաքին ուժերի, առաջին հերթին Թուրքիայի անմիջական հարևան երկրի՝ Ռուսաստանի օգնության, չի կարող անկախություն նվաճել։ Արևմտահայերի անկախությանը բացարձակ թշնամիներ էին թե՛

ցարական Ռուսաստանը և թե՛ Թուրքիայի վրա ազդեցություն տարածած իմպերիալիստական Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան»[1]: Ռուսական հեղափոխությունը, այնուհետև շարունակում է նա, և դրա հետևանքով ստեղծված դեմոկրատական Ռուսաստանը, շահագրգռված կլիներ զարկ տալու Թուրքիայում ազատագրական շարժումներին և ռեալ օգնություն ցույց տալու սուլթանական լծից փրկվելու համար մարտի ելած ժողովուրդներին:

Այդ կապակցությամբ Վ. Ավետիսյանը դիտողություն է անում նրանց, ովքեր վերջին տարիներին բանավոր և գրավոր ելույթներում փորձում են քննադատական վերաբերմունք ցույց տալ բոլշևիկների, մասնավորապես հայ բոլշևիկների Հայկական հարցում վարած քաղաքականությանը: Նրանք նույնիսկ փորձում են կշտամբել բոլշևիկներին այն բանի համար, որ, իբր, վերջիններս գործունեություն չեն ծավալել Արևմտյան Հայաստանում և սահմանափակվել են սոսկ Անդրկովկասով[2]: Հեղինակը գտնում է, որ այդ մեղադրանքն իր ցայտուն արտահայտությունն է գտել Կ. Քարամյանի «Արևմտահայերի դրությունը, «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբին» դոկտորական դիսերտացիայում, որի ավտոռեֆերատում գրված է. «Դժբախտությունը նրանում է, որ մարքսիզմը Թուրքիայում շարմատակալեց, իսկ սոցիալ-դեմոկրատիան, ինչպես և հայ սոցիալ-դեմոկրատները իրենց գործունեության շառավիղը սահմանափակեցին Ռուսական կայսրության տերիտորիայով: Հայ մարքսիստները Արևմտյան Հայաստան համարյա չուղարկեցին քաղաքականապես պատրաստված իրենց գործիչներին՝ արևմտահայերին պատրաստելու և հայ ժողովրդի երկու մասի միացյալ պայքարի անհրաժեշտության մասին պրոպագանդելու համար: Հայ մարքսիստները անհրաժեշտ չափով չուսումնասիրեցին Արևմտյան Հայաստանի առանձնահատուկ դրությունը: Գլխավորն անտեսվում էր և այն հանգամանքը, որ Թուրքիայում բուրժուական հարաբերությունների թույլ զարգացման հետևանքով չկար այնպիսի պրոլետարիատ, որը կարողանար դառնալ հեղափոխական շարժման ղեկավար և կազմակերպիչ ուժ:

[1] Վ. Ավետիսյան նշվ. աշխ., էջ 401:

2 Տե՛ս նույն տեղը, էջ 407:



Հայտնի է, որ ցարիզմը ընկավ պրոլետարիատի հարվածների ներքո, բայց արևմտահայերը ոչ միայն չփրկվեցին, այլև զանգվածորեն ոչնչացվեցին, զրկվեցին իրենց հայրենիքից: Կասկած չկա, որ նույն վիճակն էր սպասում նաև արևելահայերին, եթե Ռուսաստանում ուշանար Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը»[1]: «Այս ընդարձակ քաղվածքը, որ մենք բերեցինք,— գրում է Վ. Ավետիսյանը,— լի է հակասական մտքերով, և բոլորովին տեղին չեն ՌՍԴԲԿ-ի հասցեին հեղինակի արած մեղադրանքները»[2]:

Մենք առարկելի ենք համարում Վ. Ավետիսյանի դիտողությունը Կ. Քարամյանի առաջ քաշած համարձակ և ճիշտ դրույթի վերաբերյալ: Որ հայ բոլշևիկները, տարված Ռուսաստանի հեղափոխական շարժումներով, գրեթե անտեսել են արևմտահայերի ազատագրական շարժումները, դա փաստ է: Նրանք գտնում էին, որ հայ ազգային քաղաքական կուսակցությունները, որոնք գլխավորում էին այդ շարժումները, իբր դրանով ջլատում էին հայ ժողովրդի միասնական ուժերը ցարիզմի դեմ մղվող պայքարում: Մեր կարծիքով, հենց դրանով կարելի է բացատրել այն, որ մինչև այժմ մեզանում մշտապես դրվատվել են միայն այն հայ գործիչները, ովքեր պայքարել են ցարիզմի, ժամանակավոր կառավարության և հետո՝ դաշնակցական վարչակարգի դեմ և համարվել հեղափոխականներ, իսկ Թուրքական բռնակալների դեմ մղված ազատագրական պայքարում աչքի ընկած գործիչները, հայ ֆիդայիները, մնացել են ստվերում:

Անդրադառնալով հայ իրականության մեջ բոլշևիկյան գաղափարական և կազմակերպական սկզբունքների պրոպագանդման հարցին, Վ. Ավետիսյանը ցույց է տալիս այն մեծածավալ աշխատանքը, որ Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ կատարվում էր հայոց լեզվով սոցիալ-դեմոկրատական գրականության հրատարակության գործի կազմակերպման ուղղությամբ: Փաստական նյութերի հիման վրա բացահայտվում է դարասկզբի հեղափոխական շարժումների վերելքի ժամանակաշրջանում հայ ազգայնական կուսակցությունների, առաջին հերթին դաշնակցության կերպարանափոխությունները, բացահայտվում դրանց խ-

[1] Վ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 408:

2 Նույն տեղը:

կական պատճառները։ Ներկայացված է նաև «սպեցիֆիկների» դեմ մարքսիստ-լենինյանների մղած պայքարը։

Անդրկովկասում մարքսիզմի տարածման գործում ռուս մարքսիստների գործունեությունը լուսաբանված է Վ. Մայիլյանի մենագրության մեջ[1]։

Որոշ աշխատանք է կատարվել Հայաստանում 1905—1907 թթ. հեղափոխական շարժումների պատմության ուսումնասիրության բնագավառում։ Դեռևս 1950-ական թվականներին ռուսական առաջին հեղափոխության 50-ամյակի կապակցությամբ հրատարակվեցին Վ. Պարսամյանի, Ծ. Աղայանի, Գ. Հարությունովի և ուրիշների աշխատությունները, իսկ այդ կարևոր հարցի գիտական հետազոտությունը շարունակվեց նաև հետագայում։

1964 թ. հրատարակվեց պատմական գիտությունների թեկնածու Դ. Մուրադյանի մենագրությունը[2]։ Բնութագրելով XIX դարի վերջերի և XX դարի սկզբի Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության ընդհանուր վիճակը, նա հանգամանորեն շարադրել է 1905—1907 թվականների Հայաստանի հեղափոխական շարժումների պատմությունը։ Նկատի ունենալով, որ այդ թեմայի վերաբերյալ հրատարակվել են շատ աշխատություններ, հեղինակը ձգտել է իր մենագրության մեջ ավելի հանգամանորեն քննել հեղափոխական շարժումների հետ առնչվող արևելահայ իրականության քաղաքացիական պատմության մի շարք հարցեր, ինչպես՝ Կովկասում փոխարքայության վերականգնումը, հայ բուրժուազիայի, ինչպես Դ. Մուրադյանն է գրում, լիբերալ հովերի և «օպոզիցիոն» տրամադրությունների դրսևորումը և 1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո դրանց մարումը, 1903 թ. հունիսի 12-ի օրենքի վերացումը, Առաջին և Երկրորդ պետական դումաների ընտրությունների ժամանակաշրջանում Անդրկովկասի քաղաքական իրավիճակը, Դումայում հայ պատգամավորների ելույթները և այլն։ Այս կապակցությամբ հեղինակն օգտագործել է հրապարակի վրա եղած գրականությունն ու նոր աղբյուրներ, այդ թվում՝ Պետական դումայի սղագրական արձանագրությունները, արխիվային վավերագրեր։

[1] Տե՛ս Маилян В., Деятельность русских марксистов в Закавказье (с 1885 года по 1903 год), Е., 1984:

[2] Տե՛ս Դ. Մուրադյան, Հայաստանը ռուսական առաջին հեղափոխության տարիներին (1905—1907), Եր., 1964։



Ելնելով մարքս-լենինյան դիրքերից, Դ. Մուրադյանը քննադատության է ենթարկում ռուսական առաջին հեղափոխության տարիներին հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը։ Նա անդրադարձել է նաև Էջմիածնի 1906 թ. «Ազգային հիմնադիր կենտրոնական ժողովի» կամ «Համագումարի» հետ կապված հարցերին և լուսաբանել քաղաքական կուսակցությունների, հատկապես դաշնակցության ու հայ բոլշևիկների վերաբերմունքն ու տակտիկան։

Դ. Մուրադյանը բացահայտել է Անդրկովկասում, այդ թվում Հայաստանում կազմակերպված զինված ապստամբություն տեղի չունենալու պատճառները, որոնք են՝ Անդրկովկասում, բացառությամբ Բաքվի, չստեղծվեցին խորհուրդներ, որոնք զինված ապստամբության մարմիններ կդառնային, հեղափոխական շարժումներին զգալի վնաս հասցրին Անդրկովկասի մենշևիկները իրենց օպորտունիստական դավաճանական տակտիկայով, պրոլետարիատի շահերը լիբերալ բուրժուազիային հարմարեցնելու քաղաքականությամբ։ Բացասական դեր խաղացին նաև ազգամիջյան կոտորածները և հայ ու ադրբեջանական ազգայնականների գործունեությունը։

Դ. Մուրադյանը մեծ ջանք է գործադրել մի շարք փաստական ճշգրտումներ կատարելու ուղղությամբ։ Նա կարևոր դիտողություններ է արել 1955-ին Մոսկվայում հրատարակված «Համառուսական քաղաքական գործադուլը 1905 թ. հոկտեմբերին» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի վերաբերյալ, ժողովածու, որի 495 և 655 էջերում սխալ ու միակողմանի են բնութագրված հայ-ադրբեջանական ընդհարումների պատճառները։ «Դրանց հեղինակները նշում են,— գրում է նա,— որ Կովկասում ընդհարումները կազմակերպում էր ցարիզմը հայկական բուրժուանացիոնալիստական դաշնակցության կուսակցության աջակցությամբ։ Այդ պնդումը ճիշտ լինելով հանդերձ, թերի է, որովհետև չպետք է մոռանալ, որ դաշնակցականների հետ այդ եղբայրաջարդ կռիվների համար հավասարաչափ պատասխանատվություն են կրում նաև ադրբեջանական նացիոնալիստները, պանիսլամիստները, որոնք դաշնակցականների նման գործում էին կառավարության հետ ձեռք ձեռքի տված»[1]։

[1] Դ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 128—129։

Ընդհանուր առմամբ ճիշտ գնահատելով հետազոտվող ժամանակաշրջանի պատմական իրադարձությունները, առանձին դեպքերում Դ. Մուրադյանը որոշ հարցերում հանդես է բերում ծայրահեղ խիստ, ըստ էության ոչ ճիշտ մոտեցում։ Օրինակ, նա բացասաբար է խոսում 1905 թ. մարտին Ռուսաստանի Մինիստրների խորհրդին և Կովկասյան փոխարքային ներկայացված Երևանի քաղաքային դումայի 28 կետից բաղկացած և 1905 թ. ապրիլին հայաբնակ 24 կենտրոնների ներկայացուցիչների Թիֆլիսում կայացած ժողովի 20 կետից կազմված խնդրագրերի կամ պահանջագրերի մասին, որոնք, մեր կարծիքով, ամբողջովին բխում են ժողովրդի, այդ թվում նաև հայ բուրժուազիայի շահերից։ Ահա վերոհիշյալ խնդրագրերի մի քանի պահանջներ՝ ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի ձայնատվության սկզբունքով Սահմանադիր ժողովի գումարում, մահապատժի վերացում, հողի ազգայնացում, արքունական տուրքի վերացում և արքունական ազատ հողերի վրա տեղական հողազուրկ և սակավահող գյուղացիների բնակության հաստատում, ընդհանուր, պարտադիր, ձրի տարրական ուսուցման սահմանում, հայկական բոլոր եկեղեցական ու ծխական դպրոցների, բարեգործական, կրթական և հասարակական հիմնարկությունների անհապաղ վերաբացում, ժողովների, հավաքների գործադուլների, միությունների ազատության, անձի անձեռնմխելիության ապահովում, բանվորական աշխատանքի պայմանների բարելավում, 8-ժամյա բանվորական օրվա սահմանում, դասակարգային առանձնաշնորհումների, կրոնական սահմանափակումների վերացում, տղամարդու հետ կանանց հավասար իրավունքի հաստատում, խղճի, մայրենի լեզվի ազատության, հայ եկեղեցիներից և դպրոցներից խլված կալվածքների, գույքի և դրամի վերադարձի ապահովում, ռուսական հպատակություն ընդունած արևմտահայ գաղթականների վերաբերյալ սահմանափակիչ օրենսդրության վերացում և նրանց Անդրկովկասի սահմաններում ուրիշ հպատակների հետ հավասար հողաբաժիններ տալու իրավունքի շնորհում և այլն[1]։ Սրանց թվարկումից հետո համոզիչ է Դ. Մուրադյանի այն պնդումը, թե «իրականում դրանք (այդ պահանջները— Շ. Հ.) արտահայտում էին հայ ունևոր դասակարգերի շահերն ու նրանց մտավորականության լիբերալ բաղձանքները»[1]։

Դ. Մուրադյանի գրչին են պատկանում նաև «Հայ ժողովրդի պատմության» VI հատորի «Հեղափոխական շարժումները Արևելյան Հայաստանում 1905—1907 թթ.» և «Արևելյան Հայաստանը հեղափոխական նոր վերելքի տարիներին» գլուխները։

Մատնանշված թեման է շոշափում նաև պատմական գիտությունների թեկնածու Հասմիկ Հարությունյանի ռուսերեն մենագրությունը, որտեղ լուսաբանվում է ռուսական առաջին հեղափոխության տարիներին Հայաստանում ծավալված պայքարի համառոտ պատմությունը[2]։

Ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Անդրկովկասի բանվորական շարժումներին և ազգային հարցի լուծման ուղիների վերլուծությանն է նվիրված Դ. Գալոյանի ռուսերեն մենագրությունը[3], որն ընդգրկում է 1900—1922 թվականները։ Հարուստ է աշխատության աղբյուրագիտական հենքը՝ օգտագործված են մեծ քանակությամբ գրականություն և արժեքավոր վավերագրեր, որոնց մի զգալի մասը առաջին անգամ է մտնում գիտական շրջանառության մեջ։

Աշխատությունը գրված է համառուսաստանյան բանվորական շարժումների և կոմունիստական կուսակցության պատմության ընդհանուր ֆոնի վրա։ Նա Ռուսաստանի պրոլետարական շարժման հետ է կապում ոչ միայն Անդրկովկասի բանվորական, այլև երկրամասի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը։ Նա այն կարծիքն է հայտնում, թե ռուսական բանվոր դասակարգի ազատագրական պայքարի ներգործության շնորհիվ Անդրկովկասի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումն աստիճանաբար ազատվում էր բուրժուազգայնական կուսակցությունների ազդեցությունից։ Դ. Գալոյանը հարկ եղած չափով բացահայտել է Անդրկովկասի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի առանձնահատկություններն ու յուրահատուկ խնդիրները՝ կապված երկրամասի պատմական զարգացման ընթացքի հետ։

---

[1] Տե՛ս Դ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 91—98։

[1] Դ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 99։

[2] Տե՛ս **Арутюнян А.**, Революционное движение в Армении, 1905—1907 гг., Е., 1970:

[3] Տե՛ս **Галоян Г.**, Рабочее движение и национальный вопрос в Закавказье, 1900—1922 гг., Е., 1969:

Աշխատության մեջ հանգամանորեն քննվում է 1903 թ. հունիսի 12-ի ցարական օրենքի կապակցությամբ Անդրկովկասով մեկ ծավալված հակացարական շարժումների հարցը։ Ներկայացված է Անդրկովկասի բուրժուազգայնական և մանրբուրժուական կուսակցությունների, առանձնապես դաշնակցության դիրքն ու գործունեությունը։

Խոսելով դաշնակցության մասին, պատմաբանը նշում է, որ եթե այդ կուսակցությունը մինչ այդ իր գլխավոր խնդիրը համարում էր արևմտահայ դատի պաշտպանությունը, ապա ցարիզմի գաղութային քաղաքականության խորացման և հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի վերելքի պայմաններում պաշտոնապես ընդունում է նաև ցարիզմի դեմ պայքարի անհրաժեշտությունը։ Ընդ որում, նրա կարծիքով, դաշնակցությունը ոչ միայն հակակառավարական, այլև ընդհանրապես հակառուսական ագիտացիա էր մղում[1]։

Գ. Գալոյանի աշխատության մեջ լայն տեղ է հատկացված ռուսական առաջին հեղափոխության ժամանակաշրջանում Անդրկովկասի ժողովուրդների հեղափոխական շարժումների և ազգային-ազատագրական պայքարի պատմության լուսաբանմանը։

Անդրադառնալով հայ-ադրբեջանական ընդհարումներին, Գ. Գալոյանը գտնում է, որ դրանք էլ հմտորեն կազմակերպում էր ցարիզմը՝ աշխատավորության ուշադրությունը հեղափոխական շարժումներից շեղելու նպատակով։ Սակայն, գրում է նա, ցարիզմին չէր հաջողվի հայ-ադրբեջանական ջարդեր կազմակերպել, եթե պանիսլամիստներն ու դաշնակցությունը դրա համար որոշ հող չստեղծեին։ Ցույց է տրված բոլշևիկների պայքարն ընդդեմ ազգային թշնամանքի բորբոքման։ Այստեղ էլ ներկայացված է այդ ջարդերի դատապարտման և դադարեցման ուղղությամբ առաջադեմ մտածողների գործունեությունը։

Աշխատության մեջ քննության են առնվել Անդրկովկասում ծավալված ազատագրական շարժումները ստոլիպինյան ռեակցիայի տարիներին։ Լուսաբանվել է բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը նոր, առավել ծանր պայմաններում, մի ժամանակամիջոց, երբ նրանք հարկադրված էին հանդես գալ ոչ միայն ցարիզմի, այլև մենշևիկ լիկվիդատորների, օտզովիստների, ուլտիմատիստների և հակալենինյան այլ հոսանքների, ինչպես նաև բուրժուական և բուրժուազգայնական կուսակցությունների դեմ, որոնք հեղափոխության պարտությունից հետո արդեն աջակցում էին ինքնակալությանը, բացահայտորեն դեն նետելով իրենց «դեմոկրատական» քողը[1]։ Լավ են լուսաբանված դաշնակցական և հնչակյան կուսակցությունների միջև առաջ եկած պառակտումները, նրանց ղեկավար գործիչների լուրջ տարաձայնություններն ու վեճերը։ Նույնը վերաբերում է նաև սպեցիֆիկներին՝ Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությանը։

Վերոհիշյալ հարցերը քննվում են նաև Գ. Գալոյանի «Պատմության քառուղիներում» աշխատության մեջ։ Ամբողջ Անդրկովկասում մոլեգնում էր բուրժուական նացիոնալիզմը, գրում է նա, ցարական պրոպագանդան, բուրժուական մամուլն ամեն կերպ ուռճացնում էին ժողովուրդների միջև եղած «ազգային», «կրոնական» և «տնտեսական հակասությունները», ձգտում պառակտել բանվորական, հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումները։ «Բուրժուական նացիոնալիզմը կհասներ իր նպատակին,— այնուհետև գրում է հեղինակը,— եթե Լենինի ստեղծած կուսակցությունը հանդես չգար պրոլետարական ինտերնացիոնալիզմի իր գաղափարախոսությամբ և չհամախմբեր Ռուսաստանի բոլոր ազգերի աշխատավորներին ռուսական պրոլետարիատի շուրջը՝ դասակարգային ընդհանուր շահերի հողի վրա»[2]։

Անդրադառնալով Անդրկովկասում գործող մանրբուրժուական և բուրժուական կուսակցությունների գործունեությանը, Գ. Գալոյանը հանգում է այն եզրակացությանը, որ նրանցից յուրաքանչյուրը, արտահայտելով իր ազգային բուրժուազիայի տարբեր խավերի շահերը, ձգտում էր պառակտում մտցնել երկրամասի պրոլետարիատի ազգային ջոկատների միջև և իր ազգի ազգային շարժումները, որոնք ըստ էության բուրժուադեմոկրատական էին, հակադրել ռուսական բանվորական շարժմանը[3]։

Ավելի կոնկրետ խոսելով հայ քաղաքական կուսակցությունների գործելակերպի մասին, պատմաբանը գտնում է, որ ոչ դաշնակցականները և ոչ էլ հնչակյանները չդարձան և չէին կարող դառնալ հայ ժողովրդի ազգային արմատական շահերի ար-

[1] Տե՛ս Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 38։



[1] Տե՛ս Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 111։

[2] Գ. Գալոյան, Պատմության քառուղիներում, էջ 139—140։

[3] Նույն տեղը, էջ 141։

տահայտիչն այն պարզ պատճառով, որ նրանք կանգնած չէին հայ աշխատավոր զանգվածների սոցիալական շահերի պաշտպանության դիրքերում և իրենց նեղ-ազգայնական ծրագրերով ու պրակտիկ գործունեությամբ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը կանգնեցրել էին փակուղու առջև[1]:

Որոշ աշխատանք է կատարվել Անդրկովկասի հեղափոխական շարժումներին երիտասարդության մասնակցության լուսաբանման ուղղությամբ: Այդ գործում որոշակի ներդրում ունի պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Շ. Օհանջանյանը: 1968-ին հրատարակվեց նրա մենագրությունը[2], ուր ներկայացված են ռուսական առաջին հեղափոխության տարիներին Անդրկովկասի երիտասարդության հեղափոխական շարժումները: Լույս է տեսել նաև նրա նոր աշխատությունը, ուր շարադրված է Անդրկովկասի երիտասարդության հեղափոխական շարժումների պատմությունը XIX դարի 90-ական թվականներից մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունն ընկած ժամանակաշրջանը[3]:

Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում XIX դարի վերջին և XX դարի սկզբներին ծավալված երիտասարդության հեղափոխական շարժումների պատմության լուսաբանմանն է նվիրված նաև պատմական գիտությունների թեկնածու Ե. Սահակյանի աշխատությունը[4]:

## 8. Հայաստանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին

«Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում» մեր առաջին մենագրության մեջ մատնանշված հարցին համեմատաբար քիչ տեղ է հատկացվել, քանի որ այն ժամանակ քիչ էր նաև հրապարակի վրա եղած գրականությունը: Այնտեղ անդրադարձել էինք Ե. Սարգսյանի ռուսերեն լույսընծայված աշխատությանը, որը 1964-ին որոշ լրացումներով վերահրատարակվեց հայերեն[1]: Մասամբ անդրադարձել էինք նաև Լեոյի, Ար. Մնացականյանի և ուրիշների աշխատություններին: Վերջին քառորդ դարի ընթացքում առաջին համաշխարհային պատերազմի տարիների հայ ժողովրդի պատմության վերաբերյալ հարուստ գրականություն է ստեղծվել: 1965 թ. լույս է տեսել Զ. Կիրակոսյանի մենագրությունը[2], որը վերահրատարակվել է 1967-ին. 1971-ին այն տպագրվեց նաև ռուսերեն:

Մենագրության մեջ փաստական հարուստ ատաղձի հիման վրա ցույց է տրված արևմտահայության ծանր գոյավիճակը պատերազմի նախօրյակին: Հանգամանորեն քննելով փաստերը, Կիրակոսյանը հանգում է այն եզրակացությանը, որ ոչ ոք չի կարող ապացուցել, որ թուրք աշխատավորը կուլտուրական և տնտեսական տեսակետից ավելի լավ պայմաններում էր ապրում, քան հայ աշխատավորը և որ թուրք կամ քուրդ մարաբան կարող էր խաղաղ հարևան լինել այլազգի իր սոցիալական եղբայրների հետ, սակայն դրան խանգարում էր այն, որ դարերի ընթացքում Թուրքիայի շահագործող վերնախավը մահմեդական զանգվածներին ներշնչում էր, որ քրիստոնյան ընտրյալ չէ մարդարեից, այլ գյավուր է՝ անհավատ, արժանի ոտնահարման ու ոչնչացման:

Մենագրության մեջ զգալի տեղ է հատկացված 1915 թ. Մեծ եղեռնի՝ արևմտահայության ցեղասպանության պատմությանը: Անդրադառնալով այն հարցին, թե թուրքական կառավարությունը ե՞րբ որոշեց և ինչի՞ց դրդված ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի զանգվածային տեղահանություններին ու ջարդերին, գիտնականը գրում է՝ բնաջնջման թուրքական ծրագիրը խարբսխված էր նախորդ ամբողջ ժամանակաշրջանում կիրառված ջարդարարական քաղաքականության վրա, օրգանապես բխում էր նրանից: Պատերազմը պարզապես պատեհ առիթ էր, որ պետք է ձերբազատեր թուրքական կառավարողներին ժողովրդասպան պլանն իրականացնելու և, միաժամանակ, այն պատերազմական իրավիճակով պատճառաբանելու համար: «Իրենց անիրազեկու-

1 Տե՛ս Գ. Գալոյան, Պատմության քառուղիներում, էջ 141:

2 Տե՛ս Շ. Օհանջանյան, Անդրկովկասի երիտասարդության հեղափոխական շարժումների պատմությունից (1905—1907), Եր., 1968:

3 Տե՛ս Оганджанян Ш., Революционное движение молодежи Закавказья (1890—1917 гг.), Е., 1975:

4 Տե՛ս Саакян Е., Революционные движения молодежи в Армении и в Закавказье в конце XIX—начале XX вв., Е., 1987.

1 Տե՛ս Ե. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում (1914—1918), Եր., 1964:

2 Տե՛ս Զ. Կիրակոսյան, Առաջինի համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914—1916 թթ.), Եր., 1965:

թյունն են դրսևորում այն մարդիկ,— գրում է նա,— որոնք, տուրք տալով թուրքական ստահոդ պնդումներին, հավատում են, որ թուրքական կառավարողներն իբր թե ստիպված էին այդպիսի քայլերի դիմել, ելնելով պատերազմական ծանր կացությունից և հայերի կողմից թուրքական պետությանը սպառնացող վտանգի կանխման շահերից»[1]։ Սակայն ամենևին չարդարացնելով այն արկածախնդրական, քաղաքական տեսակետից այնքան վնասակար գործելակերպը, որ պատերազմի սկզբից որդեգրել էր կովկասահայ բուրժուազիան, Ջ. Կիրակոսյանը գտնում է, որ անկախ դրանից թուրքական կառավարողներն արդեն որոշել էին կենսագործել իրենց վաղէմի ծրագիրը՝ բնաջնջել Օսմանյան կայսրության հայերին, յուրովի՝ կոտորածների միջոցով լուծել Հայկական հարցը[2]։ Իր այդ միտքը հիմնավորելու համար հեղինակը բերում է մի շարք համոզիչ փաստեր։ Հիրավի, 1915 թ. օգոստոսի 31-ին Թալեաթը ցինիկորեն հայտարարել է, թե այդ հարցը «լուծեցին» երեք ամսում, որը չէր կարողացել անել Աբդուլ Համիդը երեսուն տարում։ Թալեաթին լրացնում էր մյուս բորենին՝ Էնվերը, պահանջելով մահի ճիրաններից մազապուրծ եղած և կենդանի մնացած հայերին ցրել կայսրության տարբեր մասերում, նրանց ձուլել թուրքերի հետ։ Ի դեպ, պետք է համաձայնել Ջ. Կիրակոսյանի այն կարծիքին, որ որոշ հեղինակներ տուրք են տվել այն անհիմն տեսակետին, թե Ջեմալ փաշան պակաս հայատյաց էր, որ նա այնպիսի դաժանություն չէր դրսևորում, ինչպես երիտթուրքերի այլ պարագլուխներ։ Սակայն միայն Ուրֆայի սպանդը ամբողջապես հերքում է այդ առասպելը։

Ճիշտ է նկատել Ջ. Կիրակոսյանը՝ ավանդույթի ուժով պատմագրության մեջ մինչև այսօր էլ հիշատակվում է միայն 1915 թ. եղեռնը, մինչդեռ սարսափելի կոտորածներն ու հանցագործությունները նոր թափով շարունակվել են 1916 թվականին՝ մասնավորապես Միջագետքի, Սիրիայի անապատներում[3]։

Հետևելով պատմաբան Ջոզեֆ Գուիմանին, նա հանդում է այն եզրակացության, որ համաշխարհային պատմության մեջ 1915 թ. Մեծ եղեռնը կարելի է համեմատել միայն երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին գերմանական ֆաշիստների կողմից կազմակերպված վեց միլիոն հրեաների ջարդի, Մայդանեկի, Օսվենցիմի, Մաութհաուզենի և մահվան այլ ճամբարներում կատարված ավելի մեծ մասշտաբի զանգվածային մարդասպանությունների հետ։



[1] Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 231։
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 231։
[3] Տե՛ս նույն տեղը, էջ 336։

Մյուս պատմաբանների նման Ջ. Կիրակոսյանը ևս անդրադառնում է հայերի տեղահանության և կոտորածի վերաբերյալ վիճակագրությանը՝ հենվելով գլխավորապես Լեփսիուսի և Թեոդիկի «Ամենուն տարեցույցներում» հրապարակած տվյալների վրա։ Մենագրության մեջ բացահայտվել է միջազգային իմպերիալիզմի դիրքորոշումը հայ ժողովրդի կոտորածների նկատմամբ։ Կոնկրետ փաստերով ցույց է տրված, թե կայզերական Գերմանիան ինչպես էր հովանավորում և խրախուսում թուրքական կառավարողների հակահայկական քաղաքականությունը։

Ջ. Կիրակոսյանը իրավացիորեն գտնում է, որ արևմտահայության ցեղասպանության գործում արտաքուստ կարծես թե այլ էր Անգլիայի դիրքորոշումը, բայց, ըստ էության, նա ոչ պակաս բացասական դեր խաղաց։ Գրքում բերված բազմաթիվ փաստերը լիովին հաստատում են հեղինակի վերոհիշյալ եզրակացությունը։ «Պատմությունը կրկին ու կրկին հաստատեց այն ճշմարտությունը,— եզրակացնում է նա,— որ միջազգային իմպերիալիզմը Հայկական հարցը միշտ էլ որպես մի խրտվիլակ է օգտագործել Թուրքիային վախեցնելու, նրան ստիպելու անել այն, ինչ որ համապատասխանում էր եվրոպական մեծ տերությունների շահերին»[1]։

Անդրադառնալով ցարական Ռուսաստանի քաղաքականությանը, Ջ. Կիրակոսյանը գրում է, որ ինչպես բոլոր մեծ տերությունները, այնպես էլ Ռուսաստանը վարում էր, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ, «... իմպերիալիստական, կապիտալիստական պատերազմ, ավազակային պատերազմ, պատերազմ փոքր և ուրիշ ժողովուրդներին ճնշելու համար, պատերազմ՝ հօգուտ կապիտալիստների շահույթի...»[2]։ Այնուամենայնիվ, արևմտահայության զանգվածային ոչնչացումը ոչ միայն չէր բխում Արևմտյան Հայաստանում Ռուսաստանի հետապնդած նպատակներից, այլև չէր համընկնում նրա պլաններին[3]։ Սակայն գրքում

[1] Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 387։
[2] Վ. Ի. Լենին, երկ, հ. 27, էջ 280։
[3] Տե՛ս Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 400—411։

բազմաթիվ փաստեր են բերվում, որոնք ցույց են տալիս, որ ցարական իշխանություններն Արևմտյան Հայաստանի գրաված տարածքում փախստական հայերին արգելում էին վերադառնալ իրենց հայրենի հողը, փոխարենը Ալաշկերտի, Բայազետի, Դիադինի հովիտներում իրականացնելով հատկապես Դոնի ու Կուբանի կազակներին բնակեցնելու իրենց ծրագիրը։

Ջ. Կիրակոսյանը քննադատում է հայ քաղաքական կուսակցությունների ու հոսանքների, մասնավորապես դաշնակցության, պատերազմի տարիներին որդեգրած գործելակերպը։ Այս հարցը նա ավարտում է Ստ. Շահումյանի հետևյալ դրույթով. «... շնորհիվ հենց այն հանգամանքի, որ հայ ազգային կուսակցությունները գործիք ու խաղալիք էին մի կողմից՝ ռուս կառավարության, մյուս կողմից՝ կովկասահայ բուրժուազիայի ձեռքին, նրանց գործունեությունն այնքան կորստաբեր հետևանք ունեցավ տաճկահայերի համար և այնքան վնասակար էր նաև կովկասահայ ժողովրդական մասսաների համար»[1]։

Բնորոշ է, նշում է հեղինակը, որ դեռևս իր ժամանակին հայ իրականության մեջ ուժեղացել էր հուսախաբությունը, ծավալվել էր քննադատությունը ցարիզմի և իմպերիալիստական մյուս մեծ տերությունների սուտ խոստումներին հավատ ընծայած ու նրանց հետ գործարքի մեջ մտած մարդկանց ու կազմակերպությունների հասցեին։ «Շուտով խլրտումն ընդգրկեց հայկական հասարակական, քաղաքական բոլոր շրջանները,— գրում է նա։— Սկսվեց սեփական վարքագծի վերագնահատման, փոխադարձ ամբաստանությունների, հրապարակային հարձակումների ու բախումների մի շրջան... Գլխավոր ամբաստանյալ էր հռչակվում դաշնակցությունը»[2]։

Դաշնակցության սխալ գործելակերպը հետագայում քննադատվեց նաև այդ նույն կուսակցության և մյուս կուսակցությունների ղեկավար գործիչների կողմից՝ Կ. Սասունի, Ա. Ջիլինգարյան (Ռ. Դարբինյան), Պողոս-Նուբար փաշա, Հ. Առաքելյան, Դ. Անանուն և ուրիշներ։

Առաջին համաշխարհային պատերազմի և նրանից հետո ընկած ժամանակաշրջանում երիտթուրքերի հայահալած քաղաքականությունը հայկական և օտար հավաստի աղբյուրների և հա-

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, Եր. 1957, էջ 409։

[2] Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 421։



ռուստ գրականության հիման վրա հաջողությամբ բացահայտված է Ջ. Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» մենագրության երկրորդ գրքում[1]։

Նկատի ունենալով, որ հայերի ցեղասպանության մասին շատ է գրվել, Ջ. Կիրակոսյանը հարկ չի համարել աշխատության մեջ տալ դեպքերի ամբողջական շարադրանքը, այլ գլխավոր ուշադրությունը բևեռել է երիտթուրքական ջարդարարների այն որոշումների ու գործողությունների վրա, որոնք բնորոշում են հայերի ոչնչացման կանխամտածված բնույթը։ «Մենք դրանով իսկ,— գրում է նա,— հերքում ենք այսօրվա թուրքական քաղաքական պրոպագանդայի ճիգերը՝ խճողելու փաստերը, կեղծելու պատմական իրականությունը, արդարացնելու երիտթուրքերի մարդատյաց բարքերը»[2]։

Անդրադառնալով Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո արևմտահայության վիճակին, վեր հանելով Հայկական հարցի լուծման ուղղությամբ Խորհրդային Ռուսաստանի կառավարության միջոցառումները, պատմաբանը միաժամանակ ցույց է տվել, որ 1918 թվականին դեռ շարունակվում էր հայոց գենոցիդը, որ պանթուրքիզմը գործողության մեջ էր, և որ երիտթուրքերը խորհրդային ինտերվենցիայի առաջին իրականացնողներն էին։

Ջ. Կիրակոսյանի աշխատության մեջ լայն տեղ է հատկացված երիտթուրքական ոճրագործների դատավարությանը։ Ուշագրավ է, նկատում է հեղինակը, որ երիտթուրքական կառավարության անկումից հետո թուրքական պետական իշխանություններն իրենք են դատապարտել երիտթուրքերի ոճրագործությունները։ Դատավարության ընթացքում, նշում է նա, շատ փաստերով ապացուցվեց, որ երիտթուրքերն են կազմակերպել հայերի բռնի տեղահանությունները և կոտորածները։

Աշխատության մեջ պատմական փաստերի հիշատակումով ցույց է տրված, որ թեև խորտակվեց Օսմանյան կայսրությունը, բայց հայասպանությունը շարունակվում էր, որ քեմալականները երիտթուրքերի քաղաքականության շարունակողներն ու իրականացնողներն էին։ Բնորոշ է, գրում է Ջ. Կիրակոսյանը, որ

[1] Տե՛ս Ջ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը), գիրք 2, Եր., 1983։ Հեղինակի երկհատորանոց աշխատությունը մեկ գրքով լույս տեսավ նաև ռուսերեն։

[2] Նույն տեղը, էջ 19։

Քեմալի առաջին կաբինետը համարյա ամբողջությամբ կազմված էր երեկվա իթթիհատականներից։ Անդրադառնալով Թալեաթի սպանության հարցին, նա դիպուկ կերպով գրում է, թե համաշխարհային հասարակական կարծիքը շարունակում է դատապարտել Թալեաթին, իսկ Թուրքական կառավարությունը նրան հիշում ու մեծարում է այնպես, ինչպես կանեին ազգային հերոսների նկատմամբ[1]։

1918—1922 թթ., գրում է Ջ. Կիրակոսյանը, երիտթուրքերի և քեմալականների մահաբեր հարվածներից հայ ժողովուրդը կորցրեց 500 հազար մարդ։ «Թուրքիզմի գլխավոր նպատակներից մեկը,— գրում է նա,— հայ ժողովրդին հայրենիք ունենալու իրավունքից զրկելն էր»[2]։ Պանթուրքիզմը ուզում էր խեղդել Հայաստանը։ Հայաստանի բնաջնջումը, շարունակում է նա, մի միջոց էր միացնելու Թուրքիան ասիական մահմեդականության հետ, դեպի արևելք պանթուրքիզմի ճանապարհը բացելու համար։

Աշխատության մեջ քննվում են նաև խորհրդա-հայկական, խորհրդա-թուրքական հարաբերությունների, քեմալականների հարձակման և այլ հարցեր։

Մեր կարծիքով, Ջ. Կիրակոսյանի երկհատորանոց մենագրությունը ոչ միայն գիտական, այլև գաղափարական-քաղաքական ուղղվածության տեսակետից կարևոր ավանդ է խորհրդահայ պատմագրության մեջ։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիների Հայաստանի պատմությունը հանգամանորեն շարադրված է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Արզումանյանի ծավալուն աշխատության մեջ[3]։ Այդ ուսումնասիրությունն աչքի է ընկնում փաստերի առատությամբ, կուռ ընդհանրացումներով, մի շարք հարցերի նորովի մեկնաբանություններով։

Աշխատության սկզբում ցույց է տրված պատերազմի նախօրեին Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական դրությունը։

Հաջող է ներկայացված այդ ժամանակաշրջանում ծավալված Հայկական հարցի վերլուծությունը, բացահայտված է այդ հարցի վերաբերյալ մեծ տերությունների դիրքորոշումը։

[1] Տե՛ս Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., գիրք երկրորդ, էջ 258։

[2] Նույն տեղը, էջ 282։

[3] Տե՛ս Մ. Արզումանյան, Հայաստան, 1914—1917, Եր., 1969։



Ներկայացնելով Արևմտյան Հայաստանում իմպերիալիստական տերությունների զավթողական պլանները, նա հանգամանորեն վերլուծում է պատերազմի նկատմամբ հայ բուրժուազիայի, հայկական քաղաքական կուսակցությունների վերաբերմունքը։ Նշելով պատերազմի իմպերիալիստական, զավթողական բնույթը, նա գտնում է, որ հայ բուրժուազիան ևս, ելնելով իր շահերից, պատերազմի ջատագով էր դարձել։ Նույնն էր անում դաշնակցությունը։ Հայ բուրժուազիան իր շահերով սերտորեն կապված էր ցարիզմի, անգլիական ու ֆրանսիական կապիտալի հետ և պատերազմի հենց սկզբից պաշտպանեց Անտանտի պետություններին։ Բնորոշ է, որ դաշնակցությունը որոշեց հրաժարվել ցարիզմի դեմ ուղղված ամեն մի ելույթից, իսկ դրան ի պատասխան, ցարական կառավարությունն էլ բանտերից ազատեց նախկինում ձերբակալված դաշնակցականներին՝ ծառայեցնելով նրանց իր ագրեսիվ նպատակներն իրագործելու համար։

Հանգամանորեն շարադրված են Կովկասյան ճակատի ռազմական գործողությունները։ Առանձին քննության առարկա է դարձել ռուսական զորքերի կողմից Թուրքիայի գրաված տարածքի հայկական նահանգների տնօրինման հարցը։ Ճիշտ է հեղինակի այն դիտողությունը, թե Արևմտյան Հայաստանի մեծ մասը գրավելով, ռուսական ցարիզմը բոլորովին էլ չէր մտածում նրան անկախություն կամ ինքնավարություն տալու մասին։ «Նրա նպատակն էր այն պարզապես կցել Ռուսական կայսրությանը և ենթարկել գաղութային ճնշման»[1]։

Աշխատության ամենաընդարձակ բաժինը նվիրված է Մեծ եղեռնի պատմությանը։ Այստեղ հանգամանորեն խոսվում է հայերի բնաջնջման Թուրք-գերմանական ծրագրի մասին, ըստ խոշոր բնակավայրերի առանձին-առանձին շարադրվում է արևմտահայության բռնագաղթի ու կոտորածների, ինչպես նաև հայերի ինքնապաշտպանական կռիվների պատմությունը։

Երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը պատահական երևույթ չէր, իրավացիորեն նկատում է Մ. Արզումանյանը, այլ բռնակալական Թուրքիայի մշտապես իրականացվող հայասպան գծի անմիջական շարունակությունը՝ բարձրացրած գերադրական աստիճանի։

[1] Մ. Արզումանյան, նշվ. աշխ., էջ 267։

Անդրադառնալով Մեծ եղեռնի ժամանակ զոհված հայերի քանակի հարցին, հեղինակը գտնում է, որ թուրքական աղբյուրները բացարձակապես կեղծում են փաստերը և հիմնականում ժխտում հայկական կոտորածները։ Նույնը իրենց հուշագրություններում են անում երիտթուրքերի պարագլուխները, թուրքական պետության հետագա ղեկավար գործիչները։ Փաստերի վրա հենված հավաստի աղբյուրները համարելով օտարերկրացի Գիբբոնսի, Լեփսիուսի, Մորգենթաուի, Մանդելշտամի, Ֆայեզ էլ Ղոսեյնի և ուրիշ բարեխիղճ, անկողմնակալ հետազոտողների տվյալները, Մ. Արզումանյանը միաժամանակ քննադատում է այն օտարերկրացիներին, ովքեր կաշառվում են թուրքական շրջանների կողմից։

Հայկական եղեռնի գործում, բնականաբար, ամենագլխավոր հանցագործ համարելով թուրքական բռնակալությանը, պատմաբանը միաժամանակ առաջ է քաշում հետևյալ հարցը՝ արդյոք թուրք ժողովուրդը մեղք ունե՞ր դրանում։ Նրա կարծիքով, այդ տեսակետից սխալ կլինի հավասարության նշան դնել թուրքական բռնակալ կառավարողների, իշխող դասակարգերի և աշխատավոր զանգվածների միջև։ Չնայած Մ. Արզումանյանը փաստեր է բերում առանձին վայրերում թուրք բնակչության կողմից հայերին ցույց տրված օգնության մասին, որոնց ճնշող մեծամասնությունը դեմ էր իշխանությունների քաղաքականությանը, սակայն միաժամանակ գտնում է, որ «կարեկցանքի ու օգնության առանձին դեպքերը եղանակ չստեղծեցին և մեծ ոճիր կազմակերպվեց հետամնաց ու մոլեռանդ թուրք ժողովրդի, ինչպես նաև մնացած մուսուլմանների (չերքեզների, քրդերի և մյուսների) մասնակցությամբ»[1]։ Ավելին, «երբ որևէ ժողովուրդ հանդուրժում է ռեակցիոն կառավարությանը, թեկուզ խաբվում նրա կողմից և այս կամ այն չափով կատարում է նրա կամքը, դրանով իսկ ինքը դառնում է չարիքի մեղսակից, որը քավելու միակ միջոցը այդ կառավարության տապալումն է, վնասի հատուցումը, արդարության վերականգնումը»[2]։

Պատմաբանի կարծիքով, «թուրք ժողովուրդը պետք է իր մեղքը քավի նրանով, որ դատապարտի հայկական կոտորածները, պատժի նրա հանցավորներին և ուղղի պատմական անարդարությունը»[1]։

Վկայակոչելով գերմանացի կոմունիստ գործիչ Ա. Աբուշի՝ «Մի ազգի կեղծ ուղին» աշխատության այն խոսքերը, թե «Գերմանացիները պետք է հատուցեն նրա համար, ինչ ավերվել է նրանց ձեռքով», Մ. Արզումանյանը գրում է. «Դա վերաբերում է նաև թուրք ժողովրդին, որը ժամանակին դարձավ կույր գործիք իր բռնակալ ղեկավարների ձեռքին, որոնք, արատավորեցին նրա պատմությունը»[2]։

Մ. Արզումանյանը գտնում է, որ հայկական եղեռնի երկրորդ գլխավոր հանցավորն ու պատասխանատուն իմպերիալիստական Գերմանիան էր[3]։ Արևմտահայության բնաջնջման մեջ հանցավոր են նաև մյուս երկրների իմպերիալիստները։ «Հատկապես դիվային էր ու ոճրագործ նենգամիտ Անգլիայի դերը»[4]։ «Պակաս հանցավոր չէր նաև ֆրանսիական իմպերիալիզմը»[5]։ «Ամերիկայի Միացյալ Նահանգներն էլ փաստորեն անտարբեր մնացին հայ ժողովրդի մղձավանջի նկատմամբ»[6]։ «Հայկական կոտորածների հարցում հանցավոր էր նաև ռուսական ցարիզմը»[7]։ Հայ ժողովրդի ողբերգության պատասխանատվությունը դրվում է նաև «ազգային ղեկավարների»՝ հայ քաղաքական կուսակցությունների վրա, եզրափակում է հեղինակը։

Մ. Արզումանյանի աշխատության մեջ հատուկ քննության է ենթարկվում նաև հայասպանության հանցավորների պատասխանատվության հարցը, որն ունի ոչ միայն պատմագիտական, այլև քաղաքական ու գործնական նշանակություն։ Քանի որ, գրում է նա, ժամանակին մարդասպանները, չնչին բացառությամբ, չպատժվեցին, դատավարություն չկազմակերպվեց, որովհետև պատժողները պետք է լինեին հենց իրենք հանցավորները, ուստի նա արդարացի է համարում բոլոր տեռորիստական գործողությունները՝ ուղղված հայկական կոտորածների կազմակերպիչների դեմ։ Այն հարցին, թե՝ չէ՞ որ մենք ժխ-

---

[1] Մ. Արզումանյան, նշվ. աշխ., էջ 513 (ընդգծ. հեղ.— Շ. Հ.)։
[2] Նույն տեղը, էջ 514։



---

[1] Մ. Արզումանյան, նշվ. աշխ., էջ 515։
[2] Նույն տեղը, էջ 640։
[3] Տե՛ս Մ. Արզումանյան, նշվ. աշխ., էջ 515։
[4] Նույն տեղը, էջ 531։
[5] Նույն տեղը, էջ 536։
[6] Նույն տեղը։
[7] Նույն տեղը, էջ 542։

տում ենք անհատական տեռորի տակտիկան, Մ. Արզումանյանը պատասխանում է այսպես. «Խորամուխ եղեք կոնկրետ փաստերի մեջ, և կտեսնեք, որ դրանք սովորական տեռորիստական ակտեր չէին, այլ այն ժամանակվա պայմաններում արդարացի ժողովրդավրիժառուական գործողություններ»[1]։

Աշխատության մեջ ճիշտ գնահատական է տրված արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվներին։ Չնայած առաջին համաշխարհային պատերազմն ուներ թալանչիական բնույթ, Հայաստանը գտնվում էր իմպերիալիստական պետությունների հակասությունների կծիկում, այնուամենայնիվ, գրում է պատմաբանը, Մեծ եղեռնի օրերին արևմտահայության մղած գոյամարտերը, նրա ինքնապաշտպանությունը պետք է դիտել որպես հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագներ։

Հաջող է բացահայտված Հայկական հարցի նկատմամբ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ միջազգային դիվանագիտության նենգ ու խարդախ բնույթը։ Քանի որ պատերազմն անարդարացի, թալանչիական էր, իրավացիորեն գրում է նա, ուստի կռվող պետությունների դիվանագիտությունն էլ ամբողջովին ծառայում էր նրանց ագրեսիվ նպատակներին։ Ցույց է տրվում, որ Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան այս անգամ ևս Հայկական հարցն օգտագործում էին իրենց իմպերիալիստական շահերի համար և ամենևին էլ մտահոգված չէին դրա արդարացի լուծմամբ։ Ավազի վրա էր կառուցվում Հայաստանին ինքնավարություն տալու մասին ցարական կառավարության կեղծ խոստումը։ Ավելի վատ էր անգլո-ֆրանսիական՝ Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագիրը, որը Հայաստանը մասնատելու մի նոր փորձ էր։

Համաձայն լինելով Արևմտյան Հայաստանում ցարական կառավարության զավթողական քաղաքականություն վարելու մասին Մ. Արզումանյանի տեսակետներին, այնուամենայնիվ, առարկելի ենք համարում նրա այն պնդումը, թե ինչպես անարդարացի էր Արևմտյան Հայաստանը դարեր շարունակ Թուրքիայի լծի տակ մնալը, այնպես էլ պատերազմի ժամանակ ռուսական զորքերի կողմից այն գրավելը[1]։ Դա ճիշտ համեմատություն չէ։

Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ռազմաճակատի պատմությունը հանգամանորեն լուսաբանված է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Հարությունյանի մենագրության մեջ[2], որի էջերում պատմաբանը բարեխղճորեն օգտագործել է մեծ քանակությամբ արխիվային նոր վավերագրեր։ Աշխատությունն աչքի է ընկնում փաստական նյութի հարստությամբ, մի շարք պրոբլեմների նորովի մեկնաբանություններով։ Տվյալ թեմայի վերաբերյալ ստեղծվել է մեծ քանակությամբ գրականություն (Վ. Պարսամյան, Ե. Սարգսյան, Ջ. Կիրակոսյան, Մ. Արզումանյան և ուրիշներ), սակայն չժխտելով այդ ուղղությամբ կատարված աշխատանքը, հարկ է նշել, որ Ա. Հարությունյանի մենագրությունն իր ծավալով, հարցերի լայն ընդգրկումով, պատերազմական գործողությունների ռազմագիտական վերլուծություններով ամենաամբողջականն է։

Ա. Հարությունյանը, խոսելով մինչ այդ հրատարակված աշխատությունների արժանիքների մասին, միաժամանակ քննադատական մոտեցում է հանդես բերել, մի բան, որ ոչ բոլոր պատմաբաններն են անում։ Այսպես, նա առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ռազմաճակատի պատմության հեղինակավոր մասնագետ համարելով գեներալ-լեյտենանտ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Կորսունին, նշելով նրա դերը խորհրդային ռազմական պատմագրության մեջ, միաժամանակ կատարում է մի շարք լուրջ դիտողություններ։ Օրինակ, Կորսունը 1914—1917 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասին խոսելիս, ելնելով Մ. Պոկրովսկու սխալ կոնցեպցիայից, գտնում է, որ Ռուսաստանը չէր ցանկանում հաշտություն կնքել Թուրքիայի հետ, այլ, ընդհակառակն, ձգտում էր նրան ներգրավել պատերազմի մեջ նեղուցները և Հայաստանը գրավելու համար։ Ճիշտ է նաև Ա. Հարությունյանի այն դիտողությունը, թե Կորսունը գերագնահատում է ցարական Ռուսաստանի դիվանագիտական պայքարի նշանակությունը Արևմտյան Հայաստանում ռեֆորմներ անցկացնելու գործում, այն համարելով Ռուսաստանի դիվանագիտության մեծագույն արդյունք։

---

1 Մ. Արզումանյան, նշվ. աշխ., էջ 634։

1 Տե՛ս Մ. Արզումանյան, նշվ. աշխ., էջ 753։

2 Տե՛ս Арутюнян А., Кавказский фронт. 1914—1917 гг., Е., 1971.

«Ռուսաստանը,— գրում է պատմաբանը,— ոչ մի «մեծագույն արդյունքների» չհասավ, քանի որ ռեֆորմները և այդ ուղղությամբ կատարված բոլոր միջոցառումները Թուրքիայի կողմից ձախողվեցին, իսկ պատերազմը վերջնականապես թաղեց ռեֆորմների հետ կապված բոլոր նախագծերը»[1]։

Հեղինակը անհամոզիչ է համարում նաև Կովկասի և Ռուսաստանի մուսուլմանական բնակչության վրա պանիսլամական պրոպագանդայի ունեցած ազդեցության մասին Կորսունի պնդումը։ «Պանիսլամիզմի ազդեցության տակ,— գրում է Ա. Հարությունյանը,— թուրքական կառավարող շրջանները որոշ հաջողությունների հասան Ռուսական կայսրության բնակչության մեջ իրենց կողմնակիցներին հավաքագրելու գործում։ Սակայն պատմական ճշմարտությունը խոսում է այն մասին, որ Ռուսաստանի մուսուլմանական բնակչության հիմնական զանգվածը համերաշխ է ապրել իր հարևան ժողովուրդների հետ և առանձին ձգտում հանդես չի բերել անջատվելու Ռուսաստանից Թուրքիայի օգտին»[2]։

Ա. Հարությունյանը համոզիչ չի համարում նաև Օտտոմանյան կայսրության, առանձնապես մերձճակատային տարածքում ապրող հայերի դրության մասին Կորսունի դատողությունները։ Գրքում բերվում են մի քանի ստույգ փաստաթղթեր, որոնք խոսում են այն մասին, որ թուրքական կառավարությունն իր առջև խնդիր էր դրել ոչնչացնել հայ բնակչությանը[3]։

Հեղինակը ճիշտ դիտողություն է անում նաև Մ. Պոկրովսկուն այն բանի համար, որ նա գրել է, թե, իբր, Էնվեր փաշան ցանկացել է Ռուսաստանի հետ ռազմական դաշինք կնքել, առաջարկել է թուրքական բանակի օգնությունը։ «Ոչ ոք Ռուսաստանին թուրքական բանակ չի առաջարկել,— գրում է Ա. Հարությունյանը,— որովհետև նա վաղուց էր գործում գերմանական գեներալների ու ծովակալների ղեկավարության ներքո»[4]։

Ընդգծելով, որ խորհրդային ռազմական նշանավոր պատմաբան Ա. Զայոնչկովսկու աշխատությունները լավագույններն են առաջին համաշխարհային պատերազմի մասին, հայ հեղինակը

[1] Арутюнян А., նշվ. աշխ. էջ 7։
[2] Նույն տեղը, էջ 8։
[3] Տե՛ս նույն տեղը, էջ 9։
[4] Նույն տեղը, էջ 10։



միաժամանակ ցավալի է համարում այն, որ դրանցում քիչ ուշադրություն է դարձված Կովկասյան ռազմաճակատին։

Ա. Հարությունյանը գնահատում է նաև խորհրդահայ պատմաբաններ Ե. Սարգսյանի, Ջ. Կիրակոսյանի, Վ. Պարսամյանի, Ա. Մնացականյանի, Մ. Արզումանյանի, Ռ. Մանուկյանի և ուրիշների աշխատությունները, առանձնապես արժեքավոր համարելով Ե. Սարգսյանի մենագրությունը[1]։ Վերջինը «խորհրդային պատմաբանների մեջ առաջինն էր, որ ցույց տվեց երիտթուրքական պարագլուխների ագրեսիվությունը, նրանց նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում և դրանով նշանակալի հարված հասցրեց նրանց, ովքեր առանց հիմքի առաջին համաշխարհային պատերազմում թուրքիային ներկայացրել են անմեղ գառան տեսքով կամ գերմանացիների կույր զոհ»[2]։

Նշելով, որ մեր երկրում թուրքիայի պատմության խոշոր մասնագետ են համարում Ա. Միլլերին, որի գրչին են պատկանում մի շարք հետազոտություններ, Ա. Հարությունյանը միաժամանակ նկատում է, որ նա սխալ մոտեցում է հանդես բերում պատմական մի քանի փաստերի և անձնավորությունների նկատմամբ։ Օրինակ, Միլլերը քիչ է օգտագործում Ռուսաստանի պետական արխիվների նյութերը և մեծ մասամբ հենվում է թուրքական հրատարակությունների վրա, որոնք գրված են բացահայտ միտումնավորությամբ և փաստերի կեղծությամբ։

Աշխատության մեջ քննադատված են նաև արտասահմանյան հեղինակները, այդ թվում՝ Ջեմալ փաշան, որը, ինչպես հայտնի է, իր հուշերում, կեղծելով պատմությունը, լիովին արդարացնում է հայերի նկատմամբ առաջին համաշխարհային պատերազմում թուրքական կառավարության քաղաքականությունը։

Մենագրության մեջ հանգամանորեն լուսաբանվել են հետևյալ հարցերը. ռազմաքաղաքական իրադրությունը Մերձավոր արևելքում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, թուրքիայի ռազմական պատրաստությունների ուժեղացումը, դիվանագիտական պատերազմը Ռուսաստանի և թուրքիայի

[1] Տե՛ս Саркисян Е., Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны. Е., 1962:
[2] Арутюнян А., նշվ. աշխ., էջ 11։

միջև, ռազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում 1914—1917 թթ., հայ կամավորական ջոկատների գործունեությունը, ցարական ու ժամանակավոր կառավարությունների քաղաքականությունը և ռազմական հրամանատարության միջոցառումները Արևմտյան Հայաստանի գրաված տարածքի կառավարման ուղղությամբ։

Պատմաբանը քննում է Անտանտի դեմ Թուրքիայի հանդես գալու պատճառները։ Ա. Հարությունյանի կարծիքով, 1930—40-ական թվականների մի շարք պատմաբանների եզրակացություններն ու ընդհանրացումները եղել են անհիմն։ Նա նկատի ունի գլխավորապես Մ. Պոկրովսկուն, որը գրել է, թե, Ռուսաստանի պատերազմի մեջ մտնելու ամենաառաջին պատճառը նրա ձգտումն էր գրավել Կ. Պոլիսն ու Դարդանելը, որ ռուսական կառավարությունը ցանկանում էր Թուրքիային ներքաշել պատերազմի մեջ ընդդեմ Անտանտի։ Բանն այն է, որ միայն Պոկրովսկին չէր այդպես գրում։ Տուրք տալով Մ. Պոկրովսկու սխալ տեսակետին, ռազմական պատմաբաններն առաջին համաշխարհային պատերազմի պատմության վերաբերյալ իրենց աշխատություններում երկար ժամանակ հետևում էին այդ կոնցեպցիային։

Այսպես, Ա. Զայոնչկովսկին 1938-ին հրատարակած իր «1914—1918 թթ. համաշխարհային պատերազմը» ուսումնասիրությունում պատերազմի մեջ մտնելու Ռուսաստանի ձգտումը դիտել է որպես ռուսական իմպերիալիզմի գաղութային ցանկությունների իրականացման միջոց։ Գերմանական ռազմական պատմաբան Գ. Լորեի նույն ժամանակ ռուսերեն հրատարակված գրքի առաջաբանում ոչ ավել, ոչ պակաս գրված է, թե, իբր, Թուրքական կառավարությունը Էնվեր փաշայի բերանով 1914 թ. հուլիսի 27-ին (օգոստոսի 9) հայտարարել է, որ Թուրքիան Ռուսաստանի հետ դաշինքի մեջ է։ «Յուրաքանչյուր խելամիտ մարդու հասկանալի է,— գրում է Ա. Հարությունյանը,— որ օգոստոսյան ծանր օրերին ցարական Ռուսաստանը երբեք չէր պայքարի «նոր հակառակորդներ ձեռք բերելու համար»»[1]։

Համաշխարհային պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու պատճառների մասին ավելի տարածված կարծիքն այն է, գրում է հեղինակը, որ այդ երկիրն, իբր, ամբողջովին գտնվում էր Գերմանիայի գրկում և գործում էր նրա ճնշման տակ։ Դրանով

[1] Арутюнян А., նշվ. աշխ., էջ 84։



թերագնահատվում են Թուրք կառավարիչների զավթողական ձգտումները։ Ա. Հարությունյանը գտնում է, որ արխիվային փաստաթղթերը և հավաստի մյուս աղբյուրները ժխտում են նման ոչ գիտական մեկնաբանությունները։ Փաստական նյութերի հիման վրա գիտականորեն հիմնավորելով իր տեսակետը, Ա. Հարությունյանը իրավացիորեն գտնում է, որ այս բոլորից հետո անհասկանալի ու միանգամայն անհամոզիչ է հնչում Մ. Պոկրովսկու այն կարծիքը, թե «...պատերազմն անմիջականորեն պրովոկացիայի է ենթարկվել ռուսական զինվորական կուսակցության կողմից»[1]։

Ա. Հարությունյանի մենագրության վերջում ցույց է տրված Կովկասյան բանակի վրա 1917 թ. Փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխության ազդեցությունը, զորքի և հրամանատարների միջև ստեղծված քաղաքական տրամադրությունը, ռազմաճակատի փլուզումն ու քայքայումը։ Նշվում է, որ ժամանակավոր կառավարությունը շարունակում էր ցարիզմի քաղաքականությունը։ Այդ իմաստով բնորոշ է Միլյուկովի օրինակը։ Նա ցարական կառավարության մեջ օպոզիցիոն դիրք էր գրավել, ժամանակին հանդես էր գալիս Հայկական հարցը արդարացի լուծելու մասին ճառերով, բայց երբ դարձավ ժամանակավոր կառավարության արտաքին գործերի մինիստր, ոչ մի քայլ չարեց իր արտահայտած տեսակետները կենսագործելու ուղղությամբ։

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի հայ ժողովրդի պատմության մի շարք կարևոր հարցեր են քննվում Ս. Աղայանի՝ «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից» աշխատության 7—8-րդ գլուխներում։ Այստեղ նա վերլուծում է հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը և դատապարտում նրանց, առաջին հերթին՝ դաշնակցության գործունեությունը, այնուհետև նա շարադրում է հայ կամավորական ջոկատների մարտական գործողությունները, Մուշի, Սասունի, Զեյթունի և այլ վայրերի ինքնապաշտպանական կռիվները և ավելի հանգամանորեն խոսում Մեծ եղեռնի մասին։

Ս. Աղայանը ճակատագրական սխալ է համարում դաշնակ-

[1] Տե՛ս Арутюнян А., նշվ. աշխ., էջ 90։

ցության դիրքորոշումը՝ Թուրքական լծից Արևմտյան Հայաստանի ազատագրումը կապելով ցարական Ռուսաստանի, իմպերիալիստական պատերազմում Անտանտի հաղթանակների հետ։ «Պարզ է,— գրում է նա,— որ դաշնակցականների այդ դիրքն ապակողմնորոշում էր հայ աշխատավորական զանգվածներին, նրանց մեջ սխալ պատրանք ստեղծում, նրանց նվիրական հույսերը կապում Անտանտի իմպերիալիստների հաղթանակների հետ, որն իրականում այնքան չարիքներ ու ողբերգություններ բերեց հայ ժողովրդին»[1]։

Անդրադառնալով ռուսական զորքերի նահանջի պատմությանը, ճիշտ նշելով, որ այն սարսափելի ծանր վիճակ ստեղծեց հայ ժողովրդի համար, մեր կարծիքով, պատմաբանը շատ ճիշտ է, երբ դրա ամբողջ մեղքը գցում է նահանջող ռուսական բանակի վրա։ «Դա սովորական նահանջ չէր,— գրում է նա։— Դա մի ամբողջ ժողովրդի բնաջնջում էր, այն ժողովրդի, որն իր հույսը կապել էր ռուսական բանակի հետ։ Իսկ հիմա այդ բանակը նահանջում էր՝ խուլ ու համր այն ողբերգության հանդեպ, որին մատնվում էր իր փրկության հույսը նրա հետ կապող ժողովուրդը...»[2]։

Կարծում ենք հիմնավորված չէ նաև Անդրանիկի այն հայտարարությունը, որին Ս. Աղայանը լիովին համամիտ է, այսինքն՝ ռուսական բանակի նահանջի պատճառը դավաճան Տիգրան Դևոյանցի կեղծ տեղեկագիրն էր Թուրքական բանակի 11 դիվիզիա մարտի դաշտ դուրս բերելու մասին[3]։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիների Հայաստանի պատմության իրադարձություններին լայն տեղ է հատկացված նաև «Հայ ժողովրդի պատմության» VI հատորում։ Գրքի տվյալ գլխի հեղինակներ Ե. Սարգսյանը և Հ. Պետրոսյանը ցույց են տվել Կովկասյան ճակատի ռազմական գործողությունները, վեր հանելով պատերազմին հայերի մասնակցությունը։

Շարադրելով արևմտահայերի զանգվածային ջարդերն ու տեղահանությունները, Ե. Սարգսյանը նշում է, որ արևմտահայության ֆիզիկական բնաջնջման իր հրեշավոր ծրագիրը Թուրքական բռնակալությունը մշակել էր դեռևս անցյալ դարի վերջե-

1 Ս. Աղայան, նշվ. աշխ., էջ 371։

2 Նույն տեղը, էջ 425։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 542։



րին։ Ճիշտ է նաև այն եզրահանգումը, որ արևմտահայության ողբերգական ճակատագիրը հետևանք էր ոչ միայն Թուրքիայի հասարակական-քաղաքական հետամնացության և նրա կառավարողների պանթուրքական նկրտումների, այլև մեծ տերությունների իմպերիալիստական ներհակությունների[1]։

Հայտնի է, որ հայկական ջարդերի ժամանակ մի շարք վայրերում արևմտահայերը ինքնապաշտպանական հերոսական մարտեր ծավալեցին թշնամու գերազանց ուժերի դեմ, սակայն նրանք կոնկրետ ծրագիր չունեին, գործում էին տարերայնորեն, միմյանցից անջատ։ Այն հարցին, թե այդ ինքնապաշտպանական կռիվները հայերի համար օգտակար եղան, թե ոչ, Ե. Սարգսյանը պատասխանում է. «Ընդհանուր առմամբ այն վայրերում, ուր հայերն իրենց կյանքը փրկելու համար զենքի դիմեցին, զգալիորեն ավելի քիչ տուժեցին, քան երբ անտրտունջ կատարում էին Թուրքական իշխանությունների կարգադրությունները»[2]։ Հեղինակը արդարացիորեն քննադատում է Թուրքիայի պաշտոնական պատմագրությանը, որը հանդգնում է արդարացնել 1915—1916 թթ. երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը, իսկ կոտորածները բացատրում հայերի «ապստամբություններով»։

Հատորում համառոտակի լուսաբանվում են նաև պատերազմի տարիներին միջազգային դիվանագիտությունն ու Հայկական հարցը, պատերազմի նկատմամբ հայ քաղաքական կուսակցությունների, այդ թվում՝ դաշնակցության վերաբերմունքը, Արևելյան Հայաստանի տնտեսական դրության վատթարացումը, դասակարգային պայքարի սրումը և այլ հարցեր։ Մասնակի տեղ է տրված նաև փետրվարյան հեղափոխությունից հետո ընկած ժամանակաշրջանի հրատապ հարցերի լուսաբանմանը։ Սակայն, չնայած դրան, ինչպես նկատել է հատորի դրախոս պրոֆ. Հ. Մելիքյանը, այդ ժամանակաշրջանի մի շարք կարևոր հարցերը դուրս են մնացել կամ շոշափվել են հարևանցիորեն։ «Այդպես է բանը Հոկտեմբերյան հեղափոխության նախապատրաստման ժամանակաշրջանի իրադարձություններով ու նշանակությամբ հարուստ պատմության հարցում։ Այդ բաժնում շրջանցվել են նորովի մեկնաբանված մի շարք պրոբլեմներ ու գիտական շրջ-

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 560։

2 Նույն տեղը, էջ 579։

ջանառության մեջ դրված բազմաթիվ նոր փաստեր»[1]։ Հ. Մելիքյանը նկատում է, որ անուշադրության են մատնվել Կարսի մարզում, Արևմտյան Հայաստանում, նաև Երևանի նահանգում շուրջ մեկմիլիոնանոց Կովկասյան բանակի հետ առնչվող և հատկապես նրանում ծավալված հեղափոխական շարժման հարցերը, որով, ինչպես գրում է նա, «կամա թե ակամա աղքատացել է Հայաստանի պատմությունը»։

Գիտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում պատմական գիտությունների թեկնածու Շ. Թորոսյանի մենագրությունը՝ նվիրված Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժման պատմությանը[2]։

Հայերի ցեղասպանության պատմության, մասնավորապես այդ պատմության կեղծարարության մերկացման ասպարեզում առանձնահատուկ նշանակություն ունի Ս. Պողոսյանի «Գոյատևման պայքարի քառուղիներում» մենագրությունը։ Գրքի երկրորդ մասում հարուստ փաստերի հիման վրա ցույց է տրվում, թե ինչպես թուրքական կառավարությունը հայերի բնաջնջումը դարձրել էր պետական քաղաքականություն և առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իրականացրեց Մեծ եղեռնը։ Հայերի ցեղասպանության պատմությունը կեղծելու և այն ժխտելու փորձերը, գրում է հեղինակը, նոր չեն։ Աշխատության մեջ այդ մասին բազմաթիվ փաստեր են հրապարակված։

Հայ ժողովրդի, նրա պատմության ու մշակույթի վրա զանգվածային հարձակումը, իրավացիորեն գրում է Ս. Պողոսյանը, դարձել է պետական քաղաքականություն։ Այն ունի երկու գլխավոր խնդիր՝ ժխտել, որ Արևմտյան Հայաստանն է հայերի բնօրրանը և, որ թուրքերը հայ ժողովրդի նկատմամբ իրականացրել են ցեղասպանություն[3]։

Բանն այն է, որ այդ գործին լծվել են ոչ միայն թուրք, այլև Թուրքիայի կողմից կաշառված Արևմուտքի շատ պատմաբաններ, քաղաքական գործիչներ ու դիվանագետներ։ «Թուրքիայի հակահայկական պրոպագանդան,— գրել է նա,—համաչափ է

1 «Լրաբեր» հասարակական գիտությունների, № 3, 1982, էջ 98։

2 Տե՛ս Շ. Թորոսյան, Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումը 1915—1920 թթ., Եր., 1987։

3 Տե՛ս Ս. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 308։



գործում Արևմուտքի հակախորհրդային պրոպագանդայի հետ»[1]։ Դա ապացուցելու համար, ավելացնում է հեղինակը, փաստերի պակաս չի զգացվում։

1979 թ. Կ. Պոլսում անգլերեն հրատարակված Հ. Էրգենի «Արևելյան Անատոլիան և ուրարտացիները» գրքում հեղինակը Արևելյան Անատոլիա է համարում նաև Հայկական բարձրավանդակը։ Առանձնապես նա պնդում է, թե, իբր, խուրիները և ուրարտացիները ևս թուրքական ծագում ունեն։ 1982-ին Թուրքիայում հրատարակված «Վանի պատմությունը և թուրք-քրդերի վերաբերյալ հետազոտությունները» գրքում ասված է, որ էրմանիստան երկիրը հայերը յուրացրել են և Արարատ սարը համարել իրենց խորհրդանիշը։ «Հայ ժողովուրդը և թուրք ժողովրդին ստրկացնելու փորձերը» գրքում ասվում է, որ Բիհիսթունի արձանագրությունը ոչ մի կապ չունի հայերի հետ, որ այդ երկրում ապրողները խոսել են թուրքերենին մոտ լեզվով։ Այդ գրքում թուրք են համարվում նույնիսկ Գրիգոր Լուսավորիչն ու Արշակունիները, որ հայոց գրերը ստեղծել են թուրքական ծագում ունեցողները և այլն։

Աշխատության մեջ շարադրված է հայկական ցեղասպանության փաստաշատ և զարհուրելի պատմությունը, ցույց է տրվել երիտթուրքերի ռեակցիոն քաղաքականությունը։ Անդրադառնալով հայերի բռնի տեղահանություններին, Ս. Պողոսյանը իրավացիորեն այն ևս համարում է ցեղասպանություն։

Աշխատության մեջ ցույց է տրված նաև աշխարհի առաջադեմ մարդկության դրական վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ։ Փաստեր են բերված այն մասին, որ առաջադեմ գործիչների հրատարակած գրքերում ու հոդվածներում խստագույնս դատապարտվում է հայերի ցեղասպանությունը, մերկացվում թուրքական կեղծարարությունը։

Հարկ է նշել, որ թուրքական պատմագրության կեղծարարության մերկացման ուղղությամբ մեծ աշխատանք են կատարում նաև Հայկական ԽՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի թուրքագետները։ Նրանց աշխատություններում հակահարված է տրվում Թուրքիայում և Արևմուտքի երկրներում հրատարակված հակահայկական գրքերի ու մամուլում տպագրված հոդվածների հեղինակներին։

1 Ս. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 295։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիների հայ ժողովրդի պատմությանը նվիրված աշխատություններում ավել կամ պակաս չափով շոշափվել է նաև հայկական կամավորական շարժման հարցը։ Առանձին աշխատություններում վեր են հանվել կամավորական ջոկատների մարտական գործողությունները։

Սակայն հենց սկզբից ասենք, որ 1920—1930-ական թվականներին (Լեո, Ա. Կարինյան, Բ. Բորյան և ուրիշներ) հայկական կամավորական շարժմանը տրվում էր խիստ բացասական գնահատական, քանզի այդ շարժումը բացարձակապես կապվում էր դաշնակցության գործունեության հետ, այն դիտվում էր որպես սոսկ դաշնակցական արկածախնդրություն։

1960-ական թվականների կեսերից սկսած, ի տարբերություն 1920—30-ական թվականների բացարձակ բացասական գնահատականի, պատմաբանների գերակշռող մասը նկատում է հայ կամավորական շարժման նաև դրական կողմը։

1960-ական թվականներին այդ հարցին առաջինն անդրադարձել է Ջ. Կիրակոսյանը։

Բացահայտելով Մերձավոր արևելքում, Արևմտյան Հայաստանում ցարիզմի հետապնդած ռազմաքաղաքական նպատակները, կամավորական խմբեր կազմակերպելու ուղղությամբ Կովկասի փոխարքայության կամակատարը դարձած կովկասահայ բուրժուազիայի ու դաշնակցության ջանքերը, միաժամանակ վկայակոչելով կամավորական շարժման նկատմամբ Կովկասի, այդ թվում՝ հայ բոլշևիկների բացասական դիրքորոշումը, Ջ. Կիրակոսյանը դրական չի համարում այդ շարժումը։ Նրա կարծիքով, կամավորական խմբեր ստեղծելով, ցարական կառավարությունը ոչ միայն նպաստակ ուներ ռազմական աջակցություն ցույց տալ Կովկասյան ռազմաճակատում գործող ռուսական բանակին, այլև թուլացնել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, չեզոքացնել Անդրկովկասի հակացարական ուժերը։ «Կամավորական շարժումը,— գրում է նա,— թե՛ քաղաքական, թե՛ դիվանագիտական, թե՛ տակտիկական տեսակետից անհեռատես քաղաքականության արդյունք էր»[1]։ Կամավորական շարժումը չկշռադատված և անկազմակերպ մի

[1] Ջ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, էջ 426 (Ընդգծումը հեղինակինն է— Շ. Հ.)։



մարտահրավեր էր, որ անխուսափելիորեն միայն վնաս էր հասցնելու հայ ժողովրդին։ «Ռազմական տեսակետից,— գրում է նա,— ի՞նչ կարող էր տալ մի քանի հազար մարդուց բաղկացած հայ կամավորությունը, երբ Կովկասյան ճակատում գործում էր ռուսական մի քանի հարյուր հազարանոց բանակ, եթե ոչ միայն թուրքական մոլեռանդ շովինիզմի էլ ավելի գրգռում։ Ինչի՞ համար էր հայկական կամավորությունը,— շարունակում է նա,— երբ ռուսական բանակում Ռուսաստանի մյուս ժողովուրդների հետ միասին իմպերիալիստական սպանդանոց էին քշվում տասնյակ հազարավոր հայ երիտասարդներ»[1]։

Սակայն պատմաբանն իրավացի է, երբ նշում է, որ պետք է տարբերություն դնել կամավորական շարժման քաղաքական կազմակերպիչների և այդ շարժման տասնյակ ու հազարավոր շարքային, խիզախ մարտիկների, զորահրամանատարների միջև։ «Վերջիններս կռվի դաշտ էին մեկնել ազնիվ միտումով, արևմտահայ իրենց եղբայրներին թուրքական լծից ազատելու մտադրությամբ»[2]։ Մենք ևս համամիտ ենք այս կարծիքին։

Վ. Պարսամյանը, խոսելով Կովկասյան ռազմաճակատի պատերազմական գործողություններին հայերի, այդ թվում կամավորական ջոկատների մասնակցության մասին, գրում է. «Պատերազմը չափազանց ծանր ու անելանելի կացության մեջ դրեց հայ ժողովրդին, նա գտնվում էր Ռուսաստանի և Թուրքիայի տիրապետության տակ, զուրկ պետական իշխանությունից, իր բախտը ազատ, անկախ տնօրինելու իրավունքից»[3]։ Պատերազմող կողմերը հայերից պահանջում էին միանալ իրենց և կռվել թշնամու դեմ։ Ցարական կառավարությունը Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի միջոցով հայերից պահանջեց ստեղծել կամավորական խմբեր Թուրքիայի դեմ կռվելու համար։ Ցարական կառավարությունը հայերին խարում էր Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելու կեղծ խոստումներով։

Թիֆլիսի հայոց Ազգային բյուրոյի, հայ բուրժուազիայի, կղերականության ու դաշնակցության ղեկավարները, որոնք իրենց ձեռքն էին վերցրել հայ ժողովրդի բախտի տնօրինությունը, կուրորեն ընկան հին աղվես Վորոնցով-Դաշկովի թա-

[1] Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 426—427։

[2] Նույն տեղը, էջ 427։

[3] Վ. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 443։

կարդը, գործիք դարձան նրա ձեռքին և ավելորդ ու վնասակար քայլերի դիմեցին։ Ցարական կառավարության օգնությամբ նրանք ձեռնամուխ եղան հայ կամավորական խմբերի կազմակերպմանը, որն ավելի գրգռեց Թուրք ջարդարարներին[1]։ Պատմաբանը վկայակոչում է հայ բոլշևիկներին, որոնք դեմ էին կամավորական խմբեր կազմակերպելուն. նրանք գտնում էին, որ ապարդյուն է անցնելու հայերի հավելյալ արյունը։ «Պատերազմի բարդ ու լարված իրադրության պայմաններում,— գրում է նա,— Ազգային բյուրոյի, հայ բուրժուազիայի ու դաշնակցության պարագլուխները շատ անհեռատես ու անշրջահայաց գործեցին։ Ամենակարևորն ու ամենագլխավորը՝ նրանք բազմակողմանիորեն հաշվի չառան արևմտահայությանը սպառնացող ահավոր վտանգը կանխելու, պատերազմից նվազագույն կորուստներով դուրս գալու հնարավորությունները։ Հայ բուրժուազիայի կարճամիտ «քաղաքագետներն» ու «դիվանագետները» չէին տեսնում, որ ժողովրդին սպառնացող վտանգը շատ մեծ է, իսկ դա կանխելու կամ վերացնելու հնարավորությունը շատ փոքր»[2]։ Հայերը դառը փորձով համոզվել էին, որ ոչ մի լավ բան չի կարելի սպասել Թուրք ջարդարարներից, իսկ, մյուս կողմից, հավատացած էին, որ Ռուսաստանն ու նրա դաշնակիցները հաղթելու են և մեծ հույսեր էին կապում նրանց հետ։ Չնայած դրան, Պարսամյանը բարձր է գնահատում հայ կամավորական ջոկատների մարտական գործողությունները։ «Հայկական զինված ջոկատները ռուսական և դաշնակից բանակների շարքերում արիաբար կռվում էին ընդհանուր թշնամու դեմ,— գրում է նա։ — Հայ ազատագրական շարժման լեգենդար հերոս Անդրանիկի զինվորները մարտնչում էին Թուրք ջարդարարների դեմ, պաշտպանում հայերի կյանքը, գույքն ու պատիվը։ 1914—1915 թվականներին Արևմտյան Հայաստանում մղված կռիվների ժամանակ իրենց մարտական սխրագործություններով աչքի ընկան նաև Վարդանի, Քեռու և մյուսների կամավորական խմբերի մարտիկները։ Հայ կամավորները, որոնց թիվը հասնում էր 8 հազարի, մեծ օգնություն ցույց տվեցին Կովկասյան ռազմաճակատում գործող ռուսական զորքերին։ Նրանք օգնության հասան Վանի հերոս պաշտպաններին, տասնյակ հազարավոր արևմտահայերի, այդ թվում կանանց ու երեխաների, փրկեցին Թուրքական վանդալների ճանկերից»[1]։

Այսպիսով, Վ. Պարսամյանը, մի կողմից, քննադատում է ցարական կառավարության ու նրա կամակատար հայ կղերաբուրժուական վերնախավի անհեռատես, կորստաբեր քաղաքականությունը, իսկ, մյուս կողմից, բարձր է գնահատում հայ կամավորական ջոկատների մարտական սխրագործությունները, նրանց հայրենանվեր գործն ու գաղափարը։

Կամավորական շարժման հարցը լայն քննարկման է ենթարկվել նաև Մ. Արզումանյանի մենագրության մեջ։ Նա խրստորեն քննադատում է դաշնակցությանը, որը ցարական կառավարության աջակցությամբ ձեռնամուխ էր եղել կամավորական ջոկատների կազմակերպմանը։ Նա գտնում է, որ կամավորական խմբերի կազմակերպումը կատարվեց ոչ թե ցարական իշխանությունների (Կովկասյան փոխարքայության) սոսկ հավանությամբ, այլ ուղղակի ցուցումով[2]։ «Այդպես էր տվյալ պահին շահավետ ռուսական ցարիզմին, այլ կերպ նա անմիջապես կարգելեր նման ջոկատների ստեղծումը»[3]։ Մ. Արզումանյանը քննադատում է նաև հնչակյան կուսակցությանը, հայ կադետներին, լիբերալներին, որոնք նույնպես ոչ մի ջանք չէին խնայում կամավորական շարժման կազմակերպման ուղղությամբ։

Պատմաբանն այն կարծիքն է հայտնում, թե ցարիզմը, հայ ազգայնականների աջակցությամբ ստեղծելով կամավորական ջոկատներ, հետապնդում էր ոչ այնքան ռազմական, որքան քաղաքական նպատակ։ «Ցարիզմին բոլորովին չէր հետաքրքրում արևմտահայության փրկության հրատապ խնդիրը,— իրավացիորեն գրում է նա,— այլ կերպ նա Կովկասյան ռազմաճակատում կկենտրոնացներ ռուսական բանակ կանչված 250 հազար հայերին, որոնք հերոսաբար կկռվեին իրենց դարավոր թշնամու դեմ, և իրենք կգատագրեին իրենց եղբայրներին ու քույրերին»[4]։ Իսկ ինչո՞ւ ցարական կառավարությունը չգնաց այդ քայլին։ Այդ հարցին նա տալիս է հետևյալ պատասխանը. որովհետև հայերը կունենային կենտրոնացված զինվորական ուժ՝ իր որոշակի ռազ-

1 Տե՛ս Վ. Պարսամյան, նշվ. աշխ., էջ 444։

2 Նույն տեղը, էջ 444։

1 Վ. Պարսամյան, նշվ. աշխ., էջ 445։

2 Տե՛ս Մ. Արզումանյան, Հայաստան, 1914—1917, էջ 179։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը, էջ 183։

մական հաղթանակներով, որի հետ հարկ կլիներ հաշվի նստել և «ընդառաջել» հայ ժողովրդի ազգային իղձերի կատարմանը՝ թեկուզ ինքնավարություն տալու պայմանով[1]։ Այլ բան էր կամավորական շարժումը, շարունակում է Մ. Արզումանյանը, որը սոսկ սիմվոլիկ նշանակություն ուներ։ Դրանով ցարիզմը նպատակ ուներ ամբողջ աշխարհի առաջ հաստատել իր մղած պատերազմի «ռուս-հայրենասիրական բնույթը», քրիստոնյա նահատակի նկատմամբ «մարդասիրությունը» և այլն։

Նշելով, որ կամավորական ջոկատների գործունեությունն էլ ավելի գրգռեց Թուրք բարբարոսներին, մի նոր պատրվակ դառնալով նրանց հայաջինջ քաղաքականության համար, պատմաբանը ճիշտ է նկատում. «Անշուշտ, հիմնովին սխալ է ու վնասակար այն տեսակետը, թե, իբր, կամավորական շարժումը կամ արևմտահայերի որևէ ելույթ դարձավ նրանց կործանման պատճառը։ Դա Թուրք բռնակալների ու նրանց հովանավորների հորինածն է, որպեսզի արդարացնեն իրենց՝ պետական քաղաքականության ատիճանին հասած հայաջինջ քաղաքականությունը, որը չի դիմանում և ոչ մի քննադատության»[2]։

Հարկ է նշել, որ Մ. Արզումանյանը, ինչպես և խորհրդահայ գրեթե բոլոր այն պատմաբանները, ովքեր բացասական գնահատական են տվել կամավորական շարժմանը, միաժամանակ նշել են, որ հայ կամավորներն ազնվորեն ուզում էին անձնվեր պայքարի գնով օգնել իրենց հայրենակիցների ազատագրմանը։ Արզումանյանի կարծիքով, նրանք ընդհանուր ոչինչ չունեին դաշնակցության ծրագրերի ու նպատակների հետ։ «Հարկավոր էր որոշ ժամանակ,— գրում է նա,— մինչև որ նրանք սեփական փորձով համոզվեին դաշնակցության կործանարար քաղաքականության մեջ, հաղթահարեին իրենց պատրանքները և կանգնեին ճիշտ ճանապարհի վրա»[3]։

Մ. Արզումանյանը աշխատության մեջ համեմատում է 1826—1828 թթ. ռուս-պարսկական, 1877—78 թթ. ռուս-Թուրքական պատերազմների ու առաջին համաշխարհային պատերազմի տարիների կամավորական շարժումները, ընդգծելով, որ դրանք նույնատիպ չեն։ Անշուշտ, գրում է

[1] Տե՛ս Մ. Արզումանյան, Հայաստան, 1914—1917, էջ 183։
[2] Նույն տեղը, էջ 184։
[3] Նույն տեղը, էջ 185։



նա, շարժման մասնակիցների հիմնական զանգվածի տրամադրությունների տեսակետից, այսինքն՝ հայ ժողովրդին օգնելու նկատառումով, բոլոր դեպքերում պատկերը նույնն է։ Բայց չպետք է մոռանալ, այնուհետև գրում է նա, որ միևնույն երևույթը տեղի էր ունենում պատմական տարբեր պայմաններում, որոնք իրենց կնիքն են դնում շարժման ընթացքի և ելքի վրա[1]։

Ընդունելով, որ XIX դարի վերոհիշյալ պատերազմներն առաջադիմական նշանակություն ունեցան հայ ժողովրդի համար, հեղինակը միևնույն ժամանակ նշում է, որ թեև ցարիզմն այն ժամանակ էլ ուներ զավթողական նպատակներ և նրան հաջողվում էր այս կամ այն չափով իրականացնել Արևելքում իր նվաճողական քաղաքականությունը, որը օբյեկտիվորեն նպաստում էր տեղի ճնշված ժողովուրդների, մասնավորապես հայերի, ֆիզիկական գոյության պահպանմանը, տնտեսական ու կուլտուրական համեմատական զարգացմանը, ապա XX դարում՝ իմպերիալիզմի դարաշրջանում, դրությունը փոխվեց։ Նրա կարծիքով, Ռուսաստանն այլևս անկարող էր թեկուզ նվաճման ճանապարհով ամրանալ Արևմտյան Հայաստանում, որովհետև, նախ՝ դրան խանգարում էին մյուս իմպերիալիստական պետությունները, և երկրորդ՝ ռուսական ցարիզմն ապրում էր խոր ճգնաժամ, երկիրը գնում էր դեպի հեղափոխություն և գլխավոր հարց էր դարձել ցարիզմի ու կապիտալիզմի տապալումը։ Քանի որ Ռուսաստանում հասունանում էր սոցիալական մեծ հեղափոխություն և նրա ելքից էր կախված բազմաթիվ ժողովուրդների, այդ թվում նաև հայերի ազատագրումը, ուստի սխալ կլիներ նրանց ուշադրությունը շեղել այդ հիմնական հարցից և այս կամ այն չափով պաշտպանել ցարիզմի նվաճողական քաղաքականությունը Մերձավոր արևելքում։ «Հենց այդ տեսանկյունով էլ կամավորական շարժումը չէր արդարացնում իրեն։ Մենք այն սխալ ենք համարում ոչ թե նրա բազմաթիվ մասնակիցների ազնիվ ձգտումների ու անձնվեր պայքարի համար և ոչ էլ նրա համար, որ կամավորական ջոկատները օբյեկտիվորեն գոյություն ունենալուց հետո զգալի օգնություն կազմակերպեցին արևմտահայերի հարկադրական գաղթի հնարավորին չափ ապահովմանը, այլ նրա համար, որ կամավորական շարժումը հիմնականում ի սպաս դրվեց ռուսական ցարիզմի ու արևմտյան իմպերիալիզմի ագրեսիվ նպատակներին, այսինքն՝ այն պե-

[1] Տե՛ս Մ. Արզումանյան, նշվ. աշխ., էջ 189։

տությունններին, որոնք համելով հայ ժողովրդի հյութերը, նրան իրական օգնություն ցույց չտվին և լավագույն դեպքում բավարարվեցին կեղծ խոստումներով»[1]:

Մ. Արզումանյանի կարծիքով, չպետք է չափազանցնել կամավորական ջոկատների ռազմական դերը, որովհետև նրանք վճռական նշանակություն չունեցան պատերազմի ամբողջ ընթացքի վրա: Բայց միաժամանակ նա գտնում է (և մենք ևս համաձայն ենք), որ այն պետք է կազմակերպվեր ոչ թե լայնորեն լեգալացված ու ռեկլամացված, որը խայծ-պատրվակ դարձավ թուրք ջարդարարների համար, այլ գաղտնի, ու այնուհետև տեղափոխվեր Արևմտյան Հայաստան: Մ. Արզումանյանը նշում է նաև այն մասին, որ դեռ պատերազմի սկզբին արևմտահայ շատ մտածողներ դեմ էին արևելահայ գործիչների կազմակերպած կամավորական շարժմանը, այն համարում էին անխորհուրդ քայլ: Նա հիշատակում է նաև 1915 թ. հոկտեմբերին Բաքվում հրավիրված երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների կոնֆերանսի որոշումը, որով դատապարտվում էր հայկական կամավորական ջոկատների ստեղծումը[2]: Մ. Արզումանյանը նշում է, որ կամավորական ջոկատների ստեղծումն արևմտահայերի համար վնասակար և անթույլատրելի է համարվել նաև 1915 թ. փետրվարին Թիֆլիսում Ազգային բյուրոյի կողմից հրավիրված Հայկական համագումարում հրապարակված բոլշևիկյան դեկլարացիայում[3]:

Չնայած դրան, Մ. Արզումանյանի աշխատության մեջ Կովկասյան ռազմաճակատի ռազմական գործողությունների ընդհանուր ֆոնի վրա վեր է հանված հայ կամավորական ջոկատների մարտական գործողությունները, նշված է նաև, որ Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի հաջողություններին մեծապես նպաստեցին հայ կամավորական ջոկատները կամ գնդերը, որոնք զբաղվում էին ոչ միայն հետախուզությամբ, այլև մարտական լուրջ գործողություններ էին մղում թուրքական զորքերի դեմ[4]:

Հայ կամավորական խմբերի ստեղծման հարցին հպանցիկ

1 Մ. Արզումանյան, նշվ. աշխ., էջ 190—191 (ընդգծումը հեղինակինն է— Շ. Հ.):

2 Տե՛ս նույն տեղը, էջ 201—202:

3 Տե՛ս նույն տեղը, էջ 214:

4 Տե՛ս նույն տեղը, էջ 258:



անդրադարձել է նաև Գ. Գալոյանը[1], սակայն նա հատուկ քննության չի առնում խորհրդահայ պատմագրության մեջ այդ վիճելի հարցը: 1982-ին հրատարակված աշխատության մեջ նա արդարացիորեն քննադատության է ենթարկում ժամանակակից թուրքական պատմագրության կեղծիքները, որը փորձում է հայերի ցեղասպանության հանցավոր քաղաքականությունն արդարացնել կամավորական ջոկատներին հայերի մասնակցության վկայակոչումով: Պատմաբանը միանգամայն ճիշտ է նկատում, որ պատմական գրականության մեջ վավերագրերով մերկացված է հասարակական կարծիքն ապակողմնորոշող այդ կեղծիքը և միաժամանակ իրավացիորեն գրում է. «Կամավորական շարժումը վշտի ու տառապանքի դատապարտված ժողովրդի ցասման հուսահատ արտահայտություն է եղել միայն»[2]:

Գ. Գալոյանը նշում է, որ ցարական իշխանությունները հայերի հայրենասիրական այդ շարժումը ձգտում էին օգտագործել միայն իրենց ռազմական խնդիրների լուծման համար, «և երբ կամավորական շարժումը համաժողովրդական շարժման բնույթ ստացավ, նրանք դիմեցին արհեստական միջոցների՝ նեղացնելու այդ շարժման շրջանակները, վախենալով, որ պատերազմն ավարտվելուց հետո հայերը կարող էին ինքնավարության իրավունք պահանջել»[3]:

Կամավորական շարժման հարցը լայնորեն է լուսաբանված նաև Ս. Աղայանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից» աշխատության մեջ: Անշուշտ, գրում է նա, ցարիզմը հայերի կամավորական շարժումն օգտագործում էր իր մերձավորարևելյան ծրագրերի իրականացման համար: Սակայն, իրավացիորեն գրում է նա, կամավորները Արևմտյան Հայաստանը ազատագրելու հույսերով խանդավառված հայրենասերներ էին, «որոնք զենքը ձեռքներին պատերազմի թոհ ու բոհի մեջ մտան, որպեսզի օգնեն ռուսական բանակին՝ նրա հաղթանակի հետ կապելով նաև սեփական ժողովրդի ազատագրության հնարավորությունները»[4]: Աշխատությունում Կովկասյան ռազ-

1 Տե՛ս Галоян Г., Рабочее движение и национальный вопрос в Закавказье, էջ 179:

2 Գ. Գալոյան, Պատմության քառուղիներում, էջ 187:

3 Նույն տեղը, էջ 182:

4 Ս. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, էջ 377:

մաճակատի պատերազմական գործողությունների ընդհանուր ֆոնի վրա վեր է հանված հայ կամավորների հերոսական սխրագործությունները, ըստ արժանվույն բարձր է գնահատված Անդրանիկի դերը։ Մ. Աղայանը վկայակոչում է փաստեր, որոնք ցույց են տալիս, որ ռուսական բանակի հրամանատարությունը ստվերի տակ էր թողնում հայ կամավորների, մասնավորապես Անդրանիկի ջոկատի մարտական ակտիվ գործողությունները, ինչպես հարկն է չէր գնահատում նրանց դերը։

Իր մենագրության մեջ հայ կամավորական շարժման պատմությանը մի ամբողջ գլուխ է նվիրել Ա. Հարությունյանը։ Մեր կարծիքով, խորհրդահայ պատմաբաններից հայ կամավորական շարժմանը հիմնականում դրական գնահատական է տվել միայն Ա. Հարությունյանը։ Թեև նա հենց սկզբից էլ նշում է, որ հայ բոլշևիկները, ելնելով պատերազմի բնույթի մասին լենինյան գնահատականից, բացասական վերաբերմունք են հանդես բերել ռուսական բանակի կազմում կամավորական ջոկատների կազմակերպման նկատմամբ։ Նրանք, գրում է նա, այդ միջոցառումը դիտում էին որպես ցարական կառավարության զավթողական քաղաքականության աջակցություն։ Այնուհետև շարունակելով իր միտքը, գրում է. «Հայկական ազգայնական կուսակցությունների նախաձեռնությունը, իր ձեռքը վերցնելու կամավորական ջոկատների ղեկավարությունը և ցարական կառավարության (ի դեմս Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի) ձգտումը այդ շարժումը օգտագործել իմպերիալիստական նպատակների համար, լիովին հակասության մեջ էր գտնվում շարքային կամավորների բնական, ազնիվ ցանկությունների հետ՝ օգնել իր արևմտյան եղբայրներին թուրքական դեսպոտիզմի դեմ մղված նրանց պայքարում»[1]։ Սակայն, այնուհետև գրում է նա, անկախ հայ բոլշևիկների կամքից ու ցանկությունից, Վորոնցով-Դաշկովի աջակցությամբ կամավորական ջոկատներ ստեղծվեցին, որոնք մասնակցեցին Կովկասյան ռազմաճակատի մարտական գործողություններին։

Ա. Հարությունյանը զվեստով է խոսում XIX դարի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներում հայ կամավորական ջոկատների մասին, անտեսելով, իհարկե, այն հայտնի իրողությունը, որ XIX դարի 70-ական թվականների վերջից

[1] Арутюнян А., Кавказский фронт, с. 291.



սկսած մինչև XX դարի սկիզբը նույն ռազմաքաղաքական իրադրությունը չէր, աշխարհը դեռևս չէր թևակոխել իմպերիալիզմի և սոցիալիստական հեղափոխությունների դարաշրջան։

Դրվատելով հայ կամավորական ջոկատների մարտական գործողությունները, Ա. Հարությունյանը գտնում է, որ յուրաքանչյուր ջոկատի մարտական ուղու ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ նրանցից ոչ մեկը մյուսին չի զիջում խիզախության, զինվորական պարտքի գիտակցության տեսակետից։

Անդրադառնալով այն հարցին, թե՝ եթե առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռուսական բանակում կռվում էին մոտ 300 հազար հայեր, ինչո՞ւ էր հայ հասարակության ուշադրությունը գամված այն 8—9 հազար* կամավորների վրա, որը, փաստորեն, աննշան քանակ էր ռազմաճակատներում կռո-

* Պատմական գրականության մեջ հայ կամավորների թիվը տարբեր է։ Գաբրիել Լազյանը «Հայաստանը և հայկական դատը» իր գրքում (Կահիրե, 1946, էջ 186—193) գրում է, որ մինչև 1915 թ. փետրվարը բաշխիչ մարմնի կողմից կամավորական ջոկատներ է ուղարկվել 4500 մարդ։ Նույն հեղինակը, հենվելով Ս. Հարությունյանի, Ալ. Խատիսյանի և Մեսրոպ եպիսկոպոսի՝ Վորոնցով-Դաշկովին հղած զեկուցագրի վրա, գրում է, որ 1915 թ. հոկտեմբերին ձևավորվել էր 6 ջոկատ 5 հազար անձնակազմով։ Կովկասյան ռազմաճակատի մասնակից, ռուսական բանակի գեներալ-մայոր Գ. Կորգանովը 1927 թ. Փարիզում ֆրանսերեն հրատարակած «Հայերի մասնակցությունը առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ռազմաճակատին» գրքում (էջ 10) հաստատում է, որ սկզբնական շրջանում հայկական կամավորական ջոկատներում կար 2500 մարդ, իսկ հետագայում ջոկատների անձնակազմը հասավ 9 հազարի։ Լեոն՝ «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» աշխատության մեջ (հ. 1, էջ 129—130) հայ կամավորների թիվը հասցնելով 6000-ի, այնուհետև գրում է. «Եթե դրանց վրա ավելացնենք այն կամավորներին, որոնք գտնվում էին անգլո-ֆրանսիական բանակի մեջ, կստանանք մոտ 9—10 հազար հոգի»։ Ջ. Կիրակոսյանը, հիմք ընդունելով Ե. Դեղամյանի «Հայերի ազատագրական շարժումները XX դարում կամ հայկական հարցի յոթերորդ շրջանը» (մաս 2, 1917, Բաքու, էջ 601) և «Զորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը 1914—1917 թթ.» (Բոստոն, 1924, էջ 7) գրքերի տվյալները, գրում է, որ 1914 թ. աշնանը կամավորական շորս խմբերում կար 3082, իսկ 1915-ի աշնանը՝ արխիվային մի փաստաթղթում ցույց է տրված 5 հազար։ Վ. Պարսամյանը՝ «Հայ ժողովրդի պատմություն» բուհական դասագրքում (էջ 445) ցույց է տալիս 8 հազար։ Մ. Արղումանյանը, հենվելով «Армянский вестник»-ի № 14, էջ 8, 1917 թ. տվյալների վրա, հայ կամավորների թիվը համարում է 10 հազար։ Նույնքան է ցույց տվել նաև Մ. Ներսիսյանը (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», 1972, էջ 428)։

վող հայերի ընդհանուր թվի համեմատությամբ, պատմաբանը տալիս է հետևյալ ուշագրավ պատասխանը.

1. Գրեթե բոլոր զորամիավորումներում, գլխավորապես Արևմտյան և մասամբ Կովկասյան ռազմաճակատներում, մտնելով զինվորական ծառայության մեջ, հայերը «չէին երևում» ռուսական բազմազգ բանակի ընդհանուր ծովի մեջ։

2. Կամավորական ջոկատները պատերազմի հորիզոնում հանդես էին գալիս որպես միացյալ ազգային զորամասեր, ջոկատների անձնակազմը համալրվում էր կամավորության հիման վրա։

3. Մի բան է բանակ զորակոչվել պարտադիր զինապարտության օրենքի համաձայն, այսինքն՝ հրամանով, իսկ երբեմն էլ ստիպողաբար, այլ բան է՝ կամովին, սեփական ցանկությամբ կանգնել ազգային կռվող բանակի մարտական շարքերում։ Ժողովուրդների պատմության շրջադարձային փուլերը ծնում են կամավորներ, որոնք խորհրդանշում են իրենց ժողովրդի կամքն ու ձգտումները։ Այդպես է եղել նաև հայոց պատմության մեջ ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների ժամանակ։

Հայկական կամավորական ջոկատների մարտական գործողությունների մասին գրվատանքով են խոսել Կովկասյան բանակի առանձին հրամանատարներ։ Ա. Հարությունյանը նշում է, որ դա հեռու էր կառավարության և գլխավոր հրամանատարության պաշտոնական կարծիք լինելուց, քանի որ ցարական իշխանությունները հայ կամավորական շարժումը դիտում էին միայն որպես իրենց արտաքին քաղաքական ձգտումների իրականացմանը նպաստող գործիք։

Հեղինակի կարծիքով, չնայած հայ ժողովրդի նկատմամբ ցարական կառավարության վարած գաղութային քաղաքականությանը, հայերը չէին կարող ծավալվող իրադարձություններից հեռու մնալ։ Հասկանալի է, գրում է նա, որ հայ ժողովուրդը չէր կարող սպասել, կողքից նայել, թե Սարիղամիշի, Դիլմանի, Էրզրումի, Ալաշկերտի մարտերում, շլսված ծանր պայմաններում, 20—30 աստիճան սառնամանիքում հայ ժողովրդի հարբստահարիչների դեմ ռուս զինվորներն ինչպես էին կռվում և զոհվում։ Մի՞թե հասկանալի չէ, շարունակում է նա, որ նման պայմաններում անհնարին էր չեզոքություն պահպանել։ Տվյալ կոնկրետ դեպքում միակ հույսը կապված էր ռուսական զենքի հաղթանակի հետ։ Կամավորներին հենց այդ համոզումն էր ստիպում կռվել ռուսական բանակի կազմում[1]։

Մեր կարծիքով, ճիշտ է Ա. Հարությունյանը, երբ գրում է, որ չնայած հազարավոր մարդկային կյանք խլած այդ պայքարը ցանկալի արդյունք չտվեց, բայց մեծ դեր խաղաց։ Մի՞թե ճնշված ժողովուրդների պատմության մեջ քիչ դեպքեր կան, երբ մարդիկ զենքի են դիմել, կռվել են մարտի դաշտում, բայց արտաքին ու ներքին ինչ-ինչ պատճառներով հաջողության չեն հասել։ Մի՞թե հետագա սերունդներն իրավունք ունեն դրա համար դատապարտել նրանց։

Այսպիսով, բարձր գնահատելով հայ կամավորական ջոկատների մարտական գործողությունները, միաժամանակ նշելով դրանց կազմակերպման ցարիզմի նպատակը, Ա. Հարությունյանը գրում է. «Կարևոր ենք համարում մեկ անգամ ևս ընդգծել, որ մի բան է ցարիզմի ձգտումը փորը ժողովուրդներին իր գաղութային քաղաքականության շահերին ծառայեցնելը և միանգամայն այլ բան է շարքային մարդու բնական, աղնիվ ցանկությունը կամավոր մարտի գնալ, համոզված լինելով, որ նա կրվում է իր արյունակից եղբայրներին ազատագրելու համար»[2]։

Առաջին համաշխարհային պատերազմի առանձնահատկությունների լենինյան վերլուծության լույսով հայերի ազատագրական շարժման որոշ հարցերի է անդրադարձել Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանը[3]։ Այստեղ նա դրականորեն է գնահատում հայ կամավորական շարժումը, կամավորներին իրավացիորեն անվանելով հայրենասերներ։ Անդրկովկասում և Ռուսաստանի տարբեր վայրերում բնակվող հազարավոր հայ հայրենասերներ, գրում է նա, մտնելով կամավորական ջոկատների մեջ, գտնում էին, որ դա ազգային-ազատագրական շարժմանը մասնակցելու հնարավորություն է տալիս։ «Մեծ նշանակություն ուներ այն հանգամանքը, որ ռուսական զենքը բազմիցս փրկել էր հայ ժողովրդին ասիական բռնակալների կոտորածներից և այդ պատճառով էլ հայ հայրենասերները Թուրքիայի դեմ Ռուսաստանի հաղթանակի հետ էին կապում թուրքական տիրապե-

1 Տե՛ս Арутюнян А., նշվ. աշխ., էջ 321։

2 Նույն տեղը, էջ 322։

3 Տե՛ս Գ. Ղարիբջանյան, Հայերի ազատագրական շարժումը առաջին համաշխարհային պատերազմի առանձնահատկությունների լենինյան վերլուծության լույսի տակ, «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, 1972։

տության դարավոր ստրկությունից ազատագրվելու բոլոր հույսերը»[1]։

Մեջբերումներ կատարելով Վ. Տերյանից և Հ. Թումանյանից, գիտնականը Թուրքական բռնակալության դեմ պատերազմի տարիներին բռնկված հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը համարում է միանգամայն օրինաչափ երևույթ[2]։ Ցիտելով Ա. Միկոյանի խոսքերը, թե «մենք՝ առավել մարտակոորեն տրամադրված աշակերտներս, հայ կամավորական ջոկատների մեջ տեսնում էինք ազգային-ազատագրական շարժմանը մասնակցելու հնարավորություն», նա գրվատանքով է խոսում շատ ներսիսյանցիների, այդ թվում հենց նրա՝ Ա. Միկոյանի մասին, որոնք որպես կամավորներ մեկնեցին ռազմաճակատ, համալրելով Անդրանիկի ջոկատը։ Հայ կամավորների շարքում, այնուհետև գրում է նա, արևմտահայերի ազատագրության համար անձնվիրաբար մարտնչում էր նաև Հայկ Բժշկյանը (Գայը)։

Գ. Ղարիբջանյանը հայ կամավորական շարժմանը դրական գնահատական է տվել նաև հետագայում հրատարակած մենագրություններից մեկում[3]։ «Հայ կամավորները,— գրում է նա,— անձնվիրաբար պայքարում էին Թուրքական զավթիչներից իրենց հայրենի հողի ազատագրման համար»[4]։ Անձնական խիզախության համար, շարունակում է նա, նրանցից մոտ հինգ հարյուր մարդ արժանանում է Գեորգիևյան խաչի ու մեդալների։ Նրանց շարքերում կոփվեցին խորհրդային բանակի հմուտ զորավարներ Հայկ Բժշկյանն ու Հովհաննես Բաղրամյանը։

Ե. Սարգսյանի կարծիքով, Կովկասյան ռազմաճակատում ծավալված պատերազմական գործողություններին հայ ժողովրդի ակտիվ մասնակցությունը պայմանավորված էր Արևմտյան Հայաստանն ազատագրելու նրա վաղեմի բաղձանքով։ Նրա կարծիքով, պատերազմի սկզբից լայն թափ ստացած կամավորական շարժումը ժողովրդական զանգվածների ինքնաբուխ պոռթկումն էր, ազգային ազատագրության համար նրա մղած

1 Գ. Ղարիբջանյան, Հայերի ազատագրական շարժումը առաջին համաշխարհային պատերազմի առանձնահատկությունների լենինյան վերլուծության լույսի տակ, «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, 1972։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 28։

3 Տե՛ս Գ. Ղարիբջանյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը XIX դարի վերջին և XX դարի սկզբին, Եր., 1986։

4 Նույն տեղը, էջ 70—71։



պայքարի տրամաբանական շարունակությունը[1]։ Ճիշտ է նկատում պատմաբանը, որ Արևմտյան Հայաստանի ազատագրությունը հուզում էր ողջ հայությանը, ուստի պատահական չէր, որ կամավորական շարժումը լայն արձագանք գտավ ոչ միայն Ռուսական կայսրության, այլև ամբողջ աշխարհի հայերի շրջանում։ «Հայ կամավորները զինվորագրվում էին Անտանտի պետություններին,— իրավացիորեն գրում է Սարգսյանը,— ոչ թե նպաստելու նրանց իմպերիալիստական նպատակների կենսագործմանը, այլ այն հույսով ու հավատով, որ այդ պետությունների օգնությամբ կկարողանան Արևմտյան Հայաստանը ազատագրել Թուրքական բիրտ լծից»[2]։

Շարադրելով Սարիղամիշի, Դիլմանի, Խոյի, Վանի, Մուշի, Բիթլիսի, Էրզրումի և Երզնկայի ճակատամարտերում հայ կամավորական ջոկատների մարտական գործողությունները, տասնյակ հազարավոր գաղթականներին նրանց ցույց տված օգնությունը, Ե. Սարգսյանը միաժամանակ ներկայացրել է այդ ջոկատների նկատմամբ ցարական կառավարության անվստահությունը։ Պատահական չէ, որ 1915 թ. վերջերին ցարիզմը ցրում է այդ ջոկատները, ռուսական զորամիավորումներում ստեղծելով հրաձգային գումարտակներ։ Այդ քաղաքականությունը, նշում է հեղինակը, խիստ դժգոհություն առաջ բերեց կամավորների շրջանում։ Նրանց մեծ մասը հեռացավ ռազմաճակատից, չցանկանալով մասնակցել իմպերիալիստական սպանդին։ «Այդ մեկ անգամ ևս վկայում է այն իրողությունը, որ հայ կամավորները մտահոգված էին միայն իրենց հայրենիքի ազատագրման և ոչ թե ցարիզմի նվաճողական պլանների իրագործման հարցով»[3]։

Դաշնակցության գործունեության քննադատությանը նվիրված իրենց գրքերում կամավորական շարժմանը հանիրավի խիստ բացասական գնահատական են տվել Բ. Անանիկյանը[4] և Բ. Օհանջանյանը[5]։ Մեր կարծիքով, այդ շարժումը կազմակերպող ղեկավարներին քննադատելու հետ միասին չի կարելի ստվեր գցել հայ կամավորների հերոսության ու անձնազոհության, արևմտահայ եղբայրներին ինչ-որ չափով օգտակար

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 546։

2 Նույն տեղը, էջ 547—548։

3 Նույն տեղը, էջ 552—553։

4 Տե՛ս Բ. Անանիկյան, Դաշնակցության գաղափարական-քաղաքական կրախը, Եր., 1974։

5 Տե՛ս Բ. Օհանջանյան, Դաշնակցությունն առանց դիմակի, Եր., 1980։

լինելու նրանց ազնիվ ու անկեղծ ցանկության վրա։ Աշխատության մեջ այդ մասին ակնարկ անգամ չկա։ Բ. Օհանջանյանը գտնում է, որ Կովկասյան ռազմաճակատի ռուսական կեսմիլիոնանոց բանակում կամավորական խմբերն աննշան թիվ էին կազմում, որոնք չէին կարող փոխել պատերազմի ընթացքը, կանխել հայ բնակչության զանգվածային կոտորածները։ Կամավորական խմբերի ստեղծումը, գրում է նա, Թուրքական կառավարությունն օգտագործեց պրովոկացիոն նպատակներով։ Այն, շարունակում է հեղինակը, իբրև թե սրեց նաև Անդրկովկասի ժողովուրդների ազգային հարաբերությունները։

Հայ կամավորական շարժման նկատմամբ Բ. Օհանջանյանը նույնպիսի բացասական դիրքորոշում է հանդես բերել նաև Ստ. Շահումյանին նվիրված իր գրքույկում[1]։ «Մոռացության տալով պատմության դասերը,— գրում է նա,— վերջին տարիներին մեր պատմաբաններից ոմանք հայ կամավորական շարժումը համարեցին հայ ազատագրական շարժման դրվագներից և այն էլ կարևոր դրվագներից մեկը, սկսեցին մեծարել նրանց հրամանատարների խիզախությունները, երկինք բարձրացնել այդ շարժման ակտիվ մասնակիցներին»[2]։ Հիմազուրկ մեղադրանք։

Հանրագումարի բերելով կամավորական շարժմանը խորհրդահայ պատմագրության մեջ տրված գնահատականները, հանգում ենք հետևյալ եզրակացության։

**Առաջին.** Ի տարբերություն նախկինում տրված բացասական գնահատականին, վերջին քսանհինգամյակում մեր պատմաբանները, շնչին բացառությամբ, դրվատել են հայ կամավորական ջոկատների հայրենասիրական գործունեությունը, բարձր գնահատել նրանց մարտական սխրագործությունները Կովկասյան ռազմաճակատում։ **Երրորդ.** Այդ նույն պատմաբանների, գլխավորապես Ջ. Կիրակոսյանի, Վ. Պարսամյանի, Մ. Արզումանյանի կարծիքով, այնուամենայնիվ, այդ շարժումը անհեռատես քայլ էր, կործանարար քաղաքականություն, որը չտվեց սպասված արդյունքը, շարդարացրեց ժողովրդի հույսերը։ **Երրորդ.** Տուրք տալով ժամանակին իշխող կարծիքին, վերոհիշյալ պատմաբանները այդ հարցում հավասարապես մեղադրել են թե՛ ցարիզմի, Կովկասյան փոխարքայության, և թե՛ հայ քաղաքական կուսակցությունների, գլխավորապես դաշնակցության քաղաքականությունը։

Ելնելով անցյալի իրողությունները նորովի լուսաբանելու սկզբունքից, հարկ է նշել, որ այն ժամանակ, երբ ռուսական բանակը Կովկասյան ռազմաճակատում կռվում էր մեր դարավոր թշնամու դեմ, ոչ մի հայ, առավել ևս հայ քաղաքական կուսակցություն, չէր կարող անտարբեր դիտորդի դիրք գրավել և մասնակցություն չունենալ հայրենիքի ազատագրման սուրբ գործին։ Այս է մեր կարծիքը։ Ի դեպ, մենք ևս ժամանակին տուրք ենք տվել այդ հարցում եղած սխալ մտայնությանը[1]։

Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներին առավել հրատապ դարձավ ազգային հարցը։ Անդրադառնալով դրան, Գ. Գալոյանը[2] գրում է, որ դեռևս պատերազմի նախօրյակին Ռուսաստանում, այդ թվում Անդրկովկասում, ազգային հարցը սրվել էր։ Եվ, մի կողմից, մեծապետական շովինիզմը, իսկ մյուս կողմից բուրժուական նացիոնալիզմը խիստ վտանգավոր էին թե՛ բանվորական շարժման և թե՛ ազգային-ազատագրական պայքարի համար։ Կուսակցության ազգային ծրագրի դեմ ուղված արշավանքին միացել էին նաև հակալենինյան տարբեր հոսանքները։ Չնայած դրան, գրում է պատմաբանը, երկրամասի պրոլետարիատը բոլշևիկների ղեկավարությամբ շարունակում էր պայքարը ինչպես մեծապետական շովինիզմի, այնպես էլ տեղական բուրժուական նացիոնալիզմի դեմ հանուն պրոլետարական ինտերնացիոնալիզմի։ Գ. Գալոյանի աշխատության մեջ հանգամանորեն շարադրված է լենինյան ցուցումների հիման վրա կուլտուր-ազգային ավտոնոմիայի տեսության դեմ կովկասյան բոլշևիկների, հատկապես Ստ. Շահումյանի պայքարը։

Կովկասյան բանակում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ծավալված հեղափոխական շարժումների հարցը, գլխավորապես արխիվային հարուստ տվյալների հիման վրա, հանգամանորեն քննվում է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Մելիքյանի գրքում[3]։

---

[1] Տե՛ս Բ. Օհանջանյան, Տեսական մարքսիզմի ծանր հրետանին, Եր., 1970։

[2] Նույն տեղը, էջ 70։

[1] Տե՛ս Ե. Հարությունյան, Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում, էջ 308։

[2] Տե՛ս Галоян Г., Рабочее движение и национальный вопрос в Закавказье.

[3] Տե՛ս Հ. Մելիքյան, Հեղափոխական շարժումները Կովկասյան բանակում (1914—1917), Եր., 1973։

Նշված հարցը շարադրված է ինչպես Ռուսաստանի, այնպես էլ երկրամասի պատմական իրադարձությունների, բանվորական և գյուղացիական շարժումների հետ սերտորեն շաղկապված։ Համակողմանիորեն բացահայտված են Կովկասյան բանակում հեղափոխական շարժումների պատճառները, ընթացքը և, մասնավորապես, բոլշևիկների գործունեությունը։ Իսկ դրանք հետաքրքրություն են ներկայացնում նաև այն պատճառով, որ Կովկասյան բանակի ռազմական գործողությունները տեղի էին ունենում Արևմտյան Հայաստանում և այս կամ այն չափով առնչվում էին հայ ժողովրդին հուզող պրոբլեմներին։ Ավելին, աշխատության չորրորդ գլխում («Բանակի վերաբերմունքը արևմտահայության ողբերգությանը») ցույց է տրված, որ Թուրքական լծի տակ հեծող հայ ժողովրդի զանգվածային կոտորածը հսկայական ազդեցություն գործեց ցարական բանակի զինվորների հեղափոխական-դեմոկրատական հոգեբանության հասունացման վրա։ «Շարքային զինվորների ճնշող մեծամասնությունը դառնությամբ ապրեց հայ ժողովրդին հասած այդ ողբերգությունը, նրանք ամեն կերպ աշխատում էին օգնել հայերին, հոգատարությամբ շրջապատել և Կովկասյան բանակի գրված շրջաններում բարբարոսների նոր վայրագություններից փրկել դեպի Արևելյան Հայաստան գաղթող հայ աշխատավորներին»[1]։ Ուշագրավ է հեղինակի այն միտքը, թե ժողովրդի տառապանքների նկատմամբ շարքային զինվորների մարդկային վարքագծին ուղղակիորեն հակադրվում էր, չնչին բացառությամբ, Կովկասյան բանակի բարձրաստիճան հրամանատարության վարքագիծը[2]։

Քննարկված գրեթե բոլոր աշխատություններում լուսաբանվել է նաև մեծ տերությունների քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի հարցում։ Այս տեսակետից ուշադրության է արժանի պատմական գիտությունների թեկնածու Ս. Հակոբյանի աշխատությունը[3], ուր շարադրված են իմպերիալիստական մեծ տերություններից յուրաքանչյուրի ծրագրերը, պատերազմական իրադրությունն ավելի նպաստավոր ձևով իրենց շահերին ծառայեցնելու հարցը և այլն։

[1] Հ. Մելիքյան, նշվ. աշխ. էջ 113։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 116։

[3] Տե՛ս Акопян С., Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны. Е., 1967.



Աշխատության մեջ մանրամասն խոսվում է հատկապես կայզերական Գերմանիայի պլանների մասին, և ցույց տրվում նրա դերը արևմտահայերի բռնի տեղահանման և զանգվածային կոտորածներ կազմակերպելու գործում։ «Սակայն պաշտոնական իմպերիալիստական Գերմանիայից բացի,— գրում է նա,— գոյություն ուներ և ուրիշ՝ բանվորական և դեմոկրատական Գերմանիա և նրա վերաբերմունքը Հայկական հարցի, արևմտահայերի ճակատագրի նկատմամբ միանգամայն այլ է եղել»[1]։ Նա վկայակոչում է հատկապես Կ. Լիբկնեխտին, որը համարձակորեն մերկացնում էր գերմանական կառավարության քաղաքականությունը։

Արևմտյան Հայաստանը, գրում է հեղինակը, անգլիական և ֆրանսիական իմպերիալիստների նվաճողական պլաններում նույնպես կարևոր դեր էր խաղում ինչպես քաղաքական և ռազմաստրատեգիական, այնպես էլ առևտրատնտեսական տեսակետից։

Գրքում լայն տեղ է հատկացված նաև Արևմտյան Հայաստանի նկատմամբ ցարական Ռուսաստանի քաղաքականությանը։ Պատերազմական գործողությունների շնորհիվ գրավելով Արևմտյան Հայաստանը, ռուսական ցարիզմը վարում էր այն գաղութացնելու քաղաքականություն։ Աշխատության մեջ բացահայտված են նաև Արևմտյան Հայաստանը բռնագրավելու մասին Անտանտի պետությունների բանակցությունները, ցույց են տրված այն բաժանելու վերաբերյալ գաղտնի պայմանագրերը։

Թուրք-գերմանական զավթիչների նվաճողական քաղաքականությունն է ներկայացված Խ. Բադալյանի աշխատության մեջ[2]։ Գրքում օգտագործված են որոշ նոր վավերագրեր։

Համառոտակի ներկայացնելով 1915 թ. Մեծ եղեռնը և արևմտահայերի ինքնապաշտպանական գոյամարտերը, Ա. Մնացականյանն իր մենագրության մեջ[3] փորձել է պատասխանել հետևյալ հարցին՝ ի՞նչն էր արևմտահայերին խանգարում ժամանակին համախմբվելու և պաշտպանվելու իթթիհատական ռասխտների հարձակումներից։ Նրա կարծիքով, դրա համար կա երեք պատճառ. առաջին՝ աշխարհի մեծ տերությունների դիվա-

[1] Տե՛ս Акопян С., Западная Армения в планах империалистических держав в первой мировой войне. Е., 1967, էջ 65։

[2] Տե՛ս Бадалян Х., Турецко-германская экспансия в Закавказье (1914—1918 гг.), Е., 1980։

[3] Տե՛ս Ա. Մնացականյան, Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Եր., 1965։

նագիտությունը խաբեց հայ ժողովրդին և նրան կանգնեցրեց աղետի առաջ, երկրորդ՝ թուրքական ռասիստների կուսակցությունը՝ իթթիհատը, ավելի խորամանկ և նենգ գտնվեց, քան կարծում էին հայկական ազգային կազմակերպություններն ու նրանց ղեկավարները, մտավորականությունն ու հոգևորականությունը, երրորդ՝ արևմտահայության ազատագրական շարժման գլուխ կանգնած հայ քաղաքական կուսակցություններն ու հոսանքները մինչև վերջ էլ չկարողացան հաղթահարել այն հակասությունները, որոնք արգելակում էին համազգային միասնական ճակատի կազմակերպմանը։ Իրավացի է պատմաբանը, երբ գրում է, թե այդ միասնական ճակատը պետք է ստեղծվեր ոչ միայն հայ քաղաքական կուսակցությունների ու արևմտահայերի միջև, այլև նրանց ոչ թուրքահպատակ մյուս ճնշված ազգերի միջև։ Չէ որ հայի հետ միասին շահագործվում և ճնշվում էին արաբ, քուրդ, ասորի, հույն և ուրիշ ազգերի աշխատավորները։ Իրականում դաշնակցությունը հայկական շարժումը և հայ աշխատավորությանը մեկուսացնում էր ճնշված մյուս ժողովուրդների պայքարից[1], գրում է հեղինակը։

Խոսելով Վանի հերոսական ինքնապաշտպանության մասին, Ա. Մնացականյանը քննադատության է ենթարկում պատմության թուրքական կեղծարարներին, որոնք ճգնում են այդ և մյուս գոյամարտերը ներկայացնել որպես «դավադրություն» կամ «ապստամբություն» թուրքական պետության դեմ և վերջինս, իբր, հարկադրված էր կանխել հայերի սպառնալիքը, կազմակերպելով նրանց տեղահանումներն ու ջարդերը։

Աշխատության մեջ վկայակոչումներ կան այն մասին, թե ամբողջ աշխարհում ինչպիսի լայն արձագանք են գտել հայ ժողովրդի 1890—1920 թթ. ողբերգությունները, մասնավորապես՝ առաջին աշխարհամարտի ժամանակ արևմտահայության զանգվածային բռնագաղթն ու կոտորածները։ Փաստական հարուստ տվյալներով ցույց է տրված, որ եթե իմպերիալիստական պետությունները եղեռնին մոտենում էին իրենց շահադիտական նկատառումներով, «հայերի պաշտպանի» կեղծ դիմակ հագնելով հովանավորում էին թուրք-օսմանյան բռնակալների գաղանային արարքները, ապա աշխարհի ժողովուրդների առաջադեմ ներկայացուցիչները, փոքր ազգերի բարեկամները դատապարտում էին թուրքական իշխանությունների հայաջինջ քաղաքակա-

[1] Տե՛ս Ա. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 56—58։



նությունը, դիմազերծ անում հայկական կոտորածներ կազմակերպողներին։

Առանձին-առանձին խոսվում է այդ գործիչներից շատերի մասին։ Դրանք էին. Ռուսաստանում՝ Մաքսիմ Գորկին, Յուրի Վեսելովսկին, Վալերի Բրյուսովը, ակադեմիկոսներ Վ. Ա. Գորդլևսկին, Ե. Վ. Տարլեն, Ֆրանսիայում՝ Անատոլ Ֆրանսը, Ժան Ժորեսը, Ռոմեն Ռոլանը, Անրի Բարբին, Գերմանիայում՝ Կարլ Լիբկնեխտը, ամերիկյան գիտնական Հերբերտ Գիբոնսը, ժուռնալիստ Ջոն Ռիդը, անգլիացի հրապարակախոս Թոինգը, արաբ գրող Ֆայեզ էլ Ղոսեինը, նորվեգացի մեծ գիտնական Ֆրիտյոֆ Նանսենը, ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելը և ուրիշներ։ Ուշագրավ է Ա. Մնացականյանի այն միտքը, թե ի հակադրություն ռուս և համաշխարհային առաջադիմական մտքի այս և մյուս ականավոր ներկայացուցիչների արտահայտած կարծիքի, պատմությանը հայտնի են նաև այլ արտահայտություններ։ «Հիշենք,— գրում է նա,— գնդապետ Հաուզի հուշագրությունները և Վիլսոնի տասնչորս կետերը, Ասեսոնի և Ջերարդի դեմագոգիկ ելույթները, Գլադստոնի և Լլոյդ Ջորջի ճառերը, Կլեմանսոյի հոդվածները և Միլերանի նոտաները, Կերենսկու Թուրքահայաստանի կառավարման «կանոնադրությունը» և Միլյուկովի կեղծ հավաստիացումները Հայկական հարցի, արևմտահայության բռնագաղթի և կոտորածների մասին»[1]։

Առաջին աշխարհամարտի տարիներին և դրանից էլ առաջ հայ ժողովրդի կրած ողբերգությունների առթիվ աշխարհի առաջադեմ հասարակայնության այդ բողոքին անդրադարձել է նաև Գ. Ղարիբջանյանը[2]։

Գրքույկում ասվում է, որ հայ ժողովրդի նկատմամբ իրականացված թուրքական բարբարոսությունների դեմ իրենց բողոքի ձայնն են բարձրացրել գերմանական սոցիալ-դեմոկրատական հայտնի գործիչներ Ա. Բեբելը և Վ. Լիբկնեխտը։ Սուլթան Աբդուլ Համիդին հորջորջելով մարդասպան, մեծ ոճրագործ, արյունոտ սուլթան, նրանք դատապարտել են նաև արևմտաեվրոպական պետությունների փարիսեցիությունը։ Նրանք, անարգանքի սյունին գամելով Թուրքիայի գերիշխանության տակ գտնվող ազգերի դաժան հալածողներին, միաժամանակ կողմնա-

[1] Ա. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 200։

[2] Տե՛ս Գ. Ղարիբջանյան, Կարլ Լիբկնեխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը հայ ժողովրդի մասին, Եր., 1971։

կից չեն եղել Թուրքական կառավարության դեմ նրանց պայքարին, դրանք համարելով ցարիզմի մեքենայությունների արդյունք։ Նրանց կարծիքով, դրանով Ռուսաստանը կուժեղանար և, որպես Եվրոպայի ժանդարմ ավելի կընդլայներ իր հարձակումները հեղափոխական ուժերի դեմ։ Նրանք կողմնակից էին Թուրքիայի հաղթանակին։ «Լյուքսեմբուրգը,— գրում է Գ. Ղարիբջանյանը,— վճռականորեն մերժեց նման տեսակետը որպես հին շաբլոն»[1]։

Գ. Ղարիբջանյանը վերլուծել է «Սաքսոնական բանվորական լրագիր» սոցիալ-դեմոկրատական թերթում Ռ. Լյուքսեմբուրգի 1896 թ. տպագրած «Ազգային պայքարը Թուրքիայում և սոցիալ-դեմոկրատիան» հոդվածը*։ Ռ. Լյուքսեմբուրգը մերժում է սոցիալ-դեմոկրատական մամուլում արտահայտված այն կարծիքը, թե, իբր, Թուրքիայում այն ժամանակ տեղի ունեցած իրադարձությունները (հայկական կոտորածներ, հույների և հայերի ապստամբություններ և այլն) դիվանագիտական մեքենայությունների արդյունք են մասնավորապես Ռուսաստանի կողմից։ Թուրքիայում ազգային-ազատագրական շարժումները Լյուքսեմբուրգը համարում է պատմական, բնական անհրաժեշտություն, դարի անարդարությունից և շահագործումից լեռան չափ դիզված բոցավառ նյութի պայթյուն, որի հետևանքով Թուրքիան պետք է խորտակվի և ստեղծվեն նոր պետություններ։ Ուշագրավ է, որ Ռ. Լյուքսեմբուրգը գտնում էր, որ թուրքական պետության կործանումը պետք է տեղի ունենա ոչ թե դասակարգային պայքարի, այլ ազգային-ազատագրական շարժումների հետևանքով։

Գրքույկում հետաքրքիր փաստեր կան Կ. Լիբկնեխտի և Ռ. Լյուքսեմբուրգի հայ գործիչների հետ ունեցած անձնական կապերի մասին։ Բացահայտված են հայկական կոտորածների ժամանակ հայ ժողովրդի հանդեպ նրանց համակրանքը, թուրք դահիճների ու նրանց հովանավորող Գերմանիայի և մյուս իմպերիալիստական պետությունների քաղաքականության նկատմամբ խիստ բացասական վերաբերմունքը։

Պատերազմի նկատմամբ հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշման հարցին հանգամանորեն անդրադարձել է նաև Ծ. Աղայանը՝ «Հայկական քաղաքական կուսակցություններ-

[1] Գ. Ղարիբջանյան, նշվ. աշխ., էջ 14։

* Այս հոդվածը տարիներ առաջ Գ. Ղարիբջանյանը հայտնաբերել է Բեռլինում, երբ նա հանդիպանում էր գերմանական սոցիալ-դեմոկրատական մամուլին։



ը առաջին համաշխարհային պատերազմում» հոդվածում[1]։ Ընդհանուր առմամբ ճիշտ է վերլուծված այդ կուսակցությունների դիրքորոշումը՝ Անտանտին հավատ տածելու, Հայկական հարցի լուծումը նրա հաղթանակի հետ կապելու տեսակետից։ Սակայն դժվար է համաձայնվել Ծ. Աղայանի հնչակյաններին տրված գնահատականի հետ։ Նա անհարկի դատապարտում է հնչակյան օրգան «Երիտասարդ Հայաստան» թերթում 1914 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին տպագրված մի շարք հոդվածներ։ Դրանցից մեկում պաշտպանվում է Անտանտի հաղթանակը։ Մի՞թե ճիշտ կլինի հակառակը պնդել։ Իհարկե ո՛չ։ Ինչ խոսք, Անտանտը նույնպես վարում էր նվաճողական քաղաքականություն, սակայն, մեր կարծիքով, հայ ժողովրդի համար նախընտրելի էր նրա, քան Թուրք-գերմանական բլոկի հաղթանակը, որն ավելի ծանր հետևանքներ կունենար։ Անտարակույս, ճիշտը լենինյան տակտիկան էր՝ իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիականի։

Առաջին համաշխարհային պատերազմի, նրան նախորդող ու հաջորդող տարիների (1860—1920 թթ.) թուրքական ազգային բուրժուազիայի գաղափարաբանության և քաղաքականության հարցերը հանգամանորեն քննվում են Հայկական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Հր. Սիմոնյանի ուշագրավ մենագրությունում[2]։ Հարուստ է մենագրության աղբյուրագիտական հենքը։ Գիտական շրջանառության մեջ են դրվել բազմաթիվ նոր վավերագրեր։

Անտարակույս, նշված մենագրությունը միայն Թուրքիայի պատմությանը չի վերաբերում։ Ինչպես ընդգծում է հեղինակը, թուրք ազգային բուրժուազիայի առաջացման և ձևավորման պատմական այդ ժամանակահատվածը հարուստ է այնպիսի իրադարձություններով, որոնք բախտորոշ նշանակություն ունեցան նաև հայ ժողովրդի համար։ Այդ ժամանակաշրջանին են վերաբերում հայ ժողովրդի հիմնական՝ արևմտյան հատվածի գերմարդկային ճիգերը՝ դուրս գալու թուրքական տիրապետության պայմաններում ստեղծված ահավոր կացությունից։

«1860—1920-ական թվականներն ընդգրկող ժամանակահատվածը ոչ միայն ճակատագրական եղավ արևմտահայության հա-

[1] Տե՛ս Первая мировая война 1914—1918 (сборник статей), М., «Наука», 1968.

[2] Տե՛ս Հր. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Եր., 1986։

մար, այլև իր խոր կնիքը թողեց ողջ հայ ժողովրդի հոգեկան աշխարհի վրա»[1]։

Հանգամանորեն վերլուծելով օսմանիզմի, իսլամիզմի, պանիսլամիզմի, թուրքիզմի և պանթուրքիզմի էությունը, պատմաբանը համոզիչ փաստերով և կուռ եզրահանգումներով ցույց է տալիս, որ այդ ռեակցիոն ուսմունքներն ուղղված են եղել ոչ թուրք ժողովուրդների, առաջին հերթին՝ հայերի դեմ։

Բազմաթիվ փաստերի հիման վրա նա հանգում է այն ճիշտ եզրակացությանը, թե «Արևմտահայաստանում սկսված ազատագրական շարժման և թուրքական բռնակալության տակ հեծող իր եղբայրների նկատմամբ կովկասահայության բուռն համակրանքի հողի վրա ձևավորվեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման գաղափարաբանությունը, որի սկզբնավորողը ռուսահայ առաջադեմ մտավորականությունն էր»[2]։

Ճիշտ է, խորհրդահայ պատմագրության մեջ բավականաչափ լուսաբանված է երիտթուրքերի հանդես գալու, նրանց հետ դաշնակցականների մերձեցման, ինչպես նաև իշխանության գլուխ անցնելուց հետո նրանց վարած ռեակցիոն հակահայկական քաղաքականության պատմությունը, սակայն հեղինակի աշխատության մեջ մի շարք հարցեր լուսաբանված են նորովի։

Խոսելով պատերազմող երկու խմբավորումների մասին, Հր. Սիմոնյանը միևնույն ժամանակ իրավացիորեն սխալ է համարում այն կարծիքը, թե իբր, երիտթուրքերը հլու-հնազանդ էին իրենց գերմանական բարեկամներին և կատարում էին այն, ինչ ցանկանում էր Գերմանիան։ Բանն այն է, գրում է նա, որ Թուրքիան էլ ուներ իր նվաճողական ծրագրերը։ Նա ձգտում էր առաջին հերթին գրավել Արևելյան Հայաստանն ու ամբողջ Անդրկովկասը, հատկապես Բաքուն ու նրա նավթային հարստությունները։ Հր. Սիմոնյանն իրավացիորեն հանգում է այն մտքին, որ համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի համար միևնույնը չէր, թե ով կհաղթանակի։ Երկու կողմերի համար էլ պատերազմը իմպերիալիստական էր, գրում է նա, բայց՝ «եթե պատերազմում Ռուսաստանի դեմ Թուրքիայի հաջողությունը մահաբեր էր հայության համար, ապա Թուրքիայի դեմ ռուսական բանակի հաղթանակը, ընդհակառակն, հայ ժողովրդի հաղթանակն էր, քանի որ այդ բանակը, թեկուզ ցարական, նրան ազատություն էր բերելու օսմանյան դարավոր բռնակալությունից, և նա ժամ առաջ էր փափագում տեսնել այդ ազատությունը»[1]։

Պատմաբանը զգալի տեղ է հատկացրել աշխատավորների ինտերնացիոնալ բարեկամության հարցին, գրելով, որ այդ արյունալի օրերին իրենց կյանքը վտանգելու գնով հայերին ձեռք էին մեկնում արաբ, հույն, քուրդ, թուրք, աշխատավոր, հարբսահարվող մարդիկ։

Առաջին աշխարհամարտի տարիներին արևմտահայության կրած անլուր տառապանքների հարցը ևս բազմակողմանիորեն արծարծվել է խորհրդահայ պատմական գրականության մեջ։ Պատմաբանները շեշտը դրել են մարդկային և նյութական, իսկ Հր. Սիմոնյանը նաև հոգևոր մշակույթի ոլորտում կրած կորուստների վրա։ Եվ պատահական չէր աշխարհի առաջադեմ հասարակայնության դատապարտող բողոքի ձայնը ընդդեմ թուրք բարբարոսների վայրենությունների։

Աշխատության մեջ վերլուծված է 1917 թ. վերջին և 1918 թ. սկզբին ռուսական բանակի՝ Կովկասյան ռազմաճակատից հետ քաշվելու պատճառների հարցը։

Չնայած խորհրդահայ շատ պատմաբանների աշխատություններում քննվել են Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմության հետ կապված բազմաթիվ հարցեր, այնուամենայնիվ մինչև վերջերս հրապարակի վրա չկար մի ամբողջական աշխատություն։ Այս տեսակետից ուշադրության է արժանի Ա. Համբարյանի, Դ. Մուրադյանի և Ա. Սիմոնյանի աշխատությունը[2]։ Այն ընդգրկում է XVIII դարի վերջին քառորդից մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունն ընկած ժամանակաշրջանը։

Ինչ խոսք, աշխատության հեղինակները օգտագործել են մինչև այդ ստեղծված հարուստ գրականությունը, գիտական շրջանառության մեջ են դրվել բազմաթիվ վավերագրական-վիճակագրական նոր տվյալներ։ Աշխատությունը գրված է ռուսաստանյան պրոլետարիատի պատմության ֆոնի վրա, նրա հետ սերտորեն առնչված։

Իրավացի են հեղինակները, երբ նշում են, որ թեև Արևելյան

1 Հր. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, էջ 5։

2 Նույն տեղը, էջ 74։

1 Հր. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 341։

2 Տե՛ս Ա. Համբարյան, Դ. Մուրադյան, Ա. Սիմոնյան, Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն, Եր., 1988։

Հայաստանում պրոլետարիատի սաղմնավորման տարրերն առաջացել են XVIII դարի վերջին քառորդում և քիչ թե շատ աճում են նրա Ռուսաստանին միանալուց հետո, բայց իբրև դասակարգ այն ձևավորվում ու զարգանում է հետռեֆորմյան շրջանում, մասնավորապես XIX դարի վերջին և XX դարի սկզբին[1]։ Համատեղ քննելով պրոլետարիատի ձևավորման սոցիալ-տնտեսական պայմանները, նրանք նկատում են, որ «... Արևելյան Հայաստանը պատմական կոնկրետ պայմանների ներգործության հետևանքով թեև Ռուսաստանի թույլ զարգացած շրջաններից էր և համեմատաբար ուշ մտավ կապիտալիստական մեքենայացված արտադրության պրոցեսի մեջ, այնուամենայնիվ ունեցավ արդյունաբերական մի շարք նշանավոր կենտրոններ, որոնք XIX դարի վերջին և XX դարի սկզբին դարձան պրոլետարիատի կազմավորման օջախներ»[2]։

Այնուհետև առանձին-առանձին քննվում է արդյունաբերական (հեղինակ՝ Ա. Սիմոնյան), գյուղական պրոլետարիատի ձևավորումն ու դրությունը, գյուղում դասակարգային պայքարի հարցը (հեղինակ՝ Ա. Համբարյան) և բանվորական շարժումները ու հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները Հայաստանում XIX դարի վերջին և XX դարի սկզբին (հեղինակ՝ Դ. Մուրադյան)։ Աշխատությունն ունի հարուստ հավելված։

## 9. Հայկական գաղթավայրերի պատմությունը

Ինչպես հայտնի է, վաղ միջնադարից սկսած մայր երկրից պարբերաբար կատարվող զանգվածային բռնագաղթերի ու արտագաղթերի հետևանքով աշխարհի տարբեր վայրերում ստեղծվել են հոծ բնակչություն ունեցող հայկական գաղթօջախներ։ Անտարակույս, հայկական գաղթավայրերի առաջացումն ունեցել է իր սոցիալ-տնտեսական և քաղաքական պատճառները։ Դրանցից գլխավորը Հայաստանի վրա հաջորդաբար կրկնվող արշավանքներն ու ավերածություններն էին, որոնք հայ բնակչության համար ստեղծել էին կյանքի և գույքի անապահով վիճակ։ Հեռանալով մայր հայրենիքից, նրանք գաղթօջախներում որոշակի դեր են խաղացել ազգային մշակույթի, հասարակական-

[1] Տե՛ս Ա. Համբարյան, Դ. Մուրադյան, Ա. Սիմոնյան, Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն, էջ 6—7։

[2] Նույն տեղը, էջ 42։



քաղաքական կյանքի հետագա զարգացման գործում։ Ուստի հասկանալի է, թե ինչու հայկական գաղթավայրերի պատմությունը դիտվում է որպես հայ ժողովրդի ամբողջական պատմության անբաժանելի մասը։ Ճիշտ է նկատել ականավոր պատմաբան Լեոն՝ հայոց պատմությունը VI դարից արդեն միայն Հայաստանի պատմությունը չէ, այլ ընդգրկում է նաև թափառիկ հայության պատմությունը։

Պետք է նշել, որ մեզանում այս կարևոր հարցի վրա տասնամյակներ շարունակ հարկ եղած ուշադրություն չէր դարձվել։

Հայ գաղթավայրերի պատմության գիտական հետազոտության բնագավառում լուրջ նվաճումներ ունի սփյուռքահայ պատմագրությունը։ 1920—1950-ական թվականներին սփյուռքում հրատարակվել են մի շարք արժեքավոր աշխատություններ։ Այդ մասին գրել ենք մեր նախորդ՝ «Պատմագիտության զարգացումը խորհրդային Հայաստանում» մենագրության մեջ։ Սփյուռքում վերջին երկու տասնամյակում այդ ուղղությամբ հսկայական աշխատանք է կատարվել։ Կարելի է ասել, որ յուրաքանչյուր գաղթավայրի մասին հրատարակված են առանձին գրքեր՝ երբեմն նույնիսկ հատորներ։ Մինչև 1960-ական թվականների սկիզբը որոշ աշխատանք են կատարել նաև խորհրդահայ պատմաբանները՝ Ս. Տեր-Ավետիսյանը, Լ. Խաչիկյանը, Վ. Գրիգորյանը, Վ. Ոսկանյանը, Ռ. Աբրահամյանը, Վ. Խաչատրյանը, Ա. Անասյանը, Ս. Քոլանջյանը, ինչպես նաև Յա. Դաշկևիչը, Ա. Յուխտը և ուրիշներ։ 60-ական թվականների կեսերից նոր թափ ստացավ հայ գաղթօջախների պատմության հետազոտությունը։

Այս կարևոր գործում լուրջ ավանդ ունի պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Աբրահամյանը։ Խորհրդահայ պատմաբաններից նա առաջինն էր, որ ձեռնամուխ եղավ հայ գաղթավայրերի ամբողջական պատմության շարադրման շնորհակալ գործին։ 1960-ական թվականների կեսերին հրատարակվեց նրա երկհատորանոց աշխատությունը[1]։

Աշխատության առաջին հատորն ընդգրկում է հայ գաղթա-

[1] Տե՛ս Ա. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա. Եր., 1964, հ. Բ., Եր. 1967։ Երկրորդ հատորի մի շարք գլուխներ, կապված գլխավորապես Արևելքի և Աֆրիկայի հայ գաղթավայրերի հետ, գրել է հեղինակի որդին՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ. Աբրահամյանը։

վայրերի հին և միջին դարերի, իսկ երկրորդը՝ նոր շրջանի պատմությունը։

Առաջին հատորի ներածականում նա քննում է այն հարցը, թե սփյուռքահայության պատմությունն ինչու է ինքը անվանում հայ գաղթավայրերի պատմություն։ Եգիպտահայ վաստակաշատ պատմաբան Ա. Ալպոյաճյանն անվանել է «Հայ գաղթականության պատմություն», իսկ Ա. Աբրահամյանը գտնում է, որ իր աշխատությունն այդպես չէր կարող վերնագրվել, որովհետև իր նպատակն է եղել շարադրել ոչ միայն գաղթի, գաղթականության, այլև գաղթօջախների պատմությունը։ Նա անընդունելի է համարում նաև պատմական գրականության մեջ հաճախ գործածվող «Հայ գաղթօջախների պատմություն» անվանումը, այն համարելով մյուս ծայրահեղությունը, քանի որ խնդրո առարկան միայն այն օջախների պատմությունը չէ, ուր հաստատվել ու գործել են հայ համայնքները, այլ նաև հայ բնակչության գաղթի, ինչպես և տվյալ բնակավայրերի ներքին պատմությունն է։ Ա. Աբրահամյանը անընդունելի է համարում նաև «Հայ գաղութների պատմություն» անվանումը։

Անտարակույս, մեծ ջանքեր, նախանձելի ջանասիրություն է պահանջվել նման մի աշխատություն ստեղծելու համար, քանի որ խոսքը վերաբերում է աշխարհով մեկ ցրված հայության ավելի քան 30 հայկական գաղթավայրերի պատմությանը, գաղթավայրեր, որոնցից մի քանիսը հազարամյակի պատմություն ունի։ Աշխատությունը գրված է փաստական հարուստ նյութերի հիման վրա, պատմական իրադարձությունների ճշմարտացի վերլուծումներով։

Ի տարբերություն որոշ ուսումնասիրողների գիտական արատավոր մեթոդի, ըստ որի այս կամ այն գաղթօջախի պատմությունը վեր է ածվել տվյալ վայրերում հանդես եկած միայն մեծատունների, քաղաքական բարձր դիրքի հասած առանձին անհատների, խոջաների և բարձրաստիճան այլ անձնավորությունների, ինչպես ասում են, հայ երևելիների պատմության, Ա. Աբրահամյանը ճիշտ ուղի է ընտրել, և սփյուռքահայության պատմությունը ներկայացրել է իր սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքով, հայ գաղթավայրերում ստեղծված մշակութային ակնառու արժեքներով։ Նա քննադատում է այն պատմաբաններին, որոնք ազգային սնապարծություն են հանդես բերում,



գերագնահատում են հայ գաղթավայրերի խաղացած դերը տվյալ երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում։

Պատմաբանը հայ գաղթօջախների պատմության ուսումնասիրության անհրաժեշտությունը բացատրում է հետևյալ գործոններով. առաջին՝ այն ունի կարևոր նշանակություն բուն հայրենի երկրի պատմության ամբողջացման համար։ Առանց այդ պատմության ուսումնասիրման անկարելի է բազմակողմանիորեն լուսաբանել Հայաստանի հետ կապված այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են սոցիալական և ազատագրական շարժումները, հայ և մյուս ժողովուրդների փոխհարաբերությունները, մշակութային փոխազդեցությունները և այլն, որոնց մեջ իրենց մասն ու բաժինն ունեն նաև գաղթավայրերը[1]։ Երկրորդ՝ XI—XVII դարերում, երբ Հայաստանում ստեղծված ծանր դրության հետևանքով հայ ժողովուրդը զրկված էր մշակույթի որևէ բնագավառում խիզախ նախաձեռնություն հանդես բերելու հնարավորությունից, գաղութահայությունն էր, որ կարողանում էր ծավալել իր ստեղծագործական ունակությունները։ Ուստի հայ ժողովրդի ստեղծագործական վաստակները վեր հանելու և ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է Հայաստանի պատմության հարցերի մշակման հետ միասին համակողմանիորեն լուսաբանել նաև հայ գաղթականության պատմությունը[2]։ Երրորդ՝ քանի որ պատմական գիտության առաջնահերթ խնդիրն է ուսումնասիրել անցյալում ժողովրդի տնտեսական, քաղաքական ու մշակութային փոխհարաբերությունները, ուստի սփյուռքահայության պատմությունն այդ տեսակետից հարուստ և ուսանելի ժառանգություն ունի։ Գաղթավայրերի պատմությունը նաև կարևոր ուղեցույց է հայ և հարևան ժողովուրդների հարաբերությունների պատմության համար։ Այդ իմաստով հայ գաղթավայրերի պատմությունը ձեռք է բերում որոշակի արդիականություն[3]։

Աշխատության մեջ հատուկ քննության է առնվում նաև հայ գաղթականության առաջացման պատճառների հարցը, որը հայագիտության մեջ վաղուց ի վեր վիճաբանության առարկա է եղել։ Այստեղ Ա. Աբրահամյանը բերում է գոյություն ունեցող մի քանի տեսություններ, իսկ վերջում հայտնում իր կարծիքը։ Այդ տեսություններից են.

---

[1] Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 8։

[2] Տե՛ս նույն տեղը։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 8—9։

ա) Հայ ավատական պատմագրությունը Հայաստանի քաղաքական անկախության անկումը և հայ բնակչության արտագաղթը բացատրել է հայ ժողովրդի՝ աստծո առջև թույլ տված «օրինազանցությամբ», նրա գործած «ծով մեղքերով»։ Այդպես է գրել լեհահայ պատմիչ Հովհաննես Ավագերեցը։

բ) XVII դարի պատմիչ Առաքել Դավրիժեցին հայ գաղթականության առաջացման պատճառը կապում է հայկական պետականության անկման հետ։

գ) Անցյալի հայ հասարակական մտքի խոշոր դեմքերից մեկը՝ Մովսես Բաղրամյանը, իր «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» աշխատության մեջ, մերժելով Հովհաննես Ավագերեցի տեսությունը, գտնում է, որ հայերի գաղթեցման առաջին պատճառը ժողովրդի անմիաբանությունն ու անհամերաշխությունն էր։

դ) Մեկ այլ վարկածով հայերի արտագաղթը կապվում է առևտրական կապիտալի շահերի հետ։ Ըստ այդ տեսության, միջին դարերում, երբ առևտրական տարանցիկ մայրուղին փոխում է իր նախկին ուղղությունը և հեռանում է Հայաստանից, երկրում հայ առևտրականների գործունեության համար ստեղծվում են անբարենպաստ պայմաններ, որն էլ հարկադրում է նրանց գաղթելու արտասահման[1]։

ե) Գաղթականության առաջացման հարցում հայագետներից ոմանք մեծ տեղ են տվել Հայաստանի աշխարհագրական դիրքին։ Այդ կարծիքն է արտահայտել Ա. Ալպոյաճյանը, գրելով, որ Հայաստանի աշխարհագրությունը հայ գաղթականության պատճառների պատճառն է։ Հայաստանի աշխարհագրական գործոնին կարևոր տեղ է տվել նաև ակադեմիկոս Հ. Մանանդյանը, նկատի ունենալով նրա բուֆերային վիճակը[2]։

Վերոհիշյալ բոլոր տեսությունները քննարկելուց հետո Ա. Աբրահամյանը իրավացիորեն գրում է. «Թվարկված բոլոր տեսակի գաղթականությունն էլ այս կամ այն չափով կորստաբեր է եղել փոքրաթիվ հայ ժողովրդի համար։ Սակայն նշված գաղթականության բոլոր ձևերի մեջ ամենից ահռելին, ամենից կորստաբերը՝ օտար տիրակալների Հայաստանում ստեղծած անտանելի ծանր դրության հետևանքով առաջացած զանգվածային գաղթն է եղել, որի ժամանակ հարյուր հազարավոր հայ բնակչություն հարկադրված է եղել գնալ և բնակություն հաստատել օտար հորիզոններում»[1]։

Մենագրության արժանիքներից է նաև այն, որ նա հայկական գաղթավայրերի պատմությունը չի կտրել հյուրընկալող երկրի պատմական միջավայրից, նրա սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակից։ Նա ցույց է տվել հայ գաղթականության մասնակցությունը տվյալ երկրի հասարակական և մշակութային կյանքին որպես երախտագիտական պարտք։ Հանդես բերելով դասակարգային մոտեցում, նա գտնում է, որ թեև գաղթավայրի հայ հարուստների մեջ եղել են հայ համայնքի հետ կապված և ազնիվ նպատակներով հանրօգուտ գործեր կատարող անձնավորություններ, սակայն, որպես կանոն, նրանց մեծ մասն իր անձնական և դասակարգային շահերի թելադրանքով սերտորեն կապված է եղել ոչ թե հայ համայնքների, այլ տեղի օտարազգի ֆեոդալական կամ բուրժուական մեծահարուստ շրջանների հետ և մերվել է նրանց։ Մինչդեռ գաղթավայրի հայ աշխատավորությունը կապված է եղել տեղի աշխատավորության հետ և ընթացել է նրան համաքայլ[2]։

Մենագրության երկրորդ հատորում շարադրված է հայկական շուրջ 20 գաղթավայրերի համառոտ պատմությունը։ Այստեղ չի տրված Թիֆլիսի, Բաքվի, Նոր Նախիջևանի, Կ. Պոլսի, Զմյուռնիայի գաղթավայրերի պատմությունն այն պատճառաբանությամբ, որ մինչև խորհրդային կարգերի հաստատումը հայ հասարակական կյանքին ընթացք, ուղղություն տվողը դրանք են եղել, այդ վայրերում են ծայր առել և դրսևորվել սոցիալական և ազատագրական շարժումները, դրանք են հանդիսացել հայ մշակույթի խոշոր կենտրոնները, այդ վայրերում են կենտրոնացված եղել հայ մտավորականության առաջավոր ջոկատները և այլն։ Այնուհետև նա գրում է. «Հայկական այդ հատվածների պատմությունը անխզելիորեն կապված է հայրենի երկրի նոր շրջանի պատմության հետ և նրա կարևոր մասն է կազմում»[3]։

Այստեղ չեն արտացոլվել նաև հայկական այն գաղթավայրերը, որոնք գտնվել են ԽՍՀՄ տարածքում։ Ա. Աբրահամյանը գտնում է, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ

[1] Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 10։
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 12։



[1] Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 13։
[2] Տե՛ս նույն տեղը, հ. Բ, էջ 9։
[3] Նույն տեղը, էջ 10։

խորհրդային ժողովուրդները միավորվեցին մեկ միասնական ընտանիքի մեջ և դարձան այդ դաշինքի իրավահավասար անդամները, Ռուսաստանում, Ուկրաինայում, Վրաստանում, Ադրբեջանում և մյուս հանրապետություններում եղած հայ համայնքները կորցրին իրենց նախկին նշանակությունը իբրև գաղթավայր։

Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ Ա. Աբրահամյանի աշխատությունն ունի նաև առանձին թերություններ և բացեր։ Նախ, բացակայում է սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը։ Չի կարելի անտեսել նախախորհրդային և խորհրդային շրջանում գաղթավայրերի պատմությանը նվիրված բազմաթիվ (այդ թվում ընդհանրացնող) արժեքավոր աշխատությունները։ Երկրորդ, կարծում ենք, որ այնքան էլ հիմնավորված չէ նրա բացատրությունը Խորհրդային Միության (Նոր Նախիջևան, Աստրախան, Հյուսիսային Կովկաս, Ղրիմ և այլն), ինչպես նաև Կ. Պոլսի, Զմյուռնիայի և այլ գաղթավայրերի պատմությունը գրքի երկրորդ հատորում չվերադարձը։

Մեծ է Հայկական ԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կատարած աշխատանքը հայ գաղթավայրերի հետազոտման բնագավառում։ «Հայ ժողովրդի պատմության» IV—VI հատորներում, որոնք հրատարակել են 1972—1981 թթ., ընդարձակ բաժիններ են հատկացված հայ գաղթավայրերի պատմությանը։ Ուշագրավ է, որ այդ կարևոր գործին ձեռնամուխ է եղել գիտական աշխատողների մի ամբողջ կոլեկտիվ։

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեր աշխատությունը վերաբերում է նոր և նորագույն ժամանակաշրջանին, ուստի կխոսենք միայն V և VI հատորների մասին, որոնցից մեկը ընդգրկում է 1800—1870, իսկ մյուսը՝ 1870—1917 թվականները։

«Հայ ժողովրդի պատմության» V հատորի գաղթավայրերին նվիրված բաժնում շարադրվում է Ռուսաստանի, Արևմտյան Եվրոպայի, Պարսկաստանի, Հնդկաստանի, Մերձավոր արևելքի և Աֆրիկայի, իսկ VI հատորում՝ Ռուսաստանի, Արևմտյան Եվրոպայի, Ամերիկայի, Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղթավայրերի համառոտ պատմությունը։ Պատմությունը շարադրելիս Վ. Բարխուդարյանը, Վ. Խաչատրյանը, Վ. Ադոբաշյանը, Վ. Միքայելյանը, Հ. Ղազարյանը, Ա. Գրիգորյանցը, Ս. Հովնանյանը, Ծ. Աղայանը, Ս. Քոլանջյանը, Ժ. Անանյանը, Մ. Բարլոյանը, Վ. Փարթամյանը, Ա. Աբրահամյանը, Ռ. Աբրահամյանը, Գ. Հարությունյանը և Հ. Թոփուզյանն օգտագործել են մեծ քանակությամբ փաստական նյութեր, կարևոր սկզբնաղբյուրներ, հարուստ գրականություն։ Շարադրանքը կատարված է գիտական պատշաճ մակարդակով։

Հատորներում շարադրված են գաղթավայրերի ձևավորման, նրանց ներքին կյանքի փոփոխությունների պատմությունը։ «Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը այն երկրներում, որտեղ ապաստան էին գտել բնաշխարհը թողած հայ զանգվածները,— կարդում ենք V հատորում,— սոցիալ-դասակարգային նոր երանգավորում էր հաղորդում այդ գաղթավայրերին, փոխում նրանց դասակարգային դեմքը»[1]։

Ճիշտ են նկատել հեղինակները՝ Արևելյան Հայաստանից բնակչության արտահոսքը հետևանք էր կապիտալիզմի զարգացման։ Արդյունաբերական փոքրիշատե խոշոր կենտրոնների բացակայությունն ունեզրկված հայ գյուղացիությանն ուղղում էր դեպի Բաքու, Թիֆլիս, ինչպես նաև կենտրոնական Ռուսաստանի քաղաքները։ Այլ էր դրությունն Արևմտյան Հայաստանում։ Արտագաղթն այնտեղ առավել զանգվածային էր, որն արդյունք էր թուրքական բռնապետական կարգերի հարկային ծանր քաղաքականության և անօրինակ կեղեքումների, թուրք պաշտոնյաների վայրագությունների։ Սրանց հոսանքն ուղղվում էր առաջին հերթին Կոստանդնուպոլիս և Զմյուռնիա[2]։

Արևմտահայերի մի զգալի մասը հաստատվում է Սիրիայում, Լիբանանում և, մասնավորապես, Եգիպտոսում, ուր համեմատաբար ավելի նպաստավոր պայմաններ էին ստեղծվել։ Պարսկահայ գաղթավայրերի բնակչությունը խիստ կրճատվում է, մի կողմից, Արևելյան Հայաստան գաղթելու, իսկ մյուս կողմից հայկական խոշորագույն գաղթօջախների, հատկապես Նոր Ջուղայի, անկման հետևանքով հարկադրված էին մեկնել Հնդկաստան, ուր ևս նպաստավոր պայմաններ չկային։

Հատորում ցույց է տրված, որ կապիտալիստական հարաբերությունների ձևավորման ժամանակաշրջանում նկատելի զարգացում ապրեցին Նոր Նախիջևանի, Աստրախանի, Ղրիմի, Մոսկվայի, Պետերբուրգի և Հյուսիսային Կովկասի հայ գաղթօջախները։ «Ռուսաստանի հայ գաղթօջախները,— իրավացիորեն

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. V, էջ 461։

[2] Տե՛ս նույն տեղը։

գրում են հեղինակները,— կարևոր դեր կատարեցին ինչպես արևելահայ հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում, այնպես էլ հայ-ռուսական հարաբերություններում»[1]։

XVIII դարում լեհահայերի կաթոլիկացման պատճառով, XIX դարի սկզբին, գրված է հատորում, վերացել էր լեհահայ գաղութը, իսկ մի քանի տասնամյակ անց դադարեց գոյություն ունենալ նաև հունգարահայ գաղութը, որը 1848—1849 թթ. հունգարական հեղափոխությանը մասնակցելու համար ռեակցիոն ուժերի կողմից հայերին խստորեն պատժելու արդյունք էր։ Դրան հակառակ ներքին զարգացում ապրեցին Բուլղարիայի և Դանուբյան իշխանությունների հայկական գաղթավայրերը։ Կապիտալիզմի վերընթաց զարգացման ժամանակաշրջանում հայկական գաղթօջախներ ստեղծվեցին Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում[2]։

Հեղինակները ճիշտ են նկատել, որ կապիտալիզմի առաջընթացն իր որոշակի կնիքը դրեց նաև հայ գաղթավայրերի ազգաբնակչության դասակարգային կազմի վրա։ «Եթե նախորդ դարերում,— գրում են նրանք,— գաղութների հայ բնակչությունը հիմնականում ներկայացված էր առևտրականներով ու արհեստավորներով, ապա այժմ նրանց կողքին սկսում են հանդես գալ նաև արդյունաբերողներ, գործարանային բանվորներ»[3]։ Վերջիններիս շարքերը լրացնում էին, մի կողմից, ունեզրկված արհեստավորները, իսկ, մյուս կողմից, հայրենիքից հեռացող պանդուխտների նորանոր քարավանները։

Հեղինակները հանգում են այն եզրակացության, որ հայկական գաղթավայրերի սոցիալ-տնտեսական կյանքում առաջացած վերոհիշյալ երևույթները, ինչպես նաև այդ երկրների ներքին կյանքում եղած խոշոր տեղաշարժերը չէին կարող բարերար ազդեցություն չունենալ հայկական գաղթավայրերի մշակութային կյանքի վրա։ «Հայկական գաղթավայրերում,— գրում են նրանք,— բացվեցին բազմաթիվ դպրոցներ, ստեղծվեցին տպարաններ, սկսեցին հրատարակվել պարբերականներ, հիմնվեցին թատերախմբեր և մշակութային այլ հիմնարկություններ, աշխուժացավ հասարակական-քաղաքական միտքը»[4]։

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. V, էջ 462։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 464։

[3] Նույն տեղը։

[4] Նույն տեղը, էջ 465։



«Հայ ժողովրդի պատմության» VI հատորում նշվում է, որ XIX դարի վերջին երեսնամյակում և XX դարի սկզբներին բուրժուական հարաբերությունների առաջընթացը, արդյունաբերական և ապա մոնոպոլիստական կապիտալիզմի տիրապետությունն իր դրոշմը դրեց տարբեր երկրների ու ժողովուրդների սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի զարգացման վրա։ Խոշոր արդյունաբերության հարվածների տակ, այնուհետև ասված է հատորում, քայքայվում և հետին պլան էր մղվում հայկական գաղթավայրերի տնտեսության կարևոր ճյուղը՝ արհեստագործությունը։ Սոցիալ-տնտեսական նոր կարգն ազդում է նաև հայկական գաղթավայրերի ինքնաբավ կյանքի, նրանց ինքնավարությունների վերացման վրա։

Ինչպես նշում են հեղինակները, այդ ժամանակաշրջանում խորանում ու սրվում են սոցիալ-դասակարգային հարաբերությունները, հայկական զանգվածները ներգրավվում են հյուրընկալող երկրների դասակարգային պայքարի, հեղափոխական շարժումների ոլորտի մեջ։ Վերոհիշյալ հանգամանքների, ինչպես նաև Թուրքիայում սկսված կոտորածների ու արևմտահայության արտագաղթի հետևանքով ստվարանում են մի շարք հայկական գաղթօջախներ և, ընդհակառակն, քայքայվում կամ թուլանում են մյուսները[1]։ Այսպես, հատորում ցույց է տրված, որ իրենց աշխույժ և լիաթոք կյանքով շարունակում էին գոյատևել Նոր Նախիջևանի, Մոսկվայի, Պետերբուրգի, Հյուսիսային Կովկասի, Ղրիմի և Ռուսաստանի այլ վայրերի հայկական գաղթօջախները։

Խոշոր տեղաշարժեր էին կատարվում նաև Եվրոպայի հայկական գաղթավայրերի կյանքում, գրում են հեղինակները։ Նոր ժամանակների պահանջներին համապատասխան աշխուժանում էր միջին դարերից սկզբնավորված Բուլղարիայի, Ռումինիայի հայկական գաղթավայրերի հասարակական-մշակութային կյանքը։ Շարունակում էին աճել Արևմտյան Եվրոպայի խոշոր կապիտալիստական երկրների հայկական գաղթօջախները՝ Ֆրանսիայում, Անգլիայում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում։ Ասիայի և Աֆրիկայի գաղթավայրերից շարունակում էին գոյատևել Հնդկաստանի, Բիրմայի, Ինդոնեզիայի, Եթովպիայի, Ավստրալիայի և այլ երկրների հայկական համայնքները, սակայն դրանք այնքան էլ նշանակալից դեր չէին կատարում։ Դրան հա-

[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 629։

կառակ լիաթոք կյանքով էին ապրում Իրանի, Սիրիայի, Լիբանանի և Եգիպտոսի հայկական գաղթավայրերը, որոնք ստվարանում էին գերազանցապես արևմտահայերի զանգվածային արտագաղթի հաշվին։

Վերջին քսանհինգամյակում գրվել և հրատարակվել են նաև առանձին մենագրություններ ու գիտական հոդվածներ, նվիրված այս կամ այն գաղթավայրի պատմությանը։ Ի դեպ, հայ գաղթավայրերի մասին առանձին հրատարակված մենագրությունների հեղինակներից շատերը «Հայ ժողովրդի պատմության» V—VI հատորներում զետեղված հայ գաղթավայրերի պատմության հեղինակներն են։ Անդրադառնանք դրանց ավելի մանրամասնորեն։

Հայ ժողովրդի պատմության մեջ ուրույն տեղ է գրավում Նոր Նախիջևանի գաղթօջախը, որի 80-ամյա պատմությանն է նվիրված Վ. Բարխուդարյանի մենագրության առաջին գիրքը[1]։ Նրանում ցույց է տրված, որ այդ գաղթօջախն ստեղծվել է ոչ թե որպես օտար զավթիչների հալածական քաղաքականությունից ազատվելու, կյանքի ծանր պայմաններից խուսափելու համար հայերի մի ապաստան, ինչպես մյուս գաղթօջախները, այլ որպես արդյունք ցարական Ռուսաստանի տնտեսական և քաղաքական շահախնդրությունների։ Հեղինակն իրավացիորեն գտնում է, որ ռուսական կայսրությունը, Դոնի ավազանում մեկուսի կյանքով, անխառն ազգաբնակչությամբ հաստատված հայությանը ինքնավարության, տնտեսական և իրավաքաղաքական առանձնաշնորհումներ արտոնելով, հեռավոր նպատակներ էր հետապնդում։ «Ղրիմի խանությունը թուլացնելու,— գրում է նա,— Նովոռոսիան բնակեցնելու, տնտեսապես յուրացնելու և թուրք-թաթարական արշավանքների դեմ քրիստոնյա պատվար ունենալու մտահոգությամբ, ցարական Ռուսաստանը կազմակերպեց Ղրիմի քրիստոնյա բնակչության գաղթը»[2]։

Անդրադառնալով Նոր Նախիջևանի գաղթօջախի վերաբերյալ նախախորհրդային և հետհոկտեմբերյան ժամանակաշրջանում հրատարակված աշխատությունների պատմաքննական վերլուծությանը, պատմաբանը ցույց է տվել ինչպես դրանց արժանիքները, այնպես էլ թերություններն ու սխալները։ Նա-

[1] Տե՛ս Վ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779—1861 թթ.), Եր., 1967։

[2] Նույն տեղը, էջ 120։



խախորհրդային տարիներին հրատարակված գրականության հիմնական թերությունը հեղինակը համարում է դրանցում գաղթօջախի սոցիալ-տնտեսական հարցերի անտեսումը, նշում է դրանց մի մասի ազգագրական բնույթը և այլն։ Խորհրդային ժամանակաշրջանում, ինչպես հայտնի է, մինչև վերջերս հայ գաղթավայրերի պատմությամբ չեն զբաղվել։ Միայն առանձին հեղինակներ թռուցիկ կերպով անդրադարձել են այս կամ այն հարցին։ Խոսելով ռուս հեղինակների, մասնավորապես մարքսիստ-պատմաբանների մասին, հեղինակը նշում է, որ Նոր Նախիջևանը որպես ինքնավարություն ունեցող մի գաղթօջախ, հիմնականում դուրս է մնացել նրանց տեսադաշտից։ «Մինչև հայ զանգվածի անցած ուղու քիչ թե շատ հանգամանալից ուսումնասիրությունը,— գրում է նա,— մեծապես կնպաստեր Դոնի ավազանի և առհասարակ Մերձազովյան շրջանի տնտեսական զարգացման մասին ամբողջական պատկերացում կազմելուն»[1]։

Եթե ռուս հեղինակների աշխատություններում քիչ է խոսվել հայկական գաղթօջախի մասին, իսկ հայ հեղինակները հիմնական ուշադրությունը դարձնելով գաղթօջախի կարևոր անցքերի վրա և դրանով կամա թե ակամա անտեսել են բնապատմական այն միջավայրը, տնտեսական այն անմիջական պայմանները, ուր ապրել ու աշխատել են Դոնի հայերը, ապա դրան հակառակ Վ. Բարխուդարյանը հիմնական գծերով ներկայացրել է Նոր Նախիջևանի հայ համայնքի համակողմանի պատմությունը՝ սերտորեն շաղկապելով այն տվյալ դարաշրջանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական առանցքային իրադարձությունների հետ։

Մենագրության մեջ շարադրված է ղրիմահայերի գաղթի և Նոր Նախիջևանի հիմնադրման պատմությունը, ցույց է տրված գաղթօջախի ներքին կյանքը, գյուղատնտեսության, արհեստագործության, արդյունաբերության և առևտրի զարգացման ընթացքը։

Աշխատության մեջ լայն տեղ է հատկացված ոչ միայն գաղթօջախի ներքին կյանքի, այլև հայ-ռուսական փոխհարաբերությունների հարցի լուսաբանմանը։ Ինչպես Նոր Նախիջևանը, այնպես էլ ռուսահայ մյուս գաղթօջախները աշխուժորեն արձագանքել ու մասնակցել են ռուսական հասարակական կյանքի

[1] Վ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 20։

բոլոր գլխավոր իրադարձություններին։ Այստեղ վեր է հանված գաղթօջախի մասնակցությունը 1812 թ. հայրենական և 1853—56 թթ. Ղրիմի պատերազմներին։ Կոնկրետ փաստերով լուսաբանված են նաև Նոր Նախիջևանի հաստատած կապերը մայր հայրենիքի և ռուսահայ մյուս գաղթօջախների հետ։

Անդրադառնալով գաղթավայրի սոցիալ-տնտեսական վիճակին, հասարակական-քաղաքական պայքարի հարցերին, Վ. Բարխուդարյանը քննության է առնում Աբրամով-Արղության հակամարտության հարցը և, հակառակ Ա. Կարինյանի ու Ս. Արեշյանի կարծիքների, գտնում է, որ այդ հակամարտությունը ոչ թե գաղթօջախի աշխատավոր ներքնախավերի վարագուրված պայքարն էր շահագործող դասերի դեմ, ինչպես գրել են վերոհիշյալ հեղինակները, այլ պարզապես սոցիալական սանդուղքի վերին աստիճանին գտնվող երկու աղաների առավելապես անձնական բնույթ ունեցող հակասություններն էին[1]։

1985 թ. հրատարակվեց Վ. Բարխուդարյանի մենագրության երկրորդ գիրքը[2], ուր շարադրված է գաղթօջախի պատմությունը հետռեֆորմյան ժամանակաշրջանում՝ մինչև 1917 թվականը։ Այստեղ էլ հեղինակը հանգամանորեն լուսաբանում է գաղթօջախի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը։

Փաստական հարուստ նյութի հիման վրա ցույց է տրվում, որ եթե նախառեֆորմյան ժամանակաշրջանում ինքնավար գաղթօջախը օգտվում էր կայսերական առանձնաշնորհումներից, քաղաքը շրջակա հայկական գյուղերի հետ կազմում էր վարչատնտեսական մի ամբողջություն, պահպանում էր հայկական բարքերն ու սովորությունները, ազգային նկարագիրը և այլն, ապա 1861 թ. գյուղացիական ռեֆորմից հետո դրությունը շեշտակի փոխվեց։ 1860-ական թթ. ընթացքում, գրում է հեղինակը, նկատելիորեն սահմանափակվեցին գաղթօջախի առանձնաշնորհումները, իսկ 1870 թ. վերացվեց հայկական մագիստրատը, հետևաբար և Նոր Նախիջևանի ինքնավարությունը։ Սկսվում է գաղթօջախի պատմության նոր փուլը։

Աշխատության մեջ ցույց է տրվում, որ հետռեֆորմյան շրջանում կապիտալիստական հարաբերությունների զարգացումն իր դրոշմն է դնում ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ հարավային Ռուսաստանի, այդ թվում՝ Նոր Նախիջևանի սոցիալ-տընտեսական և հասարակական-քաղաքական կյանքի վրա։ Հեղինակը ճիշտ է նկատել, որ թեպետ ռեֆորմից հետո կապիտալիզմը զարգանում էր ամբողջ կայսրությունում, բայց հարավային երկրամասը, այդ թվում Նոր Նախիջևանը, առավելապես ագրարային բնույթ ուներ։ Այստեղ լուսաբանվում է նաև գաղթօջախում գյուղատնտեսության, արդյունաբերության և առևտրի զարգացման հարցը, բացահայտվում սոցիալական շերտավորման պրոցեսը։

Անդրադառնալով Նոր Նախիջևանի հասարակական կյանքին, Վ. Բարխուդարյանը ընդգծում է այն հայտնի իրողությունը, որ հայկական այդ համայնքը հայ ժողովրդին տվել է հասարակական-քաղաքական և մշակույթի գործիչների մի ամբողջ համաստեղություն։ Նրանցից շատերը ոչ միայն ճանաչված դեմքեր են եղել հայ իրականության մեջ, այլև ունեցել են համառուսաստանյան ճանաչում։

Աշխատության մեջ վեր է հանված հայկական գաղթօջախի դերը հայ-ռուսական կապերի ամրապնդման գործում։ Գտնվելով Ռուսական կայսրության մեջ և կազմելով նրա անբաժանելի մասնիկը, Դոնի հայկական համայնքը, գրում է պատմաբանը, մշտապես արձագանքել և իր համեստ հնարավորությունների սահմաններում մասնակցել է ռուսական հասարակական-քաղաքական կյանքի գլխավոր իրադարձություններին։ Դա առաջին հերթին դրսևորվել է երկրին սպառնացող արտաքին վտանգների՝ պատերազմների ժամանակ։ Ցույց է տրված նաև Դոնի հայ գաղթօջախի մասնակցությունը՝ թուրքական լծից արևմտահայության ազատագրության, հայ գաղթականությանը օգնություն ցույց տալու գործում։

Հեղինակի ուշադրությունից չի վրիպել նարոդնիկական շարժման ազդեցությունը հայ գաղթօջախի հասարակական կյանքի վրա։ Սակայն, նշում է նա, եթե արևելահայ նարոդնիկական խմբակներն ու նարոդնիկական գաղափարներով տարված առաջադեմ երիտասարդությունը սոցիալական խնդիրներին զուգընթաց գրեթե ամենուրեք դնում էին նաև ազգային ազատագրության խնդիրներ, ապա այս գաղթօջախում նարոդնիկական կազմակերպությունները ազգային խնդիրներ չէին շոշա-

---

[1] Տե՛ս Վ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 361։

[2] Տե՛ս Վ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861—1917 թթ.), Եր., 1985։

փում և մնում են փաստորեն միայն սոցիալական պայքարի ոլորտում։

Այդ երևույթի հիմնական պատճառը Դոնի երիտասարդության վրա համառուսաստանյան նարոդնիկական շարժման ղեկավարների գաղափարական և քաղաքական ազդեցությունն էր և Անդրկովկասի Թուրքիայից համեմատաբար հեռու լինելը[1]։ Աշխատության մեջ լայն տեղ է տրված նաև գաղթօջախի պատմությանը պրոլետարական և հեղափոխական շարժումների ժամանակաշրջանում՝ ընդհուպ մինչև 1917 թվականը։

Ղրիմի հայկական գաղթօջախի պատմությանն է նվիրված պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Վ. Միքայելյանի երկհատորանոց մենագրությունը[2]։ Ժամանակագրական տեսակետից մենագրության առաջին հատորն ընդգրկում է գաղթավայրի պատմությունը նրա սկզբնավորումից մինչև հայերի վերաբնակեցումը Ղրիմից և գաղթավայրի վերացումը, այսինքն՝ մինչև 1778 թվականը։ Պատմաբանի կարծիքով, Տավրիկիայում (Ղրիմի թերակղզում) դարեր շարունակ գոյատևած հայ գաղութը եղել է գաղթական հայության ամենախոշոր բեկորներից մեկը։ Սվելին, «Տավրիկիան,— գրում է նա,— եղել է այն կամրջակը, որի վրայով միջին դարերում անցել են հայ գաղթականական շատ հոսանքներ, սկիզբ դնելով կամ թե լրացնելով Արևելյան Եվրոպայի և նույնիսկ Կոնստանդնուպոլսի հայ գաղթավայրերը»[3]։

Մենագրության մեջ տրված է ղրիմահայ գաղութի վերաբերյալ եղած գրականության և աղբյուրների պատմաքննական վերլուծությունը։ Նշելով Ք. Քուշնարյանի, Մ. Բժշկյանի, Հ. Տեր-Աբրահամյանի, Ա. Ալպոյաճյանի և ուրիշների, ինչպես նաև երկու տասնյակի հասնող ռուս և օտարազգի հեղինակների աշխատությունները, որոնց մեջ ավել կամ պակաս չափով շարադրվել է ղրիմահայ գաղութի պատմությունը, Վ. Միքայելյանն, այնուամենայնիվ, դրանք չի համարում գաղութի ամբողջական պատմություն թե՛ իրենց մեթոդաբանությամբ և թե՛ փաստական նյութի ընդգրկումով։

[1] Տե՛ս Վ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 229—230։

[2] Տե՛ս Վ. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, հ. 1, Եր., 1964, հ. II, 1970։ Աշխատությունը մեկ գրքով լույս է տեսել նաև ռուսերեն։

[3] Նույն տեղը, էջ 5—6։



Ինչ խոսք, Վ. Միքայելյանի հետ կարելի է համաձայնվել։ Պարզ է, որ վերոհիշյալ հեղինակներից ոչ մեկն իր առջև խնդիր չի դրել շարադրելու ղրիմահայ գաղթավայրի ամբողջական պատմությունը, մի բան, որին ձեռնամուխ է եղել ինքը, սակայն դժվար է համաձայնվել նրա այն մտքին, թե «Ղրիմի հայկական գաղութի պատմությունը տակավին չակոսված մի խոպան է»[1]։

Ղրիմահայ գաղթավայրի նոր պատմությունը շարադրվել է մենագրության երկրորդ հատորում։ Քանի որ 1778 թ. արտագաղթին հաջորդած մեկ-երկու տասնամյակներում գաղթավայրը փաստորեն դադարել էր գոյություն ունենալուց, ուստի գրքի երկրորդ հատորն սկսվում է գաղթավայրի վերականգնման հարցի լուսաբանությամբ։ Այստեղ բացահայտվում են սոցիալ-տնտեսական այն շարժառիթները, որոնք հայերին ստիպում էին թողնել Նոր Նախիջևանը, ուր նրանք գնացել էին ոչ իրենց ցանկությամբ, և անցել Ղրիմ։ Սակայն, չնայած Նոր Նախիջևանից Ղրիմ հայերի կատարած վերաբնակեցմանը, գրում է հեղինակը, այնուհանդերձ, XIX—XX դարերում ղրիմահայության մեջ գերակշռողը ոչ թե նրանք, այլ Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի տարբեր քաղաքներից և շրջաններից տարբեր ժամանակներում զանգվածաբար կամ առանձին ընտանիքներով Տավրիկիա գաղթած հայերն էին[2]։ Հայերը, այնուհետև գրում է նա, Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի շրջաններից հեռանում էին ինչպես տնտեսական ու քաղաքական հետևհետև սաստկացող ծանր պայմանների ու հետապնդումների, այնպես էլ Ղրիմի թերակղզին առևտրի, արհեստագործության, այգեգործության և շերամապահության զարգացման համար նպաստավոր դիրք ունենալու պատճառով։ Ընդ որում Թուրքիայից Ղրիմ հայերի տեղափոխությունները չավարտվեցին XVIII դարի վերջին 2—3 տասնամյակներով, այլ դրանք պարբերական բնույթ ընդունեցին ամբողջ XIX դարում և հաջորդ հարյուրամյակի առաջին տասնամյակում, ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմը։

[1] Վ. Միքայելյան, նշվ. աշխ., հ. I, էջ 6։ Նկատենք, որ գրքի առաջին հատորի վերջում զետեղված աղբյուրների և գրականության ցանկում ցույց է տրվել 27 հայերեն, 65 ռուսերեն և 6 օտար լեզվով տպագիր աղբյուր, 54 անուն հայերեն, 164 ռուսերեն և 9 օտար լեզվով գրականություն, ընդամենը 325 անուն։ Էլ ի՞նչ խոպանի մասին է խոսքը։

[2] Տե՛ս նույն տեղը, հ. II, էջ 46։

Մենագրության մեջ մեծ տեղ է հատկացված ղրիմահայերի տնտեսական գործունեության լուսաբանմանը։ Այստեղ ցույց է տրված, որ ղրիմահայերը անցյալ դարի վերջերին և XX դարի սկզբներին, կապված լինելով ռուսական ներքին շուկայի և Արևելքի երկրների, հատկապես Թուրքիայի առևտրաարհեստագործական միջավայրի հետ, անկախ թերակղզու ազգաբնակչության մեջ ունեցած իրենց ոչ մեծ քանակից, զգալի մասնակցություն են ցուցաբերել Տավրիկյան նահանգի ներքին և արտաքին առևտրին։ Ղրիմահայոց տնտեսական կյանքում կարևոր տեղ են գրավել նաև արհեստագործությունն ու գյուղատնտեսական զբաղմունքները, գլխավորապես այգեգործությունը։

Նշելով, որ Ղրիմում գոյություն ունեցող խոշոր հողատերերի բավականին բազմաքանակ մի խավ, որի ներկայացուցիչներն իրենց նախնիների տիրույթների պապենական ժառանգորդները չէին (ինչպես սովորաբար լինում էր), Վ. Միքայելյանը գտնում է, որ Ղրիմում հայ խոշոր հողատիրությունը առաջացել է շնորհիվ առևտրական կապիտալի և գոյություն ուներ ոչ որպես ժառանգական ֆեոդալական ինստիտուտ[1]։

Անդրադառնալով ղրիմահայերի հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանմանը, նա նշում է, որ նրանց մտահոգում էր ոչ միայն «տեղական», այլև ամբողջ հայությանը վերաբերող քաղաքական, ազգային, մշակութային ու կրոնական հարցերը, նաև համառուսական կյանքի կարևորագույն իրադարձությունները։

Աշխատության մեջ լուսաբանված է Գաբրիել վարդապետ Այվազովսկու գործունեությունը։ Ցույց է տրված նրա դրական դերը կաթոլիկության դեմ մղվող պայքարում, Խալիպյան ուսումնարանի և հայ օրիորդների համար դպրոցների հիմնադրման, ազգային միաբանություն ստեղծելու նպատակով Խալիպյան ուսումնարանի դռները նաև կաթոլիկ ու բողոքական հայ եկեղեցիների առաջ բացելու, եկեղեցական գումարների շուրջ տարիների պատմություն ունեցող վեճերի կարգավորման, Նախիջևան-Բեսարաբիայի հայ-լուսավորչական թեմի կենտրոնը Քիշնևից Թեոդոսիա փոխադրելու և այլ գործերում։

Ինչպես հայտնի է, խորհրդահայ պատմագրության մեջ Գ. Այվազովսկու գործունեությանը հիմնականում բացասական գնահատական է տրվել։ Այլ դիրքերից է մոտեցել հարցին Վ. Միքայելյանը։ Նա փորձել է տալ նրա գործունեության գնահատականը։ Խոսքը չի վերաբերում մի հոգևորական գործչի հասարակական-քաղաքական հայացքներին, գրում է նա, որը սերտորեն կապված էր հայ հարուստ վերնախավին, ցարական արքունիքի և բարձր պաշտոնեության հետ։ Վերջիններիս օգնության ու հայրենի եկեղեցու շուրջը համախմբելու հետ էր նա առնչում իր ազգային-կրթական նպատակների իրագործումը, հայ մշակույթի զարգացումը[1]։

Վ. Միքայելյանը Գ. Այվազովսկու գնահատականի հարցում ելնում է պատմագիտական-մեթոդաբանական այն ճիշտ դրույթից, որ չի կարելի անցյալի այս կամ այն գործչին ներկայացնել իր ապրած ժամանակից դուրս պահանջներ, կամ թե նրանց համար չափանիշ ընդունել առաջավոր մտածողներին։ «Պատմաբանի պարտքն է,— իրավացիորեն գրում է նա,— լուսաբանել մեր անցյալի պատմությունն իր ամբողջության մեջ, գործիչներին գնահատել նրանց խաղացած դերով՝ դրական, թե բացասական, միշտ մոռացության չտալով դասակարգային մոտեցումը և այն հանգամանքը, որ նրանք եղել են իրենց դասակարգի և էպոխայի ծնունդը»[2]։ Վ. Միքայելյանի կարծիքով, որի հետ լիապես համաձայն ենք, անհատի գործունեության բացասական կողմերի նշումը չպետք է անտեսի նրա կատարած դրական գործը և ընդհակառակը։ Բոլոր պարագաներում չպիտի զեկավարվել միայն ժխտելու կամ դրվատելու սկզբունքով։ Հենվելով մի քանի ստույգ վավերագրերի վրա, պատմաբանը գտնում է, որ Մ. Նալբանդյանի ձերբակալումը չպետք է առնչել Գ. Այվազովսկու զեկուցագրերի հետ, որ պետք է նրա վրայից վերցնել «մատնիչ» պիտակը։ Սակայն դա, այնուհետև գրում է նա, «չի կարող վերացնել հետադիմական այն դիրքավորումը, որ բռնել էր թեմի առաջնորդ Գ. Այվազովսկին Մ. Նալբանդյանի և «Հյուսիսափայլի» հանդեպ»[3]։

Մենագրության մեջ շեշտվում է, որ ռուսական առաջին հեղափոխությանը հաջորդած տարիներին ղրիմահայության մեջ միայն հնչակյան կուսակցությունն էր ծավալել իր գործունեությունը, իսկ դաշնակցության ներկայացուցիչներն այդ ժամանակ Ղրիմում ոչինչ չկարողացան անել։

[1] Տե՛ս Վ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 92—93։



[1] Տե՛ս Վ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 200—201։

[2] Նույն տեղը, էջ 202։

[3] Նույն տեղը, էջ 230։

Ուշագրավ են գրքում բերված այն փաստերը, որոնք վկայում են Ղրիմի 1853—1856 թթ. և 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմներին ղրիմահայության մասնակցության մասին, որը, ինչ խոսք, նպաստում էր ռուսական զենքի հաղթանակին։ Մասնավորապես նշվում է հայազգի ծովակալ Ղազար Արծաթագործյանի (Լազար Սերեբրյակով) մատուցած ծառայությունների մասին։

Վ. Միքայելյանը շնորհակալ գործ է կատարել առանձին գրքով շարադրելով XIX դարի առաջին կեսի ռուսական ռազմածովային նավատորմի այդ նշանավոր դեմքի՝ հայ առաջին ծովակալի կյանքի ու գործունեության պատմությունը[1]։ Այն գրված է հայ-ռուսական հարաբերությունների լայն ֆոնի վրա։

Հայ-բուլղարական պատմական կապերին և XIX դարի երկրորդ կեսի բուլղարահայ գաղթավայրի պատմությանն է նվիրված պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Հովնանյանի մենագրությունը[2]։

Անդրադառնալով ավելի հեռավոր պատմական անցյալին, պատմաբանը մի շարք տվյալների հիման վրա գտնում է, որ հայ-բուլղարական կապերը ծնվել են վաղնջական ժամանակներից և ունեն հարուստ պատմություն։ Նրա կարծիքով, դեռևս մեր թվականության երկրորդ դարում բուլղար ժողովրդի նախնիները, մտնելով պատմական ասպարեզ և բնակություն հաստատելով մերձազովյան տափաստանների տարածքներում, սերտ, անմիջական կապերի մեջ են մտնում հայ ժողովրդի հետ[3]։ Փաստերը ցույց են տալիս, գրում է նա, որ հայերը V դարից սկսած զանգվածաբար բնակություն են հաստատել Բալկանյան թերակղզում և հիմնել իրենց բազմամարդ գաղթավայրը[4]։

Անցնելով իր ուսումնասիրության հիմնական ժամանակաշրջանի՝ XIX դարի երկրորդ կեսի վերլուծմանը, Ս. Հովնանյանը լուսաբանել է բուլղարահայ գաղթավայրի պատմությունը՝ այն սերտորեն առնչելով Բուլղարիայի պատմության հետ։ Կոնկրետ

[1] Տե՛ս Վ. Միքայելյան, Ծովակալ Լ. Մ Սերեբրյակով (Ղազար Մարկոսի Արծաթագործյան), Եր., 1979։

[2] Տե՛ս Овнанян С. Армяно-болгарские исторические связи и армянские колонии в Болгарии во второй половине XIX века, Е., 1968.

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 17։

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 40։



փաստերով նա ցույց է տվել հայերի վերաբերմունքը բուլղար ժողովրդի ազգային-քաղաքական զարթոնքի նկատմամբ։ Որպես դրա առհավատչյա նա բերում է այն փաստը, որ 1840—70-ական թվականներին Կ. Պոլսում բուլղարական գրականություն հրատարակող 13 տպարաններից 7-ը պատկանում էր հայերին։ Ավելին, օտարալեզու 214 բուլղարական գրքերից 202-ը տպագրվել է հայկական տպարաններում։ Վերոհիշյալ տվյալները վկայում են, գրում է հեղինակը, որ հրատարակիչները նշանակալից դեր են խաղացել բուլղարական գրականության հրատարակման գործում՝ բուլղար ժողովրդի համար ծանր տարիներին օժանդակելով նրանց ազգային լուսավորության գործին։

Աշխատությունում լայնորեն է վեր հանված հայերի գործակցությունն ու ակտիվ մասնակցությունը թուրքական լծի դեմ բուլղար ժողովրդի մղած պայքարում։ Ցույց է տրված, որ XIX դարի կեսերի հայ-բուլղարական բարեկամության դարբնոց էր դարձել Արևմտյան Հայաստանի Դիարբեքիր քաղաքը, ուր աքսորված էին ավելի քան 200 բուլղար հեղափոխականներ։

Բուլղար և հայ ժողովուրդների մարտական զինակցությունը վառ կերպով արտացոլվել է 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ։ Թեև ազատագրվելով թուրքական լծից բուլղար և հայ ժողովուրդների ճակատագրերը բաժանվեցին, նշում է պատմաբանը, և բուլղար ժողովուրդը ձեռնամուխ եղավ ազգային պետականության վերստեղծմանը, իսկ հայ ժողովուրդը մնաց ցարական Ռուսաստանի և սուլթանական Թուրքիայի միջև անդամահատված, բայց այդ երկու ժողովուրդների միջև շարունակվեց բարեկամությունն ու փոխօգնությունը։ Չէ՞ որ Բուլղարիայի ազատագրումը թուրքական լծից նաև բուլղարահայերի ազատագրում էր, որը Նպաստեց հայկական գաղթօջախի սոցիալ-քաղաքական առաջընթացին։

Շարադրելով XIX դարի 80-ական թվականների բուլղարահայ գաղթավայրի պատմությունը, Ս. Հովնանյանը ցույց է տվել նրա դերը Բուլղարիայի տնտեսական կյանքում, առանձնապես առևտրի, արհեստների և երկրագործության բնագավառներում։ Անդրադառնալով հայկական գաղթավայրի ներքին կյանքի հարցերին, Ս. Հովնանյանը վեր է հանել մահմեդական ֆանատիզմի ոտնձգություններից ազատագրված գրիգոր-լուսավորչական եկեղեցու խաղացած դերը Բուլղարիայի հայկական համայնքի

հոգևոր կյանքում։ Սակայն, գրում է նա, թուրքական լծից երկրի ազատագրումը և դրա հետ կապված հայերի նկատմամբ ազգային-կրոնական հալածանքների դադարեցումը հանգեցրեց նրան, որ հայկական եկեղեցին Բուլղարիայում սկսեց աստիճանաբար կորցնել այն նշանակությունը, որ դարերի ընթացքում խաղացել էր նա հայ գաղթօջախների ազգային նկարագիրը պահելու գործում[1]։

Թուրքական լծից Բուլղարիայի ազատագրումը զգալիորեն նպաստեց հայկական գաղթավայրի կուլտուր-լուսավորական կյանքի՝ առանձնապես ազգային դպրոցների գործունեության աշխուժացմանը։ Մենագրության մեջ բացահայտված է այն կարևոր դերը, որ խաղացել են ժողովրդական դպրոցները հայկական գաղթավայրի ազգային և կուլտուրական կյանքում։ Դրա հետ մեկտեղ ցույց է տրված կուլտուր-լուսավորական ընկերությունների, հայկական գրադարան-ընթերցարանների ստեղծումը գաղթօջախում։ Լայնորեն լուսաբանված է գաղթօջախի ազգային-դեմոկրատական շարժման վերելքը 1882 թ. Վառնայում կազմակերպված «Հայրենասիրական ընկերության» և նրա տպագիր «Իրավունք» թերթի գործունեությունը։ Ցույց է տրված նաև Մարսելի «Արմենիա» թերթի նշանակալից դերը գաղթավայրի ազգային-դեմոկրատական շարժման գործում, ինչպես նաև բուլղարահայերի դերը Մ. Փորթուգալյանի գլխավորած Եվրոպայի հայ հայրենասերների միության ձևավորման համար մղված պայքարում։ Հեղինակի ուշադրությունից չի վրիպել նաև բուլղարահայերի հասարակական-քաղաքական կյանքի վրա քաղաքական կուսակցությունների, մասնավորապես արմենականների ու հնչակյանների ազդեցությունը։

Ս. Հովնանյանի մենագրության մեջ ուշագրավ փաստեր կան 1890-ական թվականների կեսերի հայկական ջարդերի բուլղարական արձագանքների մասին։ Հայերի պաշտպանության համար ծավալվող շարժումը գլխավորում էր բուլղարական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, որն ստեղծվել էր 1891 թ. Դ. Բլագոևի գլխավորությամբ։ Նուտով այդ շարժման մեջ են ներգրավվում բուլղարական հասարակայնության լայն շրջանները։ Հայ ժողովրդի ողբերգությունը, գրում է հեղինակը, արձագանք գտավ նաև բուլղար առաջադեմ բանաստեղծների

[1] Տե՛ս Овнанян С., նշվ. աշխ., էջ 165։



ստեղծագործությունների մեջ։ Ուշագրավ է հատկապես Պ. Յավորովի հայտնի «Հայերը» բանաստեղծությունը։

Թուրքական կառավարության վարած հայահալած ու հայաջինջ քաղաքականության հետևանքով հայ ժողովրդի մի զգալի մասը նորից հարկադրված է լինում թողնել մայր հայրենիքը և բռնել գաղթի ճանապարհը։ 1894—1896 թթ. ջարդերի ժամանակաշրջանում արտագաղթում է ոչ լրիվ տվյալներով ավելի քան 50 հազար հայկական ընտանիք, որից 20 հազարը՝ Բուլղարիա։ Աշխատությունում բերված փաստերը վկայում են բուլղարահայերի, մասնավորապես նոր գաղթածների, ծանր դրության մասին։ Բարեգործության անվան տակ այստեղ իրենց սև գործն էին անում արևմտյան պետությունների կողմից ուղարկված մեծ թվով միսիոներներ։

Աշխատության մեջ բացահայտված է նաև այն իրողությունը, որ եթե Բուլղարիայի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը վճռականորեն հանդես էր գալիս հայ գաղթականության պաշտպանության դիրքերում, ապա բուրժուական կուսակցությունները, երկրի ծանր դրությունը բացատրելով հայ գաղթականների ներհոսքով, փորձում էին ազգային թշնամանք հրահրել, օգտագործելով ազգայնական մամուլն ու իշխանության մարմինները, այդ թվում և պառլամենտը։

Հայ-բուլղարական բարեկամության պատմության ուշագրավ էջեր է լուսաբանված Զ. Ղասաբյանի գրքույկում[1]։ Նրանում վեր են հանված հայ և բուլղար ժողովուրդների պատմական դարավոր կապերը։ Հեղինակը առանձնապես կանգ է առել ազգային-ազատագրական շարժումների ժամանակաշրջանում երկու ժողովուրդների համատեղ պայքարի հարցի վրա ընդդեմ օսմանյան դարավոր լծի։ Գրքույկում լայն տեղ է տրված հետհոկտեմբերյան ժամանակաշրջանում հայ-բուլղարական բարեկամության, բուլղարահայ գաղթօջախի պատմության հետ կապված հարցերին։

Շարունակելով իր արդյունավետ աշխատանքը և գիտական շրջանառության մեջ դնելով բազմաթիվ նոր, արժեքավոր փաստեր, Զ. Ղասաբյանը լույս ընծայեց բուլղարահայ համայնքի պատմությանը նվիրված ավելի ամբողջական և ուշագրավ մի

[1] Տե՛ս Զ. Ղասաբյան, Հայ-բուլղարական բարեկամության պատմությունից, Եր., 1978։

աշխատություն[1]։ Այստեղ հանգամանորեն լուսաբանված է բուլղարահայ համայնքի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը։

Աշխատության մեջ բացահայտված է բուլղարահայերի ակտիվ մասնակցությունը բուլղար ժողովրդի սոցիալական պայքարին, Բուլղարիայում ֆաշիզմի և կապիտալիզմի տապալման, սոցիալիստական կարգերի հաստատման համար մղված պայքարին։ Հեղինակի ուշադրությունից չի վրիպել լուսաբանելու բուլղարահայ համայնքի կապերը մայր հայրենիքի հետ, ինչպես նաև անդրադառնալու բուլղարահայերի ներգաղթին Խորհրդային Հայաստան։

Գրիգորիուպոլիսի հայկական գաղթավայրի պատմությանն է նվիրված պատմական գիտությունների թեկնածու Ժ. Անանյանի մենագրությունը[2]։ Այն գրված է արխիվային վավերագրերի հիման վրա, որոնց զգալի մասը նոր է մտնում գիտական շրջանառության մեջ։ Ուշագրավ է հեղինակի այն միտքը, որ Գրիգորիուպոլիսի պատմության ուսումնասիրությունը կարևորություն ունի ոչ միայն հայ-ռուսական, այլև հայ-ուկրաինական, հայ-մոլդավական կապերի ստեղծման տեսակետից։ Ուստի, գրում է նա, Գրիգորիուպոլիսի հայկական գաղութի պատմությունը կարևոր է ոչ միայն հայագիտության, այլև ռուսական, ուկրաինական և մոլդավական պատմագրության համար։

Աշխատության մեջ ցույց են տրվում գաղթավայրի հիմնադրման նախադրյալները, նրա սոցիալական ու իրավական հարաբերությունները, տնտեսական ու հասարակական կյանքը։ Այն գրված է ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Հայաստանի պատմության հետ սերտորեն առնչված, մանավանդ վեր է հանված գաղթօջախի հայերի մասնակցությունը XIX դարի առաջին երեք տասնամյակներում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին։ Հետաքրքիր է, որ ինչպես Գրիգորիուպոլիսի, այնպես էլ Ռուսաստանի մյուս գաղթօջախների բնակիչները, Ռուսաստանը համարելով իրենց երկրորդ հայրենիքը, ակտիվորեն մասնակցել են 1812 թ. հայրենական և ռուս-պարսկական ու ռուս-թուրքական պատերազմներին։ Միևնույն ժամանակ հեղի-

[1] Տե՛ս Զ. Ղասարյան, Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության (1896—1970)։ Եր., 1986։

[2] Տե՛ս Ананян Ж., Армянская колония Григориполь, Е., 1969:



նակը ցույց է տվել, որ ինչպես Ռուսաստանի մյուս հայկական գաղթօջախների, այնպես և Գրիգորիուպոլիսի հայերը հիասթափվեցին 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո ցարական կառավարությունից այն պատճառով, որ չստեղծվեց նրանց փափագած անկախ հայկական պետություն[1]։

Ժ. Անանյանի կարծիքով՝ Գրիգորիուպոլիսի գաղթօջախի պատմական զարգացման հիմնական փուլերը համընկել են Ռուսաստանի մյուս հայկական գաղթօջախների զարգացման փուլերին, միայն այն տարբերությամբ, որ Գրիգորիուպոլիսի զարգացումն ընթանում էր ավելի արագ և այդ այն պատճառով, որ հայկական գաղթավայրերի նկատմամբ ցարիզմի վարած ներքին քաղաքականությունը այստեղ իրեն ավելի էր զգացնել տալիս։ Սակայն, գրում է նա, այս գաղթօջախը փաստորեն տնտեսական և քաղաքական դեր է խաղացել մինչև XIX դարի առաջին կեսը, որից հետո թուլացել է նրա քաղաքական նշանակությունը, իսկ 1860—1870-ական թվականներից վերացել են նաև հայկական ինքնավարության մարմինների վերջին մնացորդները։

Հյուսիսային Կովկասի հայկական գաղթօջախներից մեկի՝ Արմավիրի պատմությանն է նվիրված պատմական գիտությունների թեկնածու Լ. Պողոսյանի մենագրությունը[2]։ Հյուսիսային Կովկասի պատմության ընդհանուր ֆոնի վրա նրանում լուսաբանված են գաղթօջախի ստեղծման քաղաքական, սոցիալ-տնտեսական նախադրյալները, նրա տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը։ Ցույց է տրված հատկապես Արմավիրի հայ գաղթօջախի մասնակցությունը Ռուսաստանի հեղափոխական շարժումներին։ Փաստական նյութերի հիման վրա քննվում են գաղթօջախի կապերը Հայաստանի հետ։

Եգիպտահայ գաղթավայրի պատմությունը շարադրված է պատմական գիտությունների թեկնածու Հ. Թոփուզյանի մենագրության մեջ[3]։ Ժամանակագրական առումով այն ընդգրկում է եգիպտահայ գաղթավայրի բազմադարյան պատմության ուշա-

[1] Տե՛ս Ананян Ж., նշվ. աշխ., էջ 266։

[2] Տե՛ս Погосян Л., Армянская колония Армавир, Е., 1981:

[3] Տե՛ս Հ. Թոփուզյան, Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805—1952)։ Եր., 1978։

գրավ հատվածը՝ XIX դարի սկզբներից, այսինքն՝ Եգիպտոսի նոր պատմությունից, մինչև 1952 թվականի հակաիմպերիալիստական-հակաֆեոդալական հեղափոխությունը։ Աշխատությունում քննվում են եգիպտահայ գաղթավայրի պատմության հիմնական հարցերը՝ գաղթավայրի ներքին կյանքի զարգացումը, սոցիալ-տնտեսական և քաղաքական դրությունը, հայ-եգիպտական հարաբերությունները, եգիպտահայ քաղաքական կազմակերպությունները, նրանց դերը Հայկական հարցում և եգիպտահայ մշակույթը։ Այն գրված է պարբերական մամուլի տվյալների, զգալի քանակությամբ արխիվային, այդ թվում մի շարք նոր հայտնաբերված վավերագրերի, հայ և օտար լեզուներով հրատարակված գրականության խորազնին ուսումնասիրության հիման վրա։ Միաժամանակ քննադատական մոտեցում է հանդես բերվել օգտագործված աղբյուրների ու գրականության նկատմամբ։ Օրինակ, Հ. Թոփուզյանը առարկում է մի շարք հեղինակների, այդ թվում բազմավաստակ պատմաբան Ա. Ալպոյաճյանին, որոնք XIX դարի առաջին կեսի եգիպտահայ գաղութի վերելքը բացատրում են Մոհամեդ Ալիի՝ հայերի նկատմամբ ունեցած սիրալիր վերաբերմունքով։ Նրա կարծիքով, դրա համար կային ավելի լուրջ պատճառներ։ «Եգիպտահայ գաղութի վերելքը,— գրում է նա,— հիմնականում արդյունք էր այն բարեփոխումների, որ առաջացան Մոհամեդ Ալիի (1805—1849) իրականացրած վարչական և տնտեսական ռեֆորմներով»[1]։ Հ. Թոփուզյանը ցույց է տվել, որ եգիպտահայերը չէին ապրում ինքնամփոփ, մեկուսացված համայնքի կյանքով։ Մասնակցելով Եգիպտոսի սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքի զարգացմանը, նրանք կերտել են նաև ուշագրավ արժեքներ։

Եգիպտահայ գաղթավայրի պատմությունը սերտորեն կապելով Եգիպտոսի բուն պատմության հետ, Հ. Թոփուզյանը ցույց է տվել, թե ինչպես գաղութահայության վիճակը ամեն անգամ վատանում էր, երբ օտարերկրյա պետությունները ուժեղացնում էին իրենց միջամտությունը Եգիպտոսի ներքին գործերին։ Աշխատության մեջ վեր է հանվել հայերի մասնակցությունը Եգիպտոսի անկախության համար մղված պայքարին, որը նոր թափ ստացավ անցյալ դարի սկզբներին։ XIX դարի վերջին և XX դարի սկզբներին, գրում է նա, երբ վերսկսվում է հայ

[1] Հ. Թոփուզյան, նշվ. աշխ., էջ 14։



գաղթականների հոսքը Եգիպտոս, էլ ավելի է մեծանում նրանց մասնակցությունը երկրի տնտեսական կյանքում։

Առանձին քննության առնելով այն հարցը, թե եգիպտահայերն ի՞նչ մասնակցություն են ունեցել Հայկական հարցի լուծման համար մղված համազգային պայքարին, հեղինակը գտնում է, որ եգիպտահայ հասարակայնության տարբեր խավեր պահանջում էին Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի համաձայն բարելավումներ կատարել Արևմտյան Հայաստանում, սակայն տարբեր ձևով էին պատկերացնում դրա կենսագործումը։ Կղերապահպանողական վերնախավը, գրում է նա, հետևելով Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի քաղաքականությանը, թուրքական կառավարությունից էր սպասում արևմտահայերի վիճակի բարելավումը։ Բուրժուական լիբերալները, արտահայտելով եվրոպական կապիտալի հետ կապված գաղութահայ առևտրական բուրժուազիայի շահերը, հայ ժողովրդի արևմտահայ հատվածի դրության բարելավումը ակնկալում էին Եվրոպայից, հատկապես Անգլիայից։ Ազգային դեմոկրատական գաղափարներով տոգորված խավերը, որոնց առավել համարձակ ներկայացուցիչները համախմբված էին «Հառաջադիմասեր» ընկերության մեջ, հայ ժողովրդի ազատությունը կապում էին Ռուսաստանի հետ[1]։

Աշխատության մեջ շոշափվում է նաև XX դարի սկզբներից եգիպտահայ գաղթավայրում գործող հնչակյան, սահմանադրական ռամկավար և դաշնակցություն կուսակցությունների գործունեությունը։

Շարունակելով արաբական արևելքի երկրների հայ գաղթօջախների պատմության ուսումնասիրության ուղղությամբ իր շնորհակալ աշխատանքը, Հ. Թոփուզյանը հրապարակի վրա դրեց ծանրակշիռ մի նոր աշխատություն[2]։ Այստեղ էլ հեղինակն օգտագործել և գիտական շրջանառության մեջ է դրել տարբեր լեզուներով բազմաթիվ սկզբնաղբյուրներ ու գրականություն։ Գաղթօջախների պատմությունը քննվում է Մերձավոր արևելքի և համաշխարհային իրադարձությունների ֆոնի վրա։ Այն սերտորեն կապվում է նաև արևմտահայության պատմության հետ։ Աշխատության մեջ վերլուծվում են Սիրիայի և Լիբանանի սոցիալ-դասակարգային հարաբերությունները։

[1] Տե՛ս Հ. Թոփուզյան, նշվ. աշխ., էջ 151։

[2] Տե՛ս Հ. Թոփուզյան, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841—1946), Եր., 1986։

Զնայած սփյուռքահայ և խորհրդահայ պատմական գրականության մեջ բավականաչափ լուսաբանված է հայերի նկատմամբ թուրքական ջարդարարների արյունարբու քաղաքականությունը, բացահայտված են նրանց բռնի տեղահանություններն ու հայակուլ քաղաքականությունը, ինչպես նաև ինքնապաշտպանական կռիվները, այդուհանդերձ հեղինակը արժեքավոր նյութերով նոր լրացումներ է կատարում։ Մասնավորապես նորովի են ներկայացվում Մուսա լեռան հերոսամարտի պատմության շատ էջեր։

Հարուստ է աշխատության այն բաժինը, որը նվիրված է հայաշատ այդ երկու գաղթավայրերի 1918—1946 թթ. պատմությանը։ Այստեղ հանգամանորեն խոսվում է Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից հայ գաղթականության ներհոսի, որբահավաքի, հայ դեմոկրատական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների կազմավորման, հայ-արաբական հարաբերությունների, նրանց համատեղ մղած հակաիմպերիալիստական պայքարի, Խորհրդային Հայաստանի հետ ունեցած առնչությունների և հայրենադարձության մասին։

Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայում կոլեկտիվ աշխատանք է կատարվել Ուկրաինայի հայկական գաղթօջախի պատմության ուսումնասիրության ուղղությամբ։ Այդ կարևոր գործում ներգրավվել են նաև ուկրաինական գիտնականները։ Դրա լավագույն վկայությունն են 1960-ական թվականներին Կիևում և Երևանում կազմակերպված հայ-ուկրաինական կապերի ու գաղթավայրերի պատմությանը նվիրված երեք գիտական նստաշրջանները, որտեղ զեկուցումներով հանդես են եկել հիմնականում հայ և ուկրաինացի գիտնականները։ Այդ նստաշրջանների նյութերը հրատարակվել են երեք գրքերով՝ «Ուկրաինական և հայ ժողովուրդների պատմական կապերը և բարեկամությունը» ընդհանուր վերնագրով։

Հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրության բնագավառում խորհրդահայ պատմաբանների կատարած աշխատանքը լուսաբանված է Վ. Ոսկանյանի և Վ. Բարխուդարյանի հոդվածում[1]։ Հեղինակները ցույց են տվել ոչ միայն կատարվածը, այլև մատնանշել թերությունները ու բացերը։

[1] Տե՛ս Վ. Ոսկանյան, Վ. Բարխուդարյան, Հայ գաղթավայրերը խորհրդահայ պատմագրության մեջ, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր», № 4, 1968։



Հոդվածում, մի կողմից, իրավացիորեն դիտողություն է արված գաղթավայրերի պատմությամբ զբաղվող պատմաբաններին՝ վերջիններս պետք է խուսափեն նկատվող երկու ծայրահեղություններից՝ գաղթավայրը չքննարկել տվյալ երկրի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական ընդհանուր միջավայրից կտրված և, մյուս կողմից, այդ պատմությունը շտարալուծել երկրի ընդհանուր պատմության ու երկրորդական նշանակություն ունեցող մանրամասների մեջ։ Ճիշտ է նաև այն, որ ուսումնասիրողները, խորանալով իրենց զբաղեցնող թեմաների մեջ, երբեմն այնքան են տարվում հետաքրքրվող նյութով, որ չափազանցության մեջ են ընկնում տվյալ գաղթավայրի խաղացած դերի գնահատման հարցում։

## 10. Աղբյուրների հրատարակումը

Անցած երկուս ու կես տասնամյակներում շոշափելի աշխատանք է կատարվել նաև նոր պատմության վերաբերյալ կարևոր փաստաթղթերի ժողովածուներ հրատարակելու ուղղությամբ։

Հայկական ԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը երկհատորանոց արժեքավոր ժողովածուներ է հրատարակել հայ ժողովրդի կյանքում բախտորոշ դեր խաղացած պատմական իրադարձության՝ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման վերաբերյալ[1]։ Դրանցում զետեղված են գիտական-քաղաքական կարևոր նշանակություն ունեցող վավերագրական բազմաթիվ նյութեր, որոնք լույս են սփռում XIX դարի սկզբի հայ ժողովրդի տնտեսական և սոցիալ-քաղաքական կյանքի պատմության վրա։

Հարկ է նշել, որ այստեղ զետեղված վավերագրերի զգալի մասը հրապարակվում է առաջին անգամ, խստիվ պահպանված են ժողովածուների հրատարակման համար սահմանված բոլոր կանոնները։

1985 թ. հրատարակվեց «Դեկաբրիստները Հայաստանի և Անդրկովկասի մասին» ժողովածուի առաջին մասը[2], ուր ամ-

[1] Տե՛ս Присоединение Восточной Армении к России. Сборник документов, том I (1801—1830), Е., 1972, том II, Е., 1978.

[2] Տե՛ս Декабристы об Армении и Закавказье (сборник документов и материалов), часть первая, сост. и ред. проф. М. Г. Нерсисян, Е., 1985.

փոփված են հայտնի դեկաբրիստներ Ե. Լաշինովի, Մ. Պուշչինի և Ա. Գանգեբլովի գրառումներն ու հիշողությունները։ Այստեղ տեղ է գտել նաև արժեքավոր փաստաթղթերի մի հավելված Զեռնիգովյան գնդի այն շարքային զինվորների մասին, որոնք մասնակցել են 1825 թ. դեկտեմբերի 14-ին Պետերբուրգի Սենատի հրապարակում տեղի ունեցած ապստամբությանը։

Անտարակույս, ժողովածուի փաստաթղթերը մեծ արժեք ունեն Կովկասի 1820-ական թվականների ռազմաքաղաքական կացության, ինչպես նաև սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրման համար։ Դրանք վկայում են ժամանակի հայ նշանավոր գործիչների հետ դեկաբրիստների ունեցած կապերի, անձնական ծանոթությունների մասին։ Բացի այդ, վավերագրերից երևում է, որ դեկաբրիստները մտահոգված էին Պարսկաստանի և Թուրքիայի լծից Անդրկովկասի ժողովուրդների ազատագրման հարցով և համոզված էին, որ ռուսական զենքի հաղթանակը բախտորոշ նշանակություն կարող է ունենալ այդ ժողովուրդների հետագա ճակատագրի համար։

Արժեքավոր ժողովածու է հրատարակվել հայկական ցեղասպանության մասին[1] (կազմողներ՝ Մ. Ներսիսյան և Ռ. Սահակյան)։

Առաջին մասում զետեղված վավերագրերը պատմում են սուլթան Աբդուլ Համիդի իշխանության (1876—1908 թթ.) ժամանակաշրջանի հայկական կոտորածների, երկրորդ մասը (1909—1918 թթ.) երիտթուրքերի կողմից կազմակերպված հայկական զանգվածային ջարդերի մասին։

Ժողովածուի առաջաբանում մասնավորապես ասված է, որ XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայ ժողովուրդը ծանր ողբերգություն ապրեց։ Այդ ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության մեջ բարբարոսաբար կոտորվեց շուրջ երկու միլիոն հայ և լրիվ ամայացավ ամբողջ Արևմտյան (Թուրքական) Հայաստանը։ Այդ սոսկալի ողբերգությունը, նշվում է այնտեղ, աննախադեպ էր համաշխարհային պատմության մեջ։

Հենվելով փաստական հարուստ տվյալների վրա, ժողովածուի առաջաբանում ցույց են տրված հայերի զանգվածային ջարդերի պատճառները։ Այստեղ հիշատակվում է արյունարբու

[1] Տե՛ս Геноцид армян в Османской империи (сборник документов и материалов под ред. проф. М. Г. Нерсисяна), Е., 19 6:



սուլթան Համիդի հաճախ կրկնվող այն ցինիկ հայտարարությունը, թե Հայկական հարցը լուծելու համար հարկավոր է ջարդել հայ ժողովրդին։ Աբդուլ Համիդի արյունալի քաղաքականությունը, գրում է առաջաբանի հեղինակ Մ. Ներսիսյանը, ամբողջովին ժառանգեցին նրա հետնորդները՝ երիտթուրքերը։ «Լինելով կատաղի շովինիստներ ու պանթուրքիստներ, նրանք ավելի դաժան եղան»[1]։

Անդրադառնալով զոհված հայերի ընդհանուր թվին, պատմաբանը գտնում է, որ այդ հարցի մանրակրկիտ ուսումնասիրությունը կասկած չի հարուցում, որ կարմիր սուլթանի իշխանության տարիներին զոհվել է շուրջ 300 հազար, իսկ երիտթուրքերի կառավարման տարիներին՝ մեկկեես միլիոն հայ։ Մոտավորապես 800 հազար գաղթականներ ապաստան գտան Կովկասում, Արաբական արևելքում և ուրիշ երկրներում։ Բնորոշ է, այնուհետև գրում է Մ. Ներսիսյանը, որ եթե 1870-ական թվականներին Արևմտյան Հայաստանում և ընդհանրապես ամբողջ թուրքական կայսրությունում ապրում էր ավելի քան 3 միլիոն հայ, ապա 1918 թվականին՝ ընդամենը 200 հազար։ Հենց դա գենոցիդի քաղաքականություն էր[2]։

Ինչպես նշվում է առաջաբանում, երիտթուրքերի կառավարությանը հովանավորում էր Թուրքիայի «դաշնակից» կայզերական Գերմանիան։ Ելնելով Մերձավոր արևելքում և Կովկասում իր ագրեսիվ պլաններից, Գերմանիան ամեն կերպ աջակցում էր թուրքական վանդալներին հայ բնակչության բռնագաղթն ու ջարդերը կազմակերպելու գործում։ Անպաշտպան հայերի նկատմամբ փարիսեցիական դիրք էին գրավել եվրոպական մյուս տերությունները, ինչպես նաև Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Դրան հակառակ, ասված է առաջաբանում, հայ ժողովրդի ողբերգության դեմ իրենց բողոքի ձայնը բարձրացրին ժամանակի առաջադեմ ուժերը։

Ժողովածուում զետեղված փաստաթղթերն ու նյութերը վերցված են տարբեր աղբյուրներից, ունեն տարբեր արժեքներ և նշանակություն։ Ընդհանուր առմամբ դրանք ճիշտ պատկերացում են տալիս հայ ժողովրդի մեծագույն ողբերգության մասին, սակայն, ավելացնում է նա, մի շարք նյութեր բովանդա-

[1] Геноцид армян.., с. 8.
[2] Տե՛ս նույն տեղը, էջ XI—XII։

կում են այնպիսի պնդումներ, որոնց հետ չի կարելի համաձայնվել։ Այսպես, գրում է նա, հատկապես սուլթան Աբդուլ Համիդի իշխանության ժամանակին վերաբերող առանձին վավերագրերում ընթերցողը չի գտնի պարզ և ճիշտ բացատրություն հայկական կոտորածների մասին։ Դրանցում գերագնահատվում է «խաժամուժի մուսուլմանաֆանատիզմը» և քրդական ցեղերի «հակվածությունը կողոպուտի նկատմամբ»[1]։ Մինչդեռ, իրավացիորեն գրում է առաջաբանի հեղինակը, լավ հայտնի է, որ հայերի բոլոր զանգվածային ջարդերի կազմակերպիչները եղել են թուրքական կառավարությունն ու նրա տեղական մարմինները, որոնք իրենց առաջ նպատակ էին դրել բոլոր միջոցներով կենսագործել հայերի ցեղասպանության քաղաքականությունը, մի բան, որը անցյալ դարի վերջերից սկսած դարձել էր Թուրքիայի պետական քաղաքականությունը։

Մի շարք նյութեր, գրում է Մ. Ներսիսյանը, կարող են այնպիսի տպավորություն թողնել, որ իբր մեծ տերությունները լրջորեն մտահոգված են եղել Արևմտյան Հայաստանում կատարված արյունալի իրադարձություններով, իբր նրանք քայլեր են կատարել Հայկական հարցի լուծման ուղղությամբ։ «Այդ,— գրում է նա,— մեղմ ասած, բացահայտ անճշտություն է, որը տարածել են «քաղաքակիրթ» տերությունների պաշտոնական և անպաշտոն ներկայացուցիչները»[2]։ Կարդալով մի շարք վավերագրեր, ասված է առաջաբանում, կարելի է հանգել այն եզրակացության, որ իբր թուրքական կառավարության արյունոտ քաղաքականությունը չի հանդիպել հայերի արժանի դիմադրությանը։ Մինչդեռ այդպիսի եզրակացությունը սխալ կլիներ։ Չնայած ծանր պայմաններին և ուժերի անհավասարությանը, հայերը, ինչպես ցույց են տալիս փաստերը, մեկ անգամ չէ, որ զենքը ձեռքին դուրս են եկել համիդյան և երիտթուրքական դահիճների դեմ, հերոսաբար կռվել հանուն իրենց պատվի, ազգային արժանապատվության, ֆիզիկական գոյության։

1982 թ. լույս տեսավ ժողովածուի երկրորդ, լրացված հրատարակությունը։ Այստեղ ամփոփվել են նոր, արժեքավոր վավերագրական նյութեր, որոնք նոր լույս են սփռում հայկական կոտորածների պատմության վրա։

[1] Տե՛ս Геноцид армян.., էջ XIV:
[2] Նույն տեղը, էջ XX։



Որոշ դրույթներով լրացվել, հրատարակվել է նաև ժողովածուի առաջաբանը։ Այսպես, նոր վավերագրերով ու նոր ուժով է մերկացվում երիտթուրքերի քաղաքականությունը։ Երիտթուրքերի պարագլուխները, ասվում է առաջաբանում, մինչև իշխանության գլուխ անցնելը կեղծավորաբար հաճախ էին խոսում ազատության, ժողովուրդների եղբայրության, դեմոկրատիայի մասին, սակայն երբ իշխանություն ձեռք բերեցին, դարձան դաժան բռնակալներ և ջարդարարներ։ Ժողովածուում մեծ տեղ է հատկացված հայկական բնակչության բռնագաղթի փաստերին։ Բերված են ֆրանսիական հրապարակախոս Ռենե Պինոնի և Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուի, գերմանացի դոկտոր Լեփսիուսի և ուրիշների ասույթներն այն մասին, որ բռնագաղթը հայերին կողոպտելու և բնաջնջելու մեթոդներից մեկն էր։ «Աքսորը ոչնչացում է»՝ ասված է Թալեաթ փաշայի հրամաններից մեկում։ Ժողովածուի առաջաբանում վերոհիշյալ միտքը հաստատող տվյալներ են բերված։ Օրինակ, 18 հազար բռնագաղթած էրզրումի հայերից նշանակման վայրն են հասել ընդամենը 150 մարդ։ Խարբերդի, Ակնի, Թոքաթի և Սեբաստիայի 18 հազար տեղահանվածներից կենդանի են մնացել միայն 350-ը և այլն։ Ուշագրավ փաստեր կան այն մասին, որոնք երիտթուրքերի չտեսնված բարբարոսությունները շատ բանով նմանեցնում են երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հիտլերականների կատարած ոճրագործություններին։

Առաջաբանի վերջում նշվում է, որ հայերի ցեղասպանության մասին տարբեր երկրներում, տարբեր ազգությունների ներկայացուցիչների կողմից հրատարակվել է հսկայական գրականություն՝ գիտական աշխատություններ, ակնարկներ, հիշողություններ, հոդվածներ, նյութերի ժողովածուներ և այլն։ Բավականին արժեքավոր նյութեր գրվեցին, իսկ հետո նաև հրապարակվեցին 1965 և 1975 թվականներին՝ Մեծ եղեռնի հիսնամյա և վաթսունամյա տարելիցներին։ Սակայն, գրում է Մ. Ներսիսյանը, զարմանալի է, որ ժամանակակից Թուրքիայի շատ պետական գործիչներ և մտավորականներ, կեղծելով պատմական իրողությունը, ջանում են ժխտել հայերի ցեղասպանությունը թուրքական կայսրության մեջ։ «Ինչ կասեն պատմության կեղծարարները,—

գրում է նա,— այս ժողովածուի անհերքելի վավերագրերի դիմաց»[1]։

Երկար ժամանակ զգացվում էր Հայաստանին վերաբերող միջազգային դիվանագիտական փաստաթղթերի, պայմանագրերի հայերենով հրատարակվելու անհրաժեշտությունը։ Այդ տեսակետից դրվատանքի է արժանի 1972-ին հրատարակված ժողովածուն, որը կազմել են Ջ. Կիրակոսյանը և Ռ. Սահակյանը[2]։

Ժողովածուի մեջ զետեղված նյութերն ընդգրկում են պատմական մի մեծ ժամանակաշրջան՝ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրից մինչև 1922—1923 թթ. Լոզանի կոնֆերանսում Հայկական հարցի քննարկումը։ Այն բաղկացած է երեք մասից։ Առաջին մասը՝ Հայաստանը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում, որը ժողովածուի ամենահարուստ մասն է, ներառում է 1828—1917 թվականները, երկրորդը՝ Հայաստանը խորհրդային արտաքին քաղաքականության փաստաթղթերում, ընդգրկում է 1917—1922 թվականները՝ Հոկտեմբերյան հեղափոխությունից մինչև ԽՍՀՄ-ի կազմավորումը և երրորդը՝ վերնագրված է «Արևմտաեվրոպական դիվանագիտությունը և Հայաստանը 1918—1923 թթ.»։

Անշուշտ, դժվար կլիներ մեկ, թեկուզև նման ստվարածավալ ժողովածուի մեջ զետեղել Հայաստանին, Հայկական հարցին վերաբերող դիվանագիտական բոլոր փաստաթղթերը, ուստի ժողովածուն կազմողները ընդգրկել են առավել կարևոր, բացառապես պետական, պաշտոնական փաստաթղթերը՝ պայմանագրեր, համաձայնագրեր, վերջնագրեր, հուշագրեր, դեսպանների և դիվանագիտական այլ պաշտոնատար անձանց զեկուցագրեր, գրագրություններ, նոթագրություններ, արձանագրություններ և այլն։

Ժողովածուի ընդարձակ առաջաբանը գրել է Ջ. Կիրակոսյանը։ Այն պատմական համառոտ ակնարկ է, որն ընդգրկում է XIX դարի սկզբներից մինչև 1920-ական թվականների սկիզբն ընկած ժամանակաշրջանը։ Անկախությունից և պետականությունից զուրկ հայ ժողովուրդը, նշում է պատմաբանը, չէր կա-

[1] Геноцид армян.., с. 16.

[2] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և խորհրդային արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923 թթ.), պրոֆ. Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Եր., 1972։



ող միջազգային հարաբերություններում, դիվանագիտական պրակտիկայում սուբյեկտ հանդիսանալ, ուստի նա եղել է մեծ տերությունների ռազմական բախումների, դիվանագիտական մրցապայքարի օբյեկտ։

Բնութագրելով Թուրքմենչայի և Ադրիանապոլսի պայմանագրերը հայ ժողովրդի համար, Ջ. Կիրակոսյանը գրում է, որ եթե առաջին պայմանագրով Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին, որն առաջադիմական դեր խաղաց հայ ժողովրդի ճակատագրում, ապա երկրորդ պայմանագրով Արևմտյան Հայաստանը շարունակեց մնալ Թուրքիայի տիրապետության տակ, ենթարկվելով զանգվածային բռնագաղթի և բնաջնջման։ Ադրիանապոլսի պայմանագրում, նշում է նա, արտահայտվեց ռուսական զենքի հաջողության և եվրոպական դիվանագիտության բացասական դերի իրարամերժ բնույթը։ Հայտնի է, որ եվրոպական տերությունների, առաջին հերթին Անգլիայի, ճնշման տակ Ռուսաստանն Օսմանյան կայսրությանը վերադարձրեց Կարսը, Բայազետը, Էրզրումը։

Ժողովածուի մեջ շատ կարևոր վավերագրեր կան Հայկական հարցի վերաբերյալ, այդ թվում Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերը։ Սրանք այն փաստաթղթերն էին, իրավացիորեն գրում է Ջ. Կիրակոսյանը, որոնցով սկիզբ է առնում Հայոց հարցի դիվանագիտական պատմությունը, հայ հասարակական-քաղաքական կյանքում եվրոպական դիվանագիտության օգնությամբ Թուրքական լուծը թոթափելու, հայերի անկախությունն ապահովելու մտայնությունն ու գործելակերպը։ «Սա այն 16-րդ և 61-րդ հոդվածներն են,— գրում է Ջ. Կիրակոսյանը,— որոնք տասնամյակներ շարունակ օրորելու էին հայկական ազգային ու ազգայնական կուսակցություններին, հոգևոր սնունդ էին հանդիսանալու նրանց ռոմանտիկ ծրագրերի համար։ Թվալու էին իրագործելի, բայց մնալու էին և մնացին անօգուտ թղթի կտորներ, բացի վնասից, ոչ մի լավ բան չտալով բազմաչարչար հայ ժողովրդին»[1]։

Այս բաժնում բերված վավերագրերի հիման վրա Ջ. Կիրակոսյանը հանգում է այն եզրակացության, որ «հայությունը կարծում էր, թե այսուհետև Հայաստանը դառնալու է եվրոպական տերությունների մտահոգության առարկա։ Իրականում հա-

[1] Հայաստանը միջազգային դիվանագիտության... էջ 18։

յերը դառնում էին դիվանագիտական առուծախի առարկա»[1]։ Եվրոպական իմպերիալիստների համար Հայկական հարցը սոսկ միջոց էր ուղած ժամանակ Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու համար։

Ժողովածուում լայնորեն են ներկայացված առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին 1912—1914 թթ. Հայկական հարցի վերաբացմանը, հայկական բարենորոգումներին վերաբերող միջազգային դիվանագիտության փաստաթղթերը։ «Հայկական հասարակական կարծիքի վարդապետն սպասումների և եվրոպական տերությունների շահադիտական դիրքորոշման տարբերությունն է,— գրում է նա,— որ աչքի է զարնում ժողովածուի էջերում բերված վավերագրերում»[2]։

Ժողովածուում գետեղված փաստաթղթերը պարզում են Մեծ եղեռնի որոշ մանրամասներ, հատկապես հայ ժողովրդի ողբերգության մեջ եվրոպական դիվանագիտության նենգ դերը։

Խորհրդային արտաքին քաղաքականության փաստաթղթերը բացահայտում են Հայաստանի շահերը պաշտպանելու Մոսկվայի ջանքերը։ Այդ բաժնում բերված են Հայաստանին վերաբերող լենինյան ասույթները, որոնք վկայում են պրոլետարիատի առաջնորդի սկզբունքային դիրքորոշումը հայ ժողովրդի ազատագրության հարցում։ Ջ. Կիրակոսյանը իրավացիորեն նշում է, որ «Թուրքահայաստանի մասին» խորհրդային կառավարության դեկրետը նոր ժամանակների դիվանագիտության պատմության մեջ, միջազգային հարաբերությունների պրակտիկայում առաջին փաստաթուղթն էր, որով ճանաչվում էր հայ ժողովրդի ազատ ինքնորոշման, սեփական պետականություն ստեղծելու իրավունքը[3]։ Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում 1920—1921 թթ. խորհրդա-թուրքական (քեմալական) հարաբերություններում Հայաստանին վերաբերող դիվանագիտական փաստաթղթերը։

Կարևոր փաստաթղթեր և նյութեր է պարունակում պրոֆ. Խ. Բաղալյանի կազմած ժողովածուն[4], որը հիմնականում 1962-ին

[1] Հայաստանը միջազգային դիվանագիտության... էջ 21։

[2] Նույն տեղը, էջ 35։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 43—44։

[4] Տե՛ս Из истории иностранной интервенции в Армении в 1918 году, Е., 1970:



հայերեն լույս տեսած ժողովածուի ռուսերեն հրատարակությունն է որոշ լրացումներով[1]։

Հրատարակվել են նաև մի շարք ժողովածուներ, որոնց մեջ գետեղվել են բոլշևիկյան մամուլի նյութերը Անդրկովկասի և Հայաստանի մասին[2]։

Գիտական որոշակի արժեք է ներկայացնում պրոֆ. Թ. Հակոբյանի կազմած ժողովածուն, ուր ամփոփված են Երևան քաղաքի պատմության վերաբերյալ բազմաթիվ կարևոր վավերագրեր[3]։ Ժողովածուն ընդգրկում է Արևելյան Հայաստանի միացումից մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունն ընկած ժամանակաշրջանի պատմությունը։ Նրանում գետեղված նյութերը ակնառու կերպով ցույց են տալիս Երևանի զարգացումն այդ ժամանակաշրջանում։ Փաստաթղթերը ժողովածուում դասավորված են ըստ թեմատիկայի և ժամանակագրական կարգի։ Ժողովածուում ամփոփված են Երևանի քաղաքական պատմության, վարչական վիճակի, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի, հեղափոխական-ազատագրական շարժումների և այլ բնագավառների վերաբերյալ արժեքավոր փաստաթղթեր։

## 11. Հայ մշակույթի պատմությունը

Մեծ է հայ պատմաբանների ավանդը ոչ միայն մեր ժողովրդի սոցիալ-տնտեսական ու քաղաքական, այլև մշակույթի պատմության գիտական հետազոտության բնագավառում։

Այդ կարևոր պրոբլեմը լուսաբանվել է ինչպես հայ ժողովրդի պատմությանը նվիրված ամբողջական աշխատություններում, այնպես էլ առանձին մենագրություններում ու գիտական հոդվածներում։

Հայկական մշակույթի պատմությունը համառոտակի շարադրված է Երևանի պետական համալսարանի հրատարակած

[1] Տե՛ս Գերմանա-թուրքական օկուպանտները Հայաստանում 1918 թ., Եր., 1962։

[2] Տե՛ս Центральные газеты РСДРП о Закавказье. 1905 г. (сборник), Е., 1965, «Правда» (1912—октябрь 1917) «Социаль-демократ» (1908—1917) о Закавказье (сборник), Е., 1968. Большевистские газеты «Пролетарий» и «Звезда» о Закавказье (1906—1912) (сборник), Е., 1970, «Правда» об Армении (сборник), Е., 1973:

[3] Տե՛ս Թ. Հակոբյան, Երևանի զարգացումը Արևելյան Ռուսաստանի հետ միավորվելուց հետո (Փաստաթղթերի ժողովածու), Եր., 1978։

«Հայ ժողովրդի պատմության» մեկհատորյակում։ Այստեղ Մ. Ներսիսյանը նշում է, որ XIX դարում հայկական մշակույթը զգալի վերելք ապրեց, նկատելի հաջողություններ ունեցան դպրոցական գործը, մամուլն ու գիտությունը, զարգացան գրականությունն ու արվեստը։ Միանգամայն ճիշտ է նրա այն կարծիքը, թե ինչպես նախորդ մի քանի դարերի ընթացքում, այնպես էլ այս ժամանակահատվածում մշակութային օջախները մեծ մասամբ գտնվում էին բուն Հայաստանի սահմաններից դուրս՝ հայ գաղթավայրերում։

Մ. Ներսիսյանը ևս անցյալ դարի երկրորդ կեսին հայ մշակույթի վերելքին նպաստող գործոններ է համարում կապիտալիզմի զարգացումը, հայ ժողովրդի, որպես ազգության, կազմավորման պրոցեսի ավարտումը, ազգային-ազատագրական շարժումները, դասակարգային պայքարի սրումը։ Հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքի զարթոնքին նպաստել են նաև Ռուսաստանի, Ֆրանսիայի և Իտալիայի հեղափոխական շարժումները և այլն։ Նրա կարծիքով, արևելահայ մշակույթի զարգացման վրա առանձնապես զգալի ազդեցություն ունեցավ ռուսական առաջավոր և հարուստ մշակույթը, իսկ արևմտահայ մշակույթի վրա՝ ֆրանսիականը։

Անշուշտ, գիրքը կշահեր, եթե տեղ հատկացվեր 1900—1917 թթ. հայ մշակույթի հարուստ պատմությանը, հայ պրոլետարական գրականության սկզբնավորմանը։ Ճիշտ է, Գր. Զոհրապի, Դ. Վարուժանի, Սիամանթոյի անունները հիշատակվում են, բայց այլ գլխում՝ Եղեռնի կապակցությամբ, իսկ հայ գրականության այնպիսի ականավոր դեմքեր, ինչպիսիք են Մուրացանը, Մեծարենցը, Տերյանը, Փափազյանը, բնավ չեն հիշատակվում։ Ոչինչ չի ասված նաև մշակույթի մյուս կարևոր ճյուղերի՝ արվեստի, պարբերական մամուլի, հրապարակախոսության, դպրոցական գործի, գիտության զարգացման մասին*։

Հայ մշակույթի պատմությունը համեմատաբար ավելի ծավալուն է շարադրված «Հայ ժողովրդի պատմության» V և VI հատորներում։ V հատորի այդ բաժնի հեղինակներ, գիտության դոկտորներ Գ. Ստեփանյանը (լուսավորություն, գիտություն, մամուլ, թատրոն), Ս. Սարինյանը (գրականություն), Մ. Ղազարյանը (կերպարվեստ), Մ. Մուրադյանը (երաժշտություն) և Վ. Հարությունյանն (ճարտարապետություն) ընդգծել են այն իրողությունը, թե թուրք-պարսկական տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանի համար ստեղծված ծանր պայմանների պատճառով XVIII դարի վերջին տասնամյակներում և XIX դարի արշալույսին մտավոր աշխուժություն է նկատվում մայր հայրենիքից հեռու հայ գաղթօջախներում, ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Անդրկովկասի հայաբնակ վայրերում։ Ըստ ամենայնի է գնահատված Ռուսաստանին Անդրկովկասի միացումը, որը բարերար ազդեցություն ունեցավ ոչ միայն հայ, այլև երկրամասի մյուս ժողովուրդների մտավոր կյանքի վրա։ Եթե մինչ այդ իշխողը կղերական գաղափարախոսությունն էր, ասված է այնտեղ, ապա Ռուսաստանին միանալուց հետո երկրամասում ապրող ժողովուրդների մտավոր զարգացման համար անհամեմատ լայն հեռանկարներ բացվեցին։ Ռուսաստանից Կովկաս էին թափանցում առաջավոր գաղափարներ։

Հատորում մեծ նշանակություն է տրված հայկական տպարանների ստեղծմանն ու նրանց եռանդուն գործունեությանը, վերջիններիս դերին՝ լուսավորության, գիտության և մամուլի զարգացման գործում։

Դրվատանքով է խոսվում Կ. Պոլսում ստեղծված հարյուրից ավելի այն ընկերությունների մասին, որոնք հսկայածավալ գործ կատարեցին լուսավորության, կրթության, ինչպես նաև արվեստի զարգացման ուղղությամբ։

Դպրոցների, նրանց խաղացած դրական դերի մասին խոսելիս Գ. Ստեփանյանը բացահայտել է այն պայքարը, որ մղվում էր դպրոցի աշխարհականացման համար, այն հալածանքը, որ ծավալում էր հայ եկեղեցին նոր գաղափարներ քարոզող մանկավարժների, հայ լուսավորիչների դեմ։ XIX դարի հայկական նշանավոր դպրոցների մասին խոսելիս Գ. Ստեփանյանը հատկապես բարձր է գնահատում Լազարյան ճեմարանի գործունեությունը, թեև, նրա կարծիքով, նշանավոր այդ կրթօջախն իր բոլոր առավելություններով հանդերձ չէր կարող կատարել այն դերը, ինչ կատարեց հայ իրականության ծոցում հիմնադրված լուսավորության այնպիսի օջախ, ինչպիսին Թիֆլիսի Ներսիսյան դպրոցն էր։

Հաջող է շարադրված հայ պարբերական մամուլի բաժինը։

* Ի դեպ, հեղինակները, հաշվի առնելով մեր դիտողությունները (տե՛ս «Լենինյան ուղիով», 1974, № 4), գիրքը վերահրատարակելիս լրացրել են այդ բացը՝ առանձին գլուխ նվիրելով XX դարի սկզբի հայ մշակույթի պատմությանը։

Այստեղ բացահայտված է հատկապես առաջադիմական, դեմոկրատական մամուլի խաղացած դերը հայ հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում։ Հայ պարբերական հրատարակությունները բնութագրված են որպես տարբեր հոսանքների գաղափարակիրներ, որոնք շեշտված դիրքորոշում են ունեցել հասարակական-քաղաքական հրատապ այնպիսի խնդիրների նկատմամբ, ինչպիսիք էին ազգային հարցը, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի, ազգային մշակույթի զարգացման, աշխարհաբար գրական լեզվի մշակման հարցերը և այլն[1]։

Գ. Ստեփանյանը բարձր է գնահատում Մխիթարյան կաթոլիկ վարդապետների հրատարակած պարբերականները, հատկապես «Բազմավեպը», գտնելով, որ այն աշխարհիկ հակում է ունեցել և, լինելով հայերին սրտամոտ, արձագանքել է նրա առաջավոր գաղափարներին (հատկապես 20—40-ական թվականներին)։ «Մեղու Հայաստանի» թերթը, նրա կարծիքով, սկզբում արևելահայ կղերաավատական, իսկ հետո ազգային-պահպանողական ուղղության պարբերական էր, թեև ավելի ուշ, մասնավորապես Պ. Սիմոնյանի խմբագրության շրջանում, տպագրում էր նաև առաջադիմական հոդվածներ։ Հայ իրականության մեջ Բելինսկու գաղափարները մուտք են գործել շնորհիվ այդտեղ տպագրված նյութերի։ Նույնը կարելի է ասել «Կոմունկ հայոց աշխարհին» պարբերականի մասին։ «Մնալով հանդերձ ազգային-պահպանողական հոսանքի գաղափարախոս,— գրում է Գ. Ստեփանյանը,— այն իր էջերում լայն տեղ է տալիս դեմոկրատական խավերի տրամադրություններն արտահայտող գրողներին, հրապարակախոսներին»[2]։

Մշակույթի բաժնում հաջող է շարադրված նաև հայագիտությանը նվիրված մասը։ Այստեղ վեր է հանված ինչպես հայ, այնպես էլ օտարազգի հայագետների բեղմնավոր գործունեությունը։ Գիտական բարձր մակարդակով են գրված գրականությանը և արվեստին վերաբերող գլուխները։

1870—1917 թթ. հայկական մշակույթի պատմությունը շարադրված է «Հայ ժողովրդի պատմության» VI հատորում։ Նրա հեղինակներն են՝ Վ. Երկանյանը (ընդհանուր ակնարկ, դպրոց, պատմագիտություն), Մ. Մկրյանը (գրականություն), Ս. Մելիքսեթյանը (թատրոն), Մ. Մուրադյանը (երաժշտություն), Վ. Հարությունյանը (ճարտարապետություն), Մ. Ղազարյանը (կերպարվեստ), Խ. Բարսեղյանը և Գ. Մաղոյանը (մամուլ), Ս. Հարությունյանը (հայագիտություն), Գ. Կարախանյանը (հնագիտություն), Դ. Վարդումյանը (ազգագրություն), Ն. Թովմասյանը (տնտեսագիտություն), Վ. Սեյանը (փիլիսոփայություն) և մի խումբ այլ գիտնականներ՝ Վ. Ազատյանը, Բ. Թումանյանը Կ. Մարջանյանը, Է. Մալխասյանը, Ա. Կծոյանը (բնական գիտություններ)։ Իրավացիորեն նշվում է, որ յուրաքանչյուր տնտեսական ու հասարակական ժամանակաշրջան իր կնիքն է դնում մշակույթի զարգացման վրա։ Եթե նախկինում բուրժուական հարաբերությունները հայ իրականության մեջ առավել դրսևորվում էին հայկական գաղթօջախներում, ապա XIX դարի կեսերից այդ հարաբերությունները թափանցում են նաև Հայաստան, ուր ավելի էին ծավալվել ազատագրական շարժումները, ուժեղացել հայ ժողովրդի ազգային համախմբման պրոցեսը և այլն։ Այդ ամենն էլ պայմանավորում էր հայկական մշակույթի անընդհատ զարգացումը։ Հայկական հարցի արծարծումները նոր խնդիրներ են առաջադրում մշակույթի գործիչներին։

Հատորում ճիշտ է նշված, որ այդ ժամանակաշրջանի հայկական մշակույթի զարգացումն ուներ մի շարք առանձնահատկություններ։ Դրանցից մեկն այն էր, որ դարեր շարունակ պետականությունից զրկված հայ ժողովրդի գիտության ու մշակույթի գործիչները հիմնականում գործում էին կրոնական հաստատությունների շրջանակներում։ Նոր ժամանակներում, սակայն, կյանքի ընդհանուր առաջընթացը, Ռուսաստանում և Եվրոպայում կրթություն ստացած երիտասարդ մտավորականության ջանքերը, առաջադիմական գաղափարների տարածումը, կղերաֆեոդալական գաղափարախոսության դեմ ծավալված պայքարը մեծապես նպաստեցին հասարակական նախաձեռնության զարգացմանը։ Հրապարակ եկան ընկերություններ ու միություններ, որոնք կարևոր դեր խաղացին լուսավորության տարածման, գրականության ու արվեստի զարգացման գործում[1]։ Հիշատակվում է նաև այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը պատմության ճակատագրի բերումով բաժանված լինելով երկու հիմնական հատվածների, ստիպված էր իր մշակույթը

[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. V, էջ 589։

[2] Նույն տեղը, էջ 584։

[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 749—750։

զարգացնել հասարակական-քաղաքական տարբեր պայմաններում։ Դրան ավելացրած նաև այն, որ նրա մի խոշոր հատվածը՝ գաղութահայությունը, հայրենիքից դուրս նույնպես ստեղծել է մշակութային նշանակալի արժեքներ։

Թեև նման պայմաններում զարգացող հայկական մշակույթն ունեցավ իր արտահայտման տարբեր ձևերն ու դրսևորումները, ասված է հատորում, այնուամենայնիվ նրա համար բնորոշ էին ընդգծված ընդհանրությունները։ «Այդ միասնական, համընդհանրության ամենաէական հիմքերն էին ողջ հայ ժողովրդի դարերով պահպանած հոգևոր ընդհանրությունը, բազմադարյան մշակույթի հարազատ ավանդույթների պահպանումն ու փոխանցումը նոր սերունդներին, միասնական հայրենիքից զրկված ժողովրդի սոցիալական ու ազգային ազատագրության, գոյատևման ու միավորման անմար ձգտումը»[1]։ Հատորում նշվում է, որ նախորդ տասնամյակներում հայկական մշակույթը հիմնականում զարգանում էր բուն հայրենիքի սահմաններից դուրս։ Արևելահայ մշակույթի առաջավոր գործիչներն ապրում ու ստեղծագործում էին մեծ մասամբ Մոսկվայում, Պետերբուրգում, Թիֆլիսում, Նոր Նախիջևանում, Ղրիմում, Աստրախանում, Կալկաթայում։ Արևմտահայ մշակույթի կենտրոնը Կ. Պոլիսն էր, որտեղ գործում էր գրողների, հրատարակիչների, արվեստագետների, մանկավարժների մեծ մասը։ Նշանավոր կենտրոններ էին նաև Զմյուռնիան, Փարիզը, Երուսաղեմը, Կահիրեն, Վենետիկը և Վիեննան[2]։

Սակայն 1870-ական թվականներից սկսած կրթական ու մշակութային շարժումը թափանցեց հայկական գավառները, ստեղծվեցին ու աշխուժացան նոր օջախներ (Երևան, Ալեքսանդրապոլ, Շուշի, Վան, Կարին)։ 1915 թվականից հետո թուրքական կառավարության կազմակերպած արևմտահայության բնաջնջման ու արտաքսման հետևանքով փաստորեն դադարեց հայ ժողովրդի այդ խոշոր հատվածի մշակութային կյանքը։ Սակայն մեծ ջանքերի շնորհիվ արևմտահայ մշակույթն սկսեց զարգանալ սփյուռքում, ակզբնավորվեց սփյուռքահայ մշակույթը։ Հատորում առանձին-առանձին խոսվում է արևելահայ ու արևմտահայ դպրոցների մասին, ընդ որում արևելահայ դպրոցը, շնորհիվ ռուսական առաջավոր մանկավարժական մտքի բարերար ազդեցության, կարողացավ համեմատաբար ավելի կազմակերպված ընթացք ստանալ, մինչդեռ արևմտահայը, որ զարգանում էր առավելապես ֆրանսիականի ազդեցության տակ, թուրքական իրականության հետամնացության ու բռնության պայմաններում ավելի երերուն էր ու ոչ միասնական[1]։

Խոսելով Լազարյան և Գևորգյան ճեմարանների մասին, հատորում ընդգծված է նրանց կարևոր դերը ինչպես կադրերի պատրաստման, այնպես էլ արևելագիտության ու հայագիտության զարգացման գործում։ Միաժամանակ նշվում է, որ 1880-ական թվականների սկզբից Ռուսաստանում ծայր առած ռեակցիան իրեն զգացնել տվեց նաև ազգային ծայրամասերում։ Սկսվեցին հալածանքները, փակվեց դպրոցների մեծ մասը, որն ավելի խստացավ դարասկզբին։ Իսկ արևմտահայ դպրոցի զարգացմանը խոչընդոտում էր համիդյան վարչակարգը։ Այդ դժնդակ ու ծանր պայմաններում դպրոցական գործին օգնում էին հասարակական ընկերությունները, որոնց թիվը արագորեն աճում էր։ Նշվում է Կ. Պոլսի Կեդրոնական, Կարինի Սանասարյան, Վանի Երամյան, Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանների դերը արևմտահայության լուսավորության գործում։

Հայ գրականությանը նվիրված բաժնում պրոֆ. Մ. Մկրյանը ճիշտ է նկատում, որ չնայած հայ ժողովուրդը ապրում էր տընտեսական ու քաղաքական զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող պետությունների տիրապետության տակ, բայց նրա երկու հատվածներում գրականության հիմնական խնդիրները զուգադիպում էին։ XIX դարի 70—80-ական թվականներից, ասված է հատորում, հայ գրականությունը զարգացման մի նոր բարձր շրջան է թևակոխում, երբ իշխող գրական ժանրերը դառնում են արձակը և դրամատուրգիան։ Դա, իհարկե, հեղինակի կարծիքով, չի նշանակում, թե պոեզիան դադարել էր հրապարակ բերել աչքի ընկնող դեմքեր։ Դեռ ավելին, դարասկզբին պոեզիան դառնում է հասարակականորեն ավելի կարևոր և իշխող ժանր։ Այդ ժամանակաշրջանի հայ գրականության զարգացումը, այնուհետև գրում է գրականագետը, առանձնապես

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 750։

[2] Տե՛ս նույն տեղը։

[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 755։

Նշանավորվում է պրոլետարական պոեզիայի, սոցիալիստական ռեալիզմի մեթոդի քնարերգության սկզբնավորմամբ։ Հեղինակը հակիրճ, բայց գիտականորեն բնութագրում է հայ գրականության բոլոր նշանավոր դեմքերին, վեր հանում նրանց ունեցած դերը հայ ժողովրդի հասարակական-քաղաքական ու կուլտուրակրթական կյանքում։

Հաջող է շարադրված արվեստի բաժինը։ Չնայած քաղաքական աննպաստ պայմաններին, թատերական գործիչները մեծ ջանքեր են գործադրում դրա զարգացման ու խորացման ուղղությամբ։ Տալով հայ երաժշտության զարգացման պատկերը, հեղինակը եզրակացնում է. «Այսպիսով, հայկական երաժշտությունը, դուրս գալով զարգացման լայն ճանապարհ և առաջնորդվելով երաժշտական արվեստի առաջավոր սկզբունքներով՝ ժողովրդայնությամբ, ռեալիզմով և դեմոկրատական բովանդակությամբ, հասավ նշանակալից արդյունքների»[1]։

Հարուստ նյութ է պարունակում հայ ճարտարապետությանը նվիրված մասը։ Պրոֆ. Վ. Հարությունյանը ճիշտ է նկատել, որ հայ ժողովրդի արևելյան և արևմտյան հատվածների սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի տարբեր իրավիճակները պայմանավորել են քաղաքաշինության ու ճարտարապետության զարգացման տարբեր ընթացքը. արևելյանում՝ համեմատական առաջընթացը, արևմտյանում՝ դադար ու ավերածությունը։

Արվեստագիտական բարձր մակարդակով է շարադրված կերպարվեստի բաժինը։ Հեղինակը ցույց է տվել, որ XIX դարի սկզբին աննախընթաց զարգացում է ապրել հայ կերպարվեստը։ Հանդես են գալիս առանձին ստեղծագործողներ, որոնց արվեստը ստանում է հասարակական լայն հնչեղություն։ Դրանց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Հ. Այվազովսկին։ «Ընդհանուր գծերով,— եզրափակում է հեղինակը,— նախախորհրդային ժամանակաշրջանի հայ կերպարվեստը դեմոկրատական էր, ինտերնացիոնալ, ժամանակին համահնչյուն, ժողովրդի կյանքին ու ճակատագրին սերտորեն շաղկապված, քաղաքացիական հնչեղությամբ օժտված, առանձնահատկություններ, որոնք բարձրացրին նրա դերն ու նշանակությունը հասարակական կյանքում»[2]։

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 843։

[2] Նույն տեղը, էջ 865։



Մամուլին նվիրված հակիրճ ակնարկում ցույց է տրված, որ հայ մշակույթի ընդհանուր վերելքի հետ միասին աճում էր նաև պարբերական մամուլը։ Այդ աճն արդյունք էր կյանքի ընդհանուր զարգացման, հայ ժողովրդի բուռն զարթոնքի, հայկական գաղթօջախների ուժեղացման, քաղաքական կուսակցությունների առաջացման, դասակարգային պայքարի ծավալման։

Հայ պարբերական մամուլի պատմության մեջ նոր էջ է կազմում բոլշևիկյան մամուլը։

«Հայ ժողովրդի պատմության» VI հատորի մշակույթի բաժնի վերջին գլուխը նվիրված է գիտությանը՝ իր տարբեր ճյուղերով։ Սկզբում խոսվում է պատմագիտության մասին։ Ցույց են տրված այն ազդակները, որոնց շնորհիվ նշված ժամանակաշրջանում աստիճանաբար տիրապետող է դառնում բուրժուական պատմագիտական միտքը, որը նշանակալի դեր է խաղում հայ ժողովրդի պատմության կղերաֆեոդալական կոնցեպցիաները հաղթահարելու գործում։

Նշելով, որ դեռևս 1860—70-ական թվականներին հայ բուրժուական պատմագիտությունն ավելի շատ պահպանողական բնույթ ուներ և ինչ որ չափով կառչած էր մնում հին պատմագիտությունից, հեղինակը ցույց է տալիս, որ հաջորդ տասնամյակներում հատկապես լիբերալ-բուրժուական պատմագիտությունը ակնառու նվաճումների հասավ։ Արձագանքելով ժամանակի առաջադրած պահանջներին, հայ ժողովրդի ծավալվող ազգային-ազատագրական շարժումներին, գրում է հեղինակը, լիբերալ-բուրժուական պատմաբանները, ի տարբերություն պահպանողական պատմաբանների, սկսեցին քննադատական մոտեցում հանդես բերել հին հայկական աղբյուրների նկատմամբ և աշխատեցին նորովի վերլուծել պատմական փաստերն ու երևույթները։ Եթե պահպանողական պատմաբանները, գրված է հատորում, հատուկ ուշադրություն էին դարձնում ականավոր պատմական դեմքերի՝ թագավորների, զորավարների, կաթողիկոսների գործունեության լուսաբանմանը, ապա նրանք ուշադրություն դարձրին նաև սոցիալական հարաբերությունների ու ազատագրական շարժումների, հասարակական մտքի ու մշակույթի զարգացման հարցերին։ Փորձեր արվեցին ստեղծելու հայ ժողովրդի ամբողջական քննական պատմություն[1]։

[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, 882—883։

Չնայած դրան, նկատում է հեղինակը, թեև բուրժուական պատմագիտությունն զգալի գործ կատարեց նյութի կուտակման, հայ ժողովրդի պատմության առանձին պրոբլեմների մշակման ու լուսաբանման ուղղությամբ, այնուամենայնիվ այդ պատմագիտությունը չկարողացավ գիտական բացատրություն տալ հասարակական զարգացման ընթացքին, չտեսավ կամ չցանկացավ տեսնել պատմության հիմնական շարժիչ ուժի՝ ժողովրդական զանգվածների դերը, անտեսեց տնտեսական զարգացումը, դասակարգային պայքարը և այլն։ Հեղինակը նշում է հայ մարքսիստների կատարած հսկայական աշխատանքը պատմագիտության մեջ մարքս-լենինյան գաղափարախոսությունն արմատավորելու ուղղությամբ։ Մեր կարծիքով, այս ճիշտ բնութագրումից հետո պետք է վերջակետ դրվեր, որովհետև հազիվ թե հնարավոր է համաձայնվել նրա այն մտքին, թե «նրանք դրեցին գիտական պատմագրության հիմքերը»[1]։ Ստացվում է, որ մինչև հայ մարքսիստների հանդես գալը հայ պատմագիտությունը գիտական չի եղել։ Եթե այդպես է, ապա ինչով բացատրել, որ հեղինակը հայ մարքսիստներից առաջ եղած գրեթե բոլոր պատմաբաններին համարում է անվանի գիտնական, ականավոր գիտնական, գիտությանը նվիրված հայագետ և այլն։ Կարծում ենք, ճիշտ կլիներ գրել, որ նրանք դրել են հայ մարքսիստական պատմագրության հիմքերը։ Հարկ է նշել, որ հատորում ճիշտ է վերհանված հայ պատմաբանների ծառայությունները, արժեքավորված նրանց գիտական վաստակը։

Հատորում հաջող են շարադրված նաև գիտության մյուս ճյուղերը՝ հայագիտությունը, հնագիտությունը, ազգագրությունը, տնտեսագիտական և փիլիսոփայական միտքը, բնական գիտությունները։

Ինչպես ասվեց, վերոհիշյալ ընդհանրացնող աշխատություններից բացի, հայ մշակույթի հարցերի մասին հրապարակվել են նաև առանձին մենագրություններ։

Հայկական մշակույթի պատմության գիտական հետազոտության բնագավառում որոշակի վաստակ ունի պատմական գիտությունների թեկնածու Վ. Երկանյանը։ Նրա գրչին են պատկանում երկու մենագրություններ, որոնցից առաջինը նվիրված է

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 883։



Անդրկովկասում 1870—1905 թթ. հայ դպրոցի պատմությանը[1], իսկ երկրորդում շարադրված է հայկական մշակույթի պատմությունը XIX դարի սկզբից մինչև 1917 թվականը[2]։

Առաջին գրքում հանգամանորեն քննության են առնված հայ ժողովրդի արևելյան հատվածում տեղի ունեցած կրթալուսավորական շարժման հարցերը, լուսաբանվում են ազգային նոր դպրոցի կազմավորման ու նրա համար մղված հասարակական պայքարի խնդիրները։ Ինչպես ցույց է տալիս աշխատության վերնագիրը, նրանում հայ դպրոցի պատմությունը շարադրված է Անդրկովկասի մասշտաբով։ Եվ դա հասկանալի է, քանի որ բուն Արևելյան Հայաստանից բացի մեծ թվով հայեր ապրում էին Անդրկովկասի խոշոր կենտրոններում։ Հեղինակը ճիշտ է նկատել, որ նախորդ ժամանակաշրջաններում հայերի լուսավորական օջախները ստեղծվում և գործում էին հայրենիքից դուրս, օտար երկնակամարների տակ (Եվրոպական երկրներ, Հնդկաստան, Մոսկվա, Ղրիմ և այլն)։ Ազգային ինքնաճանաչողության խորացմանը զուգընթաց, գրում է նա, հայ լուսավորական գործիչները զգացին կրթությունը, դպրոցները ժողովրդի բնակության բուն շրջանին մոտեցնելու կենսական անհրաժեշտությունը և լայն պրոպագանդա ծավալեցին այդ ուղղությամբ։ Եվ պատահական չէ, որ հենց Անդրկովկասում են կենտրոնանում ազգային կրթական գործիչների հիմնական ուժերը։

Հանգամանորեն շարադրելով հայկական դպրոցական գործի ծավալումն ու զարգացումը Անդրկովկասում, Վ. Երկանյանը ցույց է տվել նաև հայ մանկավարժական մտքի զարգացումը, դրվատանքի խոսք ասել հայ առաջադեմ մանկավարժների մասին։ Աշխատության մեջ լուսաբանվում է ցարիզմի հակաժողովրդական, ռեակցիոն քաղաքականությունը հայ ազգային կրթության նկատմամբ, հատկապես 1880-ական թվականներին, ներկայացված է նաև հայ ժողովրդի պայքարը այդ քաղաքականության դեմ, որն առանձնապես մեծ ուժով բորբոքվեց 1903 թ. հունիսի 12-ի օրենքի առթիվ։

Վ. Երկանյանի մյուս աշխատությունը, ինչպես ասվեց,

1 Տե՛ս Վ. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870—1905), Եր., 1970։

2 Տե՛ս Վ. Երկանյան, Հայկական մշակույթը 1800—1917 թթ., Եր., 1982, նույնը՝ ռուս., Եր., 1985։

նվիրված է հայ մշակույթի պատմությանը։ Այն գիտահանրամատչելի բնույթ ունի և քանի որ այստեղ հարցերի ուսումնասիրման շրջանակը բավականաչափ լայն է, ուստի հեղինակը չի կարողացել խուսափել որոշ սխեմատիզմից։

Աշխատության սկզբում տրված է հայ նոր մշակույթի զարգացման ընդհանուր գծերի վերլուծությունը, մշակութային կենտրոնների ու օջախների պատմությունը և ապա ուրվագծված են հայ մշակույթի՝ լուսավորության, գրատպության, պարբերական մամուլի, գիտության, գրականության և արվեստի զարգացման ընդհանուր պատկերը։ Մենագրության վերջում հեղինակը հանգում է այն կարևոր եզրակացության, թե XIX դարի հայկական մշակույթն իր աստիճանական վերընթաց զարգացմամբ, արժեքների կուտակմամբ ամուր հիմք հանդիսացավ XX դարի առաջին երկու տասնամյակների ստեղծագործական խոշոր նվաճումների համար, որն իր հերթին նպաստեց հաջորդ շրջանի՝ սոցիալիստական մշակույթի ձևավորմանն ու վերելքին։

Հայ պարբերական մամուլի, դպրոցների, գիտության, գրականության ու արվեստի զարգացման պատմությունը համառոտակի շարադրել է նաև Վ. Պարսամյանը[1]։

Վ. Պարսամյանը նախ և առաջ նշում է, որ հայ ժողովուրդը, որը վաղնջական ժամանակներից ի վեր արարել էր համաշխարհային նշանակություն ունեցող կոթողներ, Թուրքիայի և Պարսկաստանի լծի տակ ընկնելով, զրկվել էր մշակութային իր հարուստ ժառանգությունը պահպանելու և զարգացնելու տարրական պայմաններից։ Անցյալ դարի սկզբներից, այնուհետև շարունակում է նա, մշակութային կյանքը նկատելիորեն աշխուժանում է հայկական գաղթավայրերում։

Հայ մշակույթի զարգացման համար նպաստավոր պայմաններ են ստեղծվում Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացումից հետո։

Այստեղ կարևոր դեր է խաղում ռուսական մշակույթի բարերար ազդեցությունը։ Ընդգծվում է Մոսկվայի, Պետերբուրգի, Նոր Նախիջևանի, Աստրախանի, Դորպատի, ինչպես նաև Թիֆլիսի և Կ. Պոլսի դերը որպես հայ մշակույթի զարգացման աջքի ընկնող կենտրոններ։ Չնայած կաթոլիկական դավանանքին, հայկական տպագրության, լեզվի, գրականության, գիտության

[1] Տե՛ս Парсамян В., История армянского народа, гл. VI, XIV:



ու արվեստի զարգացման գործում զգալի ներդրում ունեն նաև Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյան միաբանությունները։ Բարձր է գնահատվում նաև հնդկահայ գաղթօջախի դերը։

Գրքում որոշակիորեն ընդգծված է Մոսկվայի Լազարյան ճեմարանի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի և Էջմիածնի Գևորգյան ճեմարանի խաղացած դերը հայ ժողովրդի մտավոր զարգացման, նրա հասարակական-քաղաքական կյանքում։ Հայ մշակույթը XIX դարի երկրորդ կեսին աննախընթաց վերելք է ապրում, լուսավորության, գրականության և արվեստի ասպարեզներում ձեռք են բերվում խոշոր նվաճումներ։ Պատմաբանի կարծիքով, մշակույթի զարգացումը սերտորեն կապված էր հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքում առաջացած փոփոխությունների հետ։ «Ֆեոդալական հարաբերությունների քայքայումը և կապիտալիզմի զարգացումը, հայ բուրժուական ազգի կազմավորումը և ազգային-ազատագրական շարժումների վերելքը, դասակարգային պայքարի սրումը, տնտեսական, քաղաքական և կուլտուրական կապերի ընդլայնումն ու ամրապնդումը հարևան ժողովուրդների, Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի հետ,— այդ ամենը կարևոր նախադրյալներ հանդիսացան հայկական կուլտուրայի զարգացման համար»[1]։

Անցյալ դարի երկրորդ կեսի հայ հասարակական-քաղաքական մտքի ու մշակույթի զարգացման գործում հեղինակը նշում է նաև ռուսական և համաշխարհային առաջավոր մտքի, դասական գրականության, գիտության ու արվեստի բուռն վերելքի, ինչպես նաև հայկական մշակույթի հասարակական-քաղաքական աճող դերի նշանակությունը։ Հայ մշակույթի զարգացումը որոշակի նախադրյալների հետ է կապվում նաև հետագա ժամանակաշրջանում։

XIX դարի վերջին և XX դարասկզբին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, 1905—1907 թվականների հեղափոխությունը, առաջին համաշխարհային պատերազմը, հայ ժողովրդի Մեծ եղեռնը, փետրվարյան հեղափոխությունը իրենց կնիքն են դնում հայկական մշակույթի վրա, լայն արձագանք գտնում պարբերական մամուլի էջերում, գրականության և արվեստի մեջ։

Լազարյանների մշակութային գործունեությունը լուսաբան-

[1] Парсамян В., նշվ. աշխ., էջ 174։

ված է պրոֆ. Վ. Դիլոյանի «Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից» մենագրության մեջ։ Այստեղ շարադրված է Լազարյան ճեմարանի հիմնադրման ուշագրավ պատմությունը, վեր է հանված նրա դերը հայ իրականության մեջ։ Լազարյան ճեմարանը հայ իրականության մեջ առաջին անգամ ստեղծված լիարժեք դպրոց էր, բնույթով՝ աշխարհիկ, իսկ զարգացման համար ուներ նախապես մշակված իր հիմնական ուղղությունները։ Դրանք էին՝ դավանական և ազգային խտրականության բացառում, բնական գիտությունների և օտար լեզուների ուսուցում, դպրոցի աշխարհականացում և ուսուցման առաջավոր մեթոդների կիրառում։ Ճեմարանի պատմությունը, գրում է հեղինակը, առավել հետաքրքիր է այն տեսակետից, որ նրա հիմնադիրները, ֆեոդալական Ռուսաստանի ազնվականական վերնախավին պատկանելով հանդերձ, ստեղծեցին ուսումնական մի հաստատություն, ուր տեղ չուներ նրանց ապրած ժամանակաշրջանի համար այնքան բնորոշ դասային, ազգային և կրոնական անհանդուրժողականությունը։ Այնտեղ հավասարապես կրթություն էին ստանում հայ, վրացի և ռուս պատանիները՝ անկախ ազգային պատկանելությունից, իսկ դասավանդում էին տարբեր ազգությունների և դավանանքի պատկանող անձինք։ Աշխատությունում շարադրված է ոչ միայն ճեմարանի ուսումնական, այլև գիտական, գլխավորապես հայագիտական, հրատարակչական գործունեությունը, բացահայտված է նրա դերը հայ-ռուսական կապերի, հայ մշակույթի, հասարակական մտքի զարգացման գործում։

Հայկական մշակույթի պատմությունը ավել կամ պակաս չափով լուսաբանվել է նաև հայ գաղթավայրերի մասին գրված աշխատություններում՝ Ա. Աբրահամյանի երկհատորանոց մենագրության մեջ, «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի՝ հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված բաժիններում, ինչպես և գաղթօջախների մասին հրատարակված առանձին մենագրություններում։

Այսպես, Վ. Բարխուդարյանի Նոր Նախիջևանին նվիրված աշխատության մեջ ցույց է տրված, որ գաղթօջախում ստեղծվել էր բավական ինքնատիպ մշակույթ, որը նշանակալից երևույթ էր բովանդակ հայ կյանքում։ Նրա կարծիքով, գաղթօջախի մշակույթն իր բովանդակությամբ գերազանցապես հայկական էր, մանավանդ մինչև XIX դարի երկրորդ կեսը։ Դա բացատրվում է մայր հայրենիքից արգասավորվող կենսական կապերի գոյությամբ և հայաշատ այլևայլ վայրերի հետ ունեցած շփումներով[1], գրում է հեղինակը։

Աշխատության մեջ լուսաբանված է Նոր Նախիջևանի հայ գաղթօջախի դպրոցի և տպագրության վիճակը, ներկայացված են նրա մշակութային կապերը ռուսական կենտրոնների հետ։

Հետոեֆորմյան ժամանակաշրջանում (1861—1917 թթ.) Նոր Նախիջևանի հայկական գաղթօջախի մշակութային կյանքը լուսաբանված է Վ. Բարխուդարյանի մենագրության երկրորդ գրքում։ Այստեղ համակողմանիորեն բացահայտված է ռուսական դեմոկրատական մշակույթի բարերար ազդեցությունը հայ մշակույթի վրա, ընդգծված է ինչպես հասարակական, այնպես էլ մշակույթի ասպարեզում երկու նշանավոր հայրենակիցների՝ Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի խոշոր դերը։ Հանգամանորեն լուսաբանվում է կրթության, մամուլի, գրականության և արվեստի զարգացումը գաղթօջախում։

Վ. Միքայելյանի մենագրության մեջ պատշաճ տեղ է հատկացված ղրիմահայ գաղթավայրի մշակույթի պատմությանը։ Այստեղ հանգամանորեն խոսվում է ծխական դպրոցների, Խալիպյան ուսումնարանի, տպարանի, պարբերական մամուլի, ճարտարապետության և մշակույթի այլ բնագավառների մասին։ Հեղինակն իրավացիորեն ընդգծում է, որ ղրիմահայ մշակույթի բնութագիրը թերի կմնար, եթե, թեկուզ, համառոտակի չհիշատակվեն այն ներկայացուցիչները, որոնցից մի քանիսի ստեղծագործության համբավը դուրս է եկել հայկական, անգամ համառուսական շրջանակներից և ստացել միջազգային ճանաչում։ Այն հարցին, թե ինչո՞ւ փոքրաթիվ ղրիմահայության միջից ծնվեցին մշակույթի նշանավոր շատ գործիչներ, հեղինակը բացատրում է նպաստող երկու հանգամանքներով։ Նախ, ղրիմահայերը լայն հնարավորություններ ունեին մոտիկից հաղորդակցվելու մշակույթի ռուսական և եվրոպական կենտրոններին և հայ մշակութային օջախների, մասնավորապես Կ. Պոլսի և Թիֆլիսի հետ, և երկրորդ, որը հիմնական ազդակն էր, ղրիմահայ գաղթավայրը ավելի սերտորեն էր ներքաշվել կապիտալիստական հարաբերությունների մեջ, հանգամանք, որը չէր կարող թափ չհաղորդել նաև մշակույթի զարգացմանը։ Այնուհետև

[1] Տե՛ս Վ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 403։

հեղինակը կանգ է առնում ղրիմահայերից սերված արվեստագետներ Հ. Այվազովսկու, Ալ. Սպենդիարյանի, Քր. Կարա-Մուրզայի, Է. Մահտեսյանի, Հ. Նալբանդյանի ստեղծագործությունների վրա, խոսում է XIX դարում Ղրիմում գործող հայագետներ Մ. Բժշկյանի, Ք. Քուշնարյանի և ուրիշների մասին։

Հ. Թոփուզյանի մենագրության մեջ եգիպտահայ մշակույթի պատմությունը բաժանված է երեք շրջանի։

Խոսելով առաջին շրջանի մասին, նա գտնում է, որ այդ ժամանակաշրջանում եգիպտահայ մշակույթը բարձրացավ գաղութի սոցիալ-տնտեսական զարգացման համապատասխան մակարդակի վրա։ Աշխատության մեջ ցույց է տրվում դպրոցահասակ երեխաների կրթության և դաստիարակության ուղղությամբ կատարված առաջընթացը։ Այդ ժամանակաշրջանում է սկզբնավորվում եգիպտահայ պարբերական մամուլը։ Հիշատակության է արժանի եգիպտահայերի ստեղծած Մատենադարանը և գանձատունը (թանգարանը)։ Հեղինակն ընդգծում է, որ եգիպտահայերը նպաստել են նաև եգիպտական մշակույթի զարգացմանը, կերտել են ճարտարապետական հուշարձաններ, ինչպես նաև օգնության ձեռք են մեկնել տարբեր երկրների հայկական մշակութային հիմնարկներին։

Քննարկվող երկրորդ ժամանակաշրջանում, հեղինակի կարծիքով, Եգիպտոսը դարձավ գաղութահայ մշակութային խոշոր օջախներից մեկը։ Նա գտնում է, որ եգիպտահայ մշակույթի զարգացմանը հիմնականում նպաստում էին արևմտահայ մտավորականության այն ներկայացուցիչները, որոնք թուրքական հալածանքներից փախչելով ապաստանել էին Եգիպտոսում։ Սակայն, ավելացնում է նա, չպետք է անտեսել նաև արևմտյան մշակույթի ազդեցությունը, որի ծավալման և խորացման գործում դեր էին խաղում Եգիպտոսում մշտական բնակություն հաստատած բազմահազար եվրոպացիները։ «Նրանց դպրոցները,— գրում է Հ. Թոփուզյանը,— մամուլի օրգանները, հրատարակչությունները, թատրոնները, գրադարանները կարևոր դեր էին կատարում տեղական բնակչության մշակույթի մակարդակի բարձրացման գործում»[1]։

Բուլղարիայի, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների մշակութային կյանքը համառոտակի լուսաբանված է Զ. Ղասաբյանի և Հ. Թոփուզյանի՝ վերոհիշյալ գաղթօջախների պատմությանը նվիրված մենագրություններում։

Հայկական մշակույթի և հասարակական մտքի, գիտության տարբեր բնագավառների պատմությանն են նվիրված նաև բանասերների, գրականագետների ու արվեստաբանների[1], մանկավարժների[2], փիլիսոփաների[3] և այլոց աշխատությունները, որոնք լրացնում, հարստացնում են հայ ժողովրդի ամբողջական պատմությունը, մանավանդ նրա մշակութային կյանքի առանձին կողմերը։

***

Այսպիսով, խորհրդահայ պատմաբաններն անցած քսանհինգամյակում զգալի աշխատանք են կատարել հայ ժողովրդի նոր պատմության հիմնական պրոբլեմների լուսաբանման բնագավառում։

Լավ է հետազոտվել Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պատմությունը, ըստ ամենայնի վեր է հանվել միացման առաջադիմական նշանակությունը (Վ. Պարսամյան, Զ. Գրիգորյան, Գ. Գալոյան, Մ. Ներսիսյան և ուրիշներ)։ Հետազոտվել է ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը (Վ. Ռշտունի, Ս. Մարկոսյան, Հ. Ղազարյան, Ա. Համբարյան և ուրիշներ)։

---

[1] Հ. Թոփուզյան, նշվ. աշխ., էջ 183։



---

[1] Տե՛ս Հայ նոր գրականության պատմ., հ. V, Եր., 1964—1979։ Պ. Հակոբյան, Խաչատուր Աբովյան, Եր. 1967, Գ. Ստեփանյան, Ուրվագծեր արևմտահայ թատրոնի պատմ., հ. 2, Եր., 1969, հ. 3, 1975։ Մ. Մխիթարյան, XIX դարի երկրորդ կեսի արևելահայ մամուլի պատմությունից («Փորձ», «Արձագանք»), Եր., 1976, Ա. Արշարունի, Մոսկվայի հայ մամուլը, Եր., 1971, նույնի՝ Մոսկվայի համալսարանը և հայ առաջավոր մտավորականությունը, Եր., 1982, Григорян К., Из истории русско-армянских литературных и культурных отношений (X—начало XX вв.), 1974. Даронян С. М. Налбандян и русские революционные демократы, Е., 1980:

[2] Տե՛ս Գ. Նազիկյան, Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը, Եր., 1969, Ա. Իգնատյան, Լազարյան ճեմարան, Եր., 1969, Գ. Հարությունյան, Արևելահայ մանկավարժական միտքը XIX դարի երկրորդ կեսին, Ս. Խուդոյան, Արևելյան դպրոցները 1830—1920 թվականներին, Եր., 1987։

[3] Տե՛ս Հ. Գաբրիելյան, Հայ պատմափիլիսոփայական մտքի քննական տեսություն, Եր., 1976, Նույնի՝ Ազգերի և ազգային կուլտուրաների զարգացման օրինաչափությունները, Եր., 1973, Նույնի՝ Հայ փիլիսոփայության պատմ., Եր., 1976։

Քիչ չեն նվաճումները հայ ազատագրական շարժումների, հասարակական-քաղաքական հոսանքների, Հայկական հարցի և միջազգային դիվանագիտության (Ա. Գ. Հովհաննիսյան, Վ. Պարսամյան, Ռ. Հովհաննիսյան, Հ. Ղազարյան, Ծ. Աղայան, Ջ. Կիրակոսյան, Հ. Պողոսյան և ուրիշներ), ինչպես նաև հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման և հեղափոխական շարժումների պատմության հետազոտման ուղղությամբ (Խ. Բարսեղյան, Վ. Ավետիսյան, Գ. Գալոյան, Գ. Ղարիբջանյան և այլք)։

Մեծ աշխատանք է կատարվել առաջին համաշխարհային պատերազմի տարիների Հայաստանի պատմության լուսաբանման ուղղությամբ։ Համակողմանիորեն ու հարուստ փաստական նյութի հիման վրա մերկացվել է Թուրքիայի հայահալած և հայաջինջ քաղաքականությունը (Ջ. Կիրակոսյան, Մ. Արզումանյան, Ա. Հարությունյան, Ե. Սարգսյան, Ծ. Աղայան, Հր. Սիմոնյան և ուրիշներ)։

Գոհացուցիչ կարելի է համարել հայ գաղթավայրերի (Ա. Աբրահամյան, Վ. Բարխուդարյան, Վ. Միքայելյան, Հ. Թոփուզյան, Ս. Հովնանյան) կարևոր աղբյուրների հրատարակման (Մ. Ներսիսյան, Ջ. Կիրակոսյան) և հայ մշակույթի պատմության լուսաբանման ուղղությամբ կատարված աշխատանքը։

Մեր ուժերի ներածին չափ ցույց ենք տվել ինչպես կատարված դրականը, այնպես էլ թույլ տրված սխալները, վիճելի պրոբլեմները։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## Հոկտեմբերյան հեղափոխությունը և խորհրդային կարգերի հաստատումն ու ամրապնդումը Հայաստանում (1917—1921 թթ.)

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության պատմական հաղթանակով նոր դարաշրջան սկսվեց համաշխարհային պատմության մեջ։ «Բայց մենք իրավունք ունենք հպարտանալու և հպարտանում ենք նրանով,— գրել է հեղափոխության առաջնորդ Վ. Ի. Լենինը,— որ մեզ երջանկություն բաժին ընկավ սկսելու խորհրդային պետության կառուցումը, սկսելու դրանով համաշխարհային պատմության նոր դարաշրջան»[1]։

Հոկտեմբերյան հեղափոխությունը, Ռուսաստանում տապալելով կապիտալիստների ու կալվածատերերի տիրապետությունը, ազդարարեց ազգային-գաղութային ճնշման վերացումը, հռչակեց ազգային հավասարության սկզբունքը։

Հոկտեմբերյան հեղափոխությունը ինչպես աշխարհի շատ ժողովուրդների, այնպես էլ բազմաչարչար հայ ժողովրդի առջև բացեց նոր հորիզոններ։ Հայաստանի աշխատավորությունը խանդավառությամբ դիմավորեց հեղափոխության հաղթանակի լուրը և պայքարի ելավ հանուն խորհրդային կարգերի հաստատման։ Սակայն ներքին և արտաքին աննպաստ մի շարք հանգամանքների պատճառով խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում մի քանի տարով ուշացավ։ 1918—1920 թթ. Հայաստանում իշխանության գլուխ կանգնեցին դաշնակցականները։ Այդ տարիներին աշխատավորության վիճակը ավելի ծանրացավ։

Հայաստանի աշխատավոր զանգվածները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, Խորհրդային Ռուսաստանի

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 44, էջ 177։

(1917—1941)[1]։ «Հայ ժողովրդի պատմության» հիմքում հիմնականում ընկած են 1954—1960 թվականներին հրատարակված «Ուրվագծեր խորհրդային Հայաստանի պատմության» երեք պրակները[2]։ Հեղինակները լրացրել և բարելավել են նախկին շարադրանքը։ Հատորի պատրաստմանը ներգրավվել են նոր պատմաբաններ։ Այսպես, Հ. Էլչիբեկյանի և Ա. Հակոբյանի հետ միասին հատորի առաջին բաժնի զգալի մասը գրել է Գ. Գալոյանը։ Այն նվիրված է բարդ և իրադարձություններով հարուստ մի ժամանակաշրջանի՝ 1917—1921 թթ. պատմությանը։ Հեղինակները հանգամանորեն վերլուծել են Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Հայաստանում ստեղծված իրադրությունը, բացահայտել են Անդրկովկասի կոմիսարիատի և սեյմի ռեակցիոն քաղաքականությունը։ Հարուստ տվյալների հիման վրա ցույց է տրված Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի պատկերը, մասնավորապես աշխատավորության համար ստեղծված ծանր դրությունը։ Դաշնակցականների կառավարության արտաքին քաղաքականությանը նվիրված հատվածում հեղինակները նոր փաստերով բացահայտել են Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում անգլո-ամերիկյան իմպերիալիզմի նենգ գործունեությունը, դաշնակցականների և սպիտակգվարդիականների կապերը։

Հատորում հանգամանորեն շարադրված է 1917—1920 թթ. Հայաստանի հեղափոխական շարժումների և, հատկապես, Մայիսյան ապստամբության պատմությունը։

Ուշագրավ է, որ Գ. Գալոյանը օգտագործելով մինչ այդ հրատարակված աղբյուրներն ու գրականությունը, գիտական շրջանառության մեջ է դրել նոր տվյալներ և մի շարք հարցերի տվել նոր մեկնաբանություններ։

Հատորում շարադրված են 1920 թ. աշնան իրադարձությունները և մասնավորապես, խորհրդային կարգերի հաստատման պատմությունը։ Հայաստանում քաղաքացիական կռիվների պատ-

[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VII, Եր., 1967։

[2] «Ուրվագծերի» առաջին պրակի հեղինակներն են Հ. Էլչիբեկյանը և Ա. Հակոբյանը, երկրորդինը՝ Վ. Մելիքսեթյանը և Հ. Կարապետյանը, երրորդինը՝ Ծ. Աղայանը և Ե. Խալեյանը։



մությունը շարադրվել է հատորի 5-րդ գլխում (հեղինակ՝ Ա. Հակոբյան)։

«Հայ ժողովրդի պատմության» VII հատորի առաջին բաժնի հեղինակները, ի տարբերություն խորհրդահայ պատմագրության մեջ 1920—1930-ական թվականներին տեղ գտած սխալի, թե՛ մեթոդաբանական և թե՛ պատմաքաղաքական տեսակետից սկզբունքային ճիշտ մոտեցում են հանդես բերել՝ Հայաստանի 1917—1921 թթ. պատմությունը քննելով Ռուսաստանի և Անդրկովկասի պատմության ընդհանուր ֆոնի վրա։ Նրանք միանգամայն ճիշտ են, երբ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը դիտել են որպես Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակ նախկին ցարական Ռուսաստանի ծայրամասերից մեկում։ Այստեղ ևս նրանք համակողմանիորեն վեր են հանել Հոկտեմբերյան հեղափոխության բախտորոշ նշանակությունը հայ ժողովրդի կյանքում։ Հատորում պարզորոշ երևում է Խորհրդային Ռուսաստանի եղբայրական օգնությունը հայ ժողովրդին նրա մղած հերոսական պայքարում։

Սակայն հատորը զուրկ չէ թերություններից։ Այսպես, անբավարար են վերլուծված Արևմտյան Հայաստանի մասին Խորհրդային Ռուսաստանի ընդունած դեկրետի չիրականացվելու պատճառները, աղոտ է լուսաբանված Սարդարապատի հերոսամարտը։ Հատորում կան նաև բազմաթիվ սխալներ, որոնք, անտարակույս, առաջին հերթին հետևանք են լճացման տարիներին պատմության շատ հարցերի ճշմարտացի լուսաբանման գործում առկա արգելքների։ Այդպիսի հարցերից են, օրինակ, Արևելքի ժողովուրդների 1920 թ. սեպտեմբերին Բաքվում տեղի ունեցած առաջին համագումարի հակահայկական բնույթի բացահայտումը, 1921 թ. մարտի 16-ի խորհրդա-թուրքական պայմանագրի ծանր և անարդարացի լինելը հայ ժողովրդի համար, կուսակցության Անդրերկրկոմի 1921 թ. հուլիսի 5-ի անարդարացի որոշումը Լեռնային Ղարաբաղի մասին, Հայկական հարցում Ստալինի թուրքամետ քաղաքականությունը և այլն։

Հարկ է, որ մեր ժողովրդի պատմության վերոհիշյալ և հարակից հարցերը լուսաբանվեն նորովի՝ օգտվելով այսօր մեզ ընձեռած հնարավորությունից։

Կան նաև փաստական որոշ անճշտություններ[1]։

[1] 121-րդ էջում գրված է, որ դեկտեմբերի 4-ին հեղկոմի անդամները,

Հայ ժողովրդի 1917—21 թթ. պատմությունը շարադրված է նաև «Հայ ժողովրդի պատմություն» բուհական դասագրքի IV հատորում, որն ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը 1917 թվականից մինչև 1968 թվականը[1], և «Հայ ժողովրդի պատմության» բուհական նոր դասագրքում[2]։ 1917—1921 թթ. պատմությանն է նվիրված նաև Երևանի համալսարանի հրատարակած «Հայ ժողովրդի պատմության»[3] չորրորդ բաժնի 21-րդ գլուխը։ Չժխտելով նշված գրքի արժանիքները, հարկ ենք համարում կանգ առնել այդ ժամանակաշրջանի պատմությանը նվիրված հատվածի մի շարք սխալների ու թերությունների վրա[4]։

Նախ, ճիշտ չի վերնագրված գրքի 4-րդ բաժինը։ Այսպես, Հայաստանի հանրապետության ժամանակաշրջանի (1918—1920 թթ.) պատմությունը շարադրված է «Հայաստանը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն» խորագրի տակ։ 1917—1920 թթ. պատմությունը պետք է շարադրվեր առանձին բաժնում՝ «Հոկտեմբերյան հեղափոխությունը և խորհրդային

---

ապստամբները և նրանց օգնության եկած խորհրդային զորամասերը մտնում են Երևան, մինչդեռ խորհրդային զորամասերը Երևան են մտել ոչ թե դեկտեմբերի 4-ին, այլ 6-ին։ Խորհուրդների համառուսաստանյան VIII համագումարում Լենինը զեկուցումով հանդես է եկել ոչ թե 1920 թ. դեկտեմբերի 2-ին (էջ 122), այլ 22-ին։

1922 թ. նոյեմբերին Երևանում գումարվում է ոչ թե Հայաստանի գյուղացիական (էջ 187), այլ գյուղատնտեսական համագումար։ ՀԽՍՀ ժողկոմխորհի դեկրետը հրապարակվեց ոչ թե 1921 թ. հունիսի 20-ին (էջ 194), այլ հուլիսի 20-ին։ Ֆր. Նանսենը ոչ թե շվեդացի գիտնական է (էջ 234), այլ նորվեգացի։ Այդը լճի ջրհան կայանի գործարկումը տեղի է ունեցել ոչ թե 1929 թվականին (էջ 265), այլ 1927 թվականին։ 460-րդ էջում գրված է, որ 1932 թ. Հայաստանում գործում էր ավելի քան 470 գրադարան, մինչդեռ 466-րդ էջում ցույց է տրված 388։ 503-րդ էջում գրված է, որ 1924 թ. էկրան բարձրացավ «Խորհրդային Հայաստան» առաջին կինոակնարկը, մինչդեռ պետք է լինի 1925 թվականին։ 514-րդ էջում գրված է, որ հեղափոխական Ռուսաստանի նկարիչների ասոցիացիայի հայկական բաժանմունքը ստեղծվել է 1926 թվականին, մինչդեռ պետք է լինի 1927 թ. և այլն, և այլն։

[1] Տե՛ս Շ. Հարությունյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Եր., 1970։

[2] Տե՛ս Վ. Պարսամյան, Շ. Հարությունյան, Հայ ժողովրդի պատմություն (1801—1978), Եր., 1979։

[3] Հայ ժողովրդի պատմություն (խմբ.՝ պրոֆ. Մ. Ներսիսյան), Եր., 1972։

[4] Այդ մասին տե՛ս մեր քննադատական հոդվածը՝ «Լենինյան ուղիով», № 4, 1974։



կարգերի հաստատումը Հայաստանում» վերնագրով, 1920 թ. նոյեմբերից հետո եղած ժամանակաշրջանի համար թողնելով 4-րդ բաժնի վերնագիրը։ Չէ՞ որ Հայկական ԽՍՀ-ն ստեղծվել է հենց այդ ժամանակ։

Ինչպես նախորդ, այնպես էլ հետհոկտեմբերյան ժամանակաշրջանին հատկացված բաժնում լռության են մատնված մի շարք կարևոր իրադարձություններ, փաստեր։ Այստեղ, օրինակ, բոլորովին չի հիշատակված Հայկական գործերի կոմիսարիատը, որը մեծ դեր է խաղացել հայ աշխատավորությանը խորհրդային իշխանության շուրջը համախմբելու, թուրքական արյունոտ յաթաղանից մազապուրծ և Խորհրդային Ռուսաստանում ապաստանած հարյուր-հազարավոր հայ գաղթականությանը նյութական ու բարոյական օգնություն կազմակերպելու գործում։ Ոչ մի խոսք չի ասվում նաև Ռուսաստանում ապրող հայերի՝ Հոկտեմբերյան հեղափոխությանը և ներքին ու արտաքին թշնամիներից սոցիալիստական հայրենիքի պաշտպանությանը ակտիվ մասնակցելու մասին։ Հիշատակություն չկա նաև 1918 թ. սկզբներին ստեղծված Հայաստանի կոմունիստական կուսակցության մասին, որը նույնպես քաղաքական-պրոպագանդիստական լայն աշխատանք է ծավալել Ռուսաստանի և Կովկասի հայ գաղթականության շրջանում, եղել է Կոմինտերնի հիմնադիր 17 կուսակցություններից մեկը։

Հայտնի է, որ Հայաստանի հեղափոխական շարժումները, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը սերտորեն շաղկապված են եղել ամբողջ Անդրկովկասի հեղափոխական շարժումների, երկրամասում խորհրդային կարգերի հաստատման հետ, սակայն, խախտելով այդ միասնական, օրգանական ամբողջությունը, ցավոք, գրքում չի հիշատակվել նույնիսկ Բաքվի կոմունայի մասին, կոմունա, որը խորհրդային իշխանության միջնաբերդը, սոցիալիստական հեղափոխության փարոսն էր Անդրկովկասում։ Հայտնի է, որ Բաքվի կոմունայի ստեղծման համար, ի թիվս Անդրկովկասի մյուս ժողովուրդների, հերոսաբար պայքարում էին նաև հայ ժողովրդի զավակները։ Անկասկած, կոմունան շոշափում էր նաև հայ ժողովրդի շահերը։ Դուրս են մնացել նաև այնպիսի անուններ, ինչպես՝ Ստ. Շահումյան,

Ա. Ջափարիձե, Ի. Ֆիոլետով, Գ. Կորգանով, Ս. Օրջոնիկիձե, Ս. Կիրով, Ա. Միկոյան, որոնք աչքի ընկնող դեր են խաղացել Անդրկովկասում, այդ թվում Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման, Անդրկովկասի ժողովուրդների միջև համերաշխության ամրապնդման գործում։ Ավելին, հատորում չկան այնպիսի գործիչների անուններ, ինչպիսիք են հեղափոխության լեգենդար հերոս Ս. Տեր-Պետրոսյանը՝ Կամոն, Ռուսաստանում քաղաքացիական կռիվների զորավարներ Հ. Բժշկյանը՝ Դայը, Գ. Ոսկանյանը, հայկական գործերի կոմիսար, ականավոր հեղափոխական Վ. Ավանեսովը, նրա տեղակալ, կոմունիստ բանաստեղծ Վ. Տերյանը և շատ ու շատ ուրիշներ։

Այսքանից հետո տարօրինակ է հնչում գրքի նախաբանի այն վերապահումը, թե «նմանօրինակ աշխատության մեջ կլուսաբանվեն ժողովրդի պատմության միայն կարևոր էջերն ու դրվագները և բնականաբար շատ հարցեր, դեպքեր ու դեմքեր տեղ չեն գտնի նրանում»[1]։

Գրքում չափազանց աղոտ է լուսաբանված Հայաստանի հեղափոխական շարժումների պատմության վառ դրվագներից մեկը՝ Մայիսյան ապստամբությունը, ինչպես նաև Հայաստանում 1921 թ. քաղաքացիական կռիվների իրադարձությունները։ Ի դեպ, թերի և միակողմանի են ցույց տրված Մայիսյան ապստամբության պարտության պատճառները։

---

1 Հայ ժողովրդի պատմություն, էջ 6։ Հեղինակները այստեղ ևս հաշվի են առել մեր դիտողությունները։ Այսպես, եթե այնտեղ չկային Կամոյի, Դայի, Ավանեսովի, Վ. Տերյանի անունները, ապա ռուսերեն հրատարակության մեջ նրանք հիշատակված են մի քանի անգամ, նույնիսկ բերված է Վ. Տերյանից մի բանաստեղծություն։ Եթե հայերեն հրատարակության մեջ նույնիսկ չկային Բաքվի կոմունա, 26 կոմիսարներ բառերը և Ստ. Շահումյանի անունը՝ 1918 թ. պատմության մեջ, ապա այստեղ ավելի քան կես էջ է ավելացված Բաքվի կոմունայի մասին, նշելով ոչ միայն Շահումյանի, այլև Ջափարիձեի, Կորգանովի, Ֆիոլետովի անունները։ Մի քանի տեղ հիշատակված են նաև Օրջոնիկիձեի, Կիրովի և Միկոյանի անունները։



Գրքում անբավարար է վեր հանված Վ. Ի. Լենինի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում։ Աննշան տեղ է տրված Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման ու ամրապնդման համար մարտնչած Խորհրդային Ռուսաստանի 11-րդ բանակի ռազմական գործողություններին։ Վերոհիշյալ աշխատության մեջ չես գտնում կարմիր բանակի մարտիկներից և հրամանատարներից ոչ մեկի անունը՝ Վելիկանովի, Մալկաշանովի, Նեստերևի, Երմոլենկոյի, Յանիշևսկու, Կուրիշկոյի, Տոդորսկու և ուրիշների անունները։

Գրքում կան նաև փաստական սխալներ*։

---

* 446-րդ էջում գրված է. «Մայիսի 12-ին թուրքերը գրավեցին Սարդարապատի բերդը»։ Այստեղ երկու սխալ կա։ Նախ՝ ոչ թե մայիսի 12-ին, այլ 21-ին, և հետո ի՞նչ բերդի մասին է խոսքը։ XIX դարի սկզբին Երևանի սարդարի ժամանակ կառուցված բերդը վաղուց ավերակի էր վերածվել, ուստի ոչ մի բերդ գոյություն չուներ, որ թուրքերը գրավեին։ Պետք էր գրել Սարդարապատ գյուղը և ոչ թե բերդը։ 449-րդ էջում ասված է, որ 1919 թ. երկրում ցանքատարածությունը, 1913 թ. համեմատությամբ, կրճատվել էր 2,1 անգամ, մինչդեռ կրճատվել էր ավելի քան 4 անգամ։ 470-րդ էջում գրված է, թե 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին Մոսկվայում տեղի ունեցած խորհրդա-թուրքական կոնֆերանսին մասնակցում էր Խորհրդային Հայաստանի պատվիրակությունը Ա. Բեկզադյանի գլխավորությամբ։ Իրականում այդպիսի բան տեղի չի ունեցել, թուրքական պատվիրակությունը պատրվակ բռնելով այն, որ իբր՝ քանի որ Խորհրդային Հայաստանը անկախ պետություն չէ, կտրականապես դեմ դուրս եկավ այդ կոնֆերանսին հայկական պատվիրակության մասնակցությանը, որի պատճառով և այն չմասնակցեց կոնֆերանսին։ Այդ հարցում պակաս բացասական դեր չխաղաց նաև դաշնակցականների Փետրվարյան խռովությունը, որը շարամտորեն օգտագործվում էր թուրքական դիվանագիտության կողմից։ «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահ Ս. Վրացյանը հեռագրում է Մոսկվա, թե Ա. Բեկզադյանն իրավունք չունի հանդես գալու Հայաստանի անունից։

474-րդ էջում գրված է, թե 1921 թ. մայիսին Հայաստանի ժողկոմխորհի նախագահ է նշանակվում Ալ. Մյասնիկյանը, «որը մինչ այդ աշխատում էր Խորհրդային Բելոռուսիայում որպես հանրապետության կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահ»։ Մյասնիկյանը Բելոռուսիայում Կենտգործկոմի նախագահ է եղել 1919 թ. սկզբին։ Նույն տարվա գարնանից նա փոխադրվել է Մոսկվա և աշխատել կուսակցության Մուկվայի կոմիտեում, նախ՝ որպես ռազմական կազմակերպիչ, ապա՝ քաղկոմի քարտուղար։ 1920 թ. նա նշանակվում է Արևմտյան ռազմաճակատի քաղվարչության պետ՝ միաժամանակ մնալով որ-

Այժմ անդրադառնանք վերջին քառորդ դարում հայ պատմաբանների այն մենագրություններին, որոնք նվիրված են տվյալ ժամանակաշրջանի պատմության լուսաբանմանը։

## 1. Իրադրությունը Անդրկովկասում և Հայաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո

Այս խորագրի տակ քննության ենք առնելու խորհրդահայ պատմագրության մեջ լուսաբանված հետևյալ հարցերը՝ Անդրկովկասում Հոկտեմբերյան հեղափոխության ուշանալու պատճառները, Խորհրդային Ռուսաստանի կառավարության դեկրետը «Թուրքահայաստանի մասին», թուրքական հարձակումը Հայաստանի վրա, հայ ժողովրդի պայքարը թուրքական զավթիչների դեմ, Բաքվի կոմունան։

Ամենից առաջ նշենք, որ տվյալ ժամանակաշրջանին վերաբերող խորհրդահայ բոլոր պատմաբանների աշխատություններում ըստ արժանվույն վեր է հանված Հոկտեմբերյան հեղափոխության դերը, նրա բախտորոշ նշանակությունը ճնշված բոլոր ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի ազատագրական պայքարում։ Սակայն, ինչպես հայտնի է, Անդրկովկասում Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի ուշանալու պատճառների հարցը ոչ միայն խորհրդահայ, այլև Անդրկովկասի մյուս պատմաբանների կողմից վիճելի հարցերից մեկն է։ Հայտնի է, որ դեռևս 50-ական թվականներին այն գիտական մեծ բանավեճի առարկա դարձավ։ 1958 թ. դեկտեմբերին Բաքվում տեղի է ունեցել ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի պատմական գիտության բաժանմունքի և Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի ԳԱ պատմության ինստիտուտների միացյալ գիտական նստաշրջան՝ նվիրված Հոկտեմբերյան հեղափոխության պրոբլեմների ուսումնասիրությանը Անդրկովկասում[1]։ Նստաշրջանում մի շարք հարցերի շուրջ բանավեճ տեղի ունեցավ, որոնցից հիմնականը վերաբերում էր Անդրկովկասում հեղափոխական իրադրության առկայության և խորհրդային իշխանության հաղթանակի ուշացման պատճառներին։

Գիտական նստաշրջանում տրված զեկուցումներից, հաղորդումներից ու ելույթներից բացի, այդ հարցի շուրջ մամուլում տպագրվեցին մի շարք հոդվածներ[1]։ Բանավեճի մասնակիցների մի խումբ (Ա. Սուրգուլաձե, Ա. Հակոբյան և ուրիշներ) գտնում էր, որ 1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբներին երկրամասում զինված ապստամբության միջոցով իշխանությունը գրավելու և խորհրդային իշխանություն հաստատելու անհրաժեշտ պայմաններ չեն եղել երկրամասի տնտեսական հետամնացության, բանվոր դասակարգի սակավաթիվ և թույլ լինելու ու բնակչության ազգային խայտաբղետության պատճառով։ Ուստի, նրանց կարծիքով, ճիշտ է եղել ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի կողմնորոշումը հեղափոխության խաղաղ զարգացման վերաբերյալ։ Պատմաբանների մյուս խումբը (Լ. Խուրշուդյան, Ս. Կարապետյան, Ս. Խարմանդարյան և ուրիշներ), չժխտելով Անդրկովկասի սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները, գտնում է, որ 1917 թ. վերջին և 1918 թ. սկզբներին առկա էին բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանները իշխանությունը բոլշևիկների կողմից գրավելու համար։ Նրանք գտնում են, որ այդ նույն կարծիքին են եղել Լենինը, Շահումյանը և կուսակցության Կենտկոմը, սակայն բոլշևիկների երկրկոմի մեծամասնության սխալ քաղաքականության պատճառով ձեռքից բաց է թողնվել իշխանությունը գրավելու հարմար պահը։

Ստանալով իր վերջնական և սպառիչ լուծումը, այդ հարցը շարունակվեց արծարծվել պատմագրության մեջ նաև վերջին քսանհինգամյակում։

Գ. Գալոյանը, վեր հանելով Հոկտեմբերյան հեղափոխության նշանակությունը Անդրկովկասում ազգային հարցի լուծման

---

պես Մոսկվայի քաղկոմի քարտուղար։ 1920 թ. սկզբներին, մոտ 2 ամիս, նա աշխատում է որպես տրանսպորտի գլխավոր քաղվարչության պետ, որից հետո մոբիլիզացիոն կարգով ուղարկվում է Հայաստան։ Այսպիսով, Մյասնիկյանը Հայաստան է եկել ոչ թե Բելոռուսիայից, այլ Մոսկվայից։

1 Տե՛ս Լ. Խուրշուդյան, Գիտական սեսիա՝ նվիրված Հոկտեմբերյան հեղափոխության պրոբլեմների ուսումնասիրությանը Անդրկովկասում, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», № 3, 1959։ Иоффе А., Конференция историков в Баку, «Вопросы истории», 1959, № 6:

1 Տե՛ս Кольцов П., Родионов П., Хармандарян С., Церцвадзе Ш., Из истории коммунистической организации Закавказья, «Вопросы истории КПСС», 1962, № 6, Карапетян С., К вопросу о причинах задержки победы Октябрьской революции в Армении, «Известия» АН Арм. ССР, 1962, № 12: Այս մասին տե՛ս նաև մեր «Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում» մենագրությունը, էջ 399—402։

գործում և նշելով, որ երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունները գլխավորում էին խորհրդային իշխանության հաստատման համար մղվող պայքարը, անդրադառնում է նաև հաղթանակի ուշացման պատճառների հարցին։ «Սակայն խորհրդային իշխանության հաղթանակը Անդրկովկասում բազմաթիվ ներքին և արտաքին պատճառներով ուշացավ»[1], այդ պատճառով էլ, շարունակում է նա, Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից մինչև Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում խորհրդային իշխանության հաստատումը Անդրկովկասի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը բուրժուական նացիոնալիզմի և բանվորագյուղացիական հեղափոխության միջև գոտեմարտի բնույթ էր կրում։ Բուրժուաազգայնական կուսակցություններն ու նրանց իմպերիալիստական հովանավորները, որոնք ազգային թշնամանք էին բորբոքում ժողովուրդների միջև, ձգտում էին ջլատել երկրամասի աշխատավորության բանվորագյուղացիական միասնական ճակատը, սեպ խրել ազատագրված Ռուսաստանի պրոլետարիատի և բղկտված Կովկասի աշխատավոր զանգվածների միջև։

Պատմաբանի կարծիքով, Անդրկովկասում Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի ուշացման պատճառների մեջ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Հյուսիսային Կովկասի հակահեղափոխական զորափակով (կորդոն) երկրամասն անջատված էր Ռուսաստանից, իսկ հարավից Թուրքական զորքերն էին արշավում։ Անդրկովկասում, գրում է նա, տնօրինում էին ոչ միայն գերմանացիները, այլև անգլո-ամերիկյան և ֆրանսիական իմպերիալիստները, որոնք ձգտում էին նվաճել երկրամասը։ «Այդ բոլորը, ինչպես նաև երկրամասի բնակչության մանրբուրժուական կազմը բարդացրին դրությունը, ազգայնական հակահեղափոխությանը հնարավորություն տալով ժամանակավորապես ուժեղացնելու իր դիրքերը»[2]։

Ճիշտ է նկատել Գ. Գալոյանը, նշելով, որ Անդրկովկասում հեղափոխական իրադրությունն իր ժամանակին չօգտագործվեց, այսինքն՝ Թիֆլիսի զինանոցը, փաստորեն, մենշևիկներին տրվեց, կուսակցության երկրային կոմիտեում տեղի ունեցած տարաձայ-

[1] Галоян Г., Рабочее движение и национальный вопрос в Закавказье, с. 217.

[2] Նույն տեղը։



նությունների հետևանքով իշխանությունը զինված ճանապարհով վերցնելու հարցում վճռականություն հանդես չբերվեց, չօգտագործվեց հեղափոխական բանակը։

Հոկտեմբերյան հեղափոխության բախտորոշ դերը Անդրկովկասի ժողովուրդների վերածննդի գործում լուսաբանված է Գ. Գալոյանի մեկ այլ աշխատության մեջ[1], որը, փաստորեն, նրա «Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները» մենագրության տրամաբանական շարունակությունն է։ Այստեղ ցույց է տրված Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի Ռուսաստանին միանալու վերջնական բեղմնավոր արդյունքը, բազմակողմանիորեն ներկայացված է Հոկտեմբերյան հեղափոխության նշանակությունը նրանց սոցիալական ու ազգային զարթոնքի գործում, ընդգծված է ռուս ժողովրդի դերը այդ հարցում և այլն։

Անդրկովկասում Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի ուշացման պատճառների հարցը հանգամանորեն քննում է նաև Հ. Մելիքյանը[2]։

Անդրադառնալով այդ հարցին, նա հանգում է այն հետևության, որ բոլշևիկացման բուռն պրոցես ապրած Կովկասյան բանակը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, աշխատավորական զանգվածների աճող համակրանքի պայմաններում, պատրաստ էր երկրամասում պաշտպանելու սոցիալիստական հեղափոխության գործը։ Բազմաթիվ նոր փաստերով նա աշխատում է շտկել դեռևս շարունակվող այն թյուր կարծիքը, որով ծայրաստիճան նվազեցվում են Կովկասյան բանակում հեղափոխական շարժման մասշտաբներն ու թափը։ Այսպիսով, հակառակ մի շարք պատմաբանների, հեղինակը, հաշվի առնելով օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների առկայությունը, հիմնավորում է այն դրույթը, որ 1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբներին Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատման համար ստեղծվել էր ռեալ հնարավորություն, որ հենց այդ ժամանակ հեղափոխության կողմն անցած Կովկասյան բանակը, երկրամասի հեղափո-

[1] Տե՛ս Галоян Г., Октябрьская революция и возрождение народов Закавказья, М., 1977.

[2] Տե՛ս Հ. Մելիքյան, Հոկտեմբերյան հեղափոխությունը և Կովկասյան բանակը, Եր., 1970։

խական մյուս ուժերի հետ համագործակցած, ճիշտ ու համարձակ տակտիկայի կիրառման դեպքում կարող էր ապահովել հեղափոխության հաղթանակը երկրամասում։

Հիրավի, հեղափոխական բանակի խելացի օգտագործմամբ կարելի էր տապալել Անդրկովկասում հակահեղափոխական բլոկը և, ինչպես հեղինակն է գրում, «Հենվելով հեղափոխական Բաքվի, բոլշևիկյան բանակի, աշխատավորների աճող համակրանքի վրա, Թիֆլիսում և ապա ողջ երկրամասում հնարավոր կլիներ հաստատել խորհրդային իշխանություն»[1]։ Երկրամասում խորհրդային կարգերի հաստատումը կձախողեր անդրկովկասյան ռեակցիայի դիվային պլանները, երկրամասը ժամանակավորապես չէր անջատվի Խորհրդային Ռուսաստանից, հակահեղափոխության տապալումը Թիֆլիսում կնպաստեր Բաքվի խորհրդային իշխանության ամրապնդմանը, կկանխվեր Թուրքական վայրագ էքսպանսիան՝ ահա Հ. Մելիքյանի ճիշտ եզրահանգումը։

Սակայն Հ. Մելիքյանի մոտ առկա է երկրամասի տեղական առանձնահատկությունների թերագնահատման միտում։ Դժվար է համաձայնվել նրա այն մտքին, թե այդ նույն առանձնահատկությունները հիմնականում կային նաև 1920—1921 թվականներին։ Եթե այդպես է, ապա աշխատավորների հեղափոխական-ազատագրական շարժումը ինչո՞ւ հաջողությամբ պսակվեց[2]։ Մեր կարծիքով, 1920—1921 թթ. Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատման համար կային այնպիսի պայմաններ, որոնք չկային 1917-ին։ Դրանց մեջ հիմնականը Խորհրդային Ռուսաստանի, նրա զինված ուժերի եղբայրական օգնությունն էր, մի հանգամանք, որը 1917-ին գոյություն չուներ։

Քանի որ Հ. Մելիքյանի ինչպես այս, այնպես էլ 1975 թ. լույս տեսած «Հեղափոխական շարժումները Կովկասյան բանակում (1914—1918 թթ.)» մենագրության մեջ բացակայում է պրոբլեմի աղբյուրագիտությունն ու պատմագրությունը, հեղինակն այն քննարկել է առանձին գրքույկով[3]։

Այստեղ նա հանգամանորեն վերլուծում է իր աշխատության վերաբերյալ տասնամյակների ընթացքում հրատարակված աղ-

[1] Հ. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 587։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 588։

[3] Տե՛ս Меликян Г., Источниковедение и историография революционного движения в Кавказской армии в 1914—1918 гг., Е., 1972:



բյուրներն ու, հատկապես, գրականությունը։ Բարձր գնահատելով շատ հեղինակների կատարած գրական աշխատանքը պրոբլեմի լուսաբանման գործում, նա միաժամանակ կատարում է արժեքավոր դիտողություններ։ Հիմնական դիտողությունը վերաբերում է Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում ստեղծված իրադրության հարցին։ Նա չի ընդունում այն պատմաբանների կարծիքը, որոնք ժխտում են այդ ժամանակ հեղափոխական իրադրության առկայությունը և գտնում, որ հնարավոր չէր իշխանությունը զինված ապստամբության միջոցով գրավելը։

Մելիքյանը մերժում է Ֆ. Մախարաձեի այն կարծիքը, թե իբր բանակը չէր աջակցում իշխանությունը գրավելու գործին։ Հեղինակը քննադատական խիստ դիտողություններ է անում հատկապես Ռ. Մանուկյանի աշխատության վերաբերյալ[1], գտնելով, որ դրանում միանգամայն անբավարար են լուսաբանված զինվորների հեղափոխական շարժումների հարցերը փետրվարյան հեղափոխության ժամանակաշրջանում։ «Ռ. Մանուկյանի աշխատության մեջ,— գրում է նա,— կան սկզբունքային սխալներ, որոնք ելակետային նշանակություն ունեն»[2]։ Օրինակ, Հ. Մելիքյանը գտնում է, որ իրականությանը չի համապատասխանում Ռ. Մանուկյանի այն պնդումը, թե, իբր, Կովկասյան բանակի առաջին համագումարից հետո բոլշևիկները չենթարկվեցին համագումարի որոշումներին և շարունակեցին պահպանել բոլշևիկյան զինվորական կազմակերպությունները։ Ռ. Մանուկյանը չի բացահայտել բանակում բոլշևիկյան կազմակերպությունների թերությունները։ Հ. Մելիքյանը գտնում է, որ իր և Ռ. Մանուկյանի դրույթների միջև սկզբունքային տարբերությունը արտահայտվում է Անդրկովկասի բոլշևիկների համագումարի կողմից բոլշևիկների VI համագումարի, զինված ապստամբության, Կովկասում իշխանության գրավման մեթոդի, այդ հարցում Ստ. Շահումյանի գործելակերպի և այլ հարցերում։ Հ. Մելիքյանը, առարկում է Ռ. Մանուկյանին, որը անհիմն կերպով գտնում է, թե Ստ. Շահումյանը, ՌՍԴ(բ)Կ Կովկասյան առաջին համագումարը, հաշվի առնելով Կովկասի տնտեսական ու քաղաքական

[1] Տե՛ս Ռ. Մանուկյան, Բոլշևիկների հեղափոխական աշխատանքը Կովկասյան բանակում (1917 թ. փետրվար—1918 թ. փետրվար), Եր., 1969։

[2] Մ. Մելիքյան նշվ. աշխ., էջ 40։

պայմանները, տվյալ պահին կանգնած էին սոցիալիստական հեղափոխության խաղաղ զարգացման տեսակետին։

Հ. Մելիքյանի կարծիքով, Ռ. Մանուկյանը քննադատական մոտեցում չունենալով Սահմանադիր ժողովի ընտրությունների արդյունքների նկատմամբ, հանգում է այն սխալ եզրակացության, թե, իբր, «ռազմաճակատում գտնվող շարքային զինվորների բացարձակ մեծամասնությունը... հավանություն է տվել Անդրկովկասյան կոմիսարիատի կազմակերպմանը»[1]։ Պատմաբանը որոշ դիտողություններ է անում նաև Մ. Ցերցվաձեի, Ա. Սուրգուլաձեի, Լ. Խուրշուդյանի, Ն. Մախարաձեի, Գ. Ժվանիայի, Ա. Հարությունյանի և այլոց աշխատությունների վերաբերյալ։

Մ. Արզումանյանի մենագրության մեջ[2] ևս հանգամանորեն վերլուծված է իրադրությունը Անդրկովկասում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, ցույց է տրված, մի կողմից, բոլշևիկների պայքարը խորհրդային իշխանության հաստատման համար, իսկ մյուս կողմից՝ հակախորհրդային բլոկի ռեակցիոն գործունեությունը։ Մ. Արզումանյանը հիմնովին մտացածին, իրականությանը չհամապատասխանող, ուստի և հակագիտական ու վնասակար է համարում այն տեսակետը, թե, իբր, Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո Անդրկովկասում հեղափոխական իրադրություն չի եղել։ «Ամեն կարգի թշնամական գրչակները,— գրում է նա,— շատ են թուղթ մրոտել ապացուցելու, որ իբր Անդրկովկասում 1917—1918 թթ. հեղափոխական իրադրություն չկար, իբր այստեղ բացակայում էին հեղափոխության հաղթանակի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմանները։ Դրանով նրանք փորձում են վարկաբեկել բոլշևիկներին և ցույց տալ, որ իբր նրանք հաշվի չեն նստում պատմական զարգացման օրինաչափությունների հետ»[3]։

Անդրկովկասը երբեք չպետք է կտրել Ռուսաստանից, գրում է հեղինակը, որովհետև դրանք անբաժան են միմյանցից։ Ռուսական կայսրության շրջանակներում Անդրկովկասը, իր առանձնահատկություններն ունենալով հանդերձ, հիմնականում ապրել է ամբողջ երկրի կյանքով, որը 1916—1917 թվականներին հագեցված էր հեղափոխական իրադրությամբ։ Մ. Արզումանյանը գըտնում է, որ Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար կային բոլոր անհրաժեշտ նախադրյալները՝ հանձինս արդյունաբերական վայրերում ու կարևորագույն քաղաքներում (Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Ճիաթուրում, Ալավերդում, Ղափանում և այլուր) կենտրոնացած պրոլետարիատի, ազատագրական պայքարի մեջ ընդգրկված գյուղացիության և Կովկասյան բանակի, որի հիմնական մասը հեղափոխական էր։ Հենվելով այդ ուժերի վրա և ապավինելով Խորհրդային Ռուսաստանին, Անդրկովկասի բոլշևիկները վիթխարի աշխատանք ծավալեցին, և եթե նրանք 1917—1918 թվականներին չհասան լիակատար հաղթանակի, ապա դա ոչ թե այն պատճառով, որ երկրում հեղափոխության համար պարարտ հող չկար, այլ որովհետև ներքին հակահեղափոխական ուժերը միացան արտաքին ինտերվենտների հետ և հասան ժամանակավոր հաջողության։ «Եթե չլիներ օտարերկրյա իմպերիալիստների միջամտությունն ու օգնությունը,— գրում է նա,— ապա Անդրկովկասի հակահեղափոխական բլոկի իշխանությունը համեմատաբար կարճ ժամանակում կխորտակվեր Երկրամասի ժողովուրդների հարվածների տակ և դեռ 1917—1918 թվականներին այստեղ կհաղթանակեր խորհրդային իշխանությունը»[1]։

Սակայն այդ դեռ բոլորը չէ։ Վճռական պահին կուսակցության երկրային կոմիտեն կոպիտ սխալ թույլ տվեց։ Նա իշխանությունը գրավելու իր մինչ այդ ընդունած «անհիվանդագին ու խաղաղ ուղուն» հավատարիմ, չգնաց վճռական գոտեմարտի։ Բաքվից հետո Թիֆլիսում խորհրդային իշխանության հաստատումը, շարունակում է նա իր միտքը, բախտորոշ կլիներ սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար Անդրկովկասում։ Եվ այդ սխալը բխում էր երկրային կոմիտեի մեծամասնությունից (Ֆ. Մախարաձեի գլխավորությամբ), իսկ նրա փոքրամասնությունը՝ Ստ. Շահումյանի գլխավորությամբ, կանգնած էր ճիշտ ուղու վրա և պահանջում էր իշխանությունը գրավել զինված ճանապարհով[2]։

Անդրկովկասում հեղափոխական իրադրության առկայության և Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո խորհրդային իշխա-

---

1 Հ. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 46։

2 Տե՛ս Մ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, Եր., 1973։

3 Նույն տեղը, էջ 10։



1 Մ. Արզումանյան, նշվ. աշխ., էջ 16 (Ընդգծումը հեղինակինն է— Շ. Հ.)։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 17։

նության հաղթանակի ուշացման պատճառների հարցին անդրադարձել է Ծ. Աղայանը իր երեք աշխատություններում[1]։ Պատմաբանի կարծիքով, Հայաստանում, ինչպես նաև ամբողջ Անդրկովկասում, առկա էին բոլոր անհրաժեշտ պայմանները և ստեղծվել էր հեղափոխական իրադրություն խորհրդային կարգերի հաստատման համար։ Նա միաժամանակ ճիշտ է վերլուծում այն աննպաստ պայմանները, որոնց հետևանքով ձգձգվեց խորհրդային իշխանության հաղթանակը Անդրկովկասում։ Ծ. Աղայանը ևս գտնում է, որ եթե կուսակցության երկրային կոմիտեն ըստ էության ղեկավարեր Անդրկովկասի բանվորական և զինվորական զանգվածների հեղափոխական վերելքը, աջակցեր պատգամավորական ժողովին, ապահովեր արսենալի պաշտպանությունը, ապա բոլշևիկները բոլոր հնարավորությունները կունենային հաղթանակի համար։

Խորհրդահայ պատմագրության մեջ քիչ աշխատանք չի կատարվել Խորհրդային Ռուսաստանի կառավարության լենինյան ազգային քաղաքականության լուսաբանման և, մասնավորապես, «Թուրքահայաստանի» դեկրետի գիտական վերլուծության ուղղությամբ։

Վերջին քսանհինգամյակում այդ հարցին առաջինը անդրադարձել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Ալիխանյանը իր մենագրության մեջ[2]։

Խորհրդային Ռուսաստանի կառավարության դեկրետը «Թուրքահայաստանի մասին» նա իրավացիորեն բնութագրել է որպես հայ ժողովրդի նկատմամբ կոմունիստական կուսակցության և խորհրդային կառավարության հոգատարության վառ արտահայտություններից մեկը։

Այդ հարցը շոշափվում է Գ. Գալոյանի մի շարք աշխատություններում։ Շարադրելով դեկրետի հիմնական բովանդակությունը, պատմաբանը միաժամանակ ցույց է տվել դեկրետի չիրականացման պատճառները։ Այդպիսիք նա համարում է Կովկասյան ռազմաճակատի հակահեղափոխական հրամանատարությունը դիրքորոշումը, որը, առանց հայերի համար դեկրետով սահմանված անձի և գույքի ապահովման, կարգադրեց ռուսական զորքերի դուրսբերումը Արևմտյան Հայաստանից և Անդրկովկասի կոմիսարիատի հակահեղափոխական դիրքը, որը ոչ մի քայլ չկատարեց դեկրետի կենսագործման ուղղությամբ։ Պատճառներից մեկն էլ Գ. Գալոյանը համարում է այն, որ Խորհրդային Ռուսաստանն այն ժամանակ դեռ Գերմանիայի հետ հաշտություն չէր կնքել և իրական հնարավորություն չուներ կանխելու ռուսական զորքերի անժամանակ դուրսբերումը Արևմտյան Հայաստանի սահմաններից, ինչպես և թուրքական զորքերի մուտքը այդ տերիտորիան[1]։

Ա. Մնացականյանի «Լենինը և ազգային հարցի լուծումը ԽՍՀՄ-ում» արժեքավոր մենագրության[2] մեջ ուշագրավ էջեր կան նաև հայ ժողովրդի, Հայաստանի մասին։ Հեղինակը հանգամանորեն անդրադարձել է նաև Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի 1917 թ. դեկտեմբերի 29-ի «Թուրքահայաստանի մասին» դեկրետին։ Նա քննադատում է Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների որոշ ղեկավար գործիչների, որոնք սխալներ էին թույլ տալիս ազգային հարցում։ Հեղինակը մասնավորապես նշում է, որ բոլշևիկների կուսակցության երկրային կոմիտեն ոչ միայն շարձագանքեց «Թուրքահայաստանի» ինքնորոշման մասին լենինյան դեկրետին, այլ, ընդհակառակը, անտեսեց Ժողկոմխորհի դեկրետը և պահանջեց այն չեղյալ հայտարարել[3]։ Այնուհետև Ա. Մնացականյանը արդարացիորեն նշում է, որ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները ևս 1917—1920 թթ. թերագնահատում էին ազգային հարցի, առանձնապես թուրքական ագրեսիայի առաջ հայ ժողովրդի դեմոկրատական ուժերի միացյալ ազգային-հեղափոխական ճակատի ստեղծման անհրաժեշտությունը։ Նրանք անարդարացիորեն առաջին պլան մղեցին աշխատավորության սոցիալական ազատագրության հարցը, անտեսելով հայ ժողովրդի համազգային խնդիրները։

Պատմաբանը սխալ է համարում այն, որ Անդրկովկասի բոլ-

[1] Տե՛ս Ծ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, В. И. Ленин и создание закавказских советских республик, Е., 1976, Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Եր. 1982։

[2] Տե՛ս Ս. Ալիխանյան, Խորհրդային Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917—1921 թթ.), Եր., 1964, էջ 26։



[1] Տե՛ս **Галоян Г.**, Рабочее движение и национальный вопрос в Закавказье, էջ 227—228։

[2] Տե՛ս **Мнацаканян А.**, Ленин и решение национального вопроса в СССР, Е., 1970։

[3] Տե՛ս Мнацаканян А., նշվ. աշխ., էջ 168։

շևիկների ղեկավար գործիչները բոյկոտի էին ենթարկում հայ ազգային-դեմոկրատական կազմակերպությունները, խորհրդակցությունները, արևմտահայ գաղթականների համագումարը։ Նրա կարծիքով, կոպիտ սխալ էր բոլշևիկյան Թիֆլիսի կոմիտեի բանաձևը՝ 1917 թ. սեպտեմբերին հրավիրված հայկական ազգային համագումարին չմասնակցելու մասին։ Չէ՞ որ այնտեղ պետք է քննվեին պատերազմը դադարեցնելու, արևմտահայերի ծանր վիճակի և նրանց օգնություն ցույց տալու, հողային, ազգային հարցերը, Հայաստանի անկախության վերականգնման պահանջը և այլն, հարցեր, որոնք առաջնակարգ նշանակություն, համադեմոկրատական բնույթ ունեին, որոնցով շահագրգռված էին բոլոր ազգային դեմոկրատական ուժերը։ «Նման քաղաքականությունը,— գրում է նա,— չէր համապատասխանում լենինյան այն սկզբունքին, որ աշխատավորության սոցիալական ազատագրումը օրգանապես կապված է համադեմոկրատական և համազգային այնպիսի հարցերի լուծման համար մղվող պայքարի հետ, ինչպիսիք են պատերազմից դուրս գալը, ագրարային հարցը, ազգային հարցը»[1]։

Խորհրդային Ռուսաստանի կառավարության «Թուրքահայաստանի մասին» դեկրետի նախապատրաստման, նրա բովանդակության և չկենսագործվելու հարցերին ավելի հանգամանորեն անդրադարձել է Մ. Արզումանյանը իր «Արհավիրքից վերածնունդ» աշխատության մեջ։ Այստեղ պատասխաններ են տրված այն հարցերին, թե ինչո՞ւ խորհրդային կառավարությունը չէր կարող ռուսական զորքերը պահել Արևմտյան Հայաստանում, ինչո՞ւ հենց սկզբից խորհրդային կառավարությունը չպահանջեց Արևմտյան Հայաստանը կցել Ռուսաստանին, ինչո՞ւ դեկրետում խոսվում է հայ ժողովրդի դեպուտատների խորհրդի և ոչ թե, ասենք, բանվորների, գյուղացիների ու զինվորների կամ ընդհանրապես աշխատավորների դեպուտատների խորհուրդների մասին և այլն։ Մ. Արզումանյանը փորձում է հիմնավորել նաև դեկրետի մշակմանը Ստ. Շահումյանի ակտիվ մասնակցության հարցը, «մի հանգամանք,— ինչպես գրում է նա,— որ զարմանալիորեն շրջանցվում է պատմական գրականության մեջ»[2]։

Պատմաբանի կարծիքով, «եթե խորհրդային իշխանությունը

[1] Мнацаканян А., նշվ. աշխ., էջ 170։

[2] Տե՛ս Մ. Արզումանյան, նշվ. աշխ., էջ 37։



Անդրկովկասում հաղթանակեր 1917—1918 թվականներին, իսկ դրա նախադրյալները կային, ապա կլուծվեր նաև Հայկական հարցը։ Ռուսական բանակի կողմից Թուրքական արյունոտ լծից ազատագրված Արևմտյան Հայաստանը կիրականացներ իրեն վերապահված ինքնորոշման իրավունքը, կմիանար Արևելյան Հայաստանին, և կստեղծվեր ամբողջական Խորհրդային Հայաստան»[1]։

1917—1918 թթ. Հայկական հարցի լուծման ուղղությամբ Խորհրդային Ռուսաստանի գործադրած ջանքերը լուսաբանվել են պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Խուրշուդյանի աշխատության մեջ[2]։

Ինչպես ասվեց, այդ մասին քիչ չի գրվել, սակայն պատմաբանը փորձել է մեր ժողովրդի այդ ժամանակաշրջանի պատմության որոշ հարցեր լուսաբանել նորովի։

Աշխատության առանցքային հարցը ՌԽՖՍՀ ժողկոմխորհի «Թուրքահայաստանի մասին» դեկրետն է։ Ինչպես հայտնի է, այդ դեկրետը Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո առաջին պաշտոնական փաստաթուղթն է, ուր արծարծվում է Հայկական հարցը։ Աշխատության մեջ հեղինակը հանգամանորեն շարադրում է դեկրետի նախապատրաստման և ընդունման պատմությունը և կատարում մի շարք կարևոր ճշգրտումներ։

Աշխատելով պարզել, թե հայկական շրջանները ինչ վերաբերմունք և մասնակցություն են ցույց տվել «Թուրքահայաստանի մասին» դեկրետի մշակման և կոնկրետացման գործում, Լ. Խուրշուդյանը, հենվելով Պ. Մակինցյանի հայտնի հոդվածի վրա, քննադատության է ենթարկում Ալ. Խատիսյանին, որը այդ հարցում խառնում է դեմքերն ու դեպքերը, շփոթում և կեղծում է պատմական փաստերը, անհարկի ընդգծում իր մասնակցությունը այդ գործում և կամ միտումնավոր բարձրացնում Զավարյանի դերը։ Հեղինակը միաժամանակ գտնում է, որ Մակինցյանը ևս, որը Կովկասի քաղաքական իրադարձությունների ներքին անցուդարձերի ակտիվ մասնակիցներից է եղել, սխալվում է, միայն Վ. Տերյանին համարելով դեկրետի հեղինակ։ Հայտնի է, որ մեր պատմական գրականության մեջ վերջին տարիներին հի-

[1] Մ. Արզումանյան, նշվ. աշխ., էջ 194։

[2] Տե՛ս Լ. Խուրշուդյան, Խորհրդային Ռուսաստանը և Հայկական հարցը, Եր., 1977։

շատակվում էին նաև այլ անուններ՝ դաշնակցական Ստ. Զորյան, ձախ էսէռ Պ. Պոռշյան և այլն, սակայն պատմաբանը, նշելով իր ժամանակին արված Բ.Բորյանի ակնարկը այդ դեկրետի գործում Ստ. Շահումյանի մասնակցության մասին, կրկին առաջ է քաշում այդ հարցը, ընդգծում հայ լենինյանի դերը այդ և ընդհանրապես Հայկական հարցի լուծման գործում։

Լ. Խուրշուդյանի աշխատության մեջ հիմնավորում է ստացել այն հարցը, թե ինչու խորհրդային կառավարության դեկրետում պետք է հիշատակվեր ռուսական զորքերի դուրսբերման մասին։ «Եթե նրանում նշվեր,— իրավացիորեն գրում է հեղինակը,— որ արևմտահայությունը ստանում է անկախության իրավունք և ռուսական զորքերը մնում են Արևմտյան Հայաստանում, թեկուզ հայերին պաշտպանելու պատրվակով, միևնույն է, այն չէր հասկացվի։ Աշխարհի ժողովուրդները ոչ մի կերպ չէին ըմբռնի, չէին հասկանա «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, այն կհամարեին խարեություն, հայկական տերիտորիաների զավթում, եթե դեկրետում նշվեր, որ ռուսական զորքերը դուրս չեն բերվելու այդ երկրի սահմաններից»[1]։

Գրքում հանգամանորեն խոսվում է նաև դաշնակցականների և բոլշևիկների միջև Թիֆլիսում տեղի ունեցած բանակցությունների մասին, մի հարց, որը մինչ այդ շատ աղոտ է լուսաբանված պատմագրության մեջ։

Անդրադառնալով Հայկական հարցի պատմությանը Բրեստի հաշտության ժամանակաշրջանում, հեղինակը ցույց է տալիս Թուրքիայի նվաճողական քաղաքականության դեմ Հայաստանի պաշտպանության գործում Խորհրդային Ռուսաստանի թափած ջանքերը, որոնք, սակայն, ապարդյուն են անցնում։

Լ. Խուրշուդյանի աշխատության վերաբերյալ ունենք հետևյալ դիտողությունը։ Գրված լինելով ավելի քան 10 տարի առաջ, նրա մեջ բնականաբար երևում է խորհրդահայ պատմագրության մեջ ժամանակին իշխած այն սխալ մոտեցումը, երբ տեղին, թե անտեղի դաշնակցությունը խիստ քննադատության էր ենթարկվում։ Բացի դա, պետք է նշել, որ հեղինակը աշխատության 99-րդ էջում մեջբերում է կատարել «ԽՍՀՄ արտաքին քաղաքականության փաստաթղթեր» ժողովածուից, ընդգծելով

1 Լ. Խուրշուդյան, նշվ. աշխ., էջ 45։



այն տեղը, որը փաստական տեսակետից սխալ է։ Այնտեղ ասված է. «Սակայն 1918 թ. սկզբին Հայաստանում իշխանության գլուխ եկած դաշնակցականները ոչ մի քայլ չարեցին Ժողկոմխորհի դեկրետում նշված միջոցառումները իրականացնելու ուղղությամբ»։ Հայտնի է, որ Հայաստանում դաշնակցականները իշխանության գլուխ են անցել ոչ թե 1918 թ. սկզբին, այլ կեսերին, երբ արդեն մինչ այդ ռուսական բանակը դուրս էր եկել Արևմտյան Հայաստանից և Թուրքերն ամբողջությամբ այն գրավել էին, իսկ գարնանը մտել Անդրկովկաս։

Անդրկովկասում Խորհրդային Ռուսաստանի կառավարության առաջին դեկրետների արձագանքների մասին է պատմում պրոֆ. Ա. Հարենցի աշխատությունը[1]։

Խորհրդային իշխանության հաստատման պատմությանը նվիրված աշխատություններում թեև մասնակիորեն շոշափվել է 1917—1918 թթ. Հայաստանի խորհուրդների գործունեությունը, սակայն նրանց ամբողջական պատմությունը գիտահետազոտական ուսումնասիրության առարկա է դարձել պատմական գիտությունների թեկնածու Մ. Նիկողոսյանի կողմից[2]։ Հեղինակը, պատմելով Հայաստանում խորհուրդների ստեղծման մասին, կոնկրետ փաստերով ցույց է տվել էսէռների, մենշևիկների և դաշնակցականների ծավալած գործունեությունը խորհուրդներում և վեր հանել այն պայքարը, որ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո մղում էին Հայաստանի բոլշևիկները հանուն խորհրդային իշխանության հաստատման։

Խորհրդահայ պատմաբանները լուսաբանել են նաև 1918 թ. Թուրքական հարձակումը Հայաստանի վրա և վեր հանել հայ ժողովրդի պայքարը Թուրքական զավթիչների դեմ։ Այդ գործում նախ և առաջ պետք է հիշատակել պատմական գիտությունների թեկնածու Հ. Թուրշյանի մենագրությունը, որի մեջ 1917—1918 թթ. Անդրկովկասում ծավալվող իրադարձությունների ֆոնի վրա շարադրված է Սարդարապատի հերոսամարտի պատմությունը[3]։

Սարդարապատի ճակատամարտը նա իրավամբ համարում է հայ ժողովրդի ազատագրական պայքարի փայլուն էջերից մեկը,

1 Տե՛ս Ա. Հարենց, Հոկտեմբերյան լենինյան դեկրետները և նրանց արձագանքները Անդրկովկասում, Եր., 1969։

2 Տե՛ս Մ. Նիկողոսյան, Խորհուրդները Հայաստանում, Եր., 1968։

3 Տե՛ս Հ. Թուրշյան, Սարդարապատի հերոսամարտը, Եր., 1965։

ժողովրդական պատերազմ, ցույց տալով ժողովրդական բոլոր խավերի մասնակցությունը հերոսական այդ պայքարին։

Սարդարապատը բախտորոշ գոյամարտ էր, իրավացիորեն գրում է հեղինակը, հայ ժողովրդի կենաց ու մահվան կռիվ։ Երեք տարի առաջ թուրք դահիճները կոտորել էին հայ ժողովրդի ամբողջ կեսը, այսօր եկել էին վերջ տալու նրա երկրորդ կեսին։ «Ինքնապաշտպանության գերագույն մղումով,— այնուհետև գրում է նա,— ոտքի էին ելել հայ ժողովրդի բոլոր դասերն ու դասակարգերը, հոսանքներն ու կուսակցությունները»[1]։

Հեղինակը կանգ է առել նաև Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերի վրա, վեր հանել հայ զորքի ու, հատկապես, հայ աշխարհազորայինների քաջագործությունները մայր հայրենիքի համար մղած անհավասար մարտերում։

Սակայն Հ. Թուրշյանի աշխատության մեջ կան բազմաթիվ անճշտություններ և սխալ գնահատումներ։ Այսպես, չի կարելի համաձայնվել նրա այն կարծիքին, թե, իբր, Սարդարապատի ճակատամարտը տարերայնորեն սկսվեց, որ «մեկ օրվա ընթացքում հայ ժողովուրդը հիմնովին կերպարանափոխվեց։ Ստրկական երկյուղով բռնված երեկվա վհատ նահանջողը և դասալիքը դարձան հաղթանակի հավատով տոգորված ռազմիկ ու հարձակվող»[1]։ Կարծում ենք, որ անհիմն է գեներալ Սիլիկովին տված նրա խիստ բացասական գնահատականը և այլն։ «Իմ խորին համոզմամբ,— գրել է Խորհրդային Միության մարշալ Հ. Բաղրամյանը,— այդ ժամանակաշրջանի բոլոր հայ գեներալներից Սիլիկովն ավելի շնորհալի զորապետ էր»[2]։ Մեկ այլ տեղ նա գրում է. «Եվ ահա ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական տեսակետից անսահման բարդ պայմաններում այդ զորապետը ընդունել է միակ ճիշտ, բազմակողմանիորեն մտածված, առանց չափազանցության, տաղանդավոր որոշում՝ զորքը և բոլոր նրանք, ովքեր ընդունակ են զենք կրելու, ոտքի հանել հանուն հայկական բազմադարյան պետության հիմնական տերիտորիայի անձնազոհ պաշտպանության թուրքերի բարբարոսական հարձակումից»[3]։

Հ. Թուրշյանի գրքի քննադատությամբ մամուլում հանդես եկավ ճակատամարտի մասնակից, 5-րդ մահապարտ գնդի դասակներից մեկի հրամանատար Մ. Մարտիրոսյանը[1], իսկ շուրջ 10 տարի հետո՝ պրոֆ. Ա. Հարությունյանը[2]։ Մ. Մարտիրոսյանի դիտողությունները վերաբերում են ռազմական գործողությունների սխալ մեկնաբանություններին։ Խոսելով մարտերից մեկի նկարագրության մասին, հոդվածագիրը գրում է. «Այս պատմությունը լրիվ հնարված է։ Այստեղ ոչ մի ճիշտ բան չկա»։ Մեկ այլ տեղ գրում է. «Սարդարապատի ճակատամարտի ռազմական գործողությունները քմահաճորեն նկարագրելուց հետո Թուրշյանն անում է այնպիսի արտառոց եզրակացություններ, որ զարմանքից ուսերդ ես թոթվում» կամ՝ «Եթե այդ բոլորը զրպարտություն չեն հայ ժողովրդին վարկաբեկելու համար, ապա մաքուր հեքիաթ է՝ Թուրշյանի կողմից հնարված»։ Ժխտելով Թուրշյանի կողմից առաջ քաշած ճակատամարտում տեղացիների և գաղթականների միջև եղած հակամարտության մասին միտքը, Մ. Մարտիրոսյանը գրում է, որ «այդ տգեղ, զավեշտական հեքիաթներով թող Թուրշյանը չթունավորի այդ սրբազան ճակատամարտի պատմության էջերը» և այլն[3]։

Մ. Մարտիրոսյանը իրավացիորեն քննադատում է Հ. Թուրշյանին նաև գեներալ Սիլիկովին տված սխալ գնահատականի համար։

Հ. Թուրշյանի գրքի վերաբերյալ Ա. Հարությունյանը գրել է հետևյալը. «Հ. Թուրշյանը, ձեռքի տակ ունեցած աղքատիկ փաստացի նյութերով և, ամենակարևորը, կանխավ ունեցած միտումնավոր և ոչ ճիշտ դիրքորոշումով չէր կարող ընթերցողին ներկայացնել պատմական ճշմարտությանը մոտիկ աշխատություն»[4]։ Թեև խիստ, բայց հիմնականում ճիշտ է ասված։ Մեր խնդիրն է, գրում է հոդվածագիրը, համառոտակի ներկայացնելով Սարդարապատի ճակատամարտին նախորդող ռազմաքաղաքական իրադարձությունների նկարագիրը, կռվող ուժերի փոխհարաբերությունը, Հայկական կորպուսի զորքի դերը, նշել Հ. Թուրշյանի մեղանչումները պատմական ճշմարտության դեմ։

Ա. Հարությունյանը Հ. Թուրշյանի գրքի հիմնական արատը համարում է նրա այն միտումը, որ, իբր, ճակատամարտը շա-

1 Հ. Թուրշյան, նշվ. աշխ., էջ 141։

2 Баграмян И., Мои воспоминания, Е., 1979, с. 90.

3 Նույն տեղը, էջ 91։



1 Տե՛ս Մ. Մարտիրոսյան, Սարդարապատի ճակատամարտը, ԲՀԱ, 1969, № 1։

2 Տե՛ս Ա. Հարությունյան, Պատմական ճշմարտությունը Սարդարապատի ճակատամարտի մասին, ԲՀԱ, 1978, № 3։

3 Տե՛ս Մ. Մարտիրոսյան, նշվ. հոդվածը, էջ 156, 160, 163—164։

4 Ա. Հարությունյան, նշվ. հոդվածը, էջ 96։

հել է անկազմակերպ, տարերայնորեն ոտքի ելած ժողովուրդը և ոչ բանակը, որ նա տեղի-անտեղի հոլովում է գեներալներ Նազարբեկովի, Սիլիկովի և տասնյակ այլ հայ սպաների անունները, որոնք, իբր, զբաղված էին անպատեհ խնջույքներով, խորհրդակցություններով կամ միայն փախչում էին մարտի դաշտից։ Անշուշտ, գրում է հոդվածագիրը, և՛ հոգևորականներն են մասնակցել կռվին, և՛ տարերայնորեն որոշ թվով գյուղացիներ են զենքի դիմել, սակայն Հ. Թուրշյանն այդ ամենը վկայում է, իսկ երբեմն՝ հնարում, միայն նրա համար, որպեսզի ցույց տա, որ գեներալներ Նազարբեկովը, Սիլիկովը, հայ բազմաթիվ գնդապետներ ու այլ սպաներ տհաս էին, անճարակ, անտաղանդ և որ Հայկական կորպուսի զորքերը չէ, որ կռվում էին Թուրքական կանոնավոր զորքերի դեմ, այլ աշխարհազորը և ժողովուրդը։

Ինչ խոսք, Ա. Հարությունյանը, ինչպես տեսանք, չի ժխտում այդ օրերի համաժողովրդական ցասումը, որի արդյունքը եղավ նաև գյուղացիների մասնակցությունը Սարդարապատի ճակատամարտին, սակայն միևնույն ժամանակ գտնում է, որ այդ ճակատամարտում Թուրքական կանոնավոր զորքերի դեմ առաջին հերթին կռվում էին Հայկական բանակային կորպուսի կանոնավոր գնդերն ու գումարտակները, որոնց գլուխ կանգնած էին հայ գեներալներ ու սպաներ՝ ի դեմս կորպուսի հրամանատար գեներալ Ֆ. Նազարբեկովի և դիվիզիայի հրամանատար գեներալ Սիլիկովի։ Չթերագնահատելով Դանիելբեկ Փիրումյանի խոշոր դերը, Ա. Հարությունյանը գտնում է, որ, այնուամենայնիվ, նա 8-րդ գնդի հրամանատարներից մեկն էր և կռվում էր միայն իր մարտական տեղամասում, իսկ դիվիզիան ղեկավարում էր Սիլիկովը։

Ա. Հարությունյանը Հ. Թուրշյանի գրքի վերաբերյալ իր դիտողությունները արել է նաև հետագայում հրատարակված մենագրության մեջ[1], ուր հանգամանորեն լուսաբանվում է 1918 թ. Թուրքական ինտերվենցիայի և հայ ժողովրդի ինքնապաշտպանական կռիվների պատմությունը։ Աշխատությունը գրված է արխիվային հարուստ նյութերի, այդ թվում Թուրքերենից ռուսերեն թարգմանված բազմաթիվ սկզբնաղբյուրների, համապատասխան գրականության ուսումնասիրության հիման վրա։ Մենագրությունը հեղինակի 1971 թ. ռուսերեն լույս տեսած «Կովկասյան ռազմաճակատը 1914—1917 թթ.» աշխատության շարունակությունն է։ Այն ընդգրկում է ռազմաքաղաքական տեսակետից բարդ ու խճճված մի ժամանակաշրջան։

Աշխատության մեջ բացահայտված են 1917 թ. վերջին և 1918 թ. սկզբներին Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի կազմալուծման և նահանջի սոցիալ-քաղաքական պատճառները, մերկացված է Անդրկովկասյան կոմիսարիատի և բուրժուազգայնական կուսակցությունների բացասական դերը։

Հանգամանորեն լուսաբանված է նաև Թուրքական արշավանքը Հայաստան, վերլուծված են ռազմական գործողությունները՝ Երզնկայից մինչև Սարդարապատ, Ղարաքիլիսա։ Հաջող է ներկայացված հայ ժողովրդի պաշտպանական կռիվների պատկերը, հատկապես Սարդարապատի ճակատամարտը։ Խորհրդահայ պատմագրության մեջ Ա. Հարությունյանը առաջինն է փորձել նորովի լուսաբանել և գնահատել գեներալ Նազարբեկովի գլխավորած Հայկական կորպուսի, նրա առանձին հրամանատարների, օրինակ, Սիլիկյանի դերը Թուրքական արշավանքի դեմ մղված կռիվներում։ Դրա հետ մեկտեղ նա չի անտեսել Նազարբեկովի և, ամբողջությամբ վերցրած, հայկական զինված ուժերի ղեկավարների թույլ տված կոպիտ սխալները, առանձին դեպքերում ցուցաբերած անհոգությունը, որոնք ծանր հետևանքներ ունեցան հայ ժողովրդի համար։

Աշխատության մեջ լայն տեղ է տրված Բաքվի կոմունայի դեմ Թուրքական արշավանքի պատմությանը, վեր են հանված նաև ինքնապաշտպանական կռիվները հանուն Բաքվի կոմունայի գոյության։ Անդրադառնալով կոմունայի պարտության պատճառներին, Ա. Հարությունյանը նշում է դրանց պատճառները, որոնք պատմական գրականության մեջ շրջանցվում են[1]։ Նա կոմունայի պարտության գլխավոր պատճառը համարում է Թուրքական բանակի գերակշիռ ուժը կոմունայի ռազմական ուժի նկատմամբ։ Մենագրության մեջ խոսվում է նաև Նախիջևանում ու Զանգեզուրում մղված ինքնապաշտպանական կռիվների մասին։ Այստեղ ըստ արժանվույն է գնահատված Անդրանիկի գործունեությունը։

Հայաստանի նկատմամբ Թուրքիայի վարած զավթողական քաղաքականության բացահայտմանը հանգամանորեն անդրադարձել է նաև Մ. Արզումանյանը՝ «Արհավիրքից վերածնունդ»

1 Տե՛ս Ա. Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկասում և ինքնապաշտպանական կռիվները, Եր., 1984, էջ 179—187։

1 Տե՛ս Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 285—296։

խորագրված իր աշխատության մեջ։ Այստեղ ըստ պատշաճի վեր են հանված նաև հայ ժողովրդի ազատագրական պայքարի հերոսական դրվագներից մեկի՝ Սարդարապատի և մյուս վայրերի հերոսամարտերը Թուրքական զավթիչների դեմ։ «Սարդարապատի հերոսամարտը,— գրում է նա,— հայ ժողովրդի ազատագրական պայքարի մեծագույն փայլատակումներից մեկն էր, իսկական էպոպեա, մի նոր ու հաղթական Ավարայր, որը հիմնովին կդրոշմվի պատմության մեջ և մշտապես սխրանքների կկոչի սերունդներին»[1]։

Թուրքական զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի, տվյալ դեպքում Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի և այլ վայրերի մարտերի պատմությունը լայն տեղ է գրավում Ծ. Աղայանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից» ու «Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը» աշխատություններում։

Ծ. Աղայանը, ի թիվս 1917—1920 թթ. պատմության բազմաթիվ հարցերի, լայն տեղ է հատկացրել ժողովրդական հերոս Անդրանիկի գործունեության լուսաբանմանը։

Հայտնի է, որ երկար ժամանակ պատմագիտական գրականության մեջ գրեթե անտեսվել է նրա անունը։ Նա չի գնահատվել ըստ արժանվույն։ Այս տեսակետից Ծ. Աղայանը շնորհակալ գործ է կատարել՝ պատռելով Անդրանիկի անվան շուրջ ստեղծված մշուշը։ Փաստական հարուստ նյութերի հիման վրա բացահայտվել է անվանի զորավարի և մեծ հայրենասերի ամբողջական նկարագիրը ինչպես մինչհոկտեմբերյան, այնպես էլ հետհոկտեմբերյան ժամանակաշրջանում։ Ցույց է տրվել Խորհրդային Ռուսաստանի հանդեպ Անդրանիկի դրական կողմնորոշումը, նրա պատրաստակամությունը զինված ուժերով օգնելու Բաքվի կոմունային։ Հեղինակը ամենայն մանրամասնությամբ շարադրում է նրա գործունեությունը Նախիջևանում և, հատկապես, Զանգեզուրում։

«Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից» աշխատության մեջ ցույց է տրված նաև Անդրանիկի նկատմամբ դաշնակցական կառավարության բռնած թշնամական դիրքորոշումը։

[1] Մ. Արզումանյան, *Արհավիրքից վերածնունդ*, էջ 149։



Խոսելով դաշնակցության նկատմամբ Անդրանիկի անհաշտ դիրքի, նրա կողմից դաշնակցության գործունեության սուր քննադատության մասին, Ծ. Աղայանը միաժամանակ ցույց է տվել հայ ժողովրդի անվանի գործչի ջերմ վերաբերմունքը դեպի մայր հայրենիքը՝ Խորհրդային Հայաստանը։

Առաջնորդվելով այն ճիշտ սկզբունքով, որ գիտական պատմագրության հիմնական պահանջներից մեկն էլ հասարակական երևույթները կոնկրետության մեջ քննելն է, Ծ. Աղայանը փաստական տվյալների հիման վրա հերքում է նրանց, այդ թվում դեռևս 1918 թվականի վերջերին մուսավաթականների օրգան «Ադրբեջան» թերթին, ովքեր փորձում են վարկաբեկել Անդրանիկին, թխված հերյուրանքներով մեղադրելով նրան հայ և ադրբեջանական ժողովուրդների միջև թշնամանք հրահրելու, ազգամիջյան կոտորածներ կազմակերպելու մեջ[1]։

Հանրագումարի բերելով և վերստին բարձր գնահատելով զորավարի գործունեությունը, հեղինակը միևնույն ժամանակ նշում է նրա թերությունները։ «Սակայն պետք է նշել նաև այն,— գրում է նա,— որ Անդրանիկը չկարողացավ հասնել սոցիալական և քաղաքական պայքարի խոր գիտակցման աստիճանին։ Ազգային-ազատագրական պայքարի համընդհանուր ճակատ, որ փափագում էր նա, չստեղծվեց և առանձին հերոսական ելույթները ցանկալի արդյունք չտվեցին»[2]։ Ծ. Աղայանը գտնում է, որ նրա ընտրած պայքարի ուղին լի էր նաև մոլորություններով ու հիասթափություններով։ Նա չկարողացավ հասկանալ, որ պատմական տվյալ ժամանակաշրջանում ազգային-ազատագրական պայքարը պետք է սերտորեն առնչվի սոցիալական պայքարի, կապիտալիզմի լուծը թոթափելու և պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու համար մղվող պայքարի հետ։ Մի որոշ ժամանակ Անդրանիկը հավատացել է Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի խոստումներին, որոնք պատերազմի ժամանակ Ռուսաստանի դաշնակիցներն էին։ «Դա ևս մոլորություն էր»,— գրում է հեղինակը։ Սակայն նա ավելացնում է, որ հետագայում Անդրանիկը վճռականորեն դատապարտեց արևմտյան տերությունների նենգ քաղաքականությունը, մերկացրեց նրանց դավերը։

[1] Տե՛ս Ծ. Աղայան, նշվ. աշխ., էջ 665—671։
[2] Նույն տեղը, էջ 824։

«Նա իր հայրենիքի ազնիվ ու նվիրված հերոս զինվորն էր,— իրավացիորեն գրում է պատմաբանը,— սակայն ոչ դիվանագետը և ոչ էլ քաղաքագետը լայն առումով։ Նա մի որոշակի շրջանում հավատում էր, որ իմպերիալիստական պատերազմի ընթացքում կարող է լուծվել նաև Հայկական հարցը»[1]։

Ի դեպ, խորհրդահայ պատմագրության մեջ արծարծվել է նաև այն հարցը, թե ինչ պատճառով ժողովրդական հերոս Անդրանիկը, որ երեք տասնամյակ շարունակ ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել Թուրքական բռնակալության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին, չի մասնակցել Սարդարապատի և, նույնիսկ, Ղարաքիլիսայի ճակատամարտերին։

Այդ ժամանակ Անդրանիկի զորամասը ենթարկվում էր Հայկական կորպուսի հրամանատար գեներալ Նազարբեկովին։ Կարսն ու Ալեքսանդրապոլը գրավելուց հետո Թուրքերի մի զորախումբ շարժվում էր դեպի Ղարաքիլիսա։ Նազարբեկովի կարգադրությամբ Անդրանիկը իր հինգհազարանոց զորքով և 20 հազար գաղթականների հետ շարժվում է դեպի Ջալալօղլի, Քոլագիրան և Դսեղ ու անմիջապես ձեռնամուխ լինում երկաթգծի պաշտպանությանը։ Չնայած դրան, Անդրանիկը Ղարաքիլիսայի ճակատամարտին անմիջականորեն չի մասնակցել։

Հ. Թուրշյանը «Սարդարապատի հերոսամարտը» աշխատության մեջ դրա պատճառը համարում է հրամանատարության, գլխավորապես Նազարբեկովի անճարակությունը։ Դտնելով, որ մայիսի 27-ի բախտորոշ կռիվների հաջողությունը հրամանատարության մեղքով չամրապնդվեց, տանուլ տրվեց, նա գրում է. «Այդ ժամանակ Դսեղում էր գտնվում Անդրանիկն իր շուրջ հինգհազարանոց զորքով, գնդապետ Բեկ-Մամիկոնյանը նամակով դիմել էր նրան խնդրելով մասնակցել կռվին, սակայն Անդրանիկը հնարավորություն չունեցավ այդ անելու, որի հետևանքով էլ Թուրքերը կարողացան Ջալալօղլիի վրայով Բորչալու արշավող բանակն ազատ կերպով հետ դարձնել և Բզովդալի լեռնանցքից իջնելով, շրջանցել մենակ մնացած Ղարաքիլիսայի հայ զորքի աջ թևը»[2]։

Հարցն ավելի պարզելու համար, Հ. Թուրշյանը վկայակոչում է հայ մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանին՝ մեջբերելով

[1] Ս. Աղայան, նշվ. աշխ., էջ 825։

[2] Հ. Թուրշյան, Սարդարապատի հերոսամարտը, էջ 155։



նրա հետևյալ խոսքերը. «Ղարաքիլիսայի անկման օրից սկսած, անդադար մարդիկ են պատահում, որոնք դատապարտում են Անդրանիկին, որ Ղարաքիլիսայի պատերազմի ժամանակ նա խոշոր ուժերով մնաց էնքան մոտիկ՝ Դսեղում նստած, մինչդեռ եթե օգնության հասներ Դվալից, պատերազմը բոլորովին ուրիշ ելք կունենար։

Այո, միանգամայն ճշմարտացի են ասում, որ եթե Անդրանիկը Լոռու կողմից, Դվալից օգնության հասներ՝ պատերազմն անկասկած ուրիշ ելք կունենար։ Սակայն բոլոր խոսողները մի բան չգիտեն, որ հենց էդպես էլ ծրագրված էր և կատարվելու վրա էր, երբ զինվորական բարձր հրամանատարությունից հրաման եկավ Անդրանիկին՝ մնալ Դսեղում և պաշտպանել երկաթուղագիծը։

Դսեղից տրված տեղեկության հետևանքով մինչև էս հրամանը փոխվեց, արդեն երրորդ օրն էր և գրեթե միաժամանակ եկավ Ղարաքիլիսայի անկման բոթը»[1]։

Հ. Թուրշյանը վկայակոչում է նաև Ղարաքիլիսայի կռիվների ականատես-մասնակից Մուշեղ Ղազարյանին, որը գրել է. «Չկար կռվելու մի որոշ ծրագիր, դրված չէր լուծելու որևէ խնդիր. ամեն ինչ թողնված էր տարերային ուժին, ամեն ինչ հանձնված էր պատահականության։ Մեր զինվորական հայտնի ուժերը— Նազարբեկով, Բեկ-Մամիկոնով, Անդրանիկ և ուրիշներ— կորցնելով իրենց հավասարակշռությունը, չունեին հմայք ու հեղինակություն մասսայի աչքում»[2]։

Անդրանիկի հերոսական կյանքի ու գործունեության խորազնին հետազոտության գործում խորհրդահայ պատմաբաններից ավելի մեծ ներդրում ունեցող Ս. Աղայանը, հանգամանորեն նկարագրելով 1918 թ. ապրիլ-մայիս ամիսներին Լոռիում ստեղծված իրադրությունը, նշում է, որ այն ժամանակ, երբ Անդրանիկը գտնվում էր Դսեղում, գեներալ Նազարբեկովը հեռախոսով կապվում է Անդրանիկի հետ և հանձնարարում, որ նա պահի Լոռին և թույլ չտա թշնամուն անցնելու հայոց թիկունքը։ Բերվում է նաև Անդրանիկի պատասխանը, թե «որքան ատեն, որ ժողովուրդը և զինվորը ինձ հետ են, պիտի կռվիմ՝ և բոլոր

[1] Հ. Թուրշյան, նշվ. աշխ., էջ 156—157, տե՛ս նաև Հայկական առանձին հարվածող զորամասը, Բոստոն, 1921, էջ 25։

[2] Մ. Ղ., Ղարաքիլիսայի հերոսամարտը (ականատեսի հիշողություններ), Թիֆլիս, 1920, էջ 17։

ուժովս չպիտի թողում թշնամին որ քայլը մը իսկ առաջ ընթանա»[1]։ Ելնելով դրանից, Ծ. Աղայանը գտնում է, որ «Անդրանիկը պաշտպանում էր երկաթուղագիծը, Ջալալօղլին և Դիլիջանի ճանապարհները։ Սակայն նա պետք է հարվածեր դեպի Ղարաքիլիսա շարժվող թուրքական զորքերին, որը նա չկարողացավ կատարել գեներալ Նազարբեկովից ստացած հրամանի պատճառով»[2]։ Պատմաբանի կարծիքով, հենց այդ պատճառով էլ Անդրանիկը չմասնակցեց նաև Սարդարապատի ճակատամարտին[3]։ Այդ առթիվ մի այլ տեղ նա գրում է. «Այն թյուր կարծիքը, որ Անդրանիկը կղզիացել էր Սարդարապատի ժամանակ, ճիշտ չէ։ Այդ օրերին նա իր վրա էր բևեռել ու կաշկանդել թշնամու մեծ քանակությամբ ուժեր և նրան զրկել դեպի Սարդարապատ նոր զորքեր փոխադրելու հնարավորությունից»[4]։

Մեզ հետաքրքրող հարցը քննվում է նաև Ա. Հարությունյանի աշխատությունում։ Անդրադառնալով Ղարաքիլիսայի ճակատամարտում կրած պարտությանը, նա գտնում է, որ այդ գործում բացասական դեր են խաղացել զինվորական ղեկավարության թույլ տված սխալները. մասնավորապես, խոսելով Անդրանիկի մասին, նա գրում է. «Անդրանիկը ևս Դսեղից պետք է թևեր առներ և թռչեր հասներ Ղարաքիլիսա, որպեսզի փրկության ձեռք մեկներ անպաշտպան ժողովրդին»[5]։

Այս հարցում Ա. Հարությունյանի մոտ նկատում ենք մի փոքր հակասություն։ Մի տեղ նա կարծես հանդիմանում է Անդրանիկին, գրելով՝ որ Անդրանիկը ևս Դսեղից պետք է թևեր առներ և թռչեր, հասներ Ղարաքիլիսա, որպեսզի փրկության ձեռք մեկներ անպաշտպան ժողովրդին, իսկ մի այլ տեղ, հենվելով Հովհ. Թումանյանի ասածի վրա, նշում է, թե «այնպես որ նա մեղավոր չէ, որ այդ օրերին Ղարաքիլիսայում չէր» (էջ 301)։ Անդրադառնալով Բաթումում կնքված պայմանագրի նկատմամբ

1 Ծ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, էջ 603, տե՛ս նաև Զորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը, Պոսթոն, 1924, էջ 102։

2 Ծ. Աղայան, նշվ. աշխ., էջ 606։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 603։

4 Նույն տեղը, էջ 605—606։

5 Ա. Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկասում 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, էջ 198։



Անդրանիկի դիրքորոշմանը, նա գրում է. «Հայտնի է, որ Անդրանիկը Դիլիջան ժամանելուց հետո, իմանալով Բաթումում կնքված նվաստացուցիչ պայմանագրի մասին, գժտվել էր դաշնակցականների ղեկավարության հետ և հրաժարվել որևէ հրաման կատարելուց։ Նա պատասխանատվություն չվերցրեց Դիլիջանում եղած հայկական ստորաբաժանումները ղեկավարելու համար և իր ջոկատով այլ ուղի ընտրեց»[1]։

Այսպիսով, ելնելով փաստական տվյալներից, որոշակիորեն կարելի է հանգել այն եզրակացության, որ մեզ հետաքրքրող հարցում դեր է խաղացել և՛ հրամանատարության կողմից Անդրանիկին արված կարգադրությունը Դսեղում մնալու մասին, և՛ նրա անհաշտ դիրքորոշումը դաշնակցական պարագլուխների և նրանց կողմից ղեկավարվող հայոց Ազգային խորհրդի նկատմամբ։ Մենք նախընտրում ենք ավելի կարևոր համարել երկրորդ պատճառը։

Բանն այն է, որ ժողովրդի և զորքի մեծ մասը դժգոհ էր 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում կնքված ծանր ու ստորացուցիչ պայմանագրից, և պահանջում էր շարունակել պատերազմը թուրքական զավթիչների դեմ։ Նման պարագայում ինչպե՞ս կարող էր հայրենասեր զորավարը իրեն հատուկ պոռթկումով խստորեն չզայրանալ և չվշտանալ։ Հայկական կորպուսի հրամանատար գեներալ Նազարբեկովին հղած հեռագրում նա վրդովված գրում է. «Վեց հարյուր տարվան ստրկության շղթան դարձյալ ձեր վիզն ու ոտքը կանցնեք ձեր ձեռքով։ Չեմ կրնար այս պայմաններում հանդուրժել, մոռանալով մեր երեսուն տարվան զոհերը և մեկ միլիոն նահատակները»[2]։ Հայտնի է, որ դաշնակցական պարագլուխները Բաթումի պայմանագրով փաստորեն պարտավորվել էին Անդրանիկին և հայ ազգային-ազատագրական շարժման մյուս գործիչներին զինաթափել՝ պարտադրելով հեռանալ Հայաստանից։

Խորհրդահայ պատմաբանները (Գ. Գալոյան, Ա. Մնացականյան. Ե. Սարգսյան, Ծ. Աղայան, Մ. Արզումանյան, Լ. Խուրշուդյան և ուրիշներ) ավել կամ պակաս չափով անդրադարձել են Բաքվի կոմունայի պատմությանը, մասնավորապես բացահայտել նրա հերոսական պայքարը օտարերկրյա ինտերվենտնե-

1 Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 197։

2 Զորավար Անդրանիկը կխոսի, Փարիզ, 1921, էջ 26—27։

րի դեմ, քննել կոմունայի անկման հանգամանքները։ Հենվելով Ստ. Շահումյանի ասույթների վրա, նրանք բացահայտել են նաև Անդրկովկասի բուրժուազգայնական կուսակցությունների, այդ թվում դաշնակցության խաղացած դերը կոմունայի անկման գործում։

Բաքվի կոմունայի ժամանակաշրջանում դաշնակցության երկփեղկված դիրքորոշումը վերլուծված է Լ. Խուրշուդյանի «Խորհրդային Ռուսաստանը և Հայկական հարցը» աշխատության մեջ։ Նա շերտավորված մոտեցնում է հանդես բերում, դաշնակցության մեջ բացորոշելով երկու թև՝ մեկը Բաքվում որոշ ժամանակ գնում էր բոլշևիկների հետ, իսկ մյուսը՝ Թիֆլիսում, ընդհակառակը, խճճվելով անելանելի լաբիրինթոսում, անում էր այն, ինչ թելադրում էին թուրքերը մենշևիկների և մուսավաթականների հետ միասին[1]։ Ուշագրավ են գրքում բերված փաստերն այն մասին, որ դաշնակցության Բաքվի կոմիտեն նույնիսկ մեղադրում էր Թիֆլիսի դաշնակցականներին դավաճանության մեջ՝ քննադատելով Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու ակտը և Թուրքիայի հետ կնքված Բաթումի պայմանագիրը[2]։ Սակայն հարցը դրանով չի սպառվում։ Պատմաբանը ցույց է տալիս, որ երբ թշնամու գերակշռող ուժերի դեմ Բաքվի կոմունայի զինված ուժերը հարկադրված սկսեցին նահանջել, դաշնակցությունը Բաքվում անմիջականորեն փոխեց իր քաղաքական կողմնորոշումը։ «Փոխանակ համախմբելու հայկական ուժերը և դրանք ուղղելու թուրքերի դեմ, փոխանակ օժանդակելու բազմազգ և բազմադասակարգ ուժերի միասնական ճակատի ամրապնդմանը, որն ընդունակ կլիներ ջախջախելու հակառակորդին, դաշնակցությունը,— գրում է նա,— ընդհակառակն, ընտրեց այլ ուղի, մասնատեց Բաքվի պաշտպանների շարքերը և սկսեց ագիտացիա անգլիացիներին Բաքու հրավիրելու օգտին»[3]։ Մեկ այլ տեղ նա գրում է. «Սակայն դաշնակցությունը, ինչպես և պետք էր սպասել, արդեն ընտրել էր իր նոր ուղին։ Միացած էսէռամենշևիկյան կուսակցություններին, դաշնակցությունը դավաճանեց կոմունային»[4]։

1 Տե՛ս Լ. Խուրշուդյան, նշվ. աշխ., էջ 167։

2 Տե՛ս նույն տեղը։

3 Նույն տեղը, էջ 179։

4 Նույն տեղը, էջ 180 (Ընդգծումը հեղինակինն է— Շ. Հ.)։



Այս հարցի կապակցությամբ մի դիտողություն ունենք Ա. Մնացականյանի արտահայտած կարծիքի վերաբերյալ։ Խոսելով Բաքվի հայ ազգային զորամասերի մասին, նա գերագնահատում է նրանց դերը կոմունայի ստեղծման և նրա պաշտպանության գործում[1]։ Ա. Մնացականյանը գտնում է, որ հայկական ազգային զորամասերը կռվում էին ընդդեմ հակահեղափոխության, հանուն Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների պաշտպանության։ «Բաքվում,— նշում է նա,— խորհրդային իշխանության համար 1918 թ. մղած համառ մարտերի օրերին, դեմառդեմ կանգնել էին երկու բանակ՝ հեղափոխության և հակահեղափոխության բանակները, Հոկտեմբերի նվաճումները պաշտպանող բանակ և ռեակցիայի սև ուժերը պաշտպանող բանակ։ Հայկական ազգային զորամասերը մտան հեղափոխության բանակի կազմում և մասնակցեցին Հոկտեմբերի նվաճումների պաշտպանությանը»։ Մնացականյանը հետևողական չէ, արտահայտել է հակասական մտքեր։ Այլապես ինչպես հասկանանք նրա մի այլ աշխատության մեջ գրված հետևյալ խոսքերը. «Անդրկովկասում վերջնականապես դրսևորվեցին երկու հակամարտ ուժեր՝ մի կողմից բոլշևիկների Բաքվի կոմունան և նրանց համակրող, նրա հետ ընթացող բանվորագյուղացիական հեղափոխական մասսաները, մյուս կողմից իմպերիալիզմի գործակալները՝ մենշևիկները, մուսավաթականները, դաշնակները, էսէռները»[2]։

Որ դաշնակցականների գլխավորած ազգային զորամասերը կռվում էին հերոսաբար, ճիշտ է. բայց դա, մեր կարծիքով, կատարվել է ոչ թե Բաքվի խորհրդային իշխանությունը, Հոկտեմբերի նվաճումները հակահեղափոխությունից պաշտպանելու նպատակով, այլ Բաքուն թուրքական զավթիչներից փրկելու համար։ Նրանք հաստատապես գիտեին, որ թուրքերը, մտնելով Բաքու, սրի կքաշեին Բաքվի և նրա մոտակա հայաբնակ գավառների հայ բնակչությանը։ Այսպիսով, սխալված չենք լինի, եթե պնդենք, որ նրանք, այդպես հերոսաբար կռվելով, առաջնորդվում էին ոչ թե դասակարգային, այլ ազգային բնազդով, նրանք

1 Տե՛ս Мнацаканян А., Ленин и решение национального вопроса в СССР, էջ 171.

2 Ա. Մնացականյան, Ռևոլյուցիան Անդրկովկասում և Ռուսաստանի պատվիրակները, Եր., 1961, էջ 41։

կովում էին ոչ թե Հոկտեմբերյան հեղափոխության հաղթարշավի, այլ դարավոր թշնամու առաջխաղացումը կասեցնելու համար։ «Միայն այն բանից հետո, երբ Բաքվի գլխին կախվեց գերմանա-թուրքական ասպատակության սպառնալիքը,— գրում է Ա. Միկոյանը,— հայկական Ազգային խորհուրդը առաջարկեց կարմիր բանակի կազմի մեջ մտցնել իր հայկական ազգային զորամասերը»[1]։

Ի դեպ, չի կարելի բարձր գնահատականի արժանացնել հայկական զորամասերին, որևէ ակնարկ չանելով Բաքվի կոմունայի ծանր օրերին նրանց ղեկավարության կատարած քայլերի մասին։ «Երբ պարզվեց,— գրել է դաշնակցության ղեկավարներից մեկը՝ Ռ. Դարբինյանը,— որ Խորհրդային Ռուսաստանն ի վիճակի չէ բավականաչափ օգնություն հասցնելու Բաքվի տեղական ուժերին ետ մղելու համար թուրք-տաճկական գրոհը, Հ. Հ. Դաշնակցությունը ամենայն դյուրությամբ տապալեց բոլշևիկյան իշխանությունը Բաքվում և զինաթափ արեց զուտ բոլշևիկյան ուժերը»[2]։

Խորհրդահայ պատմաբանների աշխատություններում զգալի տեղ է տրված դաշնակցության ինչպես նախահոկտեմբերյան, այնպես էլ հետհոկտեմբերյան ժամանակաշրջանի գործունեության, մասնավորապես նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականության բացահայտմանը։

Դաշնակցության 1917—1918 թթ. գործունեության քննադատությունը ներկայացված է Հ. Թուրշյանի «Սարդարապատի հերոսամարտը» աշխատության մեջ։ Անդրադառնալով Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում ստեղծված իրադրությանը, Հ. Թուրշյանը քննադատում է դաշնակցությանը, որը, չնայած նրա որոշ գործիչների ջանքերին, անկարող եղավ հասկանալ, որ Անդրկովկասի, այդ թվում հայ ժողովրդի կենսական շահերը հրամայաբար պահանջում էին դաշինք կնքել Խորհրդային Ռուսաստանի և ոչ թե թավադաբեգական դասակարգերի ու նրանց մենշևիկ-մուսավաթական գործիչների հետ և Անդրկովկասն անջատել Ռուսաստանից։ Անդրկովկասյան բլոկի հակախորհրդային այդ դաշինքն էլ կանխորոշեց թուրքական ագրեսիայի հաջողությունը։ Հ. Թուրշյանը գտնում է, որ «եթե

[1] Ա. Միկոյան, Պայքարի ուղիով, գիրք առաջին, Եր., 1972, էջ 166։

[2] Ռ. Դարբինյան, Բոլշևիզմը և Հայաստանը, Եր., 1920, էջ 47։



երեկ, այսինքն՝ մինչև Էրզրումի գրավումը, դաշնակցականները անդրկովկասյան գլխավոր հակահեղափոխական կուսակցությունների իրարամերժ դաշինքում ոչ միայն մեղսակից, այլև խաբված կողմ էին, ապա Էրզրումի անկումից հետո նրանք հանցավոր կողմ էին միայն»[1]։ Էրզրումի անկումը, գրում է նա, դաշնակցության սնանկության ապացույցներից ամենաանվիճելին էր։ Նույնը վերաբերում է Կարսի անկմանը, որը տեղի ունեցավ Անդրկովկասյան կառավարության նախագահ Ա. Չխենկելու դավաճանական հրամանով։ «Ալեքսանդրապոլի ամոթալի անկումը,— գրում է հեղինակը,— դաշնակցության սնանկության վերջին սպառիչ ապացույցն էր»[2]։

Հր. Սիմոնյանը ևս սփյուռքահայ կուսակցությունների գործունեության քննական վերլուծության ընթացքում[3] խստորեն քննադատել է դաշնակցությանը։ Կանգ առնելով 1918—1920 թթ. դաշնակցական վարչակարգի օրոք Հայաստանի ծանր դրության վրա, նա միաժամանակ բացահայտել է դաշնակցական պարագլուխների կողմից այդ ժամանակաշրջանի պատմությունը կեղծելու փորձերը։

Թողնելով այդ աշխատության քննությունը սփյուռքի պատմության բաժնում, այստեղ հարկ ենք համարում մի կարևոր դիտողություն անել նրա հեղինակին, որը վերաբերում է Հայաստանի անկախության հռչակմանը՝ 1918 թ. մայիսի 28-ին նրա տված գնահատականին։ Աշխատության մեջ լայն տեղ է տրված այդ հարցին, սակայն, ինչ խոսք, սխալը բխում է խորհրդահայ պատմագրության մեջ ժամանակին եղած սխալ մտայնությունից։ Բերենք մի քանի օրինակ։ «Հայտնի է,— գրում է Հր. Սիմոնյանը,— թե հայ ժողովրդի վրա որքան թանկ նստեց «Թուրքերից նվեր ստացած» 1918 թվականի պարոդիկ «անկախությունը»[4]։ Այնուհետև նա շարունակում է, «և այսօր, տասնամյակներ հետո, պատմական նորանոր փաստերի լույսի տակ, գնալով ավելի ու ավելի ակնհայտ է դառնում, թե 1918 թ. մայիսի 28-ին «անկախություն» խաղալով դաշնակցականներն ինչպիսի

[1] Հ. Թուրշյան, Սարդարապատի հերոսամարտը, էջ 92 (Ընդգծումը հեղինակինն է.— Շ. Հ.)։

[2] Նույն տեղը, էջ 120։

[3] Տե՛ս Հր. Սիմոնյան, Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Եր., 1968։

[4] Հր. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 21 (չակերտները հեղինակինն են—Շ. Հ.)։

ահավոր աղետի առջև էին կանգնեցրել հայ ժողովրդին»[1]։ Մի այլ տեղ կարդում ենք. «Աշխատելով մոռացության տալ մայիսի 28-ի ողբերգական հետևանքները բազմաչարչար հայ ժողովրդի համար, դաշնակցական շեֆերն ու գրիչները մեր օրերում միանգամայն ուրիշ իմաստ են դնում նրա մեջ։ Մայիսի 28-ը նրանք ներկայացնում են որպես Հայաստանի պետականության ստեղծման «պանծալի պահ»[2]. վերջապես մի բնորոշ մեջբերում ևս. «Հայաստանի քաղաքական անկախությունը 1918 թվականին նրա վզին փաթաթեցին դաշնակցականները»[3]։ Մեջբերելով Ս. Վրացյանի այն խոսքերը, թե՝ «Հայոց ազգային խորհրդի այն նիստը, ուր քննության առնվեց անկախությունը, ավելի նման էր սգավոր տան, ուր ննջեցյալ կար դրված», Հր. Սիմոնյանը ավելացնում է. «Եվ այդպես էլ պետք է լիներ, որովհետև «անկախության» օգտին արտահայտվելով Հայոց ազգային խորհուրդը շատ լավ գիտեր, թե իր այդ անպատասխանատու և դավաճանական քայլով ինչպիսի նոր, ավելի սոսկալի աղետների առջև է կանգնեցնելու Հայաստանի բազմաչարչար բնակչությանը, որի միակ փրկությունը հեղափոխական Ռուսաստանի հետ ամուր դաշինքն էր»[4]։

Նույն բացասական գնահատականին հանդիպում ենք նաև թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությանն ու գործունեությանը նվիրված Հր. Սիմոնյանի աշխատության մեջ։ Այստեղ նա Հայաստանի անկախության հռչակումը համարում է թուրքերի գեհենային մտահղացումը[5], Հայկական հանրապետությունը՝ թուրքերից «նվեր» ստացած ծաղրանկարային «Արարատյան հանրապետություն»[6] և այլն, որոնց հետ դժվար է համաձայնվել։ Հեղինակը հավանաբար հենվում է 1918 թ. հունիսին Կ. Պոլսի կոնֆերանսի հայկական պատվիրակության և թուրքական սուլթանի ու կառավարության ղեկավարների միջև տեղի ունեցած բանակցությունների ժամանակ ասված ելույթների վրա։

Ճիշտ է, հայտնի է, որ այդ հանդիպման ժամանակ Թուրքիայի սուլթանը կեղծավորաբար ասել է. «Հայաստանի անկախությունը թանկ է ինձ համար, ես Հայաստանի կառավարությունը համարում եմ իմ հարազատ զավակը»։ Որպես պարտված կողմի ներկայացուցիչներ, դաշնակցության պատվիրակները ողջունում են հայ ժողովրդի դահիճներին, դարձյալ կեղծավորաբար ասելով. «Եթե չլիներ սուլթանը, չէր լինի ազատ ու անկախ Հայաստանը»։ Սակայն պատմությունը մենք պետք է գրենք ոչ թե դաշնակցական պարագլուխների ու թուրքական սուլթանի արած արտահայտությունների հիման վրա, այլ ելնելով մարքս-լենինյան մեթոդաբանական դիրքերից, պատմական իրողությունից։

Դիմենք պատմությանը։ Հակառակ Անդրկովկասի աշխատավորության կամքի, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո երկրամասի իշխող դասակարգերն ու նրանց կուսակցությունները թշնամաբար ընդունեցին հեղափոխության հաղթանակի լուրը և որոշեցին չճանաչել Ռուսաստանի խորհրդային իշխանությունը։ Գործարքի մեջ մտնելով իմպերիալիստական տերությունների հետ, նրանք կազմեցին հակախորհրդային բլոկ, որի մարմիններն էին 1917 թ. նոյեմբերին Թիֆլիսում ստեղծված Անդրկովկասյան կոմիսարիատը, իսկ ապա՝ 1918 թ. փետրվարին ստեղծված սեյմը։

1918 թ. փետրվար-մարտ ամիսներին թուրքական զորքերը, գավթելով Արևմտյան Հայաստանը, մտան Անդրկովկաս՝ գրավելով զգալի տարածքներ։ Մայիսի վերջին արտաքին և ներքին մի շարք պատճառներով սեյմը դադարեց գոյություն ունենալուց։ Մայիսի 26-ին Վրաստանի Ազգային խորհուրդը Վրաստանը հայտարարեց անկախ հանրապետություն, հաջորդ օրը նույնն արեցին մուսավաթականները։ Իսկ մայիսի 28-ին Հայոց Ազգային խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ հանրապետություն։ Թիֆլիսում կազմավորվեց Հայաստանի հանրապետության կառավարություն և փոխադրվեց Երևան։ Օգոստոսին բացվեց Հայաստանի խորհրդարանը՝ պառլամենտը։

Մեր կարծիքով, անկախ այն բանից, թե Հայաստանի կառավարության գլուխ ովքեր էին կանգնած, հանրապետության կազմավորումը դրական երևույթ էր։ Այն փաստորեն դարեր առաջ կորցրած հայկական պետականության վերա-

[1] Հր. Սիմոնյան, նշվ. աշխ.։
[2] Նույն տեղը, էջ 526։
[3] Նույն տեղը, էջ 518։
[4] Նույն տեղը, էջ 549—550։
[5] Տե՛ս Հր. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Եր., 1986, էջ 408։
[6] Տե՛ս նույն տեղը, էջ 411։

կանգնումն էր[1]։ Չպետք է անտեսել, որ նույն այդ ժամանակ բացահայտվել էր վրացական մենշևիկների գլխավորած Անդրկովկասյան սեյմի հակախորհրդային, հակահայկական դեմքը։ Հայտնի է նաև, որ ապրիլի 22-ին Թուրքիայի պահանջով սեյմը որոշում ընդունեց Անդրկովկասը Խորհրդային Ռուսաստանից անջատելու մասին, որով և երկրամասը կանգնեց ավելի ծանր կացության առջև։ Թուրք նվաճողները շարունակում էին իրենց հարձակումը։ Ապրիլի 25-ին, առանց դիմադրության, մենշևիկների դավաճանության պատճառով Կարսը հանձնվեց Թուրքերին։ Նման պայմաններում Հայաստանի համար սեյմի իշխանությունը բնավ գերադասելի չէր հայոց ազգային պետականությունից։

Ինչ խոսք, լավ կլիներ, եթե 1918 թ. մայիսի վերջին Հայաստանում, ինչպես նաև ամբողջ Անդրկովկասում խորհրդային իշխանություն հաստատվեր, ինչպես Բաքվում։ Սակայն դրա համար այն ժամանակ դեռևս չէին ստեղծվել անհրաժեշտ նախապայմաններ։ Թուրքերը զավթել էին երկրի մի զգալի մասը՝ սպառնալով ժողովրդի ֆիզիկական գոյությանը։ Հայաստանում չկար կազմակերպված բանվոր դասակարգ, կոմունիստական կուսակցություն, գյուղացիության ու զինվորների շրջանում չէր տարվել համապատասխան աշխատանք և այլն։

Այս բոլորից հետո ինչո՞ւ չասել, որ Հայաստանի հանրապետությունը ոչ թե Թուրքիայի «նվերն էր», այլ արդյունք էր հայ ժողովրդի ազատագրական պայքարի, մասնավորապես 1918 թ. մայիսի 22—28-ին Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերի։ Այդ հարցում սուլթանական կառավարությունն էլ ուներ իր շահերը։ Փաստ է, որ Անդրկովկասյան սեյմի ցրումը և երեք հանրապետությունների ստեղծումը թելադրված էր Թուրքիայի կողմից, որը ելնում էր «բաժանիր ու տիրիր» գայլային սկզբունքից։ Սուլթանական կառավարության նպատակն էր Անդրկովկասը տրոհելով երեք մասի, թուլացնել նրա ուժը և, որ ամենակարևորն է, մուսավաթական Ադրբեջանը դարձնել ամուր հենարան հետագա նվաճումը։ Կովկաս ներխուժելու համար Թուրքական զավթիչները միշտ էլ կարող էին հույս դնել Ադրբեջանի մուսավաթական կառավարության «հրավերի» վրա։ Ինչ խոսք, իրենց հերթին Անդրկովկասի տրոհմանը ձգտում էին նաև Ադրբեջանի թուրքերին ցեղակից և կրոնակից մուսավաթականները՝ Թուրքիային միանալու և ամբողջ Կովկասում մուսուլմանական պետություն ստեղծելու նպատակով։

Ինչպես հայտնի է, Հայաստանի հանրապետությունը ուշացումով ճանաչեց նաև Խորհրդային Ռուսաստանը։ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ոչ միայն ճանաչեց Հայաստանի անկախությունը, այլև 1920 թ. ամռանը պահանջ դրեց, որպեսզի Թուրքիան Հայաստանին հանձնի Վանի, Մուշի և Բիթլիսի նահանգները։ Հայտնի է նաև այն, որ 1920 թ. հոկտեմբերի 28-ին Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանի և դաշնակցական կառավարության նախագահի միջև կնքվեց ժամանակավոր համաձայնագիր, որի համաձայն Հայաստանին էին անցնում Կարսի մարզը, Նախիջևանը և Զանգեզուրը։ Եվ վերջապես, դեռևս 1917 թ. նոյեմբերի 3-ին Խորհրդային Ռուսաստանի կառավարության հրատարակած «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիայում» պարզորոշ ասված է, որ Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին տրվում է ազատ ինքնորոշման իրավունք՝ ընդհուպ մինչև անջատվելն ու ինքնուրույն պետություն կազմելը։

Մեր կարծիքով, Հայաստանի հանրապետության կազմավորման հետևանքով առաջացան օբյեկտիվ նախադրյալներ, որոնք հետագայում նպաստեցին հեղափոխական ուժերի համախմբմանը։ Իսկ դա հանգեցրեց Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորմանը, Մայիսյան ապստամբությանը, հնարավոր դարձրեց նոյեմբերի 29-ը։

Այլ բան է, որ դաշնակցական պարագլուխները մայիսի 28-ը, ինչպես գրում է Հր. Սիմոնյանը, պարբերաբար օգտագործում էին հակախորհրդային պրոպագանդայի նպատակներով։ Կեղծելով պատմությունը, նրանք անհիմն կերպով պնդում են, թե, իբր, 1918 թ. ստեղծված հանրապետությունը «դրախտավայր» էր, մինչդեռ պատմական փաստերը վկայում են, որ այն սովի ու մահվան երկիր էր։

Ի վերջո, չի կարելի շփոթել պետականությունը, որն անկասկած դրական էր, վարչակարգի հետ, որի քաղաքականությունը շատ խոցելի կողմեր ուներ։ Իհարկե, Հայաստանի պետականու-

[1] Ի դեպ, այն միտքը, թե 1918 թ. մայիսի 28-ին Հայաստանի հանրապետության հռչակումը դրական երևույթ էր, հայ պետականության վերականգնում, խորհրդահայ պատմագրության մեջ առաջինն ենք արտահայտել «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1988 թ. հունիսի 7-ի համարում տպագրված «Սովորել պատմությունից, թե՞ սովորել պատմությունից» հոդվածում։

թյան կազմավորումը հեշտ ու հանգիստ չի եղել։ Նախ հայոց Ազգային խորհրդի ոչ բոլոր անդամներն էին համաձայն անկախության հռչակմանը, իսկ երբ մեծամասնությունը դրական որոշում ընդունեց, սկսվեց սուր տարաձայնություններ հայկական քաղաքական կուսակցությունների միջև կառավարության կազմի հարցում։ Այդ պայքարի հետևանք էր, օրինակ, Հայ ժողովրդական կուսակցության պարագլուխներից մեկի՝ Հ. Առաքելյանի սպանությունը այն բանից հետո, երբ նա իր խմբագրած «Մշակ» թերթում ազդարարել էր, որ Հայաստանի կառավարությունը չպետք է հանձնել դաշնակցությանը, քանի որ նա կորցրել է իր հեղինակությունը ժողովրդի մեջ։

Հարկ է նշել, որ Հր. Սիմոնյանից առաջ Հայաստանի հանրապետության ստեղծման հարցում բացասական կարծիք են հայտնել նաև ուրիշ պատմաբաններ։ Այսպես, Մ. Արզումանյանը գտնում է, որ Անդրկովկասում երեք ազգային պետությունների առաջացումը օտարերկրյա ղավթիչների նենգ քաղաքականության հետևանք էր[1]։ Ի դեպ, այդ հարցում նա հենվում է ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրկոմի սխալ դիրքորոշման վրա։ Աշխատության մեջ Մ. Արզումանյանը վկայակոչում է նաև 1921 թ. նոյեմբերին Վրաստանի կոմկուսի Թիֆլիսի կազմակերպության ժողովում Օրջոնիկիձեի զեկուցման մեջ ասված հետևյալ խոսքերը, որոնք, մեր համոզմամբ, անընդունելի են։ «Անդրկովկասի հանրապետությունների «անկախությունը» թելադրել էին Թուրքական փաշաները՝ նպատակ ունենալով Անդրկովկասի աշխատավոր մասսաներին անջատել միմյանցից և Ռուսաստանից... Գերմանական, թուրքական գեներալները՝ վրացական մենշևիկների, ադրբեջանական մուսավաթականների, հայկական դաշնակների իշխանության և նրանց հանրապետությունների «անկախության» ոգու աղբյուր էին»[2]։

Դժվար է համաձայնվել Մ. Արզումանյանի հետ, որն Անդրկովկասյան երեք հանրապետությունների ստեղծումը համեմատում է Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Խորհրդային Ռուսաստանի տարածքի որոշ մասերում թխված զանազան հակահեղափոխական մանր կառավարությունների հետ[3]։ Ըստ երևույթին, նա նկատի ունի Կոլչակի, Դենիկինի և այլ կառավարությունները։ Չէ՞ որ առաջին դեպքում ստեղծվել են ազգային պետություններ, իսկ երկրորդում՝ ոչ։ Կոլչակ-դենիկինյան կառավարությունները ստեղծվել էին Խորհրդային Ռուսաստանի կառավարության առկայության պայմաններում, մինչդեռ Հայաստանում ազգային պետականություն չկար։

Սխալվում է նաև Բ. Օհանջանյանը, որը գրել է, թե, իբր «Հայաստանի «անկախությունը» շնորհել էր Թուրքիան»[1]։

Դաշնակցության գործունեությունը, մասնավորապես նրա իշխանության տարիներին վարած ներքին ու արտաքին քաղաքականությունը խստորեն քննադատված է Բ. Օհանջանյանի կողմից, թեև այդ հարցերը բազմիցս շոշափվել են խորհրդահայ պատմական գրականության մեջ։ Անդրադառնալով Բաքվի կոմունայի ժամանակաշրջանին, նա դաշնակցականների գործունեությունը բնութագրում է որպես հակախորհրդային, թշնամական։ «Բաքվի հերոսական կոմունայի տապալման հիմնական մեղսակիցներից են դաշնակցականները»,— գրում է նա[2]։ Հեղինակը 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագիրը բնութագրում է որպես հակախորհրդային գործարք, դաշնակցականների թուրքական կողմնորոշումը՝ հակախորհրդային դիրքորոշում։ Հեղինակը քննադատում է դաշնակցությանը որպես 1921 թ. խռովության կազմակերպիչ*։

---

1 Տե՛ս Մ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, էջ 159։

2 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, եր., 1950, էջ 69։

3 Տե՛ս Մ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, էջ 159—160։



1 Բ. Սեանջանյան, Դաշնակցությունն առանց դիմակի, եր., 1980, էջ 123։

2 Նույն տեղը, էջ 117։

* Հարկ է նշել, որ Բ. Օհանջանյանի այս գրքում տեղ են գտել բազմաթիվ փաստական անճշտություններ։ Օրինակ, 146-րդ էջում ասված է, թե դաշնակցական կառավարությունը 1920 թ. մայիսին դիմեց Թուրքիային՝ խնդրելով կատարել գերիների շտապ փոխանակություն և ցույց տալ ռազմական օգնություն, մինչդեռ նման բան տեղի չի ունեցել։ 165-րդ էջում ասված է, որ 1921 թ. փետրվարի 18-ին Դրոյի և Վրացյանի գլխավորությամբ խռովարարները գրավեցին Երևանը։ Վրացյանի մասին ճիշտ է, սակայն Դրոյի մասին՝ սխալ, որովհետև այդ ժամանակ նա Հայաստանում չէր։ Սխալ է ցույց տրված Մոսկվայի խորհրդա-թուրքական կոնֆերանսը սկսելու օրը՝ մարտի 5-ը (էջ 171)։ Ճիշտ չէ նաև հետևյալ արտահայտությունը՝ «ինչպես տեսանք, դաշնակցականների թուրքասիրական քաղաքականությունը նոր չէր, այլ սկսվում էր դեռևս 19-րդ դարի 90-ական թվականներից՝ երիտասարդ թուրքերի հետ հաստատված բարեկամությամբ»։ Հայտնի է, որ երիտթուրքերի հետ նրանց կապերը սկսվել են 20-րդ դարի սկզբին։ 171—172-րդ էջերում ասված է, որ 1920 թ. դեկտեմբերի 10-ին Հայաստանի արտաքին գործերի ժողկոմատը Անկարայի կառավարությանը նոտա է ուղարկել, որով թուրքական զորքերը պետք է հետ քաշվեին մինչև 1914 թ.

Սակայն Բ. Օհանջանյանը ոչ միշտ է ճիշտ քննադատում դաշնակցությանը՝ օրինակ, նա դաշնակցությանը մեղադրում է այն բանի համար, որ նա ձգտում էր հայ ժողովրդի համար ստեղծել մեկ միասնական հայրենիք։ Միթե վատ բան էր միասնական Հայաստան ունենալը։ Մեզ անհասկանալի է թվում, թե ինչու է նա խստորեն քննադատում «Դրոշակին», մեջբերելով թերթի հետևյալ խոսքերը. «Արաքսի այն և այս կողմերում հայ ժողովուրդը մղում է իր պայքարը, որպեսզի ջնջի բռնակալների ձեռքով գծած այն սահմանը, որը ռուսահայերին բաժանում է նրանց եղբայր թուրքահայերից և ստեղծի իր համար մի միասնական «ընդհանուր հայրենիք» (շակերտները հեղինակինն են— Շ. Հ.)։ Այս մեջբերումից հետո Բ. Օհանջանյանը, վերոհիշյալ նպատակը համարելով հակահեղափոխական, գրում է. «Ահա թե ինչպիսի նպատակներ էր ցանկանում զոռով փաթաթել դաշնակցություն կուսակցությունը կովկասահայերի շարժմանը»[1]։ Պետք էր քննադատել ոչ թե այդ նպատակը, որը հայ ժողովրդի արդարացի պահանջն ու ցանկությունն էր, այլ այն գործելակերպը, որով դաշնակցությունը փորձում էր հասնել դրան։ Բ. Օհանջանյանի սխալ և ծայրահեղ մոտեցման արտահայտություններից մեկն էլ այն է, որ նա գրում է, թե «Դաշնակցությունը Անդրկովկասում եղած բուրժուական կուսակցությունների մեջ ամենից խորամանկն ու նենգն էր»[2]։

Բ. Օհանջանյանի, ինչպես նաև այլ պատմաբանների (Վ. Ավետիսյան, Ս. Ալիխանյան և ուրիշներ) մոտ նկատվում է անցյալի ականավոր հեղափոխական գործիչների գրքերից անքննադատ վկայակոչված բազմաթիվ սխալ մեջբերումներ[3]։

Օրինակ, Բ. Օհանջանյանի աշխատությունում Ալ. Մյասնիկյանից կատարած հետևյալ մեջբերման կարիքը չկար, քանի որ

սահմանները, մինչդեռ այդ նոտայում նման պահանջ չկա։ 186-րդ էջում ասված է, թե 1920 թ. նոյեմբերի 29-ին Իջևանում Ս. Կասյանի ղեկավարությամբ ստեղծվեց Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե, մինչդեռ այն ստեղծվել է նոյեմբերի կեսերին Բաքվում։

1 Բ. Օհանջանյան, Տեսական մարքսիզմի ծանր հրետանին, էջ 131։

2 Նույն տեղը, էջ 138։

3 Տե՛ս Բ. Օհանջանյան. Տեսական մարքսիզմի ծանր հրետանին, էջ 45—46։ Դաշնակցությունն առանց դիմակի, էջ 150, Վ. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, էջ 101, 194, Ս. Ալիխանյան, Գ. Կ. Օրջոնիկիձեն և խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում, էջ 211 և այլն։



այն ճիշտ չէ։ Տուրք տալով ժամանակին իշխող սխալ կոնցեպցիային, Ալ. Մյասնիկյանը 1922 թ. գրել է. «Նույն ժամանակներում դաշնակցականները ծրագրում էին հարձակվել թուրքերի վրա և գրավել նրանց հողամասերը մինչև Միջերկրական ծով»[1]։ Մեկ այլ օրինակ։ Ս. Ալիխանյանի հիշյալ աշխատության մեջ նույնպես հարկ չկար մեջբերում կատարել Գ. Օրջոնիկիձեի 1925 թ. նոյեմբերի 29-ին Վրաստանի աշխատավորության հանդիսավոր նիստում արտասանած ճառից, որի մեջ ասված է. «Եթե այժմ Վանի ափերը, Ալաշկերտի հովիտը և նախկին Հայաստանի մյուս մասերը և ամբողջ Անատոլիան ծածկված են հայ ժողովրդի ոսկորներով, ապա դա պետք է վերագրել դաշնակցական քաղաքականությանը և հայ ժողովուրդը դրանով ավելի է տուժել դաշնակներից, քան նույնիսկ Աբդուլ Համիդից»[2]։ Ստացվում է այնպես, որ հայկական Մեծ եղեռնի համար մեղավոր էր ոչ թե թուրքական կառավարությունը, այլ դաշնակցությունը։ Դա անարդարացի է, մեղանչում պատմական ճշմարտության առջև։

Ավելացնենք, որ դաշնակցությանը բաշիբոզուկներ, ենիչերիներ, ազգային բռնակալներ, ազգի դավաճաններ և այլ պիտակներ ժամանակին տվել են հայ բոլշևիկներ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը և ուրիշներ կուսակցական սուր պայքարի, տաք բանավեճերի ընթացքում։ Այդ վիրավորական արտահայտությունները ու գնահատականները հետագայում առատորեն մուտք գործեցին խորհրդահայ պատմական-քաղաքական գրականության մեջ՝ հատկապես Վ. Ավետիսյանի և Բ. Օհանջանյանի աշխատություններում։ Մի՞թե չէր կարելի խուսափել նման պիտակներից։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում և Հայաստանում ստեղծված իրադրության, ինչպես նաև 1918—1920 թթ. պատմության մի շարք հանգուցային պրոբլեմների վերլուծությունը տրված է Գ. Գալոյանի «Պատմության քառուղիներում» աշխատության մեջ։ Այստեղ նա արտահայտում է այն միտքը, թե Անդրկովկասի կոմիսարիատ ստեղծելու գործում շահագրգռված էին ինչպես գերմանա-թուրքական կոալիցիան, այնպես էլ Անտանտի և ԱՄՆ-ի իմպերիալիստները, որոնք, առանձին-առանձին վերցրած, մեծ հույսեր էին կապում նրա

1 Ա. Մյասնիկյան (Ալ-Մարտունի), Ընտիր երկեր, Եր., 1957, էջ 387։

2 Орджоникидзе Г. К., Статьи и речи, т. 1, М., 1956, с. 412:

հետ՝ երկրամասը Խորհրդային Ռուսաստանից անջատելու համար։ Հավաստի աղբյուրներով հաստատվում է այն փաստը, որ Անդրկովկասի կոմիսարիատի ստեղծման և նրա հակահեղափոխական ուժերին մեծ օգնություն էին կազմակերպում նաև անգլիական ու ֆրանսիական կառավարությունները։

Պատմաբանը գտնում է, որ Ռուսաստանից Անդրկովկասի անջատումը բխում էր ազգայնական շահերից և վկայում էր բուրժուական նացիոնալիստների հետ գերմանա-թուրքական իմպերիալիստների քաղաքական դաշինքի մասին։ Սա չափազանցություն է։

Գտնելով, որ Թիֆլիսում կազմված դաշնակցական կառավարությունը ժողովրդի կողմից լիազորություններ չուներ և իրավականորեն անօրինական կառավարություն էր, նա հանգամանորեն քննում է այն հարցը, թե ինչ ներքին և արտաքին հանգամանքներ նպաստեցին, որ դաշնակցականները իշխանությունը վերցրին իրենց ձեռքը[1]։ Այս դրույթը վերանայման կարիք ունի։

Աշխատության մեջ լավ է բացահայտված ԱՄՆ-ի և Անտանտի կառավարությունների իմպերիալիստական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ 1918—1920 թվականներին։ Այստեղ հեղինակը նորահայտ վավերագրերի և այլ բնույթի հարուստ նյութերի հիման վրա շարադրել է Փարիզի խաղաղության կոնֆերանսում Հայկական հարցի, Հայաստանի մանդատի, Սևրի պայմանագրի, խորհրդա-հայկական բանակցությունների, քեմալական հարձակման և այլ հարցերի պատմությունը։ Քննադատելով դաշնակցական կառավարության երկուս ու կես տարիների ներքին և արտաքին քաղաքականությունը, հեղինակը այն միտքն է արտահայտել, թե «դաշնակցական պարագլուխները հրճվանքով ընդունեցին Սևրի պայմանագիրը և Հայաստանը ԱՄՆ-ի ու Անտանտի պրովոկացիաների զոհը դարձրին։ Նրանք ընդունակ չգտնվեցին հասկանալու, որ քաղաքական այն երերուն սիստեմը, որն ստեղծվում էր Հայաստանի շուրջը Սևրի պայմանագրի հետևանքով, հայ ժողովրդին կանխագուշակում էր միայն ու միայն նոր կոտորածներ ու զրկանքներ»[2]։

Մենք համաձայն ենք Սևրի պայմանագրին տված այդ գնահատականին, որը ստորագրել էր նաև Հայաստանի հանրապետության պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանը, և որը

[1] Տե՛ս Գ. Գալոյան, Պատմության քառուղիներում, էջ 236—237։

[2] Նույն տեղը, էջ 328։



իր ժամանակին մեծ խանդավառություն առաջ բերեց ամբողջ հայության մեջ խաբեություն էր դա, այն ոչ միայն որևէ օգուտ չտվեց հայ ժողովրդին, այլև նորանոր աղետների պատճառ դարձավ նրա համար, թղթի վրա մնաց այդ պայմանագրի 6-րդ հատվածի 88-րդ հոդվածը, որով Թուրքիան ճանաչում էր Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն։ Սակայն դաշնակիցները գործնական ոչ մի քայլ չարեցին Սևրի պայմանագիրն իրականացնելու համար, նրանք միայն խորհուրդ էին տալիս, որ Հայաստանը այդ պայմանագիրը իրականացնի իր ուժերով, մի բան, որ անհնարին էր առանց վտանգելու ժողովրդի ֆիզիկական գոյությունը։ Սևրի պայմանագրով դաշնակիցները հույս ունեին քեմալականներին գժտեցնել դաշնակցականների հետ, իսկ հետո, Հայկական հարցի առթիվ, նաև Խորհրդային Ռուսաստանի հետ։ Չէ՞ որ այդ պայմանագիրն ստորագրել էր սուլթանական կառավարության պատվիրակությունը, որ արդեն փաստական ուժ և իշխանություն չուներ։ Երկրում ստեղծվել էր քեմալական կառավարություն, որը ոչ միայն չճանաչեց Սևրի պայմանագիրը, այլև կազմակերպեց արևմտահայության նոր կոտորած ու արտաքսում, և վերջապես սեպտեմբերին հարձակվեց Արևելյան Հայաստանի վրա՝ նպատակ ունենալով բնաջնջել նաև հայ ժողովրդի այդ հատվածին։

## 2. Մայիսյան ապստամբությունը

1920-ական թվականներից սկսած խորհրդահայ պատմագրության կենտրոնական թեմաներից մեկն է եղել Մայիսյան ապստամբության պատմությունը։ Այդ հարցը լուսաբանվել է ինչպես առանձին հրատարակված գրքերում, այնպես էլ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման պատմությանը նվիրված ընդհանուր աշխատություններում։ Հեղինակներն ավել կամ պակաս չափով անդրադարձել են ապստամբության պարտության պատճառների հարցին, քննադատական դիտողություններ են արել հրապարակի վրա եղած գրականության վերաբերյալ։ Այդ հարցերը շատ ավելի հանգամանորեն է քննում պատմական գիտությունների թեկնածու Ա. Մելքոնյանը[1]։

Աշխատության առաջին գլուխը նվիրված է ապստամբության պատմության վերաբերյալ գրականության տեսությանը, իսկ մյուս գլուխներում, ապստամբության պատմության ընդհանուր

[1] Տե՛ս Ա. Մելքոնյան, Մայիսյան ապստամբության պատմության հարցի շուրջը, Եր., 1965։

ֆոնի վրա։ հաջողությամբ բացահայտվել են հատկապես նրա պարտության պատճառները։ Այստեղ հանգամանորեն քննվել են նաև մեր պատմագրության մեջ դեռևս չլուծված, վիճելի մի քանի այլ հարցեր՝ 1920 թ.հունվարյան կոնֆերանսի բանաձևի և զինված ապստամբության նկատմամբ նրա դիրքորոշումը, Արմենկոմի դերի ու գործունեության գնահատականը, զինված ապստամբության մասին ներկուսակցական տարաձայնությունները, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ներկայացուցիչների Ալեքսանդրապոլի խորհրդակցության օրվա և նրա որոշման, Ալեքսանդրապոլ քաղաքն առանց կռվի հանձնելու, ապրստամբության բնույթի, ինչպես նաև փաստական մի քանի անճշտություններ։ Քննարկվող բոլոր հարցերի վերաբերյալ նա հայտնում է իր կարծիքը։

Խոսելով Մայիսյան ապստամբությանը նվիրված գրեթե բոլոր աշխատությունների մասին, գնահատելով դրանց արժանիքները, Ա. Մելքոնյանը միաժամանակ ճիշտ դիրքերից բացահայտել է նաև այնտեղ տեղ գտած սխալներն ու թերությունները։ Այսպես, մենք միանգամայն ճիշտ ենք համարում նրա քննադատական դիտողությունները Շ. Ամիրխանյանի աշխատության վերաբերյալ՝ Արմենկոմի և Ալեքսանդրապոլի կոմիտեի հասցեին միակողմանի և անիրավացի մեղադրանքներ բարդելու, հեղափոխական ուժերի գնահատման ու ապստամբության բնույթի և այլ հարցերում։ Ճիշտ է նրա դիտողությունը Հ. Դուրգարյանի՝ 1927 թ. «Կոմունիստում» հրապարակված այն հոդվածի մասին, որտեղ վերջինս գրում է, թե «Հայաստանում 1920 թ. Մայիսյան ապստամբության համար օբյեկտիվ պայմաններ դեռևս չէին հասունացել»։ Նա այստեղ խոսում է նաև Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների կողմից ժամանակին դատապարտված այն արմատապես սխալ տեսակետի մասին, ըստ որի բացահայտ կամ քողարկված կերպով Մայիսյան ապստամբությունը դիտվում էր որպես արկածախնդրություն։ Տեղին է Ա. Մելքոնյանի կշտամբանքը Բ. Բորյանին, որը Արմենկոմի հասցեին թույլ է տվել չհիմնավորված մեղադրանքներ։

Խոսելով անհատի պաշտամունքի տարիների մասին, հեղինակն իրավացիորեն ցույց է տալիս այն բացասական ազդեցությունը, որ ունեցավ ժողովրդի թշնամի Բերիայի արատավոր և կեղծ գրքույկի հրատարակումը Անդրկովկասի, այդ թվում Հայաստանի հեղափոխական շարժման պատմության ճշմարտացի լուսաբանման վրա։ Դրա հետևանքով անհիմն հալածանքների և ֆիզիկական ոչնչացման ենթարկվեցին Արմենկոմի անդամները, ապստամբության մյուս ղեկավար ու ակտիվ մասնակիցները։ Որակելով որպես «ժողովրդի թշնամիներ», շրջանառությունից հանվեցին նրանց գրած հուշերն ու աշխատությունները, արգելվեցին ՀԿ(բ)Կ Կենտկոմին առընթեր կուսպատմության ինստիտուտի հրատարակած ժողովածուները, մի խոսքով՝ Մայիսյան ապստամբության պատմության վերաբերյալ 1920—35 թթ. ստեղծված գրեթե ամբողջ գրականությունը։ Փակվեցին ՀԿ(բ)Կ Կենտկոմին առընթեր կուսակցության պատմության ինստիտուտը, հեղափոխության թանգարանը, ուր հավաքված էին մեծ քանակությամբ արժեքավոր վավերագրեր։

Ճիշտ է նկատում հեղինակը, որ 1950-ական թվականների կեսերին արմատական բեկում է առաջանում Մայիսյան ապրստամբության պատմության գիտական հետազոտության բնագավառում, հրատարակվում են նոր, արժեքավոր աշխատություններ, սակայն նա իրավացիորեն քննադատում է պատմական գիտությունների թեկնածու Հ. Տոնոյանի աշխատությունը[1], որի մեջ պատմությունը ներկայացված է առանց գործող անձերի, իսկ Մայիսյան ապստամբության հերոսները դեռևս մնում են ժողովրդի թշնամիներ։ Նա ևս անհիմն մեղադրանքներ է բարդում Արմենկոմի և Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի հասցեին։ Բարձր գնահատելով Գ. Ղարիբջանյանի, Գ. Գալոյանի և Հ. Կարապետյանի աշխատությունները[2], նա միաժամանակ նշում է նրանցում տեղ գտած մասնակի թերությունները՝ որին մենք ևս համաձայն ենք։ Ճիշտ է Ա. Մելքոնյանի կարծիքը, որ Մայիսյան ապստամբության վերաբերյալ հիշյալ աշխատություններից ավելի ծավալուն, ամբողջական ուսումնասիրությունը պատմական գիտությունների թեկնածու Հ. Կարապետյանի աշխատությունն է։

Հեղինակին հաջողվել է լուծել նաև վիճելի մի շարք կարևոր

---

1 Տե՛ս Հ. Տոնոյան, Փառապանծ էջ Հայաստանի հեղափոխական շարժումների պատմությունից։ Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, Եր., 1955։

2 Տե՛ս Գ. Ղարիբջանյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թվականին, Եր., 1955, Գ. Գալոյան, Մայիսյան ապստամբությունը, Եր., 1960, Հ. Կարապետյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թ., Եր., 1961։

հարցեր։ Այսպես, վկայակոչելով Ս. Կասյանի, կուսակցական հունվարյան կոնֆերանսի նախագահ Դ. Շահվերդյանի, կոնֆերանսի այլ պատգամավորների, ինչպես նաև Ալեքսանդրապոլի կուսկազմակերպության մի քանի հին անդամների գրավոր հավաստիացումները, նա իրավացիորեն գտնում է, որ ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվում եղած բանաձևը առաջին անգամ հրատարակվել է 1920 թ. փետրվարին Բաքվում[1], 1922 թ. ՀԿ(բ)Կ Կենտկոմի տեղեկագրում[2] և հետագայում քաղաքացիություն է ստացել որպես Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների 1920 թ. հունվարյան կոնֆերանսի բանաձև[3]։ Իրականում այն Ալեքսանդրապոլի կոմունիստական կազմակերպության երկրորդ կոնֆերանսի բանաձևն է[4]։ Այս թյուրիմացության հեղինակը Ավիս Նուրիջանյանն է։ Ա. Մելքոնյանը հենվելով փաստերի վրա, պնդում է, որ հունվարյան կոնֆերանսը ընդունել է ոչ թե մատնանշված բանաձևը, այլ թեզիսներ, որի մեջ, ըստ Ս. Կասյանի, զինված ապստամբության վերաբերյալ ընդունվել է հետևյալ դիրքորոշումը. «Պատրաստ լինել իշխանությունը գրավելու, երբ նեցուկ կունենանք մի հարևան երկիր, որով հնարավոր կլինի կապվել բանվորագյուղացիական Ռուսաստանի հետ»[5]։

Հեղինակը գտնում է, որ հունվարյան կոնֆերանսը չէր կարող ընդունել Ա. Նուրիջանյանի ներկայացրած բանաձևը, որի մեջ ասված է, թե «քաղաքացիական պատերազմը Հայաստանում տիրող դասակարգերի դեմ (ինչպես և՛ Վրաստանում, և Ադրբեջանում) և այդ դասակարգերի կազմակերպած «դաշնակցական» կառավարության դեմ, դաշնակների իշխանության բռնի հեղափոխական տապալումը Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջնահերթ խնդիրն է[1]։ Ա. Մելքոնյանի կարծիքով, մեր պատմական գրականության մեջ գրեթե ամենուրեք տարածված այս մեջբերումը հակասում է հունվարյան կոնֆերանսի թեզիսների հեղինակների դիրքորոշմանը։ Այլապես ստացվում է այնպես, որ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, առանց սպասելու կարմիր բանակի առաջխաղացմանը Անդրկովկասի սահմաններին և հարևան հանրապետություններում հեղաշրջմանը, պետք է Հայաստանում ապստամբություն բարձրացնեին։ Դրանից բացի, հիշյալ բանաձևը կուրս էր ընդունել ոչ թե դեպի Խորհրդային Ռուսաստան, այլ դեպի Արևելք։ Հեղինակը սխալ է համարում նաև բանաձևի այն դրույթը, թե «Հայաստանում չկա ազգային հարց, Հայաստանում կա միայն սոցիալական հարց»[2]։

Այսպիսով, Ա. Մելքոնյանը տասնամյակների հեռավորությունից լուրջ փորձ է արել ճշտելու Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության կարևոր էջերից մեկը։

Հեղինակը ուշագրավ ճշտումներ է արել նաև հունվարյան կոնֆերանսի մասնակիցների, Արմենկոմի և Մայիսյան ապստամբության ժամանակ ստեղծված ռազմահեղափոխական կոմիտեների կազմի մեջ։ Դրանից հետո նա անցնում է Արմենկոմի գործունեության գնահատականին, քննադատելով այդ հարցում թույլ տված սխալները։

Ա. Մելքոնյանը ժխտում է Շ. Ամիրխանյանի այն պնդումը[3], թե, իբր, Արմենկոմը գտնում է, որ Հայաստանում խորհրդային իշխանություն կարող է հաստատվել խաղաղ ճանապարհով, առանց քաղաքացիական պատերազմի, ուստի և նա, իբր, ոչ իր, ոչ էլ կուսակցական տեղական կազմակերպությունների առաջ դրված ապստամբության խնդիր չէր դնում։ Հեղինակն իրավացիորեն քննադատում է նաև Հ. Տոնոյանին, որն անհիմն կերպով քաղաքական կոպիտ սխալներ է վերագրում Արմենկոմին և պնդում, թե, իբր, Արմենկոմը «բռնել էր դաշնակցական կառավարության ղեկավարների հետ բանակցությունների, իշխանությունը խաղաղ ճանապարհով իր ձեռքը վերցնելու ուղին, և որ

---

[1] Տե՛ս «Новый мир», 1920, № 23, Баку:

[2] Տե՛ս «Известия» Центрального Комитета Коммунистической партии Армении, 1922, № 1, Ереван:

[3] Տե՛ս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և խորհրդային իշխանության հաղթանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (խմբ.՝ Ա. Մնացականյան և ուրիշներ), Եր., 1960, էջ 301—306։

[4] Այս հարցի մասին տե՛ս Ա. Մելքոնյանի նշված աշխատությունը, էջ 24—35։

[5] Ս. Կասյան, Ձախության հիվանդությունը մեզանում, «Նոր աշխարհ», Թիֆլիս, 1920, № 2, էջ 11։



---

[1] Տե՛ս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և խորհրդային իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 303։

[2] Նույն տեղը, էջ 304։

[3] Տե՛ս «Լենինյան ուղիով», 1959, № 7, էջ 98։

նույնիսկ համաձայն էր դաշնակների հետ միասին ստեղծելու կոալիցիոն կառավարություն»[1]։ Թերևս դա ճիշտ կլիներ։

Պետք է լիովին համաձայնվել Ա. Մելքոնյանի հետ նաև այն հարցում, որ և՛ Շ. Ամիրխանյանը, և՛ Հ. Տոնոյանը սխալվում են, պնդելով, թե Արմենկոմի թույլ տված սխալները հետևանք էին և՛ «աջ», և՛ «ձախ» օպորտունիստական տարրերի քաղաքականության։ Ըստ Հ. Տոնոյանի ապստամբությունն անպայման կհաղթեր, «եթե ժամանակին չեզոքացվեին այդ ղեկավար կենտրոնում նստած «աջ» և «ձախ» օպորտունիստական տարրերը»[2]։ Ա. Մելքոնյանը միանգամայն ճիշտ է, երբ գրում է, որ «Արմենկոմի այդպիսի բաժանումը և բնութագրումը արմատապես սխալ է»[3]։ Այդ պիտակները անհատի պաշտամունքի ժամանակաշրջանի ծնունդ են, երբ որոշ պատմաբաններ Մայիսյան ապստամբության պարտության պատճառներից մեկը համարում էին Արմենկոմի կազմում «խցկված դավաճանական տարրերի» քայքայիչ գործունեությունը։

Քննության առնելով Մայիսյան ապստամբության նախապատրաստման և ապստամբության ժամանակաշրջանում ներկուսակցական, հատկապես ՌԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի կոմիտեի՝ Ա. Նուրիջանյանի գլխավորությամբ, և Արմենկոմի միջև ծագած տարաձայնությունների հարցը, Ա. Մելքոնյանը հանգամանորեն բացահայտում է ապստամբության պարտության պատճառները՝ շատ դեպքերում հակադրվելով այս կամ այն պատմաբանի տեսակետին։ Կարելի է հաստատապես պնդել, որ 1920-ական թվականներից հրատարակված և ոչ մի աշխատության մեջ Մայիսյան ապստամբության պարտության պատճառներն այնքան խորը և բազմակողմանի չեն լուսաբանվել, ինչպես դա արվել է Ա. Մելքոնյանի հիշյալ աշխատության մեջ։

Մայիսյան ապստամբության մասին 1980 թվականին լույս տեսավ Գ. Գալոյանի նոր աշխատությունը[4]։ Այստեղ նա աշխատելով խուսափել հանրահայտ փաստերի շարադրումից, լուսաբանել է մի շարք կարևոր հարցեր։ Աշխատությունում ցույց է տրված հայ ժողովրդի ազատագրման գործում Հոկտեմբերյան

[1] «Լենինյան ուղիով», 1960, № 2, էջ 102—103։

[2] Նույն տեղը, էջ 103։

[3] Ա. Մելքոնյան. Նշվ. աշխ., էջ 45։

[4] Տե՛ս Գ. Գալոյան. Հերոսական մայիսից—հաղթական նոյեմբեր, Եր., 1980։



հեղափոխության խաղացած դերը, բացահայտվել են Մայիսյան ապստամբությունը ծնող սոցիալ-քաղաքական պատճառները, վեր է հանվել բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը ապստամբության կազմակերպման և ղեկավարման գործում։ Հեղինակը ներկայացրել է ապստամբության ընթացքը՝ բացահայտելով նրա պարտության պատճառներն ու ապստամբության պատմական նշանակությունը։

Գ. Գալոյանի աշխատության մեջ քննադատված են ոչ միայն դաշնակցական պատմագրության սխալ կոնցեպցիան, այլև արդի հակակոմունիզմի փորձերը՝ որոնք ձգտում են ցույց տալ, թե, իբր, Հայաստանում ապստամբությունը ծագել է Խորհրդային Ռուսաստանի և, հատկապես, 11-րդ բանակի հրամանատարության դրդմամբ, որ այդ ապստամբությանը ժողովրդական զանգվածները չէին մասնակցում, որ հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը դաշնակցական կառավարության կողմն էր և այլն[1]։

## 3. Ռազմաքաղաքական իրադրությունը Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատման նախօրյակին

Խորհրդահայ պատմաբանների աշխատություններում բավականաչափ լուսաբանված է Հայաստանի ռազմաքաղաքական իրադրությունը 1920 թ. կեսերին և աշնանը։ Այստեղ մենք կանդրադառնանք խորհրդա-հայկական բանակցություններին, Արևելյան Հայաստանի դեմ քեմալականների զավթողական պատերազմին և Ալեքսանդրապոլի պայմանագրին։

Այս հարցերը լայն տեղ են գրավում Ս. Ալիխանյանի աշխատության մեջ[2]։ Նա հանգամանորեն շարադրում է Խորհրդային Ռուսաստանի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, մասնավորապես, լուսաբանում է խորհրդա-հայկական բանակցությունների ընթացքը, բացահայտում է Մոսկվայի բանակցությունների անհաջողության պատճառները՝ այն վերագրելով դաշնակցական կառավարության երկդիմի և անհեռատես քաղաքականությանը։ Աշխատության մեջ ցույց է տրված, որ իմպերիալիստական մեծ տերությունները իրենց հակախորհրդ-

[1] Տե՛ս Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 43—44։

[2] Տե՛ս Ս. Ալիխանյան, Խորհրդային Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում։

դային պայքարի պլաններում մեծ տեղ էին հատկացնում Հայաստանին, այն դիտելով ոչ միայն որպես պլացդարմ, այլև մի տարածք, որը կարելի էր որպես փոխհատուցում զիջել քեմալական Թուրքիային, եթե վերջինս համաձայնվեր իր զենքն դադրեցնել Խորհրդային Ռուսաստանի դեմ։ Գրքում վերհանված է Գ. Չիչերինի, Բ. Լեգրանի, Գ. Օրջոնիկիձեի եռանդուն գործունեությունը։

1920 թ. Հայաստանի դեմ քեմալականների սանձազերծած պատերազմի պատմությանը անդրադարձել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Կարապետյանը[1], որը հիմնականում ճիշտ է վերլուծել այդ պատերազմի պատճառներն ու բնույթը։

Խորհրդահայ պատմաբանները, գրում է նա, համակողմանի չեն բացահայտել պատերազմի պատճառները, մասնավորապես անտեսվել են քեմալականների գաղափարախոսությունը և հակախորհրդային պլանները։ Հենվելով մի շարք փաստաթղթերի, ինչպես նաև հենց Մ. Քեմալի վկայությունների վրա, նա ցույց է տալիս, որ քեմալականները որոշել էին այդ պատերազմն սկսել դեռևս 1920 թ. գարնանը։ Ճիշտ է հեղինակի այն հետևությունը, թե՝ եթե քեմալական Թուրքիայի պատերազմը Հայաստանի դեմ իմպերիալիստական էր, զավթողական, անարդարացի, ապա Հայաստանի, հայերի կողմից՝ արդարացի էր, պաշտպանողական՝ իր երկիրը ներխուժած թալանչիների, նվաճողների, ճնշողների դեմ, հանուն իր հողի և հայրենիքի[2]։ Գրքույկում ցույց է տրված Խորհրդային Ռուսաստանի պայքարը հայ-թուրքական տարաձայնությունները խաղաղ ճանապարհով լուծելու համար։ Սակայն սխալվում է Ս. Կարապետյանը, երբ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը համարում է Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Հայաստանի կառավարությունների միջև կնքված ռազմաքաղաքական դաշինք[3]։ Այդ համաձայնագիրը դաշնակցական կառավարության կապիտուլյացիայի ակտ էր, որ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Լեգրանի հետ

[1] Տե՛ս Ս. Կարապետյան, 1920 թվականի հայ-թուրքական պատերազմը և Խորհրդային Ռուսաստանը, Եր., 1965։

[2] Տե՛ս Ս. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 28։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 12։



կնքեցին դաշնակցական կառավարության կողմից լիազորված Դրոն և Տերտերյանը։ Հետևաբար, այդ կառավարության ներկայացուցիչները երբեք չէին կարող ներկայացնել Խորհրդային Հայաստանը։ Ի դեպ, այս թյուրիմացությունը, որը բավականին տարածված է խորհրդահայ պատմական գրականության մեջ, գալիս է պրոֆեսորներ Յու. Կլյուչնիկովի և Ա. Սաբանինի կազմած ժողովածուից[1]։ Ս. Կարապետյանի գրքույկում իրավացիորեն քննադատված են խորհրդային պատմաբաններ Միլլերը, Խեյֆեցը և ուրիշներ, որոնք գտնում են, թե պատերազմը, իբր, սկսեցին դաշնակցականները։

Հայտնի է, որ երկար ժամանակ հիմնականում սխալ և միակողմանի է բացատրվել քեմալական Թուրքիայի քաղաքականության բնույթը, իդեալականացվել է քեմալական շարժումը, դրանով իսկ անտեսելով նրա նվաճողական-ռեակցիոն քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ։ Մյուս կողմից, շեշտը դնելով դաշնակցության քաղաքականության քննադատության վրա, 1920—1930-ական թվականներին հրատարակված մի շարք աշխատություններում հեղինակներն այն սխալ տեսակետն են արտահայտել, թե, իբր, 1920 թվականին դաշնակցական Հայաստանն է հարձակվել քեմալական Թուրքիայի վրա։ Այսպես, այդպիսի կարծիք է հայտնել Ա. Կարինյանը[2]։ 1930-ական թվականների կեսերին Մ. Ներսիսյանը գրել է. «Հավատարիմ իր բուրժուական հակաժողովրդական էությանը, դաշնակցական կառավարությունը 1920 թ. սկսել էր մի նոր ավանտյուրիստական պատերազմ ազգային-ազատագրական պայքարի բովում գտնվող Տաճկաստանի դեմ»[3]։ Կ. Ղազարյանը գրել է, թե, իբր, դաշնակցությունը նվաճողական քաղաքականություն էր վարում Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի, Կիլիկիայի նկատմամբ[4] և այլն։

[1] Տե՛ս Ключников Ю. и Сабанин А., Международная политика новейшего времени в договорах и декларациях, М., 1928, էջ 75—76։

[2] Տե՛ս «Большевик Закавказья», Тифлис, 1929, № 9—10, էջ 73։

[3] Մ. Ներսիսյան, Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում, Եր., 1935, էջ 115։

[4] Տե՛ս Կ. Ղազարյան, Խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում, ՀԽՍՀ մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի «Տեղեկագիր», № 1, 1935, էջ 74։

1950-ական թվականների վերջերին այս հարցը ստացավ ճիշտ լուսաբանություն։ Հրատարակվեցին մի շարք աշխատություններ (Ե. Սարգսյան, Ա. Սաֆրաստյան, Ռ. Սահակյան և ուրիշներ), որոնց մեջ փաստական նյութի հիման վրա մերկացվում է Թուրքական ժամանակակից պատմագրության կեղծարարությունը[1]։ Շուտով տիրապետող դարձավ այն կոնցեպցիան, որ քեմալական շարժումը, մի կողմից, հակաիմպերիալիստական, ազգային-ազատագրական բնույթ է կրել և ուղղված է եղել արևմտյան իմպերիալիզմի դեմ, իսկ, մյուս կողմից, Անդրկովկասի, մասնավորապես Հայաստանի նկատմամբ այն եղել է զավթողական, իմպերիալիստական։

Չնայած դրան, Մոսկվայում հրատարակված մի շարք աշխատություններում, հատկապես «Վսեմիրնայա իստորիայի» 8-րդ հատորում պրոֆ. Ա. Միլլերը դարձյալ անտեսում է քեմալիզմի երկակի բնույթը և, հակառակ ճշմարտության, 1920 թ. պատերազմի սանձազերծման ամբողջ մեղքը բարդելով Թուրքիայի ներսում եղած Քեմալի հակառակորդների, ինչպես և Անտանտի իմպերիալիստների ու հատկապես դաշնակցական կառավարության վրա, դրանով իսկ անտեսում է Քեմալի և Թուրք մյուս նացիոնալիստների զավթողական քաղաքականությունը։

Ա. Միլլերի վերոհիշյալ սխալ տեսակետի քննադատությամբ առաջինը հանդես եկավ Ե. Սարգսյանը[2]։ Թվում էր այդ հարցը իր ճիշտ և վերջնական գնահատականը ստացավ, սակայն, ցավոք, այդ ամենից հետո նորից կոպիտ սխալ թույլ տրվեց։ «ԽՍՀՄ պատմության» երկրորդ սերիայի VII հատորի Անդրկովկասի վերաբերյալ պատմական ակնարկի հեղինակը (պրոֆ. Ա. Հարությունյան—Հարենց) անհիմն կերպով գրում է, թե, իբր, դաշնակցականները «... հավակնություն ունենալով Թուրքական տերիտորիայի մի մասի նկատմամբ, ... 1920 թ. սեպտեմբերին պատերազմի մեջ մտան Թուրքիայի հետ»[3]։ Իրականում կատարվել է ճիշտ հակառակը՝ Թուրքիան, որը մինչ այդ զավթել էր Արևմտյան Հայաստանը, հայ ժողովրդի դարավոր հայրենիքը,

[1] Այս մասին տե՛ս Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան, Հայ ժողովրդի նոր պատմության ենթադրությունը Թուրքական պատմագրության մեջ, Եր., 1963։

[2] Տե՛ս Ե. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում (1914—1918), Եր, 1964, էջ 438։

[3] Տե՛ս История СССР, вторая серия, М., 1967 (Под ред. Б. Пономарева), էջ 618։



բնաջնջել հայ բնակչության ճնշող մեծամասնությանը, 1920 թ. սեպտեմբերին ամբողջ ճակատով հարձակվեց Արևելյան Հայաստանի վրա՝ նպատակ ունենալով զավթել նաև այն, բնաջնջել հայ ժողովրդի այդ հատվածը ևս։ Մինչդեռ վերոհիշյալ գրքում, լռություն մատնելով Անդրկովկասի նկատմամբ Թուրքիայի վարած նվաճողական քաղաքականությունը, ագրեսիայի զոհ Հայաստանը ներկայացված է որպես ագրեսոր, ուրիշի տերիտորիան զավթելու հավակնորդ, իսկ Թուրքիան՝ անմեղ զոհ։ Ո՞ւմ է հարկավոր նման կեղծիքը։ Սա միայն ջուր է լցնում պատմության Թուրք կեղծարարների ջրաղացին և մոլորության մեջ գցում հասարակական կարծիքը։ Բացի այդ, ընթերցողների մոտ թյուր պատկերացում է ստեղծվում նաև Խորհրդային Ռուսաստանի քաղաքականության վերաբերյալ։ Հեղինակը հաջորդ պարբերությունում ակնհայտորեն հակասելով ինքն իրեն, գրում է, թե այդ ժամանակ «խորհրդային կառավարությունը ռազմական օգնություն առաջարկեց դաշնակներին»։ Իհարկե, դա ճիշտ է, սակայն, եթե, իրոք, Հայաստանը Թուրքական տարածքի մի մասը զավթելու հավակնությամբ մտավ պատերազմի մեջ, ինչպես պնդում է հեղինակը, ապա ինչպե՞ս կարող էր Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ագրեսորին օգնություն ցույց տալ։ Մի՞թե պարզ չէ, որ Խորհրդային Ռուսաստանը հայ ժողովրդին օգնություն էր խոստանում այն պատճառով, որովհետև վերջինիս մղած պատերազմը համարում էր արդարացի, ազատագրական, Թուրքական ագրեսիան հետ մղելու համար։ Այլ բան է, որ դաշնակցական կառավարությունը, մերժելով Խորհրդային Ռուսաստանի առաջարկը և ապավինելով արևմտյան տերությունների օգնությանը, իր անհեռատես քաղաքականությամբ հայ ժողովրդին կանգնեցրեց աղետի առաջ։ Ստեղծված ծանր վիճակից փրկվելու միակ ելքը Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումն էր։ Մի՞թե հեղինակին հայտնի չեն Վ. Ի. Լենինի, Ս. Մ. Կիրովի, Գ. Կ. Օրջոնիկիձեի, Գ. Վ. Չիչերինի և ուրիշների որոշակի ասույթները Հայաստանի դեմ Թուրքիայի կողմից սկսած պատերազմի զավթողական բնույթի մասին, պատերազմ, որն ուղղված էր ոչ միայն Հայաստանի, այլև Անդրկովկասի և Խորհրդային Ռուսաստանի դեմ։ 1920 թ. հոկտեմբերի 9-ին հանդես գալով ՌԿ(բ)Կ Մոսկվայի կազմակերպության ակտիվի խորհրդակցությունում, Վ. Ի. Լենինը նշել է. «Վերջերս Թուրքերը

սկսել են հարձակվել Հայաստանի վրա, նպատակ ունենալով գրավել Բաթումը, իսկ հետո, թերևս, նաև Բաքուն»[1]։

Այնուհետև Վ. Ի. Լենինը 1920 թ. դեկտեմբերի 21-ին խորհուրդների VIII համագումարի ՌԿ(բ)Կ ֆրակցիայի նիստում տված զեկուցման եզրափակիչ խոսքում ասել է. «Թուրքական հարձակումը մեր դեմ էր ուղղված... Թուրքիան ղեկավարում են կադետները, օկտյաբրիստները, ազգայնականները, որոնք պատրաստ են մեզ վաճառելու Անտանտին»[2]։

Այդ հարցը ճիշտ է լուսաբանվել Մոսկվայում հրատարակված պատմագիտական մի շարք աշխատություններում։ Օրինակ, «Ասիայի և Աֆրիկայի երկրների նորագույն պատմության» բուհական դասագրքում ասված է. «... Անկարայի կառավարությունը հույների դեմ հակահարձակում կազմակերպելու փոխարեն, պանթուրքական տարրերի ճնշման տակ արշավանք սկսեց Հայաստանի դեմ, ձգտելով գրավել և Թուրքիայի տարածքին միացնել Արևելյան Հայաստանը և դուրս գալ Ադրբեջանի սահմանները»[3]։ Մեկ այլ աշխատությունում ասված է. «...Ռեակցիոն ուժերի ճնշման տակ քեմալական կառավարությունը մերժեց խորհրդային կառավարության՝ նախկինում ընդունած միջնորդությունը Հայաստանի հետ ունեցած բանակցություններում, նա շարժեց իր զորքերը Հայաստանի դեմ և փախուստի մատնեց դաշնակցական թույլ բանակը»։ Եվ հետո՝ «Թուրքիայի ռեակցիոն շրջանների ավանտյուրան նշանակալից ռազմական ուժեր առանձնացնելով Հայաստանի դեմ ագրեսիայի համար, թուլացրեց Թուրքիային՝ իմպերիալիզմի դեմ մղվող նրա պայքարում»[4]։

Ցավալի է, որ «ԽՍՀՄ պատմության» VII հատորում պատմական ճշմարտությանը հակասող հակագիտական տեսակետը առաջ է քաշվել այն ժամանակ, երբ, նույնիսկ, թուրք պատմաբաններից ոմանք (Ջեմալ Քութայ, Էնվեր Զիա Քարալ, Թահսին Յունալ և ուրիշներ), ինչպես և նախկին քաղաքական ու ռազմական գործիչներ (Մուստաֆա Քեմալ փաշա, Քյազիմ Կարաբեքիր, Ալի

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 41, էջ 406։

2 Նույն տեղը, հ. 42, էջ 154։

3 Новейшая история стран Азии и Африки. М., 1965, с. 361.

4 История внешней политики СССР, т. 1. М., 1966, с. 141.



Ֆուաթ Ջեբեսոյ և ուրիշներ), անկարող լինելով հերքել պատմական փաստերը, հարկադրված եղան ընդունել, որ Թուրքիան է հարձակվել Հայաստանի վրա։

Պետք է նշել նաև, որ Հայաստանին վերաբերող ընդամենը մեկուկես էջի վրա հեղինակը թույլ է տվել բազմաթիվ փաստական սխալներ, որոնք, իրենց հերթին, թյուրիմացության մեջ են գցում ընթերցողին*։

Քեմալականների ազգայնական քաղաքականությունն ու զավթողական պատերազմը Արևելյան Հայաստանի դեմ հանգամանորեն քննվում է նաև Մ. Արզումանյանի «Արհավիրքից վերածնունդ» աշխատության մեջ։ Միաժամանակ ցույց է տրված հայ-թուրքական տարածքային կնճռոտ հարցը լուծելու խորհրդային կառավարության ձգտումը, այսինքն՝ լուծելու այն ազգագրական,

* Հայտնի է, որ զինված ապստամբության մասին ՀԿ(բ)Կ Կենտկոմի կոչը՝ ուղղված բանվորներին և գյուղացիներին, հրապարակվել է 1920 թ. հոկտեմբերի 8-ին, մինչդեռ հեղինակը գրում է հոկտեմբերի 21-ին։ 619-րդ էջում նշված է, թե իբր, կարմիր բանակի զորքերը Երևան են մտել 1920 թ. դեկտեմբերի 4-ին, մինչդեռ այն տեղի է ունեցել դեկտեմբերի 6-ին։ Փաստական տեսակետից ճիշտ չէ այն, որ, իբր, 1918 թ. գերմանա-թուրքական զորքերի Անդրկովկասից դուրս գալուց հետո նրանց փոխարինելու եկած անգլիական իմպերիալիստները, «օկուպացիայի ենթարկեցին երկրամասի ամբողջ տարածքը» (էջ 611)։ Գրքում ասված է, թե թուրքերը Կարսում և Ալեքսանդրապոլում կոտորել են 60 հազար հայ, մինչդեռ իրականում կոտորվել են ավելի շատ հայեր։ Այդ 60 հազարը վերաբերում է միայն Ալեքսանդրապոլի գավառին (տե՛ս ԽՍՀՄ արտաքին քաղաքականության արխիվ, ֆ. 132, գ. 14, թ. 52)։ 618-րդ էջում ասված է, թե անգլիական կառավարությունը Հայաստան ուղարկեց 40 հազար զինվորի զենք ու սպառազինություն։ Դա ճիշտ չէ։ Անգլիան միայն նման խոստում էր տվել, իսկ իրականում շատ քիչ զենք և հանդերձանք էր ուղարկել Հայաստան։ Հարկ կար Անգլիայի մասին հակառակ բան գրել, այն, որ գրժեց իր խոստումը, խաբեց թուրքական արշավանքից արյունաքամ լինող հայ ժողովրդին։ Եթե, իրոք, Անգլիան 40 հազար հայ զինվորի զենք և սպառազինություն ուղարկած լիներ, ապա հարցիր թե գեներալ Քյազիմ Կարաբեքիրի 50 հազարանոց բանակը կարողանար 1,5 ամսում նվաճել Արևելյան Հայաստանի մեծ մասը։ Տարօրինակ է, որ գրքում զետեղված նկարում (էջ 619) սխալ են ցույց տրված Հայաստանի հեղկոմի անդամները՝ Ի. Դովլաթյանի փոխարեն ցույց է տրված Ս. Կասյանը, Ս. Կասյանի փոխարեն՝ Ա. Բեկզադյանը, վերջինիս փոխարեն՝ Ի. Դովլաթյանը. Ի վերջո հասկանալի չէ, թե ինչու են բացակայում հեղկոմի մյուս ակտիվ անդամների՝ Ս. Տեր-Գաբրիելյանի, Ա. Մռավյանի և Ս. Նուրիջանյանի նկարները։ Այլևս չենք խոսում այն մասին, որ նկարից չի պարզվում, թե ով է եղել Հայհեղկոմի նախագահը։

տնտեսական ու պատմական դիրքերից, լինել միջնորդ Հայաստանի ու Թուրքիայի միջև՝ կանխելու արյունալի պատերազմը։ Նա կանգ է առնում Մոսկվայի խորհրդա-հայկական բանակցությունների հարցի վրա։

Պատմաբանը գտնում է, որ սխալ է պատմական գրականության մեջ «հայ-թուրքական պատերազմ» արտահայտությունը, ուստի այն պետք է կոչել իր անունով՝ «քեմալականների զավթողական պատերազմը Հայաստանի դեմ», կամ ծայրահեղ դեպքում՝ «թուրք-հայկական պատերազմ», քանի որ նրա նախաձեռնողներն ու ագրեսորները եղել են թուրքերը[1]։ Նա իրավացիորեն մեղադրում է այն «հետազոտողներին», ովքեր գործն այնպես են ներկայացնում, թե, իբր, պատերազմի նախաձեռնողը դաշնակցությունն էր, իսկ Թուրքիան եղել է միայն «պաշտպանվող», իբր, Անկարայի կառավարությունը նվաճողական պլաններ չի ունեցել Անդրկովկասի նկատմամբ[2]։ Մ. Արզումանյանը փաստերով, առաջին հերթին Մ. Քեմալի և թուրք մյուս պարագլուխների գրավոր տվյալների հիման վրա, հիմնավորում է նման տեսակետների սխալականությունը։ Այս տեսանկյունից նա իրավացիորեն քննադատում է «ԽՍՀՄ պատմության» VII հատորում, «Համաշխարհային պատմության» VIII հատորում, նաև Ս. Արալովի հիշողություններում, Ա. Շամսուտդինովի և այլոց մոտ տեղ գտած սխալները և ցույց տալիս, որ ագրեսորները քեմալականներն էին։

Մ. Արզումանյանը գտնում է, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը պետք է համարել ոչ միայն բռնության ակտ Թուրքիայի կողմից, այլև դաշնակների գործարք թուրքական նվաճողների հետ, թուրք-դաշնակցական համագործակցություն խորհրդային իշխանության դեմ[3]։ Այդ հարցերի առնչությամբ տրված է նաև դաշնակցություն կուսակցության պարագլուխների քննադատությունը։

Խորհրդային Ռուսաստանի դերը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ ժամանակի պատմության ընդհանուր ֆոնի վրա հանգամանորեն լուսաբանված է պատմական գիտությունների դոկտոր Է. Զոհրաբյանի մենագրության մեջ[1]։ Հարուստ է մենագրության աղբյուրագիտական բազան։ Այստեղ համակողմանիորեն բացահայտված է քեմալական Թուրքիայի նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասի և, առաջին հերթին, Հայաստանի նկատմամբ։ Լայն տեղ է տրված 1920 թ. աշնանը քեմալականների հարձակմանը Արևելյան Հայաստանի վրա և հանգամանորեն վերլուծված է Ալեքսանդրապոլի դեկտեմբերի 2-ի պայմանագիրը։

Այն հարցին, թե ինչո՞ւ 1920 թ. գարնանը, ինչպես նախատեսվում էր, չսկսվեց պատերազմը, պատմաբանը տալիս է հետևյալ պատասխանը՝ 1920 թ. աշնանը հարձակման համար նպաստավոր պայմաններ էին ստեղծվել։ Օգտվելով Անտանտի թողտվությունից, գրում է նա, ինչպես նաև այն հանգամանքից, որ Անդրկովկասում խորհրդային զորքերի թիվը խիստ պակասել էր լեհական ճակատ փոխադրվելու պատճառով և, վերջապես, ապահովելով մենշևիկյան Վրաստանի բարյացակամ չեզոքությունը, քեմալական Թուրքիան, օգտագործելով սահմանային միջադեպերը, սեպտեմբերի 21-ին առանց պատերազմ հայտարարելու ամբողջ ճակատով հարձակման անցավ[2]։

Այն հարցին, թե, չնայած նրան, որ հայկական զորքերը պարտություն պարտության հետևից էին կրում, դաշնակիցները դրժում էին Հայաստանին օգնելու իրենց խոստումները, ինչո՞ւ քեմալականները չփորձեցին ներխուժել նաև Արարատյան դաշտավայր, այլ ընդհակառակը՝ Կարսի գրավումից հետո, մոտենալով Արփաչային, նրանք առաջինը նոյեմբերի 1-ին հաշտության առաջարկ արեցին, Է. Զոհրաբյանը տալիս է հետևյալ ուշագրավ պատասխանը։ Նախ՝ Արարատյան դաշտավայրը Հայաստանի սիրտն էր, նրա բնօրրանը, հետևապես թեկուզ հաղթող բանակի համար հետագա հարձակումը մեծ ռիսկի հետ էր կապված, երկրորդ՝ քեմալականները չէին կարող հաշվի չառնել խորհրդային կառավարության դիրքորոշումը հայ-թուրքական հարաբերությունների հարցում, երրորդ՝ քեմալականները քաջ գիտակցում էին, որ Եվրոպայի առաջադեմ հասարակական կարծիքը Հայկական հարցում հայերի կողմն է, ուստի ստիպված էին հաշտվել մի փոքրիկ Հայաստանի հետագա գոյության հետ[3]։

---

1 Տե՛ս Մ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, էջ 305—306։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 306։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 354։



1 Տե՛ս Է. Զոհրաբյան, Խորհրդային Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920—1922 թթ., Եր., 1979։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 55։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 84—86։

Աշխատության մեջ փաստերով ցույց է տրված դաշնակցական կառավարության վարած հակախորհրդային քաղաքականությունը, Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ նրա ունեցած թշնամությունն ու ատելությունը։

Նա ուշագրավ պատասխան է տալիս նաև այն հարցին, թե հաստատ իմանալով, որ բոլշևիկները չեն համաձայնվի Ալեքսանդրապոլի պայմանագրին, ինչո՞ւ Կարաբեքիրը շտապեց ստորագրել այն։ Առաջին ու հիմնական շարժառիթը նա համարում է Խորհրդային Ռուսաստանին կատարված փաստի առաջ կանգնեցնելու ցանկությունը, բոլշևիկների հետ հայ-թուրքական սահմանային հարցերի քննարկումից խուսափելը, երկրորդ՝ Կարաբեքիրի համար շատ ավելի ձեռնտու էր գործ ունենալ թույլ ու անհեռատես դաշնակցականների հետ, ձևանալով, որ, իբր, զրկված են իշխանությունից, որպեսզի հետագայում նպաստեն նրանց իշխանության վերականգնմանը, երրորդ՝ քեմալականներին պայմանագիրը հարկավոր էր եվրոպական քաղաքականության համար՝ ունենալ մի փաստաթուղթ, որով նրանք Եվրոպային համոզեին, թե Սևրի պայմանագիրը իրագործելի չէ հենց նրա համար, որ իրենք՝ հայերն էլ են հրաժարվում դրանից[1]։

Շարադրված է Մոսկվայի և Կարսի պայմանագրերի կնքման պատմությունը։ Հեղինակը պատասխան է տալիս այն հարցին, թե ինչո՞ւ Խորհրդային Ռուսաստանին չհաջողվեց տարածքային հարցերում հասնել ցանկալի արդյունքի։ Առաջին՝ դաշնակցականների կառավարությունը, կնքելով Ալեքսանդրապոլի պայմանագիրը, ՌԽՖՍՀ կառավարությանը կատարված փաստի առաջ էր կանգնեցրել, երկրորդ՝ բանակցություններն ընթանում էին Խորհրդային Ռուսաստանի համար աննպաստ պայմաններում, երրորդ՝ Խորհրդային Ռուսաստանը ձգտում էր Կովկասում կայուն ու երկարատև խաղաղություն հաստատել, չորրորդ՝ կոնֆերանսում հաշվի էին առնվում նաև Արևելքում խորհրդային քաղաքականության ընդհանուր հեռանկարները։ Խորհրդային Ռուսաստանը, գրում է նա, չէր կարող աչքաթող անել միջազգային հեղափոխության շահերը և բոլոր այն հանգամանքները, որոնք կարող էին նպաստել իմպերիալիզմի խորտակմանը Արևելքում[2]։

Զոհրաբյանը փաստերից հարուստ նյութի հիման վրա քննադատում է թուրք և դաշնակցական գործիչներին, որոնք, ելնելով որոշակի շահերից, կեղծում են պատմական իրողությունները։ Քննադատական խոսք է ասված խորհրդային որոշ պատմաբանների հասցեին։ Լուրջ սխալ է խորհրդային պատմագրության մեջ Քեմալի իդեալականացումը, նրան «հեղափոխական», խորհուրդների երկրի հավատարիմ բարեկամ ներկայացնելը, Հայաստանի վրա արշավանքի ծրագրումն ու իրականացումը միայն Կարաբեքիրին, բայց ոչ երբեք Քեմալին վերագրելը և այլն։ Է. Զոհրաբյանը նկատում է, որ մեր պատմական գրականության մեջ հաճախ անտեսվում է իթթիհատականների և քեմալականների միջև սերտ կապի գոյությունը, որի հետևանքով էլ քեմալականների շարժումը երբեմն չի ստանում այն գնահատականը, որին նա արժանի է։ Նրա կարծիքով, խորհրդային գրեթե բոլոր այն պատմաբանները, որոնք իրենց ուսումնասիրությունների մեջ առնչվել են հայ-թուրքական հարաբերությունների հարցին, սխալվում են, կարծելով, թե իբր, եթե 1920 թ. ամռանը հարցը լուծվեր դիվանագիտական ճանապարհով, ապա մենք այժմ կունենայինք ոչ միայն Արևելյան Հայաստանը, այլ նաև Արևմտյան Հայաստանի որոշ մարզերը[1]։

Է. Զոհրաբյանի մեկ այլ աշխատության մեջ վեր է հանված Խորհրդային Ռուսաստանի դերը հայ-իրանական հարաբերություններում 1920—1922 թվականներին[2]։ Հարկ է նշել, որ նման թեմայով ամբողջական աշխատություն առաջին անգամ է լույս տեսնում, ուստի հեղինակի աշխատանքն այդ ուղղությամբ խրախուսելի է։

Փաստական հարուստ տվյալների հիման վրա ցույց է տրվում այն մեծ աշխատանքը, որ այդ տարիներին կատարում էին հայ բոլշևիկները, Խորհրդային Հայաստանի կուսակցական ու պետական մարմինները Իրանի հետ առևտրատնտեսական և դիվանագիտական հարաբերությունների հաստատման ուղղությամբ։ Աշխատության էջերում տեղ է հատկացված Իրանում դաշնակցականների հակախորհրդային գործունեության բացահայտմանը և այնտեղ կուտակված հայերի հայրենադարձության կազմակերպմանը։ Հեղինակը նկատում է, որ Իրանում տնօրինող անգ-

---

1 Տե՛ս Է. Զոհրաբյան, նշվ. աշխ., էջ 161—164։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 35։



1 Տե՛ս Է. Զոհրաբյան, նշվ. աշխ., էջ 34, 36, 52—53։

2 Տե՛ս Է. Զոհրաբյան, Խորհրդային Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները (1920—1922 թթ.), Եր. 1985։

լիացիների և նրանց հլու-հնազանդ պարսկական կառավարության հովանավորության հետևանքով, մանավանդ խորհրդային կարգերի հաստատումից հետո, Իրանը վերածվել էր մի երկրի, որտեղ դաշնակցությունը ազատորեն ծավալել էր իր հակախորհրդային գործունեությունը։

Աշխատության մեջ քննադատված է դաշնակցականների և Արևմուտքում սոցիալիզմի մյուս թշնամիների այն թյուր ու հիմնազուրկ պնդումը, թե խորհրդային կարգերի հաստատումով Հայաստանը կորցրեց իր անկախությունն ու ինքնուրույնությունը։ Ընդհակառակը, գրում է պատմաբանը, հայ-իրանական հարաբերությունների օրինակը ցույց է տալիս, որ միջազգային ասպարեզում նա ավելի հաստատուն դիրք ձեռք բերեց, որ նա որպես սուվերեն հանրապետություն, միջազգային հարաբերություններում հանդես էր գալիս ինքնուրույնաբար։

1920 թ. հայ-թուրքական հարաբերությունների մի շարք կարևոր կողմեր լուսաբանված են նաև Հր. Սիմոնյանի՝ թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությանն ու գործունեությանը նվիրված արժեքավոր մենագրության մեջ։ Այստեղ ճիշտ է տրված քեմալականության գնահատականը, բնութագրելով նրան որպես երիտթուրքերի ջարդարարական քաղաքականության շարունակողների։ «Հայկական հարցում,— իրավացիորեն գրում է նա,— Քեմալը ամբողջովին հարազատ մնաց իր երիտթուրքական անցյալին, դեպի հայ ժողովուրդը թուրք շովինիստների վրիժառուական ընթացքին»[1]։

Գրքում վեր է հանված խորհրդային Ռուսաստանի դերը հայ-թուրքական հարաբերությունների կանոնավորման գործում։ Անդրադառնալով 1920 թ. թուրք-հայկական պատերազմի հարցին, Հր. Սիմոնյանը վերլուծել է պատերազմում Հայաստանի պարտության պատճառները։

Պատմաբանը դրանցից ամենագլխավորը համարում է այն, որ հայ ժողովուրդը աջակցություն ցույց չտվեց Հայաստանի հանրապետության կառավարությանը, որը հեղինակը համարում է բուրժուազիայի դիկտատուրա։ «Դաշնակցական զինվորի շինել հագած հայ գյուղացին,— գրում է նա,— չէր ուզում կռվել իր համար խորթ իշխանության հրամաններով»[1]։ Հր. Սիմոնյանը պարտության պատճառներից մեկն էլ իրավացիորեն համարում է այն դիվային աշխատանքը, որ քեմալականները եռանդով տանում էին հայկական բանակը ներսից քայքայելու համար։ Այստեղ նա նկատի ունի այն, որ քեմալականները դիմեցին խորամանկության՝ հայկական զորքի մեջ տարածելով կեղծ լուրեր, թե իբր իրենք ևս բոլշևիկներ են, խորհրդային Ռուսաստանի բարեկամները և որ նրանք կռվում են ոչ թե հայ ժողովրդի, այլ դաշնակների դեմ։ «Դաշնակները,— շարունակում է Հր. Սիմոնյանը,— իրենց հերթին կրկնում էին քեմալականների կեղծիքները, ձգտելով դրանք ուղղել խորհրդային Ռուսաստանի դեմ... Կարծելով, թե քեմալականները իրոք Ռուսաստանի անկեղծ բարեկամներն են, հայ զինվորները մտածում էին, որ եթե նրանք չդիմադրեն, դրանով իսկ կօգնեն բոլշևիկներին, առաջին հերթին հայ բոլշևիկներին՝ տապալելու դաշնակների ատելի տիրապետությունը և կազմակերպելու Հայաստանի բանվորների և գյուղացիների պետությունը»[2]։

Անդրադառնալով 1920 թ. խորհրդա-հայկական հարաբերությունների հարցին, Հր. Սիմոնյանը դատապարտում է դաշնակցությանը, որը երկար ժամանակ մերժում էր խորհրդային Ռուսաստանի միջնորդությունը՝ հայ-թուրքական սրված հարաբերությունները խաղաղ կերպով կարգավորելու վերաբերյալ։ «Չնայած այն բանին,— գրում է նա,— որ դաշնակցականների հանցավոր, անհեռատես քաղաքականության հետևանքով Հայաստանը կտրվել էր խորհրդային Ռուսաստանից, խորհրդային կառավարությունը կտրականապես հանդես եկավ ի պաշտպանություն Հայաստանի՝ որպես Թուրքիայի կողմից նախապատրաստվող ագրեսիայի զոհի»[3]։

1920 թ. ամռանը տեղի ունեցած խորհրդա-հայկական բանակցությունների ձախողման համար Հր. Սիմոնյանը մեղադրում է Հայաստանի հանրապետությանը։ «Սակայն Շանթի պատվիրակությունը,— գրում է նա,— նախապես ունենալով արևմտյան իմպերիալիստական տերությունների հետ ամուր կապված իր

1 Հր. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, էջ 499։



1 Հր. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 523։
2 Նույն տեղը, էջ 524—525։
3 Նույն տեղը, էջ 505։

հանցագործ կառավարության ցուցումները, ըստ էության վիժեցրեց բանակցությունները»[1]։

1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում Թուրքերի հետ ծանր պայմանագիր կնքելու մեղքը Հր. Սիմոնյանը իրավացիորեն դնում է դաշնակցական պարագլուխների վրա։ «Հայաստանում իրենց իշխանությունը կորցրած դաշնակցական պարագլուխները դիմեցին նոր ոճրագործության,— գրում է նա։— 1920 թվականի դեկտեմբերի 2-ին, այսինքն իշխանությունից զրկվելու չորրորդ օրը, նրանք Թուրքերի կողմից գրված Ալեքսանդրապոլում պայմանագիր կնքեցին Կարաբեքիրի հետ։ Արդեն լիազորություններից զրկված դաշնակցական պատվիրակությունն իր ստորագրությունով օրինականացրեց քեմալական ագրեսորների տերիտորիալ զավթումները»[2]։ Վկայակոչելով Ա. Ժամկոչյանի «Զորավար Անդրանիկը կը պատասխանե իր հակառակորդներուն» գրքի համապատասխան տեղը, Հր. Սիմոնյանը գրում է. «Ալեքսանդրապոլի դաշնագրի դեմ բուռն կերպով բողոքեց Անդրանիկը, բողոքեցին հայ քաղաքական բոլոր կուսակցությունները, բացի դաշնակցությունից»[3]։

Հր. Սիմոնյանը դաշնակցությանը մեղադրում է նաև 1921 թ. փետրվարյան խռովությունը կազմակերպելու համար։ «Իրենց խելահեղ քայլով «հայրենիքի փրկարարները» նոր դժբախտություններ բերեցին արյունաքամ երկրին, նոր հարված հասցրին նրա կենսական շահերին»,— գրում է նա։ Այդ օրերին դավաճանության ինչպիսի մրցանիշներ էին խփում դաշնակցական արկածախնդիրները, այնուհետև շարունակում է պատմաբանը, լավ երևում է թեկուզ այն հեռագրերից, որ Անկարա և Մոսկվա էր ուղարկել քաղաքական հոգեվարքի մեջ գտնվող Սիմոն Վրացյանը, «որը,— գրում է նա,— ընկնելով քեմալական մարդասպանների ոտքերը, նրանցից գթություն էր աղերսում, նույնիսկ օգնություն մուրում»[4]։

---

[1] Հր. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 506։

[2] Նույն տեղը, էջ 530։

[3] Նույն տեղը։

[4] Նույն տեղը, էջ 536։



## 4. Խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում

Այս պրոբլեմը խորհրդային պատմագրության ամենաշատ մշակված և լայնորեն լուսաբանված թեմաներից է։ Հարկ է նշել, որ խորհրդահայ պատմաբանները տվյալ թեմային նվիրված իրենց աշխատություններում չեն սահմանափակվել միայն 1920 թ. նոյեմբերին ծավալված իրադարձությունների պատմության շարադրանքով, այլ առաջնորդվել են ծավալուն ընդգրկումով։ Նրանք հարցի արծարծումն սկսել են Հոկտեմբերյան հեղափոխության պատմական հաղթանակից և հասցրել մինչև 1920—21 թվականները։ Կան աշխատություններ, որոնց շարադրանքը ավելի վաղ ժամանակներից է սկսվում, սակայն դրանցում լուսաբանվում է նաև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման պատմությունը։

Հրատարակվել են աշխատություններ, որոնք ընդգրկում են անդրկովկասյան և, նույնիսկ, համառուսաստանյան իրականությունը։ Այսպես, Վ. Ի. Լենինի դերը Անդրկովկասի ժողովուրդների սոցիալական և ազգային ազատագրության համար մղվող պայքարում լուսաբանված է Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանի «Լենինը և Անդրկովկասը» եռահատոր մենագրության մեջ, որի երրորդ հատորը ամբողջովին նվիրված է Հոկտեմբերյան ժամանակաշրջանին[1]։ Աշխատությունը գրված է Անդրկովկասի 1917—1924 թթ. իրադարձությունների լայն ֆոնի վրա։ Հեղինակը օգտագործելով լենինյան գրական հարուստ ժառանգությունը, գիտական շրջանառության մեջ դնելով արխիվային բազմաթիվ փաստաթղթեր և վավերագրական այլ նյութեր, ցույց է տվել Վ. Ի. Լենինի մեծ հոգատարությունը Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների և աշխատավորության նկատմամբ, նրա վիթխարի դերը Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատման ու ամրապնդման, սոցիալիստական առաջին վերափոխումների գործում։ Ելնելով լենինյան դրույթներից, հեղինակը ճիշտ է բացահայտել Անդրկովկասի սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքի առանձնահատկություններն ու յուրահատկությունները։ Հետհոկտեմբերյան առաջին տարիներին երկրամասում ստեղծված քաղաքական բարդ իրադրու-

---

[1] Տե՛ս Գ. Ղարիբջանյան, Լենինը և Անդրկովկասը (1893—1924), հ. 3, (1917—1924), Եր., 1975։

թյան մեջ բացահայտված է Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների վիթխարի գործունեությունը խորհրդային կարգերի հաստատման ու ամրապնդման ուղղությամբ։

Աշխատության մեջ հատկապես ընդգծված է, որ Անդրկովկասի բոլշևիկները, ելնելով Վ. Ի. Լենինի ցուցումներից, վճռական հակահարված տվեցին բուրժուազգայնական կուսակցություններին, պայքարեցին երկրամասի աշխատավորների ինտերնացիոնալ համախմբվածության, նրանց ազգային համերաշխության ու բարեկամության ամրապնդման համար։ Պատմաբանի աշխատության մեջ կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ միայն ազգային հարցի լենինյան ծրագրի կենսագործման շնորհիվ հնարավոր եղավ Ռուսաստանի ճնշված բոլոր ժողովուրդների սոցիալական ու ազգային ազատագրումը, որն իրագործվեց Հոկտեմբերյան հեղափոխության պատմական հաղթանակով։ Այս գրությը վերանայման խիստ կարիք ունի։

Աշխատությունը արժեքավոր ներդրում է խորհրդային պատմակուսակցական գրականության մեջ, ունի ոչ միայն գիտապատմական, այլև ճանաչողական նշանակություն։

Հետհոկտեմբերյան ժամանակաշրջանում ազգային հարցի լուծումը Անդրկովկասում լայնորեն լուսաբանված է Գ. Գալոյանի կողմից[1]։ Մենագրության երկրորդ բաժինը ամբողջապես նվիրված է այդ կարևոր հարցին։ Հեղինակը իր աշխատությունը շարադրել է պատմական լայն ֆոնի վրա։ Նրանում իրենց լուսաբանումն են ստացել 1917—1922 թթ. կարևոր իրադարձությունները։

Նա համակողմանիորեն ցույց է տվել կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության կիրառումը Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ՝ ըստ առանձին փուլերի։ Այդ պարզորոշ երևում է Արևմտյան Հայաստանի ինքնորոշման մասին Խորհրդային Ռուսաստանի կառավարության դեկրետի, Բաքվի կոմունայի, ժողովուրդների բարեկամության ամրապնդման, Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատման ու ամրապնդման մասին հեղինակի շարադրանքից։

Մի կողմից, հստակորեն ցույց տալով Անդրկովկասի բուրժուազգայնական կուսակցությունների ու նրանց կառավարությունների դիրքորոշումը ազգային հարցում, ազգային երկպառակությունների սրումը երկրամասում, Գ. Գալոյանը, մյուս կողմից, վեր է հանել ՌԽՖՍՀ կառավարության և ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղաքականությունը Անդրկովկասում, բազմաթիվ փաստերով ցույց է տվել Խորհրդային Ռուսաստանի ռազմադիվանագիտական և տնտեսական օգնությունը Անդրկովկասի ժողովուրդներին որպես ազգային հարցի լուծման քաղաքականություն։

Անդրկովկասում և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման պատմության հարցերը լուսաբանվել են նաև Գ. Գալոյանի մյուս աշխատություններում։ Դրան է նվիրված նրա «Հոկտեմբերյան հեղափոխությունը և Անդրկովկասի ժողովուրդների վերածնունդը» մենագրությունը, ինչպես նաև «Պատմության քառուղիներում» մենագրության մի զգալի մասը։ Այդ աշխատություններում փաստական տվյալների հիման վրա վեր է հանված Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատման գործում Խորհրդային Ռուսաստանի խաղացած դերը։ Ի դեպ, պատմաբանի աշխատությունների աչքի ընկնող առավելություններից է այն, որ դրանցում խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում շարադրված է միջազգային իրադարձությունների ֆոնի վրա։ Մի շարք վավերագրերով բացահայտված են Անտանտի տերությունների և Թուրքիայի միջև ստեղծված հարաբերությունները, որոնք ուղղված էին Խորհրդային Ռուսաստանի, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման դեմ։

Հարցի համապարփակ լուսաբանման տեսակետից ուշագրավ են Ա. Մնացականյանի «Լենինը և ազգային հարցի լուծումը ԽՍՀՄ-ում» և, հատկապես, «Հոկտեմբերի բարիկադների վրա» աշխատությունները[1]։ Առաջինում հեղինակը քննում է ազգային հարցի դրվածքը Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին և նրա հաղթանակից հետո։ Ի թիվս խորհրդային մյուս հանրապետություններում ազգային-պետական շինարարության, աշխատության մեջ ցույց է տրված նաև ՀԽՍՀ-ի կազմավորումը։ Երկրորդ աշխատությունում, որն աչքի է ընկնում փաստական արժեքավոր նյութի առատությամբ, ցարիզմի և բուրժուական դիկտատուրայի տապալման համար ռուս և մեր

---

[1] *Տե՛ս* Галоян Г., Рабочее движение и национальный вопрос в Закавказье (1917—1922), Е., 1969.

[1] *Տե՛ս* Мнацаканян А., Ленин и решение национального вопроса в СССР, Е., 1970, *նույնի՝ Հոկտեմբերի բարիկադների վրա, Եր., 1967։*

բազմազգ երկրի բոլոր ժողովուրդների հեղափոխական հերոսական պայքարի ընդհանուր ֆոնի վրա հանգամանորեն լուսաբանվում է հայ ժողովրդի զավակների մասնակցությունը այդ պայքարին։ Նրան հաջողվել է լիովին բացահայտել այն ակտիվ պայքարը, որ հանուն խորհրդային իշխանության՝ Ռուսաստանի մյուս ժողովուրդների հետ համատեղ, մղել են հայ ժողովրդի զավակները հոկտեմբերի բարիկադների վրա՝ Պետերբուրգում և Մոսկվայում, քաղաքացիական կռիվների ռազմաճակատներում՝ Ուկրաինայում ու Բելոռուսիայում, Մերձբալթիկայում ու Հյուսիսային Կովկասում, Ղրիմում ու Միջին Ասիայում, Անդրկովկասում։ Միանգամայն ճիշտ է Ա. Մնացականյանի այն եզրահանգումը, թե հայ ժողովրդի զավակները հասկանում էին, որ Հայաստանի և Ռուսաստանի կազմում գտնվող մյուս ժողովուրդների բախտը վճռվում էր հոկտեմբերի բարիկադների վրա, քաղաքացիական կռիվների կրակի ու բոցերի մեջ, իսկ հեղափոխության դրոշը լուսավորում է բոլոր ճնշված ազգերի ու ժողովուրդների ազատագրման ուղին։

Պատմաբանի աշխատությունը ինտերնացիոնալիստ հեղափոխականների կյանքի հերոսապատում է, հեղափոխականներ, որոնք Հայաստանի բախտը կապեցին համառուսաստանյան պրոլետարական շարժման, Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հետ, դրա շնորհիվ էլ հայ ժողովուրդը հասավ ազգային և սոցիալական ազատության։ Ի դեպ, աշխատության մեջ ցույց է տրված ոչ միայն առանձին անհատների, այլև ամբողջ ժողովրդի ավանդը սոցիալիստական հեղափոխության հաղթանակի և նրա նվաճումների պաշտպանության, խորհրդային պետության ամրապնդման գործում։

Հայ ժողովրդի 1917—1921 թթ. պատմության հետազոտության գործում մեծ վաստակ ունի Ծ. Աղայանը։ Այդ կարևոր պրոբլեմին են նվիրված նրա մի շարք աշխատությունները[1], որոնց մեջ պատմվում է Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման և հայ ժողովրդի

[1] Агаян Ц., Победа Советской власти и возрождение армянского народа. М., 1981, նույնի՝ Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Եր., 1982։ Գրեթե նույն բովանդակությունն ունեն նրա նախկինում հրատարակված աշխատությունները՝ Հոկտեմբերյան հեղափոխությունը և հայ ժողովրդի ազատագրումը, Եր., 1957, Великий Октябрь и борьба трудящихся Армении за победу Советской власти, Е., 1962։



վերածննդի մասին։ Արժանին մատուցելով վաստակաշատ պատմաբանին, միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ նրա աշխատություններում տեղ են գտել նաև մի շարք թերի ձևակերպումներ ու վրիպումներ։ Օրինակ, խոսելով 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրի մասին, այն տպավորությունն է ստացվում, թե Հայաստանի կառավարությունը կամովին է հանձնել իշխանությունը հեղկոմին։ Մինչդեռ հարկավոր էր բացահայտել, թե որոնք էին այդ հարկադրական «հրաժարման»-ի դրդապատճառները։ Դրանք երկրում ստեղծված ներքին և արտաքին աննպաստ պայմաններն էին։

Նոյեմբերի վերջին սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական ծանր վիճակի հետևանքով ստեղծվել էր կառավարական ճգնաժամ։ Ահա թե ինչ է ասված հանրապետության վերջին վարչապետ Ս. Վրացյանի՝ նոյեմբերի 26-ին հրապարակած դեկլարացիայում. «Տաճիկ զինված ուժերը գրավել են մեր երկրի խոշոր մասը։ Ազգաբնակչությունը գրված վայրերից տեղահան է եղած և գաղթական վիճակի մեջ անխնա կոտորվում է ցրտից և սովից։ Պետության ներքին կյանքի բնականոն ընթացքը խանգարված է։ Վարչական մեքենան թուլացած է մեծապես, ֆինանսական և հաղորդակցության միջոցները քայքայված։ Արդարադատությունը անհնարին վիճակում է, պարենի մուտքը դրսից կանգ է առել, իսկ ներքին աղբյուրները ցամաքում են արագությամբ, կայուն չէ ժողովրդի հոգեկան վիճակը... Երկիրն ապրում է ներքին ծանր տագնապ»։ Ուստի ոչ թե կամովին, այլ չկարողանալով հաղթահարել վերոհիշյալ իրավիճակը և կանխել խորհրդային կարգերի հաստատումը, Վրացյանի կառավարությունը մի քանի օր հետո հարկադրված հրաժարվեց իշխանությունից։ Անկեղծ, կամովին հրաժարվողը շուտով չէր կազմակերպի փետրվարյան հեղաշրջում։

Հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրման, նրա սոցիալիստական վերածննդի գործում խորհրդային Ռուսաստանի դերի վերհանումը մշտապես եղել է խորհրդահայ պատմագրության առաջնահերթ խնդիրներից մեկը։ Այն լայնորեն լուսաբանվել է 1917—1922 թթ. պատմությանը նվիրված աշխատություններում (Աշ. Հովհաննիսյան, Գ. Ղարիբջանյան, Ա. Մնացականյան, Ծ. Աղայան, Զ. Գրիգորյան, Գ. Գալոյան, Ա. Հակոբյան, Ա. Վարդապետյան և ուրիշներ), սակայն այդ պրոբլեմի ուղղությամբ գիտահետազոտական աշխատանքը շարունակվում է նաև հետագայում։

Խորհրդային Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման, նրա վերածննդի գործում բազմակողմանիորեն լուսաբանվում է Ս. Ալիխանյանի մենագրության մեջ[1]։ Աշխատության մեջ բազմաթիվ փաստերով ցույց է տրված Խորհրդային Ռուսաստանի կառավարության, ռուս ժողովրդի օգնությունը Թուրքական յաթաղանից փրկված և Ռուսաստանում ապաստան գտած հայ գաղթականությանը, բացահայտված է 1920 թ. Խորհրդային Ռուսաստանի կառավարության դիվանագիտական ջանքերը Հայաստանը Անտանտի ճիրաններից ազատելու, նրան քեմալական Թուրքիայի զավթողական քաղաքականությունից պաշտպանելու գործում։ Լայնորեն արծարծվում է Խորհրդային Ռուսաստանի ռազմաքաղաքական և տնտեսական օգնությունը Խորհրդային Հայաստանին 1920—1921 թթ.։ Աշխատության հեղինակը գտնում է, որ Խորհրդային Ռուսաստանի, ռուսաստանյան պրոլետարիատի ցույց տված օգնությունը ծայրամասերի աշխատավորությանը ոչ թե սոսկ մարդասիրական ակտ էր, այլ սոցիալիստական հեղափոխության և սոցիալիստական շինարարության ընդհանուր օրինաչափություն, պրոլետարական ինտերնացիոնալիզմի կոնկրետ դրսևորում։ Այդ փոխադարձ օգնությունը հատուկ է պրոլետարիատի դասակարգային պայքարին, բխում է նրանից և ապահովում է նրա հաղթանակը։ Խորհրդային Ռուսաստանի՝ հայ ժողովրդին ցույց տված օգնությունը աշխարհում առաջին սոցիալիստական պետության կողմից իր ինտերնացիոնալ պարտքի հետևողական ու անշահախնդիր կատարման վառ արտահայտությունն է։

Ս. Ալիխանյանի աշխատությունը չի ընդգրկում սոսկ օգնության հարցերը։ Այն շարադրված է Անդրկովկասում և Հայաստանում 1917—1921 թթ. ծավալված իրադարձությունների, հայ ժողովրդի մղած հեղափոխական ազատագրական պայքարի պատմության ֆոնի վրա։ Հատկապես հաջող են լուսաբանված Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման պատմության հետ կապված հարցերը։ Հանգամանորեն վերլուծվել է 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը, վեր է հանվել նրա քաղաքական արժեքն ու պատմական նշանակությունը։ Պատմաբանի կարծիքով, դաշնակցականները ստիպված էին իշխանությունից հրաժարվել, որովհետև Հայաստանի բանվորներն ու գյուղացիները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ոտքի էին ելել դաշնակցականների վարչակարգը տապալելու համար, Հայաստանը հայտարարվել էր խորհրդային հանրապետություն, դաշնակցական կառավարությունը ռազմական պարտություն էր կրել քեմալական Թուրքիայից, վերջինս գրավել էր Հայաստանի ոչ միայն վիճելի հողերը, այլև անվիճելի հողերի զգալի մասը Ալեքսանդրապոլ քաղաքով։ Դրա հետևանքով վերջնականապես հօդս էր ցնդել «Մեծ Հայաստանի» գաղափարը, որի շուրջ դաշնակցությանը մինչ այդ հաջողվում էր Հայաստանում և սփյուռքում համախմբել հայությանը, Անտանտը չէր օգնում Հայաստանին, ջախջախվել էր Անտանտի երրորդ արշավանքը, օգնության հույս չկար նաև վրաց մենշևիկներից։ Իրադրությունը վատ էր երկրի ներսում, ուստի նա հարկադրված էր կապիտուլացվել[1]։

Վ. Ի. Լենինի ստորագրությամբ Հայաստանի մասին հրատարակված փաստաթղթերը, ինչպես նաև առաջնորդի մտքերը հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրման ուղու մասին, որոնք արտահայտվել են նրա հոդվածներում, հեռագրերում և ցուցումներում, ներկայացված են Ս. Ալիխանյանի երկու գրքույկներում[2]։

Նրա մեկ այլ աշխատության մեջ ըստ ամենայնի վեր է հանված Անդրկովկասի բոլշևիկների ղեկավար Գ. Կ. Օրջոնիկիձեի դերը Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման ու ամրապնդման համար մղված պայքարում[3]։ Այն գրված է Անդրկովկասի քաղաքական իրադարձությունների ֆոնի վրա, այդ ժամանակաշրջանի պատմության հետ սերտորեն առնչված։ Աշխատության մեջ ներկայացվում են Օրջոնիկիձեի կյանքի ու գործունեության այն էջերը, որոնք կապված են Հայաստանի և հայ ժողովրդի հետ։ Մայիսյան ապստամբություն, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատում, Հայաստանին օգնության կազմակերպում, Լոռվա ապստամբություն, փետրվարյան խռովության ջախջախում, Զանգեզուրի ազատագրում, Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության ամրապնդում և Անդրֆե-

1 Տե՛ս Ս. Ալիխանյան, Խորհրդային Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917—1921 թթ.), Եր., 1966։

1 Տե՛ս Ս. Ալիխանյան, նշվ. աշխ., էջ 201—203։

2 Տե՛ս Ս. Ալիխանյան, Իլյիչի ստորագրությամբ, Եր., 1969, նույնի՝ Լենինյան փաստաթղթեր Հայաստանի մասին, Եր., 1980։

3 Տե՛ս Ս. Ալիխանյան, Գ. Կ. Օրջոնիկիձեն և խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում, Եր., 1974։

դերացիայի կազմավորում և այլն՝ ահա այն կարևոր իրադարձությունները, որոնց և գործուն մասնակցություն է ունեցել ու ղեկավարել Գ. Կ. Օրջոնիկիձեն։ Աշխատությունում քննվում է նաև հայ-թուրքական և խորհրդա-թուրքական հարաբերությունների հարցում Գ. Կ. Օրջոնիկիձեի դերը։

Ս. Ալիխանյանի աշխատության մեջ ցույց է տրված Խորհրդային Ռուսաստանի կառավարության, Վ. Ի. Լենինի ուշադրությունն ու հոգատար վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ, ինչպես նաև խորհրդային և կուսակցական հայտնի գործիչներ Գ. Չիչերինի, Բ. Լեգրանի, Ս. Կիրովի, կարմիր բանակի հրամանատարների խաղացած դերը հայ ժողովրդի հեղափոխական-ազատագրական պայքարում։

Պատմաբանը անդրադարձել է նաև 1921 թ. սկզբներին ՀԿ(բ)Կ ղեկավարության մեջ ծագած ներկուսակցական տարաձայնություններին, վերլուծել կողմերի ճիշտ և սխալ դիրքորոշումները և, որ ամենակարևորն է, ցույց է տվել Օրջոնիկիձեի դերը այդ տարաձայնությունները հաղթահարելու գործում։ Աշխատության մեջ կան նաև որոշ ոչ ճիշտ ձևակերպումներ։ Օրինակ, 199-րդ էջում ասված է. «Օրջոնիկիձեն այդ տարիներին ամբողջ թափով մերկացնում էր դաշնակցականների, վրաց մենշևիկների և մուսավաթականների ագրեսիվ շովինիստական քաղաքականությունը»։

Մեր կարծիքով, դաշնակցականներին ագրեսիվ քաղաքականություն վերագրելը ճիշտ չէ։ Մի՞թե վրացական մենշևիկներից Լոռվա, ադրբեջանական մուսավաթականներից Զանգեզուրի, Նախիջևանի և Ղարաբաղի, իսկ Թուրքիայից՝ Արևմտյան Հայաստանի նկատմամբ արդարացի պահանջները ագրեսիվ էին։

Խորհրդային Ռուսաստանի զինված ուժերի՝ 11-րդ բանակի դերը Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման ու ամրապնդման գործում լուսաբանվել է Ի. Թայիրյանի աշխատության մեջ[1]։ Հեղինակն օգտագործելով փաստական, մեծ մասամբ արխիվային հարուստ նյութեր, 1918—1921 թթ. կովկասյան իրադարձությունների ֆոնի վրա ցույց է տվել նրա անցած մարտական ուղին Աստրախանից մինչև Հայաստան, նրա եղբայրական օգնությունը հայ ժողովրդին։ Աշխատության մեջ արտահայտված է այն միտքը, որ հայ ժողովուրդը չէր կարող կործանումից փրկվել առանց Հայաստանի աշխատավորության և 11-րդ բանակի համատեղ գործողությունների, առանց Խորհրդային Ռուսաստանի օգնության։

Այդուհանդերձ, աշխատության մեջ տեղ են գտել փաստական անճշտություններ։ Օրինակ, նա գրում է, թե 1920 թ. դեկտեմբերի 4-ին Հայհեղկոմը լրիվ կազմով ժամանեց Երևան[1], մինչդեռ այդ օրը Երևան են մտել միայն Հայաստանի հեղկոմի նախագահ Ս. Կասյանը և հեղկոմի անդամ Ա. Նուրիջանյանը։ Ի. Դովլաթյանը և Ալ. Բեկզադյանը Բաքվից Երևան են ժամանել դեկտեմբերի 9-ին, Ս. Տեր-Գաբրիելյանը մնում է Մոսկվայում որպես ՀԽՍՀ լիազոր ներկայացուցիչ, իսկ Ա. Մռավյանը Մոսկվայից Երևան է գալիս դեկտեմբերի կեսերին։

Շնորհակալ գործ է կատարել Անդրկովկասի պատմաբանների մի մեծ կոլեկտիվ՝ համատեղ գրելով Անդրկովկասում խորհրդային իշխանության հաստատման հանգամանալից պատմությունը[2]։ Հայ պատմաբաններից հատորի հրատարակմանը մասնակցել են Ծ. Աղայանը, Գ. Գալոյանը, Ա. Հակոբյանը, Ա. Հարությունյանը (Հարենց), Հ. Էլչիբեկյանը։

Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատման ու ամրապնդման գործում Վ. Ի. Լենինի դերի վերհանմանն է նվիրված Ծ. Աղայանի աշխատություններից մեկը[3]։

## 5. Պատմության կեղծարարների քննադատությունը

Վերջին տասնամյակների խորհրդահայ պատմաբանների ակնառու նվաճումներից է թուրքական, բուրժուական Արևմուտքի և դաշնակցական պատմագրության քննադատությունը։ Այդ

---

[1] Տե՛ս Таирян И., XI Красная Армия в борьбе за установление и укрепление Советской власти в Армении, Е., 1971:

[1] Ի. Թայիրյան, նշվ. աշխ., էջ 157։ Նույն սխալը Թայիրյանը կատարում է 1977-ին ՀԽՍՀ ԳԱ հրատարակած «Մեծ Հոկտեմբերի դրոշով» ժողովածուում, (էջ 147)։ Ի դեպ, նշված ժողովածուի մեջ զետեղված հոդվածում Թայիրյանը 11-րդ բանակի հրամանատարության ուլտիմատումը թուրքական հրամանատարությանը ապրիլի 13-ի փոխարեն ցույց է տալիս ապրիլի 20 (էջ 175), որը սխալ է։

[2] Տե՛ս Победа Советской власти в Закавказье, Тбилиси, 1971:

[3] Տե՛ս Агаян Ц., В. И. Ленин и создание закавказских советских республик, Е., 1976:

հարցերին խորհրդահայ շատ պատմաբաններ են անդրադարձել, իսկ նրանցից մի քանիսը՝ ավելի հանգամանորեն։

1964-ին լույս տեսավ Ռ. Սահակյանի նոր աշխատությունը[1], ուր ցույց է տրված ժամանակակից Թուրք պատմագրության կողմից խորհրդա-Թուրքական հարաբերությունների միտումնավոր, հակագիտական մեկնաբանությունը։

Հայ ժողովրդի պատմության հետ անմիջական առնչություն ունի գրքույկի առաջին բաժինը, ուր քննվում են խորհրդա-Թուրքական հարաբերությունների սկզբնավորման ժամանակաշրջանի պատմության հարցերը։ Այստեղ հեղինակը խստորեն դատապարտում է Թուրք պրոֆեսոր Էնվեր Զիա Քարալին, որը 1920 Թ. Թուրքական արշավանքը Արևելյան Հայաստան ցինիկորեն համարում է Թուրք ժողովրդի ազատագրական պայքարի առաջին հաղթանակը։

Հայ պատմաբանը ցույց է տալիս, որ Թուրք հեղինակների կողմից խեղաթյուրված է նաև Կարսի կոնֆերանսի բանակցությունների ընթացքը։ Օրինակ, Խորհրդային Ռուսաստանում քեմալական Թուրքիայի առաջին դեսպան գեներալ Ալի Ֆուաթ Ջեբեսոյը իր «Մոսկովյան հուշերում» գրում է, Թե, իբր, Կարսի կոնֆերանսում բանակցությունները հարթ անցան, որ, իբր, հայերը առաջ չքաշեցին սահմանի վերանայման ու ճշգրտման պահանջ, մինչդեռ, հավաստում է Ռ. Սահակյանը, կոնֆերանսի նիստերի արձանագրություններից ու արխիվային փաստաթղթերից երևում է, որ բանակցությունները չափազանց սուր և լարված բնույթ էին կրում այն բացահայտ թշնամական դիրքի պատճառով, որ գրավել էր Թուրքական պատվիրակությունը Խորհրդային Հայաստանի նկատմամբ։ Խոսքը վերաբերում է նրան, որ Թուրքերը ձգտում էին Հայաստանին պարտադրել Ալեքսանդրապոլի կողոպտիչ պայմանագիրը։ Բավական է ասել, որ Թուրքերը մերժեցին նույնիսկ հայերի համեստ պահանջը՝ Անի քաղաքի ավերակները որպես պատմական հուշարձան Խորհրդային Հայաստանին տալու մասին։

Ռ. Սահակյանը Թուրքական պատմագրության քննադատությունը տվել է նաև մեկ այլ ուշագրավ մենագրության մեջ, որը վերաբերում է Թուրք-ֆրանսիական հարաբերություններին և Կիլիկիային[1]։ Այստեղ հեղինակը քննադատում է Թուրք հեղինակներ Ալի Սաիպին, Ադիլ Բաղդատլըօղլուն, Ռեշեպ Դալքըրրին, Ալի Ֆուաթ Ջեբեսոյին և ուրիշների, որոնք իրենց աշխատություններում խուսափում են Կիլիկիայում կատարված դեպքերի անաչառ վերլուծությունից, միտումնավոր աղճատում տեղի ունեցած իրադարձությունները։ Նրանք Կիլիկիայի ողբերգության մեղքը գցում են հայերի վրա, դեռ ավելին, պնդում, որ, իբր, հայերն են հրկիզել Թուրքական գյուղերը, սրի քաշել բնակչությանը և այլ հերյուրանքներ։

Խոսելով իր աշխատության համար օգտագործված Թուրքական աղբյուրների մասին, Ռ. Սահակյանն իրավացիորեն գրում է. «Սակայն Թուրքական աղբյուրները, վավերագրերը, ականատեսների վկայությունները, հուշերը և այլն, ինչ խոսք, չեն կարող բավարար համարվել հարցի լուսաբանման համար, որովհետև գրեթե առանց բացառության դրանք հարցերը քննում են միտումնավոր կերպով իրենց հիմքում ունենալով Քեմալ Աթաթյուրքի ասույթներն ու գնահատականները, որոնք երբեմն ուղղակի խեղաթյուրում են պատմական իրականությունը»[2]։ Եվ իրոք, Մուստաֆա Քեմալը, լռության մատնելով Թուրքական հրոսակների վայրագությունները, պնդում էր, Թե «Կիլիկիայում... հայկական կանոնավոր ու անկանոն զորքերը հարձակումներ են գործում մեր ցեղակիցների ու հավատակիցների վրա և հանցագործություններ կատարում»։ Թուրքական մեջլիսի պատգամավոր Ալի Սաիպը «Կիլիկիայի ողբերգությունը և Ուրֆայի ազատագրական կռիվները» գրքում Կիլիկիա վերադարձող հայերին անվանել է «հեռվից եկած թափառականներ, ավազակներ, հանցագործներ, որոնց ցանկությունն էր ավերել, ջարդուփշուր անել, ճղմել-սպանել» և այլն։

Մ. Արզումանյանը «Արհավիրքից վերածնունդ» աշխատության մեջ լայն տեղ է հատկացրել Թուրք պատմաբանների կեղծարարության մերկացմանը։ Նա խստորեն քննադատում է Մ. Քեմալի «Նոր Թուրքիայի ուղին» և նրա նախաձեռնությամբ

1 Տե՛ս Ռ. Սահակյան, Խորհրդա-Թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից Թուրք պատմագրության մեջ։ Եր., 1964։



1 Տե՛ս Ռ. Սահակյան, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան (1919—1921 ԹԹ.), Եր., 1970։ Այս աշխատությունն ավելի ընդարձակ ժամանակաշրջանի ընդգրկումով լույս է տեսել նաև ռուսերեն՝ Саакян Р., Франко-турецкие отношения и Киликия в 1918—1923 гг.

2 Ռ. Սահակյան, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան, էջ 16։

հրատարակված «Թուրքիայի պատմությունը» աշխատությունները, որոնցում տեղ են գտել բազմաթիվ կեղծ ու շինծու մբռնքեր։

Վկայակոչելով Մ. Քեմալի գրքի այն հատվածը, որով վերջինս ժխտում է Արևմտյան Հայաստանի տարածքի նկատմամբ հայերի ավելի հին պատմական իրավունքները և, կամ, զրպարտություն համարում Թուրքիայում հայ բնակչության կոտորածների մասին եղած խոսակցությունը, պատմաբանն իրավացիորեն գրում է. «Թուրք փաշան պարզապես կեղծում է իրականությունը, և նրա ասածը հնչում է որպես ծաղր պատմության նկատմամբ»[1]։ Մի ուրիշ տեղ նա գրում է. «Պատմությանն իրազեկ ամեն մի ողջամիտ մարդու համար պարզ է, որ Քեմալը խեղաթյուրում է իրականությունը և Թուրք շովինիստի դիրքերից օսմանյան մահաբեր արշավանքները, ավերածություններն ու բարբարոսությունները ներկայացնում է որպես «իմաստություն ու բարեգործություն»»[2]։

Աշխատության մեջ քննադատված է քեմալականների այն ստահոդ հայտարարությունը, թե, իբր, իրենք էլ հեղափոխականներ են և Հայաստան են մտել պայքարելու դաշնակցականների դեմ, անմիջապես կապ հաստատելու Խորհրդային Ռուսաստանի հետ։ «Իրականում,— գրում է հայ հեղինակը,— դա նրանց ագրեսիայի ու հակակոմունիզմի քողարկման մի ձև էր»[3]։

Անդրադառնալով կիլիկիահայության մղած ազգային-ազատագրական պայքարի հարցերին[4], Մ. Արզումանյանը քննադատել է ոչ միայն թուրքական պատմագրությանը, այլև ճիշտ դիտողություն է արել խորհրդային պատմաբան Ն. Էֆենդիևային, որն իր աշխատության մեջ շրջանցել է կիլիկիահայության ազատագրական պայքարը, իսկ քեմալականների կողմից նրա նվաճումը դիտել որպես թուրքերի հայրենասիրական շարժում[5]։

Ի դեպ, որոշ խորհրդային թուրքագետ-պատմաբաններ (Ա. Միլլեր, Ա. Խեյֆեց, Ս. Կուզնեցովա և ուրիշներ) իրենց աշխատություններում թույլ են տվել կոպիտ աղավաղումներ, ոչ ճիշտ մեկնաբանել իրողությունը, որով, փաստորեն, ջուր են լցնում թուրքական պատմագրության ջրաղացին։ Այսպես, օրինակ, պրոֆեսոր Ա. Նովիչևը, խոսելով 1908—1918 թթ. երիտթուրքերի շովինիզմի մասին, ոչ մի խոսքով չի դատապարտում նրանց հակահայկական հայաջինջ քաղաքականությունը[1]։ Իսկ Մոսկվայում հրատարակված մի ժողովածուի մեջ[2] պրոֆ. Ա. Շամսուտդինովը իդեալականացնում է Քեմալին ու քեմալիզմը, անտեսելով քեմալիզմի հակահայկական ուղղվածությունը, համերաշխում է քեմալական այն կեղծիքին, որ, իբր թե, թուրքերը չեն ունեցել «ոչ մի թշնամական տրամադրություն կամ այլ նպատակներ հարևան երկրների նկատմամբ, բացի իրենց անկախության ու ազատության հաջողություններից ազգային սահմանների շրջանակներում»[2]։ Իսկ մի՞թե Կիլիկիան, Արևմտյան Հայաստանն ու Արևելյան Հայաստանի մի մասը, որ թուրքերը զավթեցին 1920-ին, թուրքական «ազգային սահմանների շրջանակների» մեջ էին մտնում։ Ցավոք, խորհրդային պատմաբանը պաշտպանության տակ է առնում նաև մոլի շովինիստներին՝ երիտասարդ թուրքերին։ Հարկ է նշել, որ Շամսուտդինովին արժանի հակահարված է տվել խորհրդահայ պատմաբան Է. Զոհրաբյանը[3]։

Հիմնավորված չէ նաև ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտի դիրեկտոր Խրոմովի մոտեցումը, որը «ԽՍՀՄ պատմություն» ամսագրում տպագրված հոդվածում թյուր կարծիք է արտահայտել ժողովրդական հերոս Անդրանիկի մասին, անվանելով նրան դաշնակցական գործիչ[4]։ Նախ, Անդրանիկը երբեք դաշնակցական գործիչ չի եղել։ Նա ամենից առաջ ազգային-ազատագրական պայքարի հերոս էր, մի բան, որը փառք ու պատիվ է բերել նրան ու իր ժողովրդին, և հետո՝ հայտնի է, որ Անդրանիկը 1907 թ. հեռացել է դաշնակցությունից և մինչև իր կյանքի վերջը մնացել նրա անհաշտ հակառակորդը։

Հայ ժողովրդի պատմության մի շարք հարցեր խեղաթյուրված են ներկայացնում նաև Ադրբեջանի որոշ պատմաբաններ։ Հանրահայտ են Ադրբեջանական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Զիա Բու-

---

[1] Մ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, էջ 274։

[2] Մ. Արզումանյան, նշվ. աշխ., էջ 280։

[3] Նույն տեղը, էջ 378։

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 416։

[5] Տե՛ս Эфендиева Н., Борьба турецкого народа против оккупантов на юге Анатолии, Баку, 1966, էջ 10։



[1] Տե՛ս Новичев А. Турция. Краткая история. М., 1965։

[2] Տե՛ս СССР и Турция: 1917—1979 гг., М., 1981 էջ 29։

[3] Տե՛ս Է. Զոհրաբյանի գրախոսությունը ժողովածուի մասին, ԲՀԱ, 1982, № 3։

[4] Տե՛ս История СССР, М., 1986, № 6, էջ 17։

նիաթովի նենգամիտ կեղծումները, որոնք մերկացվել և խստորեն քննադատվել են խորհրդահայ պատմաբանների կողմից հատկապես վերջին տարիներին։ «Գիտնականի» կարծիքով, իբր հայերը Տիգրան Երկրորդից հետո չեն ունեցել անկախ պետականություն, որ Ղարաբաղը, Նախիջևանը և Սյունիքը երբեք Հայաստանի մեջ չեն մտել, որ իբր խորհրդահայ պատմաբանները տառապում են Հայաստանի սահմանները արհեստականորեն լայնացնելու հիվանդությամբ և այլն։ Նույնը վերաբերում է Ֆ. Շուշինսկուն, որն իր «Շուշի» գրքում (Բաքու, 1968) անհիմն կերպով հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ականավոր գործիչ Ստ. Շահումյանի խոսքերով ասած, ժողովրդական հերոս Անդրանիկին իր ջոկատով անվանում է ավազակ, թալանչի, մոլի դաշնակցական, կատաղի նացիոնալիստ և այլն։ Մինչդեռ հայ պատմաբան Ս. Աղայանը իր «Հայ և ադրբեջանական ժողովուրդների դարավոր բարեկամությունը» մենագրության մեջ չի հակադրվում ղաշաղ Նաբիի մասին ադրբեջանական գրականության մեջ ընդունված դրական գնահատականին[1]։

Ոչ պակաս սուբյեկտիվ, միակողմանի դիրքերից է գրված Ն. Հեյդարովի «Զանգեզուրի լեռներում» գիրքը[2]։

Հեղինակը անաչառ չի քննադատել Անդրկովկասի բուրժուանացիոնալիստական կուսակցությունների գործունեությունը, կան բազմաթիվ սխալ բնութագրումներ, չափազանցություններ։ Օրինակ, ոչ մի բացասական խոսք չասելով մուսավաթականների մասին, նա գրում է, որ «դաշնակցական շարագործներից հայ ժողովուրդը այնքան վիշտ ու սարսափներ կրեց, որքան դարերի ընթացքում չէր կրել օտարերկրյա զավթիչներից։ Զանգեզուրում դաշնակցականների գազանությունները գերազանցում էին մինչև անգամ սասանյանների, չինգիզխանների, օսմանների, սեֆեյանների, կաջարների և պատմաբանների ու գրողների աշխատություններում նկարագրված մյուս նվաճողների գազանությունները»[3]։

Ասել, թե դաշնակցությունը ավելի մեծ վնաս է տվել հայ ժողովրդին, քան բոլոր դարերի բռնակալներն ու օտարերկրյա

1 Տե՛ս Ս. Աղայան, Հայ և ադրբեջանական ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Եր., 1961, էջ 92։

2 Տե՛ս Ն. Հեյդարով, Զանգեզուրի լեռներում, Եր., 1987։

3 Նույն տեղը, էջ 297։



զավթիչները, քան 1,5 միլիոն հայ բնաջնջող Թուրքերը, նշանակում է մեղանչել պատմության առջև։ Գրքում բազմաթիվ անգամ դաշնակցականները հորջորջվում են որպես արյունախում, գիշատիչ, գազանաբարո, բանդիտ և այլն, իսկ մուսավաթականների մասին ոչ մի խոսք։

Չի կարելի համաձայնել հեղինակի այն մտքին, թե 1920 թ. Թուրք-հայկական պատերազմի նախահարձակը Հայաստանն է եղել և ոչ Թուրքիան։

Վերջին տարիներին մեր ժողովրդի պատմությունը բացահայտորեն կեղծելով հանդես եկան Ֆ. Մամեդովան, Դ. և Մ. Ախունդովները և ուրիշներ, որոնք ձգտում են «հնացնել» իրենց ժողովրդի պատմությունը, յուրացնել հայ ժողովրդի կուլտուրապատմական ժառանգությունը։

Կարելի է շարունակել նման փաստերի թվարկումը, սակայն այսքանն էլ բավական է գաղափար կազմելու կատարվածի անթույլատրելիության մասին։

Հարց է առաջանում. ո՞րն է այս մերժելի իրողության պատճառը։ Մեր կարծիքով այն, որ հանդես է բերվել ավելորդ զգուշավորություն և մտավախություն, որ տարիներ շարունակ խորհրդահայ պատմաբաններին հնարավորություն չի տրվել հարկ եղած պատասխան տալ նման խեղաթյուրումներին։ Ժամանակն է խստորեն պահանջելու, որպեսզի վերջ տրվի մեր ժողովրդի պատմության միտումնավոր նենգափոխմանը, չվիրավորվի մեր ժողովրդի ազգային արժանապատվությունը։ Պետք է խստորեն պահպանել խորհրդային ժողովուրդների սոցիալիստական համակեցության սրբազան նորմերը նաև պատմական գիտության բնագավառում։

Թուրքական պատմաբանների և պետական գործիչների պատմության կեղծարարության մերկացման գործում մեծ վաստակ ունի Ջ. Կիրակոսյանը։ Այդ տեսակետից աչքի է ընկնում հատկապես նրա «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» մենագրության երկրորդ գիրքը[1]։ «Թուրք կեղծարարներին,— գրում է պատմաբանը,— օգնության են շտապում ամերիկյան ու արևմտաեվրոպական ամեն տիպի պնակալեզ գրչակներ, որոնք

1 Տե՛ս Ջ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը), գիրք երկրորդ, Եր., 1983։

շահագրգռված են Թուրքիայի հակախորհրդային դերի ուժեղացման և նրան ՆԱՏՕ-ի հարվածող ուժի դերում պահելու գործում»[1]։ Հանուն իմպերիալիզմի հակակոմունիստական ռազմաքաղաքական շահերի, շարունակում է հեղինակը, նրանք հանգիստ խղճով զոհում են պատմական ճշմարտությունը, գիտական անկողմնակալության սկզբունքները, ծառայում կեղծիքին ու ստին։ Թուրքական արխիվները փականքի տակ են։ Երիտթուրքական պետականության այսօրվա ժառանգորդները խնամքով թաքցնում են իրենց նախորդների շարագործությունները բացահայտող թղթերը։

Տասնամյակների ընթացքում, գրում է նա, թուրքական պետականությունը երբեք չընդունեց արևմտահայության գենոցիդի փաստը։ 1919-ի դատավարությունը մոռացության տրվեց։ Թուրքական պատմագրությունը իրականությունը խեղաթյուրում է, կեղծում, նա բացահայտորեն արդարացնում է երիտթուրքերի ոճրագործությունները։ Թուրք հեղինակները փորձում են կոծկել եղեռնի հետքերը։ Նրանք կեղծում են՝ պատերազմից առաջ արևմտահայերի թիվը հասցնելով 1,5 միլիոնի։ «Թուրք հեղինակների գործերը ներծծված են հակասովետիզմով, հակակոմունիզմով և պանթուրքիզմով»։ Նա հատկապես խիստ քննադատության է ենթարկում մի քանի թուրք պատմաբանների։ Այսպես, պրոֆ. Զիա Քարալը 1975-ին հրատարակել է մի գրքույկ, որտեղ, կեղծելով իրականությունը, գրում է, թե, իբր, Թուրքիայում հայոց կյանքը եղել է դրախտային, նա ժխտում է Հայկական հարցը, արդարացնում սուլթան Համիդի հայասպան քաղաքականությունը։ Թուրք պատմաբանը գտնում է, որ երիտթուրքերը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերին բնաջնջելու ծրագիր չեն ունեցել, պաշտպանության տակ է առնում մարդասպան Թալեաթին։ Թուրք պատմաբան Ալթան Դելիորմանն իր «Հայկական կոմիտեականներն ընդդեմ Թուրքիայի» գրքում պաշտպանության տակ է վերցնում սուլթան Համիդին, արդարացնում երիտթուրքերի հակահայկական քաղաքականությունը, Թալեաթին համարյա դարձնելով հայ ժողովրդի բարերար։ Այդպես Ջ. Կիրակոսյանը արդարացիորեն քննադատում է նաև Արհան Յալչինին, Արդուլլահ Յամանին, Նի-

[1] Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 4։



յազի Բանօղլուն, հատկապես գրող, ուսուցչուհի Նեշիդե Քերեմ Դեմիրիուն, որը հրեշավոր կեղծիքների է դիմել իր «Հայերի հարցը Թուրքիայում» գրքում։ Այն իրավացիորեն քննադատվեց նաև խորհրդային գիտնականներ Գ. Հարությունովի և Հ. Եպիսկոպոսովի կողմից «Նովոյե վրեմյա» շաբաթաթերթում[1] (№ 49, 1981)։

Ինորոշ է, գրում է Ջ. Կիրակոսյանը, որ թուրքական կեղծարարներին օգնության են շտապում Արևմուտքի որոշ երկրների քաղաքագետներ, տարբեր տեսակի գրչակներ։ Արևմտյան երկրներում, ինչպես անցյալում, այնպես էլ հատկապես վերջին ժամանակներս հրատարակվում են գրքեր, որոնց մեջ ծուռ հայելու մեջ է ներկայացվում պատմական իրականությունը։ Պատմաբանը փաստեր է վկայակոչում նաև աշխարհի այն նշանավոր հեղինակների գրքերից, որոնցում հակահարված է տրվում թուրքական կեղծարարությանը։

Խորհրդահայ պատմաբանների աշխատություններում պատշաճ տեղ է տրված նաև Արևմուտքի բուրժուական պատմագրության քննադատությանը։ Այս տեսակետից աչքի են ընկնում Գ. Գալոյանի աշխատությունները։ Նրա ինչպես նախորդ տարիներին հրատարակված մի շարք աշխատություններում[2], այնպես էլ բանվորական շարժման և ազգային հարցին նվիրված մենագրության մեջ մերկացվում է բուրժուական պատմագրության կողմից Հայաստանի և Անդրկովկասի նորագույն պատմության կեղծարարությունը։ Այստեղ նա խստորեն քննադատում է բուրժուական գաղափարախոսներ Ռիչարդ Պայպսի «Սովետական Միության կազմավորումը», Զենկովսկու «Պանթուրքիզմը և իսլամը Ռուսաստանում», Գեոֆլի Վիլերի «Ռասայական պրոբլեմները մուսուլմանական Սովետական Ասիայում», Վ. Դմիտրիշինի

[1] Նույնը տե՛ս Հիշողություն առանցքները, «Լենինյան ուղիով», 1982, № 1։ Թուրքական պատմագրության կեղծարարության մերկացմանն են նվիրված նաև պարբերական մամուլում տպագրված մի շարք այլ ուշագրավ հոդվածներ։ Տե՛ս, օրինակ, Գ. Ղարիբջանյանի և Ե. Սարգսյանի հոդվածը ՊՐՀ-ի 1982 թ. № 3-ում, Գ. Ղարիբջանյանի հոդվածը «Լենինյան ուղիով» ամսագրի 1986 թ. № 6-ում և այլն։

[2] Տե՛ս **Галоян Г.**, Социалистическая революция в Закавказье в освещении буржуазной историографии, М., 1960, նույնի՝ Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ, Եր., 1961։

«Մոսկվան և Ուկրաինան» և այլոց գրքերը, որոնց մեջ կեղծվում է ազգային հարցի լենինյան դրվածքը։

Պատմաբանը քննադատության է ենթարկում նաև կապիտալի աշխարհում ապաստանած Անդրկովկասի բուրժուազգայնական կուսակցությունների գաղափարախոսներին, որոնք ծուռ հայելու մեջ են ցույց տալիս ԽՄԿԿ-ի և խորհրդային կառավարության ազգային քաղաքականությունը։ Նա իրավացիորեն մատնանշում է, որ նրանք Արևմուտքի ռեակցիոն պատմաբանների, փիլիսոփաների ու սոցիոլոգների համար սկզբնաղբյուրի դեր են կատարում։

Վերոհիշյալ հարցերը քննվում են նաև Գ. Գալոյանի «Հոկտեմբերյան հեղափոխությունը և Անդրկովկասի ժողովուրդների վերածնունդը» աշխատության մեջ։ Այստեղ ևս նա նոր փաստերով մերկացրել է ինչպես իմպերիալիստական պետությունների քաղաքականությունը Անդրկովկասում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, այնպես էլ բուրժուական պատմագրության կեղծարարությունը։ «Արևմուտքում,— գրում է նա,— ստեղծվել է Հոկտեմբերի հաղթանակի օրինաչափությունը ժխտող հսկայական գրականություն»[1]։ Գ. Գալոյանը հերքում է բուրժուական պատմագրության այն հերյուրանքները, որ, իբր թե, Հոկտեմբերյան հեղափոխությունը պատահականություն էր։ Խորհրդային Ռուսաստանի կառավարության «Թուրքահայաստանի մասին» դեկրետն ուներ «պրոպագանդիստական նպատակ», որ խորհրդային Ռուսաստանի կառավարության արևելյան քաղաքականությունը նպատակ ուներ նվաճելու մուսուլմանական աշխարհի համակրանքը ընդդեմ հայ ժողովրդի, որ բոլշևիկները Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը կնքել են Թուրքիային օգնելու՝ հայկական հողերը գրավելու համար և այլն։

Աշխատության մեջ բացահայտված է արևմտյան տերությունների գաղութային էքսպանսիան Անդրկովկասում։ Հեղինակը հանգամանորեն կանգ է առել նաև 1919—1920 թթ. միջազգային դիվանագիտության և Հայկական հարցի վրա և ցույց է տվել Փարիզի համաշխարհային կոնֆերանսում հայկական մանդատի շուրջ ծավալված մրցապայքարը։ Գալոյանը միաժամանակ բացահայտել է ԱՄՆ-ի կոնգրեսի կողմից հայկական մանդատից հրաժարվելու դրդապատճառները։

Միջազգային իմպերիալիզմի նենգ ու խարդախ քաղաքականությունը Հայկական հարցի նկատմամբ, հայ ժողովրդի կենսական շահերի դեմ նրա բռնած դիրքորոշումը հանգամանորեն լուսաբանվել են նաև Մ. Արզումանյանի «Արհավիրքից վերածնունդ» մենագրության մեջ։ Հեղինակի ուշադրությունից չի վրիպել նաև Կիլիկիահայությունը։ Կիլիկիայում կատարված արյունալի ոճիրների համար, գրում է նա, ոչ պակաս մեղավոր էին Անտանտի պետությունները, հատկապես Ֆրանսիան։

«Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան» խորագրված մենագրության մեջ Ռ. Սահակյանը ևս հարուստ փաստերով, գլխավորապես սկզբնաղբյուրների հիման վրա, բացահայտել է Կիլիկիայում 1919—1921 թթ. Ֆրանսիայի վարած խարդախ քաղաքականությունը, ինչպես նաև խստորեն քննադատել է ֆրանսիական մի շարք պատմաբանների, որոնք ֆրանսո-թուրքական հարաբերությունները և Կիլիկիայի իրադարձությունները լուսաբանել են ֆրանսիական իմպերիալիզմի էքսպանսիայի և տնտեսական ու դրամական շահերի տեսանկյունից։

Նկատենք, սակայն, որ Ռ. Սահակյանը իր աշխատության մեջ հիշատակում է նաև այն պատմաբաններին, ովքեր հանդես են եկել Անտանտի պետությունների, հատկապես Ֆրանսիայի դիրքորոշման քննադատությամբ։

Քիչ աշխատանք չի կատարվել դաշնակցության պարագլուխների կողմից 1917—21 թթ. պատմության նենգափոխումը բացահայտելու ուղղությամբ։ Հ. Թուրշյանը Սարդարապատի հերոսամարտին նվիրած աշխատության «Սարդարապատի հերոսամարտը դաշնակցության ծուռ հայելու մեջ» գլխում քննադատում է դաշնակցական ղեկավարներին՝ պատմությունը կեղծելու, այն աղավաղելու համար։ Հ. Թուրշյանը գտնում է, որ դաշնակցությունը ժամանակին չարժեքավորեց Սարդարապատի, ինչպես նաև Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերը, «որովհետև այդ հերոսամարտերը դաշնակցությանը չէին, այլ ժողովրդինը, իսկ ժողովրդից դրանց դափնին խլելը հեշտ չէր»[1] Միայն տարագրության մեջ դաշնակցությունը տեր կանգնեց Սարդարապատի հերոսամարտին և թմբկահարեց իր օգտին։ Այդ մա-

---

[1] Галоян Г., Октябрьская революция и возрождение народов Закавказья. М., 1977, с. 27.

[1] Հ. Թուրշյան, Սարդարապատի հերոսամարտը, էջ 222։

սին Աշ. Հովհաննիսյանը գրքի առաջաբանում գրել է, թե «ընթերցողի ուշադրությանը հանձնվող սույն հետազոտությունը Սարդարապատում նվաճված հաղթության փառապսակը մեկընդմիշտ պոկում է դաշնակցության սուտ ասպետների ճակատից և այն վերադարձնում իսկական տիրոջը՝ հայ ժողովրդին»[1]։

Դաշնակցական պատմագրության (Ս. Վրացյան, Ա. Խատիսյան, Վ. Նավասարդյան, Բ. Փափազյան և ուրիշներ) դիրքորոշումը հատկապես 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքման հարցում, խստորեն քննադատվել է Ս. Ալիխանյանի, Մ. Արզումանյանի, Բ. Անանիկյանի և ուրիշների աշխատություններում[2]։

Դաշնակցականների կողմից 1921 թ. հրահրված քաղաքացիական կռիվների պատմության դաշնակցական նենգափոխումը հանդամանալից քննվել է Ա. Մնացականյանի գրքույկում[3]։ Հեղինակը փաստական տվյալներով, առաջին հերթին հենց իրենց՝ դաշնակցական պարագլուխների գրածների հիման վրա բացահայտել է պատմության դաշնակցական նենգափոխումը հատկապես 1921 թ. փետրվարյան հակահեղափոխական խռովության կազմակերպման կապակցությամբ։

Ինչ խոսք, այդ հարցում, սկսած 1920 թվականից, դաշնակցականների թույլ տված սխալները ենթարկվել են խորհրդահայ պատմագրության քննադատությանը, սակայն հիշյալ գրքույկի հրապարակ գալուն առիթ է տվել վերջին տարիներին այդ հարցի առաջքաշումը դաշնակցական մամուլում։ Հեղինակը գտնում է, որ թերևս հարկ չլիներ անդրադառնալ դաշնակցության կազմակերպած փետրվարյան խռովության պատճառներին ու հետևանքներին, եթե արտասահմանյան երկրներում հրատարակվող դաշնակցական թերթերի 1974—1975 թթ. փետրվար ամսվա համարները լցված չլիներին այդ հարցին նվիրված հոդվածներով, որոնք փութաջանորեն ճգնում են սքողել

[1] Հ. Թուրշյան, նշվ. աշխ., էջ 8։

[2] Տե՛ս Ս. Ալիխանյան, Խորհրդային Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, էջ 226—228, Մ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, էջ 350—358, Բ. Անանիկյան, Դաշնակցության գաղափարական-քաղաքական կրախք, էջ 82—91, 333—334։

[3] Տե՛ս Ա. Մնացականյան, Ընդդեմ պատմության դաշնակցական նենգափոխության, Եր., 1976։



պատմական իրողությունները։ Նրանք կրկին փորձում են փետրվարյան արկածախնդրությունը ներկայացնել որպես «համաժողովրդական ապստամբություն»։

Ա. Մնացականյանը մեծ մասամբ քննադատում է հենց այդ դրությունը և ցույց տալիս, որ 1921 թ. խորհրդային Հայաստանի դեմ ուղղված զինված ելույթը մի դավադրություն էր, որը կազմակերպել էր դաշնակցության ղեկավար կենտրոնը, որ դա ոչ միայն համաժողովրդական շարժում չէր, այլև իր բնույթով ու հետևանքներով արկածախնդրություն էր։ «Դաշնակցությունը և միայն դաշնակցությունն է մեղավոր,— գրում է նա,— փետրվարյան արյունոտ դեպքերի համար, նա էր խռովության կազմակերպիչն ու ղեկավարը»[1]։ Նա միաժամանակ ցույց է տալիս, որ դաշնակները, հակառակ աշխատավոր ժողովրդի լայն զանգվածների կամքի և ընդդեմ նրանց շահերի, հրահրելով փետրվարյան հակախորհրդային խռովությունը, հույսը դրել էին Թուրքիայի, Անտանտի, վրաց մենշևիկների վրա, դա էր նրանց քաղաքական կողմնորոշումը։

Ա. Մնացականյանը հերքում է նաև դաշնակցական պատմագրության հին, բայց վերջին տարիներին նորոգված հորինվածքներից մեկը. խոսքը իշխանությունը «խաղաղ կերպով» կոմունիստներին հանձնելու հարցի մասին է, որին 1974-ին նորից անդրադարձել են «Հայրենիքը», «Ալիքը» և այլ պարբերականներ։ Պատմաբանը գտնում է, որ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը տեղի է ունեցել ոչ թե իշխանության «խաղաղ փոխանցումով», «խաղաղ համակերպումով», ինչպես պնդում են դաշնակցական հեղինակները, այլ աշխատավորների երեք տարի շարունակ մղած դասակարգային համառ մարտերում հաղթանակ նվաճելով, դաշնակցական վարչակարգը տապալելու և նոր իշխանություն, խորհրդային պետականություն ստեղծելով։

Ցավոք, այս փոքրիկ գրքույկում տեղ են գտել փաստական մի շարք սխալներ, ոչ ճիշտ և վիճելի ձևակերպումներ*։

[1] Ա. Մնացականյան, Ընդդեմ պատմության դաշնակցական նենգափոխության, էջ 57—58։

* Այսպես՝ 6-րդ էջում ասված է, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Երևանում, Ալեքսանդրապոլում, Սարիղամիշում, Կարսում, Ղափանում, Ջալալօղլիում ընտրվել էին բանվորների, գյուղացիների, զինվորների խորհուրդներ, որոնք լիովին համերաշխ էին Ռուսաստանի խորհրդային կառավարու-

Դաշնակցական պատմագրությունը, նրա կեղծարարությունը սուր քննադատության են ենթարկված Հր. Սիմոնյանի «Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում» աշխատության մեջ։ «Դաշնակ պատմագրության համար,— գրում է հեղինակը,— բնորոշ է պատմական դեպքերի ու երևույթների անսքող խեղաթյուրումը, ծայրահեղ կողմնակալությունն ու պրագմատիզմը, թայֆայական ոգին ու թունալից ատելությունը դեպի այն ամենը, ինչ կապված է սոցիալիզմի, խորհրդային իշխանության, Խորհրդային Հայաստանի հետ»[1]։

---

թյան հռչակած քաղաքականությանը, մինչդեռ հայտնի է, որ այդ խորհուրդների մեծամասնությունը գտնվում էր էսէռների, մենշևիկների և դաշնակցականների ձեռքում, իսկ հետո դրանք էլ վերացան կամ դադարեցին քաղաքական որևէ դեր խաղալուց։ Հայտնի է խորհրդային իշխանության նկատմամբ այն թշնամական դիրքորոշումը, որ բռնել էր բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների խորհուրդների Անդրկովկասյան երկրային կոմիտեն։ Ըստ որում, ոչ թե դաշնակցականների կառավարությունը ցրեց խորհուրդները, ինչպես գրված է հաջորդ էջում, այլ նրանք ցրվել էին մինչ այդ, Անդրկովկասի կոմիսարիատի և սեյմի տեղական իշխանությունների կողմից։

6—7-րդ էջերում ասված է, թե 1918 թ. հունվարին համառուսաստանյան խորհուրդների համագումարը հռչակեց դեկլարացիա, որի մեջ հստակ ձևակերպված էր նաև Հայաստանը խորհրդային հանրապետություն դարձնելու խնդիրը։ Մինչդեռ նման բան տեղի չի ունեցել։ Համագումարը պարզապես հաստատել է ՌԽՖՍՀ ժողկոմխորհի դեկրետը «Թուրքահայաստանի մասին», ուր ոչ մի խոսք չկա Հայաստանը խորհրդային հանրապետություն դարձնելու մասին։

14-րդ էջում ասված է, թե Հ. Օհանջանյանի կառավարությունն ընկավ նոյեմբերի 26-ին, մինչդեռ այն տեղի է ունեցել 24-ին։ 16-րդ էջում ասված է, թե 1920 թ. դեկտեմբերի 2-ին, լույս 3-ի գիշերը դաշնակների նախարարների խորհուրդը հայտնեց, որ իշխանությունը «զիջում է բոլշևիկներին», մինչդեռ այդ «զիջումը» տեղի է ունեցել դեկտեմբերի 2-ին ցերեկվա ժամը 2-ին։ Այնուհետև, 31-րդ էջում ասված է, թե «դեռևս նոյեմբերի վերջերին համաձայնագիր կնքվեց Խորհրդային Ռուսաստանի լիազոր-ներկայացուցիչ Լեգրանի և Հայաստանի դաշնակցական կառավարության անունից հանդես եկող Դրո Կանայանի և Հ. Տերտերյանի միջև»։ Սակայն հանրահայտ է, որ այդ համաձայնագիրը կնքվել էր դեկտեմբերի 2-ին։ 61-րդ էջում ասված է, որ Բաթումի պայմանագրով Հայաստանին մնաց 12 հազար քմմ տարածություն, մինչդեռ այն 10 հազար քմմ-ից էլ պակաս էր։ 91—92-րդ էջերում կարդում ենք, որ «Հայաստանի կարմիր բանակի զորագնդերը Ալ. Մյասնիկյանի հրամանատարությամբ հակահարված տալով սանձարձակ խմբապետներին, ջախջախեցին նրանց և հաղթանակով մտան Զանգեզուր»։ Իրականում հրամանատարները եղել են Վելիկանովը և Տոդորսկին, իսկ Ալ. Մյասնիկյանը ՀԽՍՀ ռազմական գործերի ժողկոմն էր և ոչ թե զորքերի հրամանատարը։

[1] Հր. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 27։



Հայ ժողովրդի հետհոկտեմբերյան ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ դաշնակցական պատմագրության նենգափոխման հարցին բազմիցս անդրադարձել ենք նաև մենք «Հայ ժողովրդի պատմություն» բուհական դասագրքում և այլ աշխատություններում։ Փաստական տվյալների հիման վրա ցույց է տրվել նաև հանրապետության 1918—1920 թթ. սոցիալ-տնտեսական ծանր դրությունը, կառավարության վարած ներքին և արտաքին քաղաքականության խոցելի կողմերը, մասնավորապես Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ թշնամական դիրքը, նրա ռազմաքաղաքական հակառակորդների հետ սերտ կապերի հաստատումը, 1920 թ. աշնանը երկրում հեղափոխական շարժման վերելքի պայմաններում թուրքական կողմնորոշում հանդես բերելը, Ալեքսանդրապոլի ապօրինի պայմանագրի կնքումը, 1921 թ. փետրվարյան խռովության կազմակերպումը և այլն։

Ոմանց համար «թուրքական կողմնորոշում» արտահայտությունը կարող է զարմանք պատճառել, սակայն այդ ապացուցելու համար բերենք մի քանի օրինակ։ Դաշնակցության կենտրոնական բյուրոյի Երևանում հրատարակվող «Հառաջ» թերթի խմբագրությունը 1920 թ. նոյեմբերի 20-ի համարում գրել է. «Իր փրկության համար Հայաստանն ունի մի ճանապարհ՝ գտնել անմիջական կերպով մի ընդհանուր լեզու իր հարևանի՝ Թուրքի հետ։ Եթե հայ ժողովուրդը կամենում է ապրել և ապահովել իր պետական և ֆիզիկական գոյությունը հարատևորեն, նա պետք է ունենա ոչ թե ռուսական, այլ թուրքական օրիենտացիա»։ 1921 թ. փետրվարյան խռովությունից հետո, 1921 թ. մարտի 15-ին Ս. Վրացյանի գլխավորած «Հայրենիքի փրկության» կոմիտեի օրգան «Ազատ Հայաստան» թերթը գրել է. «Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատության իրական պաշտպանը կարող է դառնալ միայն Տաճկաստանը։ Որովհետև Տաճկաստանն է այն միակ իրական մերձավորագույն քաղաքական ուժը, որն անմիջապես և կենսապես շահագրգռված է Անդրկովկասի ժողովուրդների կատարյալ ազատագրմամբ»։ Այդ նույն օրերին Ս. Վրացյանը գրավոր դիմել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովին՝ խնդրելով ռազմական օգնություն ցույց տալ և այլն։

***

Այսպիսով զգալի նվաճումների է հասել խորհրդահայ պատմագրությունը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Հա-

յաստանում ստեղծված իրադրության, խորհրդային կարգերի հաստատման ու ամրապնդման պատմության գիտական հետազոտման բնագավառում։ Եվ այս գործում հատկապես մեծ է Ծ. Աղայանի, Ա. Մնացականյանի, Գ. Գալոյանի, Հ. Կարապետյանի, Ս. Ալիխանյանի, Լ. Խուրշուդյանի և մյուս պատմաբանների կատարած աշխատանքը։

Չնայած կատարված դրական աշխատանքին, ինչպես ասել ենք, վերջին քսանհինգամյակում մի շարք հարցերի լուսաբանության բնագավառում թույլ են տրվել նաև սխալներ, որոնք մեր պատմաբանները պետք է ուղղեն և տան նոր, ճշմարտացի մեկնաբանություն։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (1920—1988 թթ.)

## 1. Սոցիալիստական շինարարության նախապատերազմյան տարիները (1920—1941 թթ.)

Քաղաքացիական կռիվներից անմիջապես հետո նորաստեղծ Խորհրդային Հայաստանը ձեռնամուխ եղավ խաղաղ շինարարությանը։ Վիթխարի աշխատանք ծավալվեց երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման ուղղությամբ։ Այդ գործում ոչ մի ջանք չէին խնայում հանրապետության աշխատավորները։

Ժողովրդական տնտեսության վերականգնումը հաջողությամբ կատարելու գործում կարևոր դեր խաղաց նոր տնտեսական քաղաքականության կենսագործումը Հայկական ԽՍՀ-ում։ Ամբողջ Անդրկովկասի, այդ թվում Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների համար պատմական կարևորագույն նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի ծրագրային նամակը՝ ուղղված Կովկասի կոմունիստներին։

Շուտով երևացին նաև առաջին հաջողությունները։ Այդ գործում չափազանց մեծ էր Խորհրդային Ռուսաստանի և եղբայրական մյուս խորհրդային հանրապետությունների անշահախնդիր օգնությունը Խորհրդային Հայաստանին։

Հայաստանում ծավալվեց նաև խորհրդային-պետական շինարարությունը։ Հեղկոմներին փոխարինեցին խորհուրդները։ 1922 թ. հունվարին տեղի ունեցավ ՀԽՍՀ խորհուրդների առաջին համագումարը, որն ի թիվս այլ հարցերի քննեց և միահամուռ հաստատեց Խորհրդային Հայաստանի սահմանադրությունը։ Նույն տարում Խորհրդային Հայաստանը մտավ Անդրֆեդերացիայի և նրա միջոցով՝ ԽՍՀՄ-ի կազմի մեջ։

1920-ական թվականների կեսերին Խորհրդային Հայաստանում սկսեցին աշխատանքներ ծավալվել ժողովրդական տնտեսության վերակառուցման և սոցիալիզմի տնտեսական հիմքի ստեղծման ուղղությամբ։ Հիմնականում կատարվեցին առաջին և երկրորդ հնգամյա պլանները։

1936 թ. ընդունվեց ԽՍՀՄ նոր սահմանադրությունը, իսկ 1937-ին՝ Հայկական ԽՍՀ նոր սահմանադրությունը։ Անդրֆեդերացիայի վերացումով Խորհրդային Հայաստանը դարձավ միու-

թենական հանրապետություն։ Դրանով նոր էջ բացվեց հայ ժողովրդի պատմության մեջ։ Հանրապետության աշխատավորները ոչ մի ջանք չէին խնայում երրորդ հնգամյա պլանի կենսագործման համար, բայց այն կիսատ մնաց գերմանաֆաշիստական զորքերի ավազակային հարձակման հետևանքով։ Որոշակի հաջողություններ ձեռք բերվեցին կուլտուրական շինարարության բնագավառում։

Ահա այս և բազմաթիվ այլ հարցեր, չնայած թույլ տրված սխալներին, լուսաբանվել են խորհրդահայ պատմագրության մեջ նաև մեր քննարկած ժամանակաշրջանում՝ 1963-ից հետո։

Առաջին հերթին պետք է հիշատակել Հայկական ԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» VII հատորը, որի 2—4-րդ բաժինները նվիրված են 1921—1941 թթ. պատմությանը։ Հեղինակային կոլեկտիվը՝ Ա. Հակոբյան, Վ. Ղազախեցյան, Հ. Կարապետյան, Փ. Ենգոյան, Ծ. Աղայան և Ղ. Դալլաքյան, փաստական հարուստ նյութերի հիման վրա շարադրել է խորհրդային Հայաստանի այդ ժամանակաշրջանի ամբողջական պատմությունը։ Նրանում հանգամանորեն բացահայտված են կոմունիստական կուսակցության լենինյան քաղաքականության կենսագործումը ավերված ու կործանման եզրին կանգնած Հայաստանում, ցույց է տրված խորհրդային Ռուսաստանի և ԽՍՀՄ մյուս հանրապետությունների ժողովուրդների բարեկամության մեծ ուժը սոցիալիզմի համատեղ կառուցման գործում։ Հատորի հեղինակները չեն շրջանցել նաև վեր հանելու առկա դժվարությունները։ Նրանք ջանացել են ցույց տալ այն պայքարը, որ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ մղվում էր դրանց հաղթահարման, թույլ տված սխալների վերացման համար։ Հատորի արժանիքներից է և այն, որ խորհրդային Հայաստանի պատմությունը շարադրվել է ԽՍՀՄ պատմության ընդհանուր ֆոնի վրա։

Նշված ժամանակաշրջանի պատմությունը շարադրվել է նաև մեր «Հայ ժողովրդի պատմություն» բուհական դասագրքի IV հատորում (7—11-րդ գլուխներ)[1] և ավելի համառոտ՝ Երևանի համալսարանի հրատարակած «Հայ ժողովրդի պատմություն» մեկհատորյակում (22-րդ գլուխը)։

[1] Տե՛ս նաև Վ. Պարսամյան, Ե. Հարությունյան, Հայ ժողովրդի պատմություն, մեր՝ Սովետական Հայաստան, Տարեգրություն (1920—1980 թթ.) գիրքը, Եր., 1982։



Խորհրդային հասարակության պատմության կարևոր պրոբլեմները լուսաբանվել են նաև մի շարք առանձին հրատարակված աշխատություններում։

Հայաստանում խորհուրդների կազմակերպման պատմությունը քննվել է Հ. Էլչիբեկյանի «Հեղկոմներից դեպի սովետները» հետմահու հրատարակված գրքույկում[1]։ Այստեղ նա սկզբում անդրադառնում է հեղկոմների կազմակերպման և նրանց գործունեության հարցին։ Հայտնի է, որ հեղկոմները Հայաստանում ծագել են ոչ միայն երկրում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո, այլև դրանից առաջ, Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո։ Դրանց տարբերությունն այն էր, գրում է նա, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ստեղծված հեղկոմները ապստամբության մարմիններ էին հանուն խորհրդային իշխանության հաստատման, իսկ խորհրդային իշխանության հաստատումից հետո ստեղծված հեղկոմները պրոլետարիատի դիկտատուրայի մարմիններ էին[2]։

Հ. Էլչիբեկյանը ճիշտ է բացատրել հեղկոմներից խորհուրդներին անցնելու անհրաժեշտությունը։ Հանրապետության հետագա առաջխաղացումը պահանջում էր, գրում է նա, սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում ժողովրդական զանգվածների ակտիվ մասնակցության ապահովում, իսկ դրան հնարավոր էր հասնել միայն խորհուրդների այդ զանգվածային, պետական իշխանության խորապես ժողովրդական և իսկական դեմոկրատական ձևերի միջոցով[3]։

Հայաստանում հողային հարաբերությունների պատմության գիտական հետազոտության բնագավառում մեծ աշխատանք է կատարել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Շառոյանը։ 1960—1962 թթ. Երևանի պետական համալսարանի հրատարակությամբ լույս են տեսել նրա երկու աշխատությունները, իսկ 1965-ին՝ երրորդը[4]։ Այստեղ նա լուսաբանել է

[1] Տե՛ս Эльчибекян А. От ревкомов к Советам (создание советов в Армении), Е., 1978:

[2] Այս մասին տե՛ս նաև Հեղափոխական կոմիտեները Հայաստանում (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմեց և ներածականը գրեց Ս. Սահրադյանը։ Եր., 1974։

[3] Տե՛ս Эльчибекян А., նշվ. աշխ., էջ 98—99։

[4] Տե՛ս Գ. Շառոյան, Գյուղի ներքին հողաբաժանությունը Սովետական Հայաստանում, Եր., 1965։

Խորհրդային Հայաստանի գյուղացիության կյանքի ամենակարևոր բնագավառներից մեկի՝ 20-ական թվականների գյուղի ներքին հողաբաժանության պատմությունը, որն ունի պատմատնտեսական խոշոր նշանակություն։ Գրքում բացահայտված են հողաշինարարության հակասությունները, դժվարությունները, ձգձգման պատճառները, ինչպես նաև այդ կարևոր պրոբլեմի լուծման եղանակների շուրջ գյուղացիության տարբեր սոցիալական շերտերի միջև մղված պայքարը և այլն։

Այդուհանդերձ աշխատության մեջ տեղ են գտել որոշ անճշտություններ, սխալներ ու թերություններ։ Օրինակ, նա «ագրարային ռեֆորմ» կամ «ագրարային վերափոխումներ» արտահայտությունների փոխարեն գործածում է «ագրարային հեղափոխություն» արտահայտությունը (էջ 178), որը ճիշտ չէ։ Դժվար է համաձայնվել հեղինակի այն պնդմանը, թե, իբր, գյուղի ներքին հողաբաժանության առաջին փուլում՝ 1921—1922 թթ., կիրառվում էին կուլակության ոչնչացման միջոցառումներ (էջ 88)։ Պատմական փաստերով չի հաստատվում նաև հեղինակի այն պնդումը, թե, իբր, գյուղի հիմնական հողաշինարարության փուլում, այսինքն՝ 1926—1929 թթ., աշխատավոր գյուղացիությունը հիասթափվում է անհատական տնտեսավարության մանրբուրժուական սկզբունքից և անցում է կատարում դեպի հողի սոցիալիստական օգտագործում (էջ 219)։ Թերի և անհաջող են բացատրված գյուղի ներքին հողաբաժանության ձգձգման պատճառները։

Գյուղի դասակարգային պայքարի հարցին է նվիրված պատմական գիտությունների թեկնածու Ե. Հովհաննիսյանի աշխատությունը[1], որը, սակայն, գրված է ոչ անհրաժեշտ գիտական մակարդակով և որևէ նորություն չի բովանդակում։ Աշխատության մեջ կան ոչ ճիշտ ձևակերպումներ, անճշտություններ։ Օրինակ, չի կարելի համաձայնվել Ե. Հովհաննիսյանի այն մտքին, թե, իբր, չնայած թույլ տրված վրիպումներին, «գյուղատնտեսության կոլեկտիվացումը և կուլակության որպես դասակարգի լիկվիդացումը հիմնականում ճիշտ է կատարվել»[2]։ Փաստերը

1 Տե՛ս Ե. Հովհաննիսյան, Դասակարգային պայքարը գյուղում կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանում (ՀԽՍՀ-ի նյութերով), Եր., 1969։

2 Նույն տեղը, էջ 144։



վկայում են, որ դա ոչ թե հիմնականում ճիշտ է կատարվել, այլ ընդհակառակը։

Խորհրդահայ պատմագրության մեջ թեև քիչ բան չէր արվել Խորհրդային Հայաստանի գյուղացիության պատմության հետ կապված առանձին հարցերի լուսաբանման ուղղությամբ, սակայն մինչև 70-ական թվականների կեսերը չկար այդ հարցին նվիրված մի ամբողջական աշխատություն։ Այդ բացը լրացրեց պատմական գիտությունների դոկտոր Վ. Ղազախեցյանը, որի մենագրությունն[1] ընդգրկում է Խորհրդային Հայաստանի գյուղացիության պատմության առաջին տասնամյակը՝ 1920—1929 թվականները, մի առանձնահատուկ ժամանակաշրջան, երբ գյուղում զարգանում էին անհատական տնտեսությունները և աստիճանաբար նախապատրաստվում էր նրանց սոցիալիստական վերափոխումը։

Աշխատության մեջ փաստական հարուստ նյութերի հիման վրա լուսաբանվում են 20-ական թվականների Խորհրդային Հայաստանում ագրարային վերափոխումների, նէպի իրականացման ու դասակարգային պայքարի սրման, սոցիալիստական վերափոխման նախապատրաստման, գյուղի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի պրոբլեմները։ Գիրքը եզրափակվում է լենինյան կոոպերատիվ պլանի իրականացման և կոլեկտիվացման առաջին քայլերի շարադրանքով։ Առանձնապես հանգամանորեն է վերլուծված 20-ական թվականներին Հայաստանի գյուղի սոցիալ-տնտեսական տեղաշարժը՝ գյուղի շերտավորումը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, սոցիալ-դասակարգային կազմը և այլն։

Ուշագրավ է տվյալ թեմայի վերաբերյալ հրատարակված գրականության մասին հեղինակի պատմաքննական վերլուծությունը։ Հեղինակը բացահայտել է մի շարք պատմաբանների և տնտեսագետների աշխատություններում տեղ գտած սխալներն ու թերությունները, ճշգրտել շատ տվյալներ և մի շարք հարցերի տվել նոր մեկնաբանություն։

Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությու-

1 Տե՛ս Վ. Ղազախեցյան, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմություն (1920—1929), Եր., 1975։

նը շարադրված է Վ. Ղազախեցյանի հաջորդ մենագրության մեջ[1], որը հեղինակի կողմից պրոբլեմի ամբողջացումն է։ Դրանով ավարտվում է Հայաստանի գյուղացիության պատմությունը սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում։ Մենագրությունն ընդգրկում է բուն կոլեկտիվացման տարիները։ Այստեղ հանգամանորեն շարադրված է գյուղում կոլեկտիվացման, կոլտնտեսային գյուղացիության ձևավորման պրոցեսը՝ սկզբից մինչև նրա ավարտը, բացահայտված են այդ գործում թույլ տրված կոպիտ սխալները, ցույց է տրված դասակարգային պայքարի սրումը գյուղում, հատկապես կուլակության՝ որպես դասակարգի վերացման քաղաքականության կիրառման ժամանակաշրջանում։ Աշխատության մեջ պատշաճ տեղ է հատկացված գյուղի հասարակական-քաղաքական կյանքի, մասնավորապես խորհուրդների, կոմունիստների ու կոմերիտականների և հասարակական կազմակերպությունների գործունեության լուսաբանմանը։ Ցույց է տրված գյուղի կուլտուրական վերելքը, կուլտուրական հեղափոխության նվաճումները։

Լինելով Խորհրդային Հայաստանի գյուղացիության պատմության լավագիտակ, Վ. Ղազախեցյանը ճիշտ և դիպուկ բազմաթիվ դիտողություններ է արել ոչ միայն Հ. Վարդանյանի, Դ. Դավթյանի, Ե. Հովհաննիսյանի մենագրությունների, այլև «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծերի», «Հայ ժողովրդի պատմության» VII հատորի, «ԽՄԿԿ պատմության» IV հատորի վերաբերյալ։

Հեղինակի կարծիքով, սխալ է պատմական գրականության մեջ տարածված այն կարծիքը, թե ինչպես Խորհրդային Միության առաջավոր շրջաններում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում 1929 թ. երկրորդ կեսին աշխատավոր գյուղացիության հիմնական զանգվածը շրջադարձ էր կատարել դեպի կոլտնտեսությունները։ Հենվելով փաստական տվյալների վրա, նա գտնում է, որ Հայաստանում, ինչպես և Անդրկովկասի մյուս հանրապետություններում, այդ պրոցեսն ավելի ուշ է սկսվել։ «Այստեղ, ինչպես նաև Անդրկովկասի մյուս եղբայրական հանրապետություններում, մասսայական կոլեկտիվացման նախադրյալները հասունանում էին ավելի դանդաղ»[2]։

[1] Տե՛ս Վ. Ղազախեցյան, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությունը (1927—1937), Եր., 1976։

[2] Նույն տեղը, էջ 22—23։



Այնուհետև, պատմաբանը սխալ է համարում նաև այն, երբ հեղինակները, ղեկավարվելով զուտ թվական տվյալներով, պնդում են, որ Հայաստանի շրջանների մեծ մասում համատարած, իսկ մնացած շրջաններում զանգվածային կոլեկտիվացում է եղել 1930 թ. հունվար-փետրվարին, քանի որ դա դեկրետավորվել է վերևից, հանրապետության և Անդրֆեդերացիայի ղեկավար մարմինների կողմից, անց է կացվել կամավորության սկզբունքի խախտումով։ Թվական տվյալները, գրում է նա, չեն ներկայացնում իրերի իսկական վիճակը, դա զանգվածային կամ համատարած կոլեկտիվացում չէր, հետևաբար ճիշտ չի լինի խոսել Հայաստանում դեպի կոլտնտեսությունները գյուղացիության կատարած շրջադարձի մասին[1]։

Ելնելով իր այդ տեսակետից, Վ. Ղազախեցյանը սխալ է համարում նաև պատմական գրականության մեջ տարածված այն կարծիքը, երբ Հայաստանում կուլակությունը որպես դասակարգի վերացումը կապում են համատարած կոլեկտիվացման հետ, քանի որ կուլակության վերացումը կատարվել է ավելի շուտ, քան համատարած կոլեկտիվացումը։ Նրա կարծիքով, կուլակությունը վերացավ 1930 թ. հունվար-փետրվար ամիսներին, իսկ համատարած կոլեկտիվացումն ավարտվեց 30-ական թվականների կեսերին[2]։

Առաջին հնգամյակի տարիներին Խորհրդային Հայաստանում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հարցը քննվում է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դ. Դավթյանի մենագրության մեջ[3]։ Նրանում ճիշտ է բնութագրված կոոպերացիայի դերը որպես գյուղի սոցիալիստական վերակառուցման պայման, բացահայտված են լենինյան կոոպերատիվ պլանի կենսագործման առանձնահատկությունները Հայաստանում։ Շարադրելով Հայաստանում գյուղատնտեսության կոլեկտիվացման պատմությունը, հեղինակը միաժամանակ ցույց է տվել դասակարգային պայքարի սրումը գյուղում։ Աշխատության մեջ ցույց է տրված սոցիալիստական ինդուստրացման դերը գյուղի սոցիալ-տնտեսական վերափոխման գործում։ Բացա-

[1] Տե՛ս Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ., էջ 56։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 133—134։

[3] Տե՛ս Դ. Դավթյան, Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման լենինյան տեսության կենսագործումը Հայաստանում, Եր., 1971։

հայտված է նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեությունը հանրապետության գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման կենսագործման ուղղությամբ։

Չնայած դրան, Դ. Դավթյանի մենագրությունն ունի լուրջ թերություններ ու սխալներ, փաստական անճշտություններ։ Աշխատության մեջ չեն լուսաբանվել մի շարք կարևոր հարցեր, ինչպես, օրինակ, կոոպերատիվ շարժումը երկրորդ հնգամյակի տարիներին, կուլակության վերացման հարցը և այլն։

Նէպի տարիներին Խորհրդային Հայաստանում կատարված սոցիալ-տնտեսական փոփոխությունների հարցը հանգամանորեն քննության է առնված պատմական գիտությունների դոկտոր Գ. Գեղամյանի մենագրության մեջ[1]։ Նրանում փաստորեն ներկայացված է Խորհրդային Հայաստանում սոցիալիզմի կառուցման պատմությունը։ Հեղինակին հաջողվել է բացահայտել հանրապետությունում սոցիալիզմի կառուցման թե՛ ընդհանուր օրինաչափությունները և թե՛ տեղական առանձնահատկությունները՝ դիտելով դրանք փոխկապվածության մեջ։ Հեղինակի կարծիքով, ռազմական կոմունիզմի և նոր տնտեսական քաղաքականության՝ այդ փաստորեն միմյանց հակադիր քաղաքականությունների կիրառումով կուսակցությունն ըստ էության նույն նպատակն է հետապնդել՝ բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդում։

Հանգամանորեն քննելով Հայաստանում ռազմական կոմունիզմի քաղաքականությանն անցնելու հարցը, Գ. Գեղամյանը հանգում է այն եզրակացության, որ այդ քաղաքականությունը կիրառվել է առանց հաշվի առնելու հանրապետության տեղական առանձնահատկությունները, որի հետևանքով այն բացասական հետևանքներ է ունեցել։ «Մեր կարծիքով,— գրում է նա,— ավերված ու քայքայված, որբերով ու գաղթականներով հեղեղված Հայաստանում «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը կարելի էր շրջանցել՝ բավարարվելով առանձին բռնագրավումներով»[2]։ Գ. Գեղամյանը քննադատում է խորհրդահայ պատմական գրականության մեջ իշխող այն տեսակետը, թե ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումով էր, որ

[1] Տե՛ս Գ. Գեղամյան, Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում նէպի տարիներին (1922—1936), Եր., 1976։

[2] Գ. Գեղամյան, նշվ. աշխ., էջ 36։



Հայաստանում ապահովվեց խորհրդային կարգերի գոյությունը, նրա ամրապնդումն ու հետագա զարգացումը[1]։

Ի դեպ, ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումը, հակառակ Ա. Հակոբյանի, Վ. Ներկարարյանի, Ս. Խարմանդարյանի, Ծ. Աղայանի և այլոց կարծիքի, ճիշտ չեն համարել նաև այլ պատմաբաններ։ Օրինակ, Հ. Էլչիբեկյանը գտնում է, որ նախ՝ ի տարբերություն Խորհրդային Ռուսաստանի, Հայաստանում ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառման ժամանակ ոչ թե պարենամսնատրում, այլ բռնագրավումներ են եղել և որ չվերահսկվող բռնագրավումները հաճախ անհարկի բռնությունների ուղեկցությամբ չէին կարող առաջ չբերել աշխատավոր գյուղացիության դժգոհությունը։ Չնայած դրան, իրավացիորեն գրում է նա, պնդել, թե, իբր, հենց բռնագրավումներն էին փետրվարյան խռովության պատճառ, ինչպես այժմ պնդում են դաշնակցական պարագլուխները, նշանակում է աղավաղել պատմությունը[2]։ Մենք կավելացնեինք՝ ընկնելով ծայրահեղության մեջ, դաշնակցականների փետրվարյան խռովության միակ պատճառը ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառման մեջ են տեսնում նաև խորհրդահայ որոշ պատմաբաններ (Բ. Օհանջանյան և ուրիշներ)։ Այդ մասին կխոսվի ստորև։

Գ. Գեղամյանի աշխատության մեջ ցույց է տրված նէպի խիստ անհրաժեշտությունն ու նրա դերը սոցիալիզմի կառուցման գործում։ Նա խորհրդահայ մի շարք պատմաբանների (Դ. Դավթյան, Ե. Հովհաննիսյան, Ռ. Մովսիսյան) առարկում է Հայաստանում նէպի կիրառման պարբերացման և բնույթի հարցում։ Ճիշտ է հեղինակի այն պնդումը, թե խորհրդահայ պատմագրության մեջ գրեթե չի ուսումնասիրվել նէպը ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման ժամանակաշրջանում։

Ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման ընդհանուր ֆոնի վրա աշխատության մեջ հանգամանորեն լուսաբանվում են Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության ձևավորման ու զարգացման, բանվորագյուղացիական դաշինքի

[1] Տե՛ս Գ. Գեղամյան, նշվ. աշխ., էջ 37։

[2] Տե՛ս **Эльчибекян А.** От ревкомов к Советам, էջ 28։

և այլ հարցեր։ Ընդհանուր առմամբ աշխատության մեջ հաջող են բացահայտված Հայաստանում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական վերափոխումները, համակողմանիորեն վեր է հանված նաև կուլտուրական հեղափոխության դերը սոցիալիզմի կառուցման գործում։

Հայաստանում խորհրդային իշխանության ամրապնդման պատմության մի քանի կարևոր հարցեր են լուսաբանվում Երևանի համալսարանի հրատարակած ժողովածուի մեջ[1]։ Նրանում զետեղված մի քանի հոդվածներում հեղինակները կանգ են առնում խորհրդային իշխանության առաջին տարիներին Հայաստանում գոյություն ունեցող ծանր իրավիճակի վրա, մասնավորապես քննում են ռազմական կոմունիզմի և նոր տնտեսական քաղաքականության կիրառման հետ կապված հարցերը։ Այսպես, Կ. Սարգարյանը գտնում է, որ ռազմական կոմունիզմի քաղաքականությունը Հայաստանում չպետք է կիրառվեր, որովհետև «շուտով պարզվեց, որ «ռազմական կոմունիզմի քաղաքականությունը» ոչ միայն ի զորու չէ լուծելու հանրապետության տնտեսական ճգնաժամը, այլև հղի է հետագա բարդություններով»[2]։ Եվ դա այն պատճառով, գրում է նա, որ ռազմական կոմունիզմի քաղաքականությունը չէր համապատասխանում հանրապետության սոցիալ-տնտեսական պայմաններին, այն կիրառվեց հապճեպ և զգալի շեղումներով։

Բացահայտելով ինչպես մի շարք այլ, այնպես էլ ռազմական կոմունիզմի քաղաքականության հարցում Հայաստանի ղեկավարության միջև եղած սուր տարաձայնությունները, հեղինակը ճիշտ դիտողություն է անում Բ. Օհանջանյանին, որը տարբերություն չի դրել ղեկավարության երկու հակադիր դիրքերում գտնվողների միջև և հեղկոմի նախագահ Ս. Կասյանին անհարկի կերպով համարել է ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառման ջատագով։ Մինչդեռ, գրում է հեղինակը, Ս. Կասյանը, ինչպես և Ա. Մռավյանը, հակառակ տեսակետ էին պաշտպանում։

Կ. Սարգարյանը դիտողություն է արել նաև Ա. Հակոբյանին և Ս. Սահրադյանին, որոնք գերագնահատում են ռազմական կոմունիզմի դերը Հայաստանում խորհրդային իշխանության ամրապնդման և հետագա զարգացման գործում։

Հեղինակն առաջ է քաշում 1921 թ. սկզբներին հակահեղափոխության դեմ պայքարի ուղղությամբ Հայաստանի մի շարք ղեկավարների կողմից կիրառվող ծայրահեղ միջոցներ ձեռնարկելու հարցը։ Խոսքը վերաբերում է սպանների արտաքսմանը։ Նա գրում է, թե իր ժամանակին ժողովրդի մեջ մտաբախումների տեղիք էր տալիս այս հարցը՝ ինչո՞ւ են աքսորվել ազգային շարժումների ղեկավարները, Սարդարապատի հերոսները, որոնց մի մասը դաշնակցականներ չեն եղել։ Այսօր էլ օրինական հարց է առաջ գալիս, իրավացիորեն գրում է Կ. Սարդարյանը, թե ի՞նչ նկատառումով է առաջնորդվել չեկան, և առաջին հերթին նրա նախագահ Կ. Այվազյանը, որն աքսորել կամ ձերբակալել է գեներալներ Նազարբեկյանին, Սիլիկյանին, գնդապետ Դանիելբեկ Փիրումյանին, որոնք երբեք դաշնակցությունը կուսակցությանը չեն պատկանել, դրան հակառակ ազատ արձակելով դաշնակցական գնդապետներ Ս. Թարխանյանին (Կուռո), Գ. Սարգիսբեկյանին և մի շարք հայտնի այլ խմբապետների, որոնք ակտիվ դեր խաղացին փետրվարյան խռովությունը կազմակերպելու գործում[1]։

Գ. Գեղամյանի հոդվածում քննարկվում է Հայաստանում նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու հարցը։ Անդրադառնալով Հայաստանում ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառման հարցին, նա նշում է, որ Հայաստանի հեղկոմը այդ քաղաքականությունը մտցրեց 1920 թ. դեկտեմբերին՝ ջանալով որոշ չափով մեղմացնել հանրապետության պարենային ծանր վիճակը։ Սակայն, գրում է նա, ռազմական կոմունիզմը չտվեց այն արդյունքները, ինչ սպասվում էր, և իր հերթին բացասաբար անդրադարձավ գյուղացիության վրա, քանի որ կենսագործման պրոցեսում թույլ տրվեցին սխալներ ու թերություններ, որոնք ճարպկորեն օգտագործվում էին դասակարգային թշնամու կողմից[2]։

Հոդվածում հաջող են վերլուծված խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական առանձնահատկությունները, որոնցով էլ պայմանավորված էր նոր տնտեսական քաղաքականության կիրառումը։ Հեղինակը փաստական տվյալների

---

1 Տե՛ս Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր, Եր., 1987։

2 Նույն տեղը, էջ 13։

1 Տե՛ս նշված ժողովածուն, էջ 20։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 100։

հիման վրա հանգում է այն ճիշտ եզրակացության, որ նէպի կենսագործման առաջին տարվա փորձը ցույց տվեց այն բարերար ազդեցությունը, որ նա ունեցավ հանրապետության գյուղատնտեսության (մասամբ նաև արդյունաբերության) և առևտրի ծավալման վրա, ամրապնդեց բանվորագյուղացիական դաշինքը։

Է. Զոհրաբյանի հոդվածը նվիրված է եվրոպական երկրների հետ Խորհրդային Հայաստանի առևտրատնտեսական առնչություններին։ Հեղինակը մեծ մասամբ արխիվային փաստաթղթերի հիման վրա ցույց է տալիս այն առևտրական կապերը, որ Խորհրդային Հայաստանը հաստատել էր գերմանական, իտալական, շվեդական, ֆիննական, անգլիական ֆիրմաների հետ, հանգամանք, որը և նպաստեց երկրի տնտեսական կյանքի վերականգնմանը։ Հոդվածում միաժամանակ բացահայտվում է եվրոպական երկրների, առաջին հերթին Իտալիայի կողմից Հայաստանին ներկայացված անընդունելի պայմանների առկայությունը, պայմաններ, որոնք կհանգեցնեին հանրապետությունում տնտեսության բարձունքները օտարերկրյա կապիտալի ձեռքն անցնելուն։

Է. Դանիելյանի հոդվածը նվիրված է Խորհրդային Հայաստանում արևմտահայ գաղթականության հարցին (1920—1922 թթ.), իսկ պատմական գիտությունների դոկտոր Հ. Մելիքսեթյանի հոդվածը՝ Խորհրդային Հայաստանի և սփյուռքի կապերի սկզբնավորմանը։ Այստեղ ցույց է տրված, որ հայրենիք—սփյուռք կապի կարևոր օղակներ էին ծառայում, մի կողմից, Հայկական ԽՍՀ դիվանագիտական, տնտեսական ու առևտրական ներկայացուցիչները, առանձին պատվիրակությունները, խորհրդահայ մամուլը, ՀՕԿ-ը, իսկ մյուս կողմից, սփյուռքի առաջադիմական կազմակերպությունները։ Հոդվածում խոսվում է նաև արտասահմանյան հայերի առաջին ներգաղթի մասին։

Ս. Ամիրյանի հոդվածում արտացոլվել է Խորհրդային Հայաստանի կառավարության առաջին նախագահ Ալ. Մյասնիկյանի բազմաբեղուն գործունեությունը Հայաստանում։ Այնտեղ ճիշտ է ներկայացված Հայաստանի այն ներքին և արտաքին ծանր. անկայուն դրությունը, երբ Մյասնիկյանը եկավ Հայաստան։ Կուտակվել էին բազմաթիվ պրոբլեմներ, որոնք հրատապ լուծում էին պահանջում։ Փաստական տվյալներով ցույց է տրված այն



տիտանական աշխատանքը, որ Ալ. Մյասնիկյանի ղեկավարությամբ կատարվում էր Հայաստանում՝ քայքայված ժողովրդական տնտեսությունը վերականգնելու, սովի ու համաճարակի դեմ պայքարելու, Զանգեզուրում խորհրդային իշխանություն հաստատելու, պետական ապարատը ամրապնդելու, բազմահազար որբերի ու գաղթականության հոգսերը հոգալու, կուլտուրական շինարարություն ծավալելու և հանրապետության կյանքի այլ բնագավառներում դրությունը շտկելու ուղղությամբ։ Ժողովածուում զետեղված հոդվածներից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Լ. Խուրշուդյանի հոդվածը՝ «Հայաստանի ոչ պրոլետարական կուսակցությունների գաղափարական-քաղաքական և կազմակերպական կրախը (1920—1921 թթ.)» վերնագրով։ Հայկական քաղաքական կուսակցությունների պատմության խորագիտակ հեղինակին հաջողվել է փաստական տվյալների հիման վրա ցույց տալ Հայաստանի ոչ պրոլետարական կուսակցությունների՝ դաշնակցություն, հնչակ, հայ ժողովրդական կուսակցություն, սահմանադիր ռամկավար, էսէռական և մենշևիկյան կուսակցությունների գաղափարական-քաղաքական ու կազմակերպական կրախը՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման և ամրապնդման ժամանակաշրջանում։ Հարկ է նշել, որ այդ պրոբլեմն առանձին վերցրած աղոտ է ուսումնասիրվել խորհրդահայ պատմաբանների կողմից։

Հեղինակն առանձին-առանձին կանգ է առնում խորհրդային իշխանության նկատմամբ այդ կուսակցությունների, ինչպես նաև հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (սպեցիֆիկների) դիրքորոշման հարցի վրա, բացահայտում է նրանց ծրագրերի, գաղափարների և գործունեության հակասական, անհետևողական բնույթը, նրանցում տեղի ունեցած բախումները, պառակտումները, խմբավորումները, հատկապես դաշնակցության բացահայտ հակախորհրդային, թշնամական դիրքորոշումը և, ի վերջո, հանգում այն եզրակացության, որ այդ կուսակցությունները փետրվարյան հակահեղափոխական խռովությունից հետո Խորհրդային Հայաստանում լիկվիդացվում են, կրախի են մատնվում։

Գիտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում պատմական գիտությունների թեկնածու Ս. Ալավերդյանի մենա-

գրությունը, ուր բացահայտված է բանվոր դասակարգի դերը կոլտնտեսային կարգի հաղթանակի գործում[1]։

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Ազիզբեկյանի մենագրությունը նվիրված է Հայաստանի էլեկտրիֆիկացիայի զարգացման հարցին[2]։ Հայաստանի արհմիությունների պատմությունը ընդարձակորեն շարադրվել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Վարդապետյանի ծավալուն մենագրության մեջ[3], իսկ նրա մեկ այլ աշխատությունում լուսաբանվում է ՀՕԿ-ի գործունեությունը[4]։ Առանձին աշխատություն է նվիրվել Հայաստանի բանվորագյուղացիական տեսչության՝ ԲԳՏ-ի գործունեությանը[5]։

Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգի պատմության հետ առնչվող շատ հարցեր մասամբ լուսաբանվել էին խորհրդահայ պատմաբանների և տնտեսագետների աշխատություններում, սակայն մինչև 1960 թ. համակողմանի, ընդհանրացնող աշխատություններ դեռևս չկային։ Այս տեսանկյունից էլ պետք է մոտենալ Հ. Կարապետյանի մենագրության[6] գնահատմանը։ Ժամանակագրական առումով այն ընդգրկում է 1920—1940 թվականները։

Հեղինակը փաստական հարուստ տվյալների հիման վրա լուսաբանում է խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգի ձևավորման ու զարգացման ընթացքը։ Նրա կարծիքով, խորհրդային իշխանության առաջին ութ տարիների ընթացքում էր, որ ձևավորվեց Հայաստանի բանվոր դասակարգը՝ Խորհրդային Միության բանվոր դասակարգի ազգային ջոկատներից մեկը։

Բացահայտվել է նաև Հայաստանի բանվոր դասակարգի ավանգարդային դերը սոցիալիզմի կառուցման գործում։ Ուշագրավ փաստեր կան բանվորների պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության կազմակերպման, նրանց կուլտուրական մակարդակի բարձրացման և նյութական բարելավման, բանվորական կադրերի պատրաստման ու վերջիններիս որակի բարձրացման, բանվոր դասակարգի հասարակական-քաղաքական ակտիվության, սոցիալիստական մրցության ծավալման մասին։

Աշխատության մեջ ներկայացված է Հայաստանի բանվոր դասակարգի ոչ միայն քանակական, այլև որակական աճը։ Ճիշտ է հեղինակի այն պնդումը, թե լոցմրցությունն ու հարվածայնությունը դարձան հնգամյա պլանների կատարման կարևոր լծակները։ Աշխատության մեջ ցույց է տրված նաև Հայաստանի բանվոր դասակարգի դերը գյուղի սոցիալիստական վերակառուցման, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ստեղծման ու ամրապնդման գործում։

Քննարկվող ժամանակաշրջանում առանձին հրատարակված աշխատությունների մեջ մեծ տեղ է գրավում ժողովուրդների բարեկամության թեման։

1967-ին հրատարակվեց Զ. Գրիգորյանի նոր մենագրությունը՝ նվիրված հեթհոկտեմբերյան ժամանակաշրջանում հայ և ռուս ժողովուրդների բարեկամությանը[1]։ Դա, փաստորեն, հայ-ռուսական հարաբերությունների պատմության խորագիտակ հեղինակի 1960 թ. հրատարակված ծավալուն աշխատության երկրորդ մասն է կազմում։ Գրքում պատմական լայն ֆոնի վրա, հարուստ ու համոզիչ փաստերով վեր է հանվել եղբայրական երկու ժողովուրդների բարեկամությունը ռազմաքաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում։ Ընդգծելով, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը մարդկության հասարակության պատմության մեջ բացեց նոր դարաշրջան, հեղինակը միանգամայն արդարացիորեն նշում է, որ այն նոր դարաշրջան բացեց նաև հայ և ռուս, հայ ու խորհրդային մյուս ժողովուրդների հարաբերությունների պատմության մեջ։

Զ. Գրիգորյանը հայ և ռուս ժողովուրդների կապերի ու բարեկամական հարաբերությունների դարավոր պատմությունը բաժանում է չորս հիմնական շրջանների՝ ընդ որում վերջինը, ամենանշանավորը, ընդգրկում է հեթհոկտեմբերյան ժամանակաշրջանը։ «Հայ և ռուս ժողովուրդների բարեկամական հարաբե-

---

[1] Տե՛ս Алахвердян С., Роль рабочего класса в победе колхозного строя в Армении (1927—1935 гг.), Е., 1969։

[2] Տե՛ս Հ. Ազիզբեկյան, Խորհրդային Հայաստանի էլեկտրիֆիկացիայի պատմությունից, Եր., 1966։

[3] Տե՛ս Ա. Վարդապետյան, Հայաստանի արհմիությունների պատմություն (1905—1965), Եր., 1969։

[4] Տե՛ս Ա. Վարդապետյան, Հայաստանի օգնության կոմիտե (ՀՕԿ), 1921—1937, Եր., 1966։

[5] Տե՛ս Ա. Հակոբյան, Հայաստանի բանգյուղտեսչությունը սոցիալիզմի համար մղված պայքարում (1920—1954), Եր., 1974։

[6] Տե՛ս Հ. Կարապետյան, Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգի ձևավորումը և զարգացումը, Եր., 1980։

[1] Տե՛ս Զ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը (հեթհոկտեմբերյան ժամանակաշրջան), Եր., 1967։

*ությունները,— գրում է նա,— իրենց զարգացման շորրորդ շրջանում ոչ միայն էլ ավելի ծավալվեցին ու ամրապնդվեցին, այլև ստացան որակական բոլորովին նոր բովանդակություն ու էություն»*[1]*։ Այնուհետև ցույց են տրվում այն գործոնները, որոնց վրա հետհոկտեմբերյան ժամանակաշրջանում խարսխվել է հայ և ռուս ու խորհրդային մյուս ժողովուրդների բարեկամությունը։*

*Զ. Գրիգորյանը կոնկրետ օրինակներով ցույց է տվել հայ և ռուս ժողովուրդների համատեղ ջանքերը՝ երկրում խորհրդային կարգերի հաստատման, ինչպես նաև նրանց միջև հաստատված տնտեսական կապերի զարգացման ուղղությամբ։ Լայնորեն շարադրված է հայ և ռուս ժողովուրդների կապերն ու բարեկամությունը ժողովրդական կրթության, գիտության, գրականության ու արվեստի ասպարեզներում։ Ակնառու փաստերով ցույց է տրված ռուսական խորհրդային առաջավոր մշակույթի բարերար ազդեցությունը խորհրդահայ մշակույթի զարգացման վրա։*

*Խորհրդահայ պատմական գրականության մեջ քիչ էջեր չեն գրված Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծման և այդ գործում Վ. Ի. Լենինի դերի մասին։ Կարևորագույն այդ հարցն ավելի խոր և հանգամանորեն լուսաբանվում է պատմական գիտությունների դոկտոր Ս. Խարմանդարյանի մենագրության մեջ*[2]*։*

*Արխիվային և արժեքավոր այլ նյութերի աղբյուրագիտական լայն հիմքի վրա հաջողությամբ տրված է տվյալ ժամանակաշրջանի (1921 թ. գարուն—1923 թ. գարուն) խորհրդային Անդրկովկասի ներքին և արտաքին դրության վերլուծությունը, խորությամբ շարադրված է Անդրֆեդերացիայի ստեղծման ու ամրապնդման պատմությունը։ Գիտական շրջանառության մեջ են դրվել բազմաթիվ նորահայտ վավերագրեր, որոնք լույս են սփռում ինչպես Անդրֆեդերացիայի կազմավորման պատմության, այնպես էլ Անդրկովկասի ներկուսակցական կյանքի հետ կապված մի շարք կարևոր իրադարձությունների վրա։ Հաստատապես կարելի է պնդել, որ Անդրկովկասի ներկուսակցական կյանքը, ներկուսակցական տարաձայնությունները 1921—1923 թթ. ոչ մի աշխատության մեջ այնպես հանգամանալից չեն շարադրված, ինչպես Ս. Խարմանդարյանի աշխատության մեջ։*

[1] Զ. Գրիգորյան, *Հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը... էջ 14։*

[2] *Տե՛ս* Хармандарян С., Ленин и становление Закавказской федерации, 1921—1923, Е., 1969։



*Պատմագիտական կարևոր նշանակություն ունի Ս. Խարմանդարյանի մենագրության «Աղբյուրներ և գրականություն» բաժինը (էջ 444—455), ուր մանրակրկիտ վերլուծության են ենթարկվում ու արժեքավորվում Անդրֆեդերացիայի պատմության վերաբերյալ եղած աղբյուրներն ու պատմաբանների աշխատությունները։ Գնահատելով այդ աշխատություններից յուրաքանչյուրը, հեղինակը նաև արժեքավոր դիտողություններ է անում, վեր հանում դրանցում տեղ գտած սխալներն ու թերությունները, կատարում ժամանակագրական ճշգրտումներ։ Առանձնապես արժեքավոր են նրա դիտողությունները Ե. Տոկարժևսկու, Ս. Գիլիլովայի, Ի. Դուբինսկի-Մուխաձեի, Մ. Ահմեդովի, Պ. Ազիզբեկովայի, Զ. Գուլիևի աշխատություններում, ինչպես նաև Ադրբեջանի և Վրաստանի կոմունիստական կազմակերպությունների պատմության «Ուրվագծերում» տեղ գտած առանձին սխալների մասին։ Մենք համաձայն ենք նրա այն դիտողություններին, որոնք հիմնականում վերաբերում են Անդրֆեդերացիայի ստեղծման փուլերին (հեղինակը, հակառակ Տոկարժևսկու, գտնում է, որ եղել է ոչ թե երեք, այլ երկու փուլ), ԽՍՀՄ-ի կազմավորման հարցում «ավտոնոմիզացիայի» պլանին (հեղինակը, հակառակ Մ. Ահմեդովի գտնում է, որ կուսակցության ղեկավարության մեջ բոլորը համաձայն էին «ավտոնոմիզացիայի» պլանին՝ բացի Լենինից), Մոսկվայում Ադրբեջանական ԽՍՀ ներկայացուցիչ Շ. Շախտախտինսկու Անդրֆեդերացիայի մասին Վ. Ի. Լենինի գրած նամակի գնահատմանը Պ. Ազիզբեկովան դրական գնահատական է տալիս, մինչդեռ հայ պատմաբանը գտնում է, որ Շախտախտինսկու առաջարկը սխալ էր, քանի որ այն հանգում էր Անդրկովկասի ազգային խորհրդային հանրապետությունների լիկվիդացմանը, Անդրկովկասյան միասնական հանրապետության ստեղծմանը և այլն։ Հեղինակը ճիշտ է նկատել «Ադրբեջանի կոմկուսակցության պատմության ուրվագծերի» այն սխալը (էջ 379), թե ԽՍՀՄ-ի կազմավորման մասին հարցը առաջինը դրել է Անդրկովկասը, իսկ Անդրկովկասում՝ Ադրբեջանի կուսակցական կազմակերպությունը։*

*Անդրկովկասյան Ֆեդերացիայի հարցին անդրադարձել է նաև պատմական գիտությունների թեկնածու Հ. Սահակյանը*[1]*։ Թեև*

[1] *Տե՛ս* Հ. Սահակյան, *Մեծ Հոկտեմբերը և ազգային հարցի լուծումը Անդրկովկասում, Եր., 1967։*

նրա գրքում փորձ է արվում ցույց տալ Հոկտեմբերյան հեղափոխության բախտորոշ դերը Անդրկովկասում ազգային հարցի լուծման գործում, լուսաբանել Անդրֆեդերացիայի կազմավորումը, վեր հանել նրա գոյության 14 տարիների ընթացքում Անդրկովկասի հանրապետությունների ձեռք բերած նվաճումները, շոշափել բուրժուական նացիոնալիզմի դեմ մղված պայքարի հարցերը և այլն, այնուամենայնիվ, դրանց լուսաբանումը մակերեսային բնույթ է կրում, տեղ են գտել նաև ոչ ճիշտ դրույթներ։ Օրինակ, միանգամայն անհիմն է հեղինակի կողմից Հայաստանի հանրապետության էությունը իմպերիալիստական որակելը (էջ 150)։ Այս հարցում մենք լիովին համաձայն ենք Ա. Մնացականյանի հետ, որը և խստորեն քննադատել է այն իր ուշագրավ գրքույկում[1]։ Նման տեսակետը, նշում է Ա. Մնացականյանը, առաջ քաշեց ոչ անհայտ Զինովևը՝ 1920 թ. Բաքվում Արևելքի ժողովուրդների համագումարում, Հայաստանը անվանելով «իմպերիալիստական պետություն»։ «Այս անհեթեթ տեսակետը,— այնուհետև գրում է նա,— թափանցեց մամուլի էջերը և մտավ շրջանառության մեջ։ Կուսակցության պատմության, ԽՍՀՄ ժողովուրդների և համաշխարհային պատմությանը նվիրված մի շարք գրքերում և առանձին գիտաշխատողների հոդվածների մեջ մինչև այժմ էլ գիտակցաբար կամ անգիտակցաբար կրկնվում է զինովևյան զրպարտանքը Հայաստանի հասցեին[2]։

Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ-ի ստեղծման պատմությանը անդրադարձել է նաև Գ. Գալոյանը՝ «Բանվորական շարժումը և ազգային հարցը Անդրկովկասում» մենագրության մեջ։ Դրանց ստեղծումը, գրում է նա, կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության մեծագույն հաղթանակն էր։ Ամբողջ աշխատության շարադրանքից երևում է կոմունիստական կուսակցության ղեկավար և ուղղություն տվող դերը Անդրկովկասի ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի ազգային վերածնդի գործում։

Անդրկովկասի տարբեր ժողովուրդների համատեղ պայքարը երկրամասում խորհրդային կարգերի հաստատման ու

[1] Տե՛ս Ա. Մնացականյան, Հայաստանի հեղափոխական շարժման հարցերի լուսաբանությունը ԽՄԿԿ պատմության մեջ, Եր., 1968, էջ 26։

[2] Ա. Մնացականյան, նշվ. աշխ. էջ 86։



ամրապնդման, ինչպես նաև միացյալ ջանքերով սոցիալիզմի կառուցման գործում վեր է հանված Ծ. Աղայանի՝ Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամությանը նվիրված չորս հատորանոց աշխատության երկրորդ հատորում[1]։ Աշխատության առաջին հատորն ընդգրկում է Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության պատմությունը հնագույն ժամանակներից մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը։ Հեղինակը II հատորում իր առջև խնդիր է դրել այն ցույց տալ պատմական նոր պայմաններում, երբ այդ բարեկամությունն ստանում է նոր բովանդակություն։ Ժողովուրդների բարեկամությունը լուսաբանված է պատմական լայն ֆոնի վրա, 1917—1937 թթ. Անդրկովկասի ժողովուրդների ռազմաքաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների սերտ առնչությամբ։ Հանգամանորեն շարադրված է նաև Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծման պատմությունը, որը կարևոր նշանակություն ունեցավ նրա կազմի մեջ մտած ժողովուրդների կյանքում։ Ուշագրավ փաստերով ցույց է տրված Անդրկովկասյան հանրապետությունների բարեկամությունը մշակույթի բնագավառում։

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նշված ժամանակաշրջանում երկրամասի ժողովուրդների ճակատագիրն ավելի սերտորեն էր կապված ռուս և մեր հայրենիքի մյուս ժողովուրդների ճակատագրի, ռուսական բանվոր դասակարգի պատմական դերի հետ, Ծ. Աղայանը հիշյալ աշխատության մեջ Անդրկովկասի ժողովուրդների բազմակողմանի կյանքն ու համատեղ պայքարը ցույց է տվել սերտորեն առնչված Խորհրդային Ռուսաստանի պատմության հետ։

Աշխատության մեջ կան որոշ անճշտություններ և թերի մեկնաբանություններ։ Այսպես, միակողմանի է բացատրված 1918 թ. մայիսի վերջին Անդրկովկասյան սեյմի ցրման պատճառները։ Հեղինակը գտնում է, որ այն տեղի է ունեցել «աշխատավոր մասսաների ճնշման տակ»[2], մինչդեռ գլխավոր պատճառը Անդր-

[1] Տե՛ս Агаян Ц., Вековая дружба народов Закавказья, ч. II, Е., 1972:

[2] Агаян Ц., նշվ. աշխ., էջ 65

կովկասի բուրժուազգայնական կուսակցությունների, ազգային խորհուրդների միջև սկսված գզվռտոցն էր, նրանց օրըստօրե սրվող ներքին պայքարը, գերմանա-թուրքական զավթիչների քաղաքականությունը և այլն։

Միակողմանիությունն է նկատվում նաև Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը Անդրկովկասում մի քանի տարով ուշանալու պատճառների բացատրության մեջ։ Գրեթե ամբողջ մեղքը բարդվում է Կովկասյան երկրային կոմիտեի ղեկավարության վրա, որի մեծամասնությունը դեմ էր հարձակողական գործողություններին, գտնելով, որ իշխանության անցումը խորհուրդներին կարող էր տեղի ունենալ «խաղաղ ճանապարհով»։ Դա ճիշտ է, բայց թերի։ Գլխավոր պատճառը, կարծում ենք, երկրամասում ստեղծված ներքին և արտաքին ռազմաքաղաքական բարդ պայմաններն էին։ Կային նաև այլ պատճառներ։

Խորհրդահայ պատմագրության մեջ համակողմանիորեն մշակվել և շարադրվել է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման, սոցիալիզմի կառուցման պատմությունը, սակայն գրեթե անտեսվել կամ սակավ ուշադրության է արժանացել հասարակության սոցիալական կառուցվածքի վերափոխման ու հետագա զարգացման պրոբլեմը։ Թեև վերջին տարիներին այդ պրոբլեմի առանձին ասպեկտներ քննարկվել են Ա. Գրիգորյանցի, Վ. Ղազախեցյանի, Գ. Խաչատրյանի և հատկապես լայն պլանով՝ Գ. Գեղամյանի աշխատություններում, սակայն ամբողջությամբ վերցրած այն ուսումնասիրել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Ամիրյանը[1]։ Խորհրդային հասարակության սոցիալական կառուցվածքի զարգացման հարցը՝ ընդհանուր միութենական պլանով քննվել է նրա ավելի վաղ հրատարակված աշխատության մեջ[2]։

Անտարակույս, նման կարևոր պրոբլեմի լուսաբանումը հեղինակից պահանջել է հաղթահարել լուրջ դժվարություններ։ Պետք է նկատի ունենալ, որ հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքի վերափոխման ու հետագա զարգացման պրոցեսի լուսաբանման հիմնական աղբյուրը հանրապետության վիճա-

[1] Տե՛ս Ս. Ամիրյան, Հասարակության սոցիալական կառուցվածքի վերափոխումն ու զարգացումը Հայկական ՍՍՀ-ում, Եր., 1981։

[2] Տե՛ս Ս. Ամիրյան, Փոփոխություններ սովետական հասարակության սոցիալական կառուցվածքում, Եր., 1973։



կագրությունն է, որը, սակայն, պատմաբաններին խիստ անբավարար տվյալներ է ընձեռում, մանավանդ 20—30-ական թվականների վերաբերյալ։

Ս. Ամիրյանի աշխատության մեջ սոցիալ-դասակարգային տեղաշարժերի ընդհանուր ֆոնի վրա լուսաբանվում է բանվոր դասակարգի առաջատար դերը հասարակության սոցիալական կառուցվածքի արմատական վերափոխման պրոցեսում, պրոլետարիատի վերափոխումը սոցիալիստական դասակարգի, գյուղացիության սոցիալիստական վերափոխումն ու կոլտնտեսային գյուղացիության ձևավորումը, սոցիալիստական մտավորականության ձևավորումը, բանվոր դասակարգի քանակական ու որակական աճը, կոլտնտեսային գյուղացիության կազմում կատարված փոփոխություններն ու սոցիալիստական մտավորականության աճը։

Աշխատության դրական կողմերից է քննադատական մոտեցումը օգտագործված աղբյուրների ու գրականության մասին։ Նա մի շարք դիտողություններ է անում պատմաբաններ Հ. Կարապետյանի, Վ. Ղազախեցյանի, Գ. Գեղամյանի, Ա. Գրիգորյանցի արտահայտած կարծիքների մասին, որոնք վերաբերում են հասարակության սոցիալական կառուցվածքի ձևավորման պատմական շրջանակներին, խորհրդային իշխանության առաջին տարիներին Հայաստանում գոյություն ունեցած հասարակական-տնտեսական կացութաձևերին, ազգարային վերափոխումներին, կուլակության որպես դասակարգի գոյությանը և այլն։ Նշելով, որ հասարակության սոցիալական կառուցվածքի արմատական վերափոխումը մի ամբողջ պատմական ժամանակաշրջան է (անցումը կապիտալիզմից սոցիալիզմին), հեղինակն այն իր հերթին բաժանում է 3 փուլերի, որոնք ընդգրկում են՝ 1920—1922, 1922—1929 և 1929—1937 թվականները։

Ս. Ամիրյանը նշում է, որ խորհրդային իշխանության առաջին տարիներին Հայաստանում առկա էին ոչ թե երեք, չորս, ինչպես պնդում են որոշ տնտեսագետներ (Հ. Թումանյան), պատմաբաններ (Գ. Գեղամյան), այլ 5 հասարակական-տնտեսական ձևեր, այսինքն՝ այնքան, որքան Ռուսաստանում[1]։ Սակայն վիճելի է նրա այն դիտողությունը, թե չի կարելի գրել, որ բուրժուազիայի տապալումից հետո մեր երկրում մնացել էին

[1] Տե՛ս Ս. Ամիրյան, նշվ. աշխ., էջ 47։

երկու դասակարգեր՝ բանվոր դասակարգը և գյուղացիությունը, (Վ. Ղազախեցյան)։ «Ճիշտ է,— գրում է Ամիրյանը,— բուրժուազիան ջախջախված էր, բայց ոչնչացված չէր, նրա հիմնական մասը՝ կուլակությունը, իր գոյությունը պահպանեց մինչև 30-ական թվականների սկիզբը, ավելի քան մեկ տասնամյակ»[1]։

Տարբեր տարիներին խորհրդահայ շատ պատմաբանների աշխատություններում այս կամ այն չափով շոշափվել է ԽՍՀՄ-ում լենինյան ազգային քաղաքականության կենսագործման հարցը, սակայն այդ կարևոր հարցին Ա. Մնացականյանն անդրադարձել է առանձին մենագրությամբ[2]։

Հարցի շարադրումն սկսելով Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ազգային-պետական քաղաքականության բնագավառում կուսակցության ու կառավարության առաջին միջոցառումներից, նա ներկայացնում է ԽՍՀՄ կազմավորումից հետո մեր երկրում սոցիալիստական ազգերի ձևավորման ու զարգացման, ազգերի միջև ամուր դաշինք, ինտերնացիոնալ համերաշխություն ստեղծելու պատմության համառոտ ուրվագիծը։ Աշխատության մեջ լայն տեղ է հատկացված ԽՍՀՄ-ում սոցիալիստական ազգերի մերձեցման հարցերին։ Ա. Մնացականյանը շարադրել է սոցիալիստական ազգի բնորոշ գծերն ու առանձնահատկությունները՝ տնտեսական կյանքի ընդհանրություն, դասակարգային նոր կառուցվածք, տարածքային ընդհանրություն, լեզվի և հոգևոր նկարագրի ընդհանրություն։ Հարկ է նշել, որ վերոհիշյալ դրույթները ևս վերանայման խիստ կարիք ունեն։

Միևնույն ժամանակ նա քննադատել է օտարերկրյա հակակոմունիստ «խորհրդաբաններին», որոնք, նենգափոխելով խորհրդային իրականության պատմությունը, սոցիալիստական ազգերի զարգացման ու մերձեցման կոնցեպցիան մեկնաբանում են որպես խորհրդային ազգերի ասիմիլյացիա, ազգային տարբերությունների վերացում, ազգերի անհետացում։

Ա. Մնացականյանը ճիշտ է նշում, որ չնայած մեր երկրում ազգային հարցի լուծման գործում ձեռք են բերվել հաջողություններ, այնուամենայնիվ, ազգային հարաբերությունների ոլորտում շատ հարցեր չեն լուծված։

Ա. Մնացականյանի աշխատության մեծ մասը նվիրված է Խորհրդային Հայաստանին։ Ցույց է տրված սոցիալիստական հայ ազգի զարգացման պրոցեսը, Հայկական ԽՍՀ-ի նվաճումները սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի տարբեր բնագավառներում։ Բացահայտված է նաև սոցիալիստական հայ ազգի և սփյուռքահայության մեջ տեղի ունեցող սոցիալ-քաղաքական ու ազգային պրոցեսը, սփյուռքահայերին Խորհրդային Հայաստանի շուրջը համախմբելու կուրսը։

Խորհրդահայ պատմագրության մեջ երկար ժամանակ անբավարար էր լուսաբանվել առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքական ջարդարարների արյունոտ յաթաղանին և արևմտյան իմպերիալիստների նենգ դավերին զոհ դարձած հարյուր հազարավոր արևմտահայերի ողբերգական կյանքի պատմությունը։ Գրեթե չէր ուսումնասիրված սփյուռքահայերի հայրենադարձության պրոբլեմը։

Խորհրդահայ պատմաբաններից շատերը (Ջ. Կիրակոսյան, Մ. Արզումանյան, Վ. Պարսամյան, Մ. Ներսիսյան, Ա. Մնացականյան, Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան, Ա. Հարությունյան և ուրիշներ) վերջին տարիներին զգալի աշխատանք կատարեցին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայում կազմակերպված հայկական կոտորածներն ու բռնագաղթը լուսաբանելու ուղղությամբ, սակայն մեր պատմագրության մեջ սփյուռքահայության հայրենադարձության, ինչպես ասում են, խոպան մնացած պրոբլեմի խորազնին ուսումնասիրությանը ձեռնամուխ եղավ Հ. Մելիքսեթյանը։

1975-ին հրատարակվեց նրա արժեքավոր մենագրությունը[1]։ Աշխարհով մեկ սփռված տարագիր հայության հայրենադարձությունը խորհրդային իշխանության շնորհիվ, իրավացիորեն ընդգծում է հեղինակը, մեր ժողովրդի ձեռք բերած մեծ նվաճումներից է, պատմական բազմանշանակալից մի իրադարձություն մեր բազմադարյան պատմության մեջ։ Հայրենադարձությունը հայ ժողովրդի համախմբման ու հետագա զարգացման

---

[1] Ս. Ամիրյան, նշվ. աշխ., էջ 86։

[2] Տե՛ս Ա. Մնացականյան, Ազգերի զարգացումը և մերձեցումը ԽՍՀՄ-ում, Եր., 1984։

[1] Տե՛ս Հ. Մելիքսեթյան, Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան, Եր., 1975։

կարևոր գործոններից մեկն եղավ։ Հանգամանորեն շարադրված է նաև սփյուռքահայերի հայրենադարձության առաջին քսանամյակի պատմությունը, հարակից լուսաբանված է նաև օտարերկրյա բարեգործական հաստատությունների, ՀՕԿ-ի, սփյուռքում գործող այլ միությունների ու կազմակերպությունների գործունեությունը։ Աշխատության մեջ վեր է հանված նորվեգացի աշխարհահռչակ բևեռախույզ ու գիտնական, հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆ. Նանսենի հայանպաստ եռանդուն գործունեությունը հայ գաղթականության հարցի արդարացի լուծման ուղղությամբ։

Բացահայտված է նաև գաղութահայ կուսակցությունների ու հոսանքների դիրքորոշումը հայրենադարձության հանդեպ, քննադատված է այդ հարցում, հատկապես, դաշնակցության գործունեությունը, որի նպատակն է խանգարել ներգաղթի իրականացմանը, վարկաբեկել Խորհրդային Հայաստանը, զանազան միջոցներով մոլորության մեջ գցել գաղութահայ զանգվածներին։

Արժանին պետք է հատուցել Հ. Մելիքսեթյանին, որը գիտական և քաղաքական այդ կարևոր նշանակություն ունեցող պրոբլեմի հետազոտությունը շարունակեց և հասցրեց մինչև վերջ։ 1985-ին հրատարակվեց նրա նոր աշխատությունը, որով ամբողջացվեց հայերի հայրենադարձության պատմությունը՝ սկզբից մինչև մեր օրերը[1]։ Հարուստ է աշխատության աղբյուրագիտական հիմքը։ Օգտագործվել է ոչ միայն խորհրդային, այլև սփյուռքահայ աղբյուրների ու գրականության մի զգալի մասը։

Աշխատության մեջ լայն տեղ է հատկացված հայրենիք—սփյուռք բազմաբովանդակ կապերին, հատկապես հաջող է լուսաբանված սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի 20-ամյա գործունեությունը։

Միանգամայն ճիշտ է գնահատված Խորհրդային Հայաստանի դերը հայկական սփյուռքի գոյատևման, նրա կենսունակության պահպանման գործում։ «Սովետական իշխանության տարիներին տեղի ունեցած հայրենադարձության և Հայրենիք—Սփյուռք առնչությունների պատմության ուսումնասիրությունը ակնբախորեն վկայում է,— ասված է գրքում,— որ տարագիր

[1] Տե՛ս Հ. Մելիքսեթյան, Հայրենիք—Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Եր., 1985։



հայության փրկության իրական ու գլխավոր գործոնը մայր հայրենիքն է, Խորհրդային Հայաստանը»[1]։

Ֆ. Նանսենի հայանպաստ վիթխարի գործունեությունը, նրա տիտանական ջանքերը հատկապես արտասահմանյան հայերի հայրենադարձության ուղղությամբ համակողմանիորեն լուսաբանված է Մ. Արզումանյանի ուշագրավ մենագրության մեջ[2]։

## 2. Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին

Հայրենական մեծ պատերազմը ԽՍՀՄ ժողովուրդների պատմության մեջ մտել է որպես մի հերոսապատում։ Խորհրդային պատմաբանները վիթխարի աշխատանք են կատարել Հայրենական մեծ պատերազմի պատմության գիտական հետազոտության բնագավառում։ Հրատարակվել են բազմաթիվ արժեքավոր գրքեր։ Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմի պատմության ոսկե ֆոնդ են մտել խորհրդային փառաբանված զորավարներ, մարշալներ Գ. Ժուկովի, Ի. Կոնևի, Վ. Չույկովի, Ա. Վասիլևսկու, Ս. Շտեմենկոյի, Ա. Գրեչկոյի, Ա. Երյոմենկոյի, Հ. Բաղրամյանի[3], Հ. Բարաջանյանի[4], ծովակալ Հ. Իսակովի[5], գեներալներ Ս. Մարտիրոսյանի[6], Հ. Մարտիրոսյանի[7], Ա. Ղազարյանի[8] և ուրիշների հուշագրություն-մենագրությունները։

Պատերազմը մեծ քննություն հանդիսացավ խորհրդային բոլոր ժողովուրդների համար։ Հայ ժողովուրդը պատվով դուրս եկավ այդ դաժան քննությունից։ Նա իր արժանի տեղը գրավեց թշնամու դեմ մղած համընդհանուր պայքարում։

[1] Հ. Մելիքսեթյան, Հայրենիք—Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, էջ 447։

[2] Տե՛ս Մ. Արզումանյան, Նանսենը և Հայաստանը, Եր., 1977։

[3] Տե՛ս **Баграмян И.**, Город-воин на Днепре. М., 1965, Как началась война, М., 1971. Так шли мы к победе, М., 1977, Мои воспоминания, Е., 1979:

[4] Տե՛ս **Бабаджанян А.**, Дороги победы, 1972, Люки открыты в Берлин (Путь 1-ой гвардейской танковой армии), М., 1973:

[5] Տե՛ս Ի. Իսակով, Ակնարկներ, Եր., 1970։

[6] Տե՛ս Ս. Մարտիրոսյան, Խորհրդային հայրենիքի համար, Եր., 1960։

[7] Տե՛ս Հ. Մարտիրոսյան, Մոսկվայի ճակատամարտում, Եր., 1966, Նեմանից մինչև Քյոնիգսբերգ, Եր., 1967, Ռժևի ուղղությամբ, Եր., 1970։

[8] Տե՛ս **Казарян А.**, Четверть века на танках, Е., 1970, Герои за Крым, Е., 1972, Война, люди, судьбы, кн. 1—3, Е., 1975—1980, նույնը՝ հայերեն։

Հայ ժողովրդի զավակները, խորհրդային բազմազգ մյուս բոլոր ժողովուրդների հետ միասին անօրինակ սխրագործություններ կատարեցին Հայրենական մեծ պատերազմի բոլոր ռազմաճակատներում։ Նրանք փառքով պսակեցին մեր ժողովրդի անունը։ Թիկունքի աշխատավորությունը ևս հետ չմնաց ռազմաճակատում կռվող իր զավակներից։

Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության վերհանման գործում մեծ աշխատանք են կատարել խորհրդահայ պատմաբանները։ Դեռևս 1944 թվականին Հայկական ԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում ստեղծվել էր Հայրենական պատերազմի պատմության կաբինետ, որն իր գոյության ընթացքում զգալի աշխատանք է կատարել ու կատարում հսկայական քանակությամբ փաստական նյութերի հավաքման, դրանց գիտական մշակման ուղղությամբ։ Ուսումնասիրվել են Հայրենական մեծ պատերազմի բոլոր ռազմաճակատներում հայ ժողովրդի զավակների, հայկական դիվիզիաների, հայ պարտիզանների, Թիկունքում Խորհրդային Հայաստանի բանվորների, գյուղացիների ու մտավորականության հերոսական աշխատանքն արտացոլող բազմաթիվ ու բազմատեսակ արխիվային փաստաթղթեր, ռազմաճակատի և Թիկունքի մամուլում զետեղված նյութեր, կուսակցական-խորհրդային, հասարակական կազմակերպությունների որոշումներ, հայ ռազմիկների հուշեր, նամակներ և այլն։ Դրանց հիման վրա էլ գրվել և հրատարակվել են մի շարք արժեքավոր աշխատություններ։

Այդ շնորհակալ գործում առաջին հերթին հիշատակության է արժանի Ա. Մնացականյանի կատարած աշխատանքը։ 1947—1954 թթ. հրատարակվել են նրա մի քանի աշխատությունները, իսկ վերջին տասնամյակում հրատարակվածներից աչքի է ընկնում նրա «Միասնական շարքերում» մենագրությունը[1]։

Պատերազմի մասնակից հեղինակը Խորհրդային Միության ժողովուրդների հերոսական պայքարի պատմության ընդհանուր ֆոնի վրա հաջողությամբ լուսաբանել է հայ ժողովրդի մասնակցությունը մեծ Հայրենականին։ Գրքում հանգամանորեն ցույց է տրված հայ ռազմիկների հերոսական սխրագործությունները Մոսկվայի, Լենինգրադի, Ղրիմի, Ստալինգրադի, Հյուսիսային Կովկասի, Կուրսկի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մերձբալթիկայի համար մղված ահեղ կռիվներին, նրանց մասնակցությունը ֆաշիզմի լծի տակ ընկած Եվրոպայի ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարին, ֆաշիստական Գերմանիայի և միլիտարիստական Ճապոնիայի վերջնական ջախջախմանը։ Աշխատության մեջ ներկայացված է նաև Հայաստանի աշխատավորության այն ավանդը, որ նա ներդրեց մեծ հաղթանակի գործում։ Գրքի ուշագրավ հատվածներից է վերջին բաժինը, ուր խոսվում է ֆաշիզմի ջախջախման գործում սփյուռքահայության մասնակցության մասին։

Ա. Մնացականյանի աշխատության արժանիքներից է այն, որ նրանում հայ ժողովրդի մասնակցությունը մեծ Հայրենականին ցույց է տրվում ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների, առաջին հերթին ռուս ժողովրդի զավակների կատարած հերոսական սխրագործությունների հետ միասին, հաջողությամբ վեր է հանված ԽՍՀՄ ժողովուրդների մարտական համագործակցությունը։

Ա. Մնացականյանի գրչին են պատկանում նաև Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» VIII հատորում զետեղված «Սովետական Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին» բաժնի առաջին և երկրորդ գլուխները, որն ընդգրկում է Հայրենական մեծ պատերազմի սկզբից մինչև 1943 թվականը ներառյալ։ Առաջին գլխում հեղինակը լուսաբանել է հետևյալ հարցերը՝ Հայրենական պատերազմի սկիզբը և հայ ժողովրդի ուժերի մոբիլիզացիան, Խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսության վերակառուցումը պատերազմի պահանջներին համապատասխան, հայ ժողովրդի զավակների մասնակցությունը կարմիր բանակի 1941 թ. պաշտպանողական մարտերին, հայկական դիվիզիաների ստեղծումը, իսկ երկրորդ գլխում՝ Անդրկովկասի ռազմաքաղաքական դրությունը 1942 թ., խորհրդային ժողովուրդների անխախտ բարեկամությունը։ Հեղինակը Անդրկովկասը բնութագրում է որպես միասնական ռազմական ճամբար, ցույց է տալիս ռազմական էկոնոմիկայի զարգացումը Հայաստանում և համաժողովրդական օգնությունը ռազմաճակատներին, հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Ստալինգրադի, Կովկասի և մյուս ճակատամարտերում և այլն։ Բոլոր հարցերն էլ քննվում և լուսաբանվում են գիտականորեն, փաստական հարուստ և արժեքավոր տվյալների հիման վրա։

[1] Տե՛ս Ա. Մնացականյան, *Միասնական շարքերում*, Եր., 1975։

Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի մասնակցության լուսաբանման ուղղությամբ գիտահետազոտական նշանակալից աշխատանք է կատարել պատմական գիտությունների թեկնածու Ե. Խալեյանը։

Մեծ ջանքերի շնորհիվ նրան հաջողվել է հատկապես ԽՍՀՄ տարբեր ծայրերից փաստական նյութեր ձեռք բերել, որոնք օգտագործել է իր բազմաթիվ աշխատություններում։ Նրա գրչին է պատկանում «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության VIII հատորում զետեղված «Սովետական Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի շրջանում (1944—1945 թթ.)» գլուխը։

Այստեղ հեղինակը պատմական հաջորդականությամբ, հարուստ տվյալներով շարադրել է այնպիսի հարցեր, ինչպիսին են՝ իրադրությունը 1944 թվականին, Խորհրդային Հայաստանի հետագա օգնությունը ռազմաճակատին, հայ ռազմիկները խորհրդային հողը ֆաշիստական զավթիչներից լիովին ազատագրելու համար մղված մարտերում, պարտիզանների շարքերում և այլն։ Միևնույն ժամանակ ներկայացվել է հայ մարշալների, գեներալների, Խորհրդային Միության շատ հերոսների, հայկական դիվիզիաների մարտական սխրագործությունները, հայ ժողովրդի նվիրվածությունը հայրենիքի պաշտպանության, նենգ թշնամուն ջախջախելու գործում։

Վերոհիշյալ ամբողջական, ընդհանրացնող բնույթի աշխատություններից բացի, անցած քսանհինգամյակում մեծ աշխատանք է կատարվել նաև մեծ Հայրենականին հայ ժողովրդի մասնակցության առանձին հարցերի հետազոտման ուղղությամբ։

Հայտնի է, որ Հայրենական մեծ պատերազմի հենց սկզբից կազմավորվեցին հայկական վեց դիվիզիաներ, որոնք իրենց դրոշները մարտական փառքով պսակեցին տարբեր ռազմաճակատներում, եվրոպական հողում։ 89-րդ եռակի շքանշանակիր Թամանյան դիվիզիան հերոսական ուղի անցավ Կովկասյան ձյունապատ նախալեռներից մինչև Բեռլին։

Թամանյան դիվիզիայի մասին առաջին աշխատությունը գրել է դիվիզիայի թերթի խմբագիր՝ փոխգնդապետ Սիմոն Նալբանդյանը, որի «Հայ Թամանցիները» ակնարկը լույս է տեսել 1947-ին, իսկ վերամշակվելուց հետո՝ նաև 1961-ին։ Փառաբանված դիվիզիայի հանգամանալից պատմությունը շարադրել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ղևոնդ Դալ-



լաքյանը[1]։ Լինելով մարտերի անմիջական մասնակից, նա փաստական հարուստ նյութերի հիման վրա ներկայացրել է դիվիզիայի անցած փառավոր ուղին, նրա մարտիկների սխրանքը, նրանց անձնուրաց պայքարը հանուն խորհրդային հայրենիքի ազատության։

76-րդ լեռնահրաձգային (51-րդ գվարդիական) դիվիզիայի անցած հերոսական ուղու (1922—1945 թթ.) համառոտ պատմությունը շարադրված է Ա. Վարդապետյանի աշխատության մեջ[2]։ Նրանում լուսաբանված է դիվիզիայի կազմավորման պատմությունը, նրա գործունեությունը խաղաղ շինարարության տարիներին և ավելի մանրամասն՝ դիվիզիայի մարտական գործողությունները մեծ Հայրենականի տարիներին։ Գրքի վերջում զետեղված է դիվիզիայի երախտավորների համառոտ կենսագրականը։

Նույն դիվիզիայի մարտական ուղին համառոտակի վեր է հանված նաև պատմական գիտությունների թեկնածու Կ. Հարությունյանի մենագրության մեջ[3]։

409-րդ դիվիզիայի պատմությանն է անդրադարձել Հ. Հովհաննիսյանը[4], որն ընդգրկում է դիվիզիայի ստեղծումից մինչև Հայրենական պատերազմի ավարտը։ Հաջող են լուսաբանված դիվիզիայի մարտական գործողությունները Հյուսիսային Կովկասի և Ուկրաինայի ազատագրման համար մղված մարտերում։

Արխիվային հարուստ նյութերի և անձնական հիշողությունների հիման վրա է գրված պատերազմի վետերան Ս. Սարգսյանի գիրքը[5], որի մեջ լուսաբանված է 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայի հերոսական մասնակցությունը Կովկասի համար մղված մարտերին։

Հայկական դիվիզիաների մասին ուշագրավ հոդվածներ են տպագրվել նաև գիտական տեղեկագրերում[6]։

---

[1] Տե՛ս Ղ. Դալլաքյան, Մարտական 89, Եր., 1966։

[2] Տե՛ս Ա. Վարդապետյան, Գվարդիական դրոշի ներքո, Եր., 1978։

[3] Տե՛ս Կ. Հարությունյան, 51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին, Եր.., 1980։

[4] Տե՛ս Հ. Հովհաննիսյան, Փորձությունների միջով, Եր., 1978։

[5] Տե՛ս Саркисян С., 408-я армянская стрелковая дивизия в битве за Кавказ. Е. 1985:

[6] Տե՛ս Ա. Հակոբյան, Թամանյան դիվիզիայի մարտական ուղին, ՊԲՀ, № 2, 1965։ Ա. Հարությունյան, Հ. Հովհաննիսյան, 409-րդ հրաձգային դիվիզիայի մարտական ուղին, ԲՀԱ, № 1, 1966, Գ. Բուռնազյան, Ազգային զորամիավորումների կազմավորումը Հայկական ԽՍՀ-ում, ԲՀԱ, № 1, 1968։

Ուշադրության է արժանի Ա. Վարդապետյանի աշխատանքը, ուր լուսաբանվել է կարմիր բանակի կազմակերպման, խորհրդային պետության զինված ուժերի ամրապնդման գործում մի խումբ հայ ականավոր գործիչների ու զորապետների ունեցած գործուն մասնակցությունը: Հեղինակը համառոտակի, առանձին-առանձին շարադրել է ինչպես Ալ. Մյասնիկյանի, Հ. Բժշկյանի (Գայ), Գր. Խախանյանի, Գ. Ոսկանյանի, Վ. Ավանեսովի, Ստ. Խալաթովի, Մ. Տեր-Հարությունյանցի, Հ. Հովսեփյանի, այնպես էլ Հ. Իսակովի և Հ. Բաղրամյանի կյանքն ու գործունեությունը[1]:

Հայրենական մեծ պատերազմի պատմության մեջ ուրույն տեղ է գրավում Կովկասյան ռազմաճակատը, որին ակտիվ մասնակցություն է ցույց տվել նաև հայ ժողովուրդը:

Այդ կարևոր հարցը տարիներ շարունակ իր գիտահետազոտական աշխատանքի առարկա է դարձրել պատմական գիտությունների թեկնածու Ք. Գրիգորյանը՝ հրատարակելով մի շարք աշխատություններ: 1971-ին լույս տեսավ նրա նոր աշխատությունը[2], ուր ցույց է տրված հայ դյուցազունների ակտիվ մասնակցությունը Կովկասի պաշտպանությանը, միաժամանակ բացահայտված է Խորհրդային Հայաստանի աշխատավորների համաժողովրդական օգնությունը Կովկասի պաշտպաններին:

Ուշադրության է արժանի Ե. Խալեյանի մենագրությունը՝ Բելոռուսիայի համար հայ ժողովրդի զավակների մասնակցության մասին[3]:

Ուշադրավ է նաև Գ. Գրիգորյանի աշխատությունը[4], որի մեջ հեղինակը պատմում է Ստալինգրադի հերոսամարտերում ԽՍՀՄ բազմազգ ժողովուրդների զավակների հետ համատեղ մարտերում հայ ռազմիկների սխրանքների մասին: Խորհրդային Մերձբալթիկայի համար մղված մարտերում հայ ռազմիկների մասնակցությունը հաջողությամբ արտացոլվել է պատմական գիտությունների թեկնածու Մ. Սահակյանի մենագրության մեջ[5]:

[1] Տե՛ս Ա. Վարդապետյան, Կարմիր բանակը կազմակերպողների շարքերում, Եր., 1976:

[2] Տե՛ս Ք. Գրիգորյան, Հայ Ժողովրդի մասնակցությունը Կովկասի պաշտպանությանը (1942 թ. հուլիս—1943 թ. հոկտեմբեր), Եր., 1971:

[3] Տե՛ս Ե. Խալեյան, Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին (1941—1944 թթ.), Եր., 1975:

[4] Տե՛ս Գ. Գրիգորյան, Դրվագներ Ստալինգրադյան հերոսամարտերից, Եր., 1979:

[5] Տե՛ս Մ. Սահակյան, Խորհրդային Մերձբալթիկայի համար մղված մարտերում (1941—1945), Եր., 1981:



Մ. Սահակյանի մեկ այլ աշխատության մեջ լուսաբանված է խորհրդային բազմազգ ժողովուրդների, այդ թվում և հայ ռազմիկների ակտիվ մասնակցությունը Լենինգրադի համար մղված մարտերին[1]:

Հայ քաջորդիների մասնակցությունը Չեխոսլովակիայի ազատագրման գործում լուսաբանվել է Կ. Հարությունյանի գրքույկում[2]:

Մի քանի արժեքավոր աշխատություններ են հրատարակվել Հայրենական մեծ պատերազմում փառաբանված հայ զորավարների, Խորհրդային Միության հայ հերոսների մասին: Այսպես, Խորհրդային Միության մարշալ Հ. Բաղրամյանի կյանքի բոլոր փուլերը՝ զինվորից մինչև մարշալ, նրա անցած մարտական ուղին ուշագրավ վավերագրերի և փաստական այլ նյութերի հիման վրա շարադրել է Ա. Մնացականյանը[3]: Աշխատության մեծ մասը նվիրված է Հայրենական մեծ պատերազմում նրա մասնակցության, ինչպես և հետպատերազմյան ժամանակաշրջանի գործունեության լուսաբանմանը: Խորհրդային Միության ծովակալ Հ. Իսակովի կյանքին ու ռազմածովային գործունեությանը անդրադարձել են Ա. Վարդապետյանը[4] և Ա. Հարությունյանը[5]: Դրանցում համակողմանիորեն բացահայտված և ըստ արժանվույն է գնահատված փառաբանված ծովակալի գիտական-տեսական հարուստ ժառանգությունը: 1985 թ. հրատարակվեց Հ. Իսակովի ռազմագիտական գործունեությունը լուսաբանող Ա. Վարդապետյանի նոր աշխատությունը[6]: Հարուստ փաստերով ու բավականին հաջող կերպով բացահայտվել է ծովակալի դերը խորհրդային և համաշխարհային ռազմածովային գիտության զարգացման պատմության մեջ: Հեղինակը ճիշտ գնահատական է տվել Իսակովի գլխավորությամբ, խմբագրությամբ և անմի-

[1] Տե՛ս Մ. Սահակյան, Խորհրդային ռազմիկների մարտական մասնակցությունը Լենինգրադի համար մղված մարտերում (1941—1944), Եր., 1986:

[2] Տե՛ս Կ. Հարությունյան, Հայ ռազմիկները Չեխոսլովակիայի ազատագրման համար մղված մարտերում (1944—1945 թթ.), Եր., 1983:

[3] Տե՛ս Ա. Մնացականյան, Մարշալ Բաղրամյան, Եր., 1978:

[4] Տե՛ս Ա. Վարդապետյան, Հ. Ս. Իսակով, Եր., 1973:

[5] Տե՛ս Ա. Հարությունյան, Խորհրդային Միության ծովակալ Ի. Ս. Իսակով, Եր., 1975:

[6] Տե՛ս Ա. Վարդապետյան, Հ. Ս. Իսակովի ռազմագիտական գործունեությունից, Եր., 1985:

ջական մասնակցությամբ հրատարակված նշանավոր «Ծովային ատլասի» հատորներին, դրանք համարելով դարագլուխ կազմող եզակի գործեր։ Աշխատության մեջ Իսակովը՝ «խորհրդային նավատորմի ուղեղը», բնութագրված է որպես ականավոր ռազմական տեսաբան և գիտնական։

Ուշադրության արժանի են նաև Ա. Մալխասյանի[1], Վ. Մուրադյանի[2] գրքերը, ինչպես նաև «Գիրք հերոսների մասին» ժողովածուն[3]։ Վերջինիս մեջ առանձին-առանձին խոսվում է Խորհրդային Միության 100 հերոսների մասին, որոնցից 95-ը հայեր են, իսկ 5-ը եղբայրական մյուս ժողովուրդների զավակներ, որոնք ծնվել և դաստիարակվել են Խորհրդային Հայաստանում։

Ուշագրավ է Ղ. Դալլաքյանի կազմած ժողովածուն, ուր զետեղված են Խորհրդային Միության 21 հերոսների, այդ թվում՝ Ա. Ղազարյանի, Ա. Ամատունու, Ս. Սիաբանդովի ակնարկները[4]։

Հայրենական մեծ պատերազմում խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի գործում վճռորոշ դեր խաղաց ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը, որը համակողմանիորեն լուսաբանված է խորհրդահայ պատմաբանների աշխատություններում։ Առանձին մենագրություն է նվիրվել Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությանը պատերազմի տարիներին[5]։ Դա Ծ. Աղայանի քառահատոր մենագրության երրորդ մասն է, որտեղ ցույց է տրված խորհրդային ժողովրդի համար այդ դժվարին տարիներին նրանց բարեկամությունը, էլ ավելի ամրապնդումն ու կոփումը և այն խոշոր ավանդը, որ հայրենիքի պաշտպանության գործում ռուս ժողովրդի հետ համատեղ ներդրեցին մեր բազմազգ երկրի ժողովուրդները։

Հայրենական պատերազմի տարիներին Թշնամու կողմից գրավված տարածքում լայնորեն ծավալվեց պարտիզանական շարժումը։ Ժողովրդական վրիժառուների բանակի մեջ իրենց արժանի ներդրումն ունեցան նաև մեծ թվով հայորդիներ։ Միայն Ուկրաինայում գործում էր մոտ հազար հայ պարտիզան։ Խորհրդային Միության հերոսներ Կովպակի, Վերշիգորայի,

[1] Տե՛ս Ա. Մալխասյան, Խորհրդային բանակի հայ գործիչները, Եր., 1967։

[2] Տե՛ս Мурадян В., Верность долгу, Е., 1974:

[3] Տե՛ս Գիրք հերոսների մասին, Եր., 1964, նույնը՝ ռուսերեն, Е., 1985։

[4] Տե՛ս Խոսում են հերոսները, Եր., 1985։

[5] Տե՛ս Агаян Ц., Вековая дружба народов Закавказья, ч. III-я, Е., 1978:



Նաումովի և մյուսների գլխավորած պարտիզանական միավորումներում ստեղծվել էին «Հաղթանակ», Ա. Միկոյանի անվան և այլ հայկական պարտիզանական ջոկատներ։

Խորհրդահայ պատմական գրականության մեջ շատ է գրվել հայ պարտիզանների մասին։ Այդ հարցին անդրադարձել են Ա. Մնացականյանն ու Ե. Խալեյանը իրենց գործերում, ինչպես նաև առանձին հրատարակված գրքույկներում ու պարբերական մամուլում։ Հիշատակության է արժանի նաև Վ. Ղազախեցյանի գրկույքը[1], որտեղ լուսաբանվում են Ա. Միկոյանի անվան պարտիզանական ջոկատի մարտական գործողությունները։

Վերջին տարիներին պարտիզանական շարժման պատմության վերաբերյալ ուշագրավ աշխատություն է գրել Ե. Խալեյանը[2]։ Այն թեև նվիրված է Ղրիմի և Հյուսիսային Կովկասի պարտիզանական շարժման պատմության լուսաբանմանը, բայց հեղինակը զգալի տեղ է հատկացրել նաև ընդհանրապես պարտիզանական պայքարին. հայ ժողովրդի զավակների մասնակցության հարցի լուսաբանմանը, որը կարևոր նշանակություն ունի ոչ միայն պատմագիտության, այլև մեր երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության համար։

Նշելով, որ Ղրիմում և Հյուսիսային Կովկասում վաղ ժամանակներից ստեղծվել են հայկական գաղթօջախներ և որ Հայրենական մեծ պատերազմի նախօրեին դրանցում բնակվում էր շուրջ 150 հազար բնակիչ, հեղինակը փաստական տվյալներով ցույց է տվել, որ հազարավոր հայ քաջորդիներ համալրում էին կարմիր բանակի շարքերը, իսկ ովքեր չկարողացան հեռանալ իրենց բնակավայրերից, պարտիզաններ դարձան, մտան ընդհատակյա կազմակերպությունների մեջ, պայքարեցին ֆաշիստական զավթիչների դեմ։ Այդ պայքարում շատերը զոհվեցին կամ տանջամահ արվեցին համակենտրոնացման ճամբարներում և գեստապոյի զնդաններում՝ փայլուն էջեր գրելով Ղրիմի և Հյուսիսային Կովկասի ազատագրման պայքարի պատմության մեջ։

Շատ հայ ռազմիկներ տոկունություն և արիություն են ցու-

[1] Տե՛ս Վ. Ղազախեցյան, Միկոյանի անվան պարտիզանական ջոկատը, Եր., 1965։

[2] Տե՛ս Ե. Խալեյան, Ղրիմի և Հյուսիսային Կովկասի պարտիզանական շարժման պատմությունից (1942—1944 թթ.), Եր., 1981։

ցաբերել ընդհատակում։ Խորհրդահայ պատմական գրականության մեջ այս հարցը աղոտ է լուսաբանվել։ Սակայն այդ բացը լրացնում է շնորհալի ժուռնալիստ, պատմական գիտությունների թեկնածու Միքայել Հակոբյանը։ Նրա գրչին են պատկանում ուշագրավ մի քանի պատմավավերագրական աշխատություններ։ Հայ ընդհատակյայինների գործունեության մասին գրվել են նաև այլ գրքույկներ։

Գերմանաֆաշիստական զավթիչների դեմ խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի գործում վիթխարի դեր խաղաց թիկունքը։ Հենց թիկունքի և ռազմաճակատի սերտ միասնությունն էր այն կարևորագույն նախապայմանը, որի շնորհիվ ձեռք բերվեց այդ փայլուն հաղթանակը։ Հայրենական պատերազմի ծանր տարիներին անձնուրացաբար աշխատեցին Հայաստանի բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունն ու մտավորականությունը։

Խորհրդահայ պատմաբանները լուսաբանել են նաև թիկունքում կատարված աշխատանքը։ Այդ հարցը լայնորեն շարադրված է հատկապես Ա. Մնացականյանի աշխատություններում։ Խորհրդային Հայաստանի գյուղացիության պատմությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին արծարծվել է Ք. Գրիգորյանի մենագրության մեջ[1]։ Հեղինակն անդրադարձել է հետևյալ հարցերին՝ գյուղատնտեսության վերակառուցումը պատերազմական պահանջներին համապատասխան, կոլտնտեսային գյուղացիության անձնուրաց աշխատանքը թիկունքում, գյուղում տարվող գաղափարական աշխատանքը, սոցիալիստական մրցության ծավալումը, գյուղի աշխատավորների կողմից ռազմաճակատին ցույց տրվող համաժողովրդական օգնությունը։

Քիչ աշխատանք չի կատարվել փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ հրատարակելու ուղղությամբ։ Հատկապես պետք է նշել ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի, մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի և ՀԽՍՀ արխիվային գլխավոր վարչության կողմից համատեղ հրատարակված ժողովածուն[2], որը հարուստ նյութ է պարունակում Հայրենական

[1] Տե՛ս Ք. Գրիգորյան, Խորհրդային Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Եր., 1979։

[2] Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (Сборник документов и материалов), Е., 1975:



մեծ պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանի պատմության վերաբերյալ։

Ժողովածուի մեջ հրատարակված են ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ կառավարության, ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ԽՍՀ կառավարության որոշումները պատերազմի տարիներին հայկական դիվիզիաներ ստեղծելու մասին, հարյուրավոր արժեքավոր փաստաթղթեր, որոնք վերաբերում են այդ դիվիզիաների մարտական ուղուն, հայ մարտիկների սխրագործություններին ռազմաճակատներում, պարտիզանական ջոկատներում, Դիմադրական շարժման մեջ, թիկունքում և այլն։

Դեռևս 1969-ին հրատարակվել էր հայ ռազմիկների նամակների ժողովածուն[1], որը նույնպես կարևոր սկզբնաղբյուր է խորհրդահայ պատմաբանների գիտական հետազոտությունների համար։ Արժեքավոր ժողովածուներ են հրատարակվել ծովակալ Իսակովի[2] և Խորհրդային Միության կրկնակի հերոս Ն. Ստեփանյանի մասին[3]։

Հիշատակության արժանի է «Բանբեր Հայաստանի արխիվների» խմբագրության նախաձեռնությունը։ Ամսագրում տարիներ շարունակ հրատարակվում են ոչ միայն առանձին փաստաթղթեր, նվիրված Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի ներդրած ավանդին, այլև ամբողջական հատորներ։ Այսպես, հանդեսի 1976 թ. 3-րդ համարը ամբողջովին նվիրված է 76-րդ դիվիզիային, իսկ 1980 թ. 3-րդ համարն ու 1981 թ. 1-ին համարը՝ 409-րդ դիվիզիայի պատմությանը։ 1975 թվականին՝ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 30-ամյակի օրերին հրատարակվեց «Բանբերի» առանձին համարը (№ 1)՝ նվիրված հայ ժողովրդի մասնակցությանը մեծ Հայրենականին[4]։ Արժեքավոր է 89-րդ հայկական Թամանյան հրաձգային դիվիզիային նվիրված ժողովածուն[5]։

[1] Նամակներ փառքի և անմահության, Եր., 1969։

[2] Տե՛ս Адмирал флота Советского Союза Иван Степанович Исаков (Сборник документов и материалов), Е., 1975:

[3] Տե՛ս Дважды Герой Советского Союза Нельсон Степанян, Е., 1968:

[4] Այս մասին տե՛ս Ա. Հարությունյան, Ռազմապատմական և ռազմահայրենասիրական վավերագրական գրականության ստեղծման մի քան հարցերի մասին, ԲՀԱ, 1982, № 3։

[5] Տե՛ս Боевой путь 89-ой стрелковой Армянской Таманской орденов Красного знамени, Кутузова II степени, Красной Звезды. (Сборник документов и материалов), Е., 1986:

Հայկական ԽՍՀ ԳԱ համակարգում աշխատող Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների մարտական և աշխատանքային գործունեությանն է նվիրված Կ. Հարությունյանի և Մ. Սահակյանի կազմած ժողովածուն[1]։

Մեծ Հայրենականին հայ ժողովրդի մասնակցության լուսաբանման գործում մեր պատմագրությանը անգնահատելի նյութ են մատակարարում պատերազմի մասնակիցների հուշագրությունները։ Ի դեպ, դրանց մեջ ցույց են տրված ոչ միայն հայերի, այլև ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների, մեր հերոսական խորհրդային բանակի մարտական սխրագործությունների առանձին ուշագրավ դրվագները։ Այդ տեսակետից հիշատակության են արժանի «Հուշեր մեծ Հայրենականից» և «Արիության դպրոց» ժողովածուները[2], որոնցում զետեղված են պատերազմի դաժան փորձությամբ անցած հայ գեներալներ ու սպաներ Ս. Մարտիրոսյանի, Հ. Մարտիրոսյանի, Ա. Կարապետյանի, Ն. Սաֆարյանի, Լ. Կարապետյանի և ուրիշների հիշողությունները։

Հայրենական մեծ պատերազմի ավարտի 30-ամյակի օրերին հրատարակվեց «Պատերազմի գլխավոր հերոսը» խորագրով հոդվածների ժողովածուն, որտեղ ուշագրավ հոդվածներ ունեն Վ. Մուրադյանը, Մ. Առաքելյանը, Կ. Խուդավերդյանը, գեներալներ Ս. Մարտիրոսյանը, Ա. Ղազարյանը և ուրիշներ[3]։

Հրատարակվել են նաև հուշագրություններ առանձին գրքերով[4]։ Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի մասնակցության պատմության լուսաբանման ուղղությամբ խորհրդահայ պատմաբանների կատարած աշխատանքը համառոտակի ցույց է տրված Խ. Բարսեղյանի հոդվածում[1]։

Ինչպես տեսանք, զգալի աշխատանք է կատարվել Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի մասնակցության հարցի լուսաբանման ուղղությամբ, սակայն դրանով չի սպառվում այդ կարևոր թեմատիկան, որն ունի ոչ միայն գիտապատմական նշանակություն, այլև մեծ դեր է կատարում երիտասարդ սերնդի կոմունիստական, ռազմահայրենասիրական դաստիարակության գործում։ Մեր ժողովրդի պայքարը ֆաշիզմի դեմ դեռևս երկար ժամանակ կշարունակվի գրավել պատմաբանների, զինվորական գործիչների, գրողների և այլոց շթուլացող հետաքրքրությունը։

Խորհրդահայ պատմագրությունը դեռևս շատ անելիքներ ունի այդ պատվավոր գործում։ Անհրաժեշտ է ավելի բազմակողմանի ներկայացնել հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին, լիովին վեր հանել Հայաստանի բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության, մտավորականության, Հայաստանի կոմկուսի գործունեությունը, հայկական դիվիզիաների, ռազմաճակատի և թիկունքի մարտիկների սխրանքները՝ առաջնորդվելով «Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել» ազնիվ ու մարդասիրական նշանաբանով։

## 8. Սոցիալիստական շինարարության հետպատերազմյան տարիները

Խորհրդահայ պատմաբանները քիչ աշխատանք չեն կատարել սոցիալիստական շինարարության հետպատերազմյան տարիների պատմության գիտական հետազոտության բնագավառում։

Այդ ժամանակաշրջանի պատմության առանձին հարցերի վերաբերյալ հրատարակվել են մի շարք մենագրություններ, սակայն ամբողջական պատմությունը շարադրվել է «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական հրատարակության VIII հատորի երկրորդ և երրորդ բաժիններում*, որի հեղինակներն են

---

1 Տե՛ս Կ. Հարությունյան, Մ. Սահակյան, *Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի*, Եր., 1988։

2 Տե՛ս *Հուշեր մեծ Հայրենականից*, Եր., 1968, Школа мужества, Е., 1971.

3 Տե՛ս Главный герой войны (Сборник статьей под ред. В. Мурадяна), Е., 1975:

4 Տե՛ս Ն. Թավարթիլան, *Եղել են այսպիսի օրեր*, Եր., 1965, Մ. Նաումով, *Անդունդի վրայով*, Եր., 1965, Ս. Սարգսյան, *Այրվող անտառ*, Եր., *Նույնի՝ Անմոռաց անուններ*, Եր., 1978, Զ. Պողոսյան, *Կապույտ անհունի բազեները*, Եր., 1967, Մ. Գուլյան, *Հանդիպումներ ռազմաճակատում*, Եր., 1968, Ս. Նուրիջանյան, *Արյունով ներկված լուսաբաց*, Եր., 1968, Ե. Կարապետյան, *Անմահության ճանապարհով*, Եր., 1969, Վ. Սարգսյան, *Հերոսական 225 օր*, Եր., Петросян Х., В рядах Советских авиаторов, Е., 1969, Ա. Հակոբյան *Հերոսական մարտերում*, Եր., 1975, Ա. Սիմոնյան, *Ռազմի ճամփաներով։ Ակնարկներ*, Եր., 1981, Խ. Բարսեղյան, *Կրակների միջով*, Եր., 1982, *Նույնի՝ Այսպես ապրեցին*, Եր., 1985 և այլն։



---

1 Տե՛ս Խ. Բարսեղյան, *Հայրենական մեծ պատերազմի խորհրդահայ պատմագրությունը*, ՊԲՀ, № 2, տե՛ս նաև *Հայրենական մեծ պատերազմի խորհրդահայ պատմագրությունը*, Եր. 1975։

* Հատորն ընդգրկում է մինչև 1965 թվականը։

Ս. Խարմանդարյանը, Ա. Հակոբյանը, Լ. Խուրշուդյանը, Ա. Հարությունյանը, Ա. Գրիգորյանցը, և Գ. Գեղամյանը։ Հեղինակները լուսաբանել են հետպատերազմյան տարիներին Խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացումը, աշխատավորների կենսամակարդակի վերելքը, հայրենադարձությունը, հասարակական-քաղաքական կյանքը։ Առանձին գլուխ է հատկացված Խորհրդային Հայաստանի քաղաքների զարգացման պատմությանը (հեղինակ՝ Կ. Կոզմոյան)։

Գ. Գեղամյանի գիրքը[1] նվիրված է հանրապետության կոլտնտեսային գյուղացիության հետպատերազմյան ժամանակաշրջանի պատմությանը, որը խորհրդահայ պատմագրության մեջ համեմատաբար աղոտ լուսաբանված պրոբլեմներից է։ Այստեղ հեղինակը հանգամանորեն քննում է Խորհրդային Հայաստանի գյուղացիության պայքարի հարցը հանրապետության գյուղատնտեսության վերակառուցման ու հետագա զարգացման համար։ Վեր են հանված կոմունիստական կուսակցության միջոցառումները գյուղատնտեսության հետագա վերելքի, ինչպես նաև գյուղի աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացման գործում։ Աշխատության մեջ մեծ տեղ է հատկացված գյուղատնտեսական արտադրության զարգացման գործում սոցիալիստական մրցության հարցի լուսաբանմանը։

Խորհրդային Հայաստանի պատմությունը ութերորդ հնգամյակի տարիներին լուսաբանված է Ա. Հակոբյանի աշխատության մեջ[2]։ Հեղինակը ներկայացնելով 1966—1970 թթ. ժամանակաշրջանում Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը, վեր է հանել հանրապետության աշխատավորության հայրենանվեր աշխատանքը ժողովրդատնտեսական պլանների կատարման ուղղությամբ։ Աշխատության մեջ քննվում է պատմական այդ կարճ ժամանակամիջոցում հանրապետության հասարակական կառուցվածքում տեղի ունեցած սոցիալական փոփոխությունների հարցը, ցույց են տրվում աշխատավորության կենսամակարդակի բարձրացման բնագավառում ձեռք բերված հաջողությունները։ Հարկ եղած չափով լուսաբանված են նաև

1 Տե՛ս Գ. Գեղամյան, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը սոցիալիզմի վերջնական հաղթանակի ժամանակաշրջանում (1946—1958), Եր., 1968։

2 Տե՛ս Ա. Հակոբյան, Խորհրդային Հայաստանը ութերորդ հնգամյակի տարիներին, Եր., 1977։



կուլտուրական շինարարության նվաճումները՝ ժողովրդական կրթության, գիտության, գրականության և արվեստի բնագավառներում։

Աշխատության մեջ փաստեր կան ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության ու եղբայրական համագործակցության, մշակույթի բնագավառում տեղի ունեցող մերձեցման, փոխհարստացման մասին։ Հեղինակի ուշադրությունից չի վրիպել նշելու նաև ութերորդ հնգամյա պլանի կատարման ընթացքում առկա դժվարություններն ու թերությունները։

Պատմական երկարատև ուղի անցած հայ ժողովրդի 1917—1920 թթ. իրադարձությունների, Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման պատմության շատ հարցերի է անդրադարձել Ծ. Աղայանը։ 1981 թ. Մոսկվայում հրատարակվում է նրա նոր աշխատությունը[1], ուր պատմական համառոտ ակնարկից հետո վեր են հանվել Խորհրդային Հայաստանի անցած 60 տարիների ձեռքբերումները։

Խորհրդահայ պատմաբանների ուշադրությունից չի վրիպել քաղաքների և գործարանների պատմության ուսումնասիրության գործը։ Այս բնագավառում շնորհակալ աշխատանք են կատարել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Սիմոնյանը, պատմական գիտությունների թեկնածու Կ. Կոզմոյանը և ուրիշներ։ 1965-ին զգալի լրացումներով վերահրատարակվում է Ա. Սիմոնյանի 1963-ին ռուսերեն հրատարակված աշխատությունը[2]։ Որոշ փոփոխություններով այն վերահրատարակվում է նաև հայերեն[3]։

Գրքում հեղինակը մատչելի լեզվով պատմում է հանրապետության մայրաքաղաքի կյանքում տեղի ունեցած մեծ վերափոխումների մասին, վեր հանում տնտեսության, ճարտարապետության, շինարարության, առողջապահության, մշակույթի բնագավառներում ձեռք բերած նվաճումները։ Աշխատության էջերում ցայտունորեն ցույց է տրված սոցիալիստական Երևանի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքի առաջընթացի գործում։

1 Տե՛ս Агаян Ц., Победа Советской власти и возрождение армянского народа, М., 1981:

2 Տե՛ս Симонян А., Ереван, Е., 1965;

3 Տե՛ս Ա. Սիմոնյան, Երևան, 1920—1967, Եր., 1971։

1968 թ. լույս է տեսնում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Թ. Հակոբյանի և Ա. Սիմոնյանի համատեղ «Երևան» աշխատությունը՝ նվիրված Երևանի հիմնադրման 2750-ամյակին։ Գիրքն սկսվում է Երևանի պատմության հիմնադրման ժամանակաշրջանից և ավարտվում 1968 թվականով։

Կ. Կոզմոյանը նոր աշխատություններով հարստացրեց Խորհրդային Հայաստանի քաղաքների պատմության մատենաշարը։ Լենինական և Կիրովական քաղաքների մասին 1956—60 թթ. հրատարակված նրա գործերին ավելացան Ալավերդի, Հոկտեմբերյան և Հրազդան քաղաքների մասին հրատարակված աշխատությունները[1]։ Հայաստանի քաղաքների զարգացման ամփոփ պատկերն ուրվագծվել է «Հայ ժողովրդի պատմության» VIII հատորի 9-րդ գլխում, որի հեղինակն է Կ. Կոզմոյանը։ Նույն հարցին է նվիրված նրա ավելի ծավալուն և արժեքավոր մենագրությունը[2], որն ընդգրկում է Խորհրդային Հայաստանի քաղաքների պատմությունը 1920—1970-ական թվականներին։ Աշխատության մեջ փաստական հարուստ տվյալներով լուսաբանվել են հանրապետության հին ու նոր քաղաքներում բազմաճյուղ արդյունաբերության ստեղծման ու զարգացման, քաղաքային բնակչության աճի, զբաղմունքի, տնտեսության, մշակույթի, առողջապահության և նյութական բարեկեցության հարցերը։ Խորհրդային Հայաստանի քաղաքների պատմությանն է նվիրված նաև Թ. Հակոբյանի աշխատությունը[3]։

Շարունակվում էր հանրապետության գործարանների ու ֆաբրիկաների պատմության ուսումնասիրության, ինչպես մեծ գրող Մ. Գորկին էր ասում, դրանց գիրք-կենսագրություններ ստեղծելու գործը։ Այս հարցում ևս անուրանալի է Կ. Կոզմոյանի վաստակը։ Երևանի Ֆ. Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի, Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի մասին 1956—1958 թթ. հրատարակված

1 Տե՛ս Կ. Կոզմոյան, Ալավերդի, Եր., 1966, Հոկտեմբերյան, Եր., 1975, Հրազդան, Եր., 1986։

2 Տե՛ս Կ. Կոզմոյան, Քաղաքների զարգացումը Խորհրդային Հայաստանում, Եր. 1977։

3 Տե՛ս Թ. Հակոբյան, Խորհրդային Հայաստանի քաղաքները, Եր., 1977։



նրա աշխատություններին ավելացան նորերը[1]։ Խորհրդային Հայաստանում քիմիական արդյունաբերության զարգացման պատմությանն է նվիրված պատմական գիտությունների թեկնածու Վ. Ավագյանի աշխատությունը[2]։

Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի հարցը ինչ-որ չափով լուսաբանվել է Խորհրդային Հայաստանի պատմությանը նվիրված աշխատություններում, սակայն այդ հարցին հանգամանորեն անդրադարձել է Բ. Օհանջանյանը։ Նրա մենագրությունը[3], որը գրված է ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի ընդհանուր ֆոնի վրա, ընդգրկում է 1953—1965 թվականները։

Աշխատության մեջ արտացոլվել է ինչպես Խորհրդային Հայաստանում բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի սոցիալ-քաղաքական հիմքերի ամրապնդման ուղղությամբ կատարված աշխատանքը, այնպես էլ ավելի հանգամանորեն վեր է հանվել այդ դաշինքի դերը գյուղատնտեսության զարգացման և գյուղի կուլտուրական վերելքի գործում։ Ուշագրավ փաստեր են հրապարակվել պետության օգնության, շեֆական աշխատանքի, գյուղատնտեսության տեխնիկական զինվածության և գյուղատնտեսության մեջ գիտության ներդրման վերաբերյալ։ Բացահայտված են բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի առանձնահատկությունները խորհրդային հասարակության զարգացման նոր փուլում։ Հետպատերազմյան տարիներին Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունը լուսաբանված է Ծ. Աղայանի մենագրության 4-րդ մասում[4]։ Հեղինակը, ինչպես մենագրության մյուս մասերում, այնպես էլ այստեղ արծարծել է ոչ միայն Անդրկովկասի ժողովուրդների, այլև նրանց ու ռուս ժողովրդի միջև դարերով կոփված բարե-

1 Տե՛ս Կ. Կոզմոյան, Երևանի Ստ. Շահումյանի անվան կաշվի գործարանի 75 տարին, Եր. 1969, Հոկտեմբերյանի պահածոների գործարանը, Եր. 1971, Քանաքեռի ալյումինի գործարանի 25 տարին, Եր., 1975, Վերելքի ճանապարհին, Եր. 1983։

2 Տե՛ս Վ. Ավագյան, Խորհրդային Հայաստանի քիմիական արդյունաբերության զարգացման պատմությունից (1927—1980), Եր., 1983։

3 Տե՛ս Բ. Օհանջանյան, Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պատմությունից (1953—1965), Եր., 1970։

4 Տե՛ս Агаян Ц., Вековая дружба народов Закавказья, ч. 4-я, Е., 1980:

կամությունը։ Նա իրավացիորեն ժողովուրդների բարեկամությունը բնութագրել է որպես խորհրդային հասարակության հետպատերազմյան վերականգնման ու զարգացման պրոցեսի ակտիվ գործոն։ Վեր են հանվել Անդրկովկասյան հանրապետությունների տնտեսական ու կուլտուրայի բնագավառների ձեռքբերումները։

1960—1980-ական թվականներին Հայկական ԽՍՀ գյուղում կատարված սոցիալական փոփոխությունների հարցին է նվիրված պատմական գիտությունների թեկնածու Վ. Հակոբյանի աշխատությունը[1]։ Այն տվյալ պրոբլեմի հետազոտման առաջին փորձերից է։ Փաստական, վիճակագրական հարուստ տվյալների հիման վրա հեղինակը վեր է հանել խորհրդային Հայաստանի գյուղի ձեռք բերած նվաճումները, միաժամանակ ցույց է տվել ստվերոտ կողմերը։ Աշխատության մեջ լայն տեղ է հատկացված գյուղի սոցիալ-տնտեսական կյանքի այնպիսի նոր երևույթի լուսաբանմանը, որպիսին ինտեգրացված էկոնոմիկայի զարգացումն է, միջտնտեսական միավորումների և ագրոարդյունաբերական ձեռնարկությունների ստեղծումը։ Հանգամանորեն վերլուծված է խորհրդահայ գյուղի սոցիալ-դասակարգային կառուցվածքը։ Հեղինակի կարծիքով, կոլտնտեսային գյուղացիության կրճատման և սովխոզային բանվորների զգալի ավելացման հետևանքով կատարված որակական փոփոխությունները գյուղում հանգեցրին բանվոր դասակարգի աճին, որն էլ դարձավ գյուղի կենտրոնական դեմքը։

Բանվոր դասակարգի սոցիալական կառուցվածքի զարգացման պրոբլեմին է նվիրված պատմական գիտությունների թեկնածու Մ. Գրիգորյանի մենագրությունը[2]։ Նրանում քննվում է տվյալ ժամանակաշրջանում Հայաստանում բանվոր դասակարգի կազմում կատարված քանակական ու որակական փոփոխությունների հարցը։ Պրոբլեմը քննելով ԽՍՀՄ բանվոր դասակարգի կազմում տեղի ունեցած կառուցվածքային ընդհանուր փոփոխությունների ֆոնի վրա, աշխատության մեջ միաժամանակ բացահայտված են Հայաստանի բանվոր դասակարգի պատմության մի շարք առանձնահատկություններ։

[1] Տե՛ս Վ. Հակոբյան, Սոցիալական փոփոխությունները Հայկական ՍՍՀ գյուղում զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, Եր., 1985։

[2] Տե՛ս Մ. Գրիգորյան, Հայաստանի բանվոր դասակարգի կառուցվածքի զարգացումը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, Եր., 1980։



Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգի շուրջ երկու տասնամյակ ժամանակաշրջանի պատմությունը հաջողությամբ է լուսաբանվել կոլեկտիվ մի աշխատության մեջ ևս[1]։ Ա. Գրիգորյանցի և Հ. Կարապետյանի աշխատություններից հետո սա առաջին փորձն է ամբողջացնելու Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգի պատմությունը։

Ինչ խոսք, հեղինակներին չենք կարող անգամ մի փոքրիկ ակնարկ անել այն մասին, որ գրքի վերնագիրը չի համապատասխանում այսօրվա ընորոշմանը, հասկանալի պատճառներով բացակայում է նաև «լճացման տարիներ» արտահայտությունը։

Աշխատությունը գրված է ԽՍՀՄ բանվոր դասակարգի պատմության ընդհանուր ֆոնի վրա, քանի որ, ինչպես ճիշտ նշվել է գրքի ներածության մեջ, Հայաստանի բանվոր դասակարգը լինելով խորհրդային բազմազգ բանվոր դասակարգի ջոկատներից մեկը, իր զարգացման ընթացքում հիմնականում անցել է այն նույն փուլերը, ինչ որ հատուկ էր ամբողջ երկրի բանվոր դասակարգին։ Իհարկե, հաշվի են առնված Հանրապետության և նրա բանվոր դասակարգի գործունեության առանձնահատկությունները։

Աշխատության մեջ խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգի պատմությունը բաժանված է երեք փուլերի։ Առաջին փուլն ընդգրկում է կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանը (1920-ից մինչև 1930-ական թվականների կեսերը), երկրորդը՝ մինչև 1960-ական թվականների սկիզբը, իսկ երրորդը՝ հետագա երկու տասնամյակները։

Առաջին և երկրորդ փուլերի մասին տրված ներածականից հետո, հետագա հինգ գլուխներում, հանգամանորեն քննվում են հետևյալ հարցերը. Հայաստանի ինդուստրիալ զարգացման հիմնական գծերը, հանրապետության բանվոր դասակարգի կազմում քանակական և որակական փոփոխությունները, բանվոր դասակարգը հանրապետության սոցիալական կառուցվածքում,

[1] Տե՛ս Рабочий класс Советской Армении в период развитого социализма, Е., 1982։ Հեղինակներ՝ Կ. Խուդավերդյան (կոլեկտիվի ղեկավար), Ռ. Ազիզբեկյան, Ս. Ամիրյան, Մ. Գրիգորյան, Ա. Գրիգորյանց, Վ. Խոջաբեկյան։

բանվոր դասակարգի աշխատանքային ակտիվության աճը, Հայաստանի ժամանակակից բանվորի սոցիալական նկարագիրը։

Պատմագիտական որոշակի արժեք ունի պրոբլեմի պատմագրական ակնարկը (հեղինակ՝ Կ. Խուդավերդյան)։ Ճիշտ մոտեցում է հանդես բերել Կ. Խուդավերդյանը, երբ Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգի պատմագրության վերաբերյալ հրատարակված ամբողջ գրականությունը բաժանել է չորս խմբի՝ ա) աշխատություններ, որոնք վերաբերում են Հայաստանի բանվոր դասակարգի պատմության առանձին ժամանակաշրջաններին, բ) աշխատություններ, որոնք վերաբերում են բանվոր դասակարգի ճյուղային ջոկատների պատմությանը, գ) աշխատություններ, որոնք վերաբերում են Խորհրդային Հայաստանի պատմության ռեգիոնալ հարցերին, դ) աշխատություններ, որոնք վերաբերում են Խորհրդային Հայաստանում սոցիալիստական շինարարության առանձին ժամանակաշրջաններին, որոնցում ընդհանուր գծերով լուսաբանվում է նաև բանվոր դասակարգի պատմությունը։

Այնուհետև հեղինակն անցնում է հրատարակված աշխատությունների վերլուծությանը։ Վեր հանելով նրանց արժանիքները, նա միաժամանակ բացահայտում է այնտեղ տեղ գտած թերություններն ու բացթողումները։ Այսպես, բարձր գնահատելով Ա. Գրիգորյանցի և Հ. Կարապետյանի մենագրությունները, դրանք համարելով խորհրդահայ պատմագրության մեջ առաջինը տվյալ պրոբլեմի լուսաբանման ուղղությամբ, նա իրավացիորեն այդ երկու աշխատությունների գլխավոր թերությունը համարում է այն, որ դրանցում անտեսված է հանրապետության բանվոր դասակարգի պատմության պարբերացումը։ Բացի այդ՝ «Բացահայտ անբավարար է ցույց տրված բանվոր դասակարգի հասարակական-քաղաքական գործունեությունը, նրա դերը, որպես խորհրդային հասարակության առաջատար դասակարգի»[1]։ Կ. Խուդավերդյանը Հ. Կարապետյանի աշխատության մեկ այլ թերություն է համարում այն, որ նրանում Հայաստանի բանվոր դասակարգի ձևավորման հարցը չի ստացել իր բազմակողմանի լուսաբանությունը։ Խոսելով Վ. Բարսամյանի աշխատության մասին, հեղինակը գտնում է, որ նրանում բերված զգալի քանակությամբ փաստական նյութը շարադրված է էմպիրիկորեն, առանց անհրաժեշտ վերլուծության։

Անդրադառնալով Փ. Ենգոյանի աշխատություններին, Կ. Խուդավերդյանը նկատում է, որ հեղինակը խիստ անբավարար է վերհանել ինդուստրացման սոցիալական հետևանքները։ Լ. Խուրշուդյանի աշխատությունը համարելով նախապատերազմյան տարիների սոցիալիստական մրցության պատմության վերաբերյալ խորհրդահայ պատմագրության մեջ միակը, նա միաժամանակ գտնում է, որ հետազոտված ժամանակաշրջանի ժամանակագրական շրջանակների սահմանափակությունը (մեկ հընգամյակ) հեղինակին հնարավորություն չի տվել բացահայտելու սոցիալիստական մրցության էությունը որպես խորհրդային հասարակության զարգացման նոր օրինաչափություն։ Ա. Բաղմանյանի աշխատության հիմնական թերությունն այն է, որ նրանում անբավարար է Խորհրդային Հայաստանի վերաբերյալ փաստական և վիճակագրական-սոցիոլոգիական նյութը, որն անհրաժեշտ էր տեսական դրույթները հիմնավորելու համար։

Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգի պատմությանն են նվիրված Հ. Հարությունյանի երկու աշխատությունները[1]։ Խորհրդահայ պատմաբանները քիչ ներդրում չունեն տվյալ պրոբլեմի հետազոտման բնագավառում, սակայն նշված առաջին գրքում քննվում են այնպիսի հարցեր, որոնք մինչ այդ հարկ եղած չափով չեն լուսաբանվել։ Աշխատության մեջ հանգամանորեն քննվում է բանվոր դասակարգի կազմում առաջացած քանակական ու որակական տեղաշարժերը, լայն տեղ է հատկացված բանվորական կադրերի պատրաստման ու որակավորման բարձրացման հարցերին։

Հայաստանի բանվոր դասակարգի պատմությունը ավելի խորն է հետազոտված Հ. Հարությունյանի երկրորդ գրքում, որը կարևոր նշանակություն ունի Խորհրդային Հայաստանի ամբողջական պատմության ստեղծման համար։

Այսպիսով, խորհրդահայ պատմաբանները զգալի աշխատանք են կատարել խորհրդային հասարակության պատմության գիտական հետազոտության բնագավառում։ Լուսաբանվել են ինչպես նախապատերազմյան և հետպատերազմյան ժամանա-

---

1 Տե՛ս Рабочий класс..., էջ 209։

1 Տե՛ս Հ. Հարությունյան, Հայկական ԽՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում, Եր., 1983, նույնի՝ Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգը (1938—1960 թթ.), Եր., 1987։

կաշրջանների պատմության հարցերը (Հ. Էլչիբեկյան, Ա. Հակոբյան, Գ. Շառոյան, Ս. Խարմանդարյան, Վ. Ղազախեցյան, Գ. Գեղամյան, Ս. Ամիրյան, Հ. Սելիքսեթյան, Կ. Կոզմոյան, Կ. Խուդավերդյան և այլք), այնպես էլ մեծ Հայրենականում հայ ժողովրդի մասնակցության հարցերը (Ա. Մնացականյան, Ե. Խալեյան, Ք. Գրիգորյան, Ա. Վարդապետյան և ուրիշներ)։

## 4. Խորհրդահայ մշակույթի պատմությունը, պատմագրությունը

Խորհրդային հասարակության պատմության կարևորագույն բնագավառներից մեկը կուլտուրական հեղափոխության հարցերի գիտական խոր ու համակողմանի հետազոտությունն է։ Հայտնի է, որ կուլտուրական հեղափոխության իրականացումը պահանջում էր իսպառ վերացնել բնակչության անգրագիտությունն ու կիսագրագիտությունը, աշխատավորության մեջ լայնորեն ծավալել կուլտուր-լուսավորական աշխատանք, նրանց դարձնել քաղաքականապես գրագետ, դաստիարակել խորհրդային հայրենասիրության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներով, կազմակերպել աճող սերնդի կրթության և դաստիարակության գործը, ապահովել բարձրագույն դպրոցի, գիտության, գրականության ու արվեստի զարգացումը, աճեցնել ժողովրդական մտավորականություն։

Խորհրդահայ պատմագրությունը զգալի նվաճումներ ունի այդ պրոբլեմի լուսաբանման ուղղությամբ։ Այդ գործում խորհրդահայ պատմաբաններից մեծ վաստակ ունի պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կ. Խուդավերդյանը։ Հայաստանում կուլտուրական հեղափոխության ամփոփ պատմությանն է նվիրված նրա մենագրությունը[1]։ Նախքան բուն նյութի շարադրումը, հեղինակը հանգամանորեն կանգ է առնում Խորհրդային Հայաստանում կուլտուրական հեղափոխության պատմության պարբերացման հարցի վրա։

Գտնելով, որ ինչպես խորհրդային պատմագրության մեջ ընդունված է կուլտուրական հեղափոխությունը բաժանել 2 մեծ փուլերի՝ սոցիալիստական և կոմունիստական, հեղինակն այդ նույն պարբերացումը տարածում է նաև Խորհրդային Հայաստանի վրա։ Միևնույն ժամանակ նա առաջին փուլն իր հերթին բաժանում է երկու ժամանակաշրջանների ու գիտականորեն հիմնավորում իր տեսակետը։ Առաջին ժամանակաշրջանը, որ նա անվանում է կուլտուրական հեղափոխության սկիզբը, ընդգրկում է 1920 թ. նոյեմբերի վերջից մինչև 30-ական թվականների սկիզբը, իսկ երկրորդը, որը նա անվանում է կուլտուրական հեղափոխության վճռական նվաճումների ժամանակաշրջան, ընդգրկում է 30-ական թվականները։ Ահա այդ պարբերացման համապատասխան էլ շարադրված է մենագրությունը, որն աչքի է ընկնում փաստական արժեքավոր նյութերի առատությամբ և, որ ամենակարևորն է, գիտականությամբ, տեսական ընդհանրացումներով։ Հեղինակին հաջողվել է խորապես բացահայտել խորհրդային իշխանության գոյության առաջին երկու տասնամյակների ընթացքում կուլտուրական հեղափոխության բարդ պրոցեսը, ճիշտ լուսաբանել պատմությունը՝ նրա բոլոր հիմնական ճյուղերով հանդերձ։

Խորհրդային Հայաստանում կուլտուրական հեղափոխությունը իրավացիորեն դիտելով որպես ԽՍՀՄ-ում կուլտուրական հեղափոխության բաղկացուցիչ մասը, ենթակա ԽՍՀՄ-ում սոցիալիստական մշակույթի զարգացման ընդհանուր օրինաչափություններին, Կ. Խուդավերդյանը միաժամանակ բացահայտել է կուլտուրական հեղափոխության օրինաչափություններն ու առանձնահատկությունները Հայաստանում, հիմնավորապես ցույց տվել կուլտուրական շինարարության սոցիալական հետևանքները։ Նրա կարծիքով, կուլտուրական հեղափոխության կարևորագույն օրինաչափություններն են՝ նրա ժողովրդական բնույթը, այդ պրոցեսը կոմունիստական կուսակցության և խորհրդային կառավարության կողմից ղեկավարումը և, վերջապես, խորհրդահայ մշակույթի զարգացման սերտ առնչությունը սոցիալիստական մյուս ազգերի մշակույթին։ Կ. Խուդավերդյանի կարծիքով, Խորհրդային Հայաստանում կուլտուրական հեղափոխության առաջին փուլի առանձնահատկություններն են՝ Խորհրդային Ռուսաստանի ավելի քան եռամյա փորձի օգտագործումը, նրա անշահախնդիր օգնությունը, հայ սոցիալիստական ազգի համախմբման պրոցեսին նպաստելը, սփյուռքահայ մշակույթի մեջ դեմոկրատական տարրերի ուժեղացման վրա ունեցած բարերար ազդեցությունը, Խորհրդային Հայաստանի ճանաչումը որպես ամբողջ հայ ժողովրդի հոգևոր կենտրոնի։

Ճիշտ մոտեցում է հանդես բերել պատմաբանը, երբ կուլ-

[1] Տե՛ս Худавердян К., Культурная революция в Советской Армении (1920—1940), Е., 1966.

տուրական հեղափոխության հաջողությունների մասին խոսելիս նշել է նաև առկա դժվարությունները։ Այս տեսակետից նա տեղին է նշել նաև անհատի պաշտամունքի վնասակար հետևանքը խորհրդահայ մշակույթի բնագավառում։

Խորհրդահայ մշակույթի պատմությանը ընդարձակ տեղ է հատկացված «Հայ ժողովրդի պատմության» VII և VIII հատորներում։ Թեմայի հիմնական մասը երկու հատորներում էլ գրել է Կ. Խուդավերդյանը։ Խորհրդահայ գրականության մասին գրել է պրոֆ. Ս. Աղաբաբյանը, արվեստի տարբեր ճյուղերի մասին՝ արվեստաբաններ Լ. Խալաթյանը, Գ. Գյոդակյանը, Մ. Սարգսյանը, Լ. Բաբայանը, իսկ ճարտարապետությունը՝ պրոֆեսոր Վ. Հարությունյանը։

Ընդհանուր առմամբ խորհրդահայ մշակույթի բաժինները նշված երկու հատորներում հաջող են շարադրված, բայց, այդուհանդերձ, հարկ ենք համարում նշել մեկ-երկու դիտողություն։ Խոսելով հետպատերազմյան տարիներին հայագիտության զարգացման մասին, հեղինակը նշում է միայն այն գիտնականների կատարած աշխատանքը, որոնք Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի անդամներ, թղթակից անդամներ կամ ուղղակի այդ հաստատության աշխատակիցներ են։ Այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե գիտությունների ակադեմիայից դուրս գիտությունը չի զարգանում, հիշատակվելու արժանի գիտնականներ չկան։ Դա, իհարկե, ճիշտ մոտեցում չէ։ «Հայ ժողովրդի պատմության» VIII հատորում բոլորովին չի ներկայացված կուլտուր-լուսավորական աշխատանքը։ Ոչ մի խոսք չկա պարբերական մամուլի մասին։ Հատորում տեղ են գտել նաև փաստական որոշ անճշտություններ։

Կ. Խուդավերդյանի մեկ այլ աշխատության մեջ[1] փաստական հարուստ տվյալների հիման վրա Խորհրդային Հայաստանի օրինակով ցույց է տրվում խորհրդային ժողովուրդների մշակույթի մերձեցումն ու փոխհարստացումը։ Հանգամանորեն վեր է հանվել ինչպես ԽՍՀՄ ժողովուրդների համագործակցությունը մշակույթի բնագավառում, այնպես և Խորհրդային Հայաստանի մշակութային միջազգային կապերը, այդ թվում հայկական սփյուռքի մշակութային կենտրոնների հետ։ Աշխատության մեջ

[1] Տե՛ս Худавердян К., Культурные связи Советской Армении, Е., 1977.



ընդգծվում է այն միտքը, որ ինտերնացիոնալիզմի ընդհանուր պրոցեսում մշակութային կապերի զարգացումը տանում է դեպի սոցիալիստական ազգերի միասնություն, նրանց հետագա վերելք։ Խորհրդահայ մշակույթը դիտելով որպես խորհրդային ամբողջ մշակույթի մի անբաժանելի մաս, հեղինակը այն ճիշտ եզրակացությանն է հանգում, որ Խորհրդային Հայաստանը ևս իր արժանի ավանդն է ներդնում մեր երկրի մշակութային ու գիտատեխնիկական միջազգային կապերի ընդլայնման գործում։

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին խորհրդահայ մշակույթի պատմությանն է նվիրված պատմական գիտությունների թեկնածու Վ. Ղազանջյանի աշխատությունը[1]։ Այնտեղ ասված է, որ չնայած հանրապետության համար ստեղծված ծանր պայմաններին, այնուամենայնիվ հսկայական աշխատանք է կատարվել կուլտուրական շինարարության ասպարեզում։ Դա կուլտուրական հեղափոխության առաջին շրջանն էր, երբ համաժողովրդական պայքար էր սկսվել անգրագիտության վերացման, ժողովրդական կրթության խորհրդային համակարգ ստեղծելու, խորհրդահայ գրականության, արվեստի զարգացման, աշխատավորության քաղաքական և կուլտուր-լուսավորական դաստիարակության համար։ Աշխատության մեջ ցույց է տրված ՌԽՖՍՀ-ի կուլտուրական շինարարության փորձի կիրառումը Խորհրդային Հայաստանում։ Խորհրդահայ մշակույթի անբաժանելի մասն է կազմում Հայաստանում սոցիալիստական մտավորականության կազմավորումն ու զարգացումը։ Այս կարևոր պրոբլեմին է նվիրված պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Խաչատրյանի մենագրությունը[2]։ Հեղինակին հաջողվել է ցույց տալ կուլտուրական հեղափոխության կարևորագույն խնդիրներից մեկի՝ Հայաստանում նոր, սոցիալիստական մտավորականության ստեղծման պրոցեսի ամբողջական պատկերը։ Աշխատության ակզբում հանգամանորեն խոսվում է Հայաստանի հին մտավորականության գաղափարական վերադաստիարակման, հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ նրա ներգրավման ուղղությամբ ձեռնարկված միջո-

[1] Տե՛ս Վ. Ղազանջյան, Խորհրդահայ կուլտուրայի առաջին քայլերը, Եր., 1964։

[2] Տե՛ս Գ. Խաչատրյան, Հայաստանի սոցիալիստական ինտելիգենցիայի կազմավորումն ու զարգացումը, Եր. 1968։

ցառումների մասին։ Այնուհետև փաստական կոնկրետ նյութի հիման վրա ավելի մանրամասն ցույց է տրվում նոր, սոցիալիստական մտավորական կադրերի պատրաստման պրոցեսը, բացահայտվում նրա դերը սոցիալիստական շինարարության գործում։ Պատմաբանը չի խուսափել այն լուրջ դժվարություններից, որոնք եղել են նոր, սոցիալիստական մտավորականություն ստեղծելու ճանապարհին։ Աշխատության արժանիքներից է նաև այն, որ այստեղ մատնանշված են այդ դժվարությունները հաղթահարելու ուղիները։

Խորհրդային Հայաստանի փորձի հիման վրա մենագրությունում հանգամանորեն լուսաբանվում են ազգային մշակույթների համագործակցության մի քանի հարցեր՝ ԽՍՀՄ ազգերի ու ազգությունների համար ընդհանուր կրթություն ու աճող սերնդի դաստիարակություն, մասնագետների պատրաստման միասնական համակարգի ստեղծում, ազգային մշակույթների տասնօրյակների և փառատոների անցկացում, գեղարվեստական ցուցահանդեսների փոխանակում, մշակույթի ու գիտության գործիչների պարբերական հանդիպումներ, գրքի միամսյակների ու տասնօրյակների, կինոփառատոների, միութենական հանրապետություններին նվիրված ռադիո և հեռուստատեսային հաղորդումների կազմակերպում, միութենական մասշտաբով արվեստի ու գրականության նշանավոր գործիչների հոբելյանների, մշակութային տարելիցների նշում, ազգային լեզուների անկաշկանդ զարգացման ուղղությամբ կուսակցության լենինյան քաղաքականության անշեղ կիրառում և այլն։ Գ. Խաչատրյանը գտնում է, որ ինտերնացիոնալիստական մշակույթը չի բացառում ազգայինը, ինչպես որ ազգայինը չի բացառում ինտերնացիոնալիստականը։ Սակայն մեր կարծիքով, Գ. Խաչատրյանի աշխատության մեջ կան վիճելի և անընդունելի տեսակետներ։ Օրինակ, մենք առարկելի ենք համարում ԽՍՀՄ ազգերի և ազգությունների կրթության ու դաստիարակության մի ընդհանուր, միասնական համակարգ ստեղծելու մասին նրա պահանջը։

Խորհրդահայ մշակույթի մի ուրույն հարց է հետազոտել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Գրիգորյանը[1]։ Եթե Գ. Խաչատրյանի մենագրության մեջ ներկայացված է խորհրդահայ մտավորականության պատմությունը ամբողջությամբ, ապա հիշյալ մենագրության նպատակն է եղել ներկայացնել խորհրդահայ բազմահազարանոց մտավորականության միայն մի ջոկատի՝ արտադրական-տեխնիկական մտավորականության կազմավորման և զարգացման պատմությունը։ Մենագրության մեջ հանգամանորեն վեր է հանվել այն հսկայական աշխատանքը, որ 1920-ական թվականներից սկսած տարվել է, մի կողմից, տեխնիկական նախկին մտավորականությանը հանրապետությունում սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու, իսկ, մյուս կողմից՝ ազգային ինժեներատեխնիկական նոր կադրերի պատրաստման համար պայմաններ ստեղծելու ուղղությամբ։ Միաժամանակ ցույց է տրվել ամբողջ խորհրդային տեխնիկական մտավորականության և ԽՍՀՄ տեխնիկական ուսումնական հաստատությունների բարերար ազդեցությունն ու օգնությունը Հայաստանում ինժեներատեխնիկական մտքի զարգացման, հանրապետության համար ինժեներատեխնիկական ազգային կադրերի պատրաստման գործում։

Աշխատության արժանիքներից է և այն, որ նրանում բնութագրված է նաև նախախորհրդային Հայաստանում ինժեներատեխնիկական աշխատանքների կիրառման, հայ տեխնիկական մտավորականության ծագման, հատկապես Ռուսաստանի բարձրագույն և միջնակարգ տեխնիկական ուսումնական հաստատությունների բացառիկ դերը հայ ինժեներների և տեխնիկների պատրաստման գործում։

Խորհրդային իշխանության կուլտուրական ձեռնարկումների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում Խորհրդային Հայաստանի առաջին բարձրագույն ուսումնական հաստատության՝ Երևանի համալսարանի վերաբացումը։ Համալսարանը բացառիկ դեր է խաղացել մեր ժողովրդի սոցիալիստական մշակույթի զարգացման, բարձրորակ մասնագետների պատրաստման գործում։ Նրա հիմքերի վրա էր, որ հետագայում ճյուղավորվեցին մեր հանրապետության մյուս բարձրագույն ուսումնական հաստատությունները։

Այս տեսակետից դրական քայլ պետք է համարել պատմական գիտությունների թեկնածու Լ. Ղարիբջանյանի խորազնին հետազոտությունը, որը նվիրված է Երևանի համալսարանի

[1] Տե՛ս Григорянц А., Формирование и развитие технической интеллигенции Армении (1920—1965), Е,. 1966:

առաջին տասնամյակի գործունեության պատմությանը[1]։ Նրան հաջողվել է արխիվային փաստաթղթերի, պարբերական մամուլի և այլ հարուստ նյութերի հիման վրա վեր հանել համալսարանի մանկավարժական, գիտական ու մեթոդական գործունեությունը՝ այն սերտորեն առնչելով հանրապետության քաղաքական-տնտեսական, հասարակական ու մշակութային կյանքի, ինչպես նաև խորհրդային ամբողջ երկրի բարձրագույն դպրոցի զարգացման պատմության հետ։

Քիչ դժվարություններ չի հաղթահարել հեղինակը։ Համալսարանի հիմնադրման ու նրա զարգացման գործում մեծ ներդրում ունեցած շատ գիտնականներ ու դասախոսներ, մանավանդ նրանք, ովքեր կենդանի չէին, տարիներ շարունակ հարկ եղած գնահատականի չէին արժանացել, իսկ անհատի պաշտամունքի զոհ դարձածներն էլ իսպառ մոռացության էին մատնվել։ Լ. Ղարիբջանյանի աշխատության մեջ վերոհիշյալ գիտնականների ու դասախոսների աշխատանքը գնահատվել է ըստ արժանվույն։ Նա կատարել է բազմաթիվ փաստական կարևոր ճշգրտումներ, ջանասիրությամբ կազմել է համալսարանի դասախոսների կենսագրականները, որոնց շնորհիվ համալսարանի պատմության շատ հարցեր նորովի են լուսաբանվել։

Հրատարակվել են նաև գրքեր, որոնցում համառոտակի լուսաբանվում է հայագիտության փայլուն համաստեղության երկու երախտավորների կյանքն ու գործունեությունը, արժեքավորվում է նրանց գիտական հարուստ ժառանգությունը[2]։

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման կեսդարյա հոբելյանի առթիվ Երևանի համալսարանի հրատարակչությունը լույս ընծայեց «Հայագիտությունը 50 տարում» կոլեկտիվ աշխատությունը։ Գրքի մեծ մասը նվիրված է 50 տարում հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության հարցին (հեղինակ՝ պրոֆ. Ս. Պողոսյան)։ Այնուհետև համառոտակիորեն ներկայացված է աղբյուրագիտության (հեղինակ՝ պրոֆ. Ա. Աբրահամյան), ազգագրության (հեղինակ՝ պրոֆ. Վ. Բդոյան), իրավագիտության (հեղինակ՝ պրոֆ. Ս. Սուքիասյան) և մանկավարժա-

[1] Տե՛ս Լ. Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարանը (1920—1930 թթ.), Եր., 1965, նույնը ռուսերեն, Ե. 1971։

[2] Տե՛ս Կ. Յուզբաշյան, Ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելի, Եր., 1970, երկրորդ հրատ., Եր., 1988, Լ. Բաբայան, Վ. Հակոբյան, Հակոբ Մանանդյան, Եր., 1974։



կան մտքի (հեղինակ՝ գիտ. թեկնածու Ա. Իգնատյան) զարգացումը։

Մենք ստորև կխոսենք միայն խորհրդահայ պատմագիտությանը նվիրված բաժնի մասին, որը, ցավոք, գրված է գիտական ցածր մակարդակով։

Նախ և առաջ՝ խախտված է մարքս-լենինյան պարբերացման սկզբունքը։ Ինչպես հայտնի է, հայագիտության կողմից վաղուց հաստատվել է, որ Հայաստանը ևս ապրել է հասարակական-տնտեսական հինգ ֆորմացիաները, սակայն պրոֆ. Ս. Պողոսյանը, շեղվելով այդ ճիշտ սկզբունքից, հայ ժողովրդի պատմությունը բաժանում է 4 ֆորմացիաների։ Նա առաջին երկու ֆորմացիաները՝ նախնադարյան-համայնական և ստրկատիրական, միավորելով մեկ ֆորմացիայի մեջ, անվանում է նախաֆեոդալական։ Սա գիտական ճիշտ մոտեցում չէ, նման ֆորմացիա չի եղել։ Խճճված են ներկայացված նաև ֆեոդալիզմի և կապիտալիզմի ժամանակաշրջանները։

Հեղինակը խորհրդահայ պատմագրության զարգացումը պատմական հաջորդականությամբ չի շարադրել, այլ անսիստեմ, խառնաշփոթ։ Ինչպես կարելի է, օրինակ, նախ խոսել 1905—1907 թթ. հեղափոխական շարժումների, 1920 թ. Մայիսյան ապստամբության վերաբերյալ հրատարակված պատմագիտական գրականության մասին, հետո վերադառնալ XIX դարի երկրորդ կեսի հասարակական հոսանքների, ապա ավելի հետ՝ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման հարցին նվիրված աշխատություններին։ Նման օրինակները շատ են։

Աշխատության մեջ մի շարք կարևոր թեմաներ, որոնց լուսաբանումը խորհրդահայ պատմագրության ակնառու նվաճումներից է, բոլորովին անտեսված են։ Դրանք են՝ Վ. Ի. Լենինի, խորհրդային Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Արևմուտքի բուրժուական և թուրքական պատմագրության կեղծարարության քննադատությունը, հայկական սփյուռքը, հայ մշակույթը և այլն։ Չափազանց թռուցիկ է խոսվել այնպիսի հանգուցային պրոբլեմի մասին, ինչպիսին, օրինակ, հայ-ռուսական հարաբերությունները և Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացումն է։

Այդ աններելի բացթողման հետևանքով, բնականաբար, Ս. Պողոսյանի աշխատության մեջ չեն հիշատակված վերոհիշյալ

թեմաների մասին գրված շատ արժեքավոր աշխատություններ։ Ավելին, աշխատության մեջ ընթերցողը չի գտնի վաստակաշատ այնպիսի պատմաբանների անուններ, ինչպիսիք են ակադեմիկոս Հ. Օրբելին, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամներ Լ. Մելիքսեթ-Բեկը, Մ. Հասրաթյանը, դոկտոր, պրոֆեսորներ Մ. Արզումանյանը, Հ. Սիմոնյանը, Կ. Խուդավերդյանը, Վ. Դիլոյանը, Ղ. Դալլաքյանը, Մ. Զուլալյանը, Գ. Գեղամյանը, Վ. Բայբուրդյանը, գիտության թեկնածուներ Դ. Մուրադյանը, Ք. Գրիգորյանը և շատ ուրիշներ։

Ս. Պողոսյանը խորհրդահայ պատմագրությունը շարադրել է խորհրդային ամբողջ պատմագրությունից կտրված։ Աշխատության առաջին գլուխը նվիրված է խորհրդահայ պատմագիտության զարգացման հարցերին։ Հայտնի է, որ այն զարգացել է ԽՍՀՄ պատմական գիտության զարգացման հետ սերտորեն առնչված և նրա բարերար ազդեցության տակ, մինչդեռ աշխատության մեջ այդ մասին ոչ մի խոսք չկա։ Դրա հետևանքով չեն հիշատակվել խորհրդահայ պատմագրության զարգացման գործում արժանի ներդրում կատարած այնպիսի ոչ հայ գիտնականների անուններ, ինչպիսիք են Ն. Մառը, Ի. Ջավախիշվիլին, Բ. Պիոտրովսկին, Կ. Տրևերը, Ի. Պետրուշևսկին, Ի. Դյակոնովը և ուրիշներ։ Զարմանալի է, օրինակ, որ հեղինակը, խոսելով հայ ժողովրդի ծագման մասին, նշում է «Լենինյան ուղիով» ամսագրում տպագրված իր հոդվածը, մինչդեռ Բ. Պիոտրովսկու[1], Ի. Դյակոնովի[2] այդ հարցին նվիրված աշխատությունները չի հիշատակում։

Եթե վերոհիշյալ դիտողություններին ավելացնենք նաև այն, որ Ս. Պողոսյանի աշխատության մեջ տեղ են գտել բազմաթիվ սխալ ու հակասական մտքեր, գիտնականների տեսակետների աղավաղումներ, սխալ գնահատումներ, փաստական անճշտություններ և այլն, ապա միանգամայն պարզ կդառնա, թե գիտական ինչ մակարդակով է ներկայացված խորհրդահայ պատմագրության զարգացումը 50 տարում։ Բերենք մի քանի բնորոշ օրինակներ։ Գրքի 81-րդ էջում Ս. Պողոսյանը

[1] Տե՛ս **Пиотровский Б.**, О происхождении армянского народа, Е., 1946:

[2] Տե՛ս **Дьяконов И.**, Предистория армянского народа, История армянского нагорья, Е., 1968:



գրում է, թե Վ. Ռշտունին նշել է, որ «ռեֆորմի անցկացումով փաստորեն օրինականացվեց, ձևակերպվեց գյուղացիների ճորտացումը Հայաստանում»։ Ակներև է, որ ոչ ոք, մանավանդ գյուղացիական ռեֆորմի պատմության այնպիսի խորագիտակ, ինչպիսին Վ. Ռշտունին, չէր կարող նման արտառոց բան գրել և իրոք չի գրել։ Ս. Պողոսյանը գրում է, թե, իբր, Աշ. Հովհաննիսյանը իր՝ «Նալբանդյանը և նորա ժամանակը» աշխատության մեջ (էջ 489) արևմտահայերի «Ազգային սահմանադրությունը» իր բոլոր թերություններով հանդերձ բնութագրում է որպես առաջադիմական երևույթ արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարում՝ «ըստ էության ուղղված լինելով ոչ միայն թուրքական կամայականությունների և բռնությունների, այլև հայ ամիրայության և նրա հաստատած ռեժիմի դեմ» (էջ 104)։ Այստեղ բացարձակապես աղավաղված են Աշ. Հովհաննիսյանի մտքերը։ Նա սահմանադրությանը նման գնահատական չի տվել, այլ պարզապես գրել է, որ «սահմանադրություն կոչված ազգային-եկեղեցական կարկատաներ, բոլոր իր թերություններով մեկտեղ, առաջադիմական մի քայլ էր հին ամիրայական ռեժիմի համեմատությամբ։

Ս. Պողոսյանը գրքի նույն էջում նշում է, որ Աշ. Հովհաննիսյանը արևմտահայերի ու արևելահայերի մոտ ընդունում է հասարակական շորս հոսանք, մեկ այլ տեղ (էջ 117) արևմտահայերի մոտ՝ երեք, իսկ արևելահայերի մոտ հինգ հոսանք։ Միայն մեկ՝ 127-րդ էջում 3 անճշտություն կա։ Խոսելով Հ. Թուրշյանի «Սարդարապատի հերոսամարտը» գրքի մասին, նա գրում է. «Այդ գրքում հեղինակը լուսաբանում է, թե ինչպես դաշնակցությունը իր անհեռատես քաղաքականությամբ Հայաստանը մեկուսացրեց Խորհրդային Ռուսաստանից և այն դրեց թուրքական ներխուժման սպառնալիքի տակ»։ Իսկ ո՞վ ասաց, թե Հայաստանը Խորհրդային Ռուսաստանից մեկուսացրել է միայն դաշնակցությունը։ Իսկ մենշևիկնե՞րը, մուսավաթականնե՞րը, Անդրկովկասյան կոմիսարիա՞տը, սե՞մը։ Մի՞թե պատմական փաստերը կարելի է այսպես միակողմանի ներկայացնել։ Այնուհետև, մի քանի տող ներքև ասված է, թե, իբր, Թուրշյանը ցույց է տալիս դաշնակցական կառավարության անճարակությունը և թուրքական զորքերի ներխուժումը Արևելյան Հայաստան։ Մինչդեռ հանրահայտ է, որ այդ ժամանակ դաշ-

նակցական կառավարություն դեռ չկար, այն ձևավորվել է Սարդարապատի ճակատամարտից հետո։

Նշենք մի քանի փաստական սխալներ։ Աշխատության 123—124-րդ էջերում հեղինակը գրում է, թե հայ իրականության մեջ XIX դարի երկրորդ կեսին ձևավորվեցին հասարակական հոսանքներ և այդ նույն ժամանակներին կազմակերպվեցին նաև քաղաքական կուսակցություններ՝ հնչակյան, ռամկավարական և դաշնակցական ու կոմունիստական կազմակերպություններ։ Որտեղի՞ց է այս փաստը։ Նախ՝ պետք է գրվեր ոչ թե ռամկավարական, այլ արմենական և հետո՝ հայ իրականության մեջ կոմունիստական կազմակերպությունները ստեղծվել չեն XIX դարի երկրորդ կեսին։

Աշխատության 136-րդ էջում ասված է, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում, այդ թվում Հայաստանում, կազմակերպվում են բանվորական, գյուղացիական և զինվորական խորհուրդներ, մինչդեռ հայտնի է, որ այդ խորհուրդները ստեղծվել են փետրվարյան հեղափոխությունից հետո։

Աշխատության 6-րդ էջում հեղինակը գրում է, թե 1943 թ. Հայկական ԽՍՀ ԳԱ կազմում ստեղծվեց նաև պատմության ինստիտուտ, մինչդեռ այն ստեղծվել և գործում էր դեռևս Արմֆանի ժամանակ՝ 1935-ից։

Աշխատության 113-րդ էջում Աշ. Հովհաննիսյանը համարվել է Մայիսյան ապստամբության մասնակից, մինչդեռ նա այդ ժամանակ Հայաստանում չէր գտնվում։ Մեկ այլ փաստ։ Հեղինակը աշխատության բազմաթիվ էջերում խոսում է Լեոյի «Հայոց պատմության» երկրորդ և երրորդ հատորների մասին, մինչդեռ այդ հատորները խորհրդահայ պատմագրության մեջ չեն մտնում, դրանք գրվել են մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը, բայց հրատարակվել են հեղինակի մահից հետո՝ 1946—1948 թվականներին։

Խորհրդահայ պատմագրության մասին հրատարակվել են նաև առանձին հոդվածներ։ Խորհրդային Հայաստանի պատմության պատմագրությունը ամփոփ և հակիրճ շարադրել են Կ. Խուդավերդյանը և Լ. Խուրշուդյանը[1]։ Վեր հանելով խորհրդահայ պատմաբանների կատարած աշխատանքը, նրանք միաժամանակ նշել են այդ բնագավառում դեռևս առկա սխալներն ու թերությունները, ինչպես նաև առաջ են քաշել խորհրդահայ պատմագրության առջև ծառացած մի շարք կարևոր հարցեր։ Տեղին է նրանց դիտողությունը այն մասին, որ Խորհրդային Հայաստանի սոցիալիստական շինարարության տարբեր փուլերի պատմությանը նվիրված շատ աշխատությունների հեղինակներ, հիմնական ուշադրությունը բևեռելով աշխատավորության պայքարի վրա՝ տնտեսական հարցերը լուծելու, ժողովրդական տնտեսության հնգամյա պլանները կատարելու համար անբավարար են բացահայտել հասարակական-քաղաքական կյանքը։ Այդ պատճառով էլ մի շարք աշխատություններ կրում են պատմատնտեսագիտական բնույթ։ Դրանից բացի, մի շարք աշխատություններում, իրավացիորեն գրում են հեղինակները, չեն բացահայտված Խորհրդային Հայաստանի սոցիալիստական շինարարության պրոցեսում եղած դժվարությունները, թույլ տրված սխալները։

Կ. Խուդավերդյանի և Լ. Խուրշուդյանի մեկ այլ հոդվածում ևս քննվում է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման և քաղաքացիական կռիվների պատմագրության հարցը[1]։ Սակայն համառոտակիորեն վեր հանելով և ընդհանուր առմամբ ճիշտ բնութագրելով մատնանշված պրոբլեմի լուսաբանման ուղղությամբ խորհրդահայ պատմաբանների կատարած աշխատանքը, առաջ քաշելով նաև դեռևս ուսումնասիրության կարոտ հարցեր, հեղինակները, ցավոք, փորձ անգամ չեն արել կոնկրետ փաստերով բացահայտել այն լուրջ սխալները, որոնք տեղ են գտել խորհրդահայ պատմագրության մեջ։

ԽՍՀՄ կազմավորման 50-ամյակի առթիվ նույն հեղինակները հանդես են եկել ազգային-պետական շինարարության պատմության պատմագրությանը նվիրված հոդվածով[2]։ Այստեղ էլ նրանք ըստ արժանվույն են գնահատել պրոբլեմի լուսաբանման ուղղությամբ կատարված աշխատանքը, մատնանշելով նաև այն կարևոր խնդիրները, որոնք դեռևս կարոտ են լուսաբանության։

---

[1] Տե՛ս Худавердян К., Хуршудян Л., Историография истории Советской Армении, Историко-филологический журнал, 1965, № 3.

[1] Տե՛ս Худавердян К., Хуршудян Л., Проблема истории установления Советской власти и гражданской войны в Армении в советской армянской историографии, ИФЖ, 1971, № 3.

[2] Տե՛ս Կ. Խուդավերդյան, Լ. Խուրշուդյան, Ազգային-պետական շինարարության պատմության պրոբլեմը սովետահայ պատմագրության մեջ, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր», 1982, № 6։

Հոդվածում հեղինակները կանգ են առել հետևյալ հարցերի վրա՝ «Թուրքահայաստանի մասին» Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի դեկրետը և նրա նշանակությունը, Հայկական Խորհրդային պետականության ձևավորումը, ազգային հարցի լուծումը և ազգային խաղաղության հաստատումը Անդրկովկասում, Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ կազմավորումը, Հայկական ԽՍՀ խորհուրդների գործունեությունը։

Հեղինակները ճիշտ են նշում այն պատմաբանների անունները (Ս. Ալիխանյան, Ա. Մնացականյան, Մ. Արզումանյան, Լ. Խուրշուդյան), ովքեր ի լրումն խորհրդահայ պատմագրության մեջ մինչ այդ ընդունված կարծիքի, ավելացրել են «Թուրքահայաստանի մասին» դեկրետի մշակման գործին մասնակիցների թիվը՝ ինչպես բոլշևիկ գործիչներով, այնպես էլ ձախ էսէռների և դաշնակցության ներկայացուցիչներով։ Առանձնապես հարկ է նշել այդ կարևոր փաստաթղթի մշակման գործին Ստ. Շահումյանի մասնակցության հարցի լուսաբանումը։ Հեղինակները նշելով, որ չնայած այդ մասին չկան ուղղակիորեն վկայող փաստական տվյալներ, բայց համոզիչ կերպով հիմնավորել են այն։

Հայաստանի նոր պատմության պատմագրությանը անդրադարձել են Վ. Դիլոյանը, Հ. Ղազարյանը և Դ. Մուրադյանը[1]։ Հեղինակները համառոտակի ցույց են տվել այն աշխատանքը, որ կատարվել է խորհրդահայ պատմաբանների կողմից այդ բնագավառում։ Նրանք շոշափել են նաև վիճելի պրոբլեմները։ Անդրադառնալով հայերի ռուսական կողմնորոշման հարցին, նրանք իրավացիորեն նշում են, որ այդ հարցում կան տարբեր տեսակետներ։ Պատմաբանների մի խումբը (Վ. Ոսկանյան, Ա. Աբրահամյան, Պ. Հարությունյան, Զ. Դրիգորյան), հենվելով Մոսկովյան պետության հետ հայերի առևտրական և մշակութային կապերի վերաբերյալ եղած տվյալների վրա, գտնում է, որ հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշումը պետք է ավելի հին ժամանակներին վերագրել, իսկ պատմաբանների մյուս խումբը (Աշ. Հովհաննիսյան, Վ. Պարսամյան և ուրիշներ), նշելով, որ առևտրական և մշակութային հարաբերությունների մասին եղած առանձին էպիզոդիկ փաստերը դեռևս չեն վկայում հայերի ազատագրական շարժման քաղաքական

[1] Տե՛ս Дилоян В., Казарян Г., Мурадян Д., Историографический очерк новой истории Армении, «Вестник» АН Арм. ССР, 1967, № 3.



կողմնորոշման առկայությունը, ռուսական կողմնորոշման ձևավորումն ու հաղթանակը կապում են Իսրայել Օրու գործունեության ժամանակաշրջանի հետ։

Հեղինակները ճիշտ են նշում նաև պատմագրության մեջ գոյություն ունեցող երկու տարբեր տեսակետներն այն մասին, որ որոշ պատմաբաններ հայերի ազատագրական շարժման նպատակը համարում են Ռուսաստանին միանալը, իսկ մյուսները՝ Ռուսաստանի օգնությամբ իրենց պետականության վերականգնումը։

Հեղինակներն առաջ են քաշում նաև խորհրդահայ պատմագրության առջև ծառացած կարևոր խնդիրները՝ ավելի խոր լուսաբանել հայ ժողովրդի ազատագրական պայքարի գաղափարախոսությունը, ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, հասարակական-քաղաքական հոսանքները, հայ քաղաքական կուսակցությունների գործունեության ճիշտ գնահատումը և այլն։

Խորհրդային Հայաստանում պատմագիտության զարգացման համառոտ ակնարկով հանդես են եկել Լ. Բաբայանը և Վ. Բարխուդարյանը՝ Խորհրդային Հայաստանի 50-ամյակին նվիրված ժողովածուի մեջ[1]։ Հեղինակները բացահայտել են հայ ժողովրդի պատմության բազմաթիվ պրոբլեմների լուսաբանման բնագավառում խորհրդահայ պատմաբանների կատարած մեծ աշխատանքը։

Քննվում են խորհրդահայ պատմագրության մեջ վիճելի մի շարք կոնցեպցիաներ, ինչպես, օրինակ, Հայաստանում հասարակական-տնտեսական ֆորմացիայի, գյուղացիության ճորտացման պրոցեսի, հայ ազատագրական շարժման բնույթի ու նպատակի մասին և այլն։ Զգալի տեղ է հատկացված նաև Հայաստանի կոմկուսակցության և կոմերիտմիության պատմության ուսումնասիրության ուղղությամբ կատարված աշխատանքին։ 1984 թ. լույս տեսավ մի նոր ժողովածու՝ նվիրված խորհրդային Հայաստանում գիտության նվաճումների[2] պատմագրությանը։ Այդ բնագավառում կատարված աշխատանքի մասին գրել է Կ. Խուդավերդյանը։ Խորհրդային Հայաստանում ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանի վերաբերյալ

[1] Տե՛ս Գիտությունը Հայաստանում 50 տարում, Եր. 1973։

[2] Տե՛ս Достижения науки Советской Армении, Е., 1984:

հրատարակված աշխատությունների պատմագրական վերլուծությանն է նվիրված Բ. Օհանջանյանի մենագրությունը[1]։ Անշուշտ, նման աշխատությունները նպաստում են խորհրդահայ պատմագրության հետագա զարգացման գործին, մանավանդ հեղինակը լրացուցիչ նյութերով հարստացրել է այդ ժամանակաշրջանի Խորհրդային Հայաստանի պատմությունը։ Դրանք վերաբերում են առանձնապես կուսակցական և խորհրդային շինարարությանը, կոմերիտմիությանը, կանանց շրջանում տարվող աշխատանքին, գյուղում դասակարգային պայքարի սրմանը, ՀԿ(բ)Կ քաղաքական աշխատանքին և այլն, որոնք անբավարար են լուսաբանված պատմակուսակցական գրականության մեջ։ Հեղինակը պատմաբանների աշխատությունների վերաբերյալ արել է նաև մի շարք դիտողություններ, որոնք վերաբերում են արխիվային և կարևոր այլ նյութերի անբավարար օգտագործմանը, Խորհրդային Ռուսաստանի համեմատությամբ հանրապետության առանձնահատկությունների ոչ լրիվ բացահայտմանը, Հայաստանում ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառման անհրաժեշտության, նրա բացասական հետևանքների և կիրառման տևողության, ինչպես նաև նեպին անցնելու ժամկետներին, Հայաստանում սմենովեխականության գոյության, Հայաստանի արհմիությունների պատմության առանձին հարցերին և այլն։

Բ. Օհանջանյանը քննադատում է պատմաբաններ Ա. Հակոբյանին, Վ. Ներկարարյանին, Ա. Խարմանդարյանին, Ս. Սահրադյանին, Ծ. Աղայանին, Շ. Հարությունյանին այն բանի համար, որ նրանք իրենց աշխատություններում դրականորեն են գնահատել Հայաստանում ռազմական կոմունիզմի քաղաքականությունը։ Նրա կարծիքով այդ քաղաքականությունը չպետք է կիրառվեր Հայաստանում, որովհետև դրա անհրաժեշտությունը չկար, ընդհակառակը՝ վնասակար էր և ունեցավ ծանր հետևանքներ։ Ըստ նրա, այդ քաղաքականությունը Հայաստանում ոչ թե ամրապնդեց, այլ զգալիորեն թուլացրեց խորհրդային կարգերը։ Ի դեպ, Բ. Օհանջանյանը գտնում է, որ Հայաստանում չի էլ կիրառվել ռազմական կոմունիզմի քաղաքականություն։ Դա, գրում է նա, բոնագրավումների քաղաքականություն էր, որն, իբր,

[1] Տե՛ս Բ. Օհանջանյան, Խորհրդային Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925 թթ.) Եր., 1982։



պատմական գրականության մեջ սխալմամբ համարվել է ռազմական կոմունիզմ[1]։ «Հայաստանում կենսագործվում էր ոչ թե պարենամասնատրման քաղաքականություն, ինչպես Ռուսաստանում,— գրում է նա,— այլ բոնագրավումների, կոնֆիսկացիայի քաղաքականություն, որը վարկաբեկում էր խորհրդային իշխանությանը։ Չոր բոնագրավումների քաղաքականությունը նույնացնել ռազմական կոմունիզմի քաղաքականության հետ, կոպիտ սխալ է, որը թույլ են տվել մեր պատմաբաններից շատերը»[2]։ Բ. Օհանջանյանը գտնում է նաև, որ ճիշտ չեն այն պատմաբանները, ովքեր ռազմական կոմունիզմի քաղաքականության վերջը համարում են 1921 թ. ապրիլը և կամ հունիսը։ Նրա կարծիքով, այդ քաղաքականությունը դաշնակցականների փետրվարյան խռովությունից առաջ՝ փետրվարի սկզբներին, արդեն վերացել էր։

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման պրոբլեմը խորհրդահայ պատմագրության մեջ թեմայով հրատարակվել է պատմական գիտությունների թեկնածու Պ. Մայիլյանի գրքույկը[3]։ Հեղինակը ցույց է տալիս 1920—1930-ական թվականներին խորհրդահայ պատմաբանների (Աշ. Հովհաննիսյան, Վ. Պարսամյան, Մ. Ներսիսյան և ուրիշներ) կատարած աշխատանքը տվյալ պրոբլեմի լուսաբանման բնագավառում, միաժամանակ նշելով, որ անհատի պաշտամունքի հետևանքով այդ պրոբլեմի շատ կողմեր չեն ստացել իրենց ճշմարտացի լուսաբանումը։ Հաղթահարելով անհատի պաշտամունքի հետևանքով ստեղծված դժվարությունները, խորհրդահայ պատմաբանները պրոբլեմի գիտական հետազոտությանը ձեռնամուխ եղան 1950-ական թվականների կեսերից։ Ապա համառոտակի վերլուծվում են հրատարակված աշխատությունները։ Ճիշտ է հեղինակի այն դիտողությունը, թե, չնայած նշանակալի նվաճումների, մի շարք հարցեր, ինչպիսիք են՝ դաշնակցական կառավարության վարած ներքին քաղաքականությունը, ազգային կուսակցությունների, Անդրկով-

[1] Տե՛ս Բ. Օհանջանյան, նշվ. աշխ., էջ 61։

[2] Նույն տեղը, էջ 60։

[3] Տե՛ս Պ. Մայիլյան Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման պրոբլեմը խորհրդահայ պատմագրության մեջ, ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի սեկտորի գիտաինֆորմացիոն բյուլետեն, Եր. 1974։

կասյան հանրապետությունների փոխհարաբերությունների պատմությունը, դեռևս խոր հետազոտության չի ենթարկվել։

Պ. Մայիլյանը ճիշտ դիտողություններ է անում Ծ. Աղայանի, Հ. Էլչիբեկյանի, Ա. Պողոսյանի, Խ. Բագալյանի արտահայտած առանձին տեսակետների վերաբերյալ։

Մի դիտողություն. լավ կլիներ, որ հեղինակը նշեր նաև այն պատմաբաններին (Ծ. Աղայան, Շ. Հարությունյան, Լ. Խուրշուդյան և այլն), ովքեր իրենից առաջ զբաղվել են այդ պրոբլեմի ուսումնասիրմամբ։

Խորհրդահայ պատմագրության մեջ ռազմական կոմունիզմի քաղաքականության կենսագործման հարցին անդրադարձել է Յու. Հովսեփյանը Երևանի համալսարանի հրատարակած ժողովածուի մեջ[1]։

Հեղինակը ճիշտ է նշում, որ Հայաստանում ռազմական կոմունիզմի քաղաքականության կենսագործման հարցը խորհրդահայ պատմագիտության մեջ գիտականորեն սկսվել է լուսաբանվել 1940-ական թվականների վերջերից, բացառությամբ Բ. Բորյանի 1929 թ. հրատարակված հայտնի աշխատությունից, որտեղ շոշափվել է այդ հարցը։ Այնուհետև հերթականությամբ խոսելով այդ պրոբլեմին այս կամ այն չափով անդրադարձած պատմաբանների տեսակետների մասին, նա կատարում է մի քանի արժեքավոր դիտողություններ։

Պատշաճ հատուցելով այդ պրոբլեմի հետազոտության ուղղությամբ խորհրդահայ մեկուկես տասնյակ պատմաբանների (Ա. Հակոբյան, Վ. Ներկարարյան, Գ. Ղարիբջանյան, Գ. Գալոյան, Ս. Խարմանդարյան, Վ. Ղազախեցյան, Բ. Օհանջանյան, Գ. Գեղամյան և ուրիշներ) կատարած աշխատանքին, Յու. Հովսեփյանը իրավացիորեն գտնում է, որ, այնուամենայնիվ, մինչև օրս այդ պրոբլեմը թերի է լուսաբանվել և չկա նրա մասին ամբողջական աշխատություն։ Ամենակարևորը, գրում է նա, չկա միասնական կարծիք ռազմական կոմունիզմի քաղաքականության կենսագործման անհրաժեշտության, ժամանակագրական շրջանակների, արդյունքների և այլ հարցերի վերաբերյալ։

Այսպես, պատմաբաններ Գ. Գեղամյանը, Բ. Օհանջանյանը գտնում են, որ Հայաստանում ռազմական կոմունիզմի քաղաքականությունը կիրառելու ոչ մի անհրաժեշտություն չկար։ Վերանայելով իր նախկին տեսակետը, հետագայում նույն կարծիքն է հայտնել նաև Հ. Էլչիբեկյանը։ Հակառակ խորհրդահայ պատմաբանների ճնշող մեծամասնության, Բ. Օհանջանյանը նույնիսկ պնդում է, որ Հայաստանում ռազմական կոմունիզմի ոչ մի քաղաքականություն էլ չի եղել։ Այս կարծիքը, իրավացիորեն գրում է Յու. Հովսեփյանը, բնավ համոզիչ չէ և չի համապատասխանում իրականությանը։ Ճիշտ է հեղինակի կարծիքը նաև այն մասին, որ Հայաստանում ռազմական կոմունիզմի քաղաքականությունը կիրառվել է 1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. ապրիլը, 4 ամիս և ոչ թե կես տարի, ինչպես գրել են Ա. Հակոբյանը, Վ. Ներկարարյանը և, մանավանդ, ոչ 2,5 ամիս, ինչպես պնդում է Բ. Օհանջանյանը[1]։

Հեղինակն առարկելի է համարում Ա. Հակոբյանի, Վ. Ներկարարյանի, Ս. Սահրադյանի և ուրիշների, այդ թվում տողերիս գրողի, կարծիքն այն մասին, թե ռազմական կոմունիզմի քաղաքականությունը անհրաժեշտ էր և այն նպաստեց Հայաստանում խորհրդային կարգերի ամրապնդմանը։ Սակայն չի կարելի զանց առնել, որ վերոհիշյալ տեսակետը պարզաբանող պատմաբանները միաժամանակ նշում էն այդ քաղաքականության կիրառման ժամանակ թույլ տրված կոպիտ սխալները, որոնք և ճարպկորեն օգտագործեցին դաշնակցականները փետրվարյան խռովությունն սկսելիս։

«Սովետական Հայաստան» խորագրված Հայկական խորհրդային հանրագիտարանի լրացուցիչ, վերջին՝ 13-րդ հատորում ընդհանրական գծերով, համառոտակի ներկայացված է հայ պատմագիտական մտքի զարգացումը սկզբից մինչև մեր օրերը[2]։ Նոր և նորագույն ժամանակաշրջանների (XIX—XX դարեր) պատմագիտական ակնարկը (343—346) գրել են Վ. Բարխուդարյանը և Կ. Խուդավերդյանը։ Հեղինակները, հանրագիտարանի ընձեռած սահմանափակ հնարավորությունների շրջանակներում, սեղմ էջերով, ըստ պրոբլեմների, փորձել են ցույց տալ հայ պատմաբանների վաստակը։ Դրականորեն գնահատելով հրապարակված ակնարկը, միաժամանակ անհրաժեշտ ենք հա-

---

[1] Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր, Եր., 1987, էջ 28—52։

[1] Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման... էջ 37։

[2] Տե՛ս Սովետական Հայաստան, Հայկական խորհրդային հանրագիտարան, Եր. 1987։

մարում արտահայտել որոշ ցանկություններ, անել մի շարք նշգրտումներ, քանզի հանրագիտարանը մեծ լսարան է ընդգրկում, ունի ընթերցողների լայն շրջանակ, հետևաբար նրանց անհրաժեշտ է ճիշտ կողմնորոշել։

Նախ, հեղինակները խորհրդահայ պատմագիտության զարգացումը միակողմանի են ներկայացրել։ Կատարված գրական աշխատանքի հետ միասին չէր կարելի շրջանցել թույլ տրված կոպիտ սխալներն ու խեղաթյուրումները։ Այսպես, ակնարկի հեղինակները ներկայացնելով խորհրդահայ պատմագիտական մտքի զարգացումը 1930 թ. երկրորդ կեսից— 50-ական թվականների առաջին կեսը, զարմանալիորեն շրջանցել են գաղափարական այն ավերածությունը, որը տիրապետող էր ինչպես ողջ խորհրդային, այնպես և հայ պատմագիտության բնագավառում։ Դժվար է համաձայնվել հեղինակների այն տեսակետին, թե այդ տասնամյակներին ընդլայնվեց հետազոտությունների թեմատիկան, հասարակական-տնտեսական և քաղաքական պատմության հարցերը սկսեցին ուսումնասիրվել առավել խորությամբ (էջ 343)։ Հայտնի է, որ անհատի պաշտամունքի դժնդակ տարիներին չնայած լույս են տեսել որոշ թվով աշխատություններ, բայց ընդհանուր առմամբ պատմագիտությունը կանգնած էր փակուղու առջև։ Պատմության բազմաթիվ հարցեր լուսաբանվում էին ոչ ճիշտ, աղավաղվում էին, կեղծվում էին պատմական փաստերը, առանձին դեպքերում գունազարդվում ու միակողմանիորեն էին ներկայացվում պատմական իրադարձությունները։ Այդ տարիներին կաշկանդված էր գիտնականների ստեղծագործական միտքը։ Խորհրդահայ պատմագրության մեջ անտեսվում էր ականավոր հայ հեղափոխականների գործունեությունը, ճիշտ չէր լուսաբանվում Հայաստանի կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության ղեկավարների գործունեությունը։ Հայտարարելով ժողովրդի թշնամիներ, այդ տարիներին հրապարակված աշխատություններում գրեթե չէին հիշատակվում Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման համար մարտնչողների անունները։ Հայտնի է, թե ինչ վնասակար դեր խաղաց ժողովրդի անարգ թշնամի Բերիայի՝ 1935 թ. հրատարակված «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» արատավոր գրքույկը։ Այն ոչ միայն հակագիտական էր, այլև կեղծում էր իրականությունը, սխալ ներկայացնում պատմական շատ իրադարձություններ,



իսկ պատմաբանները հնարավորություն չունեին իրենց ինքնուրույն խոսքն ասելու։ Հենց դրանով պետք է բացատրել այն, որ նշված վնասակար գրքույկի լույս աշխարհ գալուց հետո երկար ժամանակ գրեթե չհրատարակվեց Հայաստանի հեղափոխական շարժումների և կոմկուսակցության պատմությանը նվիրված ոչ մի լուրջ աշխատություն։

1930-ական, հատկապես 1936—1937 թվականներին կոպիտ սխալներ թույլ տրվեցին խորհրդահայ շատ անվանի գիտնականների ու նրանց գործերի գնահատման հարցում։ Ոչնչով չհիմնավորված, նիհիլիստական վերաբերմունք դրսևորվեց մեր անվանի այնպիսի հայագետների նկատմամբ, ինչպիսիք էին Հ. Մանանդյանը, Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Ա. Քալանթարը, Ա. Տերտերյանը, Գ. Ղափանցյանը և ուրիշներ, պիտակավորվելով որպես բուրժուական նացիոնալիստներ, կուլակային գաղափարախոսներ և այլն։ Անհիմն կերպով դաշնակցական-բուրժուական պատմագրության ներկայացուցիչներ որակվեցին Թ. Ավդալբեգյանը, Լեոն, Հ. Զորյանը և ուրիշներ, որոնք, իբր, բացահայտորեն քարոզել են ֆաշիստական-դաշնակցական, ռասայական տեսություն։ Հակահեղափոխական համարվեցին նաև Ա. Խանջյանն ու Աշ. Հովհաննիսյանը, որոնք, իբր թե, հայ ժողովրդի պատմությունը գիտել և լուսաբանել են դաշնակցական, սպեցիֆիկյան, տրոցկիստական ակնոցներով։ Մի քանի պատմաբաններ նույնիսկ դաժան ռեպրեսիայի ենթարկվեցին (Աշ. Հովհաննիսյան, Հ. Զորյան, Ա. Քալանթար և ուրիշներ)։

Մի՞թե խորհրդահայ պատմագրության զարգացման երկրորդ փուլում չէր (1952 թ. աշնանը), որ հայ ազատագրական շարժումները և բուրժուանացիոնալիստական հոսանքներն ու կուսակցությունները Հայաստանում XIX դարի վերջին և XX դարի սկզբին հարցի շուրջ Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայում կազմակերպված բանավեճերի ժամանակ միանգամայն սխալ դիրքերից գնահատվեց անցյալի հայ առաջավոր մշակութային ժառանգությունը։ Հայ ազատագրական շարժման և մշակույթի առաջադեմ գործիչները հախուռն կերպով հայտարարվեցին բուրժուական նացիոնալիստներ, ռեակցիոն գաղափարախոսներ։ Ցավալի է, որ բանավեճերի ընթացքում հանրապետության շատ գիտնականներ (Վ. Ռշտունի, Վ. Պարսամյան, Մ. Ներսիսյան, Ա.

Տերտերյան և ուրիշներ) անհիմն կերպով մեղադրվեցին պատմությունը այսպես կոչված «միասնական հոսանքի» դիրքերից շարադրելու մեջ, համարվեցին բուրժուական նացիոնալիզմի ռեցիդիվ կրողներ և այլն։

Այդ օրերին էր, որ Հայաստանում հրապարակվող գրեթե բոլոր պարբերականները և, նույնիսկ, «Պրավդան» խմբագրական հոդվածներ տպագրեցին անհիմն մեղադրանքներով։ Հոդվածները, թերթերի առաջնորդողները խորագրվում էին՝ «Ընդդեմ միասնական հոսանքի ռեցիդիվների», «Միասնական բուրժուանացիոնալիստական հոսանքի տեսությունը պետք է մերժվի», «Նացիոնալիզմի նոր երանգավորում» և այլն։ Մեղադրելով բուրժուանացիոնալիստական գաղափարների պրոպագանդման մեջ, նրանցից պահանջեցին հրապարակայնորեն խոստովանել «սեփական» մեղքերը, հրաժարվել նախկինում հրատարակված աշխատություններից։ Մեղադրանքների անզուսպ ալիքը կարող էր ավելի վատթար հետևանքներ ունենալ, սակայն Ստալինի վերահաս մահը և Բերիայի մերկացումը փրկեց նրանց ծանր ռեպրեսիայի ենթարկվելուց։

Այսպիսով, պատմագիտական ակնարկում ոչ միայն ոչ մի խոսք չկա անհատի պաշտամունքի հետևանքով խորհրդահայ պատմագիտության զարգացման համար ստեղծված ծանր դրության, «միասնական հոսանքի» կեղծ կամպանիայի, այլև այն մասին, որ երկար ժամանակ մեր պատմագրության մեջ սխալ գնահատական էր տրվում քեմալիզմին, որ մի շարք խորհրդահայ պատմաբաններ «իմպերիալիստական» Հայաստանին էին մեղադրում Թուրքիայի վրա հարձակվելու համար և այլն։

Հանրագիտարանի նշված բաժնում տեղ չեն գտել շատ գիտնականների անուններ կամ ճիշտ չի ցույց տրված նրանց վաստակը։ Օրինակ, բոլորովին մոռացության է տրված Ղ. Ինճիճյանի անունը, որի աշխատությունները անփոխարինելի փաստեր են պարունակում XIX դարի սկզբի Հայաստանի պատմության և աշխարհագրության, հատկապես երկրում հաստատված վարչական կարգերի վերաբերյալ։ Արևմտահայ խոշորագույն պատմաբան, բանասեր, ազգագրագետ Մ. Օրմանյանը բնութագրվել է իբրև սոսկ հայ եկեղեցու պատմաբան։ Նրա եռահատոր «Ազգապատումը», հետմահու տպագրված «Խոհ և խոսքը» ու բազմաթիվ այլ գործեր հայոց բազմադարյան, առավել ևս նոր պատմության համայնապատկերն են։ Մոռացության են տրված Ա.



Պերպերյանի, Գ. Այվազովսկու, Սարուխանի անունները։ Ընդհանրապես արևմտահայ պատմագիտական միտքը համարյա անտեսված է։ Կամ, ասենք, Ս. Եղիազարովի աշխատությունները բնութագրված են իբրև «գյուղացիության կենցաղին և բարքերին» նվիրված գործեր։ Մինչդեռ հանրահայտ է, որ նա հետազոտել է հիմնականում քաղաքային կյանքը, համքարությունները, արդյունաբերության զարգացումը Թիֆլիսում և ամբողջ Անդրկովկասում։ Թ. Հակոբյանի անունը գրված է Արևելյան Հայաստանի հասարակական-տնտեսական, կապիտալիստական հարաբերությունների ձևավորման ու զարգացման հարցերը հետազոտողներ Վ. Պարսամյանի, Վ. Ռշտունու և Ա. Համբարյանի անունների շարքում, մինչդեռ մեծ է նրա վաստակը նախ և առաջ քաղաքների պատմության գիտական հետազոտության բնագավառում։ Նրա գրչին են պատկանում «Երևանի պատմությունը» եռահատոր և «Անի» երկհատոր մենագրությունները, որոնց մասին ակնարկում ոչ մի խոսք չկա։ Վ. Երկանյանը դարձել է հասարակական մտքի պատմաբան, մինչդեռ հայտնի է, որ նրա աշխատությունները վերաբերում են մշակույթի պատմությանը։ Ակնարկից գրեթե դուրս է մնացել հայ պարբերական մամուլի պատմաբանների կատարած աշխատանքը։

Վերջապես, միթե արդարացի է, որ համառոտ ակնարկում նշվում են, ասենք, սոցմրցման պատմությանը նվիրված Պ. Սաֆյանի և Լ. Խուրշուդյանի գրքույկները կամ որոշ հոդվածների հեղինակների անունները, իսկ ոչ մի խոսք չի ասվում հետհոկտեմբերյան ժամանակաշրջանի պատմության առանձին հարցերին նվիրված Զ. Գրիգորյանի, Ս. Վարդանյանի, Ա. Վարդապետյանի, Ղ. Դալլաքյանի, Հ. Թուրշյանի և շատ ուրիշների աշխատությունների մասին։

Խախտված է նաև մեկ այլ սկզբունք։ Հեղինակները փոխանակ առաջնությունը տալու այն պատմաբանին, որն առաջինն է տվյալ պրոբլեմի լուսաբանմամբ զբաղվել, նկատի են ունեցել նրանց գիտական բարձր կոչումները։ Գրելով, թե «մանրամասնորեն լուսաբանված են Ռուսաստանին Արևելյան Հայաստանի միացման հետ կապված իրադարձությունները. 1826—28 թթ. ռուս-պարսկական պատերազմը, դեկաբրիստների մասնակցությունը Արևելյան Հայաստանի ազատագրությանը, հայ-ռուսական հարաբերություններում Գրիբոյեդովի դերը, Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու ժամանակաշրջանի պատմությունը»,

հեղինակները փակագծերի մեջ նշում են պատմաբանների անունները հետևյալ հերթականությամբ՝ Մ. Ներսիսյան, Ծ. Աղայան, Գ. Գալոյան, Զ. Գրիգորյան, Վ. Պարսամյան։ Մի՞թե սա արդարացի է, իհարկե ոչ։ Եթե մի կողմ թողնենք Մ. Ներսիսյանին, ապա նշված պրոբլեմներով նախ զբաղվել է Վ. Պարսամյանը, ապա՝ Զ. Գրիգորյանը, իսկ ավելի ուշ՝ Ծ. Աղայանը և Գ. Գալոյանը։

Մեկ ուրիշ տեղ հպկական գաղթավայրերի պատմության հետազոտողների հերթականությունը նույնպես սխալ է ցույց տրված։ Այնտեղ Ա. Աբրահամյանի անունը Վ. Բարխուդարյանից և Վ. Միքայելյանից հետո է գրված, մինչդեռ վերջիններիս աշխատությունները հրատարակվել են Ա. Աբրահամյանի «Հայ գաղթավայրերի համառոտ պատմություն» երկհատոր աշխատության հրատարակությունից շատ հետո։

Այնուհետև, հեղինակները գրում են, թե «մինչև 30-ական թվականների կեսը Հայաստանում հեղափոխական շարժման ուսումնասիրմամբ զբաղվել են Աշ. Հովհաննիսյանը, Շ. Ամիրխանյանը, Ա. Կարինյանը, Ա. Խանջյանը։ Այստեղ ևս անճշտություն կա։ Նախ, Ա. Խանջյանը պատմությամբ չի զբաղվել, այլ պարզապես 1935 թ. Լենինականում հանդիսավոր նիստում Մայիսյան ապստամբության մասին զեկուցում է կարդացել, որը և գրքույկով հրատարակվել է։ Իսկ այն մասին, որ 1932 թ. հրատարակվել են Վ. Պարսամյանի «Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում» և 1935-ին՝ Մ. Ներսիսյանի նույնանուն մենագրությունները, ոչ մի խոսք չի ասված։

Կան նաև որոշ ոչ ճիշտ ձևակերպումներ։ Օրինակ, Ա. Պողոսյանի անունը թյուրիմացաբար նշված է այն պատմաբանների շարքում, որոնք հետազոտել են XIX դարի երկրորդ կեսի Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը։ Խոսքը վերաբերում է Ա. Պողոսյանի «Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կարսի մարզում» աշխատությանը, իսկ Կարսի մարզը ոչ թե Արևմտյան Հայաստանում էր, այլ Ռուսաստանի կազմի մեջ էր մտնում և այլն։

Խորհրդահայ մշակույթի բնագավառներից մեկն էլ պարբերական մամուլն է, որի մասին երկար ժամանակ պրոբլեմատիկ բնույթի հետազոտություններ չէին կատարվել։ Այս տեսակետից ուշագրավ է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.



Ֆելեքյանի մենագրությունը[1]։ Նրանում հանգամանորեն շարադրված է խորհրդահայ մամուլի սկզբնավորման ու զարգացման պատմությունը, որն ընդգրկում է 1920—1936 թվականները։ Խորհրդային Հայաստանում հրատարակված շուրջ 300 պարբերականների գիտական վերլուծության հիման վրա վեր է հանված խորհրդահայ պարբերական մամուլի հսկայական դերը հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման, սոցիալիստական վերափոխման և կուլտուրական հեղափոխության իրականացման ուղղությամբ։ Աշխատությունը գրված է Խորհրդային Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի պատմության ընդհանուր ֆոնի վրա և շոշափում է հանրապետությունում սոցիալիզմի կառուցման համար մղված պայքարի գրեթե բոլոր հարցերը։

Խորհրդային Հայաստանի պատմության հետ անմիջականորեն առնչվում և այն հարստացնում են գրականագետների[2], արվեստաբանների[3], տնտեսագետների[4], իրավաբանների[5] և այլոց մի շարք արժեքավոր աշխատությունները։

---

1 Տե՛ս Հ. Ֆելեքյան, Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում, Եր. 1970։

2 Տե՛ս Սովետահայ գրականության պատմություն, հ. 2, Եր. 1965։ Սովետահայ գրականության տարեգրություն, Եր. 1977։ Հայ գրականության միջազգային կապերը (ժողվածու), Եր. 1983։

3 Տե՛ս Բ. Հարությունյան, Սովետահայ թատրոնի տարեգրություն։ Գիրք 1, 2, Եր., 1961, 1969, նույնի՝ Հայ սովետական թատրոն (1917—1977), Եր., 1985: Искусство Советской Армении за 60 лет, Е., 1980:

4 Տե՛ս Պ. Ոսկերչյան, Սովետական Հայաստանի արդյունաբերությունը (1920—1940), Եր., 1966, Ս. Զուրաբյան, Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացումը 50 տարում, Եր. 1971, Վ. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչությունը (1828—1978), Եր., 1979։

5 Տե՛ս Ա. Եսայան, Հայաստանի միջազգային իրավական դրությունը 1920—1922 թթ., Եր., 1967, Շ. Պետրոսյան, Հայկական ԽՍՀ սահմանադրությունը և նրա պատմական զարգացումը, Եր. 1982։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ՀԿԿ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ՀԼԿԵՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Նկատի ունենալով, որ Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության պատմագրությունը առանձին մենագրության առարկա է, ուստի մենք կփորձենք միայն խիստ համառոտակի նշել այդ ուղղությամբ խորհրդահայ պատմաբանների կատարած շնորհակալ աշխատանքը։ Եվ քանի որ ներկա աշխատության շրջանակները հնարավորություն չեն տալիս կատարելու հրատարակված աշխատությունների պատմաքննական վերլուծություն, ուստի այս բաժինը որոշ չափով մատենագիտական բնույթ է կրում։

Մինչև 1950-ական թվականները չկար մի մենագրություն, որը նվիրված լիներ Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմությանը, լուսաբաներ նրա գործունեությունը։ Հրապարակի վրա եղել են միայն մի քանի հոդվածներ և գրքույկներ։ Այդ գործում մեծ բեկում առաջ եկավ ԽՄԿԿ XX համագումարից հետո։ Հեղինակների մի մեծ կոլեկտիվի ջանքերով 1958 թ. ընթերցողներին հրատարակվեց «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր» աշխատությունը[1], որը Հայաստանի կոմկուսակցության ամբողջական պատմության շարադրման առաջին փորձն էր։

Չնայած այդ աշխատության լույսընծայումը իր ժամանակին դիտվեց որպես կարևոր ներդրում խորհրդահայ պատմագրության մեջ, բայց այն քննադատվեց։ ՀԿԿ Կենտկոմը խնդիր դրեց մոտակա տարիներին ստեղծել նոր աշխատություն։ Կազմվեց հեղինակային ավելի մեծ կոլեկտիվ։ 1963 թ. այն հրատարակվեց, իսկ 1967-ին՝ վերահրատարակվեց[1]։ Գրքի առաջաբանում ասված է, որ նախորդ հրատարակության համեմատությամբ այն լրացված է նոր նյութերով, հաշվի են առնված ընթերցողների դիտողությունները, արված են անհրաժեշտ ճշտումներ։ Սակայն չնայած դրան, «Ուրվագծերում» առկա են մեծ մասամբ իր ժամանակի համար բնորոշ սխալներ, որոնց, հասկանալի պատճառով, չենք անդրադառնում այսօրվա դիրքերից։ Կասկած չկա, որ Հայաստանի կոմկուսակցության պատմության ինստիտուտը «ԽՄԿԿ պատմության» պատրաստվող գրքին զուգընթաց, ինքը ևս կնախապատրաստի նոր «Ուրվագծեր»։ Երկու գրքով շարադրվել է Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների պատմությունը, որը Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի կոմկուսակցությունների կենտկոմներին առընթեր կուսակցության պատմության ինստիտուտների, ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի մասնաճյուղերի կողմից պատրաստված կոլեկտիվ աշխատանքն է[2]։ Այն Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների պատմության շարադրման առաջին փորձն է։ «Ուրվագծերի» առաջին մասն ընդգրկում է 1880-ական թվականների սկզբներից մինչև 1921 թ. սկիզբն ընկած ժամանակաշրջանը, իսկ երկրորդ մասը՝ 1921—1927 թվականները։

«Ուրվագծերի» առաջին գրքի հեղինակային կոլեկտիվի մեջ ներգրավվել են հայ պատմաբաններ Ա. Ավետիսյանը, Ծ. Աղայանը, Մ. Արզումանյանը, Գ. Գալոյանը, Գ. Ղարիբջանյանը, Վ. Ներկարարյանը, Ս. Խարմանդարյանը, իսկ երկրորդում՝ Ա. Բազմանյանը, Վ. Ներկարարյանը, Հր. Սիմոնյանը, Ս. Խարմանդարյանը։

Նման աշխատության հրապարակ գալը համարելով դրական

---

1 Տե՛ս Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր (հեղինակներ՝ Վ. Ավետիսյան, Գ. Մնեյան, Գ. Ղարիբջանյան, Ա. Հակոբյան, Ար. Մնացականյան, խմբ. Հ. Մարգարյանի, Ար. Մնացականյանի և Խ. Բարսեղյանի), Եր., 1958։

1 Տե՛ս Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր (խմբ. Ծ. Աղայան, Վ. Ավետիսյան, Հ. Բաղդասարյան, Գ. Գալոյան, Հ. Թումանյան, Աշ. Հովհաննիսյան, Գ. Ղարիբջանյան), Եր., 1963, երկրորդ հրատարակություն, Եր., 1967։

2 Տե՛ս Очерки истории коммунистических организаций Закавказья, часть первая, 1883—1921 гг., Тбилиси, 1967, часть вторая, 1921—1937 гг., Баку, 1971:

երևույթ, այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ նրանում տեղ են գտել նաև մի շարք թերություններ ու սխալներ։ Այսպես, մեր կարծիքով, ճիշտ գնահատական չի տրված 1918 թ. մայիսի վերջին սեյմի ցրումից հետո Անդրկովկասում երեք առանձին հանրապետությունների ստեղծմանը։ Այն դիտվում է որպես խիստ բացասական երևույթ[1]։ Դժվար է համաձայնվել նաև հեղինակների այն մտքին, թե «Թուրքական կառավարությունը օգտվելով դաշնակների արկածախնդրական քաղաքականությունից ձգտում էր գրավել ամբողջ Հայաստանը»[2]։ Խոսքը 1920 թ. աշնանը Հայաստանի վրա հարձակման մասին է։

Երկրորդ գրքում մակերեսորեն խոսվում է անհատի պաշտամունքի պայմաններում երկրամասում թույլ տրված սխալների մասին, մինչդեռ այդ մասին կարելի էր ավելի հանգամանորեն խոսել, կոնկրետ փաստերով, անուններով բացահայտել անհատի պաշտամունքի վնասակար հետևանքները Անդրկովկասում, ուր դրանք ավելի ցայտունորեն են արտահայտվել։ Գրքում կան պնդումներ, որոնք իրականությանը չեն համապատասխանում։ Օրինակ, այնտեղ ասված է. «1937 թ. գարնանից սկսած Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի կոմկուսակցությունները ծավալեցին կուսակցական աշխատանքի վերակառուցում»[3]։ Այնուհետև դրականորեն է խոսվում ՀԿԿ X համագումարի մասին, որը տեղի է ունեցել 1937 թ. մայիսին։ Եվ դա այն դեպքում, երբ համագումարը չդատնվեց իր բարձրության վրա և չդատապարտեց զրպարտիչներին ու ջարդարարներին։ Դրա փոխարեն Լ. Բերիայի զոհ Ա. Խանջյանը և նրա ազնիվ գործընկերները հայտարարվեցին հայ ժողովրդի թշնամիներ, տրոցկիստական-դաշնակցական-նացիոնալիստական վիժվածքներ։ Նույն անարդարացի մոտեցումն է հանդես բերել նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի սեպտեմբերյան (1937) պլենումը, որի մասին ոչ մի խոսք չկա «Ուրվագծերում»։

Հայաստանի կոմկուսի սկզբնավորումից մինչև նրա կազմավորումն ընկած ժամանակաշրջանի պատմության հետազոտման

1 Очерки истории коммунистических..., մաս I, էջ 416։
2 Նույն տեղը, էջ 464։
3 Նույն տեղը, էջ 297.



գործում աչքի ընկնող ավանդ ունի Խ. Բարսեղյանը։ «Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորումը» նրա աշխատության առաջին մասում հանգամանորեն շարադրված է Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների առաջացման ու ձևավորման, նրանց հետագա գործունեության պատմությունը մինչև Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը[1]։ Հարկ է նշել, որ հեղինակը այդ հարցերին անդրադարձել է նաև հետագայում հրատարակված «Մարքսիզմի տարածումը Հայաստանում», «Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի տարածման պատմությունը» երկհատոր մենագրություններում, որոնց մասին մենք արդեն խոսել ենք։

Այդ ժամանակաշրջանի Հայաստանի կոմկուսի պատմության հետ կապված մի շարք հարցերի է անդրադարձել Վ. Ավետիսյանը՝ «Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը» մենագրության մեջ։

Հայ սոցիալ-դեմոկրատների միության մասին է գրել պատմական գիտությունների թեկնածու Կ. Մամիկոնյանը[2]։ Մի շարք աշխատություններում լուսաբանվել է Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը տարբեր փուլերում։ Այսպես, Անդրկովկասի բոլշևիկների գործունեությունը ռեակցիայի և հեղափոխական վերելքի տարիներին լուսաբանված է Կ. Մամիկոնյանի մենագրության մեջ[3]։ Ղ. Դալլաքյանի աշխատության մեջ վեր է հանված Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պայքարը աշխատավորության ինտերնացիոնալ համախմբվածության համար առաջին համաշխարհային պատերազմի տարիներին[4]։

Ուշագրավ աշխատություններ է գրել պատմական գիտությունների թեկնածու Հ. Պետրոսյանը[5]։ Նրա երկրորդ աշխատու-

1 Տե՛ս Խ. Բարսեղյան, Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորումը, Եր., 1965։
2 Տե՛ս Կ. Մամիկոնյան, Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը, Եր., 1969։
3 Տե՛ս Мамиконян К., Большевистские организации Закавказья в период реакции и нового революционного подъема (1907—1914). Е., 1973:
4 Ղ. Դալլաքյան, Անդրկովկասի աշխատավորության ինտերնացիոնալ համախմբվածության համար (1914—1917), Երևան 1969։
5 Տե՛ս Հ. Պետրոսյան, Անդրկովկասի բոլշևիկների պայքարը ռազմարդյունաբերական կոմիտեների դեմ, Եր., 1964։ Անդրկովկասի բանվոր դասակար-

թյան մեջ ամենից առաջ փաստական հարուստ տվյալներով ներկայացված է երկրամասի սոցիալ-տնտեսական, մասնավորապես բանվոր դասակարգի դրության նկարագիրը։ Հեղինակը մանրակրկիտ աշխատանք է կատարել, արխիվային, վիճակագրական, մամուլի և գրականության ընձեռած տվյալների հիման վրա կազմելով բազմաթիվ աղյուսակներ, որոնք ճշգրտված և իրական պատկերացում են տալիս Անդրկովկասի սոցիալ-տնտեսական դրության վերաբերյալ։

Անդրադառնալով բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությանը, հեղինակը ցույց է տվել այդ գործում եղած դժվարությունները՝ կապված երկրամասի պատերազմական վիճակի հետ։ Գրքում լայն տեղ է հատկացված Անդրկովկասի բոլշևիկների հետևողական պայքարին ընդդեմ մենշևիկների ու էսէռների, մերկացված է, հատկապես, կովկասյան մենշևիկների պարագլուխներ Ն. Ժորդանիայի, Կ. Չխեիձեի և մյուսների բացահայտ դավաճանական դիրքը։ Աշխատության մեջ հարկ եղած չափով արծարծվել է նաև բոլշևիկների պայքարը բանվորական շարժումն այլասերելու բուրժուազիայի և սոցիալ-շովինիստների ամեն տեսակ փորձերի դեմ, որն առանձնապես արտահայտվում էր ռազմարդյունաբերական կոմիտեների ակտիվ գործունեությամբ, պրոլետարիատի դասակարգային գիտակցությունը մթագնելու, նրան հեղափոխական պայքարի ճանապարհից շեղելու, բանվորական շարժումը թուլացնելու միջոցով։

Պատմական գիտությունների դոկտոր Ռ. Մանուկյանի մենագրությունը նվիրված է Կովկասյան բանակում բոլշևիկների հեղափոխական աշխատանքի բացահայտմանը[1]։

Հայաստանի և Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների համար բացառիկ կարևոր նշանակություն ունի Վ. Ի. Լենինի դերի վերհանումը Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծման ու ղեկավարման գործում։ Հարկ է նշել, որ այդ թեման մշտապես կարևոր տեղ է գրավել մեր պատմաբանների գիտական աշխատություններում։ Տվյալ բնա-

գը և բոլշևիկյան կազմակերպությունները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914—1917 թթ. փետրվար), Եր., 1977։

1 Տե՛ս Ռ. Մանուկյան, Բոլշևիկների հեղափոխական աշխատանքը Կովկասյան բանակում, Եր., 1969։



գավառում մեծ վաստակ ունի Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանը։ Այս տեսակետից հիշատակության են արժանի «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները» և «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի բոլշևիկները» նրա մենագրությունները[1]։

Դեռևս հեղափոխական պայքարի արշալույսին, գրում է Գ. Ղարիբջանյանը, Վ. Ի. Լենինը կապեր է հաստատել Անդրկովկասի հետ՝ Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի բոլշևիկների հետ և երբեք դրանք չընդհատեց իր հետագա ողջ կյանքի ընթացքում։

Չափազանց հարուստ է Գ. Ղարիբջանյանի մենագրությունների աղբյուրագիտական հենքը։ Հեղինակի համար որպես կարևորագույն սկզբնաղբյուրներ են ծառայել ամենից առաջ Վ. Ի. Լենինի աշխատությունները և կոմունիստական կուսակցության փաստաթղթերը, որոնց մեջ բացահայտվել և խորապես լուսաբանվել են կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ Անդրկովկասի ժողովուրդների սոցիալական և ազգային ազատագրության, Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատման համար մղված հեղափոխական պայքարի պատմության հիմնական հարցերը։ Պատմաբանն օգտագործել է Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների և առանձին բոլշևիկների հետ Ն. Կրուպսկայայի ունեցած նամակագրությունները, որոնք պարունակում են լենինյան արժեքավոր մի շարք ցուցումներ։ Մեծ է նաև լենինյան թերթերի նշանակությունը, որոնցում լայնորեն լուսաբանված է անդրկովկասյան իրականությունը և ուղղություն է տրվել տեղական բոլշևիկների գործունեությանը։ Իր հետազոտած թեմայի առանձին հարցերը լուսաբանելու համար Գ. Ղարիբջանյանն օգտագործել է նաև վերջին տարիներին հրատարակված փաստաթղթերի և հիշողությունների ժողովածուները։ Կարևոր սկզբնաղբյուրներ են նաև ականավոր բոլշևիկ-լենինյանների՝ Անդրկովկասում լենինյան ցուցումների անմիջական իրականացնողների հոդվածները, ճառերը, նամակները, հեռագրերն ու հիշողությունները։

Վերլուծելով նախահեղափոխական Կովկասի տնտեսական և

1 Տե՛ս Гарибджанян Г., В. И. Ленин и большевистские организации Закавказья (1893—1924), Е., 1967, В. И. Ленин и большевики Закавказья, М., 1971։

սոցիալ-քաղաքական գրության մասին լենինյան ասույթները, հեղինակը հանգամանորեն վեր է հանել պրոլետարիատի առաջնորդի դերը Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության մեջ՝ սկսած նրանց հիմնադրումից մինչև 1920-ական թվականների սկզբները։

Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումների ընդհանուր ֆոնի վրա Վ. Ի. Լենինի դերը Անդրկովկասի հեղափոխական շարժումների, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծման ու ամրապնդման, նրանց պայքարը գլխավորելու գործում հանգամանորեն և հարուստ տվյալներով լուսաբանվել է նաև Գ. Ղարբիջանյանի «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասը» եռահատոր մենագրության մեջ[1]։ Հարկ է նշել, որ հիշյալ աշխատությունում քննարկված հարցերը հիմնականում համընկնում են հեղինակի «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները» մենագրության մեջ ուսումնասիրված հարցերին, անշուշտ, ավելի խորացված, լրացված նոր, արժեքավոր նյութերով ու մեկնաբանություններով։

Գ. Ղարիբջանյանը շնորհակալ գործ է կատարել ընթերցողի սեղանին դնելով լենինյան թեման արծարծող մի քանի ուշագրավ գիրք ևս[2]։

Գ. Ղարիբջանյանի ակտիվ մասնակցությամբ 1987 թվականին հրատարակվեց մի արժեքավոր ժողովածու ևս, ուր զետեղված են Վ. Ի. Լենինի բոլոր ասույթները Հայաստանի և հայ ժողովրդի մասին։ Ժողովածուն կարող է մեծապես նպաստել խորհրդահայ պատմական գիտության զարգացմանը, լենինյան դրույթներով լուսաբանելու հայ ժողովրդի պատմության բազմաթիվ հանգուցային հարցեր[3]։

Լենինյան թեմաներով մի քանի գրքույկներ է գրել Հ. Կարապետյանը[1]։ Խորապես և ամբողջականորեն ուսումնասիրելով այդ թեման, հեղինակը 1986 թ. հրապարակի վրա դրեց մի նոր ուշագրավ աշխատություն[2] ևս, ուր լուսաբանվում է Լենինի բազմակողմանի ծանոթությունները հայ իրականությանը, նրա կապերը հայ հեղափոխական գործիչների հետ։ Այն ընդգրկում է 1880-ական թվականներից մինչև 1917 թ. ապրիլը։

Անտարակույս, ինչպես ցույց ենք տվել, այդ թեմայով հրատարակվել են խորհրդահայ պատմաբանների մի շարք աշխատություններ (Գ. Ղարիբջանյան, Ար. Մնացականյան, Խ. Բարսեղյան, Մ. Արզումանյան և ուրիշներ), ինչպես նաև բազմաթիվ ժողովածուներ, հուշագրություններ, սակայն Հ. Կարապետյանն իր աշխատությունը գրել է օգտագործելով թե՛ հրապարակված, և թե՛ իր կողմից գիտական շրջանառության մեջ դրված մեծաքանակ արժեքավոր փաստաթղթեր։ Հեղինակը մեծ ջանքեր է թափել երկրի բազմաթիվ քաղաքների արխիվներից, գրադարաններից, մամուլից, հայ ականավոր գործիչների հիշողություններից հավաստի վավերագրական նյութեր հավաքելու և դրանք գիտական վերլուծության ենթարկելու ուղղությամբ։ Նա նորովի է լուսաբանել հայ ժողովրդի ճակատագրում Լենինի գործունեության բազմաթիվ ուշագրավ մանրամասներ՝ նպատակ ունենալով ցույց տալու, թե այդ գործունեության մեջ ինչ տեղ են գրավել հայ ժողովրդին հուզող հարցերը։ Աշխատության մեջ մեկ առ մեկ վերլուծված են Լենինի աշխատությունների բոլոր այն էջերը, որոնք վերաբերում են Հայաստանին, հայ ժողովրդին։ Փաստորեն Հ. Կարապետյանի աշխատությունը լրացնում և հարստացնում է խորհրդահայ պատմագրության լենինապատումը։

Ունենք մի կարևոր դիտողություն. աշխատությունը չունի օգտագործված աղբյուրների և գրականության տեսություն, գրքում չի խոսվում այն մասին, թե իրենից առաջ տվյալ թեմայով ովքեր են զբաղվել։

Հայ իրականության մեջ, մասնավորապես խորհրդային Հա-

---

1 Տե՛ս Գ. Ղարիբջանյան, Վ. Ի. Լենինը և Անդրկովկասը (1893—1924), գիրք 1, (1893—1904), Եր., 1970, գիրք 2 (1905—1917), Եր., 1973, գիրք 3, (1917—1924), Եր., 1975։

2 Տե՛ս Գ. Ղարիբջանյան, Անմոռանալի հանդիպումներ (Հայ գործիչների հանդիպումներն ու կապերը Վ. Ի. Լենինի հետ, 1892—1924 թթ.), Եր., 1978, Վ. Ի. Լենինը և հայ գործիչները, Եր., 1980, Լենինը Շվեյցարիայում էմիգրացիայի տարիներին, Եր. 1965։

3 Տե՛ս Վ. Ի. Լենինը Հայաստանի և հայ ժողովրդի մասին (խմբ.՝ Գ. Ղարիբջանյան, Հր. Սիմոնյան), Եր. 1987։



1 Տե՛ս Հ. Կարապետյան, Վ. Ի. Լենինը Հայաստանի մասին, Եր. 1969, Վ. Ի. Լենինը և Բաքվի կոմունան, Եր. 1970։

2 Տե՛ս Հ. Կարապետյան, Լենինը և Հայաստանը, գիրք 1, Եր. 1986։

յաստանում Վ. Ի. Լենինի գաղափարական մեծ ժառանգության թարգմանության ու հրատարակության պատմությունը լուսաբանվել է Խ. Բարսեղյանի մենագրության մեջ[1]։ Առաջին անգամ ամբողջական ձևով հանրագումարի է բերված Իլյիչի աշխատությունների հայերեն հրատարակությունների փորձը։ Շարադրված է Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի տարածման ու պրոպագանդման, նրա հաղթանակի համար մղված պայքարում լենինյան աշխատությունների կատարած անգնահատելի դերը։ Ուշադրավ է նաև պատմական գիտությունների դոկտոր Հր. Դարբինյանի գրքույկը[2]։

Վերջին քառորդ դարում լույս են տեսել մի շարք աշխատություններ, որոնցում լուսաբանվում է Հայաստանի կոմկուսի գործունեությունը սոցիալիստական շինարարության տարբեր փուլերում և կամ ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման բնագավառում։ Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների պայքարը հանուն միասնության լուսաբանվել է պատմական գիտությունների դոկտոր Հ. Բաղդասարյանի մենագրությունների մեջ[3]։

Անդրկովկասի կոմունիստների պայքարը աշխատավորության ինտերնացիոնալ համախմբման, Անդրֆեդերացիայի ստեղծման և նրա ամրապնդման համար լուսաբանված է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ի. Թամրազովայի աշխատություններում[4]։

Հայաստանի կոմունիստական կուսակցության պայքարը երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար լուսաբանված է պրոֆ. Վ. Ներկարարյանի մենագրության մեջ[1]։ Հեղինակը լայն տեղ է հատկացրել ոչ միայն Հայաստանի կոմկուսի գործունեությանը ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում, այլև ներկուսակցական պայքարին, գաղափարական հարցերին, խորհրդահայ մշակույթին։

Նա միանգամայն ճիշտ քննադատության է ենթարկում ՀԿ(բ)Կ V և VI համագումարների հաշվետվություններում և որոշումներում թույլ տված առանձին սխալները։

Մի շարք աշխատություններում լուսաբանվում է Հայաստանի կոմկուսակցության պայքարը հանրապետության ինդուստրացման[2], գյուղում սոցիալիզմի հաղթանակի[3], սոցիալիզմի զարգացման ու ամրապնդման[4], բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման[5], էլեկտրիֆիկացիայի[6], քիմիական, գունավոր մետալուրգիայի և լեռնահանքային արդյունաբերության ստեղծման ու զարգացման[7], բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման[8] մասին և այլն։

---

1 Տե՛ս Խ. Բարսեղյան, Լենինը հայերեն, Եր. 1969։

2 Տե՛ս Հր. Դարբինյան, Վ. Ի. Լենինը, Կոմինտերնը և Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները (1919—1921 թթ.), Եր., 1983։

3 Տե՛ս Հ. Բաղդասարյան, Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների պայքարը ՍՄԿԿ միասնության համար (1920—1936), Եր. 1969, Սովետական մարդը, Եր. 1975, Աշխատանքի լենինյան ոճը, Եր. 1978, Борьба за единство КПСС (1920—1930 гг.), Е., 1964.

4 Տե՛ս Ի. Թամրազովա, Պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո։ Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների պայքարը աշխատավորների ինտերնացիոնալ համախմբվածության համար (1921—1925), Եր. 1968, Деятельность коммунистических организаций по интернациональному сплочению народов Закавказья (1921—1928 гг.), Е., 1972:



---

1 Տե՛ս Վ. Ներկարարյան, Հայաստանի կոմունիստական կուսակցության պայքարը երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար (1926—1929 թթ). Եր. 1971։

2 Տե՛ս Փ. Եգոյան, Հայաստանի կոմկուսակցության պայքարը հանրապետության ինդուստրացման համար (1926—1941), Եր. 1965, նույնի՝ Հայաստանը ինդուստրացման ուղիով (1926—1958), Եր. 1967։

3 Տե՛ս Հ. Վարդանյան, Հայաստանի կոմկուսակցության պայքարը գյուղում սոցիալիզմի հաղթանակի համար (1927—1941), Եր. 1967։

4 Տե՛ս Մ. Սաֆարյան, Հայաստանի կոմկուսակցության պայքարը հանրապետությունում սոցիալիզմի զարգացման ու ամրապնդման համար (1937—1941 հունիս), Եր., 1966։

5 Տե՛ս Ա. Բաղմանյան, Հայաստանի կոմկուսը բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման համար մղած պայքարում, Եր. 1976։

6 Տե՛ս Տ. Սաղաթելյան, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը էլեկտրիֆիկացիայի համար մղվող պայքարում, Եր. 1968։

7 Տե՛ս Վ. Ավագյան, Հայաստանի կոմկուսակցության պայքարը քիմիական արդյունաբերության ստեղծման և զարգացման համար, Եր. 1971, Վ. Բարսամյան, Հայաստանի կոմկուսի գործունեությունը հանրապետության գունավոր մետալուրգիայի և լեռնահանքային արդյունաբերության զարգացման գործում (1945—1965), Եր. 1973։

8 Տե՛ս Հ. Աբրահամյան, Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեությունը բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման համար, Եր. 1975։

Որոշակի աշխատանք է կատարվել Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեության լուսաբանման ուղղությամբ Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում[1]: Խոսենք միայն մեկի՝ Վ. Մուրադյանի աշխատության մասին: Այն գրված է փաստական հարուստ նյութերի, արխիվային արժեքավոր վավերագրերի հիման վրա: Օգտագործված է համապատասխան գրականություն: Հեղինակը ճիշտ մոտեցում է հանդես բերել՝ նյութի շարադրումը կատարելով ոչ թե ընդունված ձևով, այսինքն՝ ըստ պատերազմի փուլերի, այլ ըստ այն հիմնական ուղղությունների ու պրոբլեմների, որոնց կատարմանն էր ուղղված Հայաստանի կոմունիստների ամբողջ աշխատանքը պատերազմի տարիներին: Հեղինակի կարծիքով, այդ ուղղություններն են՝ ռազմակազմակերպչական, ռազմամոբիլիզացիոն, ռազմատնտեսական և գաղափարական, որոնք նա լուսաբանել է հաջողությամբ:

Վ. Մուրադյանի աշխատության մեջ առանձնակի խորությամբ են հետազոտված այնպիսի հարցեր, որոնք համեմատաբար քիչ են լուսաբանվել խորհրդահայ պատմագրության մեջ: Դրանցից են, օրինակ, կոմունիստների ռազմաճակատ մեկնելու կապակցությամբ Հայաստանի կոմկուսակցության անդամների կազմի փոփոխությունները, ժողովրդական տնտեսության կարևորագույն բնագավառներում կուսակցական և կոմերիտական ուժերի տեղաբաշխումը, կուսակցության շարքերի աճը, կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների ամրապնդումը աշխատանքային կոլեկտիվներում և այլն: Համակողմանիորեն վեր է հանված Հայաստանի կոմկուսակցության գործունեությունը հանրապետության խորհուրդների, արհմիությունների, կոմերիտմիության և հասարակական այլ կազմակերպությունների ղեկավարման բնագավառում:

Աշխատությունում լայն տեղ է հատկացված Հայաստանի կոմկուսակցության գործունեությանը թիկունքի և ռազմաճակատի կապերի ամրապնդման ուղղությամբ: Համառոտակիորեն վեր են հանված հայ ժողովրդի զավակների հերոսական սխրագործությունները մեծ Հայրենականի տարբեր ռազմաճակատներում: Ցավոք, նման լավ աշխատության մեջ տեղ են գտել որոշ անճշտություններ*:

Վ. Մուրադյանի գրչին են պատկանում նաև մի շարք այլ աշխատություններ պատերազմական թեմայով[1]:

Մի շարք աշխատություններ են հրատարակվել, որոնցում լուսաբանվել է հետպատերազմյան ժամանակաշրջանում Հայաստանի կոմկուսակցության գործունեությունը հանրապետության արդյունաբերության վերականգնման ու զարգացման[2], սոցիալիզմի վերջնական հաղթանակի[3], գյուղատնտեսության ինդուստրացման[4], երկրի նյութատեխնիկական բազայի ստեղծման[5], երկրի համատարած էլեկտրիֆիկացիայի համար մղվող պայքարի բնագավառում[6]: Ա. Սադաղյանի մենագրությունում վեր է հանված Հայաստանի կոմկուսակցության կազմակեր-

---

* Օրինակ գրքի առաջաբանում մեծ Հայրենականին հայ ժողովրդի մասնակցության հարցով դրազվող պատմաբանների շարքում նշվում է նաև Ս. Աղայանի անունը, սողատակին ցույց է տրվում Ս. Աղայանի, Ե. Խալեյանի «Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության» III հատորը, մինչդեռ այդտեղ Ս. Աղայանը գրել է միայն 1935—1940 թթ. պատմությունը:

Վ. Մուրադյանը 76-րդ դիվիզիան հայկական չի համարում (էջ 127): Մինչդեռ խորհրդահայ պատմական գրականության մեջ ընդունված է այն հայկական համարել: Ճիշտ չի նշված Հայրենական պատերազմի ժամանակ հայերից Խորհրդային Միության հերոսի կոչում ստացածների թիվը (էջ 250):

1 Տե՛ս **Мурадян В.**, Боевое содружество, Баку, 1954, О боях за Кавказ. Баку, 1968, Боевое братство, М., 1978, Одной боевой семьей, М., 1982:

2 Տե՛ս Ա. Սարգսյան, Հայաստանի կոմկուսի պայքարը արդյունաբերության վերականգնման ու զարգացման համար հետպատերազմյան ժամանակաշրջանում, Եր. 1974:

3 Տե՛ս Բ. Օհանջանյան, Հայաստանի կոմկուսը սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար մղվող պայքարում (1951—1958), Եր. 1967:

4 Տե՛ս Ի. Խաչատրյան, ՍՄԿԿ պայքարը գյուղատնտեսության ինդուստրացման համար (ՀԽՍՀ տվյալներով), Եր. 1969:

5 Տե՛ս Հ. Ուրմազյան, Հայաստանի կոմկուսը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման համար մղվող պայքարում, Եր. 1974:

6 Տե՛ս Տ. Սաղաթելյան, ՍՄԿԿ-ն երկրի համատարած էլեկտրիֆիկացիայի համար մղվող պայքարում (1959—1975 թթ.), Եր. 1976:

պական-կուսակցական աշխատանքը[1], իսկ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Հակոբյանի մենագրությունը նվիրված է Հայաստանի կոմկուսակցության գաղափարական աշխատանքի հարցերին[2]: Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության համար կարևոր է նաև ժամանակագրության հրատարակումը[3]:

Ազգային մշակույթի մերձեցման և փոխհարստացման բնագավառում Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների կատարած աշխատանքը լուսաբանվում է ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի մասնաճյուղերի նախաձեռնությամբ հրատարակված կոլեկտիվի աշխատության մեջ[4]: Հայաստանից հեղինակային կոլեկտիվի մեջ են մտել Կ. Խուդավերդյանը (կոլեկտիվի ղեկավար) և Վ. Մուրադյանը:

Նկատի ունենալով, որ Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության հարցերից տարակարծությունների և վեճերի տեղիք է տվել հատկապես կուսակցության կազմավորման հարցը, ուստի որոշեցինք հանգամանորեն կանգ առնել միայն դրա վրա:

Ինչպես ասվեց, Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման մասին առանձին աշխատություն ունի Խ. Բարսեղյանը[5]:

Հայտնի է, որ պատմակուսակցական գրականության մեջ 20-ական թվականներից սկսած տարակարծություններ կան Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեության գնահատման հարցում, հատկապես ՀԿ(բ)Կ կազմավորման հետ ունեցած նրա կապերի լուսաբանման գործում: Որո՞նք են այդ տարակարծությունները: Խ. Բարսեղյանը նշում է, որ 20-ական

---

[1] Տե՛ս Садагян А., Организационно-партийная работа Коммунистической партии Армении в период коммунистического строительства (1959—1971), Е., 1973:

[2] Տե՛ս Մ. Հակոբյան, Հանուն նոր մարդու դաստիարակության, Եր. 1972:

[3] Տե՛ս Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության համառոտ ժամանակագրություն (1920—1980), Եր. 1961:

[4] Տե՛ս Сближение и взаимоотношение национальных культур СССР в условиях развивающегося социализма. Е., 1987:

[5] Տե՛ս Խ. Բարսեղյան, Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորումը:



թվականներին Գ. Հայկունին և նրա ամենաակտիվ համախոհները աշխատում էին ՀԿ(բ)Կ կազմավորումը կապել ՀԿԿ-ի հետ: Սակայն Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները և նրանց ղեկավար մարմինները մերժեցին այդ սխալ մոտեցումը, պատճառաբանելով, որ ՀԿԿ-ն լինելով արտերկրային կազմակերպություն, անմիջական հիմք չի ծառայել ՀԿ(բ)Կ-ի կազմավորման համար: Ավելին, շարունակում է նա, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների նշանավոր գործիչներ Ա. Մռավյանը, Ս. Կասյանը, Բ. Բորյանը, Աշ. Հովհաննիսյանը և ուրիշներ ժամանակին քննադատել են ՀԿԿ կազմակերպական կառուցվածքը, սեպարատիստական բնույթը, մատնանշել են նրա կազմակերպական կտրվածությունը Հայաստանի բոլշևիկյան կազմակերպություններից:

Խ. Բարսեղյանը հենվում է հատկապես Ա. Մռավյանի 1923 թ. գրած «Ե՞րբ և ինչպե՞ս է հիմնադրվել Հայաստանի Կ(բ) կուսակցությունը» արժեքավոր հոդվածաշարի վրա, ուր թյուրիմացություն է համարվում այն կարծիքը, ըստ որի ՀԿ (բ)Կ-ն, իբրև թե, առաջացել է ՀԿԿ-ից և հանդիսանում է նրա ժառանգորդը: Ա. Մռավյանը պնդում է, որ այդ կուսակցությունն ստեղծվել էր Խորհրդային Ռուսաստանի կառավարության հայտնի դեկրետի կապակցությամբ, բացառապես Արևմտյան Հայաստանում՝ արևմտահայերի մեջ աշխատելու համար:

Ինչպես հայտնի է, երկար ընդմիջումից հետո, 1950-ական թվականների վերջերին Գ. Հայկունին և ուրիշներ առաջ քաշեցին ՀԿԿ գործունեության վերագնահատման հարցը: ՀԿԿ Կենտկոմի ղեկավարությունը մերժեց նրանց առաջ քաշած դրույթները: Այսպիսով վերսկսվեց դադարած բանավեճը, որը շուտով սուր բնույթ ստացավ: 1962-ին ԽՄԿԿ Կենտկոմի տեսական-քաղաքական օրգան «Կոմունիստ» ամսագրում հրապարակվեց Գ. Օբիչկինի, Գ. Շանչիևի և Լ. Շահումյանի հոդվածը, որտեղ հանգամանորեն քննության է առնվում ՀԿԿ-ի գնահատման հարցը[1]:

Նշելով վերոհիշյալ հոդվածի դրական կողմերը, այն, որ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվեցին արխիվային արժեքավոր պատմակուսակցական փաստաթղթեր, կան նշանավոր բոլշևիկների ասույթներից քաղվածքներ, առանձին

---

[1] Տե՛ս Обичкин Г., Шаншиев Г., Шаумян Л., Некоторые вопросы истории Коммунистической партии Армении, «Коммунист», 1962, № 6.

ինքնուրույն եզրահանգումներ և այլն, Խ. Բարսեղյանը գտնում է, որ, ընդհանուր առմամբ, այս հեղինակները չեն լուծել իրենց առջև դրված խնդիրները։ «Հոդվածի հիմնական բացը այն է,— իրավացիորեն գրում է նա,— որ նրանում պատմականության սկզբունքը խախտելու հետևանքով ստվերի տակ է թողնվել Հայաստանի լենինյան-իսկրայական, բոլշևիկյան կազմակերպությունների ավելի քան 15-ամյա գործունեությունը։ Շրջանցվել է մինչև 1918 թվականը Հայաստանի տարածքում ՌՍԴԲԿ տեղական կազմակերպությունների ծավալած կուսակցական-քաղաքական աշխատանքը, ՌԿ(բ)Կ Կենտկոմի և Անդրկովկասի համապատասխան ղեկավար մարմինների դերը Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի կոմունիստական կուսակցությունների կազմավորման գործում»[1]։ Ի դեպ, «Կոմունիստի» հոդվածագիրները չեն ժխտում, որ ՀԿԿ-ն ստեղծվել էր աշխատանք տանելու Արևմտյան Հայաստանում և Ռուսաստանի հայ գաղթականության շրջանում։

Խ. Բարսեղյանը սխալ է համարում նաև հոդվածագիրների այն հետևությունը, թե, իբր, ՀԿ(բ)Կ-ն կազմավորվել է երկու ճյուղերից՝ ՌԿ(բ)Կ տեղական բոլշևիկյան կազմակերպությունների և ՀԿԿ-ի միավորման ճանապարհով։ Նշելով մի շարք սխալներ ևս, Խ. Բարսեղյանը գտնում է, որ դրանք արդյունք են ՀԿԿ-ի պատմությունը լավ չուսումնասիրելուն, ուստի պետք է ըստ արժանվույն գնահատել այդ կուսակցության գործունեությունը և ոչ թե գունազարդել, ինչպես փորձում են կատարել հոդվածագիրները։

Հիմնավորելով այն տեսակետը, որ շուրջ հարյուր հոգուց բաղկացած ՀԿԿ-ն ստեղծվել էր Արևմտյան Հայաստանում գործելու համար, որ այն ժամանակ Հայաստան ասելով հասկացվում էր Արևմտյան Հայաստանը և դրանով իսկ չընդունելով ՀԿ(բ)Կ-ի կազմավորումը 1918 թվականից, Խ. Բարսեղյանը չի ժխտում ՀԿԿ-ի կատարած դրական աշխատանքը՝ բոլշևիկյան մամուլի և գրականության հրատարակում, բուրժուազգայնական կուսակցությունների քաղաքականության քննադատում, մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի, խորհրդային իշխանության գաղափարների տարածում հայ իրականության մեջ, մասնակցություն III Ինտերնացիոնալի հիմնադրմանը, համատեղ աշ-

[1] Խ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 206։



խատանք Հայկական գործերի կոմիսարիատի հետ և այլն։ «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը,— գրում է նա,— անշուշտ, որոշակի դեր է խաղացել կոմունիստական շարժման պատմության մեջ, Արևմտյան Հայաստանից Ռուսաստան և Կովկաս գաղթած հայ աշխատավոր զանգվածների շրջանում մեծ Հոկտեմբերի ազատարար գաղափարները տարածելու գործում։ Բայց այդ կուսակցությունը հիմք չդարձավ (և չէր էլ կարող դառնալ) Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորման համար»[1]։

Անցնելով ՀԿ(բ)Կ կազմակերպական ձևավորման հարցին, Խ. Բարսեղյանը ցույց է տալիս, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Հայաստանում աշխուժանում է բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքը, ստեղծվում են նոր բջիջներ։ Ազգային կոմունիստական կուսակցություններ ստեղծելու հարցում, նշում է պատմաբանը, մինչև 1919 թ. մայիսը ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն ճիշտ դիրքերի վրա չէր կանգնած, դեմ էր նրանց ստեղծմանը, որով և բուրժուազգայնական կուսակցությունների ձեռքից հնարավոր չէր խլել ազգային անկախության համար մղվող պայքարի դրոշը։ Աշխատության մեջ համակողմանիորեն բացահայտվել է 1919 թ. Երևանի սեպտեմբերյան խորհրդակցության, 1920 թ. հունվարյան կոնֆերանսի դերն ու նշանակությունը ՀԿ(բ)Կ կազմավորման գործում, ցույց է տրված ՀԿ(բ)Կ կազմակերպական ձևավորման ավարտումը։ Խ. Բարսեղյանի աշխատության արժանիքներից մեկն էլ այն է, որ նրանում կատարվել են ՀԿ(բ)Կ պատմության հետ կապված փաստական բազմաթիվ ճշգրտումներ, որոնք պատմակուսակցական գրականության մեջ տարբեր ձևերով էին ներկայացված, շատ անգամ խեղաթյուրված։ Մասնանշված հարցի առթիվ Խ. Բարսեղյանը՝ Գ. Ղարիբջանյանի և Գ. Ժվանիայի հետ համատեղ, հանդես եկավ նաև «Բանբեր Հայաստանի արխիվների» պարբերականում։ Հոդվածին կցված են 15 արժեքավոր փաստաթղթեր։ Ելնելով այդ փաստաթղթերից, հեղինակները համոզիչ կերպով ապացուցում են, որ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը ձևավորվել է ոչ թե 1917 կամ 1918, այլ 1920 թվականին[2]։

[1] Խ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 246։

[2] Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների» 1971, № 3։

Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման և, մասնավորապես, «Հայաստանի կոմունիստական կուսակցություն» կազմակերպության հարցին 1950-ական թվականների կեսերից սկսած անդրադարձել են նաև Գ. Ղարիբջանյանը, Ս. Կարապետյանը, Ծ. Աղայանը, Ս. Վարդանյանը, Ա. Մնացականյանը, Մ. Արզումանյանը, Գ. Գալոյանը և ուրիշներ։ Սակայն նրանցից մի քանիսը ևս միակողմանի են ներկայացնում այդ կազմակերպության գործունեությունը։ Այսպես, Մ. Արզումանյանն իր «Արհավիրքից վերածնունդ» աշխատության մեջ, համառոտակի շարադրելով այդ կազմակերպության պատմությունը, ոչ մի թերություն չի տեսնում նրա գործունեության մեջ։ Ա. Մնացականյանի կարծիքով, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը կազմավորվել է ոչ թե 1920, այլ 1918-ին։ Համոզիչ չէ նրա այն դրույթը, թե, իբր, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը կազմավորվել է Կովկասում և Խորհրդային Ռուսաստանում գործող Հայաստանի կոմունիստական կուսակցության և Հայաստանի հանրապետության ներսում ընդհատակում գործող կոմունիստական կազմակերպությունների միաձուլման հիմքի վրա[1]։

Անդրկովկասի, այդ թվում Հայաստանի կոմկուսակցության պատմության գրեթե բոլոր հանգուցային հարցերին հանգամանորեն անդրադարձել է Գ. Գալոյանը՝ Անդրկովկասի բանվորական շարժումներին և ազգային հարցին նվիրված մենագրության մեջ։ Այստեղ նա հատուկ քննության է առնում նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեությունը։ Նշելով, որ չնայած այդ կազմակերպությունը ստեղծվել էր արևմտահայության և Ռուսաստան փախած հայ գաղթականության միջավայրում աշխատելու համար, Գ. Գալոյանը գտնում է, որ Հայաստանում բուրժուական հանրապետության ստեղծումից հետո նա փաստորեն պետք է գործեր նաև նրա տարածքում։ «Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը Գ. Հայկունու գլխավորությամբ,— գրում է նա,— իր գոյության գլխավոր իմաստը տեսնում էր դաշնակցություն հայկական բուրժուազգայնական կուսակցության դեմ պայքարի մեջ հանուն Հայաստանի բոլոր ազգությունների աշխատավորների ինտերնացիոնալ

[1] Տե՛ս Мнацаканян А., Ленин и решение национального вопроса в СССР, էջ 221։



համախմբման»[1]։ Այնուհետև նա նշում է, որ ՀԿԿ-ն իր հիմնադրման առաջին օրից սկսած գործել է ՌԿ(բ)Կ Կենտկոմի հետ լիակատար համագործակցությամբ և նրա ղեկավարությամբ։ Արխիվային հավաստի վավերագրերով ցույց է տրվում, որ 1919—1920 թթ. ՌԿ(բ)Կ Կենտկոմը մի քանի անգամ քննության է առել ՀԿԿ-ի գործունեության հարցը և հակառակ ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի բռնած բացասական դիրքի, գտել է, որ պետք է այն գործի Հայաստանի հանրապետության տարածքում։

ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի և ՀԿԿ Կենտկոմի միջև շարունակվում էին անհամաձայնությունները։ Չնայած ՀԿԿ-ն չի լիկվիդացվում, գրում է պատմաբանը, սակայն երկրային կոմիտեն նրան չէր ճանաչում։ Տեղական կոմունիստական կազմակերպությունները կազմակերպորեն ենթարկվում էին Կովկասյան բյուրոյին։ Հայաստանում նրան շարունակում էր շճանաչել ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն՝ Արմենկոմը։ «Փոխանակ միավորելու ՀԿԿ-ի ջանքերը տեղական կազմակերպությունների հետ,— իրավացիորեն գրում է նա,— և մեկ կենտրոնից ղեկավարելու աշխատանքը ինչպես Հայաստանի տեղական բնակչության, այնպես էլ հայ գաղթականության մեջ, ստեղծվել էր ինչ-որ երկու կենտրոն՝ ՀԿԿ և ՌԿ(բ)Կ Արմենկոմ, որի հետևանքով 1919—1920 թթ. զգալի չափով տուժեց Հայաստանի աշխատավորության մեջ կազմակերպական և քաղաքական աշխատանքը։ Փոխադարձ անզիջողականությունը ևս խաղաց իր բացասական դերը»[2]։

Գ. Գալոյանը իրավացիորեն գտնում է, որ ճիշտ չէ ՀԿԿ-ին մեղադրել «ավանտյուրիզմի», «նացիոնալիզմի» և համանման հանցանքների մեջ և որ ՀԿԿ-ի անդամները ամբողջովին իրենց նվիրել էին հայ ժողովրդին դաշնակցականների իշխանությունից ազատագրելու պայքարին։ Հեղինակը սխալ է համարում պատմական գրականության մեջ երկար ժամանակ իշխող այն կարծիքը, թե, իբր, ՀԿԿ-ն կոչված էր աշխատելու միայն արևմտահայերի մեջ և որովհետև անհատի պաշտամունքի տարիներին Գ. Հայկունին և ՀԿԿ-ի մյուս ղեկավարները ռեպրեսիայի էին ենթարկվել, պատմաբաններին տրիբ է տվել կամ առհասարակ

[1] Տե՛ս Галоян Г., Рабочие движения и национальный вопрос в Закавказье, էջ 317։

[2] Նույն տեղը, էջ 330։

անտեսել այդ կազմակերպության բեղմնավոր աշխատանքը կամ անտեղի նրան մեղադրել «սարսափելի մեղքերի» համար[1]։

Հայաստանի կոմկուսակցության կազմակերպական ձևավորման հարցին Գ. Գալոյանն անդրադարձել է նաև «Հոկտեմբերյան հեղափոխությունը և Անդրկովկասի ժողովուրդների վերածնունդը» մենագրության մեջ։ Այստեղ նա նշում է, որ Հայկունու խումբը թույլ է տվել բազմաթիվ սխալներ, որ այն կտրված է եղել Անդրկովկասի տեղական կազմակերպություններից, հաշվի չի առել համաանդրկովկասյան կուսակցական մարմիններին, ոչ միշտ է վարել ճիշտ տակտիկական գիծ, որ ինքը «չի ձգտում պաշտպանության տակ առնել նրա ամբողջ գործունեությունը» և այլն։

Հայաստանի կոմունիստական կուսակցության հարցին Գ. Գալոյանն անդրադառնում է նաև «Պատմության քառուղիներում» մենագրության մեջ։ Այստեղ ևս նա այն կարծիքին է, որ սխալվում են այն պատմաբանները, ովքեր գտնում են, որ ՀԿԿ-ն ստեղծվել էր Արևմտյան Հայաստանում գործելու համար և որ այդ պնդումների հիմքում ընկած է կուսակցության երկրային կոմիտեի սխալ դիրքորոշումը այդ կազմակերպության նկատմամբ։ Նա նշում է, որ ինքը հնարավորություն է ունեցել ծանոթանալու ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի այդ կազմակերպության վերաբերյալ ընդունած որոշումներին և եկել այն համոզման, որ վերոհիշյալ թեզը հաստատող ոչ մի լուրջ փաստաթուղթ գոյություն չունի։ «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը,— գրում է նա,— ստեղծվել է 1917 թ. վերջերին և նպատակ էր դրել գործել արևմտահայ գաղթականների շրջանում, Հայաստանում իշխանությունը դաշնակցականների կողմից զավթելուց հետո։ ՌԿ(բ)Կ Կենտկոմը նրան փաստորեն ճանաչեց որպես մի կազմակերպություն, որը պետք է գործեր նաև Հայաստանի բուրժուական հանրապետության տարածքում»[2]։ Իր թեզը հաստատելու համար Գ. Գալոյանը վկայում է ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի 1919 թ. դեկտեմբերի 20-ին Վ. Ի. Լենինի գլխավորությամբ ընդունած հետևյալ որոշումը. «Ընդունելով անհրաժեշտ ՌԿԿ Կովկասյան երկրային կոմիտեի ենթակայությամբ Հայաստանի կոմունիստական կուսակցության գոյությունը որպես տերիտորիալ կազմակերպության գոյություն ունեցող հայկական հանրապետության սահմաններում, հիմք ընդունել Հայկունու բանաձևը և հրահանգի նախագիծը»[1]։

Հայաստանի կոմունիստական կուսակցության մասին կարծիք է արտահայտված նաև «Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների պատմության ուրվագծերում», որին համակարծիք ենք։ Այնտեղ ասված է. «Սակայն Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորումը, որպես կազմակերպական կուսակցական ինքնուրույն միավոր, փաստորեն ձևական էր նրա գործունեության սահմանափակ ոլորտի և տեղական կուսակցական կազմակերպությունների ղեկավար մարմնից կտրված լինելու պատճառով»[2]։

Այսպիսով, քննարկվող հարցը դեռևս բոլորի կողմից չի ստացել ընդունելի լուսաբանություն և շարունակում է մնալ որպես վիճելի պրոբլեմ։

Խորհրդահայ պատմագրության ուշադրության արժանացած թեմաներից մեկն էլ եղել ու մնում է հայ ականավոր հեղափոխական գործիչների կյանքի ու գործունեության լուսաբանումը։ Դա ունի ոչ միայն գիտապատմական, այլև դաստիարակչական մեծ նշանակություն։ Ականավոր հեղափոխական գործիչների հերոսական կյանքի ու պայքարի դրվագները ոգեշնչող օրինակ են հանդիսանում խորհրդային մարդկանց, առաջին հերթին՝ մեր երիտասարդության համար։

Ասենք, որ 1920-ական թվականների կեսերից մինչև 1960-ական թվականների սկիզբը զգալի աշխատանք էր կատարվել այդ ուղղությամբ։ Հարկ է նշել, որ հայ ականավոր հեղափոխականների գործունեությունը լուսաբանվել է իր ժամանակի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի ընդհանուր ֆոնի վրա, ԽՄԿԿ և ՀԿԿ պատմության հետ սերտորեն շաղկապված։

Այդ շնորհակալ աշխատանքը շարունակվեց նաև վերջին քսանհինգամյակում։ Մի շարք նոր, արժեքավոր աշխատություններ են հրատարակվել Ստ. Շահումյանի մասին։ Այս գործում մեծ վաստակ ունի Խ. Բարսեղյանը։ Առանձնապես հիշատակու-

1 Տե՛ս Галоян Г., նշվ. աշխ., էջ 330։

2 Գ. Գալոյան, Պատմության քառուղիներում, էջ 296 (Ընդգծումները հեղինակինն են— Շ. Հ.)



1 Գ. Գալոյան, Պատմության քառուղիներում, էջ 302 (ընդգծ. հեղ։ Շ. Հ.)։

2 Очерки истории коммунистических организаций Закавказья, часть первая, с. 437—438.

թյան է արժանի նրա Շահումյանի կյանքի ու գործունեության վավերագրական տարեգրությունը[1], որի մասին ահա թե ինչ է գրել Ա. Միկոյանը գրքի առաջաբանում. «Խ. Բարսեղյանի «Ստեփան Շահումյանի կյանքի ու գործունեության վավերագրական տարեգրությունը» գրքում հստակորեն, օրավուր, ամսեամիս, տարեցտարի, ցույց է տրված Շահումյանի գործունեությունը, որը բոլոր էտապներում սերտորեն միահյուսվել է մեր կուսակցության պատմության, նրա առաջնորդ Լենինի գործունեության հետ։ Այս կենսագրական խրոնիկան կազմելու համար հեղինակը լուրջ մանրակրկիտ աշխատանք է կատարել աղբյուրների որոնման ուղղությամբ։ Նրան չի փոխարինի Շահումյանի մասին լույս տեսած ոչ մի գիրք։ Այս գիրքը կգրավի իր ուրույն տեղը և կարծում եմ հետաքրքրվող ընթերցողին մեծ գոհունակություն կպատճառի»։ Խ. Բարսեղյանի գրչին են պատկանում նաև ականավոր լենինյանին նվիրված մի շարք այլ աշխատություններ[2]։

Գիտական բարձր մակարդակով է գրված Մ. Արզումանյանի աշխատությունը[3]։ Կարելի է հաստատապես պնդել, որ Ստ. Շահումյանի մասին մինչ այդ գրված մենագրություններից ոչ մեկը այնքան հարուստ փաստական նյութի հիման վրա չի շարադրվել, ինչպես այդ գիրքը։ Նրանում վեր է հանված Շահումյանի ամբողջական կերպարը, նրա վիթխարի ու բազմաբեղուն գործունեությունը։

Ստ. Շահումյանի կյանքի և գործունեության մի շարք դրվագներ լուսաբանել է Գ. Ղարիբջանյանը[4]։

Ստ. Շահումյանի տեսական ժառանգությունը վեր է հանված Բ. Օհանջանյանի[5], իսկ պատմագիտական հայացքները՝ Ն. Սարուխանյանի աշխատություններում[6]։

---

1 Տե՛ս Խ. Բարսեղյան, Ստեփան Շահումյան։ Կյանքի և գործունեության վավերագրական տարեգրություն, Եր. 1968։

2 Տե՛ս **Барсегян Х.**, Степан Шаумян. М., 1975, նույնի՝ Степан Шаумян (биография), Е., 1978:

3 Տե՛ս Մ. Արզումանյան, Ստեփան Շահումյան, Եր. 1978։

4 Տե՛ս Գ. Ղարիբջանյան, Ստեփան Շահումյան, Եր., 1978, նույնի՝ Революционная деятельность С. Г. Шаумяна за границей (1902—1907), Е., 1971:

5 Տե՛ս Բ. Օհանջանյան, Տեսական մարքսիզմի ծանր հրետանին, Եր. 1970։

6 Տե՛ս Ն. Սարուխանյան, Ստ. Շահումյանի պատմագիտական հայացքները, Եր. 1979։



Ս. Սպանդարյանի կյանքն ու գործունեությունը հանգամանորեն շարադրված է Մ. Արզումանյանի աշխատության մեջ[1]։

Ինչպես հայտնի է, Ալ. Մյասնիկյանի մասին ևս հրատարակվել են մի շարք գրքեր (Ա. Մնացականյան, Գ. Ղարիբջանյան), սակայն անվանի գործչի մասին վերջերս լույս ընծայվեց նաև Ս. Ամիրյանի աշխատությունը[2]։ Նրանում ավելի հանգամանորեն են լուսաբանված Ալ. Մյասնիկյանի կյանքի և գործունեության մի շարք կարևոր դրվագներ։

Հրատարակվել են Գ. Ղարիբջանյանի գրքերը Վ. Կասպարովի, Բ. Կնունյանցի, Կամոյի մասին[3]։

Արժեքավոր գրքեր են հրատարակվել նաև հայ անվանի այլ գործիչների[4], ինչպես նաև Ա. Ջափարիձեի[5] և Գ. Դիմիտրովի[6] մասին։ Լավ գործ է սկսել Խ. Բարսեղյանը։ 1987 թ. հրատարակվել է «Կարմիր պանթեոնից» պատմավավերագրական նրա աշխատության առաջին գիրքը։ Շուտով կհրատարակվի երկրորդը։

Անդրֆեդերացիայի կազմավորման և այն ԽՍՀՄ-ի մեջ մտնելու համար մղված պայքարում Գ. Օրջոնիկիձեի դերը լուսաբանված է պատմական գիտությունների դոկտոր Ֆ. Սեյրանյանի ուշագրավ աշխատության մեջ[7]։ Նրանում բացահայտվել է

---

1 Տե՛ս Մ. Արզումանյան, Սուրեն Սպանդարյան, Եր. 1982։

2 Տե՛ս Ս. Ամիրյան, Ալեքսանդր Մյասնիկյան, Եր. 1986։

3 **Гарибджанян Г., Каспаров В. И.** — Видный деятель коммунистической партии, Е., 1965, Богдан Кнунянц — рыцарь революции, Е., 1978, Камо за рубежом, Е., 1982.

4 Տե՛ս Հ. Կարապետյան, Մեծ պայքարի մարդիկ, հ. 2, Եր, 1967, Ս. Աղայան, Արշավիր Մելիքյան, Եր., 1969, Ս. Ալիխանյան, Վաղարշակ Ավանեսով, Եր., 1970, Գ. Հարությունով, Գ. Մկրտչյան, Պապիկ Մկրտչյան, Եր. 1971, Գ. Հարությունով, Զ. Պերեզուդովա, Նունե (Նինա Ֆերդինանդովնա), Եր., 1974, **Агаян Ц.**, Нерсик Степанян, Е., 1967.

5 Տե՛ս Գ. Ղարիբջանյան, Ալյոշա Ջափարիձե (կյանքն ու հեղափոխական գործունեությունը), Եր. 1979, Հ. Կարապետյան, Ալյոշա Ջափարիձե, կյանքն ու գործը, Եր. 1979։

6 Տե՛ս Գ. Ղարիբջանյան, Գեորգի Դիմիտրովը և հայ ժողովուրդը, Եր. 1982։

7 Տե՛ս **Сейранян Ф.**, Г. К. Орджоникидзе и Закавказье (1921—1926 гг.), Е. 1984:

նաև Օրջոնիկիձեի դերը Անդրկովկասում ռազմական շինարարության կազմակերպման բնագավառում։

Վերջին քառորդ դարում հրատարակվել են հայ ականավոր բոլշևիկների և Խորհրդային Հայաստանի կուսակցական ու պետական մի քանի գործիչների երկերը[1]։

Դրական երևույթ պետք է համարել հին բոլշևիկների և նրանց մասին հիշողությունների հրատարակումը, որը գիտական ու քաղաքական որոշակի հետաքրքրություն ներկայացնելուց բացի, հարստացնում է նաև մեր պատմագրությունը[2]։

Խորհրդահայ մի խումբ պատմաբաններ գիտահետազոտական աշխատանք են կատարել բոլշևիկյան մամուլի պատմության լուսաբանման ուղղությամբ։ Վերջին քառորդ դարում հրատարակվել են մի շարք նոր աշխատություններ[3]։

Ուշագրավ են պատմական գիտությունների թեկնածուներ Ս. Սարգսյանի և Ի. Մինասյանի գրքերը[4]։

Վերջին քանհինգամյակում քիչ աշխատանք չի կատարվել Հայաստանի լենինյան կոմերիտմիության պատմության հետազոտման բնագավառում։

---

[1] Տե՛ս Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հինգ հատորով, հ. 1—5, Եր., 1975—1978։ **Мясникян А.**, Избранные произведения, Е., 1965, Ալեքսանդր Մյասնիկյան, Երկեր 5 հատորով, Եր. 1981—1988։ Բ. Ղարիբջանյան, Խորհրդային իշխանության համար մղված պայքարում (1917—1920), Եր. 1966։ Ս. Կասյան, Ընտիր երկեր, Եր. 1974, Ա. Թեկգաղյան, Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, Եր. 1981, Ա. Մելիքյան, Ընտիր երկեր, Եր., 1982, Ս. Խանոյան, Ընտիր երկեր, Եր., 1982, Ս. Լուկաշին, Հոդվածներ, զեկուցումներ, ճառեր, Եր. 1986։

[2] Լենինի հետ, վավերագրեր և հուշեր, Եր. 1969։ Ա. Վարդանյան, Տարիներ առաջ, Եր. 1986, նույնի՝ Անցած ուղիներով, Եր., 1968, Աշ. Հովհաննիսյան, Հուշեր և բնութագրումներ, Եր., 1969, **Мусаелян С.**, Сборник воспоминаний и материалов, Е., 1968. Воспоминания коммунистов Закавказья о В. И. Ленине, Е., 1970. **Микоян А.**, Мысли и воспоминания о Ленине, М., 1970. **Лалаян И.**, Письма, документы, воспоминания, Е., 1986 և այլն։

[3] Տե՛ս Հ. Խաչիկյան, ՌՍԴԲԿ կենտրոնական մամուլը և Անդրկովկասը 1901—1917, Եր., 1971, Մ. Բորյան, Լենինիզմի պրոպագանդան հայ բոլշևիկյան մամուլում, 1905—1917, Եր., 1968, նույնի՝ Անդրկովկասի բոլշևիկյան մամուլը սոցիալիստական հեղափոխության համար մղված պայքարում (1917—1921 թթ.), Եր. 1978, Լ. Բեգլարյան, «Բանվորի կոիվը» թերթը, Եր., 1966։

[4] Տե՛ս Ս. Սարգսյան, Սովետական Ռուսաստանի հայ մամուլը (1918—1921), Եր. 1968, Ի. Մինասյան, Ադրբեջանի բոլշևիկյան հայ մամուլի պատմությունից, Եր. 1985։



1968-ին լույս տեսավ «Հայաստանի լենինյան կոմերիտմիության պատմությունն» կոլեկտիվ աշխատությունը[1]։ Դա, ինչպես գրված է գրքի առաջաբանում, ՀԼԿԵՄ ամբողջական պատմությունը մի գրքում ամփոփելու սոսկ առաջին փորձն է։ Հեղինակներն են՝ Հ. Կարապետյանը, Հ. Ավետիսյանը, Հ. Պողոսյանը, Կ. Միրզախանյանը, Գ. Գեղամյանը, Մ. Թութխալյանը, Հր. Սիմոնյանը, Լ. Կրոյանը։

Աշխատությունը գրված է կոմունիստական կուսակցության, երկրի և ՀամԼԿԵՄ պատմության ընդհանուր ֆոնի վրա, լիովին համապատասխան է նրա պարբերացմանը։ Նրանում նախ շարադրվում է Հայաստանի կոմերիտմիության առաջացման ու կազմակերպական ձևավորման պատմությունը, ապա փաստական հարուստ տվյալներով պարզ, հանրամատչելի, միաժամանակ գիտական պատշաճ մակարդակով վեր է հանվում Հայաստանի կոմերիտմիության գործունեությունը սոցիալիստական շինարարության տարբեր փուլերում, ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմի տարիներին։

Հայաստանի կոմերիտմիության պատմության տարբեր հարցերի վերաբերյալ հրատարակվել են նաև մի շարք առանձին գրքեր[2]։

***

Հայ ժողովրդի պատմությունից բացի, խորհրդահայ պատմաբանները որոշակի աշխատանք են կատարել ԽՄԿԿ, ԽՍՀՄ, ընդհանուր պատմության և արևելագիտության մի շարք կարևոր հարցերի լուսաբանման ուղղությամբ։ Սակայն այդ հարցերին հանգամանորեն չենք անդրադարձել, նկատի ունենալով, որ

---

[1] Տե՛ս Հայաստանի լենինյան կոմերիտմիության պատմություն, հեղինակային կոլեկտիվ, ղեկավար՝ Հ. Կարապետյան, Եր. 1960։

[2] Տե՛ս **Аветисян Г.**, Комсомол Закавказья под знаменем пролетарского интернационализма, Е., 1968, Хитаров Раффи, Е., 1971, В. И. Ленин и пролетарский интернационализм в революционном молодежном движении, Е., 1979, Под знаменем пролетарского интернационализма, Е., 1982, Հ. Կարապետյան, Ղուկաս Ղուկասյան, Եր., 1971, Արմենակ Բուդաղյան, Եր. 1977։

դրանք առանձին ուսումնասիրության խնդիր են, որով պետք է զբաղվեն համապատասխան մասնագետները։ Ներկա աշխատության մեջ բավարարվել ենք միայն այդ ուղղությամբ հրատարակված որոշ աշխատությունների թվարկումով։

ԽՄԿԿ պատմության առանձին թեմաների վերաբերյալ հրատարակվել են Հր. Սիմոնյանի, Գ. Ղարիբջանյանի, Ս. Ամիրյանի և այլոց աշխատությունները[1]։

Խորհրդահայ պատմաբանների մի շարք աշխատություններ կարևոր ավանդ են ԽՍՀՄ պատմության առանձին հարցերի լուսաբանության գործում։ Հ. Բաղդասարյանի և Հ. Կարապետյանի[2] աշխատությունները նվիրված են ԽՍՀՄ կազմավորման պատմությանը, ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամությանը։ Շնորհակալ աշխատանք է կատարել Զ. Գրիգորյանը՝ բուհական ուսանողության համար պատրաստելով ԽՍՀՄ պատմության դասախոսությունների ձեռնարկ[3]։ 1977 թ. հրատարակվեց «Մեծ Հոկտեմբերը և ազգային հարցը» ժողովածուն, որտեղ զետեղված են 1974 թ. Երևանում հրավիրված համամիութենական գիտական նստաշրջանում Գ. Ղարիբջանյանի, Ծ. Աղայանի, Կ. Խուդավերդյանի կարդացած զեկուցումները[4]։

Ընդհանուր պատմության գծով հրատարակված աշխատություններից հարկ է նշել Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Արգ.

---

1 Տե՛ս Հր. Սիմոնյան, ԽՄԿԿ XXV համագումարը և մարքս-լենինյան տեսության զարգացումը, Եր., 1978, տե՛ս նաև նույնի՝ «Ինդուստրիալ հասարակության» տեսություններ։ Քննադատական վերլուծություն, Եր., 1973, Արդի բուրժուական գաղափարախոսության քննադատության ուրվագծեր, գիրք 1, Եր., 1977, գիրք 2, Եր. 1980, Գիտատեխնիկական հեղափոխությունը և նրա սոցիալական հետևանքները, Եր., 1982, Գ. Ղարիբջանյան, Մեծ Հոկտեմբերը և պրոլետարական ինտերնացիոնալիզմը Եր., 1977, նույնի՝ Մեծ Հոկտեմբերը պրոլետարական ինտերնացիոնալիզմի հաղթանակն է, Եր. 1987, Ս. Ամիրյան, Զարգացած սոցիալիզմի բանվոր դասակարգը, Եր. 1976։

2 Տե՛ս Հ. Բաղդասարյան, Մեր հզոր Միությունը, Եր., 1972, Հ. Կարապետյան, Միության մեծ ուժը (ժողովուրդների դաշինքը՝ հասարակական առաջադիմության ազդակ), Եր. 1973։

3 Տե՛ս Զ. Գրիգորյան, Դասախոսություններ ԽՍՀՄ պատմության (1801—1861 թթ.), Եր. 1975, գիրք երկրորդ (1861—1917 թթ.) Եր., 1987։

4 Տե՛ս Великий Октябрь и национальный вопрос, Е., 1977:



Հովհաննիսյանի արժեքավոր աշխատությունները՝ նվիրված Ֆրանսիայի պատմության կարևոր հարցերին[1]։ Աշ. Հարությունյանի աշխատություններում քննվում են ռազմական պատմության հարցեր[2]։ Պատմական գիտությունների թեկնածու Ա. Ներսիսյանի աշխատությունը նվիրված է Թուրքական սուլթանիզմի դեմ բուլղար ժողովրդի մղած պայքարի լուսաբանմանը[3]։

Մեծ աշխատանք է կատարվում Մերձավոր ու Միջին արևելքի երկրների պատմության և էկոնոմիկայի գիտական հետազոտության բնագավառում։ Այդ կարևոր գործին է լծված Հայկական ԽՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտը։ Վերջին քսանհինգամյակում հրատարակվել են մի շարք արժեքավոր աշխատություններ[4]։

***

Ինչպես երևաց մեր խիստ համառոտ շարադրանքից, որոշակի աշխատանք է կատարվել Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության գիտական հետազոտման, հայ ակա-

---

1 Տե՛ս Иоаннисян А., Коммунистические идеи в годы Великой французской революции, М., 1966, К истории французского утопического коммунизма первой половины XIX столетия, М., 1981:

2 Տե՛ս Ա. Հարությունյան, Պատերազմի ու խաղաղության մի քանի պրոբլեմների մասին, Եր. 1967, Առաջին համաշխարհային պատերազմի ռազմաքաղաքական պատմությունից (1914—1918 թթ.) Եր. 1983։

3 Տե՛ս Ա. Ներսիսյան, Բուլղար ժողովրդի պայքարը սուլթանական Թուրքիայի դեմ XIX դարի 70-ական թվականներին, Եր. 1978։

4 Տե՛ս Ա. Սարգսյան, Ազգային-ազատագրական շարժման արդի էտապը, Եր., 1966, Հ. Եգանյան, Հասարակական-քաղաքական հոսանքները Իրանում XIX դարի վերջին և XX դարի սկզբին, Եր. 1966, Իրանական պատմագրությունը Իրանում իմպերիալիստական տերությունների գաղութատիրական քաղաքականության մասին (XIX դարի 2-րդ կես), Եր., 1980, Ն. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939—1958 թթ.), Եր., Политика империалистических держав на Арабском Востоке в годы второй мировой войны (1939—1945), Е., 1981. Ն. Հովհաննիսյան, Հ. Սարգսյան, Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917—1946 թթ.), Եր., 1975։ **Балаян Б.**, Международные отношения Ирана (1813—1828), Е., 1967. Кровь на алмазе «Шах». Трагедия А. Грибоедова, Е., 1983. **Инджикян О.**, Буржуазия Османской империи, Е., 1977, նույնի՝ Օսմանյան կայսրության անկումը, Եր., 1984, **Сафрастян Р.**, Доктрина османизма в политической жизни Османской империи (1850—70 гг., XIX века), Е. 1985 և այլն:

նավոր հեղափոխականների կյանքի ու գործունեության լուսաբանման, ՀԿԵՄ պատմության ուսումնասիրման ուղղությամբ, կան և վիճելի պրոբլեմներ, որոնք լուծում են պահանջում։ Հանրապետության պատմաբանների խնդիրն է ոչ միայն պատմակուսակցական գրականությունը հարստացնել նոր աշխատություններով, այլ նաև սեղանին դնել հատկապես Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության նորովի շարադրված «Ուրվագծերը»։

Գրված լինելով լճացման տարիներին, ինչպես նախորդ, այնպես էլ այս բաժնում հիշատակված աշխատությունների մի զգալի մասը տառապում է պատմագրության մեջ ժամանակին բնորոշ արատներով, որոնց մենք ոչ բոլոր դեպքերում ենք անդրադարձել։ Այժմ պահանջվում է արմատապես վերանայել շատ գրույթներ, կոնցեպցիաներ՝ ելնելով պատմական ճշմարտությունից։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև 1960-ական թվականները խորհրդահայ պատմագրության մեջ գրեթե անտեսված էր ժամանակակից սփյուռքի պատմությունը։ Հայաստանի կամ հայոց պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1920 թ. նոյեմբերի 29-ը շարադրվում էր որպես հայ ժողովրդի պատմություն, իսկ նրանից հետո այն վեր էր ածվում Խորհրդային Հայաստանի պատմության, որի հետևանքով սփյուռքում ապրող շուրջ երկու միլիոն հայերի պատմությունը դուրս էր մնում պատմաբանների ուշադրությունից։

1960-ական թվականների սկզբին լույս տեսան մի շարք գրքույկներ, որոշ թվով հոդվածներ հրապարակվեցին պարբերական մամուլում։ Այնուհետև այդ ուղղությամբ նոր քայլեր կատարվեցին։ Սփյուռքի համառոտ, ամբողջական պատմությունն առաջին անգամ շարադրվեց «Հայ ժողովրդի պատմության» VII և VIII հատորներում, ինչպես նաև մեր հեղինակությամբ լույս տեսած «Հայ ժողովրդի պատմության» բուհական դասագրքի IV հատորում։

VII հատորում ամփոփված սփյուռքի պատմությունը ընդգրկում է 1920—1940 թթ. ժամանակաշրջանը, որն իր հերթին բաժանված է երկու մասերի՝ Խորհրդային Հայաստանը և սփյուռքահայությունը (հեղինակ՝ Հ. Մելիքսեթյան) և սփյուռքահայ մշակույթը (հեղինակ՝ Գ. Ստեփանյան)։

Քննելով 1920-ական թվականների սկզբին հայկական սփյուռքի ստվարացման հարցը, Հ. Մելիքսեթյանը ցույց է տալիս, որ ամենամարդաշատը Սիրիայի գաղթօջախն էր։ Իր մեծու-

թյամբ և ազգային-հասարակական ակտիվ գործունեությամբ Սիրիայից հետո աչքի է ընկնում ԱՄՆ-ի հայկական գաղթօջախը, որից հետո՝ Բալկանները։ Խոսելով հայկական գաղթօջախներում ապրող հայերի ընդհանուր թվի մասին, հեղինակը ճիշտ է նկատում, որ բերված թվերը միայն մոտավոր գաղափար են տալիս սփյուռքահայության քանակի մասին, քանի որ, մի կողմից, այդ տարիներին չի եղել ճշգրիտ վիճակագրություն, իսկ մյուս կողմից՝ անբարենպաստ պայմանների հետևանքով հայերը շատ երկրներում տևական ժամանակով չեն հաստատվել, վարել են թափառական կյանք, ուստի հնարավոր չի եղել որոշելու նրանց ստույգ թիվը։ Այդ է պատճառը, գրում է նա, որ զանազան աղբյուրներում այդ թիվը տատանվում է 800 հազարից մինչև 1 միլիոն 200 հազարի սահմաններում։

Հատորում ցույց է տրված, որ չնայած գաղութահայությունը բավականին ստվար մի զանգված էր իրենից ներկայացնում, բայց և այնպես նրա գլխին դամոկլյան սրի պես կախված էր օտարացման վտանգը։ Միայն Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմամբ հնարավոր եղավ որոշ չափով կանխել նրանց ապազգայնացման վտանգը։ Օտար ափերում դեգերող արևմտահայ տարագիրների ճնշող մեծամասնությունը, հուսախաբվելով մեծ տերություններից, որոշակի դիմադարձ կատարեց դեպի Խորհրդային Հայաստան, ցանկություն հայտնեց վերադառնալ իր ազատագրված հայրենիքը։ Հատորում ցույց են տրված խորհրդային իշխանության առաջին քայլերը սփյուռքահայությանն օգնելու ուղղությամբ։ Այնուհետև շարադրվում է հայրենադարձության պատմությունը։ Այստեղ քննվում է նաև հայրենադարձության հանդեպ սփյուռքահայ կազմակերպությունների ու հոսանքների դիրքորոշման հարցը։ Մասնավորապես քննադատվում է դաշնակցություն կուսակցությունը, որն ամեն ջանք գործադրում էր ներգաղթը խափանելու, Խորհրդային Հայաստանին վարկաբեկելու համար։

Հատորում մերկացվել է Լոզանի կոնֆերանսում և Ազգերի լիգայում իմպերիալիստական պետությունների նենգ դիվանագիտությունը, որոնք բավարարվում էին սոսկ դատարկ խոստումներով, իսկ գործնականում էական ոչինչ չէին անում հայ գաղթականության հարցը կարգավորելու ուղղությամբ։ Այստեղ բացահայտվել է մեծ հումանիստ Ֆ. Նանսենի հայանպաստ գործունեությունը, որը, սակայն, ամեն անգամ հանդիպում էր Ազգերի լիգայի դիմադրությանը։ Առանձին քննվում է Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) գործունեությունը և վեր հանվում նրա դերը Հայրենիք—Սփյուռք կապերի ամրապնդման գործում։ Հ. Մելիքսեթյանը իրավացիորեն գրում է. այսպիսով իր գոյության առաջին իսկ օրերից Խորհրդային Հայաստանը դարձավ համայն հայության այն միակ հանգրվանը, որն սկսեց աստիճանաբար իր գիրկը հավաքել դաժան ճակատագրի բերումով աշխարհասփյուռ հարազատ զավակներին։

VII հատորում լուսաբանվել է նաև սփյուռքահայ մշակույթը՝ դպրոցը, մամուլը, գրականությունը, թատրոնը, երաժշտությունը, գիտությունը։

Սփյուռքահայության խոշոր հատվածներից մեկի՝ հունահայ գաղթօջախի պատմության մի կարևոր ժամանակաշրջան է լուսաբանված պատմական գիտությունների թեկնածու Պ. Կոկինոսի մենագրության մեջ[1]։ Հեղինակը շարադրել է հունահայ աշխատավորության տնտեսական, քաղաքական և հասարակական կյանքի մոտ երեք տասնամյակների պատմությունը, արտացոլել հայ և հույն բանվորների համատեղ պայքարի մի շարք կարևոր դրվագներ։ Աշխատության մեջ լուսաբանված է նաև Հունաստանի կոմկուսակցության բազմակողմանի գործունեությունը հայ աշխատավորությանը հեղափոխական շարժումների մեջ ներգրավելու ուղղությամբ։ Զգալի տեղ է հատկացված հայ ազգայնական կուսակցությունների դիրքորոշման հարցին Խորհրդային Հայաստանի նկատմամբ։ Հեղինակը քննադատության է ենթարկում դաշնակցականներին, որոնք աշխատում էին ամեն կերպ մթագնել հունահայ աշխատավորության դասակարգային գիտակցությունը և նրան հեռու պահել հույն պրոլետարիատի հեղափոխական պայքարից։ Հաջող է լուսաբանված գաղթօջախների ներկուսակցական պայքարը։

Մի շարք աշխատություններում լուսաբանվում է սփյուռքահայության մասնակցությունը ֆաշիզմի դեմ մղված պայքարին։ Այդ մասին առաջին անգամ գրել է Ա. Մնացականյանը իր «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում» աշխատության մեջ (1954 թ.), իսկ ավելի ծավալուն այդ թեման շարադրվել է

---

1 Տե՛ս Պ. Կոկինոս, Հունահայ գաղութի պատմությունից (1918—1927), Եր. 1965։

«Հայ ժողովրդի պատմության» VIII հատորում (հեղինակ՝ Ե. Խալեյան)։ Այստեղ հանգամանորեն լուսաբանվել է սփյուռքահայ առաջադիմական ուժերի կատարած աշխատանքը մայր հայրենիքի պաշտպանության, կարմիր բանակին բարոյական և նյութական օգնություն ցույց տալու գործում։ «Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները,— գրված է այնտեղ,— Խորհրդային Միության հաղթանակի մեջ էին տեսնում վերածնված հայ ժողովրդի և Խորհրդային Հայաստանի հարատևման երաշխիքը։ Նրանք Խորհրդային Հայաստանի հետ էին կապում տարագիր հայության ապագան»[1]։ Հեղինակը կոնկրետ փաստերով ցույց է տվել նաև ֆաշիզմին զինվորագրված դաշնակցության, նրա պարագլուխների հակախորհրդային գործելակերպը։ Հատորում արտացոլվել է սփյուռքահայության մասնակցությունը ֆաշիզմի դեմ մղվող մարտական գործողություններին։ Բերվում է այն փաստը, որ միայն ամերիկյան բանակում հայ ռազմիկների թիվը հասնում էր 18 հազարի։ Առանձնապես հանգամանորեն է խոսվում Դիմադրական շարժմանը ֆրանսահայ գաղթօջախների ակտիվ մասնակցության մասին։ Ընդգծվում է Մ. Մանուշյանի պարտիզանական խմբի հերոսական գործունեությունը։ Հատորում խոսվում է նաև արտասահմանյան երկրներում ֆաշիզմի դեմ մարտնչած խորհրդային քաղաքացիների գործունեության մասին, որը, իհարկե, ճիշտ չէ, քանի որ այնտեղ խոսքը վերաբերում է միայն սփյուռքահայության մասնակցությանը և ոչ թե խորհրդահայ պարտիզանների գործողություններին արտասահմանում։

Ֆրանսահայ կոմունիստների մասնակցությունը գլխավորապես հարավային և կենտրոնական Ֆրանսիայի Դիմադրական շարժմանը արծարծվել է պատմական գիտությունների թեկնածու Տ. Դրամփյանի մենագրության մեջ[2]։ Դիմադրական շարժումը բնութագրելով որպես ֆրանսիական ժողովրդի ազգային-ազատագրական պայքար ընդդեմ հիտլերյան զավթիչների ու նրանց ֆաշիստական կամակատարների, որպես Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ընթացող բնակչության լայն խավերի հզոր շարժում, Տ. Դրամփյանը նշում

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. VIII, էջ 149։

[2] Տե՛ս Տ. Դրամփյան. Ֆրանսահայ կոմունիստները Դիմադրության տարիներին (1941—1944), Եր., 1967։



է, որ այդ շարժումը Ֆրանսիայում ծավալվում էր խորհրդային ժողովրդի և նրա փառապանծ բանակի հերոսական պայքարի անմիջական ազդեցության տակ և պատահական չէր, որ այն մասսայական բնույթ ստացավ միայն 1943 թ. սկզբից, Ստալինգրադի ճակատամարտից հետո։ Պայքարելով Ֆրանսիայի ազատության համար, գրում է հեղինակը, հայ հայրենասերները պայքարում էին հանուն Խորհրդային Միության, քանի որ Դիմադրության շարժումն օժանդակում էր ընդհանուր թշնամու՝ հիտլերյան Գերմանիայի դեմ խորհրդային ժողովրդի հզոր պայքարին։ Մարտնչելով Ֆրանսիայի համար հայ հայրենասերները դրանով իսկ մարտնչում էին նաև Խորհրդային Հայաստանի համար, իրենց ժողովրդի համար։

Նշելով, որ Դիմադրության շարժմանը հայ կոմունիստների մասնակցության պրոբլեմը խորհրդահայ պատմագրության մեջ բավարար չափով չի ուսումնասիրված, Տ. Դրամփյանը իրավացիորեն քննադատական խոսք է ասում 1960-ական թվականներին Մոսկվայում հրատարակված երկու գրքերի մասին*, որոնց մեջ անտեսված է այդ շարժմանը ինչպես ֆրանսահայ գաղթօջախների, այնպես էլ Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության հայկական բաժանմունքի մասնակցության փաստը։ Բանն այն է, գրում է նա, որ այդ աշխատությունների հեղինակների ուշադրությունից դուրս են մնացել ոչ միայն հայերը, այլև Ֆրանսիայում ապրող մյուս ազգությունները՝ մասնավորապես իտալացիները, իսպանացիները, հրեաները, լեհերը և ուրիշներ, որոնց ընդհանուր թիվն ավելի քան երեք միլիոն էր։

Մենագրության մեջ, նախ՝ հանգամանորեն լուսաբանված են հայ-ֆրանսիական գրական, մշակութային, ռազմաքաղաքական կապերը, որոնք սկզբնավորվել են դեռևս XI դարի վերջերից, ապա շարադրվում է Ֆրանսիայի կոմկուսակցության հայկական բաժանմունքի ստեղծման ու գործունեության 1923—1939 թվականների պատմությունը։ Անդրադառնալով հայ կոմունիստների մասնակցությանը Դիմադրության շարժմանն ու հայ ազգային ճակատի ստեղծմանը, Տ. Դրամփյանը գրում է. «Բավական է միայն հիշատակել այն փաստը, որ Ֆրանսիայի ազատագրության շրջանում, 1944 թ. ամռանը հարավային ու կենտրոնական

* Հեղինակը նկատի ունի «Ֆրանսիայի ժողովրդի պայքարը ֆաշիզմի դեմ» և «Դիմադրության հակաֆաշիստական շարժումը» գրքերը։

Ֆրանսիայի ավելի քան հինգ հազար հայեր ակտիվորեն մասնակցում էին հիտլերյան զավթիչների դեմ ծավալված ազգային-ազատագրական պատերազմի բոլոր ձևերին»[1]։

Աշխատության մեջ ցույց է տրված նաև ֆրանսահայ կոմունիստների պայքարը դաշնակցության դեմ, որն ավելի էր ակտիվացել գերմանական ֆաշիզմի ակտիվ գործունեության տարիներին։ Կոնկրետ փաստեր են բերվում դաշնակցության, նրա լիդերների միջազգային իմպերիալիզմի օգտին վարած քաղաքականության մասին։ Այսպես, Ռ. Դարբինյանը «Հայրենիքի» էջերում խանդավառված գուշակում էր խորհրդային կարգերի պարտությունը, Ա. Ջամալյանը մասնակցում էր նացիոնալ սոցիալիստների ֆաշիստական կուսակցության Նյուրենբերգի համագումարին, Ա. Խատիսյանը նամակագրություն էր վարում ֆաշիստ մինիստր Ռոզենբերգի հետ, որն օգնեց 1942 թ. վերջին Բեռլինում «Հայկական Ազգային խորհուրդ» ստեղծելուն։ Դաշնակցականները սերտորեն համագործակցում էին գերմանական օկուպանտների հետ Ռումինիայում, Բուլղարիայում, Հունաստանում, Ֆրանսիայում և հենց Գերմանիայում։ Բեռլինում դաշնակցական պարագլուխները բացարձակապես համագործակցում էին գեստապոյի հետ, ստեղծեցին Հայաստանի ապագա «կառավարությունը», խորհրդային բանակի դեմ կռվելու «հայկական ազգային լեգեոն» և այլն։

Տ. Դրամփյանի աշխատության մեջ արտացոլվել է Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության հայկական բաժանմունքի գործունեությունը «հայկական ազգային լեգեոնի» քայքայման ուղղությամբ։ Ուշագրավ փաստեր կան հայ կոմունիստների գործունեության մասին՝ Ֆրանսիայի համաժողովրդական ազգային ապստամբության նախապատրաստման և անցկացման, գլխավորապես Մարսելի և Լիոնի ազատագրման ժամանակ։

Տ. Դրամփյանի աշխատության վերաբերյալ ունենք հետևյալ դիտողությունը։ Խոսելով հայ-ֆրանսիական ռազմաքաղաքական կապերի մասին, նշելով, որ «հայերը Ֆրանսիայում բազմիցս ապացուցել են իրենց նվիրվածությունը իրենց երկրորդ հայրենիքին, հերոսաբար մարտնչելով նրա դրոշի տակ»[2], նա բարեկամություն է համարում այն, որ «Նապոլեոնի մղած պատերազմներում ֆրանսիական զորքերում հաճախ ենք հանդիպում հայազգի գեներալների, սպաների, զինվորների անուններ»։ Այստեղ նա հիշատակում է Նապոլեոն Բոնապարտի անձնական թիկնապահ Ռոստանի (Ռուստամ), մարշալ Իոախիմ Մյուրատի (Մուրադ Հովակիմյան) անունները։ Բացի այդ, նա Նապոլեոն III-ի միջամտությունը 1862 թ. Զեյթունի ապստամբությանը ներկայացնում է որպես հայ-ֆրանսիական կապերի փաստ, մինչդեռ հայտնի է, որ ֆրանսիական կայսեր միջամտությունը հետապնդում էր բոլորովին այլ նպատակ և որ իր զավթողական նպատակին հասնելու համար նա վարպետորեն օգտագործում էր արկածախնդիր Լևոն Լուսինյանին։

Տ. Դրամփյանի մյուս աշխատությունը ևս նվիրված է Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության հայկական բաժանմունքի պատմությանը (1924—1947 թթ)[1]։ Նրա մյուս գրքույկը նվիրված է Միսաք Մանուշյանի գործունեությանը[2]։

Ինչպես հայկական, այնպես էլ արաբական և այլ աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա Հ. Թոփուզյանի մենագրության մեջ արտացոլվել է 1925—1946 թթ. արաբների և հայերի համատեղ պայքարը ֆրանսիական գաղութարարների դեմ հանուն Սիրիայի և Լիբանանի անկախության[3]։ Զգալի տեղ է հատկացված նաև երկրորդ համաշխարհային պատերազմից հետո անգլո-ամերիկյան իմպերիալիզմի դեմ հայ և արաբ աշխատավորության մղած պայքարին։ Հեղինակի ուշադրությունից չի վրիպել ցույց տալու նաև հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը արաբների ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ։ Ի տարբերություն հնչակյանների և ռամկավարների, հեղինակը դաշնակցականներին բնութագրել է որպես հակակոմունիզմի ջատագովներ։ Աշխատության մեջ կատարվել են մի շարք փաստական կարևոր ճշգրտումներ։ Օրինակ, նա փաստերով հիմնավորել է, որ Լիբանանի և Սիրիայի կոմկուսակցությունները ստեղծվել են ոչ թե 1930-ին, ինչպես գրել են մի շարք հեղինակներ, այդպես նշված է նաև «Սովետական մեծ հանրագիտարանում», այլ 1925 թվականին[4]։

---

1 Տ. Դրամփյան, նշվ. աշխ., էջ 90։

2 Նույն տեղը, էջ 22։

1 Տե՛ս Дрампян Т., Они сражались за Францию. Е., 1981։

2 Տե՛ս Տ. Դրամփյան, Արյան գնով, Եր. 1971։

3 Տե՛ս Հ. Թոփուզյան, Հայերի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական շարժումներին, Եր. 1968։

4 Տե՛ս Հ. Թոփուզյան, նշվ. աշխ., էջ 31։

Հայկական սփյուռքի հետպատերազմյան տարիների համառոտ, բայց ամբողջական պատմությունը շարադրված է «Հայ ժողովրդի պատմության» VIII հատորում։ Սկզբում ընդհանուր գծերով ներկայացվում է սփյուռքի հասարակական-քաղաքական կյանքը (հեղինակներ՝ Լ. Խուրշուդյան, Կ. Դալլաքյան)։ Իրավացիորեն նշելով, որ սփյուռքահայության թվի մասին ճշգրիտ վիճակագրական տվյալներ չկան, հեղինակները հենվելով զանազան աղբյուրների վրա, ցույց են տալիս, որ այն հասնում է մոտ երկու միլիոնի։ Անդրադառնալով արտասահմանի հայության սոցիալ-տնտեսական վիճակին, հեղինակները գտնում են, որ այն հիմնականում համընկնում է նրանց բնակված երկրների ժողովուրդների սոցիալ-տնտեսական վիճակին։ Նրանք միաժամանակ նշում են, որ մի շարք երկրներում հայության վիճակն ավելի ծանր է՝ այնտեղ կիրառվող ազգային խտրականության հետևանքով։ Չնայած դրան, գրում են նրանք, սփյուռքահայ գաղթօջախների բնակչությունն ունի իր ազգային-մշակութային դիմագիծը, որը տարբեր երկրներում արտահայտվում է տարբեր չափերով։

Խոսելով սփյուռքահայերի զբաղմունքի, նրանց տնտեսական գործունեության մասին իրենց հյուրընկալած երկրներում, հեղինակները նշում են, որ նրանք վարում են նաև ակտիվ քաղաքական-հասարակական կյանք՝ ունեն իրենց քաղաքական կուսակցությունները, հասարակական, մշակութային, մարզական կազմակերպությունները, հրատարակում են բազմաթիվ թերթեր, հանդեսներ, գեղարվեստական և այլ գրականություն։

Հատորում ճիշտ է ասված, որ միջազգային հարաբերությունների զարգացման տվյալ փուլում արտասահմանի հայ քաղաքական կազմակերպություններն ու նրանց հարող ուժերը բաժանվում են երկու իրարամերժ ճակատների։ Սփյուռքահայության մեջ, նշվում է այնուհետև, գործում են հնչակյանների, ռամկավարների և դաշնակցականների կուսակցությունները։ Բավականին թիվ են կազմում արտասահմանյան կոմունիստական ու բանվորական կուսակցությունների հայ անդամները։ Բացի այդ կուսակցություններից, գործում են մեծ թվով հայրենակցական, մշակութային, կրթական, բարեգործական, մարզական և երիտասարդական միություններ ու ընկերություններ։ Վերջիններս մեծ մասամբ գտնվում են վերոհիշյալ այս կամ այն կուսակցությունների ազդեցության տակ։ Սփյուռքահայ կյանքում զգալի



ազդեցություն ունի նաև եկեղեցին։ Սփյուռքահայ ռամկավար և հնչակյան կուսակցությունները, շարունակում են հեղինակները, գտնվում են առաջադիմության և խաղաղության լագերում, իսկ դաշնակցությունը՝ ծառայում է իմպերիալիստական ուժերին։ Պատահական չէ, որ ՀԿԿ XXII համագումարում դրական գնահատական տրվեց հնչակյան և ռամկավար կուսակցությունների գործունեությանը։

Հատորում լուսաբանվել են հայրենիք—սփյուռք կապերը, որոնք նոր լիցք ստացան 1950-ական թվականների կեսերից։ Ցույց է տրվում սփյուռքահայության ջերմ վերաբերմունքը Խորհրդային Հայաստանի, նրա նվաճումների նկատմամբ։

Սփյուռքահայության հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանման համեմատ ավելի լայն տեղ է հատկացված սփյուռքահայ մշակույթին (հեղինակ՝ Գ. Ստեփանյան)։ Այստեղ արտացոլվել է սփյուռքահայ կրթական կյանքը, մամուլը, գրականությունը, պատմագրությունը, արվեստը։ Հատորում ընդգծված է այն հանգամանքը, որ հետպատերազմյան տարիներին սփյուռքահայ մշակույթը կանգնեց գաղափարական ավելի առաջավոր դիրքերում, և այստեղ զգալի դեր խաղաց մայր հայրենիքի վերելքը, նրա մշակույթի բարերար ազդեցությունը։ Միաժամանակ նշվում է, որ եթե գրականությունն ու արվեստի որոշ ճյուղեր (թատրոն, երաժշտություն և այլն) զարգանում են տվյալ գաղթօջախի հասարակական-քաղաքական կյանքին համընթաց, նպաստում սփյուռքի հարատևմանը, ապա որոշ ճյուղեր (նկարչություն, ճարտարապետություն) աստիճանաբար կորցնում են իրենց ազգային դեմքը, միաձուլվում տիրապետող ժողովրդի արվեստին։

Սփյուռքահայության պատմության հետ կապված որոշ հարցեր, մանավանդ սփյուռք—հայրենիք կապերի մասին, համառոտակի լուսաբանվել են նաև Ա. Աբրահամյանի հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված մենագրության երկրորդ գրքում։ Այստեղ ցույց է տրված սփյուռքահայ աշխատավորության այն մեծ հրճվանքը, որով նա դիմավորել է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը, և թե ինչպես է նա սերտորեն կապված մայր հայրենիքին։ Նշված է նաև, որ Խորհրդային Հայաստանի նկատմամբ հենց միանգամից բարյացակամ դիրք է գրավել ու հայրենի երկրում տեղի ունեցող տնտեսական, մշակու-

թային տեղաշարժերին արդարացի ու պատշաճ վերաբերմունք ցույց տվել հնչակյան ու ռամկավար մամուլը։ Աշխատության մեջ բացահայտվել է սփյուռքում ՀՕԿ-ի գործունեությունը, որը կարևոր նշանակություն ունեցավ քայքայված ու ավերված մեր երկրի վերաշինման գործում։ Պատշաճ տեղ է հատկացված սփյուռքահայության մասնակցությանը ֆաշիզմի դեմ մղված պայքարին։ Հեղինակը կանգ է առել նաև ներգաղթի հարցի վրա, ցույց տվել դրա կարևոր նշանակությունը։

Սփյուռքի հասարակական-քաղաքական կյանքում որոշակի դեր են խաղում հայկական քաղաքական կուսակցությունները, ուստի նրանց գաղափարախոսության և քաղաքականության ուսումնասիրությունն ու լուսաբանությունը հրատապ անհրաժեշտություն է։ 1964 թ. հրատարակվեց Լ. Խուրշուդյանի մենագրությունը[1], որի մեջ փաստական հարուստ տվյալների, գլխավորապես սփյուռքահայ մամուլի նյութերի հիման վրա վերլուծված է հայ քաղաքական կուսակցությունների հետպատերազմյան ժամանակաշրջանի վարած քաղաքականությունն ու գաղափարախոսությունը։

Աշխատության մեջ զգալի տեղ է գրավում դաշնակցության քաղաքականության քննադատությունը։ Հարկ եղած չափով արտացոլվել է հնչակյան և ռամկավար ազատական կուսակցությունների դրական գործունեությունը, միաժամանակ ցույց տրվել նրանց՝ մեզ համար անընդունելի դրույթները։ Ճիշտ է նշում Լ. Խուրշուդյանը, որ անհատի պաշտամունքի տարիներին սփյուռքահայ ուժերի գնահատման հարցերում հանդես է բերվել դոգմատիկ մոտեցում։ «Սփյուռքահայ գրեթե բոլոր ուժերը հավասարապես նույն կաթսայի մեջ էին նետվում»,— գրում է նա[2]։ Ըստ երևույթին, շարունակում է հեղինակը, դա հետևանք էր այն սխալ մոտեցման, երբ տարբերություն չի դրվել արտասահմանի քաղաքական վտարանդիական ուժերի և սփյուռքահայերի, նրանց քաղաքական ուժերի միջև։ «Վտարանդիական ուժերը նրանք են, որոնք չհաշտվելով տիրապետող կարգերի հետ, հեռանում են տվյալ երկրից և արտասահմանում միանում այդ հասարակարգի թշնամիներին»[3]։ Սփյուռքահայերը, իրավացիորեն գրում է նա,

1 Տե՛ս Լ. Խուրշուդյան, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Եր. 1964։

2 Նույն տեղը, էջ 23։

3 Նույն տեղը, էջ 23—24։



ոչ թե վտարանդիներ են՝ հեռացած հայրենիքից, վերջինիս հասարակարգի հետ հաշտ չլինելու պատճառով, այլ պատմական անարդարությունից տուժած հայ ժողովրդի դժբախտ զավակներն են, որոնք թուրքական յաթաղանից մազապուրծ, հայրենիքից զրկված, սփռվել են աշխարհով մեկ։

Աշխատության մեջ նշվում է, որ սփյուռքահայության մեջ գործող մշակութային, կրթական, հայրենակցական, մարզական և երիտասարդական միությունները ու ընկերությունները մեծ մասամբ գտնվում են հայկական քաղաքական կուսակցությունների ազդեցության տակ և իրենց առանձին դիրքորոշումով հանդես չեն գալիս։ Այնուհետև պատմաբանը անդրադառնում է սփյուռքում առաջադիմական ուժերի միասնական ճակատի կազմավորման հարցին, որի մեջ մտնում են հայ կոմունիստները, հնչակյան և ռամկավար ազատական կուսակցությունները։

Դրան հակառակ, գրում է Լ. Խուրշուդյանը, դաշնակցությունը սփյուռքում ծառայում է միջազգային իմպերիալիզմին, խորհրդային իշխանության թշնամին է։ Նրա կարծիքով, լինելով իմպերիալիզմի ձայնափողը, սփյուռքում դաշնակցությունը տարբեր ժամանակներում կապված է եղել տարբեր երկրների հետ, նայած թե ո՞ր շրջանում, ո՞ր պետությունն է ղեկավար դիրք գրավել միջազգային քաղաքականության ասպարեզում։ Այստեղ նա նկատի ունի դաշնակցականների գործակցությունը գերմանական ֆաշիզմի հետ։ Աշխատության մեջ փաստեր են բերվում այն մասին, որ դաշնակցություն կուսակցությունը կեղծում է խորհրդային իրականությունը, դեմ է գնում խաղաղության, դեմոկրատիայի և ազգային-ազատագրական պայքարին, սփյուռքահայության մեջ վարում է պառակտողական քաղաքականություն։

Լ. Խուրշուդյանը ճիշտ դիրքերից է մոտենում հնչակյան կուսակցությանը տված գնահատականին։ Նախքան ժամանակակից սփյուռքահայ կյանքում նրա գործունեությանն անդրադառնալը, նա պատմական ակնարկ է նետում այդ կուսակցության անցյալի վրա, ցույց տալով այն էվոլյուցիան, որ նրանում տեղի ունեցավ 1903 թվականի վերջերից, երբ նա մտավ ռուսական հեղափոխական շարժումների հորձանուտը և, փոխելով իր քաղաքականությունը, ընդունեց նաև արևելահայ խնդիրը[1]։ Սակայն դրանով նա չդարձավ պրոլետարական, մարքսիստական, այլա-

1 Տե՛ս Լ. Խուրշուդյան, նշվ. աշխ., էջ 207։

պես նա կձուլվեր ՌՍԴԲԿ-ի մեջ և կպայքարեր սոցիալիզմի հաղթանակի համար։ Քննադատության ենթարկելով հնչակյանների գաղափարական և քաղաքական որոշ կողմերը, պատմաբանը, այնուամենայնիվ, հարազատ է մնում պատմական ճշմարտությանը։ Նա նշում է, որ հնչակյան կուսակցությունը տիպիկ մանրբուրժուական կուսակցություն է և որ չի կարելի նրան լիովին նմանեցնել սոցիալիստական ինտերնացիոնալի մեջ մտնող մանրբուրժուական ռեֆորմիստական կուսակցություններին։ Պետք է դրվատանքի խոսք ասել հայ-ազատագրական պայքարում հնչակ գործիչների ակտիվ մասնակցության մասին, մանավանդ նրանց մասին, ովքեր հերոսաբար զոհվեցին թուրքական բռնակալության դեմ մղված պայքարում։ Չպետք է մոռանալ, որ հնչակյանները, շատ դեպքերում դաշնակցած բոլշևիկներին, մասնակցել են Ռուսաստանում ծավալված հեղափոխական շարժումներին։ «Այդ իմաստով,— գրում է նա,— հնչակը որոշ ծառայություններ ունի մատուցած հեղափոխական շարժմանը»[1]։

Աշխատության մեջ լայն տեղ է հատկացված հնչակյան կուսակցության գործունեությանը 1920 թ. հետո։ Դրականորեն է գնահատված նրա գործունեությունը իմպերիալիզմի դեմ, խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում։ Պատմաբանը բազմաթիվ փաստեր է վկայակոչում նաև ազգային ճակատի մյուս ուժերի հետ համատեղ դաշնակցության դեմ նրա անհաշտ պայքարի մասին։ Ցույց է տրված, որ հնչակյան կուսակցությունը, գործելով սփյուռքի դժվարին պայմաններում, մշտապես հանդես է գալիս Խորհրդային Միության և Խորհրդային Հայաստանի ջերմ պաշտպանի դիրքերում։ «Նա հիանում է մեր երկրում ձեռք բերված մեծամեծ հաջողություններով,— ասված է գրքում,— և լայնորեն պրոպագանդում արդյունաբերության, գյուղատնտեսության և մտավոր կյանքի բնագավառների նվաճումները»[2]։ Հնչակը այն կարծիքին է, շարունակում է հեղինակը, որ սփյուռքահայության ապագան անխզելիորեն կապված է Խորհրդային Հայաստանի հետ[3]։ Աշխատության մեջ վեր է հանված նաև հնչակյան կուսակցության դրական գործունեությունը ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի, աշխարհում գաղութատիրության ոչնչացման բնագավառում։

Աշխատության մեջ հանգամանորեն քննվում է նաև ռամկավար ազատական կուսակցության գործունեությունը։ Համակողմանիորեն լուսաբանվել է նրա դերը արդի սփյուռքահայ կյանքում, դիտելով այն որպես ազգային ճակատի անբաժանելի մաս։ Հեղինակը ճիշտ է նշում, որ արմենականների կուսակցությունը, որը սկզբնավորվել է 1885-ին, հետագայում միացավ տարբեր քաղաքական խմբերի հետ, փոխելով իր անունը՝ 1907 թ. կոչվեց «Գաղափարական միություն», 1908-ին՝ սահմանադրական ռամկավարների, իսկ 1921-ին՝ ռամկավար ազատականների կուսակցություն[1]։ Այդ տարիներին, շարունակում է նա, թեև փոխվել է ռամկավար ազատականների կուսակցությունը, գրում է հեղինակը, Արևմտյան Հայաստանում չնայած երբեք չկարողացավ գրավել այնպիսի դիրքեր, որպիսիք ձեռք էին բերել դաշնակցությունն ու հնչակը, այնուամենայնիվ, ազատագրական շարժման մեջ որոշակի դեր խաղաց որպես արևմտահայ ազգային բուրժուազիայի կուսակցություն։

Վերհանելով այդ կուսակցության առաջադիմական գործունեությունը արդի փուլում, Լ. Խուրշուդյանը միաժամանակ կատարում է քննադատական դիտողություններ։ Աշխատության մեջ ցույց է տրված այդ կուսակցության ջերմ վերաբերմունքը Խորհրդային Հայաստանի նկատմամբ, նրա նվաճումների պրոպագանդան, ինչպես նաև նրա դրական դերը սփյուռքի առաջադիմական ուժերի համախմբման գործում ընդդեմ դաշնակցության։ Անդրադառնալով սփյուռքահայերի վիճակին ու հայրենադարձության հետ կապված մի քանի կարևոր հարցերի, պատմաբանը գտնում է, որ սփյուռքահայությունը գտնվում է ձուլման շրջանում, կուլ է գնում իրեն շրջապատող ժողովուրդներին։ Փրկվելով հրեշավոր, անօրինակ սպանդից, մեր ժողովրդի արևմտյան հատվածն այժմ դերմարդկային ճիգեր է գործադրում իր գոյատևումն ապահովելու համար։

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական կյանքը հանգամանորեն լուսաբանվել է Հր. Սիմոնյանի մենագրության մեջ[2]։

---

1 Լ. Խուրշուդյան, նշվ. աշխ., էջ 246։

2 Նույն տեղը, էջ 283։

3 Տե՛ս նույն տեղը, էջ 295։

1 Տե՛ս Լ. Խուրշուդյան, նշվ. աշխ., էջ 339։

2 Տե՛ս Հր. Սիմոնյան, Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Եր., 1968։

Պատմական համառոտ հայացք նետելով հայ ժողովրդի դառն անցյալի վրա, նշելով նրա կյանքում կատարված բաղում սարսափներն ու արհավիրքները, մասնավորապես Մեծ եղեռնը, հեղինակը ցույց է տվել, որ ցեղասպանությունից վերապրած, աշխարհով մեկ սփռված հայոց որբերի սերնդից էլ ստեղծվեց սփյուռքը։ Աշխարհի ավելի քան 30 երկրներում գոյություն ունեցող հայ գաղթօջախները, վիթխարի դժվարություններ հաղթահարելով, ստեղծել են իրենց ազգային հաստատությունները, քաղաքական, մշակութային, բարեգործական, մարզական կազմակերպությունները, հիմնել են վարժարաններ, հրատարակում են թերթեր ու ամսագրեր, նկատելի նվաճումներ ունեն կյանքի զանազան բնագավառներում։

Գաղութահայությունը, գրում է հեղինակը, այսօր ինքն իր մեջ պարփակված անտարբեր զանգված չէ։ Որպես կենդանի ու կենսունակ օրգանիզմ, նա չի կարող հեռու մնալ իրեն հյուրընկալած երկրների հասարակական-քաղաքական կյանքից։ Միաժամանակ, շարունակում է նա, գաղութահայության իսկ ներսում տեղի է ունենում սկզբունքային սուր պայքար գաղթօջախների առաջադիմական և հետադիմական ուժերի, նրանց քաղաքական կազմակերպությունների միջև։

Նշելով, որ սփյուռքահայ կազմակերպությունների մեջ առավել ուժեղ ու ազդեցիկ են քաղաքական կազմակերպությունները, որոնք արտահայտում են գաղութահայության տարբեր խավերի տրամադրություններն ու զգացումները, իր աշխատության մեջ Հր. Սիմոնյանը մեկ առ մեկ վերլուծում է նրանց գործունեությունը, ցույց տալիս նրանց տեղն ու դերը սփյուռքահայ կյանքում։ Աշխատության մեջ դրականորեն է բնութագրված հնչակյան կուսակցության գործունեությունը։ Հնչակյանները, գրում է նա, գտնվում են առաջադիմական լագերում, պայքարում են խաղաղության, դեմոկրատիայի համար, ջերմորեն պրոպագանդում են Խորհրդային Հայաստանը, նրա նվաճումները, մեծ դեր են խաղում հայապահպանության գործում, օժանդակում են հայրենադարձությանը և այլն։ Չնայած դրան, հեղինակը գտնում է, որ տեսության ու պրակտիկայի մի շարք հարցերում հայ կոմունիստների ու հնչակյանների տեսակետները զգալիորեն տարբերվում են իրարից։ Մասնավորապես դա դրսևորվում է սոցիալիստական հեղափոխության, պրոլետարիատի դիկտատուրայի, բանվորների ու գյուղացիության դաշինքի, պրոլետարական ինտերնացիոնալիզմի և այլ արմատական հարցերում։ Սակայն, գրում է նա, կոմունիստների և հնչակյանների տեսակետների տարբերությունը արգելք չի կարող լինել նրանց փոխադարձ գործակցությանը[1]։

Անդրադառնալով ռամկավար ազատականների կուսակցությանը, Հր. Սիմոնյանը գտնում է, որ այն գաղթաշխարհի ունևոր խավերի կուսակցությունն է, այսինքն՝ բուրժուական կուսակցություն է։ Բացահայտելով այդ կուսակցության գաղափարախոսության խոցելի տեղերը, նա միաժամանակ գտնում է, որ այն կանգնած է Խորհրդային Հայաստանի պաշտպանության դիրքերում, մեծ հույսեր է կապում մայր հայրենիքի հետ, անկեղծորեն ուրախանում է նրա վիթխարի նվաճումներով և պրոպագանդում դրանք։ Գրքում ներկայացված է նաև դաշնակցության բուրժուազգայնական գաղափարախոսության և գործունեության վերլուծությունը։

Պատմագիտական որոշակի արժեք ունի Հր. Սիմոնյանի մենագրության ներածության այն մասը, որտեղ տրված է սփյուռքում և հայրենիքում հրատարակված գրականության պատմաքննական վերլուծությունը։ Կանգ առնելով սփյուռքում հրատարակված աշխատություններից մի քանիսի վրա, հեղինակը բացահայտել է դրանց արժանիքները, ճիշտ գնահատումները, միաժամանակ նշելով դրանցում տեղ գտած սխալներն ու աղավաղումները։ Մասնավորապես սուր քննադատության է ենթարկվել դաշնակցական պատմագրությունը, նրա կեղծարարությունը։ Դա կարևոր նշանակություն ունի սփյուռքահայության ճշմարտացի պատմության ստեղծման համար։ «Դաշնակ պատմագրության համար,— գրում է նա,— բնորոշ է պատմական դեպքերի ու երևույթների անսքող խեղաթյուրումը, ծայրահեղ կողմնակալությունն ու պրագմատիզմը, թայֆայական ոգին ու թունալից ատելությունը դեպի այն ամենը, ինչ կապված է սոցիալիզմի, խորհրդային իշխանության, Խորհրդային Հայաստանի հետ»[2]։

Հր. Սիմոնյանի մենագրության մեջ հանգամանորեն, փաստերով ցույց է տրվում, մի կողմից, սփյուռքի ազգային ճակատի ուժերի պայքարը ընդդեմ իմպերիալիզմի, պատերազմի, հա-

---

[1] Տե՛ս Հր. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 12։

[2] Նույն տեղը, էջ 27։

նուն խաղաղության, դեմոկրատիայի, սոցիալական արդարության, ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների հաղթանակի և մայր հայրենիքի պաշտպանության, իսկ մյուս կողմից՝ դաշնակցության ռեակցիոն գործունեությունը ինչպես սփյուռքում, այնպես էլ նրանից դուրս, բնութագրում նրան որպես իմպերիալիզմի ջատագովի, խաղաղության մոլի թշնամու, սփյուռքահայ առաջադիմական ուժերի հակառակորդի։

Խոսելով սփյուռքահայ լայն շրջանների համակրանքի և ժողովուրդների, մասնավորապես արաբների ազգային-ազատագրական շարժման ակտիվ մասնակցության մասին, պատմաբանը գտնում է, որ առանց երկմտելու կարելի է ասել, որ հայ ժողովրդի արտասահմանյան հատվածը, հատկապես Մերձավոր և Միջին արևելքի հայությունը, օտար ափերում գտնված ամբողջ ժամանակամիջոցում աներկբա վճռականությամբ կանգնել է իրեն հյուրընկալած ժողովուրդների ազգային դատերի ակտիվ պաշտպանության դիրքերում և ասպնջական երկրորդ հայրենիքի ազատության համար չի խնայել իր եղբայրական արյունը[1]։ Դրան հակառակ, Հր. Սիմոնյանը ցույց է տալիս, թե դաշնակցականները ինչպես են պաշտպանում իմպերիալիստական պետությունների, առաջին հերթին՝ ԱՄՆ-ի զավթողական քաղաքականությունը։ Գրքում ստույգ վավերագրերի հիման վրա ցույց է տրվում դաշնակցական պարագլուխների գործակցությունը գերմանական ֆաշիզմի հետ[2]։ Պատերազմից հետո, այնուհետև գրված է աշխատության մեջ, ուժեղանում է կապը դաշնակցականների և ամերիկյան լրտեսական-հետախուզական մարմինների միջև, ավելի է ծավալվում նրանց տեռորիստական գործունեությունը, մեծանում է դաշնակցության դերը Արևմուտքում կյանքի կոչված հակախորհրդային խմբավորումների մեջ, անտեսելով Հայաստանի ու հայերի շահերը։

Դաշնակցության գաղափարական և քաղաքական սխալներին անդրադարձել է փիլիսոփայական գիտությունների թեկնածու Բ. Անանիկյանը իր մենագրության մեջ[3]։ «Միջազգային ռեակցիայի այդ ընդհանուր ժխորին,— գրում է Բ. Անանիկյանը,—

[1] Տե՛ս Հր. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 260։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 412—447։

[3] Տե՛ս Բ. Անանիկյան, Դաշնակցության գաղափարական-քաղաքական կրախը, Եր., 1974։



ձայնակցում է Հայաստանից վտարված, ազգային դեմքը իսպառ կորցրած, իմպերիալիստական հետախուզությանը ծառայագրված ու նրա ողորմածությամբ գոյությունը քարշ տվող «Հ. Յ. դաշնակցություն» կուսակցությունը»[1]։

Բ. Անանիկյանը ցույց է տալիս, որ դաշնակցության տեսաբանների գաղափարախոսությունը բոլոր հարցերում, այդ թվում ազգային հարցում, վերցված է բուրժուական պաշտոնական գաղափարախոսության զինանոցից։ Հեղինակը քննադատում է դաշնակ հեղինակների կեղծարարությունը, խորհրդային իրականությունը խեղաթյուրված ներկայացնելու, Խորհրդային Հայաստանի նվաճումները միտումնավոր անտեսելու նրանց փորձերը։

Բ. Անանիկյանի հետմահու հրատարակված աշխատությունում[2] քննադատվել է գաղափարական դիվերսիաների ոլորտը ներգրավված դաշնակցություն կուսակցությունը, բացահայտվել է նրա տեսաբանների կողմից պատմության կեղծարարությունը։

Դաշնակցության անցյալ և ներկա գործունեությունը խստորեն քննադատվում է նաև Բ. Օհանջանյանի գրքում[3]։ Հեղինակը ցույց է տվել դաշնակցության հակաազգային քաղաքականությունը սփյուռքում, քննադատել է նրա գործունեությունը հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին։ Այդ պրոբլեմներին է նվիրված նաև Ա. Մարտիրոսյանի աշխատությունը[4]։

Հայկական սփյուռքի պատմության և, հատկապես, սփյուռք-հայրենիք կապերի լուսաբանմանն են նվիրված պատմական գիտությունների թեկնածու Վ. Համազասպյանի մի քանի գրքույկները և «Հայրենիքի ձայն», «Խորհրդային Հայաստան» ու այլ պարբերականներում հրատարակված բազմաթիվ արժեքավոր հոդվածները։

Որոշ գրականություն է ստեղծվել սփյուռքահայ մշակույթի վերաբերյալ[5]։

[1] Բ. Անանիկյան, Դաշնակցության գաղափարական-քաղաքական կրախը, էջ 4։

[2] Տե՛ս Բ. Անանիկյան, Հոգեբանական պատերազմը և դաշնակցությունը, Եր. 1986։

[3] Տե՛ս Բ. Օհանջանյան, Դաշնակցությունն առանց դիմակի, Եր., 1980։

[4] Տե՛ս Ա. Մարտիրոսյան, Դաշնակցության հակաժողովրդական գործունեությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Եր. 1982։

[5] Տե՛ս Կ. Դալլաքյան, Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից, Եր., 1964, Մ. Բաբլոյան, Սփյուռքահայ մամուլի պատմությունից։

Ինչպես տեսնում ենք, քիչ աշխատանք չի կատարվել սփյուռքի պատմության հետազոտման, հայրենիք—սփյուռք առնչությունների ուսումնասիրման ուղղությամբ։ Այս գլխում մեր նպատակն է եղել վերլուծելու Լ. Խուրշուդյանի, Հր. Սիմոնյանի, Հ. Մելիքսեթյանի, Հ. Թոփուզյանի, Տ. Դրամփյանի և ուրիշների աշխատությունները։ Անտարակույս, կատարված աշխատանքը գոհացուցիչ չի կարող համարվել, այդ ուղղությամբ դեռևս շատ անելիքներ կան։

---

«Անի» (1944—1955), Եր., 1955, Վ. Գաբրիելյան, Դիմաստվեներ, Եր., 1976, Գ. Սևան, Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1920—1945), Եր., 1985, Գ. Ստեփանյան, Ակնարկներ սփյուռքահայ թատրոնի պատմության, հ. 1, Ֆրանսահայ թատրոն, Եր., 1982։

## Վերջաբան

Մեր պատմաքննական վերլուծությունը ցույց տվեց, որ վերջին երկուս ու կես տասնամյակներում (1964—1988 թթ.) խորհրդահայ պատմագրությունը որոշակի նվաճումների է հասել հայ ժողովրդի նոր և խորհրդային ժամանակաշրջանի պատմության գիտական հետազոտման բնագավառում։

Ելնելով մարքս-լենինյան պատմագիտության պահանջներից, օգտագործելով փաստական հարուստ նյութեր, մեծ մասամբ արխիվային վավերագրեր և բազմաբովանդակ գրականություն, խորհրդահայ պատմաբանները հիմնականում հաջողությամբ են հետազոտել նշված ժամանակաշրջանի պատմության կարևորագույն պրոբլեմները, կատարելով գիտական ընդհանրացումներ։ Չնայած առանձին թերությունների, այնուամենայնիվ, լավ են հետազոտվել հայ-ռուսական հարաբերությունների, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման հարցերը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, ազատագրական և հեղափոխական շարժումները, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումն ու ամրապնդումը, մեծ Հայրենականին հայ ժողովրդի ներդրած ավանդը և այլն։ Քիչ աշխատանք չի կատարվել հայկական մշակույթի, հայկական գաղթավայրերի, սփյուռքի պատմության լուսաբանման, ինչպես նաև փաստաթղթերի ժողովածուներ հրատարակելու ուղղությամբ։

Չնայած կատարվածին, խորհրդահայ պատմաբանների առջև այսօր կարևոր խնդիրներ են դրված, որոնց լուծումը ուժերի հետագա լարում, նոր, վճռական քայլեր է պահանջում գիտահետազոտական աշխատանքի բնագավառում։ Նախ և առաջ՝ լուրջ աշխատանք է հարկավոր կատարել դեռևս սակավ ուսումնա-

նիրված պրոբլեմների գիտական հետազոտման ուղղությամբ։ Մինչև այժմ անբավարար են հետազոտված XIX դարի 20—30-ական թվականներին Պարսկաստանից և Թուրքիայից Անդրկովկաս կատարված գաղթի պատմությունը, դարավերջի հասարակական-քաղաքական մտքի, կուսակցությունների պատմությունը, հայ ազատագրական շարժման գաղափարախոսությունը և այլն։ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման պատմությանը նվիրված մի շարք աշխատություններում հարկ եղածին չափով չեն վերհանվել սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալները, առանձնահատկությունները։ Սոցիալիստական շինարարությանը նվիրված աշխատություններում անբավարար են բացահայտվել հատկապես կոլեկտիվացման բնագավառի դժվարությունները, թույլ տրված կոպիտ սխալները, շեղումները և այլն։

Խորհրդային Հայաստանի պատմությանը նվիրված որոշ աշխատություններում շատ անգամ հիմնական ուշադրությունը բեվեռվել է հանրապետության տնտեսական կյանքի պատմության, ժողովրդական տնտեսության զարգացման հարցերի վրա, որի հետևանքով աղոտ է լուսաբանվել հասարակական-քաղաքական կյանքը։ Անբավարար է արտացոլվել կուսակցական կազմակերպությունների ղեկավար դերը ինչպես խորհրդային կարգերի հաստատման ու ամրապնդման, ներքին և արտաքին թշնամիների դեմ մղված պայքարում, այնպես էլ սոցիալիստական շինարարության տարիներին։ Չի կարելի բավարար համարել նաև սոցիալիստական շինարարության տարբեր փուլերում խորհուրդների, արհմիությունների, կոմերիմիության և հասարակական այլ կազմակերպությունների գործունեության լուսաբանումը։ Խորհրդահայ պատմագրության կարևոր խնդիրներից մեկն էլ սոցիալիստական մրցության փորձի ընդհանրացումն է, որը դարձյալ հարկ եղած չափով չի կատարվում։ Շատ աշխատություններում բացակայում է պատմագրական ակնարկը կամ աղբյուրների և գրականության տեսությունը.

Մինչև այժմ հրապարակի վրա չկան ամբողջական աշխատություններ Հայկական հարցի, հայ ազատագրական շարժումների, հայկական քաղաքական կուսակցությունների ձևավորման, նրանց գաղափարախոսության և գործելակերպի, Հայրենական մեծ պատերազմի հայ պարտիզանների, խորհրդահայ մշակույթի մասին և այլն։



Անհրաժեշտ է ստեղծել Խորհրդային Հայաստանի պատմության մի ամբողջական, ֆունդամենտալ աշխատություն։ Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի 1970 թ. հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» VII և VIII հատորները շատ բանով չեն բավարարում այսօրվա պահանջները։ Բացի այդ, պետք է լրացվի վերջին քսանհինգամյակի պատմությունը։ Խորհրդահայ պատմաբանների առջև ծառացած կարևոր պրոբլեմներից են նաև ժողովուրդների բարեկամության, ռազմապատմական թեմաները և այլն։

Պատմաբանների առաջնահերթ խնդիրներից մեկն էլ գոյություն ունեցող վիճելի պրոբլեմների լուծման ուղղությամբ կատարվելիք աշխատանքն է։ Դրան կարող են նպաստել գիտական լայն բանավեճերը։ Շատ կարևոր է, որ այդ բանավեճերի արդյունքները ամփոփվեն գիտական բարձր մակարդակով և հրապարակվեն մամուլում։

Նոր և խորհրդային ժամանակաշրջանի պատմության ոչ քիչ թվով մեծ կամ փոքր վիճելի պրոբլեմները վերջնական լուծում են պահանջում։ Այդպիսիներից են, օրինակ, հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ժամանակի, հողատիրության ձևերի, արևմտահայերի Ազգային սահմանադրության, հայ հասարակական-քաղաքական հոսանքների քանակի, քաղաքական կուսակցությունների դասակարգային բնույթի, «Հայկական հարց» հասկացության և նրա ժամանակի, հայդուկային, կամավորական շարժմանը տրված գնահատականի, Անդրկովկասում խորհրդային կարգերի հաղթանակի ուշացման, Խորհրդային Ռուսաստանի կառավարության «Թուրքահայաստանի մասին» դեկրետի շիրականացման, Մայիսյան ապստամբության պարտության պատճառների, Հայաստանի կոմունիստական կուսակցության հիմնադրման ժամանակի, Խորհրդային Հայաստանում ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառման անհրաժեշտության և այլ հարցերը։ Անհրաժեշտ է պատմաբանների համատեղ ջանքերով շարունակել վերոհիշյալ պրոբլեմների բազմակողմանի ուսումնասիրությունը՝ ճշմարտացի, հիմնավոր կարծիքի հանգելու համար։

Անհրաժեշտ է հանրապետության պատմաբանների, առաջին հերթին Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտական կոլեկտիվի ջանքերով ստեղծել հայ պատմագիտության պատմությանը նվիրված ամբողջական

աշխատություն, որն ընդգրկի նրա զարգացումը V դարից մինչև մեր օրերը։

Խորհրդահայ պատմագրության մեջ նկատված լուրջ թերություններից պետք է համարել և այն, որ հրատարակված ոչ քիչ թվով աշխատություններ գրված են ցածր մակարդակով, կոմպիլյատիվ բնույթ են կրում, աչք է ծակում հանրահայտ փաստերի ծավալուն շարադրանքը, հեղինակները շատ հաճախ կրկնում են միմյանց և իրենց։ Անտեսվում է այն կարևոր հանգամանքը, որ ամեն մի նոր գիրք պետք է ունենա նոր բովանդակություն, նոր մտքեր, նոր հարցադրումներ ու լուսաբանումներ։ Նոր գրքի հեղինակը պետք է գիտական շրջանառության մեջ դնի պատմագրությանը անհայտ կամ սակավ հայտնի վավերագրեր, հաստատուն կերպով հիմնավորի իր տեսակետները։ Գոյություն ունի միևնույն աշխատությունը չնչին փոփոխություններով, տարբեր վերնագրերով (որպես նոր աշխատություն), տարբեր հրատարակչություններում հրատարակելու արատավոր պրակտիկան։ Այս վնասակար երևույթների դեմ պետք է վճռական պայքար մղել։

Այս հարցում հաճախ վատ ծառայություն է մատուցում նաև մամուլը։ Հանրահայտ է, որ հրատարակված գրախոսությունների մի զգալի մասը միակողմանի է։ Հաճախ գրախոսները ըստ էության չեն վերլուծում աշխատությունը, բավարարվում են միայն նրա արժանիքների մասին գրելով, իսկ թույլ տրված կոպիտ սխալներն ու լուրջ թերությունները մնում են չբացահայտված։ Հասկանալի է, որ նման պայմաններում պատմագիտությունը չի զարգանա, առաջ չի գնա։

Պատմագիտությունը չի կարող հաջողությամբ զարգանալ առանց պատմական սկզբնաղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրության և դրանք պարբերաբար հրատարակելու։ Այդ ուղղությամբ թեև որոշակի աշխատանք կատարվում է, սակայն հարկ կա էլ ավելի ծավալել այդ գործը։ Պատմական աշխատությունների մի մասը չունի պահանջված աղբյուրագիտական հենքը։ Ժամանակն է, հատկապես Խորհրդային Հայաստանի պատմության տարբեր փուլերի վերաբերյալ, հրատարակելու փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ։ Փաստորեն հրապարակի վրա կա միայն մեկ ամբողջական և արժեքավոր ժողովածու նվիրված Հայրենական պատերազմին հայ ժողովրդի մասնակցությանը։ Սակայն դրանով չպետք է բավարարվել։ Պետք է շարունակել աշխատանքը հայկական դիվիզիաների, հայ ռազմիկների մարտական գործողությունների, պարտիզանական շարժման, թիկունքի աշխատավորների ներդրած ավանդի վերաբերյալ նոր նյութերի ձեռքբերման և հրատարակման ուղղությամբ։

Չափազանց անբավարար վիճակում է հայերեն հրատարակված կարևոր աշխատությունները ռուսերեն և, մանավանդ, արտասահմանյան լեզուներով թարգմանելու և հրատարակելու գործը։ Ռուս և արտասահմանցի ընթերցողը մեծ հետաքրքրությամբ կկարդա հայ ժողովրդի պատմության կարևոր դրվագներին նվիրված բարձրորակ աշխատությունները։ Օտար լեզուներով պատմական գրականության հրատարակությունը կծառայի նաև մեր պատմության կեղծարարության մերկացման գործին։ Հայտնի է, որ հատկապես պատմության թուրք կեղծարարները մեծ ջանքեր են թափում կեղծելու, ծուռ հայելու մեջ ցույց տալու մեր ժողովրդի դարավոր պատմության շատ հարցեր, օտար լեզուներով հրատարակում են գրքեր, որոնք տարածվում են աշխարհով մեկ և թյուրիմացության մեջ գցում բազմահազար ընթերցողների։ Արևմուտքում բուրժուական պատմաբանները ևս իրենց հերթին կեղծելով մեր պատմությունը, վկայակոչում են թուրք պատմաբանների աշխատությունները։ Ուստի հրամայական պահանջ է դառնում հայ պատմաբանների աշխատություններն օտար լեզուներով հրատարակելու խնդիրը։ Լավ կլինի օտար լեզուներով հրատարակել Եղեռնի մասին հրատարակված ժողովածուները։ Զարմանալի է, որ ռուսերեն հրատարակված ժողովածուն մինչև այժմ հայերեն չի հրատարակվել։

Հանրապետության պատմագիտական հիմնարկներն ու բուհերի պատմության ամբիոնները պետք է բարձրացնեն պատմաբան կադրերի պատրաստման արդյունավետությունը, վճռաբար բարելավեն նրանց որակավորման ու վերաորակավորման գործը, լրջորեն զբաղվեն նրանց գաղափարական և քաղաքական դաստիարակության հարցերով։ Միշտ պետք է հիշել, որ պատմաբանները մշտապես կանգնած են գաղափարական պայքարի առաջավոր գծում։

Դրական երևույթ պետք է համարել այն, որ տասնամյակների լռությունից հետո, օգտվելով հրապարակայնության ընձեռած հնարավորություններից, հանրապետության մի շարք պատմաբաններ 1988 թ. հունիսից սկսած հոդվածներով հանդես եկան պարբերական մամուլում, նորովի լուսաբանելով հայ ժողովրդի

պատմության մի շարք կարևոր հարցեր։ Ինչ խոսք, դա որոշակի թարմություն մտցրեց պատմագիտության բնագավառում և նոր թափ հաղորդեց նրա հետագա զարգացմանը։ Այս հարցում քիչ դեր չխաղացին նաև զարաբաղյան իրադարձությունները։

Անտարակույս, սկսված լավ գործը պետք է շարունակել, ըստ որում պետք է հանդես գալ ոչ միայն հոդվածներով, այլև մենագրություններով։ Հենց դա էլ կնշանակի վերակառուցում պատմագիտության բնագավառում։

* * *

Սակայն հարկ է նշել, որ խորհրդահայ պատմագրությանը նվիրված մեր սույն աշխատությունը տպագրման հանձնելուց հետո ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ հայ հասարակական-քաղաքական մտքի, այդ թվում պատմագիտության բնագավառում տեղի ունեցան նոր ու աննախադեպ տեղաշարժեր։ Վիճահարույց, կնճռոտ բազմաթիվ պրոբլեմները սկսել են ստանալ և առաջիկայում էլ կստանան նոր լուսաբանություն, ամբողջացնելով մեր ժողովրդի հարուստ և ուսանելի պատմությունը։ Դրանով իսկ նոր շրջափուլ է սկսվում խորհրդահայ պատմագիտության զարգացման համար։

Այժմ, երբ խորհրդահայ պատմաբաններս ազատվել ենք անցյալի համար բնորոշ սխալ մտայնությունից, գիտության բնագավառում կուսակցական վերադաս մարմինների անհարկի, կոպիտ միջամտություններից, երբ հասանելի են դարձել երկար ժամանակ փականքների տակ պահված արխիվային, «հատուկ» ֆոնդերը և այլն, պետք է հիմնովին վերանայել մեր ժողովրդի 19—20-րդ դարերի, հատկապես հետհոկտեմբերյան ժամանակաշրջանի պատմությունը, այն մաքրելով ամեն տեսակ սխալներից ու խեղաթյուրումներից։

Կարելի է հաստատապես պնդել, որ 19—20-րդ դարերի պատմությամբ զբաղվող գրեթե խորհրդահայ ոչ մի պատմաբան ավել կամ պակաս չափով զերծ չի մնացել սխալներից։ Դա վերաբերվում է նաև մեզ, ուստի և ոչ միայն մեր տարիներին հրատարակած, այլև սույն աշխատության առանձին դրույթներ ևս կարիք ունեն վերանայման և ճշգրտման։ Պետք է նկատի ունենալ, որ այն բազմապրոբլեմային է, շոշափում է մեծ թվով հարցեր։



Ուրախալի է, որ շարունակվում են լույս տեսնել մեր անվանի մի շարք պատմաբանների (Հր. Սիմոնյանի, Լ. Խուրշուդյանի, Ս. Պողոսյանի, Հ. Կարապետյանի) բազմաթիվ արժեքավոր հոդվածները, գրքերը, որոնք վերաբերում են 1917—1921 թթ. պատմությանը, ցեղասպանությանը, անհատի պաշտամունքի ժամանակաշրջանի, պանթուրքիզմի, Հայաստանի խորհրդայնացման պրոբլեմներին։ Դրանք նոր խոսք են, պրոբլեմների հրատակ ու բազմակողմանի լուսաբանումներ, հայ ժողովրդի քաղաքական դաստիարակության արժեքավոր աշխատություններ։

Ցավոք, մեր պատմաբանների ճնշող մեծամասնությունը լռում է, սպասողական դիրք գրավում։ Պետք է հուսալ, որ առաջիկայում խորհրդահայ պատմաբանները, սերտորեն համագործակցելով հարակից մասնագետների, ինչպես նաև սփյուռքի կարող ուժերի հետ, արմատական բեկում կմտցնեն մեր բազմադարյան պատմության մեջ, նորովի շարադրելով հայ ժողովրդի ամբողջական պատմությունը։

## ԱՆՎԱՆԱՑԱՆԿ


Աբեղյան Մ.— 421
Աբով Գ.— 124
Աբրահամյան Ա. Գ.— 215—221, 266, 408, 414, 424, 461
Աբրահամյան Լ.— 155
Աբրահամյան Հ.— 435
Աբրահամյան Ռ.— 215, 221
Աբրահամյան Վ.— 60
Ադոնց Մ.— 41, 44
Ադոնց Ն.— 5
Ազատյան Հ.— 124
Ագիզբեկյան Հ.— 370
Ալավերդյան Ս.— 370
Ալիխանյան Ս.— 284, 310, 319, 338—339, 340, 352, 356, 414
Ալպոյաճյան Ա.— 216, 218
Ադոբաշյան Վ.— 220
Ագիզբեկյան Ռ.— 399
Ախուճդովաեեր Դ. և Մ.— 347
Ադայան Ծ.— 16, 21, 35, 41, 73, 101, 106, 117, 121, 133, 134, 141, 142, 155, 164, 185—186, 197, 210—211, 220, 266, 270, 294—299, 336—337, 341, 346, 356, 358, 365, 375, 395, 397, 415, 418, 424, 427, 437, 442, 450
Անառյան Հ.— 421
Ամիրխանյան Շ.— 318, 424
Ամիրյան Ա. (Մռավյան)— 140
Ամիրյան Ս.— 368, 376, 378, 399, 402, 450
Անանիկյան Բ.— 203, 352, 468—469
Անանյան Ժ.— 220, 236—237
Անանուն Դ.— 27, 42
Անասյան Ա.— 215
Ավագյան Վ.— 347, 435
Ավդալբեկյան Թ.— 155
Ավդալբեկյան Խ.— 44
Ավետիսյան Հ.— 449
Ավետիսյան Վ.— 113, 117, 130, 132, 148, 155, 159—160—163, 266, 310, 426, 427, 429
Արզումանյան Մ.— 21, 93, 107, 176—181, 183, 193—196, 199, 204, 266, 282—283, 286—287, 293—294, 299, 308, 325—326, 343——344, 351, 379, 381, 410, 414, 427, 433, 442, 446—447
Արշարունի Ա.— 265
Բաբայան Լ.— 408, 414
Բաբաջանյան Ա.— 381
Բաբլոյան Մ.— 220, 469
Բաղալյան Խ.— 84, 96, 207, 248, 418
Բալայան Բ.— 31, 451
Բաղմանյան Ա.— 427, 435
Բաղդասարյան Հ.— 427, 434, 449
Բաղրամյան Ի.— 290, 381
Բաղրամյան Մ.— 218
Բայբուրդյան Վ.— 410
Բայրամյան Լ.— 98, 138, 141
Բարխուդարյան Վ.— 15, 16, 220, 224—226, 240, 262, 266, 414, 419
Բարսեղյան Խ.— 39, 155—159, 253, 266, 392—393, 426, 429, 433—434, 438—439, 440—441, 445—446—447
Բարսամյան Վ.— 400
Բդոյան Վ.— 408
Բեգլարյան Լ.— 448
Բեկզադյան Ա.— 448
Բորյան Բ.— 28, 29, 84
Բորյան Մ.— 448
Բուռնազյան Գ.— 385
Գաբրիելյան Ղ.— 470
Գաբրիելյան Հ.— 73—74, 83, 265
Գալոյան Գ.— 16—17, 19- 32, 35—36, 73, 94, 120—121, 167—170, 197, 205, 265—266, 270, 278—279, 284—285, 299, 312, 315, 318—319, 334—335, 337, 341, 349—350, 356, 374, 418, 424, 427, 442—445
Գեղամյան Գ.— 376—377, 394, 402, 410, 418, 449
Գեղամյանց Ե.— 26, 27, 104, 199
Գրիբոյեդով Ա.— 11
Գրիգորյանց Ա.— 220, 376, 394, 399, 406
Գրիգորյան Գ.— 386
Գրիգորյան Կ.— 265
Գրիգորյան Զ.— 10—15, 22, 28, 31—33, 40, 73, 265, 337, 371—372, 414, 423—424, 450
Գրիգորյան Մ.— 398—399
Գրիգորյան Վ.— 215
Գրիգորյան Ք.— 386, 390, 402, 410
Գուլյան Մ.— 392
Դալլաքյան Ղ.— 358, 384—385, 387—388, 410, 423, 429
Դաշկևիչ Յա.— 215
Դավթյան Դ.— 363—365
Դավրիժեցի Ա.— 218
Դալլաքյան Կ.— 460, 469
Դանիելյան Է.— 368
Դարոնյան Ա.— 265
Դարբինյան Ռ.— 302
Դարբինյան Հր.— 434
Դիլոյան Վ.— 22, 34, 39, 262, 410, 414
Դյակոնով Ի.— 410
Դրամփյան Տ.— 456—459, 470
Դրուժինին Ն.— 43
Եգանյան Մ.— 44
Եգանյան Հ.— 451
Եզյան Կ. (Եզով Գ.)— 26
Եղիազարով Ս.— 423
Ենգոյան Հ.— 401
Ենգոյան Փ.— 358, 435
Եսայան Ա.— 41, 44, 425
Երկանյան Ղ.— 252, 255, 258—259, 423
Երիցյան Ա.— 26, 27
Զորյան Հ.— 421
Զոհրաբյան Է.— 326—329, 345, 368
Զուլալյան Մ.— 46, 410
Զուրաբյան Ս.— 425
Էլչիբեկյան Հ.— 270, 341, 359, 365, 402, 418
Էֆենդիևա Ն.— 344
Թայիրյան Ի.— 340—341
Թամրազովա Ի.— 21, 434
Թառոյան Կ.— 93, 142—143
Թավաքալյան Ն.— 39, 84
Թավարդիլյան Ն.— 392
Թովմասյան Ն.— 253
Թոփուզյան Հ.— 222, 237—239, 264—266, 459, 470
Թուրխալյան Մ.— 449
Թումանյան Հ.— 41, 44, 202, 427
Թուրշյան Հ.— 289—291, 296—297, 302—303, 351—352, 411, 452


* Ցույց են տրված միայն պատմաբանների և այլ հեղինակների ազգանունները։

Իգնատյան Ա.— 265, 409
Ինճիկյան Հ.— 451
Իսահակյան Ի.— 448
Իսակով Հ.— 381
Լազարյան Գ.— 199
Լալայան Ի.— 448
Լենին Վ. Ի.— 324, 430, 431—432
Լեո— 5, 10, 27, 46, 62, 84, 91, 100, 199, 412
Լուկաշին Ս.— 448
Խալեյան Ե.— 155, 270, 384, 386, 389, 402, 437, 455
Խանոյան Ս.— 448
Խանչյան Ա.— 125, 421, 424
Խաչատրյան Գ.— 376, 405—406
Խաչատրյան Ի.— 437
Խաչատրյան Վ.— 215, 220
Խաչիկյան Լ.— 215
Խարմանդարյան Ս.— 277, 365, 372—373, 394, 402, 415, 418, 427
Խեյֆեց Ա.— 344
Խոջաբեկյան Վ.— 399, 425
Խուդավերդյան Կ.— 21, 400—405, 410, 412—413, 419, 438, 450
Խուդոյան Ս.— 265
Խուրշուդյան Լ.— 94, 125, 136—137, 276, 287—288, 299—300, 356, 369, 394, 401, 412—414, 418, 423, 460, 462—465, 470
Կորսուն— 183
Կրոյան Լ.— 449
Կասյան Ս.— 316, 448
Կարախանյան Գ.— 253
Կարապետյան Ե.— 392
Կարապետյան Հ. Ն.— 21, 28, 433, 449
Կարապետյան Հ. Ս.— 270, 315, 356, 358, 370, 399—400
Կարապետյան Ս.— 277, 320, 442
Կարինյան Ա.— 46, 81, 100, 104, 124, 424
Կիրակոսյան Զ.— 21, 86—90, 93, 107, 115—120, 146—147, 171—174, 181, 183, 190, 191, 199, 204, 246—247, 266, 347—348, 379, 475
Կլյուչնիկով Յու.— 321
Կոզմոյան Կ.— 394—397, 402
Կոլցով Պ.— 277
Կոկինոս Պ. (Կոկայան Խ.)— 455
Կուզնեցովա Ն.— 344
Հակոբյան Ա.— 270—271, 277, 337, 341, 365, 385, 392, 394, 402, 415, 418—419, 426
Հակոբյան Թ.— 249, 396
Հակոբյան Մ.— 390, 438
Հակոբյան Պ.— 265
Հակոբյան Ս.— 206, 207
Հակոբյան Վ.— 398, 408
Համազասպյան Վ.— 469
Համբարյան Ա.— 39, 46—47, 49, 50—53, 125, 143—145, 214, 265, 358, 370, 423
Հայկունի Գ.— 439
Հասարաբյան (Բակուրյան) Մ.— 410
Հարությունյան Ա. (Հարենց)— 289, 322, 341, 394
Հարությունյան Ա.— 181—185, 198—200, 201, 266, 291—293, 297—299, 341, 379, 385, 387, 391, 401, 451
Հարությունյան Բ.— 425
Հարությունյան Հ. Մ.— 167
Հարությունյան (Հարությունով) Գ. Ա.— 125, 155, 164
Հարությունյան Գ.— 221, 265
Հարությունյան Կ.— 385, 387, 391
Հարությունյան Շ.— 29, 37, 139, 158, 205, 272, 358, 415, 418
Հարությունյան Պ.— 29, 35, 414
Հարությունյան Ս.— 199, 253
Հարությունյան Վ.— 251, 256
Հեյդարով Ն.— 346
Հովակիմյան Վ.— 45
Հովհաննիսյան Ա. Ռ.— 10, 451
Հովհաննիսյան Ա. Գ.— 27—29, 32, 35, 46, 62—65, 71, 73, 78, 83—84, 115, 121, 124, 133, 139, 158, 266, 337, 411—412, 414, 417, 421, 424, 427, 448
Հովհաննիսյան Ե.— 360, 365
Հովհաննիսյան Ռ.— 54, 75, 85, 100—101, 103—105, 266
Հովհաննիսյան Ն.— 451
Հովհաննիսյան Հ.— 385
Հովհաննիսյան Ս.— 220, 232—234, 266
Հովսեփյան Յու.— 418
Ղազախեցյան Վ.— 358, 361—363, 376, 389, 402, 418
Ղազանչյան Վ.— 405
Ղազարյան Կ.— 332
Ղազարյան Հ.— 22, 39, 45, 46—48, 68, 69—73, 75—81, 220, 265—266, 321, 414
Ղազարյան Մ.— 251
Ղարաչյան Գ.— (Ստ. Արլոմեղ)— 155
Ղարիբջանյան Գ.— 148, 201—202, 209—210, 266, 315, 333, 337, 348, 418, 426, 427, 431—433, 441—442, 446—450
Ղարիբջանյան Լ.— 407—408
Ղափանցյան Գ.— 421
Մադոյան Գ.— 253
Մալխասյան Ա.— 388
Մայիլյան Վ.— 164
Մայիլյան Պ.— 417—418
Մակարյան Ա.— 112, 436
Մամեդովա Ֆ.— 347
Մամիկոնյան Կ.— 429
Մանանդյան Հ.— 5, 218, 421
Մանդալյան Թ.— 124
Մանուկյան Ռ.— 183, 281—282, 430
Մառ Ն.— 410
Մարգարյան Հ.— 426
Մարկոսյան Ս.— 10, 55—56, 127—128, 265
Մարտիրոսյան Ա.— 469
Մարտիրոսյան Հ.— 381
Մարտիրոսյան Մ.— 291
Մարտիրոսյան Ս.— 381
Մելիքյան Հ.— 188, 205—206, 279—282
Մելիքսեթ-Բեկ Լ.— 410
Մելիքսեթյան Հ.— 22, 368, 379—381, 402, 453, 455, 470
Մելիքսեթյան Ս.— 253
Մելիքսեթյան Վ.— 270
Մելքոնյան Ա.— 313—318
Մելիքյան Ա.— 448
Միհասյան Ի.— 448
Միլլեր Ա.— 183, 322, 344
Միկոյան Ա.— 202, 302, 445, 448
Միհասյան Ի.— 448
Միրզախանյան Կ.— 449
Միքայելյան Վ.— 125, 220, 222—226, 228—232, 263, 266
Մխիթարյան Մ.— 265
Մկրյան Մ.— 252
Մյասնիկյան Ա.— 97, 311
Մնացականյան Ա.— 138, 161, 171, 183, 207—209, 285—286, 299, 301, 316, 335, 337, 352, 356, 374, 378—379, 382, 387, 390, 402, 414, 426, 433, 442, 447, 455
Մենյան Գ.— 426
Մռավյան Ա.— 439
Մուսայելյան Ս.— 448
Մուրադյան Դ.— 164—167, 214, 410, 414
Մուրադյան Մ.— 22, 30, 251, 253, 436
Մուրադյան Վ.— 21, 388, 436, 438
Նուխա Ա.— 215
Նազիկյան Գ.— 265
Նասումով Մ.— 392
Նալբանդյան Ս.— 384
Ներկարարյան Վ.— 96, 365, 415, 418—419, 427, 434—435
Ներսիսյան Ա.— 451
Ներսիսյան Մ.— 10, 19, 21, 23, 25, 46, 62, 73, 78, 83, 99, 125, 132, 155, 199, 241—244, 250, 265—266, 272, 321, 379, 417, 421, 424
Ներսիսյան Ս.— 65
Նիկողոսյան Մ.— 289
Նովիչև Ա.— 345
Նուրիջանյան Ս.— 392
Շահինյան Ռ.— 22
Շամսուտդինով Ա.— 345
Շատվորյան Հ.— 436
Շահումյան Լ.— 439
Շահումյան Ս.— 174, 448

Շանչիև — 439
Շառոյան Գ. — 359, 402
Շոպեն Ի. — 23, 24
Շուշինսկի Ֆ. — 346
Ոսկերչյան Ա. — 104
Ոսկերչյան Գ. — 425
Ոսկանյան Վ. — 16, 29, 31, 32, 215, 240, 414
Զամչյան Մ. — 5
Պալասանյան Ս. — 26
Պարսամյան Վ. — 10—11, 15, 28, 32—33, 36—37, 46, 62, 66—67, 73—75, 82—86, 99, 102, 128—130, 155, 164, 181, 183, 191—193, 199, 204, 260—261, 265—266, 358, 379, 414, 417, 421, 423—424
Պերպերյան Ա. — 81
Պետրոսյան Խ. — 392
Պետրոսյան Հ. — 429
Պետրոսյան Շ. — 425
Պետրոսյան Հ. — 186
Պետրուշևսկի Ի. — 410
Պիոտրովսկի Բ. — 410
Պոկրովսկի Մ. — 182, 184
Պողոսյան Ա. — 21—22, 418, 424
Պողոսյան Լ. — 237
Պողոսյան Հ. — 22, 57—59, 81—82, 107—108, 266, 449
Պողոսյան Զ. — 392
Պողոսյան Ս. — 408—412
Պողոսյան Ս. Կ. — 149—152, 188—189
Պողոսյան Վ. — 436
Պոսելիանի Ս. — 125
Ջավախիշվիլի Ի. — 410
Ռադիոնով Պ. — 277
Ռիշտունի Վ. — 39—44, 265, 411, 421, 423
Սաբանին Ա. — 321
Սաղաղյան Ա. — 21, 438
Սահակյան Հ. — 373
Սահակյան Ռ. — 242, 246, 322, 343, 351, 379
Սահրադյան Ս. — 416, 419
Սարգսյան Ա. — 437, 451
Սարգսյան Ե. — 46, 59, 91—92, 181, 183, 186—187, 202—203, 266, 299 322, 349, 379
Սահակյան Եղիշ — 170
Սահակյան Մ. — 386—387, 391
Սարգսյան Ս. — 385, 392, 448
Սարգսյան Վ. — 392
Սարդարյան Կ. — 366
Սաղաթելյան Տ. — 437
Սարուխան Ա. — 104, 423
Սարուխանյան Ե. — 22, 25—28, 446
Սարինյան Ս. — 251
Սաֆարյան Մ. — 435
Սաֆրաստյան Ա. — 322
Սաֆյան Պ. — 423
Սաֆրաստյան Ռ. — 451
Սեյրանյան Ֆ. — 447
Սիմոնյան Ա. — 392, 395, 396
Սիմոնյան Հր. — 211—213, 266, 303—304, 308, 330—332, 354, 410, 427, 449—450, 465—468, 470
Սմիռնով Ն. — 17
Սենչյան Ի. — 22
Ստեփանյան Գ. — 250, 252, 265, 453, 461, 470
Ստեփանյան Ս. — 97
Սուրկուլաձե Ա. — 277
Սուքիասյան Ս. — 408
Սեյան Վ. — 253
Սևան Գ. — 470
Վանանդեցի Գ. — 124
Վարդանյան Ա. — 448
Վարդանյան Հ. — 90—91, 96—97, 108, 110—112, 126, 140, 148, 435
Վարդանյան Ս. — 423
Վարդանյան Ս. — 442
Վարդապետյան Ա. — 337, 370, 385—387, 402, 423
Վարդումյան Գ. — 253
Վրացյան Ս. — 133, 337
Տեր-Ավետիսյան Ս. — 215, 421
Տերյան Վ. — 202
Տերտերյան Ա. — 422
Տոնոյան Հ. — 315, 318
Տրեվեր Կ. — 410
Բաֆֆի — 158
Ցերցվաձե Շ. — 277
Ուրմազյան Հ. — 437
Փարամյան Վ. — 221
Քալանթար Ա. — 421
Քարամյան Կ. — 112, 113, 163
Քյուրչյան Ա. — 22
Քոլանջյան Ս. — 215, 220
Քոչար Մ. — 93—94, 152—154
Օրիշկին Գ. — 439
Օգանեսով Գ. — 21
Օհանջանյան Բ. — 78, 108, 132—133, 148, 203—204, 309—310, 365—366, 397, 414, 417—419, 437, 446, 469
Օհանջանյան Շ. — 170
Օրբելի Հ. — 410
Օրմանյան Մ. — 26, 422
Օրջոնիկիձե Գ. — 308, 311
Ֆելեքյան Հ. — 425

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԱՌԱՋԱԲԱՆ . . . . . 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ— Նոր պատմության պրոբլեմների հետազոտությունը խորհրդահայ պատմագիտության մեջ (1800—1917 թթ.) . 9

1. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին . . . 9
2. Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը XIX դարում և XX դարի սկզբին . . . . . 38
3. Հայ հասարակական-քաղաքական հոսանքները և ազատագրական շարժումները 1850—1860-ական թթ. . . . . 62
4. Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը . . 84
5. Հասարակական-քաղաքական պայքարը, ազգային-ազատագրական շարժումները 1870—1890-ական թվականներին։ Քաղաքական կուսակցությունների ձևավորումը . . . . . 98
6. Արևմտահայերի ազատագրական շարժումները XIX դարի վերջերին և XX դարի արշալույսին . . . . . 141
7. Մարքսիզմի տարածումը հայ իրականության մեջ, հեղափոխական շարժումները Հայաստանում XIX դարի վերջին— XX դարի սկզբին 154
8. Հայաստանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին 170
9. Հայկական գաղթավայրերի պատմությունը . . . . . 214
10. Աղբյուրների հրատարակումը . . . . . 241
11. Հայ մշակույթի պատմությունը . . . . . 249

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ— Հոկտեմբերյան հեղափոխությունը և խորհրդային կարգերի հաստատումն ու ամրապնդումը Հայաստանում (1917—1921 թթ.) . . . . . 267

1. Իրադրությունը Անդրկովկասում և Հայաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո . . . . . 276
2. Մայիսյան ապստամբությունը . . . . . 313
3. Ռազմաքաղաքական իրադրությունը Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման նախօրյակին . . . . 319
4. Խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում . . . 333
5. Պատմության կեղծարարների քննադատությունը . . . 341





ԳԼՈՒԽ ԵՐԵՔՈՐԴ— Սոցիալիստական հասարակության պատմությունը (1920—1988 թթ.) . . . . . 357

1. Սոցիալիստական շինարարության նախապատերազմյան տարիները (1920—1941 թթ.) . . . . . 357
2. Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին . 381
3. Սոցիալիստական շինարարության հետպատերազմյան տարիները 393
4. Խորհրդահայ մշակույթի պատմությունը, պատմագրությունը . 402

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ— ՀԿԿ պատմությունը, հայ հեղափոխականների կյանքն ու գործունեությունը, ՀԼԿԵՄ պատմությունը . . . . 426

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ— Ժամանակակից ոճյուռքի պատմությունը . . 453

ՎԵՐՋԱԲԱՆ . . . . . 471

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ . . . . . 478

Շմավոն Ռուբենի Հարությունյան

# ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(1964—1988)

Ուրվագծեր

Шмавон Рубенович Арутюнян

# РАЗВИТИЕ ИСТОРИЧЕСКОЙ НАУКИ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

(1964—1988)

Очерки

(На армянском языке)

Ереван «Айастан» 1990

*Հրատ. խմբագիր՝ էդ. Վ. Գևորգյան*
*Նկարիչ՝ Է. Բ. Ղազարյան*
*Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան*
*Տեխն. խմբագիր՝ Հ. Ց. Վարդանյան*
*Վերատեսող սրբագրիչ՝ Մ. Մ. Առշակյան*

ԻԲ № 6848

*Հանձնված է շարվածքի 09. 01. 1990 թ.։*
*Ստորագրված է տպագրության 17. 08. 1990 թ.։*
*Ֆորմատ 84×108 1/32։ Թուղթ տպագր. № 2։ Տպագրություն՝ բարձր։ Տառատեսակ՝ Գրքի սովորական։ 25,83 պայմ. տպագր. մամ., 24,59 հրատ. մամ.։ Պատվեր՝ 11, տպաքանակ 3000։ Գինը՝ 2 ռ. 80 կոպ.։*

*«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Իսահակյան 28։*
Издательство «Айастан», Ереван-9, ул. Исаакяна, 28.

*ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան—10, Ալավերդյան 65։*

Типография № 1 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван-10, Алавердяна, 65.